ՀԱՌԱՏՕՏ

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
17, Rue Damesme, PARIS (13e)

Téléphone : Glacière 15 - 79
Chèque Postal Paris 1678 - 63
(ԵՐԹԵԻԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ — ՏԱՐԵԿԱՆ ՎԵՑԱՄՍԵԱՅ ԵՒԱՄՍԵԱՅ

Ֆրանսա եւ Գաղութքներ	150 ֆրանք	75 ֆրանք	40 ֆր.
Անգլիա եւ Իտալիա	265 ֆրանք	140 ֆրանք	
Ուրիշ երկիրներ	215 ֆրանք	110 ֆրանք	

ՕՐԱԹԵՐԹ
1
ՅՈՒԼԻՍ
VENDREDI
1 JUILLET
1938

ԺԴ ՏԱՐԻ — 14e Année No. 3771 — Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ — ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ԱՆՏԻՐ ԴՈՒԲՈՒՔԻՆ, ԱՆՏԻՐ ՆԵՐՍԷՆ

Լուր մը՝ տեղական թերթերէն.

— «Ֆրանսայի Հրէական Ընկերութեանց Դաշնակցութեան Խորհուրդը լիագումար նիստ կազմելով 1938 յունիս 23ին, որոշեց իր զայրալից բողոքը ուղղել Գերմանիոյ հակահրէական յարաձուն խստութեանց դէմ, որոնք իրենց զարհուրանքով եւ խայտառակութեամբ կը գերազանցեն ինչ որ կրնային երեւակայել առողջ մտքով մարդիկ :

Ժողովը կը հաստատէ թէ Հրեաները օրէնքէ դուրս հռչակելէ վերջ, Գերմանիա կատաղօրէն կը ձգտի անոնց քնաջնջումին: Եւ ստիպողական կոչ մը կ'ուղղէ աշխարհի եւ մասնաւորապէս Ֆրանսայի հանրային կարծիքին, որ երբեմ չի վարանիր իր ձայնը բարձրացնել յանուն արդար դատերու, որպէսզի պախարակեն այս խայտառակութիւնը »:

Դուք ալ կարդացէք եւ դատեցէք,— Ահաւասիկ հալածական ժողովուրդ մը, որ ունի ընկերութիւններ, եւ այդ ընկերութիւն - ներէն կազմուած Դաշնակցութիւն մը, ունի գործադիր խորհուրդ, որ ժողով կը գումարէ պարբերաբար, իր չարն ու բարին դատելու, բողոքներ բանաձեւելու, զանազան ձեռնարկներ կատարելու համար :

Եւ բարեհաճեցէք պահ մը ձեր նայուածքն ուղղել դէպի հայկական հորիզոնը, սկսելով Փարիզէն :

Անշուշտ աւելի բազմաթիւ են մեր «ընկերութիւնները»— կուսակցութիւն, Հայրենակցական կամ Երիտ. Միութիւն եւ ուրիշ ինչ որ կ'ուզէք :

Բայց, ո՞ւր է անոնց «Դաշնակցութիւնը»,— կազմակերպուած մը կեդրոնացեալ եւ կեդրոնաձիգ, իր գործադիր խորհուրդով, որ «լիագումար ժողով» կազմէր, ընթացիկ հոգերու կամ բացառիկ տագնապներու առթիւ...

Չար բերաններ ապածի կարգ անցուցած են մեր առեւտրական ճարպիկութիւնը, ըսելով թէ մէկ Հայը երեք Հրեայ կ'արժէ :

Բայց եթէ Հրեան կը գերազանցենք առեւտուրի հրապարակին վրայ, ինչո՞ւ պիտի անճրկէինք, անկէ վար պիտի մնայինք հանրային ասպարէզին մէջ:

Չէ՞ որ, երկու պարագաներուն մէջ ալ, ուշիմութիւնը, աշխատանքը եւ յարատեւութիւնը կը կազմեն բուն արժանիքը :

Արդ, այս երեք յատկութիւններէն ո՞րը պակաս է մեզի, անհատական կեանքի մէջ:

Եւ ինչո՞ւ պիտի պակսի, երբ կարգը կուգայ հանրային հոգերու: Բուն բառով՝ ինքնապաշտպանութեան :

Ե՞րբ մեր մխիթն անցայ իրար գալ, սա վերջին երկու տարուան յարաճուն տագնապներուն առեն:

Ամբողջ դեկավարութիւն մը փոչիացաւ Հայաստանի մէջ, ըմբոստացուցիչ, դժոխային պարագաներու տակ, առանց ասպարէզի եւ տարիքի խտրութեան,— եւ մարդ չշարժեցաւ տեղէն: Շչուկ մը անգամ չլսուեցաւ, դոնէ իրրեւ մարդկային չարժուձեւ (ժէսթ) :

Ընդհակառակն, հայրենասէր կոչուած մարդիկ պատի՛ւ սեպեցին կա՛մ իրենց պատեհարին մէջ կծկուիլ, եւ կամ անպատկառ, շնական քթքիչներ արձակել, անգամ մը եւս մեռցնելով բռնօրէն մահացած, խոշտանգուած, արգելափակուած կամ աքսորական զոհերը: Զոհեր որոնք, ամէն պարագայի մէջ, իրենց իսկ փառաբանած նպատակներուն կը ծառայէին, եւ ինկան այդ ճամբուն վրայ, ոչ թէ Դաշնակցութեան սեւ աչքերուն համար:

Ասդին, Արեւքսանդրէթի եւ ամբողջ Սուրիոյ մէջ, անըմբռնելի, անթափանցելի դաւ մը լեզի քամել կուտայ հազիւ տեղառորուած ժողովուրդի մը: Ամբողջ բազմութիւններ խուճապի մատնուած են արդէն, եւ ճար մը, լոյս մը, ելք մը կը փնտռեն, փարատելու համար ահաւոր մղձաւանջը :

Դարձեալ նոյն անչարժութիւնը: Նոյն անբռնացած, տմարդի վիճակը :

Կարծես թէ հարցը կապ չունի սա տարագիր ժողովուրդի մէկ մասին սպառնացող պատուհասի մը հետ, այլ հեռաւոր ճախճոնի մէջ պատահած երկրաշարժ մըն է,— փոթորիկ մը՝ Կուաթէմալայի կամ Հրոյ Երկրին մէջ:

Կ'ըսե՞ն թէ մէկ - երկու ծանօթ երեւելիներ դիմեր են ձեռնհաս իշխանութեան, ընդունելով այս կամ այն պաշտօնատարին կողմէ :

Ե՞րբ գացեր են: Որո՞ւ դիմեր են: Ի՞նչ են ըսեր: Ի՞նչ պատասխան ստացեր են: Կը բաւէ՞ ինչ որ ըրեր են:

Չէ՞ր արժեր լուսաբանութիւններ հաղորդել այս մասին, եթէ ոչ հրապարակաւ, դոնէ ներկայացուցչական ժողովի մը մէջ :

Ժամանակին աշխարհ իրար անցուցինք, երբ գործադրութեան, 10 առ հարիւրի կամ զինուորագրութեան հոգեր ունէինք, այն ալ մխայն այս գաղութին մէջ: Ժողովներ, բանաձեւեր, ձեռնարկներ ...

Արեւքսանդրէթի գաւառին, 30 – 35,000 հոգինոց համբանքին, Թերեւս ալ Հալէպի (60,000) եւ սուրիական ուրիշ շրջաններու բազմութեանց ազգային եւ ֆիզիքական մահաոդութեան խնդիրը քանի մը հարիւր զինուորցուներու հարցին չա՞փ ալ արժէք չունի:

Տակաւին առջի օր Հալէպէն թղթակցութիւն մը կ'ըսէր թէ «անհրաժեշտ է ժամ առաջ խորհիլ գաղութներու ապակցութեան մասին, անհնինալի չմատնուելու համար»:

Միւս կողմէ, տնտեսական թշուառութեան ձայներ կը հասնին եւ դիմումներ կատարուած են Բարեգործականին :

Ո՞ւր է որ եւ է բարենչան երեւոյթ, որ հասուտաէր թէ մարդիկ կ'ըմբռնեն անցուգարձը, կը զգան տագնապին խորութիւնը, եւ կը գործե՛ն:

Որ եւ է տեղ եղա՞ծ էինք այսքան անտէր, ներսէն թ՝ դուրսէն: Ծերով եւ երիտասարդով ...

Շ.

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՊԻՏԻ ՉԿԱՏԱՐՈՒԻ ՍԱՆՁԱՔԻՆ ՄԷՋ

Ազգաժողովին ցանցնախագահութիւնը կը վերադառնայ

«Տէյլի Թելեկրաֆ»ի թղթակիցը կը հեռագրէ ժընեւէն, երեքշաբթի օրուան թուականով .—

Ազգաժողովին կողմէ կազմուած միջազգային յանձնախումբը, որ պիտի հսկէր Ալեքսանդրէթի Սանճաքին առջին ընտրութեանց, երեկոյան կը սկսի իր յառաջիկայ երկու շաբաթներու ընթացքին. հետեւաբար ընտրութիւնները երբեմ պիտի չկատարուին :

Յանձնախումբը դադրեցուց արձանագրութիւնները եւ ընտրական պատրաստութիւնները, ինչպէս հաղորդած էի արդէն, տեղեկացնելով Ազգաժողովին թէ մինչեւ որ հակառակ հրամաններ չտանայ հինգշաբթիէն առաջ, պիտի չշարունակէ յանկերու արձանագրութիւնները եւ ընտրական նախապատրաստութիւնները:

Յանձնախումբը ժողովրդականութիւն գտած չըլլալով կարգ մը չրջանակներու մէջ, կը կարծուի թէ իր մեկնումը պիտի դիւրացնէ Սանճաքին կացութիւնը: Ամէնէն կարեւոր պարագան այն է, սակայն, որ հաւաքուած պիտի ըլլայ գլխաւոր խոչընդոտը՝ ֆրանսոյ եւ Թուրքիոյ ընդհարման ամէնէն լուրջ պատճառը—Սանճաքի երեսփոխանական ժողովին մէջ Թուրքերուն տրուելիք աթոռներու թիւը— այսպէս մէկզի դրուելով, հաւանաբար տեղական ինքնավարութեան նոր ձեւ մը պիտի դանուի փոխադարձ համաձայնութեամբ:

Կարելի է դրեթէ ստոյգ նկատել որ միջազգային ընտրական յանձնախումբը երբեք նոր հրահանգներ պիտի չտանայ ժընեւէն, որ փոխէ մինչեւ հինգշաբթի օր իր աշխատանքները դադրեցնելու որոշումը :

*** Դարձեալ ժընեւէն կը հեռագրեն յունիս 29 թուականով (չորեքշաբթի) .—

Ազգերու Դաշնակցութեան քարտուղարը յունիս 26 թուակիր հեռագիր մը ստացաւ Ալեքսանդրէթի միջազգ. յանձնախումբի Նորվեկիացի նախագահէն՝ Պ. Ռայնէրսէ, որ կը տեղեկացնէ թէ յանձնախումբը որոշած է փակել իր աշխատանքները եւ թէ վերջակէտ դրած է արձանագրութեանց: Կը կարծուի թէ յանձնախումբը ժընեւ պիտի վերադառնայ մօտերս:

Թուրքիա եւ Ֆրանսա հաստատացուած են արդէն

Տեղական թերթերը կը դրեն թէ բանակցութիւնները յաջողութեամբ կը շարունակուին արտաքին նախարարին եւ Փարիզի Թրքական դեսպանին միջեւ, Ալեքսանդրէթի Սանճաքին մէջ հաստատուելիք Ֆրանսական եւ Թրքական զօրամասերու քանակութեան մասին: Նախարարը եւ դեսպանը նոր տեսակցութիւն մը ունենան առջի օր :

Էնկիւրիէն կը հեռագրեն յունիս 29 թուականով .— Լաւատեղեակ աղբիւրէ քաղուած լուրերու համաձայն, Ֆրանսայի հետ բանակցութիւնները կատարեալ համաձայնութիւն յանգած են բոլոր վիճելի կէտերու մասին : Համաձայնութեան պայմանները պիտի հրատարակուին այս շաբթուան ընթացքին :

ԻՏԱԼԻԱ ԿԸ ԽՈՍՏԱՆԱՑ ԵՏ ԿԱՆՉԵԼ 10.000 ԿԱՄԱՒՈՐՆԵՐ ԵԹԷ...

Անգլիա միջոց կը ճնշէ

Անգլիական կառավարութիւնը կը շարունակէ ճնշել Իտալիոյ վրայ, որպէսզի իր ազդեցութիւնն ի գործ դնէ, դադրեցնելու համար Զօր. Ֆրանքոյի օդանաւերուն յարձակումները անգլիական նաւերու դէմ: Կ'ըսուի թէ Զօր. Ֆրանքօ հաւաստիքներ տուած է անգլիական գործակալին միջոցաւ, որ Լոնտոն գնաց, զանոնք իր կառավարութեան հաղորդելու համար: Տրուած պատասխանը դոհացուցիչ կը համարուի :

Զրոյցի մը համաձայն, իտալական կառավարութիւնը պատրաստակամութիւն յայտնած է եւս կանչելու 10.000 իտալացի կամաւորներ, պայմանաւ որ Անգլիա փոխադարձութիւն մը արամադրէ իրեն եւ անմիջապէս ճանչնայ Զօր. Ֆրանքոյի պատերազմիկի հանդամանքը :

Զօր. Ֆրանքոյի օդան. պլխաւոր կայանը Մայորքա կղզին ըլլալով, Անգլիոյ աշխատաւորականները եւ ազատականները կը պահանջեն պաշարել զայն անգլիական մարտանաւերով: Պ. Չեմպըրլէն մերժեց այս պահանջը, եւ նախընտրեց իտալական կառավարութեան ուշադրութիւնը հրաւիրել այս կէտին վրայ: Կը կարծուի թէ Մուսոլինի այս անգամ գործնապէս պիտի միջամտէ, Անգլիոյ դոհացում տալու համար :

Անգլիոյ երեսփ. ժողովին մէջ հարցումներ եղան այս մասին, բայց վարչապետը մերժեց պատասխանել: Բայց եւ այնպէս իրազեկներ կը հաւաստեն թէ Հռոմի անգլիական դեսպանը լուրջ դիտողութիւններ ուղղած է Իտալիոյ արտաքին նախարարին, որուն հետ նոր տեսակցութիւն մը ունենալ առջի օր: Նոյն աղբիւրին համաձայն, դեսպանը այս առթիւ յանձնած է Պ. Չեմպըրլէնի անձնական նամակը՝ ուղղուած Մուսոլինիի: Կ'ըսուի նաեւ թէ բարեկամներ հասկցուցած են Մուսոլինիի որ եթէ Պ. Չեմպըրլէն չյաջողի պաշտպանել անգլիական նաւերը, կրնայ պաշտօնէ քաշուիլ եւ իր տեղը տալ ոչ - բարեկամ վարչապետի մը:

Ֆրանսայի արտաքին նախարարը առջի օր տեսակցութիւն մը ունեցաւ Փարիզի անգլիական դեսպանին հետ, այս հարցերու մասին:

*** Մինչ այս մինչ այն, կռիւները կատաղօրէն կը շարունակուին Սպանիոյ մէջ: Վերջին լուրերու համաձայն, Զօր. Ֆրանքոյի զօրքը յառաջ կը խաղայ Միջերկրականի ափերուն վրայ, դէպի Քասթէլլոնի հարաւակողմը :

ՓԱՐԻԶԻ քաղաքապետական խորհուրդին էմմաուսյցի տեղեկաբերը առջի օր կարգաց իր զեկուցումը, որուն համաձայն այս տարի բացը պիտի ըլլայ 900 միլիոն ֆրանք: 1936ին 706 միլիոն էր: Տուրքերը աւելցնելու տեղ մնացած չըլլալով, տեղեկաբերը կ'առաջարկէ լայն կրճատումներ կատարել :

ՕՐԸ ՕՐԻՆ

ԴԱՒԱՃԱՆՈՒԹԻՒՆ ...

Անճառելի՛, անպարտկելի մեղք մը գործուեր է Պուէրէշի մէջ, **1918** յունիս 11ին, օրը ցերեկով :

Երեւակայեցէք,— ինչպէս ամէն տեղ, Պուէրէշի մէջ ալ Դաշնակցականները Մայիս **28**ի տօն են սարքեր, մեծ հանդիսաւորութեամբ : Նախագահը՝ ընկեր Դրօ, բանախօսը՝ ընկեր Ս. Սրեճց:

Այդ ոչինչ :

Հանդէսին ներկայ են եղեր Ռումանիոյ առաջնորդը, Յուսիկ պր. Զօհրապեան, եւ հայ կաթողիկէ թեմին առաջնորդը, Հ. Սահակ Կոգեան :

Այս ալ ոչինչ :

Ընկեր Դրօ, որ երեւի նախագահականն շնորհեն ալ նոյնիսկ վարպետօրէն կը վայելեցնէ ինչպէս, երբեմն, մաւգերը, բանախօսելու կը հրաւիրէ նախ եւ երկու Առաջնորդները :

Հ. Ս. Կոգեանի համար նորութիւն մը չէ այս պարագան, ինչպէս ուրիշ կաթողիկէ Հայրերու համար, Մխիթարեան կամ Լեւոնեան :

Նորութիւնը — գայթակղեցուցի՛չ, անհեթեթի՛, եպերելի՛,— այն է որ Հայոց Առաջնորդն ալ կ'ընդունի հրաւէրը եւ կը խօսի՛: Կը խօսի ու կը փառաբանէ, կը պանծացնէ՛ Մայիս **28**ը.

— « *Միայն ներկայ եմ այս հանդիսին, բայց բոլորն այնքան փառաւոր է, առիթը այնքան նուիրական, որ ոչ միայն չեմ ուզեր մերժել նախագահին առաջարկը, այլ կ'ուզեմ խօսիլ եւ պիտի խօսիմ :*

Հայ ժողովուրդը միշտ եղած է ազատասէն եւ պահած է իր այդ բնազդը իր պատմութեան ամէնէն դժբնդակ րոպէներուն իսկ: Մեր պատմութեան մէջ կան ծանօթ ու անծանօթ բազմաթիւ հերոսներ որոնք առանձինչ զրելով իրենց կեանքը, պայքարած են ազատութեան համար: Հայը կոգեան յիշեց երուանդ Հայկազնը, ես կը յիշեմ Դէորգ Մարզպետունին, Թէոդորոս Ռշտունին, Թորոս Լեւոնեան, Դաւիթ Բէկը եւ ուրիշներ, որոնք կուրծք տուին իրենցմէ անհամեմատ աւելի գերազօր թշնամիներու դէմ ու յաճախ յաղթեցին :

Հայ ժողովուրդը ամէն բան տուած է ի խնդիր իր ազատութեան» :

Յուսիկ պր. աւելի մեծ մեղմ մըն ալ գործեր է,—արտասանելով «Ազատն Աստուած»ի վերջին տունը.

Ես մինչ ի մահ, կախազան,
Մինչեւ անարգ մահու սիւն
Պիտի գոռամ, պիտ գոչեմ
Անզադար ազատութի՛ւն...

Եւ աւելի ոգեւորուած, բացագանչեր է.

— « *Սիրելի ժողովուրդ, ես կասկած չունիմ թէ՝ հայութիւնը, որ տակաւ իր ծոցէն այնքան անձնուէր, հին ու նոր հերոսներ, Մայիս 28ը կերտող զինուորներ, ամէնէն անծանօթներէն մինչեւ ամէնէն համբաւաւորները, կառչած դաշտին մէջ նահատակուածներէն մինչեւ անոնց ազգ մը նացող ընկերները, Դրօներն ու իր նմանները, այդ հայութիւնը միշտ հաւատարիմ իր ազատատենչ խառնին, օր մը կը հասնի անոր: Կեցցէ ուրեմն ազատասէր հայ ժողովուրդը :*

Կեցցէ՛ ազատութիւնը » :

Եպսկոպոսներն ու վարդապետները փախչելով կը փախչին ոչ միայն Մայիս **28**էն, այլեւ Ապրիլ Տասնըմէկէն (բայց ոչ «Էքսէլսիըր»էն):

Անշուշտ Յուսիկ պր.ի դաւանաբանութեան պատճառը այն է որ Ամենայն Հայոց կաթողիկոսը խեղդած են (ներողութիւն... յանկարծամահ է- դեր է ...):

Բայց ինչո՞ւ անհրկիզ :

Կարելի չէ՞ անմիջապէս դատաստանական խորհուրդ մը կազմել բոլոր ամկավար, հնչակ, բոլշեւիկ եւ ուրիշ «ազգասէր» խմբագիրներէն, յօդուածագիրներէն, ճառախօսներէն եւ փրկիչներէն,— բոլոր անոնցմէ որ չեն հաւատար կաթողիկոսին սպանութեան, եւ հրապարակաւ դատել Ռումանիոյ առաջնորդը :

— Երիտասարդներ ալ կան չհաւատացողներուն մէջ :

— Անոնք ալ թող այդ «ազ-սազալ» ժողովականներուն ծխախոտի մոխիրները ժողվեն եւ ցրուեն իրարու խունկ :

ՎԱՀԷ

ՈՐ ԴԻՍՈՒՄ ՕՏԱՐԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Ապրիլ օր Փարիզեան շրջանի ժողովրդական ձակատի դիւանէն պատուիրակութիւն մը ներկայացաւ ներքին նախարարին եւ պարզեց ոստիկանական վարչութեան կողմէ յարուցուած բազմաթիւ դժուարութիւնները, Ֆրանսա բնակող օտարականներու մասին: Այս առթիւ բողոքից Ֆրանսայի եւ ժողովրդապետութեան բարեկամ օտարականներու արտաքսումներուն դէմ :

Նախարարը խոստացաւ միջոցներ ձեռք առնել, որպէսզի ձեռնհաս իշխանութիւնը մարդասիրութեամբ վարուի: Նախարարը միեւնոյն առեն հաստատեց թէ բոլոր մասնաւոր պարագաները պիտի քննուին, համապատասխան լուծումը տալու համար :

Մահապատիժ յրտնութեան դէմ

Նոր հրամանագիր մը պարզելով «օտար տեղեկատու դրասենեակներու գործունէութիւնը մեր երկրին մէջ», եւ այս առթիւ յիշելով մահապատիժն - րու հաստատումը դրացի երկիրներու, մասնաւորապէս Գերմանիոյ եւ Իտալիոյ մէջ, կը բացատրէ թէ Ֆրանսայի մէջ հաստատուած պատիժները անբաւական են, խափանելու համար օտար լրտեսներու գործունէութիւնը :

Հետեւաբար, այսուհետեւ մահապատիժը պիտի գործադրուի նաեւ խաղաղութեան առեն, լրտեսական ոճիրին դէմ: Մահապատիժ կրնայ գործադրուիլ նաեւ այն ոճիրներուն առթիւ որ կը գործուին պետութեան արտաքին ապահովութեան դէմ :

*** Ուրիշ հրամանագիր մը կը ջնջէ թիապարտութիւնը : Անոնք որ տաժանակիր աշխատանքի դատապարտուած են, այլեւս կույանա պիտի չղրկուին, այլ իրենց պատիժը պիտի քաւեն արգելարանի մը մէջ, ենթակայ՝ աշխատանքի եւ խստարկելութեան (դիչեր ցերեկ): Պատգելութիւնը երեք տարի պիտի ըլլայ անոնց համար որ տաժանակիր աշխատանքի դատապարտուած են ցմահ, երկու տարի՝ եթէ պատիժը առ նուազն տասը տարի է, եւ մէկ տարի՝ եթէ տասը տարիէն վար է: Պայմանաւոր արձակում չկայ տաժանակիր աշխատանքի համար :

10,000,000,000 ֆրանքի նոր փոխառութիւն մը

Հրամանագիր օրէնքներու չորրորդ շարքին (107 օրէնք) մէկ հրամանագիրը կ'արտօնէ 10 միլիառ ֆր.ի նոր փոխառութիւն մը կնքել Պանք ոը Ֆրանսէն

Տեղական թերթերը կը գրեն թէ այս հրամանագիրը եւ ուրիշ եմատական օրէնքներ նպաստաւոր տպաւորութիւն չձգեցին տակարանին վրայ: Հրատա -

(Յուրերու շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

ՄԻՄԻՆԴԵՐ ԱՅԳԴԱՏՈՒՆ ՄԵՂ

Իրավ ալէք մոխրի վերածուած ու ապրումներէ ճմռթուած մարդիկ կան, որոնք ոչ մէկուն կը հետաքրքրեն, ոչ մէկուն կը հարցնեն թէ ինչպէ՞ս կ՚ապրին, ինչպէ՞ս կ՚անցնեն իրենց օրերը։ Անոնք ալ ոչ մէկուն կը հարցնեն թէ ինչպէ՞ս կ՚ապրի աշխարհը, ինչպէ՞ս կ՚անցնեն իրենց օրերը։ Անոնք ալ ոչ մէկուն կը հարցնեն թէ ինչպէ՞ս կ՚ապրի աշխարհը, ինչպէ՞ս կ՚անցնեն իրենց օրերը։ Անոնք ալ ոչ մէկուն կը հարցնեն թէ ինչպէ՞ս կ՚ապրի աշխարհը, ինչպէ՞ս կ՚անցնեն իրենց օրերը։

Միմին մը ունիմ ես ալ, որ ինծի համար ամէն ինչ է։ Ան է իմ աշխարհս, ան է իմ կեանքս, ան է իմ ամէն ինչս։ Ան ալ ոչ մէկուն կը հարցնէ թէ ինչպէ՞ս կ՚ապրի աշխարհը, ինչպէ՞ս կ՚անցնեն իրենց օրերը։ Ան ալ ոչ մէկուն կը հարցնէ

Վահրամ Մաթևոսյան

Ամպրոպ

Ամպրոպ էր, ահագին ամպրոպ, որ ինձ արթնացրեց։ Ես ոչ միայն ամպրոպից չեմ վախենում, այլև սիրում եմ նրա գալը։ Ինչ-որ անհասկանալի հաճույք եմ ստանում, երբ լսում եմ նրա ահեղ որոտները։ Ամպրոպի ժամանակ ինձ թվում է, թե ես էլ եմ ինչ-որ մեծ ուժ, ինչ-որ մեծ զորություն։ Ես ինձ ամպրոպի հետ հավասար եմ զգում։ Ես ինձ ամպրոպի նման ահեղ եմ զգում։ Ես ինձ ամպրոպի նման ուժեղ եմ զգում։ Ես ինձ ամպրոպի նման զորեղ եմ զգում։

բակուած օրհնքին համաձայն, պետական դանձը կ'արտօնուի մինչեւ 30 միլիառ ֆրանքի գումար մը քաշել Պանք ոը Ֆրանսէն։ Տասը միլիառ ֆր.ի նոր յաւելումէն առաջ, հինգ միլիառի յաւելում մըն ալ արտօնուած էր անցեալ մարտին, խորհրդարանին կողմէ, պլոմի վարչապետութեան օրով։ Մէկ տարի առաջ, փոխառութեան օրինական սահմանը բարձրացած էր 15 միլիառ ֆր.ի, Պ. Թառէ Պոնէի կողմէ, որ ելմտական նախարար էր այն տեն ։

պ ա յ ք ա ր

Չեխական կառավարութիւնը կը չարունակէ միջոցներ ծրագրել, գոհացնելու համար Գերմաններու պահանջը։ Մինչ այս մինչ այն, Սլովաքներուն հետ դլուխ վերցուցած են նաեւ Հունգարները եւ ամբողջական ինքնավարութիւն կը պահանջեն։

Փրակայի գերմանական դեսպանը բողոքագիր մը ուղղեց չեխական կառավարութեան, դանդատելով թէ կարգ մը քաղաքներու չեխ դպրոցականները երդ մը կ'երգեն որ անարդական է Հիթլերի համար։ Դեսպանը պահանջեց անմիջապէս միջոցներ ձեռք առնել եւ պատժել յանցաւորները ։

*** Չեխոսլովաքիոյ հիթլերական կուսակցութեան (Հէնլայն) մէկ ժողովին մէջ, նախագահը յայտարարեց թէ կուսակցութեան անդամներուն թիւը 1.300.000ի հասած էր, մայիսի վերջը, հետեւաբար «կազմակերպուած ժողովուրդ մը» կը ներկայացնէ։ 1933ին կուսակցութեան անդամներուն թիւն էր 5 — 600.000։

ՋԱՆԱՋԱՆ ԼՈՒՐԵՐ ՔԱՆԻՄԸ ՏՈՂՈՎ

ԾԱՆՐ ՅՈՒՈՎՈՒԹԻՒՆՆԵՐ պատահեցան Թէլ Ավիվի մէջ (Պաղեստին), երբ հրեայ երիտասարդ մը հրացանի կը բռնուէր, համաձայն զինուորական առեանի նոր օրէնքին։ Բազմաթիւ ազերասպիրներ ուղղուած էին անգլիական կառավարութեան եւ Թագաւորին, բայց անօգուտ։ Ամբոխը կատղելով պատռտեց պաշտօնական չէնքերու վրայ պարզուած անգլիական դրօշները։ Զօրքը կրակ բացաւ եւ 17 հոգի վիրաւորուեցան։ Երուսաղէմի մէջ ալ յուզումը աստիճացած ըլլալով, պաշարման վիճակ հրատարակուեցաւ։

ԱԶԳԱՅԻՆ թատրոններու յատկացուած վարկերուն վրայ 24.946.000 ֆր.ի դումար մը աւելցուց կառավարութիւնը։ Օփերան, որուն նպաստի գումարը 12.561.000 ֆրանք էր, 14.738.000 ֆրանք եւս պիտի ստանայ, իսկ Օփերա Քոմիքը (5.701.000), 10 միլիոն եւս։ Որով միայն այս երկու թատրոնները պիտի ստանան 43.000.000 ֆրանք։ Օպէռնն ալ, որուն նպաստը 1.667.000 ֆրանք է, պիտի ստանայ 1.333.000 եւս։

ՏԱՐԱԾՔԻ ՄԷՋ ԲՈՆՈՒԵՑԱՆ վեց մնատուներ, որոնց վրայ «երչիկ» գրուած էր, բայց բուն պարունակութիւնը 200 քիլօ ափիոն էր։

ԿԱԶԻՆ ԳԻՆՆ ԱՀ պիտի բարձրանայ, ինչպէս եղաւ Լուրը։ Վերջնական որոշումը պիտի տրուի այսօր, ուրբաթ։

ՄՈՍԿՈՒԱՑԷՆ կը հերքեն այն լուրը թէ դաւադրութիւն մը սարքուած է Զեկայի վարիչին՝ Եժովի դէմ, զայն թունաւորելու համար։ Կարգ մը թերթեր կը պնդեն թէ Եժովի խոհարարին յանձնարարուած էր թունաւորել անոր կերակուրը եւ թէ բազմաթիւ ձերբակալութիւններ կատարուած են։ Մանաւանդ պատէս կ'ամբաստանուին Զեկային երկու բարձր պաշտօնեաները, Զերպաքով եւ Բրոակի ։

ԳԵՐՄԱՆԻՈՑ ԹՈՒՐՔ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՍԵՆԵԱԿԻՆ տասնամեակին առթիւ, Պերլինի Թրքական դեսպանը դոհունակութիւն յայտնեց առեւտրական յարաբերութեանց ծաւալման համար, որուն շնորհիւ հինգ տարուան մէջ առեւտուրի գումարը 75 միլիոնէն բարձրացած է 209 միլիոնի։ Գերմանիոյ անտեսական նախարարն ալ ճառ մը խօսելով, ըսաւ թէ Գերմանիա յօժարակամ իր ճարտարդործական արտադրութիւնները կը փոխանակէ Թուրքիոյ հողագործական բերքերուն եւ նախանիւթերուն հետ եւ թէ այդ յարաբերութիւնները պէտք է տարածուին նաեւ Աւստրիոյ մէջ ։

ՄՈՒԿ ՄԸ Սանթէլի բանտին մէջ կրծելով թունաւորած եւ մեռցուցած էր անմեղ ամբաստանեալ մը։ Ընտանիքը դատ բացաւ բանտին վարչութեան դէմ։

ԲՈՒՌՆ ՓՈԹՈՐԻԿ ՄԸ պայթեցաւ Անգլիոյ, ինչպէս եւ Հիւսիսային եւ արեւմտեան Ֆրանսայի մէջ, մեծ վնասներ պատճառելով ։

ՄԵԾ ԴԱՇՏԱ-ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ

23ՐԴ. ՏԱՐԱԴԱՐՁԻՆ ԱՌԹԻԻ

Նախաձեռնութեամբ ՄԱՐՍԷՑԼԻ ՎԱՍՊԱՒՐԱԿԱՆԻ ՀԱՑՐ. ՄԻՈՒԹԵԱՆ Մասնակցութեամբ ՍԷՆԹ-ԱՆԹՈՒԱՆԻ եւ Գ. ՕՏՏՕԻ Մ.ՃԻՒՂԵՐՈՒՆ

3 Յուլիս, կիրակի առաւօտէն մինչեւ իրիկուն, Պառ Ս. Ամարէ «Պէլվիւէր»ի շքեղ եւ օդասուն պարտէզին մէջ։

ԿԸ ՆԱԽԱԳԱՀԷ ՄՈՒՍԵԹԵԱՆՑ ԱՏԵՆԱՊԵՏ Պ. ԻԱՆԻԷԼ ԵԼԻՇԵԱՆ

ԿԸ ԽՕՍԻՆ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐ

ՊՕՂՈՍ ՀԻՒՍԵՆ եւ ԱԶԳԻՆ ՄԱՐՏԻՐՈՍԵՆ

Գեղարուեստական ճոխ եւ խնամուած բաժին։ Գիտի երգեն Պ. Ս. ԱԻՏՕԵԱՆ եւ Օր. Վ. ԱԻԻԿԵԱՆ, կ'արտասանեն Օրիորդներ ՄԱՌԻ ՀԱՑԱԳՈՐԾԵԱՆ, ՌՕԶԱ ԵՂԻՇԵԱՆ, Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ եւ Վեհ. ՎԱՐՈՑԵԱՆ։ Պ. Պ. Ս. ԲՐՈՒՏԵԱՆ, Ռ. ՄԱՆՈՒԿԵԱՆ, Ա. ՅԱԿՈԲԵԱՆ, Թ. ԱՄԱՏՈՒՐԵԱՆ, Պ. ՎԱՐՈՑԵԱՆ, Յ. ՂԱԶԱՐԵԱՆ եւ Պ. ՇԱԼՃԵԱՆ,

Մէջտեղ մէջ պիտի նուագէ «Ալպագի բարձրախօսը ընտիր երգեր։

Մուտք 2 ֆրանք

ՇԱՆՕՕ.— Հանդիսավայրը երթալու համար, գուռ գէլգանսէն առնել 25 թիւ հանրակառքը եւ իջնել վերջաւորութեան, կարելի է ծայրը միասին քերել։

Ամսակերջի դպրոցական հանդէս

Ֆ. Կ. ԽՈՉԻ ՓԱՐԻԶԻ Մ.ՃԻՒՂԻ ՀԱՅԵՐԷՆ ԴԱՍԸՆԹԱՑՔԻ

3 Յուլիս, կիրակի ժամը 2.30—7

32—34 Ave. Porte des Lilas. *Մէթրօ* Porte des Lilas

Երգ., պար, արտասանութիւն եւ փոքրիկ ներկայացումներ աշակերտութեան կողմէ։ Ժամը 7—12 տեղի պիտի ունենայ քաղցման հանդէսը Lilas St. Gervais եւ Bagnoletի չորսկամ մասնաճիւղին, որուն ատիթը կը խօսի Տիկ. ԵԼԼԷՆ ԲԻՒԶԱՆԴ։

Եւրոպական պարեր, l'orchestre Fuselas ei ses argentins։

Ճոխ պիւֆէ պատրաստուած անդամուհիներու նուէրներով։

Դպրոցական հանդէս

Կազմակերպուած Իսի-լէ-Մուլինոյի Կալօյա Խաչի «Թրիմեան» դպրոցի աշակերտներու կողմէ, 3 Յուլիս, կիրակի կէսօրէ վերջ ժամը 3ին «Պէլվիւէր-Շլեան» սրահին մէջ, 26 Rue Troyon, Sèvres մէթրօ Pont de Sèvres։

Երգ., արտասանութիւն, տրամախօսութիւն, պար եւ պարգեւաբաշխութիւն։ Մուտք 4 ֆրանք։

Հ. Յ. Դ.

Փարիզ

ՓԱՐԻԶԻ «Եգիպտացի» կոմիտէն ընդհանուր ժողովի կը հրաւիրէ իր շրջանի բոլոր ընկերները *1* Յուլիս, ուրբաթ երեկոյ ժամը 9ին, *6* Ավընիւ տ'Իէնայի սրճարանին վերնայարկը։

Կը խօսի Ընկ. Շ. ՄԻՍԱՓԵԱՆ «Սանճաքի խնդիրը եւ Սուրիոյ տագնապը»։

ՊԱՆԵԼ ՔԱՇԱՆԻ «Արծիւ» ենթակոմիտէի ընդհ. ժողովը *4* Յուլիս, երկուշաբթի երեկոյ ժամը 9ին իր «կորիւն» ակումբը։

Գեղարուեստ

ԼԻՈՆԻ Շրջ. կոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ «Գայլ Նաճան», «Մուսա Լեռ» եւ «Ուիւճ Գեւօ» խումբերու ընկերները այսօր, *1* Յուլիս, ուրբաթ երեկոյեան ժամը 8.30ին «Զարդարեան» գրադարանին մէջ, *181* Գուռ Լաֆայէթ։ Ներկայանալ անդամատետրով։

ՄԱՐՍԷՅԼԻ «Ընկեր կարօ» ենթակոմիտէի ընդհ. ժողովը *2* Յուլիս, շաբաթ երեկոյ ժամը 8ին, Ազնիւ Ալնուանի սովորական հաւաքատեղին։ կարեւոր օրակարգ։ Պարտաւորիչ ներկայութիւն։

Հ. Յ. Դ. ՎԻԵՆԻ կոմիտէն ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները 1 Յուլիս, ուրբաթ երեկոյեան ժամը 8ին «Խաժակ» սրահին մէջ։ Պիտի դասախօսէ ընկ. Ս. ԴԱՎՈՒՍԵԱՆ, նիւթ՝ «Հայկական հարցը մինչեւ Պերլինի վեհաժողովը»։ Լրացուցիչ պիտի կատարէ ընկ. Կ. ՄՈՒՐԱՏԵԱՆ։

ՊՈՒԱԼԻՒԶԻ «վաքանդեան» խումբի ընդհ. ժողովը *2* Յուլիս, շաբաթ երեկոյ ժամը ճիշդ 9ին, ընկ. Արապեաններու բնակարանը։ կարեւոր օրակարգ։

ԼԻՒՆԻ նորակազմ «Գայլ վաչիան» խումբը ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները այս ուրբաթ, 1 Յուլիս, երեկոյեան ժամը 9ին գրադարանի սրահը, 181 Գուռ Լաֆայէթ։ կարեւոր օրակարգ։

ՀՐԱՊԱՐԱԿԱՑԻՆ ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Հ. Յ. Դ. ԱՆՒԷՒԻ «ԱՐԱՄ» ԵՆԹԱԿԱՄԻՏԷԻ ԿՈՂՄԷ

2 Յուլիս, Շաբաթ երեկոյ ժամը 9ին Ընկերվարականներու սրահին մէջ, 149 bis, Ave. d'Argenteuil.

ԿԸ ԽՕՍԻ ԸՆԿ. *Ս. ՎՐԱՑԵԱՆ*

Նիւթ՝ «Դէպքերը Հայաստանի մէջ»։

ԵՐԴՄԱՒՆ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ

Մարսէյլի Շրջանային Կոմիտէն կը հրաւիրէ իր շրջանի բոլոր ենթակոմիտէներու եւ խումբերու անխտիր բոլոր ընկերները ներկայ ըլլալ ընկերական Ընդհ. ժողովի, 2 Յուլիս, Շաբաթ երեկոյ ժամը 8.30ին, Շահրիկեան սրահին մէջ, ուր տեղի պիտի ունենայ վերջին մէկուկէս ամսուան ընթացքին մեր շարքերը մտած ՆՈՐԱԳԻՐ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐՈՒ ԵՐԴՄԱՒՆ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ։

ԿԸ ԽՕՍԻ ԸՆԿ. *Վ. ԻՇԽԱՆԵԱՆ*

կը հրաւիրուին նաեւ համակիրները։

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

Հ. Յ. Դ. ՎԱԼԱՆՍԻ ԿՈՄԻՏԷԻ ԿՈՂՄԷ

3 Յուլիս, կիրակի առաւօտէն մինչեւ երեկոյ Սէնտիէրլի Ճանօթ տեղին վրայ։

Գեղարուեստական ճոխ բաժին Զոմի «Ալրաքս» երգչախումբին կողմէ, նաեւ հայկական եւ եւրոպական պարեր T. S. F.ի նուագով։

Երթեւեկի համար առնել հանրակառքը, որ իւրաքանչիւր ժամ ունի իր երք ու դարձը։

Կ. Խ չի Սառեղի Մ.ճիւղին թէյասեղանը

3 Յուլիս, կիրակի կէսօրէ վերջ ժամը 2.30ին Սալ ոը-Նոսի մէջ, 81 Rue de Paris, Sarcelles։

Գիտի բանախօսէ Կեդրոնի վարչութեան կողմէ

ՏԻԿ. *ՏԻՐՈՒՀԻ ՄԻՍԱՔԵԱՆ*

Երգ., արտասանութիւն եւ զանազան անակնկալներ տիկիններու եւ օրիորդներու կողմէ։

ԿԱՌԱԽՈՒՄԲ.— կառ տիւ Նորէն ժամը *12.35, 13.50, 14.35, 15.35։*

Փարիզի Հայ երիտասարդաց Միութիւնը Մուրատ-Ռափայէլեան ճեմարանի աշակերտաց Միութեան եւ Հայ երիտասարդաց Ակումբը

Առաջին անգամ ըլլալով միաձեռնաբար կը կազմակերպեն Թատերական երեկոյթ մը

2 Յուլիս, Շաբաթ երեկոյեան ժամը 9ին

Salle LANCRYի *մէջ*, 10 Rue Lancry

Meiro: Lancry, République, St, Martin

ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԻՒՆ

ՋԵԽՈՎԻ *Վ. ՀՈՒԿԸ* (ՄԷԿ ԱՐԱՐ)

Մասնակցութեամբ եւ ղեկավարութեամբ ԼԱՒՔԱՅԻ

ԵՒ Յ. ՊԱՐՈՆԵԱՆԻ *ՊԱՂՏՅԱՍԱՐ ԱՂԲԱՐԸ*

(երեք արար Պոլսահայ կեանքէ)

Տոմսերու գինը, 15, 10 եւ 5 ֆրանք։

25ԱՄԵԱԿ

ՓԱՐԻԶԻ ՀԱՑ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԵԱՆ

Փարիզի Հայ Տիկնանց Միութեան (Իրբերու եւ Պետ. Հ. Կարմիր Խաչի Օգն. Մասնաճիւղեր) գործունէութեան 25ամեակը պիտի տօնուի 2 Յուլիս, Շաբաթ օր, ժամը 16էն 20, Royale Monceauի սրահներուն մէջ, 35 37, 39, Ave. Hoche, Paris (16e.), նախագահութեամբ զօր. Պրէմոնի։

Մուտք՝ 20 ֆրանք, թէյը միասին։

Գեղարուեստական բաժին, նուագախումբ, թէյ-պար։

ԿԸ ՆԴՐՈՒԻ Լօս-Անճելոսաբնակ Շիրակցի հայրենակիցներէն Պ. Մեսրոպ, Գառնիկ եւ Վահան Բողիկեաններէ իրենց հասցէն իմացնել Hagopian A., 17 Rue de Paris, Gentilly (Seine) France։

ԳԱՑԷՔ ՏԵՍԷՔ ԼԻՈՆԻ ՄԷՋ

Cinéma REXY

Cours Lafayette. angle Garibaldi

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԵՒ ՇՐՋ. Հայ բենակցական Միութեան Ֆրանսայի շրջանի պատգամաւորական ժողովը կը դումարուի 3 Յուլիս, կիրակի կէսօրէն վերջ ժամը ճիշդ 3ին, Բարեգործականի սրահը, 8 Rue Bossuet։ կը խնդրուի Փարիզի եւ շրջանի պատգամաւորներէն ըլլան ճշդապահ։

ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՍԱՆԵՐՈՒ Միութեան Վարչութիւնը կազմակերպած է ընկերա-համակրական հաւաքոյթ մը յառաջիկայ Յուլիս 3ին, կիրակի ցերեկէն վերջ, ճիշդ ժամը 3ին, զուարար ըմպելիներու սեղանի մը շուրջ, Ռաֆֆի ճաշարանին մէջ, 8 Rue de Maubeuge (Carrefour Château-dun)։ կը հրաւիրուին անխտիր բոլոր անոնք ու համակիրները։ Վառամշապուհ Աբգեպ. յատկապէս հրաւիրուած է պահ մը նախագահելու համար։ ՏՈՆՕՕ... Ծախքերու մասնակցութիւն՝ անձ գլուխ 5 ֆր., փոքրիկները հրաւիրեալ կը նկատուին։

Le Gérant : H. STEPHAN

17, Rue Damesme, PARIS (13) — A. DER (AGOPIAN)

ՏԱՐԵԿԱՆ ՄԵԾ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՓԱՐԻԶԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻՆ ԿՈՂՄԷ

ՊԱՏՈՒԻՐ ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՄԲ **ՋԱՐԵՀ ՆԻՒՊԱՐ ՊԷՅԼԵՐ**

Մասնակցութեամբ Երիտ. Հայուհեաց եւ Հայ Երիտ. Միութեան

3 Յուլիս, կիրակի, ժամը 15—24

Օթել Ճիւլրալթարի գետահայեաց պարտէզին մէջ. Ժիւվիզի Ընտիր Նուագ, բացօթեայ պար, գեղարուեստական եւ այլ հաճելի անակնկալներ, դիւրամատչելի պիւֆէ եւ պաղ ընթրիք։

Երթեւեկի հանգստաւէտ կառքերով

Մեկնում ժամը 15էն մինչեւ 16·30, Բարեգործականի տունէն, 8 բիս Պօսիւէ

Երթեւեկի ծախք 10 Ֆր. *Հանդիսին մուտքը 12 Ֆր.*

Երիտասարդաց եւ հայուհեաց միութեան անդամներուն եւ ուսանողաց 8 Ֆր.

Ի հարկին կարելի է հանգիստավայր երթալ երթեւուղիով, Gare d'Orsay, St. Michel, Austerlitz, Gare de Lyon.

ՅԱՌԱՋԴԻՄ ՍԻՐԱՑԻ ՏԱՐԵԿԱՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍԸ

3 Յուլիս, կիրակի, տաւուտաեան ժամը 9էն մինչեւ գիշերուան 11.30

Ի նպաստ իր վարժարանին

ՐՈՊԷՆՍՈՆԻ ՄԷՋ, *Grand Arbre, Maison Fiquet*

ԿԸ ԽՕՍԻ Պ. Ն. ՊԷՉԻԿԹՇԻԼԵԱՆ

Կ'երգէն բազմաթիւ երգիչներ ու երգչուհիներ։ Զուարճութիւններ։

Նաւագախումբ՝ դեկավարութեամբ Տ. ՕՆՈՍԵԱՆԻ

Կը ներկայացուի ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ՄԸ

Ճոխ եւ ժամանակակից պիւֆէ

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ, ՄԻՋՈՑՆԵՐ.— Denfertէն առնել մեթրոյի դէպի Թոպէնսոն տանող գիծը։

Մուտք՝ 4 ֆրանք

Հ. ՋԱՐԴԱՐԵԱՆ

ՎԻՐԱՒՈՐՈՑ - ԱՅԱՄՆԱՒՈՐՈՑ

44 Rue Dunkerque (ՄԷԹՐՕ ԿԱՌ ՏԻՒ ՆՈՒ)

Tél. Trudaine 42—69

Կ'ընդունի ամէն օր ժամը 14—20։

Հաւաստիները ժամագրութեամբ։

Maison ALEXANIAN

ՀԱՆՔԱԾՈՒԻ -- ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆ

ԵԼԻՒԶԱՍԵԹԵՆ ՏՈՒՆ

10 Bld. Rodin. Issy-les-Moulineaux

7 Rue du Pourtour, Meudon


Téléphone Michelet 28—79

Ամէն տեսակի լաւ ՀԱՆՔԱԾՈՒԻՆԵՐ եւ ԱԾՈՒԻ, մատչելի գիներով։

Արագ սպասարկութիւն։

Ապրանքներու փոխադրութիւն։ Կահկահավորներու փոխադրութիւն՝ ժամանակ եւ կարգով։ Զարմանալի գին։

Hommes **Dames**



15, Bld. Bonne Nouvelle

Métro: Bonne Nouvelle **Tél.: Gut. 93-70**

ՄԵԾ ԵՒ ԱԺԱՆ ՎԱՃԱՌՔ

T. S. F.ՆԵՐՈՒՍ ՀԱՐԻՒՐԻՆ 50 ՋԵՂՋՈՎ

ԳՈՐԾԻՔՆԵՐ 200 ՖՐԱՆՔԷՆ ՍԿՍԵԱԼ

Կ'ընդունինք ամէն օր ժամագրութեամբ, Tél. Pereire 20—90



ՐԱՔԸ ՏԻՒԶ

Զուտ խաղողէ քաշուած եւ անիսոնով պատրաստուած հայկական օղին է ՐԱՔԸ ՏԻՒԶՈՒ. Զգուշացեք արուեստական օղիներէ որ ձեր ստամոքսը կ'այրէ եւ գլխուորը ջուր կը խմցնէ եւ կը վնասէ ձեր առողջութեան։ Խմեցէք միայն ՐԱՔԸ ՏԻՒԶԸ որուն անուշաբոյր, կազդուրիչ եւ աիւորժաքեր ըլլալը հաստատուած է։

Dalakupeian 24 Rue St. Lambert et 8 Rue Suffres, Marseille։

ԼՈՑՄ ՏԵՍԱԻ (սահմանափակ թիւերով)

ՅԱԿՈԲ ՀԻՍԱՑԵԱՆԻ

ԴԻՒՑԱԶՆԱԿՑՆ ՀԱՅՐՈՒՆ

(Բնական լուսանկարներով)

ՄԿՐՏԻՉ ԵՕԹՆԵՂԲԱՅՐԵԱՆ

(Ուրֆայի Հերոսամարտի ղեկավար)

Գին՝ Ֆրանսա 8 Ֆրանք, Սուրիա 6 Ֆրանք, Ամերիկա 50 սէնթ։

Բոլոր ապսպրանքները կանխիկ

Ստանալու համար դիմել H. Issayan, 38 Rue du Mésnil. Asnières (Seine) France.

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՑԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
17, Rue Damesme, PARIS (13e)

Téléphone : Glacière 15 - 70
Chèque Postal Paris 1678 - 63
(ԵՐԹԵՒԵԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ — ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՐԱՄՍԵԱՑ ԵՒԱՄՍԵԱՑ

Թրանսա եւ Գաղութներ	150 ֆրանք	75 ֆրանք	40 ֆր.
Անգլիա եւ Իտալիա	265 ֆրանք	140 ֆրանք	
Ուրիշ երկիրներ	215 ֆրանք	110 ֆրանք	

ՇԱԲԱԹ
2
ՅՈՒԼԻՍ
SAMEDI
2 JUILLET
1938

Յ-Դ ՏԱՐԻ — 14e Année No. 3772

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՄԱՒԵԱՆ

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ԱՆԽՈՒԺԱՑՈՒԻՄ «ԿԱՒԿԱՋ»Ի ՃԱԿԱՏԻՆ ՎՐԱՅ

Նորէն ուշացաւ «Ա. Հայաստան»ը :

Վերջին թիւը յունիս 5 էր, ուրեմն մօտ մէկ ամսուան : Մաղթենք որ պատահական ըլլայ եւ ոչ թէ ընդհատում, ինչպէս եղաւ անգամ մը, տեւելով երկու ամիս (1938 յունուար - փետրուար) :

Կանոնաւորապէս եկած ատենն ալ, մեծ բան մը չէինք սպասեր, իրրեւ լուսաբանութիւն կամ պարզ տեղեկութիւն : Եւ սակայն, տեսակ մը սփոփանք էր, քանի որ չունէինք ուրիշ աղբիւր, ուղղակի երեւանէն :

Ինչպէս միւս մեծ ու փոքր հանրապետութիւնները, Հայաստանն ալ ունեցաւ իր Գերագոյն Մորհուրդը (խորհրդարան), հարիւրին հարիւր սթալինեան :

Հեռագիրները հաղորդեցին թէ Հայաստանի Գերագոյն Մորհուրդը կը բաղկանայ 256 անդամներէ, որոնց 156ը բոլշեւիկ են, 100ը անկուսակցական : Պատկառելի համրանք մը կը կազմէ կին երեսփոխաններու թիւը, 56 : (Ազրբէջանի մէջ ալ 71 հոգի, 310է վրայ) :

Թերթերը չաբաթներով չռնդալից տարփողանքներ հրատարակեցին թեկնածուներու մասին, որոնց մէջ ոչ իսկ տասը հոգի կ'երեւան, իրրեւ քիչ-շատ ծանօթ անուն : (Ամէնէն նշանաւորը՝ դերասանուհի Ցասմիկ) : Միւսները նշանաւոր անծանօթներ են, յատկապէս մաղուած-զտուած եւ «միաձայնութեամբ» քուէարկուած :

Ինչպէս ամբողջ Մ. Միութեան մէջ, Մոսկուայէն մինչեւ Բաքու եւ Նախիջեւան, Երեւանի Գերագոյն Մորհուրդն ալ պիտի ծառայէ պարզապէս հանդիսաւոր նիստեր գումարելու եւ «Հանճարեղ»ը պանծացնելու, պսակաւոր աշուղներուն նախանձը գրգռելով...

Ոչ մէկ բարերար դեր կրնան կատարել այս խեղկատակ «Մորհուրդ»ները, իրրեւ հեռեւանք հաստատուած կարգուսարքին : Անոնց բոլորին ալ դլուխը կը գտնուին օրուան վարիչները, Սթալինէն մինչեւ արիւնկզակ Եժովը, Միկոյեանն ու Բերիան, որոնք ամէն հեղինակաւոր ձայն խեղդեցին, տիրաբար իշխելու, միլիոնաւոր ժողովուրդներ բանաւոր հօտի վերածելու համար :

Այդ «Մորհուրդ»ներէն ոչ մէկը ձայն չունի սեփական երկրի ճակատագրին տնօրինութեան մէջ :

Բոլշեւիկները աւելի քան երբեք ծաղրանկարի մը վերածեցին ինքնորոշման իրաւունքը, եւ «ընտրուած» պատգամաւորներն ալ պարզապէս ձայն բռնողներ են : Վարձու դերակատարներ որոնք միայն բոցավառ ողջոյններ արտայայտելու եւ ծափ զարնելու իրաւունք ունին :

Մինչ այս խեղկատակութիւնները կը կատարուին Մ. Միութեան բոլոր մասերուն մէջ, ապրին, սահմանէն դուրս, արտակարգ աշխուժացում կը տիրէ, կովկասեան ճակատին վրայ :

Վերջերս առիթ ունեցանք հրատարակելու Կովկասեան Ունսումնասիրութեանց Ակումբին մէջ կարդացուած զեկուցում մը, («Յառաջ», 21 յունիս) :

Հոչակաւոր «Կավկազ»ի աշխատակիցներէն Թամբի Էլէկխոտի, Թունդ Թրքասէր, մեղադրելով մաս մը Հայերու եւ Վրացիներու անջատողական չարժումը», նորէն յառաջ կը քշէր իր սիրական հաւատամքը.— միանալ եւ գործել «ընդդէմ Ռուսաստանի, կարմիր թէ ճերմակ» : Եւ պնդելով թէ «Մ. Քէմալի Թուրքիան երբէք չի նմանիր Սուլթաններու օսմանեան կայսրութեան», կը յայտարարէր .

— « Կովկասի հարաւային դրացիները ոչ միայն աչք չունին մեր երկրի հողամասերու վրայ, այլեւ շահագրգռուած են որ Կովկասը մնայ եւ զարգանայ իբրեւ անկախ եւ ազատ դաշնակցային պետութիւն, իբրեւ թումբ պետութիւն : Նոյնիսկ անհիմն եւ անօգուտ կը նկատեմ յուզել որ եւ է սահմանային խնդիր, ինչպէս կ'ուզեն ընել վրացական եւ հայկական որոշ շրջանակներ, Արտահանի, Արդուինի, Կարսի եւ ուրիշ տեղերու մասին : Սահմանային հարցը հարաւի կողմէ գոյութիւն չի կրնար ունենալ, քանի որ ընդունուած եւ ստորագրուած դաշինքով հարաւի սահմանագիծը վերջնական ձեւ է ստացած » :

Մենք երբեք տրամադրութիւն չունինք վիճելու այս ցնդաբանութեանց մասին, որոնք ոչ իսկ պարզ դիտողութեան կը դիմանան : Եւ ուրախ ենք որ քանի մը ունկնդիրներ, Վրացի եւ Հայ, տուած են անմիջական պատասխանը :

Հարցը այն է որ, «Կավկազ»ցիները ոչ միայն բեմերու վրայ, այլեւ գործնական կեանքի մէջ կը հետապնդեն այս քաղաքականութիւնը : Եւ պատէ պատ կը զարնուին, «Միացեալ Ճակատ» կազմելու համար, կարգ մը աշխարհակալ պետութեանց բարօյական, ուրիշներու նիւթական աջակցութեամբ :

Պարապ տեղը չէ որ հայ ունկնդիր մը կը հարցնէր թէ «Կավկազ»ի սահմանաթիւ կողմնակիցները ի՞նչպէս կրնան իրենց ամաղձիրը հրատարակել վեց լեզուներով ...

Անհրաժեշտ չէ պարզել այդ յարաճուն գործունէութեան ներքին ծալքերը : Կը բաւէ ըսել որ՝ քանի կը պղտորի միջազգային կացութիւնը, այնքան թեւ կ'առնեն այս տարրերը :

Արձանագրելով այսքանը, խօսինք ուրիշ երեւոյթի մը մասին, նոյնքան արժանի լուրջ ուշադրութեան :

Այս առիթիւ, անչուշտ երկու խօսք ալ բաժին կրնայ իյնալ սակաւ միւսներուն, --- անոնց որ Դաշնակցութեան միայն կը ծամեն չարունակ, առանց մասը մոխիրը թաթխելու : Միայն չուր ծեծելով եւ անյի ճամարտակութիւններ թխելով :

Ցաւոքանք որ, այս պարագային ալ, նոյնիսկ փիղիքական դոյութեան պայքարն է որ կը ցցուի մեր առջեւ, կովկասեան ճակատին վրայ :

Շ.

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ՖՐԱՆՍԱ ԵՒ ԹՈՒՐՔԻԱ ՀԱՄԱՁԱՅՆԵՑԱՆ ԹԷ ՍԱՆՃԱՔԻ ԵՒ ԹԷ ՈՒՐԻՇ ՀԱՐՑԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Տեղական թերթերը կը գրեն թէ Ֆրանսայի եւ Թուրքիոյ միջեւ կատարուած բանակցութիւնները բարեյաջող ելքի մը յանդեցան : Միայն հեռապրի մը կը սպասուէր, որ հասաւ առջի դիշեր, Ֆրանսացի եւ Թուրք դինուորներու համատեղութեան մասին : Համաձայնութիւնը, որ երկկ պիտի նշանագրուէր արտաքին գործերու պաշտօնատան մէջ, բացի Սանճաքի հարցին կարգադրութենէն, կը պարունակէ պայմանագրութիւն մը երկու պետութեանց սպայակոյտներուն միջեւ եւ բարեկամութեան դաշնագիր մը :

**** Ենկիւրիէն կը հեռագրեն յունիս 30 թուականով .—*

Վարչապետը յայտարարեց Ազգ. ժողովին մէջ թէ Սանճաքի մասին կատարուած բանակցութիւնները չատ յառաջացած են : Աւելցուց թէ երկուքերկիրներն ալ ջերմապէս կը փափաքին բարեկամական կարգադրութեան մը յանգիլ : Ազգ. Մեծ ժողովը լսելէ վերջ վարչապետին զեկուցումը, վստահութիւն յայտնեց եւ լիազօրութիւն տուաւ : Միեւնոյն ատեն քուէարկեց ընդհ. ներման օրէնքը եւ փակեց նստաշրջանը :

“ՀԱՑԵՐՈՒ ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆ Ը ԱԻԵԼՈՐԴ Է,,

Սուրիոյ մարզպանին հաւատամքն ու պիլիկիոյ կաթողիկոսական փոխանորդին

« Ագդակ»ի մէջ կը կարդանք (25 յունիս).—

Համաձայն նախապէս առնուած ժամադրութեան, երէկ, հինդշաբթի առաւօտ, ժամը 11.30ին, Կաթող. ընդհանուր փոխանորդ Պետրոս արք. Սարաճեան, ընկերակցութեամբ Առաջնորդարանի գործակատար Պ. Զ. Պզտիկեանի, Մեծ Սէրոյ դնաց, տեսակցելու համար մարզպան Կոմս տը Մարթէլի հետ, Սանճաքի հայութեան կացութեան չուրջ :

Դժբախտաբար տեսակցութիւնը տեղի չունեցաւ որոշեալ ժամուն, որով հետեւ մարզպանը այդ միջոցին Սանճաքի չուրջ տեսակցութիւն կ'ունենար Պէյրութի Թրքական հիւպատոսին հետ : Ն. Վսեմութիւնը ցաւ յայտնեց Սրբազանին որ անակնկալ եւ տիպղական դրազում մը կը հարկադրէ պահ մը յետաձգել տեսակցութիւնը : Բայց տեսնելով որ Թուրք հիւպատոսին հետ խորհրդակցութիւնը երկար կը տեւէ, մարզպանը, ներողութիւն խնդրելէ վերջ այս ակամայ յապաղման համար, իր դիւանապետ Պ. Շամպարի պաշտօն տուաւ ընդունել Սրբազանը եւ իր անունով բացատրութիւններ տալ :

Հայ ժողովուրդին երախտապիտական զգացումները յայտնելէ վերջ Ֆրանսայի մասին, կաթող. փոխանորդը մանրամասնօրէն պարզեց Սանճաքի հայութեան ներկայ վիճակը եւ կացութեան տիրած մտահոգութիւնը որ արտագաղթի յանգած է եւ օրէ օր կը սաստկանայ :

Ուշադրութեամբ լսելէ վերջ տրուած բացատրութիւնները, մարզպանին դիւանապետը ամէն տեսակ հաւատիք տուաւ :

— Հայերու մտահոգութիւնը, շեշտեց, աւելորդ է, որովհետեւ Ֆրանսա կը մնայ ու պիտի մնայ Սանճաքին մէջ : Ինչպէս ասկէ առաջ, ներկայիս ալ Ֆրանսա կը պաշտպանէ Հայերը : Մի հաւատաք չափազանցեալ լուրերու :

Շատ շատ, աւելցուցած է փրանսացի բարձրաստիճան պաշտօնատարը, երկու վաշտ թրքական զինուորներ պիտի մտնեն Սանճաք, փրանսական ուժերուն հետ գործակցաբար հսկելու համար Սանճաքի ներքին ապահովութեան : Թրքական այդ զինուորներու թիւը պիտի չգերազանցէ շրջանի փրանսական զինուորներու թիւը : Ասկէ զատ, նկատի ունեցէք որ թրքական զինուորները պիտի մնան Իսքէնտէրունի եւ Թուրքիոյ սահմանային շրջաններուն մէջ, իսկ փրանսական ուժերը պիտի հաստատուին Սանճաքի լեռնային շրջաններու մէջ :

Ծանելով Սանճաքի հայութեան անհանգիստ տագնապալի կացութեան մասին, մարզպանին ներկայացուցիչը յայտնած է թէ Պ. Պիւրնիէի հետ համախորհուրդ դիմումներ կատարուած են արտաքին հարկաների միութեանց :

Սարաճեան Սրբազան չնորհակալութիւն յայտնելէ վերջ ցոյց տրուած հոգածութեան եւ հաւատիքներուն համար, յայտնած է թէ մտադիր է Սանճաք երթալ եւ հանդարտեցնել հայ բնակչութիւնը : Դիւանապետը հասկցուցած է թէ այդ այցելութիւնը, որքան ալ պարզ ու փափաքելի, կրնայ թիւրիմացութեանց տեղի տալ եւ տարբեր կերպով մեկնուիլ : Բայց եւ այնպէս, աւելցուցած է, ձեր փափաքը կը յայտնեմ Կոմս տը Մարթէլի եւ պատասխանը կը հաղորդեմ ձեզի :

Կաթ. դիկոսական փոխանորդը միաժամանակ յանձնած է յուշագիր մը, ուր մանրամասնօրէն պարզուած են Սանճաքի հայութեան վիճակը եւ կարիքները :

Որեան թուրք զինուոր պիտի մտնէ Սանճաք

Արաբական գործակալութիւնը կը գրէ.—

Հակառակ Անտիոքի զինուորական բանակցութեանց չուրջ տիրող դաղտնապահութեան, Թրքական շրջանակներ կը յայտարարեն թէ երկու պատուիրակութեանց տարակարծութիւնը՝ Սանճաք մտնելիք Թրքական ուժերու թիւին մէջ կը կայանայ : Թուրք կառավարութիւնը կը պահանջէ որ նուազագոյն 4000 զինուոր ունենայ Սանճաքի մէջ, իսկ Ֆրանսացիները կը պնդեն որ 750 զինուորէ աւելի չըլլայ այդ թիւը :

Աժանց Հավաս ալ հետեւեալ տեղեկութիւնները կը հաղորդէր, համաձայնութեան լուրէն առաջ .—

Թուրքիոյ վերջին ծանուցագիրը պատճառ կը դառնայ կարեւոր դժուարութեանց : Անտիոքի զինուորական բանակցութիւնները թէպէտ դանդաղ կ'ընթանան , բայց յաջողութեան ճամբուն մէջ են : Ֆրանսա համաձայնեցաւ Սանճաքի մէջ թրքական զինուորներու ներկայութեան, գործակցելու համար փրանսական ուժերուն՝ երկրի ներքին ապահովութեան գործին մէջ : Պայման մը կայ սակայն այդ համաձայնութեան մէջ.—Ներկայիս Սանճաքին մէջ գտնուող ֆրանսական զինուորները պիտի մնան, առանց հաշուի մէջ առնուելու : Ակկ դուրս, թրքական որչափ զինուոր գայ, նոյնչափ ալ ֆրանսացի նոր ուժեր պիտի մտնեն Սանճաք :

(Յարերու շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

ՕՐԸ ՕՐԻՆ

ԳԱՃԱՃՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ, ՄԻԱՑ�էՔ

Ա.

Հանգստեան թերթերը կը գրեն թէ մօտոյ Պուտափէշթի մէջ պիտի գումարուի գաճաճներու համաշխարհային խորհրդաժողով մը, նախաձեռնութեամբ Եւրոպայի գաճաճներուն, որոնք կ'ուզեն իրենց գիտական զեկոյցներով ցոյց տալ թէ գաճաճները ալ կրնան ապրիլ մարդու պէս, եւ ոչ թէ իբրեւ խամաճիկ կամ կրկէսի դերասան : Թէ գաճաճները ալ կրնան ի գերծ դնել ամէն արհեստ, թէ... Ուրեմն, արհամարհուած, ծաղրուած այս մարդու կտորներն ալ արդարօրէն ըմբռնուացան ի վերջոյ :

Չեմ գիտեր, համագումարին մէջ՝ իրենց դժբախտութեան պատասխանատուութիւնը որո՞ւ վրայ պիտի նետեն, Աստուծոյ կարողութեան վրէպներո՞ւն թէ մարդկային ընկերութեան սխալներուն վրայ :

Ստոյգ է, որ Աստուած, տակաւին անփորձ, կարգ մը սխալներ գործեց իր եօթը օրուան մէջ, երբ աշխարհի աշխատանքը պարբերագործութեամբ գրաված էր :

Բացէ Աստուածաշունչը, Գիրք Ծննդոց, Ա. գլուխ, համար 27,— վերջերորդ օրն է, ստեղծուած է ամէն բան, կը մնայ ստեղծել միայն մարդը : «Եւ արար Աստուած զմարդն ի պատկեր իւր» : Ո՞վ է այդ առաջին մարդը,— Ադամ : Ցետոյ Աստուած հրամայեց.— «Աճեցէք եւ բազմացարուք» : Եօթներորդ օրը հանգիստ ը - րաւ : Աւելի վերջ դիտեց որ կենդանիները կը բազմանան, բայց չի բազմանար Ադամ, թէեւ «արու եւ էգ» այնինքն արձէէք (Ծննդ. Գլ. Ա. 27) : Որոշեց ստեղծել կին մըն ալ, ուշադրութի՛ւն, առաջին շաբաթը անցնելէ վերջ (Ծննդ. Գլ. Բ. 22) : Ադամ այսչէս բաժնուեցաւ իր կէսէն, կարծես ենթարկուած ըլլար այն գործողութեան, որ շատ կը կատարուի վերջերս եւ աղջիկները մանչ կը դառնան, իսկ մանչերը աղջիկ :

Թողունք Աստուծոյ առաջին սխալը եւ այս սրբագրութիւնը : Ժամանակ մը վերջ կատարուեցաւ ուրիշ սխալ մը, դարձեալ, մարդագործութեան մէջ : Երկնային դրախտը գրեթէ պատրաստ էր, անշուշտ դժոխքն ալ,— երկիր նոր էր ստեղծուած եւ մարդիկ անմեղ էին տակաւին, պէտք չկար բաժնելու անմեղը մեղաւորէն : Ու կ'ըսուի թէ, երկրի վրայ, մարդոց աղջիկները այնքան գեղեցիկ էին, որ հրեշտակները, «աւ երկնայինք», բոլորն ալ բարձրահասակ ինչպէս նոճին, հասկնալի պատճառ մը կը փընտռէին երկինքէն վար իջնելու,— «տեսեալ որդուցն Աստուծոյ զդստերս մարդկան զի գեղեցիկ էին, առին իւրեանց կանայս յամենեցունց զոր ընտրնցին» (Ծննդ. Գլ. Զ. 2) : Աստուած վսխցաւ որ անմահ կը դառնան իր հրեշտակները, «աւ երկնայինք», բոլորն ալ բարձրահասակ ինչպէս նոճին, հասկնալի պատճառ մը կը փընտռէին երկինքէն վար իջնելու,— «տեսեալ որդուցն Աստուծոյ զդստերս մարդկան զի գեղեցիկ էին, առին իւրեանց կանայս յամենեցունց զոր ընտրնցին» (Ծննդ. Գլ. Զ. 2) : Աստուած վսխցաւ որ անմահ կը դառնան իր հրեշտակները, բայց հրաշք գործեցին Աֆիլէէնի պզտիկ դաշնակիցները իրենց բաջութեամբ : Չեմ գիտեր թէ ճա՞չ են Չիլոյէ կղզիին բնակիչները (Չիլիի դիմացը), — այս կղզիին մէջ՝ մարդ, անասուն, ծառ, բոլորը կարճ են եւ չափազա՛նց կարճ : Այսուհանդերձ գաճաճները մեծ դեր խաղացած են... պալատներու մէջ, երբէ ոչ իբրեւ բաջագործ հերոս, գէթ իբրեւ... միմոս, այնքան որ Հռոմի կայսրերէն մինչեւ Պոլսոյ սուլթաններ ափերով ոսկի կը ծախսէին գաճաճ գտնելու համար : Ցիրանսայի թագուհիներէն մին փորձ մը կատարեց... գաճաճ արտադրելու : Այդ ճարտարուեստին մասին յաջորդով, որպէսզի լրիւ ըլլայ զեկոյցս, եւ զօրաւոր՝ եզրակացութիւնս, զոր, ետքէն, յանուն հայ գաճաճներուն, պիտի ղրկեմ Պուտափէշթ :

ԱՐԱՋ

ԸՆԴՀ. ՆԵՐՈՒԱԾ ԹՈՒՐՔԻՈՑ ՄԷՋ

Անգլիոյ ձեռ կեմուած դաշինքը վաւերացուեցաւ

« Տէյլի Թելէկրաֆ»ի թղթակիցը կը հեռագրէ ենկիւրիէն.—

Այսօր չորեքշաբթի, ընդհ. ներման լայն օրէնք մը քուէարկուեցաւ Ազգ. Մեծ ժողովին կողմէ, հանրապետութեան 15ամեակին առթիւ : Օրէնքը, որ անմիջապէս գործադրելի է, կը ներէ այն բոլոր քաղաքական յանցաւորներուն որ գործած են քէմալական իշխանութեան դէմ եւ դատապարտուած յեղափոխական տեսութիւններու կողմէ : Այս ներումէն պիտի օգտուին 150 անթաղաթլինեներու մնացորդները, 80 աքսորականներ որոնք Թուրքիա մտնելու իրաւունքէն զրկուած էին 15 տարի առաջ : Այս աքսորականներուն անունները արձանագրուած են Լոզանի դաշնագրին մէջ, 1923ին :

Ազգ. ժողովը մեծ խանդավառութեամբ վաւերացուց անգլեթուրք համաձայնութիւնը, որուն տրամադրութեամբ Թուրքիա 16 միլիոն ոսկի վարկ պիտի ստանայ Անգլիայէն : Այս համաձայնութիւնը կնքուած էր Մայիս 27ին : Նախարարները եւ երեսփոխանները չերմ հաւատք յայտնեցին երկու երկիրներու ապագայ գործակցութեան եւ բարեկամութեան մասին, եւ չեշտեցին այդ բարեկամութեան արժէքը միջազգ. ներկայ կացութեան մէջ : Այս առթիւ բացատրեցին թէ Թուրքիա, որ վերածնաւ չնորհիւ Աթաթիւրքի, այլեւս Օսմանեան կայսրութեան «հիւանդ»ը չէ, այլ բոլորովին ապաքինած եւ ուժեղ պետութիւն մը :

Քաղաքական կուսակցութիւններ կրկին կ'ծնին

Թրքական աղբիւրէ կը հաղորդեն թէ Ֆրանսացի հրամանատար Քոլէ հրամանագիր մը հրատարակելով, ջնջեց Հաթայի բոլոր քաղաքական կուսակցութիւնները :

Այդ երեւելիներէն Արսուլիի ձերբակալման առթիւ, Անթաքիոյ արաբական թաղին մէջ բողոքի գործադուլը կը չարունակուի : Հրամանատար Քոլէ արաբ երեւելիներուն հաղորդեց թէ գործադուլը վերջ գտնելէն երեք օր ետք, Արսուլի ապատ պիտի թողուի :

ՆԱԻԱԳԱՀ ՐՕԶՎԷԼԹ ճառ մը խօսելով, դատապարտեց այն ազդերը որ «Ետ կը տանին ընկերութեան ժամացոյցը, քաղաքացիները զրկելով իրենց իրաւունքներէն» : Եւ եզրակացուց թէ ապատն ժողովրդապետութեան կը պատկանի :

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՄԻԱՅՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՂԻՆ ՎՐԱ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Հայկական հարցը միայն հայկական հողին վրա է գոյություն ունեցել, ապրել և զարգացել։ Հայկական հարցի ծագումը, զարգացումը, ներկայիս վիճակը և ապագա հեռանկարները միայն հայկական հողի հետ են կապված։ Հայկական հարցը ոչ մի կապ չունի ո՛չ Եվրոպայի, ո՛չ Ասիայի, ո՛չ Ամերիկայի և ո՛չ էլ աշխարհի որևէ այլ մասի հետ։ Հայկական հարցը միայն հայկական հողի հետ է կապված։

Հայկական հարցը ծագել է հայկական հողի վրա, հայկական հողի վրա է զարգացել և հայկական հողի վրա է ներկայիս իր վիճակին հասել։ Հայկական հարցի ծագումը, զարգացումը և ներկայիս վիճակը միայն հայկական հողի հետ կապված ուսումնասիրելով կարելի է հասկանալ հայկական հարցի էությունը։

Հայկական հարցը ծագել է հայկական հողի վրա, որովհետև հայկական հողը եղել է հայ ժողովրդի հայրենիքը։ Հայ ժողովուրդը ապրել է հայկական հողի վրա, հայկական հողի վրա է ստեղծել իր պետականությունը, հայկական հողի վրա է ստեղծել իր մշակույթը, հայկական հողի վրա է ստեղծել իր կյանքի բոլոր նյութական և հոգևոր արժեքները։ Հայկական հողը եղել է հայ ժողովրդի կյանքի և գոյության միակ աղբյուրը։ Հայկական հողից զրկվելը նշանակել է հայ ժողովրդի կյանքից զրկվել։

Հայկական հարցը ծագել է հայկական հողի վրա, որովհետև հայկական հողը եղել է հայ ժողովրդի հայրենիքը։ Հայ ժողովուրդը ապրել է հայկական հողի վրա, հայկական հողի վրա է ստեղծել իր պետականությունը, հայկական հողի վրա է ստեղծել իր մշակույթը, հայկական հողի վրա է ստեղծել իր կյանքի բոլոր նյութական և հոգևոր արժեքները։ Հայկական հողը եղել է հայ ժողովրդի կյանքի և գոյության միակ աղբյուրը։ Հայկական հողից զրկվելը նշանակել է հայ ժողովրդի կյանքից զրկվել։

Հայկական հարցը ծագել է հայկական հողի վրա, որովհետև հայկական հողը եղել է հայ ժողովրդի հայրենիքը։ Հայ ժողովուրդը ապրել է հայկական հողի վրա, հայկական հողի վրա է ստեղծել իր պետականությունը, հայկական հողի վրա է ստեղծել իր մշակույթը, հայկական հողի վրա է ստեղծել իր կյանքի բոլոր նյութական և հոգևոր արժեքները։ Հայկական հողը եղել է հայ ժողովրդի կյանքի և գոյության միակ աղբյուրը։ Հայկական հողից զրկվելը նշանակել է հայ ժողովրդի կյանքից զրկվել։

Հայկական հարցը ծագել է հայկական հողի վրա, որովհետև հայկական հողը եղել է հայ ժողովրդի հայրենիքը։ Հայ ժողովուրդը ապրել է հայկական հողի վրա, հայկական հողի վրա է ստեղծել իր պետականությունը, հայկական հողի վրա է ստեղծել իր մշակույթը, հայկական հողի վրա է ստեղծել իր կյանքի բոլոր նյութական և հոգևոր արժեքները։ Հայկական հողը եղել է հայ ժողովրդի կյանքի և գոյության միակ աղբյուրը։ Հայկական հողից զրկվելը նշանակել է հայ ժողովրդի կյանքից զրկվել։

Հայկական հարցը ծագել է հայկական հողի վրա, որովհետև հայկական հողը եղել է հայ ժողովրդի հայրենիքը։ Հայ ժողովուրդը ապրել է հայկական հողի վրա, հայկական հողի վրա է ստեղծել իր պետականությունը, հայկական հողի վրա է ստեղծել իր մշակույթը, հայկական հողի վրա է ստեղծել իր կյանքի բոլոր նյութական և հոգևոր արժեքները։ Հայկական հողը եղել է հայ ժողովրդի կյանքի և գոյության միակ աղբյուրը։ Հայկական հողից զրկվելը նշանակել է հայ ժողովրդի կյանքից զրկվել։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՄԻԱՅՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՂԻՆ ՎՐԱ

Պատմական հայ անխտիրը

Փարիզի մեծ օրաթերթ, Լը Մե - տին ին պատրաստած տեսակ մը հրատարակութիւն մը կ՚ընդունի, որ ամէն տարի կը հրատարակէ ֆրանսական մեծ ընտանիքներու տոհմագրութիւնները։ Այս տարուան հատորին մէջ կը կարդանք, որ Ֆրանսայի Նախագահ Լեբրէն ետք, որ ֆրանսական ամենէն ազնուական ընտանիքն է Ռոքֆէյլերներունը։ Ասոնք ամերիկացի են։ Ֆրանսական ամենէն հին ընտանիքներէն մին է Ռոթշիլտներունը։ Ասոնք ալ ամերիկացի են։ Ֆրանսական ամենէն հարուստ ընտանիքներէն մին է Ռոքֆէյլերներունը։ Ասոնք ալ

*** «Էքօ տը Մարի» հետեւեալ կերպով կը ճշդէ կացութիւնը.— Ֆրանսա պատրաստ է ընդունելու որ Թրքական զօրամասեր Սանճաք գան եւ գործակցին բարեկարգութեան եւ հողային ապահովութեան պահպանման, բայց պայման կը դնէ որ, Թրքականին հաւասար զինուոր ունենայ ժան, քացէն ալ յաւելուածական զօրամաս մը ունենայ Սանճաքին մէջ:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԽՆԴԻՐ ՄԸ Կ'ԱԼԵԿՈԾԷ ԱՆԳԼԻԱՆ

Բուռն վիճաբանութիւններ երեսփ. ժողովին մէջ

Այս մէջօրէն սահմանադրական ծանրակշիռ խնդիր մը կ'ալեկոծէ Անգլիան :

Խնդիրը երեսփ. ժողով փոխադրուած ըլլալով, առջի օր բուռն վիճաբանութիւններ տեղի ունեցան, մասնակցութեամբ վարչապետին, պատերազմական նախարարին եւ ընդհ. դատախազին, ինչպէս եւ ընդդիմադիր երեսփոխաններու: Այս վերջիններէն ազդարարեցին թէ կառավարութիւնը կը բռնաբարէ սահմանադրական պատասխանատուութիւնները եւ կը հակի դէպի միահեծան իշխանութեան :

Խնդիրը այսպէս ծագած էր,— պատերազմական նախարարը ապահովիչ հաւաստիքներ տուած ըլլալով օդանաւային պաշտպանութեան մասին, ամբաստանեալ երեսփոխանը յայտարարեց թէ հարցում մը պիտի ուղղէ, հիմնուելով գաղտնի տեղեկութեան մը վրայ: Փափկանկատութեան համար հարցումին բնագիրն ալ նախապէս հաղորդեց պատերազմական նախարարին, որպէսզի հերքէ իր գտած թիւերը, եթէ կրնայ: Պատերազմական նախարարը փոխանակ պատասխանելու խնդիրը հաղորդեց վարչապետին եւ ընդհ. դատախազին եւ ազդարարուեցաւ հարցապնդող երեսփոխանին թէ երկու տարի բանտարկութեան պիտի դատապարտուի, եթէ չյայտնէ անունը այն սպային որ իրեն հաղորդած էր գաղտնի թիւերը: Երեսփոխանը մերժեց եւ խնդիրը հաղորդեց երեսփ. ժողովին: Վարչապետը որոշեց մանաւոր յանձնախումբ մը կազմել, գործը քննելու համար: Այս առթիւ յանձնարարուեցաւ երեսփոխանին որ զինուորական տեսանկիւնէ ներկայանայ իր համազգեստով: Սպան մերժեց, արժեցնելով իր երեսփոխանի հանդամանքը :

Ամբաստանեալ երեսփոխանին պարագան երկրորդական է եւ այժմ պայքարը կը մղուի սահմանադրական իրաւունքներու շուրջ:

Վիճաբանութեանց ընթացքին, վարչապետը խոստովանեցաւ թէ իրապէս չեզոքում կատարուած է սահմանադրական աւանդութիւններէն եւ թէ կառավարութիւնը պիտի գոհանայ գործը քննիչ յանձնախումբի մը յանձնելով: Անոր եզրակացութիւններէն վերջը պիտի խօսուի կառավարութեան դիրքի մասին: Վարչապետը այս առթիւ չէշտեց թէ խնդիրը կապ ունի ազգ. պաշտպանութեան հետ եւ գաղտնի տեղեկութիւններ քաղելու այս եղանակը կրնայ չարիքներ ալ պատճառել:

Պատերազմական նախարարն ալ պատմելով անցուդարձը, յայտարարեց.— «Երեսփոխանները իրենց պարտականութիւնները ունին, ընդհ. ապահովութիւնը ալ իր պարտականութիւնները »:

Ընդդիմադիր երեսփոխանները ընդունելով կառավարութեան առաջարկը, չէշտեցին թէ խորհրդարանը պէտք է միշտ դիրիշման մնայ բանակին վրայ: Նախկին նախարար Զըրչիլ, որուն փեսան է ամբաստանեալ երեսփոխանը, պաշտպանելով զայն, անրաւական դատ. ազգ. պաշտպանութիւնը: «Պաշտօնական Գաղտնիքներու օրէնքը հաստատուած է ազգ. պաշտպանութիւնը ապահովելու համար, եւ պէտք չէ իբրեւ վահան ծառայ նախարարներուն: Այդ օրէնքը պէտք չէ իբրեւ վահան գործածուի այն նախարարներուն որոնք անճնական զօրաւոր շահեր ունին ճշմարտութիւնը երկրէն ծածկելու »:

ՋԱՆԱՋԱՆ ԼՈՒՐԵՐ ՔԱՆԻՍԸ ՏՂՈՎ

Աէռելի ԵՐԿՐԱՇԱՐԺ ՄԸ ԵՒ ՀԵՂԵՂՆԵՐ ահագին աւեր գործեցին Թոքիոյի մէջ: 150 հոգի մեռան, բազմաթիւ քաղաքացիներ վիրաւորուեցան: Մօտ 500.000 հոգի անպատսպար կը մնան երկրին զանազան մասերուն մէջ: 226.900 տուներ ողողուած, հարիւրաւորներ քանդուած են: Ձախոն այսպիսի անճարեւ տեսած չէր 60 տարիէ ի վեր: Նիւթական կորուստը տասնեակ միլիոն տոլար կը հաշուեն :

ԻՏԱԼԻՈՑ թատրոններու վարչութեանց յանձնարարուեցաւ ներկայացնել հրեայ հեղինակներու գործերը, ինչ հպատակութիւն ալ ունենան անոնք:

ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ ԵՒ ՀԱՄԱՁՆԱՎԱՐ կուսակցութեանց միջեւ բանակռիւը կը սաստկանայ մամուլով եւ նամակագրութեամբ: Ընկերվարական կուսակցութեան պաշտօնաթերթը երէկ հրատարակած էր ընդհ. քարտուղարին մէկ նամակը, որ յուրջ գանգատներ կը յայտնէ համայնավար կեդր. կոմիտէի կարգ մը արարքներուն դէմ, անուղղամտութիւն վերագրելով :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԱՐԱԳԻՐՆԵՐՈՒ տեղաւորման համար ծրագրուած ժողովը, զոր առաջարկած էր նախագահ Րօզվէլթ, պիտի գումարուի յուլիս 6ին, Իվիանի մէջ: Հրեաները մեծապէս չհաղգրգռուած են:

ՅԱՌԱՋԴԻՄ ՍԻՐԱՑԻ ՏԱՐԵԿԱՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍԸ

3 Յուլիս, կիրակի, առաւօտեան ժամը 9էն մինչեւ գիշերուան 11.30
ի նպաստ իր վարժարանին
ՐՈՊԷՆՍՈՆԻ ՄԷՋ, *Grand Arbre, Maison Fiquet*
ԿԸ ԽՕՍԻ **Պ. Ն. ՊԷՉԻԿԹՇԸԼԵԱՆ**
Կ'երգեն քազմաթիւ երգիչներ ու երգչուհիներ: Ներկինկալները:
Նուագախումբ՝ դեկավարութեամբ Տ. ՕՆՈՍԵԱՆԻ
Կը ներկայացուի ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ՄԸ
Ճոխ եւ ժամանակակից
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ.— Denfert էն առնել մեթրոյի դէպի Թոպէնսոն տանող գիծը:
ՄՈՒՏՔ 4 ՖՐԱՆՔ

ՄԵԾ ԴԱՇՏԱ-ՊԱԶԱՐԱՆԴԷՍ
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ
23ՐԴ. ՏԱՐԱԴԱՐՁԻՆ ԱՌԹԻԻ

Նախաձեռնութեամբ ՄԱՐՍԷԼԻ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՀԱՅՐ. ՄԻՈՒԹԵԱՆ Մասնակցութեամբ ՍԷՆԹ-ԱՆԹՈՒԱՆԻ ԵՒ Գ. ՕՏՏՕՒ Մ.ՃԻՀԼԵՐՈՒՆ

3 Յուլիս, կիրակի առաւօտէն մինչեւ իրիկուն, Պաս Մ. Ափարէ «Պէլվիտէր»ի շքեղ եւ օդասուն պարտէզին մէջ:

ԿԸ ՆԱԽԱԳԱՀԷ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ Պ. ՅԱՆԻԷԼ ԵԼԻՇԵԱՆ
ԿԸ ԽՕՍԻՆ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐ

ՊՕԼՈՍ ՀԻՒՍԵԱՆ ԵՒ ԱԶԳԻՆ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

Գեղարուեստական ճոխ եւ խնամուած բաժին: Պիտի երգեն Գ. Մ. ԱՒՏՕԵԱՆ եւ Օր. Վ. ԱԻԻԿԵԱՆ, կ'արտասանեն Օրիորդներ ՄԱՐԻԱ ՀԱՑԱԳՈՐԾԵԱՆ, ՌՕԶԱ ԵԼԻՇԵԱՆ, Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ եւ Վեհ. ՎԱՐՕՁԵԱՆ: Գ. Գ. Մ. ԲՐՈՒՏԵԱՆ, Ռ. ՄԱՆՈՒԿԵԱՆ, Ա. ՅԱԿՈԲԵԱՆ, Թ. ՅԱՍՈՒՐԵԱՆ, Գ. ՎԱՐՕՁԵԱՆ, Յ. ՂԱԶԱՐԵԱՆ եւ Գ. ՇԱԼԱՋԵԱՆ,
Մէջտեղ-մէջ պիտի նուագէ «Ալգազի բարձրաքաղը բնիկ երգեր»
Մուտք 2 ֆրանք
ՇԱՆՕՁ.— Հանդիսավայրը երթալու համար, ֆուռ Պէլզանսէն առնել 25 թիւ ֆանը՝ սկսած եւ իջնել վերջաւորութեան՝ կարելի է ձայը միասին քերել:

Հ. Յ. Դ.

Փարիզ

ՊԱՆԵԷՕ-ՔԱՇԱՆԻ «Արծիւ» ենթակոմիտէի ընդհ. ժողովը 4 Յուլիս, երեքշաբթի երեկոյ ժամը 9ին իր «կորիւն» ակումբը:

Գաւառ

ՄԱՐՍԷՑԼԻ «Ընկեր կարօ» ենթակոմիտէի ընդհ. ժողովը 2 Յուլիս, շաբաթ երեկոյ ժամը 8ին, ըստ ենթակոմիտէի սովորական ցուցաքատեդին: կարեւոր օրակարգ. պարտաւորիչ ներկայութիւն:

ՊՈՒԼԻԼԻՋԻ «Վարանդեան» խումբի ընդհ. ժողովը 2 Յուլիս, շաբաթ երեկոյ ժամը 8ին 9ին, ընկ. Արապեաններու բնակարանը: կարեւոր օրակարգ :

ՀՐԱՊԱՐԱԿԱԳԻՆ ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻԻՆ

Հ. Յ. Դ. ԱՆԻԷՒՒ «ԱՐԱՄ» ԵՆԹԱԿԱՄԻՏԷԻ ԿՈՂՄԷ

2 Յուլիս, Շաբաթ երեկոյ ժամը 9ին Ընկերվարականներու սրահին մէջ, 14ս bis, Ave. d'Argenteuil.

ԿԸ ԽՕՍԻ ԸՆԿ. **Մ. ՎՐԹՑԵԱՆ**

Նիւթ՝ «Դէպքերը Հայաստանի մէջ»:

ԵՐԴՄԱՆ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ

Մարսէյլի Շրջանային Կոմիտէն կը հրաւիրէ իր շրջանի բոլոր ենթակոմիտէներու եւ խումբերու անխտիր բոլոր ընկերները ներկայ ըլլալ ընկերական Ընդհ. ժողովի, 2 Յուլիս, Շաբաթ երեկոյ ժամը 8.30ին, Շահրիկեան սրահին մէջ, ուր տեղի պիտի ունենայ վերջին մէկուկէս ամսուան ընթացքին մեր շարքերը մտած ՆՈՐԱԳԻՐ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐՈՒՒ ԵՐԴՄԱՆ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ:

ԿԸ ԽՕՍԻ ԸՆԿ. **Վ. ԻՇԽԱՆԵԱՆ**

Կը հրաւիրուին նաեւ համակիրները:

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

Հ. Յ. Դ. ՎԱԼԱՆՍԻ ԿՈՄԻՏԷԻ ԿՈՂՄԷ

3 Յուլիս, կիրակի առաւօտէն մինչեւ երեկոյ Մէնիլէրէյի ծանօթ տեղին վրայ:

Գեղարուեստական ճոխ բաժին Զոմի «Ընթաքս» երգչախումբին կողմէ, նաեւ հայկական եւ եւրոպական պարեր T. S. F.ի ներքեւ:

Երթեւեկի համար աւտեղ ինքնակառքը, որ իւրաքանչիւր ժամ ունի իր երթ ու դարձը:

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԲԱՑԱՌԻԿ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՄ

Հ. Ց. Դ. ԿԱՐՏԱՆԻ «ՆԻԿՕԼ-ԳԱՒՄԱՆ» ԵՆԹԱԿՈՄԻՏԷԻ ԿՈՂՄԷ

ԵՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ «ԱՆԴՐԱՆԻԿ» ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲԻ

Մեծ պատրաստութեամբ կը բեմադրուի

«ԱՆԴՐԱՆԻԿ»Ը

Ազգային յեղափոխական կեանքէ, երեք արար, մէկ պատկեր

3 Յուլիս, կիրակի կէսօրէ վերջ ժամը 2.30ին, Հ. Ց. Դ. Տան մէջ, ի նպաստ Ակումբի նորոգութեան: Մուտք 4 ֆրանք:

Կ. Թաչի Սահակի Մ.ճիւղին թեյասեղան

3 Յուլիս, կիրակի կէսօրէ վերջ ժամը 2.30ին Սալ-տը-Նոսի մէջ, 81 Rue de Paris, Sarcelles:

Գիւղի բանախօսէ եկեղեցւոյ վարչութեան կողմէ

ՏԻԿ. **ՏԻՐՈՒՀԻ ՄԻՍԱՔԵԱՆ**

Երգ, արտասանութիւն եւ զանազան անակնկալներ տիկիններու եւ օրիորդներու կողմէ:

ԿԱՌԱՎՈՒՄԸ.— կառ. տիւ Նորէն ժամը 12.35, 13.50, 14.35, 15.35:

Ամսակերջի դպրոցական հանդէս

Տ. Կ. ԽԱՉԻ ՓԱՐԻԶԻ Մ.ՃԻՒՂԻ ՀԱՅԵՐԷՆ ԴԱՍԸՆԹԱՑՔԻ

3 Յուլիս, կիրակի ժամը 2.30—7

32—34 Ave. Porte des Lilas. *Մէթրօ* Porte des Lilas

Երգ, պար, արտասանութիւն եւ փոքրիկ ներկայացումներ աշակերտութեան կողմէ: Ժամը 7—12 տեղի պիտի ունենայ բացման հանդէսը Lilas St. Gervais եւ Bagnoletի ընկերական նորակառոյց մասնաճիւղին, որուն առթիւ կը խօսի ՏԻԿ. ՖԼՈՐԷՆ ՊԻՒԶԱՆԴ:

Եւրոպական պարեր, l'orchestre Fuselas et ses argentins

Ճոխ պուֆէ պատրաստուած անդամուհիներու նուէրներով,

Մուտք 5 ֆրանք:

Դպրոցական հանդէս

Կազմակերպուած Իսի-լէ-Մուլինոյի Կապոյտ Խաչի «Արիմեան» դպրոցի աշակերտներու կողմէ, 3 Յուլիս, կիրակի կէսօրէ վերջ ժամը 3ին «Պէշիկթաշլեան» սրահին մէջ, 26 Rue Troyon, Sèvres Մէթրօ Pont de Sèvres:

Երգ, արտասանութիւն, տրամախօսութիւն, պար եւ պարզեւաբաշխութիւն: *Մուտք 4 ֆրանք:*

25ԱՄԵԱԿ

ՓԱՐԻԶԻ ՀԱՑ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԵԱՆ

Փարիզի Հայ Տիկնանց Միութեան (Հրքերու եւ Պետ. Հ. կարմիր Խաչի Օգն. Մասնաճիւղեր) գործունէութեան 25ամեակը պիտի տօնուի 2 Յուլիս, Շաբաթ օր, ժամը 16էն 20, Royale Monceauի սրահներուն մէջ, 35 37, 39, Ave. Hoche, Paris (16e.), նախագահութեամբ զօր. Պրէմոնի :

Մուտք՝ 20 ֆրանք, թէյը միասին: Գեղարուեստական բաժին, նուագախումբ, թէյ-պար:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Հ. Ց. Դ. Լիոնի «Զարդարեան» դպրոցասրահի Վարչութիւնը շնորհակալութիւն կը յայտնէ Ընկ. Հրաչ Զարդարեանի գրադարանին մէկ տարուան «Հայրենիք» ամսագիրը նուիրելուն առթիւ:

ԳԱՑԼԻՔ ՏԵՍԼԻՔ ԼԻՈՆԻ ՄԷՋ

Cinéma REXY

Cours Lafayette. angle Garibaldi

ՑՈՒՇԱՏԵՏՐ

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԵՒ ՇՐՋ. Հայ-բենակցական Միութեան Ֆրանսայի շրջանի պատգամաւորական ժողովը կը գումարուի 3 Յուլիս, կիրակի կէսօրէն վերջ ժամը ճիշդ 3ին, Բարեգործականի սրահը, 8 Rue Bossuet: Կը խնդրուի Փարիզի եւ շրջանի պատգամաւորներէն ըլլան ճշդապահ:

Ֆ. Կ. ԽԱՉԻ Ս. ԷՓԻՖԻՒԻ Մասնաճիւղի Ընդհ. ժողովը 4 Յուլիս, երեկուշաբթի երեկոյ ժամը 7.30ին, «Դուբեան» գրադարանը: Կարեւոր օրակարգ:

ՄԱՐՍԷՑԼԻ ԲԱԲԵՐԴԻ Հայրենակցական Միութեան Ընդհ. ժողովը 3 Յուլիս, կիրակի կէսօրէ վերջ ժամը 3ին, Պուլվար Օտտոյի Ազգ. վարժարանի սրահին մէջ: Կարեւոր օրակարգ: Կը խնդրուի անդամ եւ ոչանդամ հայրենակիցներէն ներկայ ըլլալ սոյն կարեւոր ժողովին:

Le Gérant : H. STEPHAN
Imprimerie A. DER (AGOPIAN)
17, Rue Demesme — PARIS (13)

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՁԱՇԱՐԱՆ

Համեղ, անիծքարար արեւելեան կերակուրներու՝ սիրահար էք, Պոլիսը կարօտնալու պէտք չունիք, մտէք հայկական կեդրոնի մէջ

ՍԱՐԵԱՆԻՆ **ՃԱՇԱՐԱՆ «ԹՈՔԱԹԼԻ»**Ն
5, Rue du Baignoir, 5: Marseille

ուր պիտի գտնէք զուարթ եւ ընկերական շրջանակ մը եւ ճաշեր խիստ մատչելի գիներով:

ՐԱՓԸ ՏԻՒԶ ճոխ աղանդերներով:

ՐԱՖՖԻ

Փարիզահայերու մթնակ վայրկեան ճաշարանը
Տնօրինութեամբ Մ. Գ. ՄԻՐԻՃԱՆԵԱՆԻ

8, RUE MAUBEUGE Paris (9) *Մէթրօ* Cadetet le Peletier

Հոն պիտի գտնէք՝ արեւելեան եւ եւրոպական կերակուրներու ճարուստ ցանկ մը, ընտրեալ գինիներու, եւ անձերուն սպասարկութիւն, գիւղական օդի՝ եւ քաղաքի, ճաշարանատիրոջ անվիճելի փորձառութեամբ: Ամէն տեսակ ճաշակներու համար կը տրամադրուի սրահ, անհամեմատ մատչելի գիներով:

Ճաշեր եւ հիւրակի երեկոները արեւելեան նուագ:



"ՇԻՐԱԿ"

Արեւելքի միակ իսկական օդին է: Ընդունական, անմրցելի, անխարդախ: Առաջնակարգ զօրացուցիչ ախորժաբեր, պատրաստուած զուտ չամիչի հիւթով: Հայ աւանդական սեղանին զարդ:

Alimentation **„TRÉVISE"**
Իր անմահական «Moka» սուրճով
Café "HAREM„
5 ԱՒ. ՀԱՐԻՒՐ ԲԱՑԱՌԻԿ ՉԵԶՔ

Ճոխ մթերանոց արեւելեան եւ արեւմտեան ընտիր ընդեղէններու,

— Որ՝ ձեր ախորժակները գրեթէ խակ չէ մառնար ձեզ, գոհացնելով ձեր բոլոր փափաքները, որ աստղի տակն ալ որ դնեք...

ՄԵԾԱՔԱՆԱԿ ԵՒ ՓՈՔՐԱՔԱՆԱԿ
Livraison à domicile
Tél. Taitbout 40—63
30, Rue de Trévise Paris (9) Metro Cadet



ՕՆ DUZE

MARQUE DÉPOSÉE
RAKI 40° DUZE
Véritable Anisette Orientale
ՁՈՒՏ ԱՆԻՍՈՒՆԵՒ ԳԱՐԱՒԱՏԱՑ ՕՂԻ - زوتر انيسون غارواتسي اوزومدن
DISTILLERIE OTTOMANE ISTAMBOUL

ՐԱՓԸ ՏԻՒԶ

Զուտ խաղողէ քաշուած եւ անիսոնով պատրաստուած հայկական օղին է *ՐԱՓԸ ՏԻՒԶԸ*: Զգուշացէք արեւելեան օղիներէ որ ձեր ստամոքսը կ'այլէ եւ գլխացաւը չուր կը խմցնէ եւ կը վնասէ ձեր առողջութեան: Խմեցէք միայն *ՐԱՓԸ ՏԻՒԶԸ* որուն անունը, կազդուրիչ եւ ախորժաբեր ըլլալը հաստատուած է:

Dalakupeian 24 Rue St. Lambert et 8 Rue Suffres, Marseille:

ՇԱՏԵԼՈՒԻ ԺԱՄԱԳՐՈՒԱԾՔԸ
Ճաշարան **ՏԼՕՐԻԱ**
61, Rue Monsieur le Prince, Paris (6)
Մէթրօ՝ Ստէօճ եւ Սէն Միշէլ
Ազնիւ եւ հրապուրիչ խնամուած կերակուրներ :

ԿԱՊՈՑՆԵՐ ՌՈՒՍԱՍՏԱՆ ՂՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ունինք մեծ մթերք անպիտան, իր անասնական եւ չխմոլուած կերպասներու՝ այր մարդոց վերարկուի, հագուստի, կանանց ապահրու եւ հագուստներու համար: Ապահնակարգ կօշիկներ, ներմակեղէններ եւ նպարեղէններ: Ընտէրվուտ գլխ մեքենայ: Չափաւոր գիներ:

Գիմել՝ **American Lloyd, Paris (9). 7 rue Auber**
Tél. Opéra 67-77



Tailleur de ST. BERNARD
Pour Hommes et Dames
H. GULBOLIAN

24 rue Affre կամ 8 rue Cavé, Paris (18)
Մասնաճիւղ՝ 2 rue de la Charbonnière
Մէթրօ La Chapelle եւ Barbès Rochechouard
Թելեֆոն Montmartre 69—70
ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ.— Կարեւոր նուէրներ մէկ ձեռք հագուստի համար մինչեւ 3 Յուլիս 14:
ՄՏԱՑԱԾ ԵՆՔ ՖՐԱՆՍԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՄԱՌՆԱՑԻՆ ԿԵՐՊԱՄՆԵՐ:

ՄԵՐ ԳԻՆԵՐԸ,— Հագուստ (երկու փորձով) սկսեալ 350—450 ֆր.է.՝ նուէր կը տրուի մէկ ֆանթէզի տաբատ կամ կոլֆ՝ 450 ֆր.է վեր հագուստներու համար, 3 փորձ, նուէր կը տրուի Հայկազեան Կիւլպէնկեանի արձակատանոցին մէջ պատրաստուած, գաբեան յատուկ, արժէքաւոր ժուշտակ վզնոց մը: Ներկայանալ «ցատաղի կարօճով» վերոյիշեալ նուէրները չեն ստուիր մինչեւ 20 տարեկան այն երիտասարդները եւ երիտասարդուհիները որոնք չեն ուզեր խօսիլ ֆրանսերէնը չեն կրնար գրել իրենց անունները մայրենի լեզուով:

Բաց է կիրակի մինչեւ կէսօր

ՀԱՅՐԵՆԻՔ

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
17, Rue Damesme, PARIS (13e)

Téléphone : Glacière 15 - 70
Chèque Postal Paris 1678 - 63
(ԵՐԹԵՒԵԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.—

		ՏԱՐԵԿԱՆ ՎԵՑԱՄՍԵԱՅ	ԵՒԱՄՍԵԱՅ
Ֆրանսա եւ Գաղութներ	150 ֆրանկ	75 ֆրանկ	40 ֆր.
Անգլիա եւ Իտալիա	265 ֆրանկ	140 ֆրանկ	
Ուրիշ երկիրներ	215 ֆրանկ	110 ֆրանկ	

ԿԻՐԱԿԻ
3
ՅՈՒԼԻՍ
DIMANCHE
3 JUILLET
1938

ԺԸ ՏԱՐԻ — 14e Année No. 3773

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

«ԱՆՃԱՔԸ» ՄԱՏԱՂ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ...

Այսպէս, ուրեմն, «Անճաք»ի խնդիրն ալ տրտրուելով, գլորուելով, տափակնալով զարձաւ մատաղ՝ դիւանագիտական հաշիւներու: Տեսակ մը վրկազին խաղաղութեան եւ «ֆրանքեւթուրք դարաւոր բարեկամութեան, որ զօրացած է աւելի քան երբեք», ինչպէս խնդութեամբ կ'աւետեն պաշտօնական եւ անպաշտօն բերանները :

Այս տեսիլ գործածուած բառերն ու բացատրութիւնները չեն կրնար պարակել այն լուրջ նահանջը, զոր կատարեց Հոգատար իշխանութիւնը, ի վնաս ե'ւ Սուրիոյ ե'ւ ոչ - Թուրք փոքրամասնութեանց :

Անհրաժեշտ չէ պատմութիւն քրքրել, ապացուցանելու համար կատարուած նահանջին խորութիւնը, որ արդէն յուզումի մատնած ինչպէս Արաբները, նոյնպէս ոչ - Թուրք տարրերը :

Տակաւին անցեալ տարի, երբ Թրքական կառավարութիւնը բացառիկ իրաւունքներ կը պահանջէր Սանճաքին համար, մինչեւ անկախութիւն երթալով, Ֆրանսայի ներկայացուցիչները եւ մամուլը դրեթէ միաբերան դիտել կուտային թէ Էնկիւրի չափը կ'անցընէ :

Ազգերու Դաշնակցութեան առջեւ զոյացած համամաձայնութեան - նէն վերջն ալ, Ֆրանսա, թէեւ հաչտարար, պահեց իր վճռական դիրքը :

Ի՞նչ պատահեցաւ այս տարի, սա մէկ - երկու ամիսներու ընթացքին, որ հոգատար իշխանութիւնը նոյնիսկ դադրեցուց Ազգերու Դաշնակցութեան յանձնախումբին զործունէութիւնը, զոհացում տալու համար Թուրքիոյ անտեղի յաւակնութեանց :

Ինչո՞ւ փոխեց իր պատուիրակը եւ ուրիշ բազմաթիւ պաշտօնեաներ : Ինչո՞ւ հարկ դատեց դիւզդիւզ պատցնել նոր պատուիրակը, որպէսզի համոզեն Հայերը եւ ուրիշ ոչ-Թուրքեր, կա'մ ձեռնպահ մնալու եւ կամ Թրքական ցանկին մէջ արձանագրուելու համար ...

Եւ վերջապէս, ի՞նչ պատահեցաւ որ Ֆրանսական սպայակոյտը հաւանեցաւ անմիջապէս եւ հաւատար քանակութեամբ Թրքական զօրք ընդունիլ Սանճաքին մէջ, երբ նախապէս կը մերժէր եւ պայման կը դնէր որ միայն խռովութեանց պարագային Ֆրանսական կանոն չատ սակաս զօրամաս մը Սանճաք մտնէ :

Զմտնենք այս հարցերու քննութեան մէջ, որոնք չատ հեռուները պիտի տանէին մեզ:

Պնդերը այն է որ Ֆրանսա Էնկիւրիի դաշնագրին տրամադրութիւններէն ալ անդին անցաւ, նոյնիսկ խախտեց հոգատարութեան պայմանները եւ Ազգերու Դաշնակցութեան դիրքը, ամէն գնով ապահովելու համար Թուրքիոյ բարեկամութիւնը:

Թերթերը եւ պաշտօնական բերանները չատ կը խօսին արեւելեան Միջերկրականի ապահովութեան, հաստատուած կարգուսարքի պահպանման մասին, որ պիտի ամրապնդուի Ֆրանքեւթուրք բարեկամութեան դաշնագրով, յառաջիկայ սեպտեմբերին կամ հոկտեմբերին, Էնկիւրիի մէջ :

Այսքանը արդէն կը բաւայ վարագոյրին մէկ ծայրը,— Ֆրանսայի հոգը՝ մրցակից պետութեան մը զերակշռութեան դէմ, եւ Թուրքիոյ մտավախութիւնը՝ այդ միեւնոյն պետութեան հանդէպ (Իտալիա, որուն կրնայ միանալ կամ աջակցիլ նաեւ զինակիցը՝ Գերմանիա) :

Անցնելով բուն զինուորական համաձայնութեան, աչքի կը զարնէ միայն մէկ մխիթարական պարագայ:

Համաձայն լրագրական տեղեկութեանց, Թրքական զօրքը պիտի տեղաւորուի Սանճաքի այն քաղաքներուն մէջ ուր զերակշիռ թիւ մը կը ներկայացնեն Թուրքերը, իսկ միւս շրջաններուն (լեռնային) բարեկարգութեան պիտի հսկէ Ֆրանսական զօրքը:

Ցետոյ, այս 2500ական զինուորները պիտի քաշուին, երբ կազմուի Սանճաքին նոր կառավարութիւնը :

Այս ազօտ լոյսին վերեւ, սակայն, թանձր խաւար մըն է որ կը տիրապետէ, քանի որ ազատ ընտրութիւնները խափանուեցան Թուրքիոյ պահանջին վրայ եւ Սանճաքին ներքին վարչութիւնը այժմէն յանձնուած է Թուրքերուն: Ի՞նչ տարակոյս որ նոր կարգ ու սարքն ալ (խորհրդարան եւն.) պիտի յարմարցուի Թրքական տեսակէտին :

Երբ Թուրքերը անճոռնի վայնասուն մը յարուցանելով խափանել տուին ընտրական արձանագրութիւնները եւ 40ի վրայ 22 երեսփոխան կը պահանջէին զաղտնի համաձայնութեամբ մը, այսօր պիտի զոհանա՞ն այդ համեմատութեամբ :

Եւ երբ Թրքական մեծամասնութեամբ կազմուած խորհրդարան մըն է որ կանոնագիր պիտի մշակէ եւ կառավարութիւն պիտի կազմէ, ի՞նչ ապահովութիւն ունինք թէ քէմալական օրէնքները պիտի չխրատուեն :

Ազգերու Դաշնակցութեան որոշումնե՞րը (1937 Մայիս 29): Բայց չէ՞ որ նոյն Ազգաժողովին ընտրական յանձնախումբը ճամբուեցաւ, այնքան անհանդուրժելի պայմաններու մէջ, երբ իր պարտականութիւնները կը կատարէր անաչառօրէն, եւ երբ հաստատուեցաւ թէ Թուրք ընտրողները ոչ իսկ 46 առ հարիւր կը ներկայացնեն ...

« Շատ է աւուրն չար իւր»,— պիտի ըսէր բարեպաշտ բերան մը :

Զոհանանք, մենք ալ, արձանագրելով այս քանի մը իրողութիւնները: Եւ մաղթենք որ նահանջը աւելի անվտանգ համեմատութիւններ չստանայ, յառաջիկայ հոկտեմբերին կամ սեպտեմբերին, երբ Էնկիւրի կ'երթայ արտաքին նախարարը, ստորագրելու համար բարեկամութեան դաշնագիրը :

Շ.

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ՖՐԱՆՔԵԹՈՒՐՔ ԶԻՆ. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ ՍԱՆՃԱՔԻ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ԱՍԱՏԻՆ

2500 զինուոր, 2500 թուրք զինուոր

ԹՈՒՐՔ ԶՕՐՔԸ ԹՐՔԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒ ՄԷՋ

Ինչպէս հաղորդած էինք երէկ, «բարեյաջող» ելքի մը յանգած են Ֆրանքեւթուրք բանակցութիւնները: Արտաքին Նախարար Պ. Ժոռժ Պոնէ եւ Փարիզի Թրքական դեսպանը ուրբաթ օր պաշտօնապէս հաստատեցին այս պարագան, ունկնդրութեան ընդունելով մամուլի ներկայացուցիչները :

Համաձայնութեան պայմանները հրատարակուած չեն տակաւին, բայց մամուլը կրցած է տեղեկութիւններ քաղել Սանճաքի վինուոր. պայմանագրութեան մասին, որ նշանագրուած էր երէկուընթերի օր, տաժանելի բանակցութիւններէ վերջ :

Ահաւասիկ այդ պայմանագրութեան գլխաւոր տրամադրութիւնները, ո - րոնք գործադրելի են անմիջապէս (Թրքական զօրքը Սանճաք պիտի մտնէ այս շաբթու ընթ.) —

Ամիսնակայ եւ այլատրանական համաձայնութիւն մը կնքուած է զինուորական գործակցութեան համար եւ երկու պետութիւնները բարեկարգութիւնը պիտի ապահովեն հաւասարութեան հիման վրայ, 2500ական զինուոր տեղաւորելով Սանճաքին մէջ: (Կ'ըսուէն թէ Ֆրանսա պիտի պահէ մէկ յաւելուածական վաշտի իրաւունքը, ուրիշ խօսքով, Սանճաքին մէջ եղած Ֆրանսական զօրքին թիւը նկատի պիտի առնուի, երբ երկու կողմերը 2500ական զինուոր դրկին հաստատապէս):

Տակաւին ճշդուած չէ զինուորական գործակցութեան զաղարման թուականը: Ցրանսական սպայակոյտը առջարկած է այդ գործակցութիւնը զադրեցնել օգոստ· 31ին կամ սեպտ· 15ին, իսկ Թուրքերը պնդած են որ գործակցութիւնը շարունակուի մինչեւ Սանճաքի նոր վարչութեան հաստատումը :

Պայմանագրութեան համաձայն, Թուրք զօրքին հրամանատարը պիտի ըլլայ դնդապետ մը, որ պիտի գտնուի Ֆրանսացի զօրավարի մը հրամանատարութեան տակ: Հրամանատարութեան այս խնդիրն ալ կարգ մը վիճելի կէտեր կը ներկայացնէ եւ պիտի հարթուի մանաւանդ բանակցութիւններով: Այս տեսիլ կարգ մը թերթեր դիտել կուտան թէ թրքական զօրքը մաս պիտի չկազմէ Սանճաքին պաշտպանութեան ֆրանսական ցանցին, այլ աւելոր պիտի կցուի :

Իսկ ամէնէն կարեւորը, համաձայնութիւն գոյացած է որ թրքական զօրքը տեղաւորուի այն շրջաններուն մէջ ուր գերակշիռ է թրքական տարրը : Կը նշանակէ թէ Սանճաքի միւս մասերուն եւ մանաւանդ լեռնային շրջաններուն մէջ պիտի գտնուի միայն ֆրանսական զօրք, ինչպէս հաւաստած էր մարզպանին դիւանապետը (տես երէկուան «Ցառաջ»ը):

**** Սպայակոյտներու բանակցութիւնները սկսան անցեալ դեկտեմբերին, Էնկիւրիի մէջ, Թուրք զօրավար Զաքմաքի եւ Արեւելքի Ֆրանսական բանակի հրամանատարին՝ Զօր· Հէօնդիկէրի միջեւ: Այնուհետեւ, չորս չարաթէ ի վեր, կը չարունակուէին Անտիոքի մէջ, Թուրք զօր· Կիւնտիզի հետ :*

Պ. Ժոռժ Պոնէի եւ թուրք դեսպանին յայտարարութիւնները

Արտաքին նախարար Պ· Ժոռժ Պոնէ հետեւեալ յայտարարութիւնները բաւ զոյացած համաձայնութեան մասին·

— Ֆրանսա եւ Թուրքիա անչուշտ գոհ են բանակցութեանց բարեյաջող ելքէն: Երկու երկիրներուն նպատակն էր վերահաստատել դարաւոր բարեկամութիւնը՝ իր խորութեամբ եւ զօրութեամբ: Ալէքսանդրէթի խնդիրը պատեհութիւն ընծայեց տեսակէտներու լայն փոխանակութիւն մը կատարելու , իրենց յարաբերութեանց վերաբերեալ զանազան խնդիրներու մասին: Այս հարցին կարգադրութիւնը անթաժանելի է մէկ կողմէ Թուրքիոյ եւ Ֆրանսայի եւ միւս կողմէ Թուրքիոյ եւ Սուրիոյ յարաբերութեանց կանոնաւորումէն: Փոխադարձ հասկացողութեան տրամադրութեամբ էր որ քննուեցաւ այս վէճը, որուն յարատեւումը անհամապատասխան պիտի ըլլար վատահութեան պահպանման: Ֆրանսա ընդունեց թէ 1921ի կարգադրութիւնը (Էնկիւրի դաշնադիր) լռելեայն Սանճաքին Թուրք բնակչութեան կ'ընծայէր մասնաւոր կացութիւն մը, իսկ Թուրքիա իր կողմէ հաստատեց հոգային անշահախնդրութիւն մը (ըսել կ'ուզէ թէ Թուրքիա նպատակ չունի Սանճաքը կցելու): Զինուորական համաձայնութիւն մը կը սահմանէ այն պայմանները որոնց համաձայն Ֆրանսա եւ Թուրքիա պիտի կատարեն իրենց հաւաքական երաշխաւորութիւնը Սանճաքի մասին: Երկու սպայակոյտներուն միջեւ կնքուած պայմանագրութիւն մը կը ճշդէ Ֆրանսական եւ Թրքական զօրքին զործակցութեան եղանակները : Երբակ պայմանագրութիւն մը կը մշակուի, կանոնաւորելու համար սահմանային փոխանակութիւնները եւ Թուրքիոյ ու Ֆրանսայի բարի դրացնութիւնը: Իրրեւ պատկ այս բոլորին, մօտերս բարեկամութեան դաշնագիր մը պիտի կնքուի Ֆրանսայի եւ Թուրքիոյ միջեւ, իրեն էական նպատակ ունենալով ամրապնդել ներկայ հաւասակչռութիւնը Միջերկրականի արեւելեան ասպնդին մէջ: Այս արդիւնաւէտ բանակցութիւնները պիտի նպաստեն ամրապնդելու երկու երկիրներուն դարաւոր կապերը :

**** Թուրք դեսպանը, Պ· Սուատ Տավազ ալ իր կարգին յայտարարեց, ջերմակէս գնահատելէ վերջ Պ· Ժոռժ Պոնէի հաչտարար ոգին եւ իրատեսութիւնը, ինչպէս եւ խորին շնորհակալութիւն յայտնելով վարչապետ Պ· Տալատիէի·*

— « Սանճաքի հարցը արդարեւ վճռական փորձ մը եղաւ Ֆրանքեւթուրք բարեկամութեան համար: Այդ բարեկամութիւնը ոչ միայն անխզեալ մնաց , այլ եւ զօրացաւ աւելի քան երբեք: Մեզի համար կենսական այս հարցին բարեյաջող լուծման շնորհիւ, նոր չրջան մը կը բացուի Ֆրանքեւթուրք դարաւոր բարեկամութեան զարգացման եւ սերտացման համար: Երկու երկիրներուն խորունկ խաղաղասիրութիւնը եւ չահերու համերաչխութիւնը նոր նուիրագործում մը պիտի ստանան բարեկամութեան դաշնագրի մը եւ Ֆրանքեւթուրք սուրիական համաձայնութեան մը մօտալուտ կնքումով »:

ՕՐԸ ՕՐԻՆ

ԳԱՃԱՃՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ, ՄԻԱՑ�էՔ

Բ.

Ֆրանսայի արեւմտեան մէջ, մինչեւ Լուդովիկոս ԺԴ·, սովորութիւն էր պահել , իբրեւ ամսականաւոր պաշտօնեայ կամ պալատական, խեղճ մը եւ գաճան մը: Խեղճին պաշտօնն էր խնդացնել թագաւորը, իսկ գաճանին պաշտօնն էր փող հնչեցնել աշտարակէն՝ ծանուցանելու համար ադամանդափայլ տիկիններու գալուստը: Կասարները, ինչպէս Հռոմի մէջ, բոլոր ազնուականները, գաճան կը պահէին, այնքան որ անոնց ծանրութեամբ ոսկի պէտք էր՝ գաճան մը գնելու համար : Ցաճախ իրարու ձեռէն կը խլէին եւ ծամանակ մը հարկ եղաւ··· գաճան արտադրել :

Ծնողները սնունդէ կը զրկէին իրենց զաւակները, ոտքերը կը կապէին եւ սնտուկի մէջ կը դնէին, որպէսզի չանին ու չմեծնան: Այս մեթոդը արդիւնաբեր չէր, որովհետեւ բիչեր միայն կը դիմանային, շատեր կը մեռնէին: Սակայն ի՞նչ փոյթ, ամէն գաճան իր ծանրութեամբ ոսկի կ'արժէր, -- տասը զաւկէն մէկը ապրէր, կը բաւէր որ գաճան մնար, ոչ միայն ծախքը կը հանէր, այլեւ ծնողին ալ կը հարստահար: Ֆրանսացի թագուհի մը, գաճան արտադրելու համար ի պէտս արքունիքին, յղացաւ աւելի մարդկային եղանակ մը,— գաճանը ամուսնացնել գաճանուհիի մը հետ: Ցախողեցաւ այս փորձն ալ, որովհետեւ ժառանգական չէ գաճան ըլլալը:

Այստեղ արձանագրենք որ հազուադէպ է իրական գաճանը,— կ'ըսեն թէ Ափրիկէի մէջ կ'ապրին գաճան ցեղեր (pygmée), որոնք ջերմի դէմ ախտագերծութիւն մը ունենալով՝ բժշկագիտական փորձերու առարկայ դարձած են հակառակ իրենց ընդդիմութեան : Մարդկային երեւակայութիւնը, սակայն, ստեղծած է գաճաճներ, որոնք Լիլիպուտ կը կոչուին, իսկ ամենէ որ մենք գաճաճ կը ճանչենանք, ոսկրաթերութեան կամ ներծնր գեղձերու ախտաբնախօսութեան զոհեր են միայն, այնպիսին՝ թէ ամենց հասակի կարելութիւնը ներդաշնակ չէ, այլ խեղանդամութեան մը հետեւանք : Ասոր հաւար է որ գաճաճները տգեղ են, երբեմն խուլ-համր, չանախ կորաթաւակ: Հաճրիոն ամուն խելացին, իր կարգին, կը կարծէ թէ, Ադամի գործած մեղքին պատճառով, կարճցեր է մարդոց հասակը.— Այսպէս, Ադամի հասակն էր 125 ոտք, Եւային հասակը՝ 118, Նոյի հասակը, Աբրահամի հասակը՝ **28**, Մովսէսի հասակը՝ **13**, Մեծն Ալեքսանդրի հասակը՝ **6**, Ցուլիոս Կեսարի հասակը՝ **5**: Եթէ Յիսուս աշխարհ չգար՝ աւելի պիտի կարճնային մարդիկ, ու թերեւս մեծ, այսօր, մրջիւնի պզտիկ ըլլային : Յիսուսի գալուստէն վերջ՝ կանգ առեր է հասակներու կարճնալը :

Միայն գաճաճներն են որ չեն օգտուեր Յիսուսի գալուստէն,— խե՞ղճ Ջաֆէոսը օրինակ:

Բայց ի՞նչ են կորսնցուցեր, եթէ իրենց հասակն է կարճցեր: Ոչ մէկ մահկանացու այնքան պատիւներու է արժանացեր, որքան գաճաճը: Մեծն Սալաէտտինի գաճաճը, կարաճոս, իւրհրդակաճի մը չափ յարգ ունէր հաչակիրներուն խաչը կոտրող յաղթականին մօտ:

Տիբերիոս գաճան մը ունէր, որուն կը դիմէր՝ երբ ուզէր··· մահավճիռ մը տալ, բիչ մը աւելի բարբարոս ձեւով :

Ուրեմն, գաճաճը արհամարհուած էակ մը չէ, եւ ատիկա պիտի հասուտտուի Պուտափէշտի համգումարին մէջ,— հոն ցոյց պիտի տրուի թէ գաճաճն ալ սիրտ ունի, հոգի ունի, եւ բանե՛ր, բանե՛ր, որոնց՝

··· Շարն ընդհուպ :

ԱՐԱՋ

ՊԻՏԻ ՉԱՐՏԱՔՍՈՒԻՆ ԱՆՈՒՆՔ ՈՐ ԵՐԹԱԼԻՔ ՏԵՂ ՉՈՒՆԻՆ

Պաշտօնաթերթը յուլիս 1ին կարգ մը յաւելուածական օրէնքներ հրատարակեց, օտարականներու հսկողութեան մասին, հրամանագիր - օրէնք մը Ազգահովութեան Տեսչութիւնը զօրացնելու համար, կը հաստատէ 40 նոր ոստիկանական տեսուչներ (քոմիսէր), 120 դատական ոստիկանութեան քննիչներ , 95 ապահովութեան քննիչներ (զաղանի ոստիկան):

Ուրիշ հրամանագիր մը կ'ըսէ·

— « Այն օտարականը որուն համար կ'ապացուցուի թէ չի կրնար դուրս ելլել Ֆրանսայէն , պիտի չենթարկուի 8րդ յօդուածով նախատեսուած տնօրինութեանց, ոչ ալ 9րդ յօդուածի պատիժներուն, զորչափ կը տեւէ այդ անկարելիութիւնը: Սակայն եւ այնպէս, ներքին նախարարը պիտի կրնայ պարտադրել որ այդ օտարականը բնակի իր նշանակած վայրերուն մէջ, ուր ենթական պարտաւոր է պարբերաբար ներկայանալ ոստիկանութեան կամ ոստիկան-զօրքի վարչութեան» :

Բաւեկամութեան դաշինքը եւ Սուրիոյ խնդիրը

Սանճաքի համաձայնութենէն զատ, ծրագրուած է բարեկամութեան դաշնագիր մը, փոխադարձ աջակցութեան հիման վրայ, որ պիտի ստորագրուի Էնկիւրիի մէջ, յառաջիկայ սեպտեմբերին կամ հոկտեմբերին , երբ արտաքին նախարար Պ· Ժոռժ Պոնէ Էնկիւրի երթայ :

Շատ աւելի կարեւոր է այս դաշնագիրը, որուն տրամադրութեամբ երկու կողմերը յանձն պիտի առնեն հաւաքաբար ապահովել զոյավիճակը՝ արեւելեան Միջերկրականի աւազանին մէջ: Մասնաւոր յօդուած մը կը տրամադրէ որ երկու կառավարութիւնները խորհրդակցին, ի հարկին համապատասխան միջոցները ձեռք առնելու համար: Այս յօդուածը չատ լայն հանդամանք ունի եւ կը նշանակէ թէ երբ որ եւ է վտանգ սպառնայ հաստատուած գոյավիճակին , երրորդ պետութեան մը կողմէ, Ֆրանսա եւ Թուրքիա պիտի գործեն համախոհաբար , ընդդիմանալու համար: «Ասով պիտի զգուշանի կարգ մը ախորժակներ», կ'ըսէ «Փքթի Փարիզիէն»: (Նոյն թերթին համաձայն, երբ անդորրութիւնը վերահաստատուի Սանճաքին մէջ, հազար հոգինոց տեղական պահակազօրքը բաւական պիտի համարուի բարեկարգութեան համար):

Այս համաձայնութիւնն ալ պիտի նշանագրուի քանի մը օրէն :

Երրորդ համաձայնութիւն մը պիտի կնքուի Սուրիոյ համար, որ կարգ մը դժուարութիւններ կրնայ պատճառել :

Այդ համաձայնութեան նպատակը պիտի ըլլայ միաժամանակ ապահովել Սուրիոյ ամբողջութիւնը եւ սահմանագլուխի բարեկարգութիւնը (տուրքերու գանձում, վաչկատուն ցեղերու խնդիր, առեւտրական յարաբերութիւններ եւայլն):

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Դ· Էջ)

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՂՎԱԾ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

(1887 ՏԱՐԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻՆ)

ԱՆԱՀԻՏ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(ԴԱՄԲԱՐԱԿՈՒՄՆԵՐ ՄԻ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ)

ՎԱՂՎԱՑԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՎԱՔԱԳՈՒ

Ա.

Ներկայ դարաշրջանի ամենանշանավոր հատկանիշներից մեկն այն է, որ ամեն ոք, ով ինչ-որ կերպ հետաքրքրվում է գրականությամբ, ձգտում է ծանոթանալ նաև անցյալ դարերի գրական հուշարձաններին, որոնք ներկայացնում են ոչ միայն գրական, այլև ընդհանրապես մարդկային մտքի զարգացման պատմական կարևոր աստիճանները։ Ամեն մի ազգ, որ ինքնուրույն տեղ է գրավում համաշխարհային պատմության մեջ, ունի իր հին գրականությունը, որ ներկայացնում է նրա ոգու ամենաբնորոշ կողմերը։ Ամեն մի ազգ, որ ինքնուրույն տեղ է գրավում համաշխարհային պատմության մեջ, ունի իր հին գրականությունը, որ ներկայացնում է նրա ոգու ամենաբնորոշ կողմերը։

Հայ ժողովուրդն էլ ունի իր հին գրականությունը, որ ներկայացնում է նրա ոգու ամենաբնորոշ կողմերը։ Հայ ժողովուրդն էլ ունի իր հին գրականությունը, որ ներկայացնում է նրա ոգու ամենաբնորոշ կողմերը։

Հայ հին գրականությունը ծագել է քրիստոնեության ընդունումից հետո։ Հայ հին գրականությունը ծագել է քրիստոնեության ընդունումից հետո։ Հայ հին գրականությունը ծագել է քրիստոնեության ընդունումից հետո։

Հայ հին գրականության ամենանշանավոր հուշարձանները թարգմանություններ են հունարենից, ասորերենից, պարսկերենից։ Հայ հին գրականության ամենանշանավոր հուշարձանները թարգմանություններ են հունարենից, ասորերենից, պարսկերենից։ Հայ հին գրականության ամենանշանավոր հուշարձանները թարգմանություններ են հունարենից, ասորերենից, պարսկերենից

ՉԿԱ ԴԱՏԱԿԱՆ ՆՅԱԳՈՒՀՈՒՄ

«Նախ մտածեր, հետո խնդիրներուն պատասխանե՛ր...»

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐՈՒ

Ամէն անգամ որ ուսումնական հաստատութեան մը մէջ հանդիպում մը կազմակերպուի, ներկաները կը ստանան տպագրեալ ցուցակ մը, որուն վրայ գրուած են հանդիպումին ընթացքին պատասխանուելիք հարցերը։ Ասոնք կրնան ըլլալ ընդհանուր բնոյթի հարցեր, կամ ալ կրնան վերաբերիլ հանդիպումը կազմակերպող հաստատութեան մը գործունէութեան։

Ուրեմն, հանդիպումին մասնակցողները կանխապէս գիտեն թէ ինչ պիտի հարցուին, եւ կրնան պատրաստուիլ պատասխանելու համար։ Ասիկա ամէնէն աւելի կը նպաստէ հանդիպումին յաջողութեան։

Ուրիշ հանդիպումներ ալ կան, որոնց ընթացքին հարցերը կը տրուին միայն հանդիպումին սկսելէ ետք։ Ասոնք ամէնէն աւելի կը նպաստեն հանդիպումին կենդանի ընթացքին։

Ամէն պարագայի մէջ, հանդիպումին ընթացքին հարցերը կը տրուին գրաւոր ձեւով։ Ասիկա ամէնէն աւելի կը նպաստէ հանդիպումին կարգաւորեալ ընթացքին։

Հանդիպումներուն ներկայ կը գտնուին նաեւ հարցերուն պատասխանատուները։ Ասոնք կրնան ըլլալ կամ հաստատութեան մը պատասխանատու անձեր, կամ ալ հաստատութեան մը ներկայացուցիչները

Թերթերը գոհ են, քացի «Իտտանիթէ»ից

Տեղական թերթերը ընդհանրապէս գոհունակութեամբ կ'ողջունեն գոյացած համաձայնութիւնը, միեւնոյն ատեն չեչտելով թէ Անգլիան մանաւորապէս ոգեւորուած է այս յաջող արդիւնքէն, գործօն դեր կատարած ըլլալով անոր ստացման մէջ :

« Լը Փարիզիէն », ընկերվարական պաշտօնաթերթը, յիշելով վերջին շաբաթներու անախորժութիւնները, կը բացատրէ թէ «ֆրանքեւթուրք բարեկամութեան պահպանումը եւ զօրացումը հրամայական անհրաժեշտութիւն մըն էր, մանաւանդ ներկայ կացութեան մէջ եւ հարկ էր յաղթահարել վերջին ամիսներու ընթացքին ծագած խոչընդոտները : Այդպէս ալ եղաւ եւ այսարդիւնքը կարեւոր է : Թուրքիոյ հետ գոյացած համաձայնութիւնը իր կարգին կը զօրացնէ ֆրանսոֆիլական գործակցութիւնը, քանի որ Անգլիա վերջին օրերս մեծ գործունէութիւն ցոյց տուաւ էնկիւրիի մէջ : Անգլիա դեռ վերջերս առեւտրական համաձայնութիւն մը կնքեց Թուրքիոյ հետ եւ 16 միլիոն ոսկիի նոր վարկեր բացաւ, որոնց վեց միլիոնը սահմանուած է վերալիմման » :

«Փրէմ Փառիզիէն» կը փառաբանէ Աթաթիւրքի հանճարը, լայնամտութիւնը եւ բարեացակամութիւնը, գոյացած համաձայնութեան առթիւ : «Մարէն» դժուարութիւններ նախատեսելով հանդերձ Սուրիոյ կողմէն, զօրացած կը գտնէ ֆրանքեւթուրք բարեկամութիւնը :

Դժգոհ է մանաւորապէս «Իտտանիթէ»ն, որուն մէկ մեղադրականը թարգմաներ էինք վերջերս : Համաձայնաձայն պաշտօնաթերթը նորէն յիշելով Սանճաքի ընտրութեանց խափանումը եւ Ազգերու Դաշնակցութեան յանձնախումբին բողոքի հեռագիրները, ոչ-թուրք տարրերու դէմ կատարուած բռնութեանց մասին, դիտել կուտայ .

— «Հակառակ բոլոր ճնշումներուն, ընտրական գործողութիւնները հաստատեցին թէ թրքական մեծամասնութիւն չկայ Սանճաքին մէջ : Իր վայրագութեամբ հանրածանօթ զօրական մը, հրամանատար Քոլէ, պաշտօն ստացաւ թրքական մեծամասնութիւն մը ապահովել ամէն գնով : Եւ չյաջողեցաւ : Բայց ահա ֆրանքեւթուրք համաձայնութիւնը «մասնաւոր դիրք մը» կուտայ թուրք տարրին : Ի՞նչ կը հետեւի : Ֆրանսա որոշած է Սանճաքին մէջ պարտադրե՞լ մեծամասնութիւն մը զոր Սանճաքը չուզեր » :

Ցեւոյ արտատպելով Ազգաժողովի ներկայացուցիչներուն բողոքի հեռագիրները, կատարուած բռնութեանց առթիւ, «Իտտանիթէ» կը չարունակէ .

— « Արդէն ծանրակչիռ էր որ այսպիսի ամբաստանութիւններ ըլլան Ժընեւայի դէմ : Բայց ի՞նչ պիտի պատահի վաղը, երբ արաբական աշխարհին մէջ, ամբողջ արաբական աշխարհին մէջ իմանան որ, հակառակ այս ամբողջ բռնութեանց անչափ ողութեան, Ֆրանսա կը պարտադրէ Աթաթիւրքի պահանջած լուծումը : Մենք ալ կ'ընդունինք ֆրանքեւթուրք բարեկամութեան անհրաժեշտութիւնը : Բայց առանց վարանելու կ'ըսենք թէ՝ անկարելի է այդ բարեկամութիւնը դնել արաբական աշխարհին ընդհանուր թշնամութեամբ » :

Այս առթիւ բոլշեւիկ օրկանը նորէն կը յիշեցնէ թէ թրքական յաւակնութեանց ներշնչողները կը դանուին Պերլին «եւ կը քաջալերուին Լոնտոնի վերնամասէր խմբակին կողմէ» :

"Մի վախնաք, թուրք ջինուորը Հոիտի չարդէ,,

Կացութիւնը Ալեխսանտրէթի մէջ

« Ազդակ »ի թղթակիցը կը գրէ Ալեխսանտրէթէն, յունիս 23 թուակնքով .

Հակառակ բոլոր զրոյցներուն, կացութիւնը հանդարտ կը մնայ հոս : Ոչ մէկ փոփոխութիւն՝ կառավարական ճիւղերու մէջ : Մասնաւորաբար իր պաշտօնին վրայ կը մնայ ոստիկանապետ Պ. կարապետ Ծադկունի, որուն մասին ասկէ առաջ գրոյց ելաւ թէ արձակուած է : Եթէ հաւատանք լուրի մը, Պ. Ծադկունիի դիրքը աւելի զօրացած է, քանի որ, հոս գտնուած միջոցին, կուսակալ Տօքթ. Ապտիւրրահման Մէլէք յայտնած է Հալէ էվիին թէ Պ. Ծադկունի իր փոխանորդն է եւ թէ հետեւաբար պէտք է հնազանդիլ անոր, ինչպէս նաեւ օրնիլ : Անփոփոխ կը մնայ նաեւ Ապահովութեան ճիւղը, գլխաւորութեամբ ֆրանսացի Պ. Զենարէէին : Միայն կ'ինամամ թէ մաս մը զոյքեր փոխադրուած են Անտիոք :

Փոխուած է միայն Անտիոքի ապահովութեան տնօրէն հարիւրապետ Պ. Սեաի, որու մասին այնքան բուռն կերպով արտայայտուեցան Թուրքիոյ թերթերը, անոր վերագրելով ճաւ մը զոր կոչեցին «լրբենի» :

Ինչպէս ըսի, խաղաղ է Ալեքսանտրէթի կեանքը : Արդէն, հինէն ի վեր Հայերը որ եւ է խնդիր չունին ունեցած տեղացի Թուրքերուն հետ : Ապացոյց՝ ընտրական արձանագրութիւնները, որոնց ընթացքին ո եւ է միջադէպ չունեցան Հայերը :

Իրենց կարգին, տեղացի Թուրքերն ալ սկիզբէն ի վեր յայտնեցին թէ ո եւ է խնդիր չունին Հայերուն հետ : Վերջին փոփոխութենէն վերջն ալ, ամէն հաւաստիք տուին եւ յանձնարարեցին որ Հայերը չզգաստին :

Անցեալ Շաբաթ օր, յունիս 18, մասնաւոր մունետիկ մը պատեցաւ, ժողովուրդին իմացնելու համար թէ թուրք զօրամասերը Սանճաք պիտի մտնեն, Յունիս 20ին եւ թէ պէտք է պատրաստուիլ ընդունելութեան : Այս առթիւ մունետիկը չմոռցաւ նաեւ տարօրինակ հաւաստիք մը տալու .

— Մի վախնաք, թուրք զինուորը պիտի չջարդէ ձեզ . բայց գէշերուն ակռաները պիտի խշէ··· :

Եղած դանգատին վրայ, Հալէ էվիի նախադահը ցաւ յայտնեց եւ խոստացաւ պատժել մունետիկը՝ իր այդ անտեղի ու զրկոիչ խօսքերուն համար :

Միւս կողմէ, խանութպաններէ դրամ հաւաքեցին դիմաւորութեան ծախքերուն համար : Ցանձնարարեցին նաեւ թրքական դրօշներ պատրաստել եւ պարզել : Ցաջորդ օրը, սակայն, երբ թրքական զօրամասերը չեկան, ընդհանուր յուսաբեկում յառաջ եկաւ Թուրքերուն մէջ :

ՉՀԱՏՑԱՆ ԼՈՒՐԵՐ ՔԱՆԻՍԸ ՏՈՂՈՎ

ՉԵՐԲԱԿԱԼՈՒԵՑԱՒ Գաղանի Կոմիտէին անդամներէն ժաք Քորէդ, գլխաւոր ամբաստանեալ Տըլնըլի քարաւղարը, որ փախած էր եւ կը փնտռուէր ամիսներէ ի վեր :

ՅՈՐՀՐԴԱՑԻՆ ԲԱՐՁր պաշտօնատար մը, Լուչքով, Մայր· Արեւելքի ներքին գործոց նախարար Չեկային), սահմանապուրը անցնելով Մանչուրիա փախաւ : Ճարտնական իշխանութիւնը պաշտօնապէս հաղորդելով այս լուրը, կ'աւելցնէ թէ փախած են նաեւ Մոնկոլիոյ խորհրդային բանակին մէկ սմանատարը, Ֆրանցվիչ, եւ Մայր· Արեւելքի Չեկային գեր - տնօրէնը՝ գօր· Սկմէրովիչ : Ուրիշ հետապրի մը համաձայն, բազմաթիւ նոր ձերբակալութիւններ կատարուած են Մոսկուայի մէջ :

ԱՆԳԼԻԱ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱ համաձայնութիւն մը կնքեցին Աւստրիոյ պարտքերու մասին (17 միլիոն անգլ· ոսկի) : Տոկոս պիտի չվճարուի : Առեւտրական յարաբերութիւններն ալ ամրապնդուեցան :

ՕՏԱՐ ՅՈՐՀՐԴԱՆՇԱՆՆԵՐԸ արդիլուեցան Զուիցերիոյ մէջ : Անոնցմով կնքուած պիտի պատժուին տուգանքով կամ բանտարկութեամբ :

Դպրոցական հանդէս

Կազմակերպուած Իսկ լէ-Մուլինոյի Կասթոյտ Ալի «Խրիմեան», դպրոցի աշակերտներու կողմէ, 3 Յուլիս, կիրակի կէսօրէ վերջ ժամը 3ին «Պէշիկթաշլեան» սրահին մէջ, 26 Rue Troyon, Sèvres մէթրօ Pont de Sèvres:

Երգ, արտասանութիւն, սրամախօսութիւն, պար եւ պարզեւատրութիւն: Մուտք 4 ֆրանք:

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

Հ. Յ. Դ. ՎԱԼԱՆՍԻ ԿՈՄԻՏԷԻ ԿՈՂՄԷ

3 Յուլիս, կիրակի առաւօտէն մինչեւ երեկոյ Սէնթիկլի ծանօթ տեղին վրայ :

Գեղարուեստական ճոխ բաժին Զոմի «Ջրաքա» երգչախումբին կողմէ, նաեւ հայկական եւ եւրոպական պարեր T. S. F.ի նուագով:

Երեխայի համար առնել հանրակառքը, որ իւրաքանչիւր ժամ ունի իր երթ ու դարձը:

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԲԱՑԱՌԻԿ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՄ

Հ. Յ. Դ. ԿԱՐՏՈՆԻ «ՆԻԿՕԼ-ԴՈՒՄԱՆ» ԵՆԹԱԿՈՄԻՏԷԻ ԿՈՂՄԷ

ԵՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ «ԱՆԴՐԱՆԻԿ» ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲԻ

Մեծ պատրաստութեամբ կը բեմադրուի

«Ա՛Ն Դ Ր Ա Ն Ի Կ»Ը

Ազգային յեղափոխական կեանքէ, երեք արար, մէկ պատկեր

3 Յուլիս, կիրակի կէսօրէ վերջ ժամը 2.30ին, Հ. Յ. Դ. Տան մէջ, ի նպաստ Ակումբի Նորոգութեան: Մուտք 4 ֆրանք:

Կ. Խաչի Սուրհանդի Մ.ճիւղին թէյասեղանը

3 Յուլիս, կիրակի կէսօրէ վերջ ժամը 2.30ին Սալ տը-Նոսի մէջ, 81 Rue de Paris, Sarcelles:

Գլխի բանախօսէ հեգրոնի Վարչութեան կողմէ

ՏԻԿ. ՏԻՐՈՒՀԻ ՄԻՍԱԿԵԱՆ

Երգ, արտասանութիւն եւ զանազան անակնկալներ տիկիններու եւ օրիորդներու կողմէ:

ԿԱՌԱՎՈՒՄԸ.— կառ. տիւ Նոռէն ժամը 12.35, 13.50, 14.35, 15.35:

ՓՈՐԻՋԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՄԱԿՈՒՄԲԻ

Յառաջիկայ գաստախօսութիւնը տեղի կ'ունենայ 6 Յուլիս, Զօրեքշաբթի երեկոյեան ժամը 8ին, 8 Ռիւ Պոսիւէ:

ԿԸ ԽՕՍԻ Պ. Ս. ՎՐԱՑԵԱՆ

Նիւթ՝ «Հայաստանի Հանրապետութեան ստեղծումը:

Աժանաւոր դպրոցական ճաշկոս

Ֆ. Կ. ԽԱՉԻ ՓՈՐԻՋԻ Մ.ՃԻՒՂԻ ՀԱՅՏԵՐԷՆ ԴԱՍԸՆԹԱՑԻՆ

3 Յուլիս, կիրակի ժամը 2.30—7

32—34 Ave· Porte des Lilas, մէթրօ Porte des Lilas

Երգ, պար, արտասանութիւն եւ փոքրիկ ներկայացումներ աշակերտութեան կողմէ: Ժամը 7—12 տեղի պիտի ունենայ քաջմանդեսը Lilas St· Gervais եւ Bagnolet՝ շրջանի նորակազմ մասնաճիւղին, որուն առթիւ կը խօսի Տիկ. ԵԼԼԷՆ ԲԻՒԶԱՆԴ:

Եւրոպական պարեր, l'orchestre Fuselas ei ses argentins:

Ճոխ պիւֆէ պատրաստուած անդամուհիներու նուէրներով,

Մուտք 5 ֆրանք:

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Է

«Մատենաշար Ռազմիկ»ի թիւ 2

Հրատարակութիւն Հայ Կամ· եւ Մարտիկներու Միութեան

ԼԵՌՆԱՅԻՆ ՊՏՏՋԸ

Գրեց՝ ՀՐԱՆՏ ՓԱՍՏՐՄԱՃԵԱՆ

Այս գիտական խիստ արժէքաւոր ուսումնասիրութիւնը գործն է Հրանտ փաստաբանական, որ վերջերս անգլիերէն լեզուով լոյս տեսած է Վաշինկթընի մէջ: Մեր համակրելի աշխատակիցը շատ պարզ եւ հասկնալի լեզուով կ'ուսումնասիրէ լեռնային գանազան ռազմաբեմերը — մասնաւորաբար Հայկական — տալով անոնց չուրջ կատարուած զանազան նշանակալից դէպքերը, թուելով պատճառներ, թիւեր ու դէմքեր :

Հեղինակը սքանչելիօրէն կը պարզաբանէ լեռնային հողամասերու իբրեւ կազմութիւնը ու անոնց դերը ռազմական գործողութիւններու վրայ : Կը խօսի զանազան տեսակի կռիւներու մասին : Կը պարզէ լեռնային երկիրներու պաբենաւորման եւ փոխադրութեանց դժուարութիւնները, լեռնային յատուկ զօրամասերու կազմակերպութիւնը, քարերու գործը եւայլն :

Հայերէնի թարգմանուած այս գործը պիտի հետաքրքրէ անխտիր մեր նախկին ռազմիկները, նորակոչ զինուորները, եւ առհասարակ ամբողջ հասարակութիւնը :

Գիրքը 100 էջէ աւելի, գեղեցիկ տպագրութեամբ եւ հաղուագիւտ նկարներով զարդարուած է :

ՀՈՒՇԱԼՏԱՏԵՐ

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԵՒ ՇՐՋ· Հայրենակցական Միութեան Ֆրանսայի շրջանի պատգամաւորական ժողովը կը գումարուի 3 Յուլիս, Կիրակի կէսօրէն վերջ ժամը ճիշդ 3ին, Բարեգործականի սրահը, 8 Rue Bossuet: Կը խնդրուի Փարիզի եւ շրջանի պատգամաւորներէն ըլլան ճշդապահ :

Ֆ. Կ. ԽԱՉԻ Ս. ԼՒԻԶԻՆԻ Մասնաճիւղի Ընդհ· Ժողովը 4 Յուլիս, երկուշաբթի երեկոյ ժամը 7.30ին, «Դուբեան» զբաղարանը: Կարեւոր օրակարգ :

ՄԱՐՍԷՑԻ ԲԱՐԵՐԴԻ Հայրենակցական Միութեան Ընդհ· Ժողովը 3 Յուլիս, Կիրակի կէսօրէ վերջ ժամը 3ին, Պուլվար Օտտոյի Ազգ· վարժարանի սրահին մէջ: Կարեւոր օրակարգ : Կը խնդրուի անդամ եւ ոչ-անդամ հայրենակիցներէն ներկայ ըլլալ սոյն կարեւոր ժողովին :

ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՍԱՆԵՐՈՒ Միութեան Վարչութիւնը կազմակերպած է ընկերա - համակրական հաւաքոյթ մը յառաջիկայ Յուլիս 3ին, Կիրակի ցերեկէն վերջ, ճիշդ ժամը 3ին, զուարար ըմպելիներու սեղանի մը չուրջ, Ռաֆֆի ճաշարանին մէջ, 8 Rue de Maubeuge (Carrefour Château - dun) : Կը հրաւիրուին անխտիր բոլոր անոնք ու համակիրները: Վառամշապուհ Արքել· յատկապէս հրաւիրուած է պահ մը նախագահելու համար: ԾԱՆՕԹ... Ծախքերու մասնակցութիւն՝ ամէն գլուխ 5 ֆր·, փոքրիկները հրաւիրեալ կը նկատուին:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Այրի Տիկին Թադուհի եւ զաւակունք, այրի Տիկին Էլմոն Աւագեան եւ պատկունք (Մոնթէլլիմար), Տէր եւ Տիկ· Տէրտէրեան (Մոնթէլլիմար), Տէր եւ տիկ· Մելիքեան (Վալանս), Այրի Տիկ· Աթմաճեան (Փարիզ), Ընտրհակալութիւն կը յայտնեն կեսարիոյ Վերաշինաց Միութեան, Ճերանեան եղբայրներուն, այրի Տիկին Քաթիպեանի, այրի Տիկին Եանուխեանի, Տէր եւ Տիկին Մարտիրոսեանի եւ բոլոր անոնց որոնք ծաղկեպսակով, նամակով կամ անձամբ ցաւակցութիւն յայտնեցին մեր սիրեցեալ ամուսնոյն, հօր, տաղեր, հօրեղբօր, կնքահօր՝

Պ. ԲԱՐՍԵՂ ԱԻԱԳԵԱՆԻ

մահուան առթիւ որ տեղի ունեցաւ 27 Յունիս, իր բնակարանին մէջ, Վալանս:

REXY CINEMA (Lyon)

1 Յուլիս — 7 Յուլիս

Cours Lafayette, angle Rue Garibal.

Ամէն օր ցերեկները 2.30ին, իրիկուանները 20.30ին:

Charles-Vanel dans "L'Impossible aveu"

"Congrès des Sapeurs-pompiers"

Գիներ 3, 5 եւ 7 ֆրանք

Ներկայ յայտարարութիւնը բեղուղին կը տրուի 2 մուտքի տոմսակ զեղչուած գինով :

Le Gérant : H. STEPHAN
Imprimerie A. DER (AGOPIAN)
17, Rue Demesme — PARIS (13)

ՏԱՐԵԿԱՆ ՄԵԾ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՓԱՐԻԶԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻՆ ԿՈՂՄԷ

ՊԱՏՈՒԻՐՈՒ ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՄԲ **ՋԱՐԵՀ ՆԻԿՈՂՈՍ ՊԷՅԼԵՐԻ**

Մասնակցութեամբ Երիտ. Հայուհեաց եւ Հայ Երիտ. Միութեան

3 Յուլիս, կիրակի, ժամը 15—24

Օթել Ճիսըրլիթարի գետահայեաց սրարտէզին մէջ. Ժիւվիզի Ընտիր Նուագ, բացօթեայ պար, գեղարուեստական եւ այլ հաճելի ժամանցկալներ, դիւրաժատչելի պիւֆէ եւ պաղ ըմպելիք:

Երթեւեկ հանգստաւէտ կառքերով

Մեկնում ժամը 15էն մինչեւ 16·30, Բարեգործականի տունէն, 8 բիս Պօսիւէ

Երթեւեկի ծախք 10 ֆր· Հանդէսին մուտքը 12 ֆր·

երիտասարդաց եւ հայուհեաց միութեան անդամներուն եւ ուսանողաց 8 ֆր.

Ի հարկին կարելի է հանգիստաւէտ երթալ երկաթուղիով, Gare d'Orsay, St. Michel, Austerlitz, Gare de Lyon.

ՅԱՌԱՋԴԻՄ ՍԻՐԱՑԻ ՏԱՐԵԿԱՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍԸ

3 Յուլիս, կիրակի, առաւօտեան ժամը 9էն մինչեւ գիշերուան 11·30

ի նպաստ իր վարժարանին

ՐՈՊԷՆՍՈՆԻ ՄԷՋ, Grand Arbre, Maison Figuet

ԿԸ ԽՕՍԻ Պ. Ե. **ՊԷՃԻԿԹԱՇԼԵԱՆ**

Կ'երգեն քաղմաթիւ երգիչներ ու երգչուհիներ: Անակնկալներ: Նուագախումբ՝ ղեկավարութեամբ Տ. Օ Հ Ա Ն Ի Ս Ե Ա Ն Ի

Կը ներկայացուի ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ՄԸ

Ճոխ եւ աժան պիւֆէ

ՀԱԼՈՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ ՍԻՋՈՑՆԵՐ.— Denfert էն առնել մեթրոյի դէպի Թղպէնսոն տանող գիծը: ՄՈՒՏՔ 4 ՖՐԱՆՔ

ՄԵԾ ԴԱՇՏԱ-ՊԱՐԱՉԱՆԴԷՍ

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ

23ՐԴ. ՏԱՐԱԴԱՐՁԻՆ ԱՌԹԻՒ

Նախաձեռնութեամբ ՄԱՐՍԷՑԻ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՀԱՋԸ. ՄԻՈՒԹԵԱՆ Մասնակցութեամբ ՍԷՆԹ-ԱՆԹՈՒԱՆԻ ԵՒ Պ. ՕՏՏՕԻ Ս.ՃԻՒՂԵՐՈՒՆ

3 Յուլիս, կիրակի առաւօտէն մինչեւ իրիկուն, Պտ. Ս. Անտրէ «Պէլվիւէր»ի դաշտը եւ օդաստան պարտէզին մէջ:

ԿԸ ՆԱԽԱԳԱՀԷ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ Պ. ԻԱՆԻԷԼ ԵԼԻՇԵԱՆ

ԿԸ ԽՕՍԻՆ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐ

ՊՕՂՈՍ ՀԻՒՍԵՑԱՆ ԵՒ ԱԶԳԻՆ ՄՈՒՐՏԻՐՈՍԵԱՆ

Գեղարուեստական ճոխ եւ խնամուած բաժին: Պիտի երգեն Պ. Ս. ԱԻՏՕԵԱՆ եւ Օր. Վ. ԱԻԻԿԵԱՆ, կ'արտասանեն Օրիորդները ՄՈՒՐի ՀԱՑԱԶՈՒՏԵԱՆ, ՌՈԶԱ ԵՂԻՇԵԱՆ, Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ եւ վեհ. ՎՈՐՈԳԵԱՆ: Պ. Պ. Ս. ԲՐՈՒՏԵԱՆ, Ռ. ՄԱՆՈՒԿԵԱՆ, Ռ. ՅԱԿՈԲԵԱՆ, Թ. ԱՕԱՏՈՒՐԵԱՆ, Պ. ՎԱՐՈՑԵԱՆ, Յ. ՂԱԶԱՐԵԱՆ եւ Պ. ՇԱԼՃԵԱՆ, Մէջընդմէջ պիտի նուագէ «Ալգազի բարձրախօսը քնարը երգէր»

Մուտք 2 ֆրանք

ՄԱՆՕԹ.— Հանդիսավայրը երթալու համար, ֆուր Պէյզանսէն առնել 23 թիւ հանրակառքը եւ իջնել վերջաւորութեան՝ կարելի է ճայր միասին բերել:

Մեծ դայտամիտհան

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ՍԻՓԱՆ-ԿՈՄԻՏԱՍ ԵՐԳԱԽՈՒՄԲԻՆ ԿՈՂՄԷ

10 Յուլիս, կիրակի առաւօտ ժամը 10էն մինչեւ կէս գիշեր

ՌՈՊԷՆՍՈՆԻ ՄԷՋ

Անակնկալներ Նուագախումբ, Պիւֆէ

Մուտք 5 ֆրանք

Ուտելիքը կարելի է միասին բերել

Հ. ՋԱՐԴԱՐԵԱՆ

ՎԻՐԱԲՈՑԾ - ԱՏԱՄՆԱԲՈՑԾ

44 Rue Dunkerque (ՄԷԹՐՕ ԿԱՌ ՏԻՒ ՆՈՒԱ)

Tél. Trudaine 42—69

Կ'ընդունի ամէն օր ժամը 14—20:

Հաւատացեալները ժամադրութեամբ:

ՎԱՀԱՆ ԵԱՐԾԱՆԵԱՆ

ԻՐԱՒԱԳԷՏ - ԽՈՐՀՐԴԱԿԱՆ

Հաճեցէք դիմել իրեն, ամէն դատական եւ վարչական գործերու համար:

Ամէն օր ժամը 10էն 12 եւ 5էն 7. բացի ՇԱԲԱԹ եւ ԿԻՐԱԿԻ օրերէն:

44, Rue Lafayette. Tél. Prov. 78-38.



"ՇԻՐԱԿ,,

Արեւելքի միակ իսկական օղին է: Անզուգական, անմրցելի, անվարպետ: Առաջնակարգ զօրացուցիչ ախորժաբեր, պատրաստուած զուտ չափիչ հիւթով: Շայ ազնուականի սեղանին զարդ:



ՐԱՔԸ ՏԻՒԶ

Զուտ խաղողէ քաշուած եւ անիսոնով պատրաստուած հայկական օղին է ՐԱՔԸ ՏԻՒԶ: Զգուշացէք արուեստական օղիներէ որ ձեր առամոքսը կ'այրեն եւ գիշերները ջուր կը խմցնեն եւ կը վնասեն ձեր առողջութեան: Խմեցէք միայն ՐԱՔԸ ՏԻՒԶը որուն անպարտ, կազդուրիչ եւ ախորժարեր ըլլալը հաստատուած է:

Dalakupeian 24 Rue St. Lambert et 8 Rue Suffres, Marseille:

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՑԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
17, Rue Damesme, PARIS (13e)

Téléphone : Glacière 15 - 70
Chèque Postal Paris 1678 - 63
(ԵՐԹԵՒԵԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.— ՏԱՐԵԿԱՆ ՎԵՑԱՄՍԵԱՅ ԵՒԱՄՍԵԱՅ

Ֆրանսա եւ Գաղութքներ	150 ֆրանք	75 ֆրանք	40 ֆր.
Անգլիա եւ Իտալիա	265 ֆրանք	140 ֆրանք	
Ուրիշ երկիրներ	215 ֆրանք	110 ֆրանք	

ԵՐԵՔՇԱԲԹԻ
5
ՅՈՒԼԻՍ
MARDI
5 JUILLET
1938

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ԺԹ ՏԱՐԻ — 14e Année No. 3774

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ԿԸ ՄՆԱՅ ՂՂՈՐՄԻԼ...

Փարիզի մէջ ունինք « Հայ. Գաղթ. կեդր. Յանձնաժողով » մը, որուն գործունէութեան մասին չատ քիչ բան դիտենք : Այն ալ անուղղակի :

Ակնթարթօրէն Սանճաքին ծանօթ կացութեան առթիւ, ան - շուշտ այդ յանձնաժողովին վրայ եւս պարտականութիւնները կ'իյ - նային : Բարեմիտներ կը կարծէին թէ ան ալ բաներ մը կ'ընէ, « պարտ ու պատշաճը տնօրինելու համար» :

Իմացէք եւ ուրախացէք,— Փարիզի ամփակալար չարաթա - թերին է որ կը պատմէ :

— « Հայ Գաղ. Յանձնաժողովը վերջերս գումարում մը ու - նեցած է որուն մէջ որդեգրած է այն սկզբունքը թէ Յանձնաժողո - վը իրաւասու չէ միջամուխ ըլլալու Սանճաքի խնդիրին կարգա - դրութեանէն ի վեր ստեղծուած կացութեան եւ այս առթիւ ո եւ է ձեռնարկ կատարելու, եւ թէ Սանճաքի եւ Սուրիոյ Հայութեան կը պատկանի տեղական պահանջներուն համաձայն պատշաճը տնօրինել :

Կը լսենք թէ նոյն նիստին մէջ որոշուած է միայն ձեռնարկներ կատարել Սանճաքի չբաւորներու եւ անգործներու օժանդակու - թեան համար» :

Պրծաւ գնաց : Բանի մը տասնեակ հազար ֆր.ի նպաստ հատա - քելով, կը ղրկենք Ալեքսանդրէթ եւ Անտիոք, որպէսզի բաժնեն չքաւորներուն եւ անգործներուն, եւ մենք ալ հանգիստ քուն կը քաշենք :

Մոռնանք որ, արդէն ամառ է եւ մեր աղնուական՛ն չիդերը հանգստանալու պէտք ունին...

Բարի վայելում : Արդէն չատ յոդնելու պէտք ալ չունին : Կա - թողիկոսարան կայ, առաջնորդներ, եպիսկոպոսներ եւ վարդա - պետներ կան, անշուշտ անոնք ճար մը կը գտնեն, մեր հոգը հա - տե՞ր է ...

Ապահովաբար այսպէս արդարացած են Գաղթ. Յանձնաժո - ղովին անդամները, որոնց մէկ երիտասարդներ ալ կը գտնուին, եթէ չենք սխալիր, վերջին վերակազմութեան շնորհիւ :

Այս լուրին հետ մէկտեղ, Պէյրութի թերթերուն մէջ կը կար - գանք հետեւեալ երկու տեղեկութիւնները.—

1· Անտիոքի թեմին առաջնորդ Տաք արք. ընդարձակ տեղե - կագիր մը ներկայացնելով կաթողիկոսարան, կը շեշտէ մեր ժողո - վուրդին կրած տնտեսական անօրինակ տագնապը Ալեքսանդրէ - թի, Գրըզ Խանի, Անտիոքի, Բէսապի եւ Ճէպել Մուսայի մէջ եւ կը պահանջէ անմիջական օգնութիւն :

2· Խադ արք. իր տեղեկագրին մէջ մանրամասն բացատրու - թիւններ կուտայ այն ծրագրի մասին որուն համաձայն կարգ մը Հայեր կ'ուզեն պատուիրակութիւն մը ղրկել Ենկիւրի : Կաթող· ընդհ· փոխանորդ Սարաճեան արք· որ նկատի ունի ամբողջ հա - յութեան շահն ու արժանապատուութիւնը, ինչպէս նաեւ կը գի - տակցի արաբ ազնիւ ժողովուրդին մեզի ցոյց տուած ասպնջակա - նութեան, անմիջապէս պատասխանած է խադ արք·ի գրութեան, շեշտելով այդպիսի բայլի մը ազետալի հետեւանքները : Ընդհ· փոխանորդը թելադրած է շրջահայեաց ըլլալ եւ զգուշանալ այդ - պիսի պատասխանատու բայլերէ :

Առաջինի մասին — նկութական օգնութիւն — մտածե՛ր են ար - դէն : Գալով երկրորդին — պատուիրակութիւն մը ղրկել Ենկիւրի — ի՞նչ կապ ունի Փարիզի հետ : Սուրիոյ գաղութին կ'իյնայ «պատշաճը տնօրինել», համաձայն տեղական պահանջներուն ...

Ահա այսքան պարզ է կացութիւնը, Հայ Գաղթ. Կեդր. Յանձ - նաժողովին համար :

Եւ երբ այս հոգեբանութիւնը կը տիրէ այդ յանձնաժողովին մէջ, կրնաք վստահ ըլլալ թէ այսպէս կը մտածեն նաեւ Լոյս - Քա - դաքին միւս ազգային օրկանները,— Բարեգործական, բանկալ եւայլն : Չէ՞ որ մէկը միւսին լրացուցիչն է : Սան մը գլորէ մէկ տեղէն, կ'երթայ կը գտնէ իր խումբը :

Չենք զարմանար : Եւ մենք չատոնց խաչ քաշած ենք այս «ե - րեւելեան ժողովներ»ուն վրայ, երբ անդադար կը յիշեցնենք Մի - ացեալ Ճակատի, գաղութներու կազմակերպութեան, ընդհանուր ղեկավարութեան պահանջը : Պահանջ մը՝ չափազանց տարրական եւ անյետաձգելի :

Ահաւասիկ նոր փորձաքար մը՝ Սանճաքի տագնապը, ապա - ցուցանելու համար համատարած անանկութիւնը : Այն ալ Փարիզի մէջ, որ եթէ ոչ ուրիչ գաղութներու, գոնէ Սուրիոյ հետ անմիջա - կան կապ ունի, իբրեւ մայրաքաղաքը հոգատար իշխանութեան :

Մենք չենք ուզեր մտնել «իրաւասութեան» խնդիրներու ման - րամասնութեանց մէջ, աւելորդ վէճեր չյարուցանելու համար : Արգահատանքով կ'արձանագրենք այդ առարկութիւնը, եւ նորէն կը յիշեցնենք.—

Նոյնիսկ Սանճաքի զինուորական համաձայնութեան կնքու - մէն վերջ, աշխատանքներ կան աչքի առջեւ,— պարտականութիւն - ներ՝ որոնց մասին հրապարակաւ չէ որ պիտի խօսինք :

Արդ, անխղճութիւն է, դասալքութիւն է մինակ ձգել Սուրիոյ ազգ· իշխանութիւնները, այս տագնապալի պարագաներուն մէջ, ուր որ եւ է չուարում, խուճապ կամ զանցառութիւն կրնան ան - դարմանելի աղէտի մը յանգիլ :

Եւ չմոռնանք որ ճիշդ այն պահուն երբ մենք այս մտահոգու - թիւնները կը յայտնենք, Թուրքերը չգոհանալով իրենց չահած յաջողութիւններէն, տենդագին աշխատանքներ կը կատարեն, հրապուրիչ խայծեր կը նետեն Անտիոքէն Փարիզ, ի խնդիր նոր նուաճումներու :

Շ.

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՆ ԱՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Թուրք զօրքը Սանճաք մտած է արդէն

Անտիոքէն կը հեռագրեն յուլիս 3 թուականով.—

Ֆրանքեւթուրք սպայակոյտերուն միջեւ կատարուած զինուորական բա - նակցութիւնները վերջացած ըլլալով, պայմանագրութեանց ստորագրութիւն - ները փոխանակուեցան այս առտու ժամը 7ին : Ինչպէս յայտնի է, այս խոր - հրդակցութիւնը նախատեսուած էր Ֆրանսայի եւ Թուրքիոյ միջեւ կնքուած համաձայնութիւններով, ապահովելու համար Ալեքսանդրէթի Սանճաքին հո - գային ամբողջութիւնը եւ ամրապնդելու երկու երկիրներուն բարեկամական կապերը :

Շուտով Ֆրանքեւթուրք զինուորական զործակցութիւն մը պիտի հաս - տատուի հատուկ քանակութեամբ զօրքով, երբ նշանագրուի Ֆրանքեւթուրք բարեկամութեան դաշնագիրը, Ենկիւրիի մէջ : Կնքուած համաձայնութեան շնորհիւ Սանճաքի բնակիչները պիտի կրնան հետզհետէ հանդարտութիւնը եւ վարչական իշխանութիւնը պիտի կրնայ գործել համաձայն Ազգերու Դաշնակ - ցութեան կողմէ հաստատուած կանոնագրին :

Երկու սպայակոյտներուն խօսակցութիւնները տեղի ունեցան բացարձակ ուղղամտութեամբ եւ ունեցան չատ սիրալիր հանգամանք, փոխադարձ հաս - կացողութեամբ : Ստորագրութեանց փոխանակութենէն վերջ, Զօր· Կիւնտիւզ մարզպանութեան Անտիոքի կեդրոնը գնաց, ուր ընդունելութիւն մը սարքուած էր Զօր· Հէօսքինկէրի եւ հրամանատար Քոլէյի կողմէ, ի պատիւ իրեն : Թուրք զօրավարը յետոյ իր երկիրը վերադարձաւ, Ալեքսանդրէթի ճամբով :

**** Զինուորական պայմանագրին ստորագրութեան առթիւ պաշտօնական դեկոյց մը հրատարակուեցաւ, որ կ'ըսէ թէ անոր նպատակն է ապահովել Սան - ճաքին հոգային ամբողջութիւնը եւ քաղաքական սահմանադրութիւնը, հա - մաձայն 1937 մայիս 29ի Ֆրանքեւթուրք դաշնագրին : Անմիջապէս վերը ստորագրուեցաւ յարակից յաւելուածը, որ կը ճշդէ զինուորական զործակ - ցութեան ձեւակերպութիւնները : Թրքական պատուիրակութեան կը նախագա - հէր Զօր· Հ· Կիւնտիւզ, Թրքական սպայակոյտին երկրորդ նախագահը, Ֆր - անսական պատուիրակութեան՝ Զօր· Հէօսքինկէր, Ֆրանսայի արեւելեան բանակին հրամանատարը : Երկու կողմէն ալ կը մասնակցէին սպաներ եւ մաս - նագէտ պաշտօնատարներ :*

**** Մինչ պաշտօնական դեկոյցը կ'ըսէ թէ զինուորական զործակցութիւ - նը պիտի սկսի Ֆրանքեւթուրք բարեկամութեան դաշնագրին նշանագրութենէն (առաջին ստորագրութիւն) անմիջապէս վերջը, (երէկ, երկուշաբթի), «Իմա - նալիք» երէկ հրատարակած էր ուրիշ հեռագիր մը, որ ահաւասիկ.—*

Թուրք զինուորները, 2500 հոգի, Սանճաք մտան երէկ, 2 յուլիս, համա - ձայն կնքուած պայմանագրին : Զեկոյցը կ'ըսէ թէ այս զինուորները պիտի օգ - նեն Ֆրանս· զօրքին, պահպանելու համար բարեկարգութիւնը՝ ընտրութեանց չրջանին :

« Իմանալիք» կը չարունակէ.— Ուրեմն, Թուրք զօրքը ներս մտած է բա - րեկամութեան դաշնագրէն առաջ : Այս կացութիւնը մեծ սրտնեղութիւն պատ - ճառեց Սուրիոյ մէջ : Ցաշակաւ հրամանատար Քոլէի դիկտատուրան իրակա - նին մէջ թուրք զօրքին յանձնած կ'ըլլայ Սանճաքը : Արդէն իսկ Ֆրանքեւթուրք դաշնագիրը կը հաստատէ Թրքական գերակշռութիւնը Սանճաքին վարչութեան մէջ, մինչդեռ Թուրքերը փոքրամասնութիւն կը կազմեն· Սուրիան կ'անդա - մատուի, մինչդեռ տակաւին խորհրդարանին վաւերացման չէ յանձնուած Ֆրանքեւսուրիական դաշնագիրը : «Կարելի չէր աւելի լաւ ծառայել Ֆրանսայի Թշնամիներու խաղերուն, Մօտաւոր Արեւելքի մէջ » :

Թուրքերը կը ցնծան, կը դրօշազարդեն...

Պէյրութէն կը հեռագրեն յուլիս 2 թուականով.—

Զինուորական համաձայնութիւնը կը տրամադրէ որ Թուրք զինուորները տեղաւորուին Ալեքսանդրէթ - Անտիոք գծին հիւսիսակողմը : Անտիոք պիտի դառնայ կայանը խառն պահակազօրքի մը :

Թուրքերը փառաւոր ընդունելութիւն մը կը սարքեն Թրքական զօրքին ժամանման առթիւ : Քաղաքին գլխաւոր Թաղերուն մէջ կանգնած են յաղթա - կան կամարներ, զարդարուած ծաղիկներով եւ Աթաթիւրքի պատկերներով : Տուներու ճակատներն ալ զարդարուած են ծաղիկներով եւ զորգերով : Դրա - մանդներ կախուած են փողոցներուն մէջ եւ ամէն կողմ խումբեր կազմուելով ցնծագին աղաղակներ կ'արձակեն :

Թրքական տարրերու այս ցնծութեան առջեւ, արաբ, ալէվի եւ հայ հա - սարակութիւնները հանդարտ եւ խոհեմութեամբ ամփոփուած կը մնան իրենց Թաղերուն մէջ, իրենց քաղաքացիական իրաւունքները, ազատօրէն կիրարկել իրենց պաշտամունքը եւ վայելել իրենց ստացուածքը : Սակայն բողոքող ընտանիքները որոշած են մեկնիլ եւ հեռացած են վերջնա - պէս, ծախելով իրենց հողերը եւ միասին տանելով իրենց ստացուածքը : Կը թուի թէ մնացեալ փոքրամասնութիւնները տրամադիր են աւելի դիւրու - թեամբ համակերպելու եւ զործակցելու իշխանութեանց :

**** Պոլսէն կը հեռագրեն թէ զինուորական համաձայնութենէն վերջ, ամ - բողջ Թուրք մամուլը փոխելով իր դիրքը, սիրալիր զգացումներ կը յայտնէ Ֆրանսայի հանդէպ եւ բեղուն զործակցութիւն մը կը նախատեսէ երկու եր - կիրներուն միջեւ : Քանի մը նախարարներ Պոլիս կուգան, ուր ժողովներ պիտի գումարուին Աթաթիւրքի նախագահութեան տակ, մասնակցութեամբ սպայա - կոյտի պետին :*

**** Ժընեւէն կը հեռագրեն թէ համաձայնութեան լուրը լաւ տպաւորու - թիւն ձգեց Ազգաժողովի չրջանակներուն մէջ : Այս առթիւ կը գնահատուի եր - կու կողմերուն համերաշխութիւնը եւ յոյս կը յայտնուի թէ Ազգաժողովը յա - ռաջիկայ սեպտեմբերին գոհունակութեամբ պիտի արձանագրէ համաձայնու - թիւնը, որ կ'ամրապնդէ խաղաղութիւնը Մօտաւոր Արեւելքի մէջ :*

ՄՕՍԿՈՒԱՑԻՆ կը հեռագրեն թէ Պ· Քալինին ճառ մը խօսելով, յայտա - րարեց.— «Ի· Միութիւնը պէտք է զերազանցէ Մեծն Բրիտանիան, նաւային չինութեանց մէջ : Կարդ մը պետութեանց վարիչները կ'ուզեն աւարի տալ մեր մեծ երկիրը : Ուստի պէտք է զինուինք, զայն պաշտպանելու համար» :

ԽՈՐԵՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԽԵՂԴԵԼԷ ԱՌԱՋ ԳՆԴԱԿԱՀԱՐՈՒԱԾ ԵՆ ՄԵՍՐՈՊ ԵՒ ԲԱԳՐԱՏ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԸ

« *Ցուսաբեր* »ի մէջ կը կարդանք հետեւեալ նոր տեղեկութիւնները, որոնք մեր պաշտօնակցին հաղորդուած են յունիս 15ին, արժանահաւատ աղբիւրէ մը (24 յունիս).—

« *Ստոյգ է այլեւս, որ Կաթողիկոսին խեղդել են չեկիստները : Իր եղեր - կան մահից երկու օր առաջ չեկիստները կաթողիկոսից պահանջում են Մայր Աթոռի գանձատան բանալիները : Մեսրոպ (Մադիսարոս) եւ Բագրատ եպիսկո - պոսները պնում են չեկիստներին յայտնելու Կաթողիկոսի ժխտական պատաս - խանը : Չեկիստները տէդն ու տեղը գնդակահարում են Մադիսարոսին եւ Բագ - րատին : Երբ կաթողիկոսը այդ կրակոցների վրայ դուրս է գալիս, չեկիստները անմիջապէս յարձակւում են վրան եւ պահանջում բանալիները : Վճռական մերժում ստանալով, չեկիստները բռնում եւ գազանաբար խեղդում են կաթո - ղիկոսին : Դիակը երեք օր մնում է անթաղ, մինչեւ որ Թիֆլիսի կուսանոցի ծեր կոյսերը, որոնք ապաստան գտած էին Վանքում, ահուդողի մէջ գալիս եւ մի կերպ թաղում են եղերաբախ նահատակին :*

«Անդրկովկասից Պարսկաստան քչուած գրեթէ բոլոր Պարսիկները միաբե - րան յայտարարում են.— «Բոլշեւիկները Հայոց Ալիքիային սպանեցին» :

ՄԵԾ ՑՈՒՍԱԽԱԲՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԻՈՑ ՄԷՋ

Հայերու եւ Արաբներու արտագաղթը

Պէյրութէն կը հեռագրեն յուլիս 2 թուականով· (*Իմանիթէ*).— Հրամա - նատար Քոլէի զինուորական դիկտատուրային հետեւանքով Սանճաքին արար եւ հայ բնակչութեան մէկ մասը հարկադրուած էր ձգել հեռանալ : Ֆրանքեւ - թուրք զինուորական համաձայնութեան ստորագրութիւնը ընդունուեցաւ իբ - րեւ յաղթանակ մը թրքական յաւակնութեանց : Թուրք զօրքին մուտքը պիտի ծառայէ մոլեգին ցոյցերու : Սանճաքը անթնակելի կը դառնայ արար եւ հայ հասարակութեանց համար որոնք իրաւամբ կը վախնան թէ պիտի չկրնան պահել ընկալեալ իրաւունքները եւ պաշտամունքի ազատութիւնը :

Սուրիոյ մէջ Ֆրանքեւթուրք համաձայնութիւնը ընդունուեցաւ մեծ յու - սախաբութեամբ : Հանրային կարծիքը դիտել կուտայ դառնօրէն.— 1. Ֆրանք - եւսուրիական դաշնագիրը տակաւին Ֆրանսական խորհրդարանին վաւերաց - ման չէ ենթարկուած, հակառակ արուած հանդիսաւոր խոստումներու.— 2. Ֆրանսիւթուրք համաձայնութիւնը ալ աւելի կը ծանրացնէ Ազգաժողովին ո - րոշած կարգադրութիւնը, որ ինքնին ծանր հարուած մը կը կազմէր աւելորդա - միութեան համար :

Դժգոհութիւնը մեծ է ամբողջ Սուրիոյ մէջ : Մաղթենք որ չչահագործուի Ֆրանսայէ թշնամիներուն կողմէ :

Ի՛նչպէս պիտի տեղաւորուի թուրք զօրքը

« *Տէյլի Թելէկրաֆ* » հաղորդելով համաձայնութեան լուրը, կ'ըսէ թէ 2500 Ֆրանսական զօրքին մէջ Սուրիացիներ պիտի չգտնուին եւ ընդհանուր պա - տասխանատուութիւնը պիտի վերաբերի Ֆրանսացի զօրավարին : «Թան» յու -

(Աւելին շարունակութիւնը կարդայ Գ. էջ)

ՕՐԸ ՕՐԻՆ

ԳԱՃԱՃՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ, ՄԻԱՑԵՔ

Գ.

Ես ձեզի գաճաճներ յիշեմ, որոնք հանդիսացեր են իրենց դարուն փառն ու պարծանքը :

Կիկերոնի հակառակորդը, պերճա - խօսն Լիկինիոս կալվոս, իր թիզ մը հասակով կը ցնցէր սխեռը Կիլիկիոյ Հռովմայեցի հիւպատոսին դէմ՝ հինգ - բայ՝ երբ ելաւ սկսէր :

Անգլիացի բանաստեղծը, Փոփ, գա - ճած էր եւ մէջքը երկուքի եղած, այն - քան կորաթամկ որ պարոյկի ձեւ ա - ռած : (Օր մը, իր բարեկամին հով նստած՝ Փոփ կ'աշխատէր թարգմանել լատիներէն ոտանաւոր մը, բայց տող մը կար որ չէր կրնար հասկնալ : Ու - սանող մը, որ մօտերը կեցած՝ ականջ կուտար, կը միջամտէ եւ Փոփի կ'ըսէ թէ դժուարութիւնը կը ծագի անկից որ հարցական նշանը մոռցուած է : Փոփ, զայրացած, կը հեգնէ.— «Հար - ցական նշանին ի՛նչ ըլլալը գիտե՞ս ուսյիմ» :— «Պզտիկ կեռ բան մըն է, որ միայն հարցումներ գիտէ ընել» կ'ըսէ ուսանողը՝ աւելի անգութ հեգնա - թեամբ մը ակնարկելով բանաստեղ - ծին հասակին , որ կեռ նշանի կամ պարոյկի ձեւ ուներ) :

Կօտօ, որ եպիսկոպոսացաւ Ռիչ - լիէոյի օրով, իր դարուն մեծագոյն իմացականութիւններէն մէկը կը հա - մարուէր, թէեւ հասակով կարճա - գոյն :

Ցիշեցինք հռետորը, բանաստեղծը , եպիսկոպոսը,— կը քաւէ : Ուրեմն գա - ճաճները կրնան նոյնիսկ... բանաս - տեղծ ըլլալ կամ եպիսկոպոս : Եւ ... թագաւոր, ինչպէս Լեհաստանի մէջ 1305ին (վլատիսլաս Ֆիւլիքթալիս գաճած էր) : Ալ չեմ յիշեր երգիչ, երաժիշտ, սուսերամարտիկ գաճաճնե - րը :

Ճիշդ է թէ գաճաճէ գաճած տարբե - րութիւնը մեծ է,— անշուշտ ինծի հետ դուք ալ չէք հաւատար Պլինիոսի այն աւանդութեան թէ Գանգէսի ե - զերքը կը բնակէին, իր դարաշրջանին, գաճաճներ, որոնք հազիւ երեք հա - րիւր միլիմեթր հասակ ունէին : Այ - սաւհանդերձ կը վկայեն թէ փրանսա - ցի հռչակաւոր գաճաճը, Նիհոլա Ֆէր - րի, այլ անուամբ՝ Մանկիկ, ծնեալ ի վոժ, պզտիկուց՝ փոխանակ օրօրոցի մէջ դնելու, ուր պիտի կորսուէր, հո - ղաթափի մէջ կը դնէին, այնքա՜ն պզ - տիկ էր : երբ մկրտութեան տարիճ, պնակի մը մէջ դրին : Բերանը այնքան պզտըտիկ էր, որ մօրը ծեծը բերանը չէր մտներ, ուստի կը սնուէր ծծա - կով :

Պավարիոյ թագաւորն ալ գաճած մը ունէր : Օր մը, խնջոյքի ժամանակ , թագաւորը հրամայեց սեղան բերել արտաքոյ կարկանդակ մը, որ յան - կարծ ինքնիրեն ճեղքուեցաւ եւ մէջէն դուրս ելաւ ... գաճաճը՝ սարսափի մատնելով թագաւորին սեղանակիցնե - րը :

Սուրբ Ռուսիոյ ցարին, Պետրոս Ա·ի հօրը եւս ծաղր էր գաճած մը եւ գա - ճաճուհի մը, որոնց ամուսնութեան համար՝ յատուկ կառեր ու թիկնա - պահներ շինեց, այնքան նեղիլիկ որ խաղալիկ պիտի կարծէիր :

Ուրեմն, հասակին կարճութիւնը չի նշանակեր խելքի կարճութիւն,— գա - ճաճները պատմութեան տուեր են հը - ռետորներ, բանաստեղծներ, եպիսկո - պոսներ, թագաւորներ, երգիչներ, մարզիկներ, ասպետներ, եւայլն :

Կը մնայ եզրակացնել, այդ ալ՝ յա - ջորդով :

ԱՐԱԶ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԱՄ ՄԱՀՄԱՆԱԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԱՄ ՄԱՀՄԱՆԱԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԱՄ ՄԱՀՄԱՆԱԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԿՈՄԻՏԵԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ

(18ԲՑ ՏԱՐԵԳԼՈՒԽԻ ՎԱՅՐԱԿԱՆ ՏԱՐԻՔ)

ՀԱՅՈՑ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՎԱՅՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԶՈՀԱԳՐՈՒԹԻՒՆԸ

(Ի· ԲՐՅՈՒՍՈՎԻ ՄԱՀՈՒԱՆ)

Ընկեր Բրյուսով մահացաւ Մոսկուայի մէջ, 19 Հոկտեմբեր 1924 թուականին, 50 տարեկան հասակին։ Ան իր մեծ ընդունակութիւնները, իր ամբողջ կեանքը նուիրեց Ռուսիոյ յեղափոխական շարժումին։ Ան ծնած էր Մոսկուա, ուր ալ ստացաւ իր միջնակարգ կրթութիւնը։ Ուսանելու տարիներուն ան մտաւ յեղափոխական շարժումին մէջ։ Ան ամբողջ կեանքը անդադար աշխատեցաւ, ինքզինքը չխնայեց, որպէսզի Ռուսիոյ մէջ ստեղծուի կուսակցութիւն մը, որ կարենայ ղեկավարել պրոլետարիատը դէպի յաղթանակ։ Ան ամբողջ կեանքը ապրեցաւ միայն այդ գաղափարով։ Ան ամբողջ կեանքը մտածեց միայն այդ մասին։ Ան ամբողջ կեանքը աշխատեցաւ միայն այդ ուղղութեամբ։ Ան ամբողջ կեանքը կռուեցաւ միայն այդ նպատակին համար։

Ընկեր Բրյուսով ամենէն առաջ եղաւ մարքսիստ։ Ան ուսումնասիրեց մարքսիզմը, ինչպէս որ ուսումնասիրեցին զայն Մարքսը եւ Էնկելսը։ Ան ուսումնասիրեց զայն ոչ թէ իբրեւ դոգմա, այլ իբրեւ ուղեցոյց գործողութեան։ Ան ուսումնասիրեց զայն ոչ թէ իբրեւ ուսմունք, որ կարելի է անվերջ մեկնաբանել, այլ իբրեւ ուսմունք, որ կարելի է կիրարկել։ Ան ուսումնասիրեց զայն ոչ թէ իբրեւ ուսմունք, որ կարելի է ընդունիլ կամ մերժել, այլ իբրեւ ուսմունք, որ կարելի է ընդունիլ եւ կիրարկել։

Ընկեր Բրյուսով ամենէն առաջ եղաւ գործնական մարդ։ Ան ուսումնասիրեց մարքսիզմը, որպէսզի կարենայ կիրարկել զայն։ Ան ուսումնասիրեց զայն, որպէսզի կարենայ ղեկավարել պրոլետարիատը դէպի յաղթանակ։ Ան ուսումնասիրեց զայն, որպէսզի կարենայ ստեղծել կուսակցութիւն մը, որ կարենայ ղեկավարել պրոլետարիատը դէպի յաղթանակ։ Ան ուսումնասիրեց զայն, որպէսզի կարենայ ստեղծել կուսակցութիւն մը, որ կարենայ ղեկավարել պրոլետարիատը դէպի յաղթանակ։

Ընկեր Բրյուսով ամենէն առաջ եղաւ գործնական մարդ։ Ան ուսումնասիրեց մարքսիզմը, որպէսզի կարենայ կիրարկել զայն

ՄԵՐ ԴԱՍՏԻԱՐԱՆԸ ԱՅԳԱԿՈՒԹԻՒՆ ԿԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԱՌՋԵՒ

Ա. Ե. Ս. Կ. Ի. կառավարութիւնը ուշադրութեան առած է Հայկական հարցի միջազգային լուծման անհրաժեշտութիւնը եւ ջանքեր թափած է, որպէսզի Ազգերու Լիգայի ներկայ նստաշրջանին հարցը դրուի Ազգերու Լիգայի օրակարգին վրայ։ Ցաւօք, մինչեւ այսօր մեր ջանքերը չեն յաջողած։ Ազգերու Լիգայի ներկայ նստաշրջանին Հայկական հարցը չի դրուած։ Ինչո՞ւ։ Ինչո՞ւ Ազգերու Լիգան, որ ստեղծուած է ազգերու միջեւ խաղաղութիւնը պահպանելու նպատակով, չի ուզեր զբաղիլ Հայկական հարցով, որ ամենէն վտանգաւոր հարցերէն մէկն է եւ որ կրնայ նոր պատերազմի մը պատճառ դառնալ։ Ինչո՞ւ Ազգերու Լիգան չի ուզեր զբաղիլ Հայկական հարցով, որ ամենէն արդար հարցերէն մէկն է եւ որ կրնայ լուծուիլ առանց մեծ դժուարութիւններու։ Ինչո՞ւ Ազգերու Լիգան չի ուզեր զբաղիլ Հայկական հարցով, որ ամենէն ողբերգական

լիս 3ի խմբագրականին մէջ պարզելով համաձայնութեան տրամադրութիւն - ները, կը գրէ ·

— « Պայմանագիրը կ'ընդունի թէ Սանճաքին ներկայ խռովեալ կացու - թիւնը անհրաժեշտ կը դարձնէ կարգ մը զգուշական միջոցներ ձեռք առնել : Թիւնը անհրաժեշտ կը դարձնէ կարգ մը զգուշական միջոցներ ձեռք առնել : Հետեւաբար պէտք եղաւ ճշդել յաւելուածական զօրքին թիւը,— 2500ական հոգի — ինչպէս եւ սահմանել թրքական զօրքին կայանը : Եղածը պարզապէս ալյեթանական գործակցութիւն մըն է, հապէս առժամեայ եւ սահմանափակ : Համաձայնութիւն գոյացած է թէ այս թուրք զօրքը պարզապէս բաբեկամ երկ - րի մը մէջ հաստատուած կ'ըլլայ, թէ ան որ եւ է մասնակցութիւն պիտի չու - նենայ Ֆրանսական զօրքին ընդհանուր պատասխանատուութեանց մէջ որոնք մխայն անոր կը վերաբերին, թէ թուրք զօրքին ներկայութիւնը կարգ մը ժամանակներու մէջ՝ չի կրնար որ եւ է սահմանափա - կում, որ եւ է անդամատում յառաջ բերել Ֆրանսայի հոգատարութեան մէջ : Որ եւ է երկիմաստութիւն կարելի չէ այս մասին» :

*** «Աքսիոն Ֆրանսէզ»ի կիրակի օրուան թիւին մէջ, Պ. Ժ. Տէլէպէք խըս - ոտքէն կը քննադատէ կնքուած համաձայնութիւնը, «խաբէութեանց սակար - կութիւն մը» կոչելով զայն եւ հեգնելով թրքական զինակցութիւնը : Ցաչոր - դով՝ ամրողջական թարգմանութիւնը :

ՄԻԿՈՅԵԱՆ ՉԵԿԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ Կ'ԸԼԼԱՑ

« Մաթէն » չունդալից տեղեկութիւններ հրատարակած էր կիրակի օր, հե - տեւեալ խորագիրներուն տակ ·— « Խորհրդային կազմակերպումն առակտի ծա - ղալումները ·— Պլիվսէր կը հետապնդէ վտրշիլովը ·— Միկոյեան կը սպառ - նայ եժովի» :

*Թերթը պատմելով Ծայր· Արեւելքի Չեկայի նախագահին՝ Լուչկովի փա - խուստը դէպի Մանչուրիա, ընկերակցութեամբ երկու զօրավարներու, կը պատմէ թէ պայքարը կը սաստկանայ մարշալներ Պլիւխէրի եւ Վոռոշիլովի միջեւ, նոյն ինքն Սթալինի հաւանութեամբ, ինչպէս եւ Միկոյեանի եւ եժովի միջեւ : 1938 փետրուարին, Լուչկով Մոսկուայէն ղրկած էր գաղտնի տեղեկա - գիր մը, որ կրնար վտանգել Պլիւխէրը : Մարշալները Մոսկուա կանչուեցաւ, բայց եւ այնպէս կրցաւ օձիքը ազատել, հակառակ այնքան յոռետես գուշա - կութեանց, ինչպէս եղած էր Թուխաչեւսկիի գնդակահարութեան առեն : Ցե - տոյ Ծայր· Արեւելքի վերադառնալով, մարշալները չարունակեց նոր դաւեր սարքել, բայց փոխանակ իր գինակից Միկոյեանի պէս ուղղակի եժովի վրայ յարձակելու, կողմնակի խաղեր սարքեց, ջախջախիչ թղթածրար մը կազմեց Լուչկովի դէմ եւ ապատամբութիւն մը վերագրեց անոր, Ծայր· Արեւելքի եւ Մոսկուայի մէջ : Լուչկով Մոսկուա կանչուած էր յուլիս 5ին, մասնակցե - լու համար գինուորական խորհրդակցութեան մը, բայց կռահելով գլխուն գա - լիքը, նախընտրեց փախչիլ : Խորհրդային թերթերը հերքեցին փախուստի լուր - ը, բայց Լուչկով ինք պաշտօնապէս հաստատեց ճափոնական կառավարու - թեան միջոցաւ :

*Թերթը ուրիչ մանրամասնութիւններ ալ յիշելով, կ'եզրակացնէ թէ Պլիւ - խէր այսպէս վրկած ըլլալով Սթալինը եւ իր իշխանութիւնը, վճռական յաղ - թանակ մը տարաւ մարշալ Վոռոշիլովի վրայ : Իր կարծիքով խախտած է նաեւ եժովի դիրքը եւ կը սպասուի որ իրեն Չեկայի նախագահ իրեն յաջոր - դէ «Հայ մը, Անաստաս Միկոյեան, ծնած Ռոստով եւ անդամ Քաղաքական Բիւրոյին : Այս նորեկը միշտ մաս կազմած է Սթալինեան խմբակին եւ տա - կաւին կը վայելէ դիկտատորային վստահութիւնը » :

*** Սուլթան Սէյիսպայեւ, Ուզպէկիստանի նախորդ վարչապետը, «Ուզ - պէկ ժողովուրդին եւ ամբողջ խորհրդային ժողովուրդին թշնամի» հռչակուե - ցաւ խորհրդային մամուլին մէջ : Ամբաստանեալը յաջորդն էր նախկին վար - չապետ Ռճայեւի, որ գնդակահարուեցաւ Պուխարինի հետ : Ժողովուրդի թըշ - նամի հռչակուած է նաեւ հողագործական գործավարը, Այամէտով :

*** Կ'ըսուի թէ փախստական զօրավարը Լուչկով գինուորական կարեւոր գաղտնիքներ յանձնած է ճափոնական իշխանութեանց :

Պատերազմի վտանգը եւ Անգլիա

*Անգլիոյ վարչապետը կարեւոր ճառ մը խօսեցաւ չաբաթ օր, միջազգային կացութեան մասին : Այս առթիւ նկարագրելով պատերազմի սարսափները՝ Չեմպըրլէն եւ Սպանիոյ մէջ, յայտարարեց ·

— « Անգլիա եւ իր գինակիցները քան տարիէ ի վեր կ'ըսեն թէ պատե - րազմը չհետեցան : Մենք կրնայինք պահպանելու համար այս ազատ ժողովր - դապետութիւնը օտար տիրապետութեան դէմ եւ բարեկարգութիւնն ու օրէնքը հաստատելու համար բռնի ուժին տեղ : Անշուշտ յաջողեցանք պահպանել մեր ազատութիւնը, եւ եթէ անգամ մը եւս վտանգուի այդ ազատութիւնը, եւ եթէ վստահ ըլլանք թէ պատերազմը միակ միջոցն է զայն պաշտպանելու, նորէն պիտի կռուինք : Բայց, ի՞նչ վտանգներ կը ներկայացնէ բռնի ուժի գործածու - թիւնը : Մեծն Բրիտանիա եւ Իրլանտա երկուքուկէս միլիոն սպանեալ կամ վի - րաւոր ունեցան մեծ պատերազմին մէջ· աչխարհը, բարեկամ թէ թշնամի, 21 միլիոն կորուստ ունեցաւ, 7 միլիոն սպանեալ եւ աւելի քան 13 միլիոն վի - րաւոր : Իմ առաջին պարտականութիւնս է կարելին փորձել, որպէսզի Եւրո - պան չհասնի մեծ պատերազմին կրկնութիւնը » :

Ցետոյ պաշտպանելով ազ - միջամտութեան քաղաքականութիւնը Սպա - նիոյ մէջ, Պ. Չեմպըրլէն բացատրեց թէ կարելի չէ զոյ նաւահանգիստներու մէջ պաշտպանել առեւտրական նաւահանգիստները : «Եթէ, հակառակ բոլոր ազդարարութեանց, նաւային ընկերութիւնները կը նախընտրեն իրենց փո - խադրանաւերը ղրկել վտանգաւոր ջուրերու մէջ, զրամ չահելու համար, բա - նաւո՞ր է պահանջել որ մենք պատերազմի արհաւիրքին մէջ խրինք, երբ անգ - լիացի ժողովուրդը որ եւ է չահ չունի » :

ՋԱՆԱՉԱՆ ԼՈՒՐԵՐ ՔԱՆԻ ՍԸ ՏՈՂՈՎ

*ՊՈԼՍԻՆ կը հետադրէն թէ երկրաչարժի բուռն ցնցում մը զգացուեցաւ չա - բաթ իրիկուան դէմ, Պոլսոյ եւ ամբողջ Անատոլուի մէջ :

*ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԱՐԱԳԻՐՆԵՐՈՒ տեղատուման համար սարքուած համա - գումարին տոթիւ, որ պիտի բացուի վաղը, 6 յուլիս Եվիանի մէջ, նախաձեռ - նութեամբ Մ. Նահանգներու կառավարութեան, Հրէական գործակալութիւնը ղեկոյց մը հրատարակեց , չեչտելով անոր կարեւորութիւնը : Գործակալու - թիւնը յիշելով Գերմանիոյ եւ ուրիշ երկիրներու մէջ կատարուած հալածանք - ները, կ'առաջարկէ նիւթական միջոցներ ճարել, մեթոտիկ արտագաղթ մը կազմակերպելու համար :

«ՅԱՌԱՋ»ի ՅՈՒԼԻՍ ՔԻ ԹԻՒը սպառած ըլլալով, կը խնդրուի մեր գործակալներէն (մէկայն գործակալներէն) մեզի դրկել իրենց ա - ւելցած թիւերը, եթէ ունին :

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

— Մարաշցի Վարդան Գալաֆեան կը փնտռէ իր եղբայրը Հաճի Յարու - թիւն Գալաֆեան եւ քեռայրը Ցով - հաննէս Տօնապետեան Կէմէրկցի, ո - րոնք 8 տարի առաջ կը գտնուէին Ցրանսա, Վիէն : Տեղեկացնել Վար - դան Գալաֆեանի Mikropolis, Drama, (Grèce) :

ԳԱՅԼԻՔ ՏԵՍԻՔ ԼԻՈՆԻ ՄԷՋ
Cinéma REXY
Cours Lafayette. angle Garibaldi

Le Gérant : H. STEPHAN
Imprimerie A. DER (AGOPIAN)
17, Rue Demesme — PARIS (13)

Հ. Յ. Դ.

Գէորգեան

ԼԱՍԻՊՈՒԱՑի «Խաժակ» խումբի ընդհ. ժողովը 7 յուլիս, Հինգշաբթի, երեկոյ ժամը 8 30ին սովորական Հաւաքատեղին : Բոլոր ընկերներու ներկա - յութիւնը անհրաժեշտ է :

ՓՈՐԻՋԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԱԿՈՒՄԲԻ

Յառաջիկայ դասախօսութիւնը տեղի կ'ունենայ 6 Յուլիս, Ո - րբագշաբթի երեկոյեան ժամը 8ին, 8 Rue Poussin :

ԿԸ ԽՕՍԻ Պ. Ս. ՎՐԱՑԵԱՆ

Նիւթ՝ «Հայաստանի Հանրապետութեան ստեղծումը»

Ֆ. Կ. ԽԱՉԻ ՓԱՐԻԶԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ ՏԱՐԵԿԱՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍԸ

17 Յուլիս, կիրակի առաւօտեան ժամը 9ին գիշերուան 11.30

ՐՈՊԷՆՍՈՆԻ ՄԷՋ, *Grand Arbre, Maison Fiquet*

Գեղարուեստական հաճելի անակնկալներ, ընտիր նուագախումբ· Անձրեւի պարագային գոց սրահ· Ճաշ պիւֆէ՝ պատրաստուած խոհա - րարուհիներու կողմէ. Մուտք 5 ֆրանք·

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ·— Denfertէն առնել մեթրոյի դէպի Ռոպէնսոն տանող գիծը, եւ կամ բարթ տ'Օրլեանէն օթօպիւս Թիւ 128:

ԴԱՇՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

Մարսէյլի Հայ երաժշտական Մխիթեան դաշտագնացութիւնը 10 Յուլիս, կիրակի, «Սէն Սէր»ի Ծովահայեաց անտառին մէջ·

Արձանագրութեանց համար դիմել՝ Թէլեանի, 8 a Rue Francis de Pressensé, Մարսէյլ, ամենաուշը մինչեւ 7 Յուլիս, Հինգշաբթի երեկոյեան ժամը 7ը· երթագարձ շոգեկառքով 7.50 ֆրանք·

ՀԱՑ — ԲՈՑԺ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ

Խմբագիր՝ Շ· ՆԱՐԴՈՒՆԻ — ՁՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

Հաւաքածոյ կազմելու համար կը պահպնի հետեւեալ թիւերը — 1, 2. 13, 20, 39: Առաջին տասիւ պէտք ունինք թիւ 39ին: Վերադ որ - ձնողներուն պատրաստ ենք տալ պահանջուած փոխարկման գինը: (Շնորհակալութիւն մեզ բարեկամներուն, որոնց բարեացակամութեամբ լրացուցինք քանի մը հաւաքածոյ):

ՀԱՑ ԲՈՑԺի երեք տարուան հաւաքածոն, առանց ապահովելու պահպան թիւերը, կը ծախուի 50 ֆրանք,— մօտաւորապէս 700 էջնոց հատոր մը:

Դիմել՝ 17, Rue Damesme, PARIS:

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ են Հայ-Բոյժի 45, 46 եւ 47 թիւերը:

ՀԱՑ - ԲՈՑԺի տարեկան բաժնեգինն է Ֆրանսայի համար 30, արտասահ - մանի համար 35 եւ 40 ֆրանք (ըստ երկրի):

ԵԴՈՒԱՐԴ ԳԱԼՓԱՔՃԵԱՆ

ԴՐԱՄԱՏՈՒՆ, 48 rue de la République, Marseille

Tél. Colbert 74—51, 47—22

Ծառայութեան փոփոխութիւն· Ջէքեր կը տրուին ամէն երկրի համար: կը գնենք եւ կը ծախենք ոսկի դրամներ:

ԼԱՒ ՊԱՏՄՈՒԱԾՆԵՐ·

Etude de Me BERNARD WAHÉ

(17e ANNÉE)

Licencié en Droit de la Faculté de Paris
Ancien élève de l'École des Hautes Études Sociales

JURISCONSULTE
de
Droit Français et International Privé
Mandataire en Justice

159 rue Lafayette, Paris (Gare du Nord) Tél. NORD 68—02

ԿԸ ՍՊԱՍԷՔՆԻ ամէն տեսակ դատեր, Փարիզի, գաւառի, գաղութներու եւ արտասահմանի մէջ: Խորհրդակցութիւն իրաւագէտ· ամէն տեսակ խնդիրներու Ազգութեան դատեր, ամէն տեսակ թարգմանութիւններ: Նաթիւրալիզասիոնի օրինական հետապնդութիւններ եւ անունները փոխադրութիւն, ընկերու - թիւններու կազմութիւն եւ լուծարում: Ամէն տեսակ դատերու խմբագրութիւն: Իրաւագիտական քննութեանց եւ մրցութիւններու պատրաստութիւն: Ճառախօսու - գասախօսութիւններու խմբագրութիւն: Փողոցային արկածներու ենթարկուած չգաւառներուն կուտայ կանխավճար առանց տոկոսի եւ միշտոդէքի: Կ'ընդունի ամէն օր ժամը 9—10 եւ 5—7:

Կ'ընդունի նաեւ ժամադրութեամբ·

ՀԱՑԵՐՈՒ ԺԱՄԱԴՐԱՎԱՑՈՒՐ

Ազգային **Յ Լ Օ Ր Ի Ա**

61, Rue Monsieur le Prince, Paris (6)

Մերթ՝ Օսէօ եւ Սէզ Միշէլ

Ազնիւական եւ ներքինական խնամուած կերակուրներ :

ԿԱՊՈՑՆԵՐ ՌՈՒՍԱՍՏԱՆ ՂՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ունինք մեծ մարզ անգլիական, ֆր անսական եւ չեխոս - լովաք կերպասներու՝ այլ մարդոց վերարկուի, հագուստի կա - նանց տպերու եւ հագուստներու համար: Առաջնակարգ կօշիկ - ներ, ձերմակեղէններ եւ նպաքներէններ: Ունտէրվուտ գրի մե - քենաք Չուտ·ւոր գներ·

Գիմել՝ American Lloyd, Paris (9). 7 rue Auber

Tél. Opéra 67-77

ԿԱՐԱՊԵՏ Ց. ԷՄԷՐԵԱՆ

Maison E. CHARLES *հիմնուած 1869*

29 rue Mathis, Métro Crimée


Autobus: AJ, AV, CP, 52, 50/71 Tel. Botzaris 12—60

Կը յանձնէք՝ գահարեղէններ, ամէն տեսակ ժամացոյցներ մատանիներ եւլն·: Նորոգութիւն ժամացոյցներու եւ գոհարե - ղէններու: Կը գնենք՝ ըլլալին, ոսկի, արծաթ եւ գոհարեղէններ՝ նպաստաւոր գիներով·

Մի մոռնաք որ վստահելի ձեռքէ գնուած ոսկեղէն ու գոհա - րեղէնները անփոփոխ կը պահեն իրենց արժէքը·

Գաւառներէն եղած ապսպրանքները կը կարգադրուին արագ եւ խղճմտութեամբ·

Hommes **Dames**



15, Bld. Bonne Nouvelle

Métro: Bonne Nouvelle Tél.: Gut. 93-70



ՔԷՄԱՆՉԻՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՒ ՈՒՏԻ ՀԱՑԿ

Կը Նուագեն ամէն երեկոյ մասնակցութեամբ ՔԱՆՈՒՆԻ ՊՕՂՈՍԻ եւ պարուհի ՕՐԻՈՐԴ ՅԷՐԻՏԱՑԻ, Franco - Oriental սրճարան-ճաշա - րանին մէջ, 3. RUE CLAUZEL (35 Rue des Martyrsի անկիւնը), Tel. Trudaine 51—80. Մերթ ըս N. D. Lorettes եւ Pigalle. Օթօպիւս I. R. R. bis: Արեւելեան եւ եւրոպական կերակուրներ, օղի՝ լաւ ադանգը - նեքով·



ՐԱՔԸ ՏԻՒՉ

Ձուտ իսպղոզէ քաշուած եւ անիսոնով պատրաստ - ուած ֆայլական օղին է ՐԱՔԸ ՏԻՒՉը, Զգուշացէք արուեստական օղիներէ որ ձեր ստամոքսը կ'այրէ եւ գիշերները ջուր կը խմցնէ եւ կը վնասէ ձեր առող - ջութեան: Խմեցէք միայն ՐԱՔԸ ՏԻՒՉը որուն անուրան, կագդուրիչ եւ ախորժարեր ըլլալը ճաստատուած է:

Dalakupeian 24 Rue St. Lambert et 8 Rue Suffres, Marseille.

Tailleur de ST. BERNARD
Pour Hommes et Dames
H. GULBOLIAN



24 rue Affre կամ 8 rue Cavé, Paris (18)
Մասնաճիւղ՝ 2 rue de la Charbonnière
Մեթրօ La Chapelle եւ Barbès Rochechouart
Թելեֆոն Montmartre 69—70

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒն·— Կարեւոր նուէրներ մէկ ձեռք հագուստի համար մինչեւ 8 յուլիս 14:

ՍՏԱՑԱԾ ԵՆՔ ՅՐԱՆՍԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՄԱՌՆԱՑԻՆ ԿԵՐԹԱՍՆԵՐ·

ՄԵՐ ԳԻՆԵՐԸ.— Հագուստ (երկու փորձով) սկսեալ 350—450 ֆր·է· Նուէր կը տրուի մէկ ֆանթէզկի տարատ կամ կոլֆ· 450 ֆր·է վեր հագուստներու համար, 3 փորձ, նուէր կը տրուի Հայկուհի Կիւլպէնկեանի արհեստանոցին մէջ պատրաստուած, գարնան յատուկ, արժէքաւոր ժաշտակ վզնոց մը: Ներկայանալ «Յառաջ»ի կտրոնով· վերոյիշեալ նուէրներէն չեն օգտուիր մինչեւ 20 տարեկան այն երիտասարդները եւ ե - րիտասարդուհիները որոնք չեն ուզեր խօսիլ ծնո - ղներնուս չեն կրնար գալ իրենց անունները ժայրենի լեզուով·

Բաց է կիրակի մինչեւ կէսօր

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
17, Rue Damesme, PARIS (13e)

Téléphone : Glacière 15 - 70
Chèque Postal Paris 1678 - 63
(ԵՐԹԵՒԵԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.— ՏԱՐԵԿԱՆ ՎՃՑԱՄՍԵԱՑ ԵՒԱՄՍԵԱՑ

Ֆրանսա եւ Գաղութները	150 ֆրանք	75 ֆրանք	40 ֆր.
Անգլիա եւ Իտալիա	265 ֆրանք	140 ֆրանք	
Ուրիշ երկիրներ	215 ֆրանք	110 ֆրանք	

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
6
ՅՈՒԼԻՍ
MERCREDI
6 JUILLET
1938

ԺԴ. ՏԱՐԻ — 14e Année No. 3775

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ԴԱՍԱԼՔՈՒԹԵԱՆ ՄԸ ԴԱՄԵՐԸ

Ո՛րքան խմաստալից է Հայ Գաղթ. կեդր. Ցանճնաժողովին դասալքութիւնը՝ Սանճաքի եւ առ հասարակ Սուրիոյ նոր տագնապին առթիւ :

Խմաստալից՝ քանի մը տեսակէտներով :

Ինչպէս հաղորդեցինք երէկ, Ցանճնաժողովը ընդուներ է այն տեսակէտը թէ «իրաւասու չէ միջամուխ ըլլալու Սանճաքի խնդրին կարգադրութենէն ի վեր ստեղծուած կացութեան» : Հետեւաբար, «Սանճաքի եւ Սուրիոյ հայութեան կը պատկանի տեղական պահանջներուն համաձայն պատշաճը տնօրինել» :

Փորձենք վերլուծել այս մանուածապատ նախադասութեան իմաստը :

Անշուշտ յանճնաժողովը պետութիւն մը կամ հոգատար իշխանութեան մէկ օրկանը չէ, որպէսզի կարենայ միջամտել քաղաքական բանակցութեանց, փոխել կնքուած համաձայնութիւնները եւ հայկական տեսակէտներ կցել անոնց :

Ծիծաղելի պիտի ըլլար այդպիսի յանձնաժողովին մը : Եւ մենք այդ չէր որ կը սպասէինք ոչ այս քառակուսի յանձնաժողովէն, ոչ ալ ուրիշ որ եւ է հայկական օրկանէ :

Բայց, որո՞ւ հարցուցին, արդէ՞ք տորպեցան թէ իրաւասու չենք նաեւ քննելու «Սանճաքի խնդրին կարգադրութենէն ի վեր ստեղծուած կացութեան» հետեւանքները :

Ո՞ր տպուշը թելադրեց մատը մոխիրը չթաթխել, եւ ձգել որ տագնապահար, բուն բառով՝ խուճապահար ժողովուրդը ինք իր դլխուն ճարը նայի :

Բարեհաճեցէք աչքի առջեւ բերել «ստեղծուած կացութեան» զանազան ծալքերը :---

1· Ժողովուրդը մասհոգութեան մատնուած է եւ կը դաղթէ, տուն – տեղ կը ծախէ եւ կը հեռանայ, հակառակ բոլոր հաւաստիքներուն :

2· Այդ նոյն մասհոգութեան հետեւանքով, զանազան տարբեր, բարեմիտ կամ րթմամիտ, կը խորհին պատուիրակութիւն մը ղրկել Էնկիւրի, անոր բարեհաճութիւնը չտհելու համար :

3· Օգտուելով ստեղծուած հոգեբանական վիճակէն, Պոլսոյ մէջ ալ ափ մը չոչորթներ իրար անցեր են, «հայկական» պատուիրակութիւն մը ղրկելու համար Սանճաք :

4· Հոգատար իշխանութեան ներկայացուցիչը, Հրամանատար Քոլէ, այ - ձախ ինկած է, ժողովուրդին յուզումը հանդարտեցնելու, յանձին ալ իր կամքը պարտադրելու համար :

5· Անոնք որ քիչ - շատ աչքի կը զարնէին եւ տարիներէ ի վեր դեր կը կատարէին Սանճաքին մէջ, հեռացած կամ հեռացուած են, եւ կրակին մէջ կը մնան առաջնորդ, վարդապետ, դիւղապետ կամ աղաներ :

6· Արաբները, չատ աւելի յուսախար, ուշադրութեամբ կը հետեւին մեր քայլերուն, մինչեւ անդամ խօսքերուն :

7· Բուն Սուրիոյ մէջ, իրրեւ դերադոյն իշխանութիւն, ունինք ծերունի կաթողիկոս մը, նոյնքան ծեր վոխանորդով մը, դարձեալ եպիսկոպոսներ ու վարդապետներ, որոնք միայն աղերսելու, յորդորելու, աղօթելու պաշտօն ունին :

8· Տնտեսական տագնապը իսկապէս որ չատ վրդովիչ համե – մատութիւններ կը ներկայացնէ, թէ «ստեղծուած կացութեան» եւ թէ թրքական չարակամութեան հետեւանքով :

Դեռ ուրիշ պարագաներ ալ կրնայինք յիշել : Բայց կը բաւէ : Լման խօսքը տանիքէն չեն պոռար :

Արդ, այս հոգերը ամէնը մէկ, եւ կամ անոնց մէկ մասը որ եւ է պարտականութիւն եւ պատասխանատուութիւն չե՞ն դներ մեր վրայ : Ոչ միայն Փարիզի, այլեւ բոլոր դաղութներուն վրայ : (Մի մոռնաք որ «Գաղթականաց»ը միեւնոյն ատեն «կեդրոնական» է, ընդհանրակա՞ն...) :

Օրինակ, ի՞նչ է Փարիզի տեսակէտը,— Սանճաքի ժողովուրդը պէ՞տք է որ դաղթէ, դառնայ նորէն ցիւրեացն, այս անդամ անդարձ :

Եւ կամ, նոյն Փարիզը եւ առ հասարակ մեր դաղութները համաձա՞յն են որ հայկական պատուիրակութիւն մը երթայ Էնկիւրի, իր երախտադիտութիւնն ու հաւատարմութիւնը մատուցանելու համար Աթաթիւրքի բարեխնամ կառավարութեան ...

Աս՞նք ալ «իրաւասութեան» խնդիրներ են : Եւ եթէ մենք չենք բուն իրաւասուն, այս հարցերուն մէջ, հապա ո՞վ է, — Սանճաքին կուսակա՞լը, հրամանատարը Քոլէ՞ն թէ Կիլիկիոյ ծերունի կաթողիկոսը, որ բարեմտօրէն կը հաւատայ թէ Փարիզի մէջ ալ գլուխներ կան :

Ըսինք թէ խմաստալից է Գաղթ. Ցանճնաժողովին դասալքութիւնը, եւ քանի մը տեսակէտներով :

Առաջինը հասկցաք անշուշտ,— իր անդիտակցութիւնը : Անկարողութիւն՝ ըմբռնելու կացութեան պահանջները, եւ անհոգութիւն, ծուլութիւն : Պարզապէս բանկալի հոգեբանութիւն ,— քանի մը փչրանք նետենք եւ մեր օձիքը ազատենք :

Իմացէք երկրորդ «խմաստալից» պարագան ալ,— այս մարդիկը իրենք ալ խաչ քաշած են իրենց վրայ : Եւ ահաւասիկ հրապարակաւ ալ կ'ըսեն թէ բանկալին դուրս հորիզոն չունին :

Ուրեմն, թող թմբին իրենց թիկնաթոռներուն վրայ, եւ թող ասպարէզ իջնեն այն տարրերը որ թէ խիղճ ու խելք ունին եւ թէ համախմբուելու, գործելու ընդունակութիւն եւ տրամադրութիւն :

Մենք այս ազդհանչանն է որ կը հնչեցնենք անընդհատ : Սանճաքին տագնապէն առաջ ալ, ինչպէս այսօր :

Եւ ուրախ ենք որ, գոնէ այս առթիւ, կարգ մը բարենչան չարժուձեւեր կը նշմարուին երիտասարդական ճակատին վրայ :

Շ.

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ՓՈԽԱԴԱՐՁ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԴԱՇԻՆՔ ՖՐԱՆՍԱՑԻ ԵՒ ԹՈՒՐՔԻՈՑ ՄԻՋԵՒ

Ստորագրուեցաւ Էնկիւրիի մէջ, 10 տարուան հաւատար

Էնկիւրիէն կը հեռագրեն յուլիս 4 թուականով .— *Այսօր, արտաքին գործերու պաշտօնատան մէջ ստորագրուեցան այն պայմանագիրները որոնց մասին համաձայնութիւն գոյացած էր երէկ : Թուրքիոյ ներկայացուցիչն էր Թ. Բ. Արաս, Ֆրանսայի ներկայացուցիչը՝ դեսպան Պ. Փոնսո : Որոշուեցաւ ամէն չապս հրատարակել ստորագրուած թուղթերը,— բարեկամութեան դաշնագիրը, հաւաքական յարձարարութիւններ եւ յարակից պայմանագիրներ : Ստորագրութեան ներկայ էր Էնկիւրիի սուրհանդակը, Պ. Արսլան : Ստորագրութենէն վերջը, Բ. Արաս խօսքը Պ. Փոնսոյի ուղղելով, գոհունակութիւն յայտնեց այս բարեյաջող ելքին համար որ նոր շրջան մը կը բանայ Ֆրանքեւթուրք յարաբերութեանց մէջ : Ցետոյ դառնալով Սուրիոյ ներկայացուցիչին, շեշտեց Թուրքիոյ համակրանքը Սուրիոյ համար :*

Պ. Փոնսո պատասխանելով, յիշեց Մոնթրէօյի համաձայնութիւնը նեղուցներու մասին, որ նպաստեց ապահովութիւնը ամրապնդելու Միջերկրականի աւազանին մէջ : Ցետոյ համոզում յայտնեց թէ ստորագրուած համաձայնութիւնները վստահելի բարեկամութիւն մը պիտի հաստատեն Թուրքիոյ, Ֆրանսայի եւ Սուրիոյ միջեւ :

Բարեկամութեան դաշնագրին նախաբանը կ'ըսէ թէ Ֆրանսայի եւ Թուրքիոյ հանրապետութեանց նախագահները, ուզելով ամրապնդել անկեղծ բարեկամութեան կապերը, յօդուտ երկու պետութեանց չահերուն, որոշեցին բարեկամութեան դաշնագիր մը կնքել :

Դաշնագիրը կը բաղկանայ եօթը յօդուածներէ : Տեւողութիւնն է տասը տարի : Գործադրութիւնը պիտի սկսի վաւերացումներու փոխանակութենէն անմիջապէս վերջը :

Դաշնագրին տրամադրութեամբ, Ֆրանսա եւ Թուրքիա յանձն կ'առնեն չմտնել քաղաքական կամ տնտեսական որ եւ է կապակցութեան մէջ որ ուղղուած է իրենցմէ մէկուն դէմ : Եթէ կողմերէն մէկը յարձակում կրէ, ընդհարման ամբողջ ընթացքին միւս կողմը որ եւ է օգնութիւն կամ աջակցութիւն պիտի չընծայէ յարձակող պետութեան : Անկէ զատ, Ֆրանսա եւ Թուրքիա պիտի խորհրդակցին, ամբողջացնելու համար ընդհանուր խաղաղութիւնը եւ ապահովութիւնը արեւելեան Միջերկրականի մէջ : Ուրիշ յօդուածով մը, երկու պետութիւնները կը պահեն նախապէս կնքուած իրաւարարութեան դաշնագիրը, ինչպէս եւ իրենց յանձնառութիւնները՝ Ազգաժողովին հանդէպ :

**** «Լ'Իօմ»ի քաղաքական քրոնիկագիրը խօսելով ստորագրուած դաշնագրի մասին, դիտել կուտայ թէ Ֆրանքեւթուրք համաձայնութիւնը սրտնեղութիւն պատճառած է Հռոմի եւ Պերլինի մէջ : Կարդ մը չբնականներ կը հաւատան թէ Իտալիոյ արտաքին նախարարը առաջարկած է Եուկոսլաւիոյ վարչապետին՝ զինուորական եւ ծովային ճշմարիտ զինակցութիւն մը կնքել երկու երկիրներուն միջեւ : Միեւնոյն աղբիւրին համաձայն, Եուկոսլաւիոյ վարչապետը մերժեր է այս առաջարկը, թէեւ Կոմս Ճիանօ չնայեր է ապացուցանել թէ Ֆրանսայի եւ Թուրքիոյ փոխադարձ աջակցութեան դաշնագիրը ծանրակչիռ պարագայ մըն է Իտալիոյ եւ Եուկոսլաւիոյ համար :*

Ֆրանքեւթուրք համաձայնութիւնը նպաստաւոր տպաւորութիւն գործեց Լոնտոնի մէջ :

**** Անգլիոյ երեսփ. ժողովի երկուշաբթի օրուան նիստին մէջ, երկրորդ ընթերցումով ընդունուեցաւ այն օրինագիծը որ կը վաւերացնէ Թուրքիոյ հետ կնքուած համաձայնութիւնը եւ որուն համաձայն վեց միլիոն ոսկիի վարկ մը կը բացուի Թուրքիոյ, զինք եւ ռազմանիւթ գնելու համար Անգլիոյ մէջ : Ասկէ զատ Թուրքիա 16 միլիոն ոսկիի վարկ մը կը ստանայ, հանրօգուտ շինութեանց համար : Աշխատաւորականներն ալ դնահատեցին կնքուած համաձայնութիւնը : Եւրոպական նախարարը մեծ գոհունակութեամբ չեշտեց անոնց արժէքը :*

Թրքական զօրք Սանճաք կուտայ

Զինուորական համաձայնութիւնը եւ յարակից պայմանագիրը ստորագրուած ըլլալով, Ֆրանքեւթուրք զինուորական գործակցութիւնը անմիջապէս գործնական ճամբու մէջ մտաւ : Թրքական զօրքը երէկ Սանճաք պիտի մտնէր, տեղաւորուելու համար սահմանուած վայրերուն մէջ : Տեղական թերթերը այլեւս հարթուած կը նկատեն ամէն թիւրիմացութիւն, սիրալիր գործակցութեան նոր շրջան մը աւետելով :

ԵՐԷԿ ԼՈՋԱՆԸ, ԱՅՍՕՐ ՍԱՆՃԱՔԸ

Անգլիա, Ֆրանսա եւ Թուրքիա մէկ ճակատ, յանուն խաղաղութեան...

«Տէյլի Թէլէկրաֆ»ի դրքակիցը կը հեռագրէ Էնկիւրիէն, կիրակի օրուան թուականով .—

Այստեղ չատ մեծ կարեւորութիւն կ'ընծայեն Ֆրանքեւթուրք համաձայնութեան, որուն զինուորական մասը ստորագրուեցաւ այսօր, Անտիոքի մէջ : Տիրող կարծիքն այն է թէ՝ յաջորդելով անգլեւթուրք տնտեսական եւ առեւտրական համաձայնութեան (փոխառութիւն), այս համաձայնութիւնը սերտօրէն իրարու կը կապէ Անգլիան, Ֆրանսան եւ Թուրքիան, հաւասարկշռութիւնը պահպանելու համար արեւելեան Միջերկրականի եւ Մօտաւոր Արեւելքի մէջ : Թէեւ Ֆրանքեւթուրք բարեկամութեան դաշնագիրը պիտի ստորագրուի յառաջիկայ սեպտեմբերին, երբ Պ. Ժորժ Պոնէ Էնկիւրի կ'այցելէ, բայց կը կարծուի թէ բոլոր առկախ հարցերը լուծուած են եւ դարաւոր բարեկամութիւնը վերահաստատուած է :

Թրքական ազդեցութեան վերահաստատումը Սանճաքին մէջ կը համարուի դիւանագիտական յաղթանակ մը Թուրքիոյ համար : Այս յաղթանակը միեւնոյն

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Դ· էջ)

ՕՐԸ ՕՐԻՆ

ԳԱՁԱՁՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ, ՄԻԱՑԷՔ

Դ.

Եզրակացնենք :

Մարդոց արժէքը մեթրով չէ որ կը չափեն : Կարճն ու երկարը մէկ գիւն է : Շիշդ է, եղան իմաստուններ, որ պատմութեան մեծագոյն դէպքերը չափացին կղէոպատրայի բթին չափով (փասթալ), կամ Նափոլէոնի գանկէջի փոքրիկ գեղով : Շիշդ է նոյնպէս, լեռներու վրայ ձիւնախոլի ջուր խմող գիւղացիին ծանօթ կազմախոսուքիւնը մեծ դեր կը խաղայ իր ճակատագրին վրայ : Բայց մշակոյթ կոչուած բանը կտո՞ւ է որ արշինով չափէ, եղրարք ատուականք :

Կարճ թէ երկար՝ մարդը մարդ է : Ու արժէք ունի՝ երբ կը ստեղծագործէ : Ուրեմն, իրաւունք ունինք ըմբռնուտանալու Պուտափէշթի գաճաճները :

Ես իրաւունք չեմ տար միայն ... մտքի գաճաճներուն :

Արդարեւ, գոյութիւն ունին մարդիկ, *պոյլու - պոյլու* կամ կարկին ոտքերով ու խակին գլուխով, որոնք կը կարծեն իրաւունք ունենալ գաճաճերուն վրայ խնդալու : Բայց չէ՞ որ գաճաճ են իրենք ալ, եթէ ոչ հասակով, գէթ իրենց խելքով : Այս մարդոց վայելած յարգանքը ուրկէ՞ կը բխի սակայն,— մէկ մեթր եօթանասունհինգ սանթիմ եթէ անկէ որ փեսայ են ... բարեկզբնականի :

Ունինք գաճաճներու ուրիշ դասակարգ մըն ալ , Լըվանթէն կոչուած , — ասոնց մօտ աճած կամ զարգացած չէ հայրենասիրութիւնը : Ասոնք մեր պատմութեան ներշնչած զգացումը կը ծախեն «պոնիժուռ»ով մը փոխանակուած ժպիտի մը հետ : Իրենչման ալ փարթես, չես կրնար բարձրացնել հայրենասիրութեան աստիճանացոյցը այս մարդոց հոգիին մէջ : Սակայն ուրկէ՞ կը բխի մարդոց վայելած յարգանքը, — պաճուճ դրած իրենց դրամագլուխէ՞ն թէ անկէ որ ... բանկալ կը նրսուին՝ իրենք իրենց շուրջ տալով :

Վերջապէս ի՞նչ գաճաճներ կան հասակաւոր երիտասարդներուն եւ մեծապատիւ մտաւորականներուն մէջ, — անոնք երբեմ պիտի չկարենան զգալ մարդի բարձրութեան պարգեւած խոր զգայութիւնը :

Կուգայ ատենը, երբ արշինով վկայուած բոլոր այդ մեծապատիւները պիտի չափուին ... խարազանով :

ԱՐԱՋ

ՆՈՐ ՀԱՐՈՒԱԾ ՄԸ ՕԶ-ԹՈՒՐՔ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ

Թուրքիոյ ազգ· մեծ ժողովը յունիս 28ին քուէարկեց ընկերակցութեանց օրէնքը, որ նոր հարուած մը կը կազմէ ոչ -Թուրք հասարակութեանց ազգ· կազմակերպութեան համար : Այս առթիւ պատասխանելով երեսփոխան Պերճ Թիւրքէրի (Քէրէսթէճեան), ներքին գործակալը յայտարարեց·

— Այս օրէնքը կը ձգտի պատշաճեցնել Թուրքիոյ մէջ ապրող միւս հասարակութեանց եւ Թուրք տարրին պայմանները՝ երկրին կանոններուն : Եւ կատարելապէս հաշտ է հիմնական կազմակերպութեան օրէնքին եւ գոյութիւն ունեցող միւս օրէնքներուն : Աչխարհական եւ ազգայնական ըլլալով հանդերձ, մենք ոչ մէկ յոռի մտադրութիւն եւ կամ նկատում կը տածենք միւս ազգերուն եւ կամ ուրիշ կրօնքի անհատներու հանդէպ : Ոչ երկիւղ, ոչ ալ մտահոգութիւն կը զգանք : Այս օրէնքը ոչ մէկ զաղանի նպատակ կը հետապնդէ փոխելու գոյութիւն ունեցող կացութիւնները եւ կամ ընդունուած իրաւունքները : Ուրախ եմ որ Պերճ Թիւրքէր առիթ ընծայեց ինձ յայտնելու այս ճշմարտութիւնը :

Մեր սպասածը միայն օրէնքին յարգանքն է : Իսկ եթէ օրէնքը չյարգեն, օրինական ամէն միջոց ունինք յարգել տալու մեր օրէնքները :

Կրօնականներու գործունէութիւնը պէտք չէ եկեղեցիներուն սահմանը անցնի : Մեր հիմնական սկզբունքն է աչխարհականներու պատկանող գործերը աչխարհականներու յանձնել, ինչպէս բարեգործական հաստատութիւններ, հիւանդանոցներ եւ դպրոցներ : Պետութիւնը պիտի ընծայէ իր օգնութիւնը եւ սպակցութիւնը այս բոլոր հաստատութեանց : Եւ եթէ պարագաները ներեն, պարտք պիտի համարի ինք առանձին անոնց ամբողջ նիւթական մատակարարութիւնը : Արդէն օրէնքին մէկ յօդուածին վերջին հատուածը ասիկա ապահովելու համար դրուած ուղեցոյց մըն է :

Պերճ Թիւրքէր — կեցցէ՛ Թուրքիոյ Հանրապետութիւնը :

Պաշտօնապէս կը հաստատուի որ Տերսիմ չէ խնկած

Թուրքիոյ ազգ· մեծ ժողովի յունիս 29ի նիստին մէջ, վարչապետ Ճէլալ Պայար պարզելով ներքին կացութիւնը, հետեւեալ յայտարարութիւնն ըրաւ Տէրսիմի մասին·

— « Տէրսիմի համար բարեկարգութեան ծրագիր մը ունինք, զոր կը գործադրենք : Անցեալ տարի զինուորական գործողութիւններ կատարուեցան եւ այս տարի ալ պիտի չարունակուին : Այս տարի անցեալ տարուան բաղդատմամբ այդ չրջանակին մէջ աւելի չատ զինուոր համախմբած ենք : Զանազան վայրերու մէջ ալ կարգ մը ընդհարումներ տեղի ունեցան : Տէրսիմի խնդիր ըսուածը միանպամընդմիչտ վերջացնելու ուրիշ միջոց մըն ալ կը մնայ : Բանակը մօտերս Տէրսիմի չրջանակները ռազմափոթձեր պիտի կատարէ : Այս առթիւ բանակը Տէրսիմի համար պարտականութիւններ պիտի ստանձնէ եւ ընդհանուր մաքրագործումով մը այս խնդիրը արմատախիլ պիտի ըլլայ :

Ընկերներ, Տէրսիմցիները գիտէ՞ք ինչ կ'ուզեն : Միջնադարեան մտայնութեամբ մը կ'ուզեն աւարառութիւն ընել, մարդ սպաննել, գէնքով պտտիլ, ոբոնց մարդ չիսոնուի : Հանրապետութիւնը այսպիսի հայրենակիցներ չի ճանչնար : Որքան ատեն որ Տէրսիմցիները ուղղութեան չգան եւ իրենց գէնքերը չյանձնեն, մեր զինուորները հոն պիտի մնան : Մեր ձայնին մէջ գութ եւ ուժ կայ : Իրենց կը մնայ ասոնցմէ մէկը ընտրել » :

Ուրեմն, Տէրսիմ կը դիմագրէ տակաւին, եւ այնքան ուժգին, որ կառավարութիւնը հարկադրուած է բռնմասակել զօրքին թիւը :

ՄՈՍԿՈՒԱՑին կը հեռագրեն թէ ձերբակալուած է ծովային գործավարութեան քաղաքական վարիչը, Շապօչնիկով : Ցէկրանայի (Ուզպէկիստան) զինուորական ատեանը մահուան դատապարտեց երեք հոգի, որոնք անդամ էին գաղտնի կազմակերպութեան մը : Ուրիչ երկու անդամներ դատապարտուեցան 15 տարի, մէկ հոգի 10 տարի, երեք հոգի՝ վեց տարի բանտարկութեան :

ՕԹԹՕ ՊԱՈՒԷՐ, Աւստրիոյ ընկերվարական կուսակցութեան հանրածանօթ դեկավարը եւ մեծ տեսաբանը, մեռաւ առջի օր, Ֆրանսայի մէջ, սրտի հիւանդութեան հետեւանքով : Ծնած էր 1881ին : Շուտով կը ներկայացնենք իր կեանքն եւ գործը :

ՍՏՈՒԳՈՂԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՀՅՈՒՐԱՆՈՑԻ

The Enemy of Standard

By DENNIS WHEATLEY Գրեց՝ ՏԵՆՆԻՍ ՀՈՒԱՅԹԼԻ

From : J. M. Թարգմ. Ա. Ս.

ՄՄՄ.— Սկս բերբ-օճէճ տպագ մը ձեռագիր հրապարակագրական ընդարձակ յօդուած մը, որ կը կրէ հետեւեալ վերնագիրը։ Ուրիշ բան չենք գիտեր անոր հեղինակին մասին, բացի անկէ որ ան ռուսահայ մըն է, որ կ՚ապրի Ամերիկայի մէջ։ Ինչպէս կը տեսնէք, ան ինքզինքը կը ներկայացնէ իբրեւ ազգային ընդհանուր հոգեբան։ Ինչ որ ալ ըլլայ անոր մասնագիտութիւնը, ան ունի շատ հետաքրքրական գաղափարներ, որոնք մեզ կը թուին արժանի ուշադրութեան։ Ահա թէ ինչ կ՚ըսէ ան։

Ամէն անգամ, որ ես կը հանդիպիմ ռուսահայ մը, որ ինքզինքը կը նկատէ ազգային հոգեբան, ես կը զգամ, որ ան ինքզինքը կը խաբէ։ Ես կը կարծեմ, որ ազգային հոգեբանի մը համար անհրաժեշտ է, որ ան ապրած ըլլայ իր ազգին հետ, ուսումնասիրած ըլլայ անոր պատմութիւնը, ծանօթ ըլլայ անոր գրականութեան, ունենայ անոր սովորութիւններուն ու աւանդութիւններուն ամբողջական գիտակցութիւն մը

ԱՇԽԱՏԱՎՈՐ ՈՒՍԱՆՈՂԻ ՕՐԱԿԱՐԳԸ

Ուսանողական կյանքի կազմակերպման հարցերը միշտ էլ մեծ տեղ են գրավել մեր մամուլի էջերում։

պծին վրայ կը դրուի Լոզանի դաշնագրին հետ (1923) որ Թուրքիան ազատեց օտար գրաւումէ եւ Մոնթրէօյի պայմանագրին հետ (1935) որ վերահաստատեց Թուրքիոյ այլամերժ հսկողութիւնը Տարտանէլի վրայ:

Անտիրքի համաձայնութեամբ իշխանութեան բացարձակ հաւասարութիւն կը հաստատուի Ֆրանսայի եւ Թուրքիոյ միջեւ, պահպանելու համար ներքին օբէնքը եւ բարեկարգութիւնը Սանճաքին մէջ: Իւրաքանչիւր երկիր 2500 զինուոր պիտի պահէ Սանճաքին մէջ: Թրքական զօրքի մուտքը ինքնին պսակումը կը համարուի Թրք. տեղւոյն: Սակայն եւ այնպէս, մինչդեռ Ազթաթիւրքի ուրիշ յաջողութեանց առթիւ չքեղ ցոյցեր կը կատարուէին, այս անգամ Ազգասիրութեան մէջ ճեռք բերուած յաջողութիւնը կ'ընդունուի հանդարտութեամբ, իբրեւ բնական արդիւնքը Թուրքիոյ անվիճելի իրաւունքներուն:

Զօր. Ֆրանքօ կ'ընդունի Անգլիոյ առաջարկը

Լոնտոնի թերթերը կը գրեն թէ Զօր. Ֆրանքօ պատրաստակամութիւն յայտնած է ընդունելու անգլիական առաջարկը՝ կամաւորներու յետս կոչման եւ չէզոք նաւահանգիստի մը հաստատման մասին: Շուտով հաւանութիւն պիտի յայտնուի որ միջազգային յանձնաժողովը երթայ տեղին վրայ ցուցակագրէ օտար կամաւորները:

Անգլիոյ երեսփ. ժողովին երկուշաբթի օրուան նիստին մէջ, վարչապետը բացակայ ըլլալով, էմմական նախարարը նպաստաւոր տեղեկութիւններ հաղորդեց կացութեան մասին: Այս առթիւ հաստատեց թէ առաջարկուած է Ալմերիա նաւահանգիստը գործածել, օտար առեւտրական նաւերու համար, որ պէտք չարձակման չենթարկուին:

Մինչ այս մինչ այն, Սպանիոյ ազգայնականները կը շարունակեն յառաջխաղալ: Հեռագրի մը համաձայն, միայն 50 քիլոմեթր հեռու են Վալենսիա - յէն, որ մայրաքաղաքն է հանրապետական կառավարութեան: Ուրիշ ճակատներու վրայ եւս կռիւը կը շարունակուի մոլեգնօրէն:

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԵՐՈՒՍԱղԷՄԷն կը հեռագրեն թէ պաշարման վիճակը սաստկացաւ, իբրեւ հետեւանք նոր ընդհարումներու: Ինը Արաբներ սպանուեցան Պաղեստինի զանազան մասերուն մէջ, վերջին 24 ժամուան ընթացքին: Պաշարման վիճակ հրատարակուած է նաեւ Եաֆայի եւ Թէլ Ավիվի մէջեւ: Հաղորդակցութիւնները խզուած են երկու քաղաքներուն միջեւ որոնք այնքան մօտ են իրարու: Անցեալ չաբթու հրեայ երիտասարդ մը կախուած ըլլալով, Հրեաները կ'ուզեն վրէժ լուծել:

30.000 — 40.000 ՀՈԳԻ ԳՆԴԱԿԱՀԱՐՈՒԱԾ ԵՆ ի. Միութեան մէջ, ծանօթ մաքրագործումներու հետեւանքով, եթէ հաւատանք ուուս փախստական զօրավարին՝ Լուչկովի, որ Ծայր. Արեւելքի Զեկային վարիչն էր եւ ճափոն կը դտնուի այժմ: Զօրավարը կ'ըսէ թէ Սթալին պատերազմ կը պատրաստէ ճափոնի դէմ, թէ 400.000 կարմիր զինուորներ կը դտնուին Ծայր. Արեւելքի մէջ, 2000 օդանաւերով եւ 90 սուզանաւերով եւն.:

ՀԱՅԻ ՏԱԳՆԱՊԸ փարատած է Իտալիոյ մէջ, համաձայն Մուսոլինիի յայտարարութեան: Առաջնորդը դաշտերն երթալով ինք ալ ցորեն քաղեց եւ այս առթիւ ճառ մը խօսեցաւ:

ԱՃՆ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԸ որոնց ծառայութեան շրջանը կը լրանայ 1938 հոկտ. 15ին, կանուխ պիտի արձակուին այս տարի.— օգոստոս 18ին, եթէ բերդի մէջ կը ծառայեն, եւ հոկտեմբեր 1ին՝ եթէ ներքին զօրագունդերուն մէջ կը դտնուին:

ՄԱՐՍԷԼԻ մէջ բեռնակառք մը հանրակառքին ընդհարեցաւ երկու - չաբթի օր: երեք հոգի մեռան, եօթը հոգի վիրաւորուեցան: Բեռնակառքին վարիչը փախաւ:

ՄԻՒԶԱՆ ԼԱՆԿԼԷն, թէնիսի ախոյեանը, որ համաշխարհային համբաւ կը վայելէր, մեռաւ առջի օր: Թերթերը սիւնակներ կը նուիրեն իր յիշատակին: 39 տարեկան էր եւ 12 տարեկանէն թէնիսի նուիրուած:

ՍՈՓՈՒՆԵՐՈՒ ՏՕՆը մեծ խանդավառութեամբ կատարուեցաւ Փրակայի մէջ: Կը մասնակցէին 30.000 մարզիկներ եւ 17.000 աղջիկներ:

«ՅԱՌԱՋ»Ի ՅՈՒԼԻՍ ՔԻ ԹԻՒը սպառած ըլլալով, կը խնդրուի մեր գործակալներէն (միայն գործակալներէն) մեզի դրկել իրենց ա-ւելցած թիւերը, եթէ ունին:

Ֆ. Կ. ԽԱՉԻ ՓԱՐԻԶԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ ՏԱՐԵԿԱՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍԸ

17 Յուլիս, կիրակի առաւօտեան ժամը 9ին գիշերուան 11.30

ՐՈՊԷՆՍՈՆԻ ՄԷՋ, *Grand Arbre, Maison Fiquet*

Գեղարուեստական հաճելի անակնկալներ, ընտիր նուագախումբ, Անձրեւի պարագային դոց սրահ: Ճոխ պիւֆէ՝ պատրաստուած խնայու-հիներու կողմէ. Մուտք 5 ֆրանք:

ՀՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆ ՄԻՋՈՑՆԵՐ.— Denfertէն առնել մեթրոյի դէպի Ռոպէնսոն տանող գիծը, եւ կամ բարձ տ'Օրլէանէն օթօպիւս Թիւ 128:

ՓԱՐԻԶԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՄԱԿՈՒՄԲԻ

Յառաջիկայ դասախօսութիւնը տեղի կ'ունենայ 6 Յուլիս, Ջորեքշաբթի երեկոյեան ժամը սին, 8 Rիւ Պոսկէ:

ԿԸ ԽՕՍԻ Պ. *Ս. ՎՐԱՑԵԱՆ*

Նիւթ՝ «Հայաստանի Հանրապետութեան ստեղծումը»:

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ

ՄԱԳԱՂԱԹՆԵՐ

(Քերթուածներ)

ԱՇԱՐՈՆ ՏԱՏՈՒՐԵԱՆ



Փառատիպ հատոր մը, **300** էջ, Տպուած սակաւաթիւ օրինակներով

Գլուխներ այս հայկական ֆերթո - դագիրքէն.—

ՅԱՑԳԱՒԱՂԱՒ
ՍԻՐԸ ՓՈՒՇԷ ՊՍԱԿՈՎ
ԽԵՂՃ ՄԱՐԴԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ
ԳԵՀԵՆԱԿԱՆՔ
ԲԱՆԱՍՏԵՂԾԸ ԿԱՄՏՈՒԱԾԱՆԱՑ
ՍԻՐՏՍ ԿԱՐՄԻՐ ՎԱՐԴԵՐՈՎ
ԻՆՔՆԱՀՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ
ԳԻՒՂԻ ՍԻՒՐԲԵՐ՝ ԵԱՐՈՂ ԵՐԳԵՐ

Գին 40 ֆրանք

Դիմել հեղինակին,
17, Rue Damesme, PARIS

Հ. Յ. Դ.

Փառիզ

ՇԱՎԻԼԻ «Արդուճեան» խումբի ժողովը *10* Յուլիս, կիրակի երեկոյ ժամը 9ին, սովորական հաւաքատեղին:

Գաւառ

ԼԱՍԻՒՆԱՑԻ «Խաչակ» խումբի ընդհ. ժողովը 7 Յուլիս, Հինգշաբթի, երեկոյ ժամը 8 *30*ին սովորական հաւաքատեղին: Բոլոր ընկերներու ներկայութիւնը անհրաժեշտ է:

ԼԻՈՆի «Մուսա-Լեռ» խումբի ընդհ. ժողովը 8 Յուլիս, Ուրբաթ, երեկոյեան ժամը 9ին, 15 Quai Victor Augagneur սրճարանի ներքին սրահը:

Մեծ դաշտահանդէս

ԽԱՆԱՍՈՐԻ ԱՐՇԱՒԱՆՔԻ 41ՐԴ. ՏԱՌԵԴԱՐՁԻ ԱՌԹԻԻ

Կազմակերպուած Հ. Յ. Դաշնակցութեան Սարսէլի «Հբայր» եւ Ասնուվիլի «Ռազմիկ» խումբերու կողմէ, հովանաւորութեամբ Հ. Յ. Դ. «Վարդան» ճեմակոմիտէի: 10 Յուլիս, կիրակի, առաւօտէն մինչեւ երեկոյ, Օ-ՏԻ-ՌՈՒԻՆԻ ետեւ, Օ-ՓՈՆ-ԻՈՒՆՏԷԼի ճառաստանին մէջ:

Բանախօսութիւն, երգ, արտասանութիւն եւ դաշտային խաղեր: Պիտի նուագէ Թառիստ ԳԱՐԵԳԻՆ եւ փոքրիկ Ռեժինա սիրուն պարէ գայլական եւ կովկասեան պարեր: Ճոխ եւ դիւրամատչելի պիւֆէ, համբէք:

Մուտքը ազատ է.

Անձրեւի պարագային կը յետաձգուի

Մեծ դաշտահանդէս

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ՍԻՓԱՆ-ԿՈՄԻՏԱՍ ԵՐԳԱՍԻՈՒՄԲԻՆ ԿՈՂՄԷ

10 Յուլիս, կիրակի առաւօտ ժամը 10էն մինչեւ կէս գիշեր

ՌՈՊՆՍՈՆԻ ՄԷՋ

Ճաշակելները Նուագախումբ, Պիւֆէ

Մուտք 5 ֆրանք

Ուսելիքը կարելի է միասին բերել

ԴԱՇՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

Մարսէյլի Հայ երաժշտական Միութեան դաշտագնացութիւնը 10 Յուլիս, կիրակի, «ԱՀԵ ՄԲԸ»ի ծովահայեաց անտառին մէջ:

Արձանագրութեանց համար դիմել՝ Թէլեանի, 8 a Rue Francis de Pressensé, Մարսէյլ, ամէնաուշը մինչեւ 7 Յուլիս, Հինգշաբթի երեկոյեան ժամը 7ը: Երթուդարձ շոգեկառքով 7.50 ֆրանք:

Դաշտահանդէս

ԴՊՐՈՑԱՍԷՐԻ ՍԱՆՈՒՑ ՄԻՈՒԹԵԱՆ

24 Յուլիս, կիրակի, ժամը 3ին, վարժարանին պարտէզը

1, Bld. du Nord, le Raincy

Կը ներկայացուի ԱՆՈՒՇ օփերէթէն պատկերներ ղեկավարութեամբ ԳՄԲԷԹԵԱՆի: LES CHAUSSONS DE LA DUCHESSE ANNE (օփէրէթ), հայկական պարեր, ծաղիկներու պալէ, զանազան պատկերներ, մարզական խաղեր:

Ճաշ եւ պար մինչեւ մաս. 10: Ճոխ պիւֆէ ժատչելի գիներով, (կը խնդրուի միասին ուտելիք չբերել): Մուտք 5 ֆրանք:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ.— Opéraէն կամ Jaurèsէն առնել օթօպիւս 21A եւ իջնել Raincy-Pavillons, Gare de l'Estէն շոգեկառք՝ direction Gargan, իջնել Raincy-Pavillons:

ԱՐՇԱԿ ՋՕՊԱՆԵԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԴՈՐՁՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՑԻՍՆԱՄԵԱՑ ԾՈԲԵԼԵԱՆ

9 Յուլիս, Շաբաթ երեկոյ ժամը 9ին, Գրէական Մարսէյլեի սրահին մէջ, ներկայութեամբ յոբելեարին եւ հովանաւորութեամբ երիտ. յարաբերութեանց հոգեւոր հովիւներուն:

ԿԸ ՆԱԽԱԳԱՀԷ Պ. ՏԻՐԱՆ ԹԷՔԷԵԱՆ

Բանախօսութիւններ եւ գեղարուեստական բաժին:

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Է

«Մատենաշար Ռազմիկ»ի թիւ 2

Հրատարակութիւն Հայ կամ. եւ Մարտիկներու Միութեան

ԼԵՌՆԱՑԻՆ ՊԱՏԵՐԻԶՄԸ

Գրեց՝ ՀՐԱՆՏ ՓԱՍՏՐՄԱՃԵԱՆ

Այս գիտական խիստ արժէքաւոր ուսումնասիրութիւնը գործն է Հրանտ Փաստրմաճեանի, որ վերջերս անգլիերէն լեզուով լոյս տեսած է Վաշինկթոնի մէջ: Մեր համակրելի աշխատակիցը չատ պարզ եւ հասկնալի լեզուով կ'ուսումնասիրէ լեռնային զանազան ռազմաբեմերը — մասնաւորաբար Հայկական — տալով անոնց չուրջ կատարուած զանազան նշանակալից դէպքեր, թուելով պատճառներ, թիւեր ու դէմքեր:

Հեղինակը սքանչելիօրէն կը պարզաբանէ լեռնային հողամասերու իւրայատուկ կազմութիւնը ու անոնց դերը ռազմական գործողութիւններու վրայ: Կը խօսի զանազան տեսակի կռիւներու մասին: Կը պարզէ լեռնային երկիրներու պաշտպանութեան եւ փոխադրութեանց դժուարութիւնները, լեռնային յատուկ զօրամասերու կազմակերպութիւնը, քարերու գործը եւայլն:

Հայերէնի թարգմանուած այս գործը պիտի հետաքրքրէ անխտիր մեր նախկին ռազմիկները, նորակոչ զինուորներ, եւ առհասարակ ամբողջ հասարակութիւնը:

Գիրքը 100 էջէ աւելի, գեղեցիկ տպագրութեամբ եւ հազուագիւտ նկարներով զարդարուած է:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԿԵՍԱՐԻՈՑ

Գրեց՝ ԱՐՇԱԿ ԱԼՊՈՑԱՃԵԱՆ

Երկու սուսեր հատորներով Լ/Դ+2479 էջով, գեղազարդուած 687 պատկերներով եւ վիմատիպ 16 բազմագոյն պատմական քարտէսներով պատկառելի գործ մը, որ ոչ միայն կեսարիոյ եւ Շրջակայից պատմութիւնն է այլ՝ պատմութիւնը Փոքր Ասիոյ հայ գաղութներուն: Կը պարունակէ համայնադիտական **ծանօթութիւններ**, տեղագրական, վիճակագրական, ազգագրական, մատենագրական եւ կենսագրական ամենաճոխ տեղեկութիւններ:

Նուազագոյն գինը 25 շիլին: Փարիզի մէջ կը ծախուի Պ. Սարգիս Սաղրեանի քով: 13 բիս Սէն Լազար, Փարիզ (9):

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

(ՀԻՆ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՄԲ)

Նոր մատենաշարին Ա. հատորը

Հայաստանի ամէնէն տաղանդաւոր արձակագիրը, Նահատակ

ԱԿՍԷԼ ԲԱԿՈՒՆՑԻ

ՇԻՐԱՆԻ ՓՈՂԸ, ԽՈՆԱՐՀ ԱՂՋԻԿԸ, ՍԵՒ ՑԵԼԵՐԻ ՍԵՐՄԱՆՑՆԸ եւ ՍՊԻՏԱԿ ԶԻՆ:

Հետզհետէ լոյս պիտի տեսնեն ուրիշ հատորներ ԳՈՒՐԳԷՆ ՄԱՀԵՐԻԷՆ, ԵՂԻՇԷ ԶԱՐԵՆՑԷՆ, ՎԱՂԱՐՇԱԿ ՆՈՐԵՆՑԷՆ, ԱՒԱԶԱՆԷՆ ՎԱՀԱՆ ԹՈՓՈՒԶԵՆՑԷՆ եւ ուրիշներէ:

Խմբագրական եւ հրատարակչական մարթինը մէկ նպատակ կը հետապնդէ.— գազութներուն ծանօթացնել Հայաստանի պատկանութիւնը լոյս ընծայելով ժողովրդական ժատչելի պինով գրքոյկներու այս շարքը:

Մատչելի տակ է մատենաշարին Բ. հատորը՝ ՊԱՏՄԱՒԱՆՔՆԵՐ՝ Մտեփան Զօբեանէ:

Վաճառման կեդրոնատեղին է ԳՐԱՏՈՒՆ ՀՐԱՆՏ-ԹԱՄՈՒԼԻ 51, Rue Monsieur le Prince, Paris (6) chèque postal, Paris 1278—35. հեռաձայն Danton 88—65:

Մեծաքանակ գնողներու մասնաւոր զեղչ:

Առաջին հատորին գինն է 7.50 ֆր., արտասահման՝ 10 լիւէս շի-լին կամ 40 սէնթ. Ապատրանքները՝ կանխիկ դրամով:

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ (սահմանափակ թիւերով)

ՅԱԿՈԲ ՀԻՍԱՅԵԱՆԻ
ԴԻՒՑԱԶՆՈՒԿԱՆ ՀՍՏՈՐԴԻՆ
(Բնական լուսանկարներով)
ՄԿՐՏԻՉ ԵՕԹՆԵՂԲԱՅՐԵԱՆ
(Ուրճլայի Հելիոսամարտի զեկավար)
Գին՝ Տէրսիա 8 ֆրանք, Մաբիա 6 ֆրանք, Ամերիկա 50 սէնթ.
Բոլոր ապատրանքները կանխիկ
Ստանալու համար դիմել H. Issayan, 38 Rue du Mésnil. Asnières (Seine) France.

ԵՓՐԱՏ ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲ

Ղեկավար Տ. ՕՆՈՍԵԱՆ

15, Rue du Pourtour, Clamart, Seine — Tél. Observatoire 13 - 45

Հեռաձայնել երեկոները 8էն վերջ:

Հայկական, եւրոպական եւ կովկասեան եղանակներ: Միակ նուագախումբը հաճելի դարձնելու համար ձեր հանգէսները, հարսնիքները եւ հաւաքոյթները:

Հ. ԶԱՐԴԱՐԵԱՆ

ՎԻՐԱՒՈՐՈՑ - ԱՏԱՄՆԱՒՈՐՈՑ

44 Rue Dunkerque (ՄԷՏՐՈ ԿԱՔ ՏԻՒ ՆՈՒ)

Tél. Trudaine 42—69

Կ'ընդունի առէն օր ժամը 14—20:

Աւտօտներդ ժամագրութեամբ:



Alimentation "TRÉVISE"

Իր անմահական «**Moka**» սուրճովը

Café "HAREM"

5 ԱՒ. ՀՈՒՐԻՒՐ ԲԱՑԱՒԻԿ ՉԵՂՔ

Ճոխ մթերանոց արեւելեան եւ արեւմտեան ընտիր ընդեղէններու,

— Որ՝ ձեր արձակուրդի օրերուն խակ չի մոռնար ձեզ, գոհացնելով ձեր բոլոր փափաքները, որ աստղի տակն ալ որ դտնուիք...

ՄԵԾԱՔԱՆԱԿ ԵՒ ՓՈՔՐԱՔԱՆԱԿ

Livraison à domicile

Tél. Taitbout 40—63

30, Rue de Trévise Paris (9) Metro Cadet



ՐԱՓԸ ՏԻԿԶ

Ջուտ խագոզէ քաշուած եւ անիսոնով պատրաստուած հայկական օղին է *ՐԱՓԸ ՏԻԿԶը*, Ջգուշացէք արուեստական օղիներէ որ ձեր ստամոքսը կ'այլէ եւ գլուխերնիը ջուր կը խմցնէ եւ կը վնասէ ձեր առողջութեան: Խմեցէք միայն *ՐԱՓԸ ՏԻԿԶը* որուն անարատ, կազդուրիչ եւ ախորժաքեր ըլլալը հաստատուած է:

Dalakupeian 24 Rue St. Lambert et 8 Rue Suffres, Marseille:

Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆԻ ԻՐԱՒԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

28 Avenue Victor Hugo, Vanves (Seine)

(Վիսէ Մէշլէի հրապարակին վերեւ)

Կ'ընդունի Երկուշաբթի, Չորեքշաբթի եւ Ուրբաթ օրերը ժամը 10—12 եւ երեկոները 4—7, եւ մասնաւոր ժամադրութեամբ:

ԿԸ ՓՆՏՈՒԻ

— Մարաշցի Վարդան Գալաճեան կը փնտռէ իր եղբայրը Հաճի Յարութիւն Գալաճեան եւ քեռայրը Յով-հաննէս Տօնապետեան Կէմէրէկցի, որոնք 8 տարի առաջ կը գտնուէին Ֆրանսա, Վիէն: Տեղեկացնել Վարդան Գալաճեանի Mikropolis, Drama, (Grèce):

ԳԱՑԷՔ ՏԵՍԷՔ ԼԻՈՆի ՄԷՋ

Cinéma REXY

Cours Lafayette. angle Garibaldi

Le Gérant : H. STEPHAN

Imprimerie A. DER (AGOPIAN)

17, Rue Damesme — PARIS (13)

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

HAKATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
17, Rue Damesme, PARIS (13e)

Téléphone : Glacière 15 - 70
Chèque Postal Paris 1678 - 63
(ԵՐԹԵՒԵԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ — ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԵՒԱՄՍԵԱՅ

Ֆրանսա եւ Գաղութներ	150 ֆրանք	75 ֆրանք	40 ֆր.
Անգլիա եւ Իռլանտա	265 ֆրանք	140 ֆրանք	
Ուրիշ երկիրներ	215 ֆրանք	110 ֆրանք	

ՀԻՆԳՇԱԲԹԻ 7 ՅՈՒԼԻՍ JEUDI 7 JUILLET 1938

ԺԹ ՏԱՐԻ — 14e Année No. 3776

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄՐՈՒԱՒԵԱՆ

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ԱՒԱՆՑՔ ԱՒԱՆՑՔԻ ԴԷՄ

Հաւատարիմ մահկանացուներու համար անթափանցելի կը մնայ այն գաղանիքը, որ մէկ օրէն միւսը փոխել տուաւ հոգատար իշխանութեան դիրքը՝ Ալեքսանդրէթի հարցին մէջ :

*Այս առթիւ բերնէ բերան եւ թերթէ թերթ շրջան կ'ընեն զարմանազան պատմութիւններ ու մեկնութիւններ : Եւ զարմացողները միայն օտարազգիները չեն, այլեւ **Ֆրանսացիները**, որոնք պատահանատու պաշտօններ վարած են տարիներով :*

*Օրինակ, Ձօր. Պէյման, Կիլիկիոյ երբեմնի մարզպանը, դառնօրէն կը տրտնջար «Լա Ֆրանս Միլիթէռ»ի մէջ, յունիս 15ին, երբ տակաւին չէր տարազրուած **Ֆրանքեւթուրք** համաձայնութիւնը :*

— « 1919էն իվեր, Թուրքիոյ հետ մեր յարաբերութիւները ցաւալի ձեռնթափութիւններ արձանագրած են, առանց որ եւ է փոխարինութեան :

... Եթէ իրապէս Թուրքիա կ'ուզէ իր ուղղութիւնը փոխել, մեզի չի մնար երբեմ ալ որեւէ հատուցում ընել : 1921էն ի վեր, — կ'ըսէ պարպտումի ազդակի տարին — մենք միշտ տուած ենք, տեղի տուած ենք, յանձնած ենք, ենթարկուած ենք, առանց երբեմ բան մը ստանալու : Եւ այն յուսահատները զոր այս պահուն Թուրքմա - մուլը կը շռայլէ Ֆրանսայի, «այս կեղծաւոր ազգին, որուն հետ հիթլերի յեղուզ պէտք խօսիլ», — կը ցուցնեն թէ պէտք է զգոյշ ըլլալ եւ ոչ թէ մայթել մսավաճառին խոստացուած ոչխարներու պէս» :

Մենք առիթ ունեցանք ներկայացնելու, նաեւ, մէկ - երկու թերթերու եւ մասնաւորապէս «Իւմանիթէ»ի քննադատութիւնները՝ այս ձեռնթափութեանը առթիւ :

Արդ, քաղաքական - դիւանագիտական չրջանակներու մէջ ի՞նչպէս կը բացատրեն հոգատար իշխանութեան վերջին նահանջը, այնքան անսպասելի եւ արկածալի :

Ամերիկեան բատպաեղական հեռագիրներ թերթ մը, « Նիւ Եորք Թայմզ», կը պատմէր յունիս 15ին, Պէյրութի թղթակցին բերնով :

— « Անթափութքի գործը դիւրացնող իրողութիւնն այն է որ Ֆրանսական ընդհ. սպայակոյտը չի հակառակիր Ալեքսանդրէթի Թուրքիոյ կցումին : Ֆրանսական զինուորապետութիւնը Քրմա - կան բարեկամութեան նուէր է ամէն զնով :

Այս գրդռը ի վիճակի է յայտնելու գաղտնի համաձայնութիւն մը որ գոյացած է Ֆրանսայի զինուրական իշխանութիւններուն եւ Թուրք կառավարութեան միջեւ : Անցեալ փետրուարին Ֆրանսայի Արեւելքի ուժերու հրամանատարը Ընկիւրի գնաց եւ Թուր - քերուն հետ գոյացուց համաձայնութիւն մը, որ միջազգային բախտումի մը պարագային թուրք զինուորները գրաւեն Ալեքսանդրէթի ամբողջ շրջանը : Առդ փոխարէն Թուրքիան չէզոք պիտի մնայ եւ Տարտանէլէն ազատ անցք պիտի **տայ Ֆրանսական** եւ բրիտա - նական պատերազմական նաւերուն :

Թէեւ տակաւին եւրոպական **պատերամ չկայ, բայց** նախագահ **Աթաթիւրք կ'ուզէ** որոշ թիւով **զինուոր ունենալ Ալեքսանդրէթի մէջ »** :

***Թղթակիցը** կ'աւելցնէ Թէ Ֆրանսայի արտաքին գործերու պաշտօնատունն ալ «անձկութեամբ կ'ուզէ որ Թուրքերը հաճե - ցնէ» : Այս առթիւ պարզելով ընտրական արձանագրութեանց տարբեր ոչ - Թուրքերու վրայ կատարուած ճնշումները, կ'եզրակացնէ :*

— « Պէտք չէ թշնամացնել Թուրքերը», — **այս է Ֆրանսայի** ներկայ **Քաղաքականութիւնը, որուն ուժ կուտայ Մեծն Բրիտա - նիա »** :

***Օրուան դէպքերն** ալ ճիշդ այդ պարագան է որ կ'ապացուցա - նեն, մանուածապատ եւ զիկ - զակ դասաւորումներով :*

Ճիշդ այն պահուն երբ կը ստորագրուէին Անթիոքի եւ Էնկիւրիի համաձայնութիւնները, Ֆրանքեւթուրք զինուորական եւ քաղաքական գործակցութեան մասին, Անգլիոյ երեսփ. ժողովը երկրորդ ընթերցումով կը վաւերացնէր Թուրքիոյ չնորհուած վարկերուն օրինագիծը (4 յուլիս) :

Այս առթիւ վարչապետական ճառ մը խօսեցաւ երմսական նախարարը, Սըր Ջօն Սայմըն, չեչտելով Թէ 16 միլիոնէն վեց միլիոնը պիտի յատկացուի Թուրքիոյ վերազինման :

— « Անգլիոյ եւ Թուրքիոյ բարեկամութիւնը դրուած է ամուր հիման մը վրայ. երկու երկիրներն ալ նոյն գերագոյն նպատակն ունին, — պահպանել խաղաղութիւնը : Այս բարեկամութիւնը ուղղուած չէ ուրիշ որ եւ է ազգի դէմ » :

Նախարարին ձայնակցեցան ոչ միայն իր պահպանողական կուսակիցները, այլեւ ընկերվարականները, որոնց վարիչը հետեւեալ ուշագրաւ խօսքերն արտասանեց .

— « Ընկիւրի չունիմ. խիղճ բան է օգնել որ Թուրքիա ապառազինուի : Մենք պէտք ունինք սպառազէն եւ բարեկամ Թուրքիայի մը՝ արեւելեան Միջերկրականի մէջ» :

Ուրիշ ընկերվարական մը հեղնեց այս յայտարարութիւնը, դիտել տալով Թէ 1914ին ալ Մեծն Բրիտանիան էր որ սպառազինեց Թուրքիան... Բայց եւ այնպէս, ժողովը իր ջերմագին հաւանութիւնը յայտնեց դաշինքին բարեկամութեան, բազմանք յայտնելով որ միեւնոյն դիւրութիւնները ընծայուին Պալքանեան պետութիւններուն, ամուր ցանց մը կազմելու համար :

Որո՞ւ դէմ : Անուղղայ Գերմանիոյ եւ Իտալիոյ : Ուրեմն ա - ռանցք առանցքի դէմ, իրրեւ լծառան ունենալով Անգլիոյ, Ֆրանսայի եւ Թուրքիոյ միջեւ կնքուած բարեկամութիւնը, եւ Ցու - դին տալով մնացեալը ...

Շ.

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ԹՐՔԱԿԱՆ ՋՕՐՔԸ ՍԱՆՃԱՔ ՄՏԱԻ ՄԵԾ ՀԱՆԴԻ ԱԻՈՐՈՒԹԵԱՄԲ

Ֆրանսական զօրքն ալ 2500ի կը բարձրանայ

Անտիոքէն կը հեռագրեն .— *Թրքական զօրքը այս առտու (երեքշաբթի) ժամը 5.30ին անցաւ Ալեքսանդրէթի Սանճաքին սահմանագլուխը, Համիլարի կայանէն եւ ներս մտաւ : Թրքական դունդը, որուն առջեւէն հեծելագունդ մը կ'երթար, Գարասու գետն ի վեր բարձրացաւ, Գըզլխանի եւ Այտինքի ուղղութեամբ : Թուրք զնդապետ Ֆէվզի Մաճուկ, որ Թրքական հրամանատարութիւնը պիտի ներկայացնէ Ֆրանսական հրամանատարութեան մօտ, զօրքը դիմաւորելու գնաց ընկերակցութեամբ Անտիոքի Թրքական հիւպատոսին, մինչեւ Ագիէփէ, վերջին գիւղը Թուրքիոյ Ճամբուն վրայ, ուր գնդ. Քոլէ՝ մարզպանին պատուիրակը, նոյնպէս գացած էր դիմաւորելու ընդհ. հրամանատարը :*

Թրքական դունդը հաւանաբար այսօր պիտի տեղաւորուի այդ գիւղին մէջ. վաղը պիտի մտնէ Գըզլխան, յետոյ պիտի երթայ Անտիոք : Ուրիշ վաշտ մը, որ պիտի հասնի այս առտու Տաւրոսի Ճամբով, պիտի տեղաւորուի Ալեքսանդրէթի մէջ :

Թուրք ժողովուրդը ջերմ ընդունելութեամբ ողջունեց զօրքը :

Ալեքսանդրէթէն կը հեռագրեն յուլիս 5 թուականով .—

Այսօր ժամը 12.15ին Թրքական բանակէն երկրորդ զօրադունդ մը հանդիսաւորապէս մուտք գործեց քաղաքին մէջ, որ զարդարուած էր Ֆրանսական եւ բազմաթիւ Թրքական դրօշներով (այժմ Թրքականը պիտի բոնէ Սանճաքի դրօշին տեղը) : Զօրքը, որ կը բաղկանար մէկ վաշտ հետեւակազօրքէ, մէկ հրետանիէ եւ նիզակաւորներու դասակէ մը, պիտի տեղաւորուի քաղաքին մէկ, իսկ միւս զօրամասերը, որոնք այս առտու հասան Գարասուի Ճամբով, պիտի բաժնուին Անտիոքի, Գըզլխանի, Պէյլանի եւ Ագիէփէի մէջ : Ճամբան կտրելով հրաձիգ արեւի մը տակ, Թուրք զօրքը քաղաքին փողոցները մտաւ առաջնորդութեամբ քաղաքապետական նուագախումբին, մինչ բազմութիւնը կը ծափահարէր : Ցետոյ իրենք տեղերը գացին առանց միջադէպի :

Անտիոքէն կը հեռագրեն յուլիս 5 թուականով .—

Թուրք զօրքին Սանճաք մուտքով այս առտու սկսաւ Անտիոքի զինուորական համաձայնութեան գործադրութիւնը : Երկու բանակներուն գործակցութիւնը այսուհետեւ պիտի ապահովէ Սանճաքին հողային ամբողջութիւնը եւ քաղաքական իրաւակարգը :

Նոր կարգադրութեան հաստատումը արդէն իսկ Թուրքացում յառաջ բերած է քաղաքական կացութեան եւ դանազան հատարակութեանց թաղուն թշնամութեան մէջեւ : Ֆրանքեւթուրք զինուրական գործակցութիւնը զգալի ապահովութիւն ներշնչեց մանաւանդ հայկական շրջանակներուն որոնք վտանգուած կը համարէին իրենց շահերը :

Ժողովուրդին հոգեկան վիճակի բարւոքումը հետեւանք է նաեւ Ֆրանսական զօրքին յաւելման : Սանճաքին մէջ եղած երկու վաշտ մարոքեան արձակդէններուն եւ երկու հեծելագունդներուն վրայ չուտով պիտի աւելնան ուրիշ երկու Սենեգալեան եւ Թունուզական արձակադէններու վաշտեր, որոնք պիտի տեղաւորուին Տաֆնէի եւ Ռիհանիյէի մէջ. հրետանի մըն ալ պիտի հաստատուի Անտիոքի մէջ : Այս զինուորներուն թիւը պիտի չգանայ երեք օրէն, հասնելով մօտ 2500ի : Սենեգալեան վաշտ մը արդէն տեղաւորուած է հրամանատարութեամբ հազարապետ Մուրէյի :

Բնակիչներուն ցոյց տուած գործակցութեան չնորհիւ, հոգատար իշխանութիւնը կը խորհի ներում չնորհել քաղաքական բանտարկեալներուն : Այս կէսօրին հրամանատար Քոլէ վերցուց պաշարման վիճակը :

ՍՊԱՆԻՈՑ ՕՏԱՐ ԿԱՑՈՒԹԻՒՆԵՐՈՒ ԽՆԴԻՐԸ

Վերջնապէս ընդունուեցաւ անգլիական ծրագիրը

Ոչ-միջամտութեան յանձնաժողովին երեքշաբթի օրուան նիստին մէջ, 27 պետութիւններ հաւանութիւն յայտնեցին անգլիական ծրագրին, օտար կամաւորներու յետս կոչման եւ պատերազմական իրաւունքներու մասին : Ծրագիրը երկի իսկ հաղորդուեցաւ Սպանիոյ հանրապետական եւ ազգայնական կառավարութեանց, Անգլիոյ միջոցաւ : Անհրաժեշտ է այդ երկու կառավարութեանց գործակցութիւնը, դիւրացնելու համար օտար կամաւորներու ցուցակագրութիւնը եւ փոխադրութիւնը : Վերազարթի ծախքը կը հաշուէն 2.500.000 անգլ. ոսկի, որ գլխաւորաբար կը ծանրանայ Անգլիոյ, Ֆրանսայի, Գերմանիոյ, Իտալիոյ եւ Թերեւս Ա. Միութեան վրայ : Իրրեւ կանխիկ դրամ, առաջին չորս պետութիւնները անմիջապէս 12.500ական ոսկի յանձնեցին, համապատասխան 50.000 ոսկի, որպէսզի յանձնաժողովը կարենայ գործի ձեռնարկել անմիջապէս :

Անգլիական ծրագրին համաձայն, զօր. Ֆրանքօ պատերազմիկ պիտի համարուի, երբ առնուազն 10.000 օտար կամաւորներ արձակած ըլլայ : Նոյնքան ալ պիտի արձակէ հանրապետական կառավարութիւնը :

ՎԱԼԱՆՍԻ Հ. Յ. Դ. ԿՈՄԻՏԷԻ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍԸ որ տեղի պիտի ունենար Յուլիս 3ին, անձրեւին պատճառաւ ՅԵՏԱՁԳՈՒՄՈՎ է Յուլիս 10ին։

Մեծ դաշտահանդէս

ԽԱՆԱՍՈՐԻ ԱՐՇԱԿԱՆՔԻ 41ՐԴ. ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՒ

կազմակերպուած Հ. Յ. Դաշնակցութեան Սարսէլի «Հրայր» եւ Ազնուվիլի «Ռամկիկ» խումբերու կողմէ, հովանաւորութեամբ Հ. Յ. Դ. «Վարդան» ենթակոմիտէի։ 10 Յուլիս կիրակի, առաւօտէն մինչեւ երեկոյ, Օ.-Տիւ-Ռոնեանի եւ Օ.-Փոն-Ի-Ռոնէտիլի ճառատեղին մէջ։

Բանախօսութիւն, երգ, արտասանութիւն եւ գաշտային խաղեր։ Պիտի հնչակ թառիատ ԳԱԼԵԳԻՆ եւ փոքրիկ Ռէժինա պիտի պարէ հայկական եւ կովկասեան պարեր։ Ճոխ եւ դիւրամատչելի պիւֆէ, խմիչք։

Մուտքը ազատ է։

Անձրեւի պարագային կը յետաձգուի։

Դաշտահանդէս

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ Հ. Յ. Դ. ԻՍԻԻ «ԶԱՒԱՐԵԱՆ» ԿՈՄԻՏԷԻ ԿՈՂՄԷ

10 Յուլիս, կիրակի առաւօտէն մինչեւ երեկոյ

Մէօտօն լը պուզ աղքիւրին մօտ (Թաւիր Վէյի կից)

Բանախօսութիւն, արտասանութիւն, երգ եւ նուագ։

Անձրեւի պարագային կը յետաձգուի։

Պարահանդէս

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ՓԱՐԻԶԻ ՀԱՑ ԵՐԻՏ. ՄԻՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ

9 Յուլիս, Շաբաթ, ժամը 9էն մինչեւ կէս գիշեր իր կեդրոնատեղին 8, Rue Bossuet, Paris

SAUTERIE ORCHESTRE

ՏԱՐԵԿԱՆ ՄԵԾ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ՍԻՓԱՆ-ԿՈՄԻՏԱՍ ԵՐԳԱԽՈՒՄԲԻՆ ԿՈՂՄԷ

10 Յուլիս, կիրակի առաւօտ ժամը 10էն մինչեւ կէս գիշեր

ՌՈՊԷՆՍՈՆԻ ՄԷՋ, GRAND ARBRE, Maison FIQUET

Գեղարուեստական բաժին, զանազան խաղեր եւ անակնկալներ, ընտիր նուագախումբ թանկօ եւ ժազ, ճոխ պիւֆէ դիւրամատչելի գիներով։

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ.— Մեթրօն փոխել Denfer Rochereau եւ առնել Robinsonի գիծը։

Մուտք 5 ֆրանք

Ուտելիքը կարելի է միասին բերել

Դաշտահանդէս

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ Հ. Յ. Դ. ՍԱՆՈՒՑ ՄԻՈՒԹԵԱՆ

24 Յուլիս, կիրակի, ժամը 3ին, վարժարանին պարտէզը

1, Bld. du Nord, le Raincy

Կը ներկայացուի ՁՆՈՒՇ օփերէթէն պատկերներ զեկավարութեամբ ԳՄԲԼԷԹԵԱՆԻ։ LES CHAUSSONS DE LA DUCHESSE ANNE *(օփէրէթ), հայկական պարեր, ծաղիկներու պալէ, զանազան պատկերներ, մարզական խաղեր։*

Ճաշ եւ պար մինչեւ մաչ 10 Ճոխ պիւֆէ ժամչելի գիներով, (կը խնդրուի միասին ուտելիք չբերել)։ Մուտք 5 ֆրանք։

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ.— Opéraէն կամ Jaurèsէն առնել օթոպիւս 21A եւ իջնել Raincy-Pavillons, Gare de l'Estէն շոգեկառք՝ direction Gargan, իջնել Raincy-Pavillons։

ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՅԻՍՆԱՄԵԱՑ ՅՈՒԲԻԼԵԱՆ

9 Յուլիս, Շաբաթ երեկոյ ժամը 9ին, Պրէսան Մարսէյեզի սրահին մէջ, ներկայութեամբ յօդելեարին եւ հովանաւորութեամբ երեք յարանուանութեանց հոգեւոր հովիւներուն։

ԿԸ ԵԱԽԱԳԱՀԷ Պ. ՏԻՐԱՆ ԹԷՔԷԵԱՆ

Բանախօսութիւններ եւ գեղարուեստական բաժին։

ՄԱԳԱՂԱԹՆԵՐ

(Վերջաւածներ)

ԱՇԱՐՈՆ ՏԱՏՈՒՐԵԱՆ



Փառատիպ հատոր մը, **300** էջ, Տպուած սակաւաթիւ օրինակներով

Գլուխներ այս հատորիս կազմին.—

ՅԱՑԳՆԱՒԱՂԱՒ
ՍԷՐԸ ՓՈՒՇԷ ՊԱՍԿՈՎ
ԵԼԵՂ ՄԱՐԴԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ
ԳԵՀԵՆԱԿԱՆՔ
ԲԱՆԱՍՏԵՂԾԸ ԿԱՍՏԱՒԱԾԱՆԱՑ
ՍԻՐՏՍ ԿԱՐՄԻՐ ՎԱՐԴԵՐՈՎ
ԻՆՔՆԱՒՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ
ԳԻՒՂԻ ՍԻՒՐԵՐ՝ ԵԱՐՈՋ ԵՐԳԵՐ

Գին **40** ֆրանք

Դիմել հեղինակին,
17, Rue Damesme, PARIS

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Է

«Մատենաշար Ռազմիկի» թիւ 2
Հրատարակութիւն Հայ կամ. եւ Մարտիկներու Միութեան

ԼԵՌՆԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Գրեց՝ ՀՐԱՆՏ ՓԱՍՏԵՐՄԱՃԵԱՆ

Այս պիտական խիստ արժէքաւոր ուսումնասիրութիւնը գործն է Հրանտ Փաստերմաճեանի, որ վերջերս անդլիերէն լեզուով լոյս տեսած է Վաչինկթոնի մէջ։ Մեր համակրելի աչխատակիցը չատ պարզ եւ հասկնալի լեզուով կ'ուսումնասիրէ լեռնային զանազան ռազմաթեմները — մասնաւորաբար Հայկականը — առանց չուրջ կատարուած զանազան նշանակալից դէպքեր, թուական պատճառներ, թիւեր ու դէմքեր :

Հեղինակը սքանչելիօրէն կը պարզաբանէ լեռնային հողամասերու իբրեւ կազմութիւնը ու անոնց դերը ռազմական գործողութիւններու վրայ։ Կը խօսի զանազան տեսակի կռիւներու մասին։ Կը պարզէ լեռնային երկիրներու պահեստաւորման եւ փոխադրութեանց դժուարութիւնները, լեռնային յատուկ զօրամասերու կազմակերպութիւնը, քարերու գործը եւայլն։

Հայերէնի թարգմանուած այս գործը պիտի հետաքրքրէ անխտիր մեր նախկին ռազմիկները, նորակոչ զինուորները, եւ առհասարակ ամբողջ հասարակութիւնը :

Գիրքը 100 էջէ աւելի, գեղեցիկ տպագրութեամբ եւ հազուագիւտ նկարներով զարդարուած է :

ՀԱՑ — ԲՈՑԺ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՒՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ

Խմբագիր՝ Շ. ՆԱՐԴՈՒՆԻ — ՁՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

Հաւաքածոյ կազմելու համար կը պակսին հետեւեալ թիւերը.— 1, 2, 13, 20, 39։ Առաջին առթիւ սէտք ունինք թիւ 39ին։ Վերագարձնողները պատրաստ ենք տալ պահանջուած փոխարինութիւնը (Շնորհակալութիւն մեր բարեկամներուն, որոնց քարեացակամութեամբ լրացուցինք քանի մը հաւաքածոյ)։

ՀԱՑ ԲՈՑԺի երեք տարուան հաւաքածոն, առանց ապահովելու պակաս թիւերը, կը ծախուի 50 ֆրանք,— մօտաւորապէս 700 էջնոց հատոր մը։

Դիմել՝ 17, Rue Damesme, PARIS:

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ են Հայ.Բոյժի 45, 46 եւ 47 թիւերը։

ՀԱՑ - ԲՈՑԺի տարեկան բաժնեգինն է Ֆրանսայի համար 30, արտասահմանի համար 35 եւ 40 ֆրանք (ըստ երկրի)։

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ (սահմանափակ թիւերով)

ՅԱԿՈԲ ՀԻՍԱՅԵԱՆԻ

ԴԻՒՑԱԶՆԱԿԱՆ ՀԱՑՈՐԴԻՆ

(Բնական լուսանկարներով)

ՄԿՐՏԻՉ ԵՕԹՆԵՂԲԱՅՐԵԱՆ

(Ուրֆայի հերոսամարտի ղեկավար)

Գին՝ Ֆրանսա 8 ֆրանք, Սուրիա 6 ֆրանք, Ամերիկա 50 սէնթ։

Բոլոր ապսպրանքները կանխիկ

Ստանալու համար դիմել H. Issayan, 38 Rue du Mésnil. Asnières (Seine) France.

Հ. ԶԱՐԴԱՐԵԱՆ

ՎԻՐԱԲՈՑԾ - ԱՏԱՄՆԱԲՈՑԾ

44 Rue Dunkerque (ՄԷՏՐՕ ԿԱՌ ՏԻՒ ՆՈՈ)

Tél. Trudaine 42—69

Ե'ընդունի ամէն օր ժամը 14—20։

Հաւատացեալները ժամադրութեամբ։



ՐԱԿԸ ՏԻՒԶ

Ջուտ խաղողէ քաշուած եւ անիսոնով պատրաստուած հայկական օղին է ՐԱԿԸ ՏԻՒԶը։ Ջգուշացէք արուեստական օղիներէ որ ձեր ստամոքսը կ'այրէ եւ գլուխները ջուր կը խմցնէ եւ կը վնասէ ձեր առողջութեան։ Խմեցէք միայն ՐԱԿԸ ՏԻՒԶը որուն անուրբատ, կազդուրիչ եւ ախորժաբեր ըլլալը հաստատուած է։

Dalakupeian 8 Rue Suffren, Dépôt: 7 Rue de la Paix, Marseille. Tél. Dragon 70—89։

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

ՀԱՅՐԱՆԴ

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
17, Rue Damesme, PARIS (13e)

Téléphone : Glacière 15 - 70
Chèque Postal Paris 1678 - 63
(ՄԵԹՐՈՅԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹ 9 ՅՈՒԼԻՍ SAMEDI 9 JUILLET 1938

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.—

	ՏԱՐԵԿԱՆ ՎԵՑԱՄՍԵԱՅ	ԵՒԱՄՍԵԱՅ	
Յրանսա եւ Գաղութներ	150 Ֆրանկ	75 Ֆրանկ	40 Ֆր.
Անգլիա եւ Իտալիա	265 Ֆրանկ	140 Ֆրանկ	
Ուրիշ երկիրներ	215 Ֆրանկ	110 Ֆրանկ	

ԺԹ. ՏԱՐԻ — 14e Année No. 3778

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ՆՈՐԷՆ ԴԷՄ ԴԻՄԱՅ՝ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ

Միջազգային մամուլը կը շարունակէ աւելի կամ պակաս վաւերական յայտնութիւններ հրատարակել, Սանճաքի անցուդարձին եւ առ հասարակ Մօտաւոր Արեւելքի նոր տագնապին առթիւ։

Իրականին մէջ, մեծ դաղտնիքներ չեն որ կը պարզուին։ Կան չարք մը բացորոշ իրողութիւններ, որոնց լոյսը կ'օգնէ քակելու հանդոյցը։

Սովորական բացատրութիւն մը գործածելով, կրնայինք ըսել թէ 1914ի պատմութիւնն է որ կը կրկնուի, — ազդեցութեան պայքար, ի հարկին պատերազմի յանգելու գնով։

Քանի՛ շրջս տարի վերջն ալ, չատ բան փոխուած չէ պայքարի ձեւերուն մէջ։ Տնտեսական յարաճուն գործունէութիւն, եւ՛ւէն ալ՝ քաղաքական ծրագիրներ, մերթ սողոսկուն, մերթ սպառնալից։

Արեւմտեան Եւրոպան կորնցուց իր հանգիստը, այն օրէն ի վեր որ Ֆաշական Իտալիան աչքերն ուղղեց դէպի Արեւելք եւ իւրայմական երկիրները, իսկ ջախջախուած Գերմանիան ոտքի կանգնեցաւ, չատ աւելի հզօր եւ սպառազէն։

Ֆրանսայի նախկին վարիչները (Լաւալ եւ ընկ.) յաջողեցան Իտալիոյ ծաւալման ճամբաները վերածել զիկզակի, մղելով դէպ ի Եթովպիա։ Հոմ յաղթեց, բայց կարմիր ծովը չէր որ պիտի բանար հռոմէական կայսրութեան ճամբան։ Ուրիշ խօսքով, պահեստի ծրագիրներ միշտ ալ կան, առաւելապէս ուղղուած դէպի արեւելեան Միջերկրական։

Միւս կողմէ, Գերմանիա աստիճանաբար տեղաւորուեցաւ Պալքաններու եւ Թուրքիոյ մէջ, առ այժմ տնտեսական գետնի վրայ, բայց աւելի յայն թէեւ հեռաւոր ձգտումներով։ Միեւնոյն ատեն վերաբերական գետնի վրայ կատարուած նուաճումները արդէն վրդոված էին Փարիզն ու Լոնտոնը։ Սեղանաւորական մեծ օրկանը, «Ինֆորմասիօն», կ'ողբար վերջերս ։

— « Պերլին որ անշլուսէն ի վեր ամբապէս տեղաւորուած է կեդրոնական Եւրոպայի մէջ, ակնարկը դարձուցած է դէպի Արեւելք, ախորժակը բացուած է եւ կ'երազէ Պոլիսն ու Պաղտատի գիծը ։

Թուրքիոյ կացութիւնը խորհրդաճշական է (*սէմպօլիք*)։ Շրջորիւ Տոքթ. Շախթի ճարպիկ մեքենայութեանց, Գերմանիա իր տնտեսական խնամակալութեանը ենթարկած էր այս երկիրը։ Այսպէս, 1936ին գնեց Թուրքիոյ արտածած բերքին հարիւրին 51ը, իսկ Թուրքիա իր ներածած ապրանքներուն հարիւրին 45ը Գերմանիայէն առաւ։ Այս պայմանագրուն մէջ, կարելի՞ էր միթէ որ Թուրքիա չենթարկուէր Գերմանիոյ ։

... 1938ին պիտի աւելնայ այս ազդեցութիւնը, շնորհիւ Աւստրիոյ օգնութեան։ Վիէննա կը գտնուի Պոլսոյ ճամբուն վրայ։ Թուրքիոյ հետ Աւստրիոյ ունեցած առեւտուրով պիտի աւելնայ գերմանական ճնշումը Պալքանեներու մէջ»։

Լոնտոն Փարիզէն առաջ արթնցած ըլլալով, իրրեւ դեսպան էնկլիւբի փութացուց արեւելեան գործերու մանագէտ մը։ Նոյն իսկ իր նախորդ վեհապետը պարտք սեպեց առաջին պատյտին իսկ Աթաթիւրքի հանդիպիլ եւ մտերմական ասուլիս մը սարքել ։

Յետոյ յուշիկ–յուշիկ նուաճումներ կատարելով, Լոնտոն յաջողեցաւ իր թեւարկութեան տակ առնել Թուրքիան ։ Այդ բոլորին ելքն էր 16 միլիոն ոսկիի բացառիկ վարկը, (վեց միլիոնը սպառազինութեանց, մնացեալը հանրօգուտ չինութեանց համար)։

Այս յաջողութեան հետ, անոր հետ զուգընթաց, Մեծն Բրիտանիա իր եռեւէն քաշեց Ֆրանսան։ Վրդովիչ հեռանկարներ պարզեց անոր առջեւ, եւ զիջումներ կատարել տուաւ։ (Ան այժմ Ալէքսանդրէթի չրջանի մասին կը խօսուի, բայց կը կարծենք թէ աւելի չարաշուք է բուն դաղտնիքը)։

Այս ձեռնարկներն ու իրողութիւնները արդէն իրար անցուցած են Պերլինն ու Հոմը, ուր չատ լաւ կ'ըմբռնեն թէ չափուելու փորձ մըն է որ կը կատարուի։

Աւելի քաց խօսինք,— Մեծն Բրիտանիա մտահոգութեամբ դիտելով Գերմանիոյ ծաւալումը՝ դէպի հարաւային-արեւելեան Եւրոպա, մանաւանդ Աւստրիոյ կցումէն վերջ, կ'ուզէ ամուր ցանց մը հաստատել արեւելեան Միջերկրականի մէջ ։

Ցանց մը՝ որ պիտի ծառայէ խափանելու գերմանական եւ մանաւանդ իտալական յարաճուն գործունէութեան, բուն բառով՝ աշխարհակալութեան ճամբաները։

Ատոր համար ալ, Լոնտոն անհրաժեշտ կը գտնէ Թուրքիոյ զօրացումը։ Ոչ միայն բանակով, նաւատորմիղով եւ օդատորմիղով, այլեւ տնտեսութեամբ ։

Անհրաժեշտ կը գտնէ , նաեւ, իր թաթն երկարել դէպի Պալքանները եւ մասնաւորապէս դէպի Ռումանիա, որ քարիւղ ունի եւ ուր նորէն Գերմանիան կեցած է իր ճամբուն վրայ ։

Ուրեմն, ճակատները փոխուած են, բայց ոչ գործելու մեթոտները։

Երէկ Թուրքիոյ զինակիցներն էին Գերմանիա եւ Աւստրիա - Հունգարիա։ Այսօր Թուրքիան կը հովանաւորեն Մեծն Բրիտանիա եւ Ֆրանսա։ Երկուքն ալ, անգամ մը եւս չափուելու տրամադրութեամբ ...

Դժուա՛ր է ըսել թէ ո՛ւր կրնան յանգիլ այս պայքարները։

Ան այժմ բոլորն ալ թուխախ նստած են։ Եւ կը զինուին, աննախընթաց մոլեգնութեամբ։ Նոյնիսկ պանծացնելով սպառազինութեանց բազմապատկութիւնը, իբրեւ ազդակ խաղաղութեան։ Կը զինուին ոչ միայն մեծերը իրենք, այլեւ «եղբայրաբար» կը զինեն միւսները, գլուխն ըլլալով Թուրքիան ...

Շ.

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ՆՈՐ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԷՆԿԻՒԻՐԻՒ ՄԷՋ

Անիտոխի հրետանեաւորն ալ կը դիմադրեն թուրք զօրքը

Էնկիւրիէն կը հեռագրեն յուլիս 7 թուականով ։—

Այս առաւ ժամը 11ին խորհրդաժողով մը գումարուեցաւ արտաքին գործերու պաշտօնատան մէջ, նախագահութեամբ Ր. Արասի, մշակելու համար բարեկամութեան եւ բարի դրացնութեան դաշնագիրը Թուրքիոյ եւ Սուրիոյ միջեւ։ Ֆրանսական պատուիրակութեան կը նախագահէր դեսպանը, Պ. Փոնսօ։ Ժողովին ներկայ էր նաեւ Սուրիոյ պատուիրակը ։

*** Անտիոքէն կը հեռագրեն յուլիս 7 թուականով ։—

Թուրք զօրքը կը շարունակէ իր տեղաւորումը։ Այս առաւ մէկ վաշտ լեռնային հետեւակազօրք մտաւ Անտիոք եւ ընդունեցաւ հրամանատար Քոլէի, զնդապետներ Ֆէվզիի եւ Շիւքրիի, կուսակալ Ապտիւրահմանի, քաղաքին եւ բոլոր հասարակութեանց երեւելիներուն կողմէ։ Մարոքեան արձակդէններու վաշտ մը զինուորական պատիւներ կ'ընծայէր ։ Քրիստոնեայ եւ ալեւի հասարակութեանց բազմաթիւ անդամներ եկած էին ողջունելու թուրք զօրքը, այսպէս իրենց գոհունակութիւնը յայտնելով Ֆրանքեւիթուրք գործակցութեան իրականացման համար ։

ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ՍԻԵԼԻ ԾԱՆՐԱՑԱՏ ՊԱՂԵՍՏԻՆԻ ՄԷՋ

Երկու վարչապետ եւ երկու վ-չ գիւղում

Պաղեստինի կացութիւնը աւելի ծանրացած ըլլալով, անգլիական կառավարութիւնը երկու վաշտ զօրք ճամբայ հանեց Եգիպտոսէն։ Միեւնոյն ատեն վիթխարի զրահատար մը եւ յածանաւ մը Հայֆա զացին չոգեկինդ ։ Զրահատարը, «Րինկրլս», ունի 32.000 թոն տարողութիւն եւ Քորֆու հասած էր մէկ շաբաթ առաջ, իսկ յածանաւը կը գտնուէր Եգիպտոս։ Անգլիացին ալ նոր կիսարաժին մը պիտի ղրկուի ։

Վերջին քանըչորս ժամուան մէջոցին սպաննուած են 40 Հրեաներ եւ Արաբներ, իսկ վիրաւորներուն թիւը 100ը կ'անցնի։ Պաշարման վիճակ պիտի հռչակուի նոյնիսկ Երուսաղէմի մէջ ։

Պաղեստինի կարեւոր կէտերուն մէջ բարեկարգութեան կը հսկեն անգլիացի զինուորներ։ Հայֆայի մէջ զինուորները կը չրջին սուինաւոր հրացանով։ Մինա հակոդութեան տակ առնուած է Մուսուլի նաւթագիծը։ Երթեւեկը դադրած է Հայֆայի եւ չրջականերուն մէջ։ Եաֆայի խանութները փակուած են եւ հետզհետէ կը զօրանայ Պաղեստինի բոլոր արաբական խանութները փակելու չարժումը։ Նազարէթի մէջ 150 սպառազէն մարդիկ յարձակելով քանդեցին հրեայ բանուորներու կայանը։ Հինգշաբթի օր չորս ռումբեր նետուեցան երուսաղէմի կեդրոնական պահականոցին վրայ։ Արաբ մը սպաննուեցաւ, ուրիշ մը ծանրապէս վիրաւորուեցաւ ։

ՄՕՏԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ԴԷՊՔԵՐԸ ԵՒ ԳԵՐՄԱՆԻՈՅ ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Խոր ժժգոհութիւն Անգլիոյ եւ Ֆրանսայի դէմ

Գերմանական մամուլը կը շարունակէ խստօրէն ձաղկել Անգլիոյ եւ Ֆրանսայի քաղաքականութիւնը՝ հարաւային-արեւելեան Եւրոպայի մէջ, Թուրքիոյ հետ կնքուած համաձայնութեանց եւ դրամական աջակցութեան առթիւ։ Հանրային կարծիքը մեծապէս յուզուած է, Անգլիոյ եւ Ֆրանսայի տնտեսական գործունէութիւնը վերագրելով հակագերման ծրագրի մը։ Անգլիոյ փոխատուութիւնը Թուրքիոյ, Լոնտոնի մէջ ծրագրուած ուրիշ փոխատուութիւն մը՝ Ռումանիոյ, Ֆրանսայի կողմէ ցորենի գնումը՝ Եուկոսլաւիոյ մէջ՝ կը համարուին ախտանիշները նոր չարձակողականի մը, որ կը ձգտի Գերմանիան հեռացնել Պալքաններէն։ Երկու կարեւոր թերթեր, «Ֆրանքֆուրթեր Ցայթունկ» եւ «Քէօլնիշէ Ցայթունկ», դիտել կուտան թէ այս չարձակողականին առթիւ, քաղաքական տեսակէտով Անգլիա կը հետեւի Ֆրանսայի, իսկ տնտեսական տեսակէտով ծրագիրներ կ'որոճայ, քարիւղի նոր հանքեր երեւան հանելու համար Ռումանիոյ մէջ։ Առաջին թերթը կը գրէ ։

— « Կը վերակենդանացուին հին ծրագիրներ որոնք սկսան քանի տարի առաջ, բայց ոչ թէ հարաւային արեւելեան Եւրոպայի երկիրներուն ընծայելու համար այն աջակցութիւնը որ մերժուեցաւ անցեալին մէջ։ Այդ վերակենդանացումը կը կատարուի խափանելու համար յաւելումը իտալական եւ ամէն բանէ առաջ՝ գերմանական վաճառականութեան որմէ յայտնապէս կ'օգտուին այդ երկիրները։ Հետապնդուած ծրագիրն է Դանուբեան երկիրներու առեւտուրը բոլի չեղեցնել իր բնական ճամբէն եւ Ֆրանսական դիւանագիտութիւնը յարաճուն ուժգնութեամբ մը կը բանի այս առաջադրութեամբ, բոլոր տրամադրելի միջոցներով։ Կը խորհուի վերազինման յատկացուած գնումները փոխադրել դէպի հարաւային-արեւելեան Եւրոպա։ Մինչեւ անգամ Պուքրէշէն կը հաղորդեն թէ Անգլիոյ եւ Մ. Նահանգներուն առեւտրական բանակցութիւնները յետաձգուեցան, որովհետեւ Անգլիա կ'ուզէ այսուհետեւ աւելի մեծ քանակութեամբ ցորեն եւ քարիւղ գնել Ռումանիայէն։ Նոյն դիտումները կը վերագրուին Ֆրանսայի եւ Մ. Նահանգներուն։ Կ'ըսուի թէ Անգլիա կ'ուզէ հակակշռել գերմանական ազդեցութիւնը, վարկեր բանալով Ռումանիոյ եւ Յունաստանի, այնպէս ինչպէս վերջերս ըրաւ Թուրքիոյ։ Գերմանիա քաղաքական դերակշռութեան չի ձգտիր հարաւային-արեւելեան Եւրոպայի մէջ, ոչ ալ կ'երազէ մենաշնորհի վերածել անոր առեւտուրը։ Բայց եւ այնպէս, ինքնախարութիւն է կարծել թէ Գերմանիան կրնայ դուրս քշուիլ իրրեւ յաճախորդ » ։

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Գ. էջ)

ՕՐԸ ՕՐԻՆ

«ՑՆԴԱՆ»Ը ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ԶԱՒԱՆՑԵԼ

Ո՞վ չի ճանչնար Քլօտ Ֆառէրը, — գրագէտ, ակադեմական, «նախկին» եւայլն ։

Իր գրագէտի համբաւին հետ զուգընթաց շողաց միւսը,—քրէմոլ, ամէնէն գաշնելի տեսակէտէ։ Այնքան ծած, որ Թուրքերն անգամ գանեցան ։

Տակաւին անցեալ տարի էր որ թուրք թերթերը գետնի գետին զարկին զինքը, գունագեղ ածականներով, — հացկատակ, «ցնդած ծերուկ»(*պուռնաք իհթիյար*), կեղծաւոր, արծաթամոլ եւայլն։

Միեւնոյն ատեն պահանջեցին սրբել էր անունը Պոլսոյ այն փողոցին վրայ որ կը կոչուէր Քլօտ Ֆառէր, «ի վարձ բարւոք ծառայութեանց»։

Ու վերջապէս, նոյն տարին, Իզմիրի հաղարապետն էր որ կը յայտարարէր, Աթաթիւրքի առջեւ ։

— « *Քլօտ Ֆառէր կոչուած այդ ապուշը, Աթաթիւրք, այն ատեն ձեր ոտքը ինկաւ, բայց դուք մեծութիւն ըրիք եւ հրամայեցիք որ վեր կենայ...*»։

Արդ, այս «ցնդած»ը փոխանակ իր պատեհանին մէջ ամփոփուելու եւ վէպ գրելու, կը շարունակէ բաղաքական-տնտեսական խաղալ, տեսակէտներ յայտնել, վճիռներ արձակել ։

Այսպէս, «էքօ տը Սիւի » թերթին փարիզի թղթակիցը իր կարծիքը հարցուցած կ'ըլլայ Սանճաքի եւ Սուրիոյ մասին, եւ Քլօտ Ֆառէր կը պատասխանէ ։

— « *Սուրիա դժուարաւ կառավարուելիք երկիր մըն է ։ 1919ին, երբ Սուրիոյ հոգատարութիւնը յանձնուեցաւ Ֆրանսայի, հանդիպեցայ հին բարեկամ Թուրքերու որոնք դիտել տրուին. «Հիմա ձերն է կարգը. պիտի տեսնէք թէ որքան դուարձալի է...»։ Միայն զօր. Վէյկանն է որ բան մը բրաւ Սուրիոյ մէջ։ Դժուարութիւնը հոն է որ Սուրիա բաղկացած է իրարու թշնամի բազմաթիւ ցեղերէ ։*

Մուսթաֆա Քէմալի սխալը այն եղաւ որ իսլամութիւնը ջնջեց Թուրքիոյ մէջ։ Իսլամութիւնը կրպակիւս (շիմէնթօ) է որ ամրացուցած էր Օսմանեան Տունի մը քարերը կ'իյնան, երբ չաղաթը կ'իյնայ ։

Միջերկրականեան բոլոր ազգերու նման, Սուրիացիներն ալ անկարգութիւն կը տանին իրենց մտած տեղը։ Սուրիա ահագին կորուստ ունեցաւ, երբ Թուրքիա քաշուեցաւ իր հողէն։ Թուրք ոստիկան զինուորը (ժանտարմա) լաւ էր։ Երբեմն թիրա էր ան։ բայց բաւական քաղցրաբարոյ իր մտածուածը կեանքին մէջ, չատ արդար եւ անչահախնդիր։ Բնականաբար խօսքս պաշտօնեաներու մասին չէ, որոնք չէին կրնար ապրիլ՝ Թուչակ չառնելուն համար։ Կ'ըսեմ թէ ընդհանրապէս Թուրքը քաղցրաբարոյ եւ ուժեղ է»։

Թղթակիցը.— *Հապա հայկական ջարդե՞րը, վարպետ ...։*

— *Հայերը գրգռեցին Թուրքերը՝ վաշխառուութեամբ եւ շահագործումով։ Օսմանեան կայսրութեան բոլոր եկամտական նախարարները Հայեր էին։ Թրքահայերը ահագին հարստութիւն դիզեցին, մինչ Թուրք ազգը կը մեռնէր քաղցէն։ Հայերը եւ Սուրիացիները սարսափելի մարդիկ են գործի տեսակէտով, չատ աւելի սարսափելի՝ արեւմտեան ազգին համար ։*

Սուրիոյ մէջ միշտ բանակ մը զբաղնուելու է։ Ահա թէ ինչո՞ւ կը ցաւիմ թրքական բանակին մեկնումին համար »։

Կը յիշեմ որ այս գանգիւրը **1921**ին ալ ըն ենիմատ ցնդաբանութիւն մը գրած էր գաւառական հանդէսի մը մէջ, ապացուցանելու համար թէ Թուրքերը չէին որ Հայ ջարդեցին, այլ Հայերը կոտորեցին անմի՛ղ թուրք ժողովուրդը ...

Մարդը ներկայացուցած եղայ։ Մրցացեալը թող լրացնեն Թուրքերը իրենք «պուճաք ինթիյար»էն մինչեւ «ալչաք»ը ։

Վ.Ա.Հէ

300 ՖՐԱՆՔԻ ՆՈՒԻՐ ՁՔԱՒՈՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ

Թօլնօ քաղաքէն (Լեհաստան) երեք հայրենակիցներ, Անտոն Մարչուեան, Գէորգ Թադէոսեան եւ Յովհ. Կիլանեան 100ական ֆրանք տրամադրելով, 300 ղրկած են «Յառաջ»ի, յատկացուելիք համար Նոր Սիսի Լուսինեան վարժարանին ։

Այդ հանգանակութիւնը փակուած ըլլալով, 300 ֆրանքը յատկացուցինք նոյնքան կարօտ հաստատութեան մը, Հավրէգքի ազգ. դպրոցին (Մուսուլ)։

Սուրիոյ հոգեւոր պետերուն դիմումը

Արաբերէն «էլ Թէգաուտիմ» թերթը կը գրէ ։—

Հալէպի հոգեւոր պետերը մարզպանին պատուիրակ Պ. Տավիտ դիմելով, պաշտպանութիւն խնդրած են Սանճաքի ոչ-թուրք տարրերուն համար։ Պատուիրակը հետեւեալ յայտարարութիւնն ըրած է ։

— Ֆրանսական կառավարութիւնը իր կարելին ըրաւ՝ Սանճաքի մէջ սուրիական իրաւունքները պաշտպանելու համար։ Սանճաքիմէջլիսի գործածուելի սուրիական դրամը։ Սուրիոյ եւ Սանճաքի միջեւ մաքսային սահման գոյութիւն պիտի չունենայ ։

Բացատրելի վերջ այն հարկադրիչ պատճառները որոնք ստիպեցին Ֆրանսան հաստացողութեան դալ Թուրքիոյ հետ, պատուիրակը ըսած է թէ Ֆրանսա՝ որ եւ է պարագայի տակ չի կրնար թոյլ տալ որ ոչ — թուրք տարրեր բռնութեանց ենթարկուին։

Հոգեւոր պետերը, որոնք կը ներկայացնէին սուրիական դրեթէ բոլոր համայնքները, քրիստոնեայ թէ իսլամ, խնդրած են Պ. Տավիտէն որ Ֆրանսական կառավարութեան հաղորդէ իրենց փափաքներն ու խնդրանքները, Ֆրանքեւ-սուրիական դաշնագիրը օր առաջ վաւերացուած տեսնելու մասին։

*** Անտիոքի երեսփոխան Պ. Մովսէս Տէր Գալուստեան յունիս 29ին Սուրիոյ մարզպանին ներկայանալով, երկար տեսակցութիւն մը ունեցած է ։ Կիմանանք թէ այս առթիւ յուշագիր մը ներկայացուցած է Սանճաքի Հայերու կացութեան մասին, կարգ մը առաջարկներ ներկայացնելով ։

ՁԱՓՈՆԱԿԱՆ կառավարութիւնը բողոքեց Փարասէլ կղզիներու գրաման դէմ՝ Ֆրանսայի կողմէ ։— կայսրը պատգամագիր մը ուղղեց, ազգային բոլոր հարստութիւնները չարժման մէջ դնելու եւ պատերազմը չահելու համար ։

ՄԱՐՍԻԼԻԱՅի մետաղագործական բանուորներու գործադուլին առթիւ, « *Իւմանիթէ*» կը գրէ թէ մանագէտները պահանջած են վերահաստատել փափաղանը, մինչդեռ գործարանին վարչութիւնը կ'ուզէ արձակել ուրիշ երեսուն բանուորական պատուիրակներ։ Գործադուլը կը չարունակուի կրընսպլի եւ Լիոնի մէջ։ Թուլուզի քաղաքապետութեան բանուորներն ալ գործադուլ հռչակեցին, յաւելում պահանջելով ։

ԳԵՐՄԱՆԻՈՅ արտաքին նախարարը ունկնդրութեան ընդունեց Թուրքիոյ արտաքին նախարարութեան խորհրդականը, Մէնէմէնճիօղլու, որ նախագահն է առեւտրական պատուիրակութեան մը։ Յօսակցութիւնը գործաւ անտեսական խնդիրներու եւ ընդհանրապէս գերմանութեան յարաբերութեանց վրայ։

ՍՏԱՄԲՈՒԼԻ ՎԱՐԴԸ

The Rose of Stamboul

By DENNIS WHEATLEY

Թարգմ՝ ՏԵՐՆԻՍ ՀՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ

From : J. M.

Թարգմ. Ա. Ս.

— Չգիտեմ, ասաց Ֆրանսուան, ես էլ չեմ հասկանում, թե ինչու ես դու այդքան ուրախ։ Ես ու Ռիշմոնդը, որ մեզ ուղարկեցին այստեղ՝ ձեզ հետ միասին աշխատելու համար, ոչ մի հաճելի բան չենք տեսնում այս գործի մեջ։ Ինչ վերաբերում է ինձ, ես ամենևին էլ չեմ հավատում, որ Ռոբեսպիերը կարող է այդքան հիմար լինել, որ ուղարկի մեզ Ֆրանսիայի հարավ՝ ընդամենը մի քանի հոգի, որպեսզի ոչնչացնենք Ֆրանսիայի ամբողջ հակահեղափոխությունը։ Ես ինքս ինձ համար որոշել եմ, որ ամենայն հավանականությամբ մենք այստեղ կմնանք մինչև հեղափոխության վերջը, և ես ամեն կերպ կաշխատեմ հնարավորինս հաճելի դարձնել իմ կյանքը։

— Ես էլ եմ այդպես մտածում, ասաց Ռիշմոնդը։ Ինչ վերաբերում է Ռոբեսպիերին, ապա ես կարծում եմ, որ նա ինքն էլ ուրախ կլինի, եթե մենք հեռու մնանք Փարիզից

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Ա. Ս. ՊՈՂՈՍՅԱՆ

Ա. Ս. Պողոսյանը ծնվել է 1915 թ. Ռոստովում։ Ավարտել է Ռոստովի համալսարանի պատմա-փիլիսոփայական ֆակուլտետը։ Աշխատել է Ռոստովի մարզային թերթում։ Հրատարակել է մի շարք պատմվածքներ։ Ներկայացվող պատմվածքը գրված է հեղինակի ռազմաճակատային նոթերի հիման վրա։

Ռ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ռ. Սարգսյանը ծնվել է 1917 թ. Թիֆլիսում։ Ավարտել է Թբիլիսիի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետը։ Աշխատել է Թբիլիսիի թերթերում։ Հրատարակել է մի շարք պատմվածքներ։

Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ա. Մանուկյանը ծնվել է 1920 թ. Երևանում։ Ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը։ Աշխատել է Երևանի թերթերում։ Հրատարակել է մի շարք պատմվածքներ։

Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ա. Մարտիրոսյանը ծնվել է 1918 թ. Ալեքսանդրապոլ

Անգլիական նաւատորմի՞ն Սեւ ծովու մէջ

«Քէօլնիշէ Ցայթունկ» աւելի յառաջ երթալով, կը դրէ թէ Անգլիա կը փորձէ իր ազդեցութիւնը ամրապնդել Ռումանիոյ մէջ, ուղղակի Լանտոնի եւ անուղղակի՝ Էնկիւրիի միջոցաւ: Այս առաջադրութեամբ, առաջին ֆայլ մը կը համարուի կարոյ թագաւորին վերջին այցելութիւնը Աթաթիւրքի, «քանի որ, երկու պետութիւններ որոնց մէջ կ'ածի բրիտանական ազդեցութիւնը, այժմ կ'ընդարձակեն իրենց տնտեսական եւ զինուորական կապակցութիւնները»:

Գերմանական թերթին կարծիքով, ասոր ալ պատճառը քարիւղն է: «Քոմոփլինայի եւ Մորենիի (Ռումանիա) քարիւղի հորերը պիտի սպառին վեց-եօթը տարիէն, եւ նոր հորեր պէտք է բանալ կարպաթներու արեւելեան սարալանջերուն վրայ: Անգլիա այդ քարիւղին պէտք ունի իր տեղադրին վերազինման համար, եւ Ռումանիոյ քարիւղի ծրագիրները կրնան դիւրաւ զուգորդուիլ Ի-րաքի քարիւղի ծրագրին հետ: Այս առթիւ նշանակալից է քարիւղի անգլիացի ամենամեծ դիւանագէտ մասնագէտներէն մէկուն՝ Սըր Ր. Հօրի փոխադրութիւնը Թէհրանէն Պուքրէշ»:

Գերմանական թերթը կ'ըսէ թէ Անգլիա ծրագիրներ կ'որոճայ, նաւային եւ օդանաւային կայան մը հաստատելու համար Սեւ ծովու մէջ, Քոնսթանցայի մօտ: Եւ եզրակացնելով, կ'ապդարարէ թէ Գերմանիոյ տնտեսական դիրքը այնքան զօրաւոր է Պալքաններուն մէջ որ, Անգլիոյ ծրագիրները պիտի չյաջողին, «հակառակ անգլիական ոսկիին եւ արծաթ դնդակներուն»: Պալքանները «հաւատարիմ պիտի մնան Գերմանիոյ, ապացոյց՝ Պալքաններու վերջին ցուցահանդէսին մէջ, 609 օտար ցուցադրողներէն 386ը Գերմանացի էին եւ միայն վեցը Անգլիացի»:

Նոր յուշեր Հրտական ապստամբութեան մասին

Ինչպէս գրած էինք անցեալ օր, Թուրքիոյ վարչապետը Ազգ. ժողովին մէջ խօսելով Տէրսիմի մասին, կ'ըսէր թէ զինուորական գործողութիւնները այս տարի ալ պիտի չարունակուին» եւ թէ «անցեալ տարուան հետ բաղդատելով այս տարի աւելի շատ դինուոր համախմբած ենք»:

Ուրեմն դիմադրութիւնը կը չարունակուի Տէրսիմի մէջ:

Պէյրութի «Ազդակ»ը հետեւեալ տեղեկութիւնները կը հրատարակէ քրտական չարժումներու մասին, քաղելով Տիգրանակերտէն հասած քիւրտ ցեղապետ մը (2 յուլիս).—

Մոսկանի (Պիթլիսի չրջան), Քէյսարի (Կարճկանի չրջան) եւ Քէբզրի (Հարթզի չրջան) աչիրէթները մէկ ամբողջ ի վեր ապստամբած են: Կառավարութիւնը այս երեք աչիրէթներուն միջեւ եղած յարաբերութեան միջոցները կըտրած է: Զապտմի ուրիչ միջոցներ օգուտ չեն տուած:

Տէրսիմի եւ Սասունի չրջաններուն մէջ աւելի լայն ծաւալ ստացած են ապստամբական չարժումները: Խմիր ազգի աչիրէթը մեծ վնասներ պատճառած է Թրքական կառավարութեան: Վերջերս գիշերով չարձակում մը գործած են իրենց դէմ զրկուած երեք գումարտակ զօրքին վրայ եւ զգալի վնասներ հասցուցած: Զօրքը փախուստի դիմած է: կառավարութիւնը նոր ուժ կը զրկէ:

Ապստամբութիւնը կարենալ զսպելու համար, կառավարութիւնը ձեռնարկած էր նեղ ճամբաներու չինութեան: Գործաւորները, թուով 700 հոգի, գիչերով փախուստ կուտան եւ կ'ապաստանին անտառիկ լեռներու վրայ, իրենց հետ տանելով բոլոր վրաններն եւ գործիքները:

Իսկ արաբական գործակալութիւնը կը հաղորդէ.— Թուրքիայէն հասած նոր յուրերը կը հաստատեն թէ քրտական ըմբոստութիւն մը ծագած է Անատոլուի մէջ: Այս անգամ ալ Տէրսիմն է ըմբոստութեան կեդրոնը, բայց եկած տեղեկութեանց մէջ չըսուիր թէ ո՞րոնք են այն քիւրտ ցեղերը որ կը վարեն չարժումը:

Ոչ մէկ եկեղեցի կ'ընդունի 650,000 հրեայ տարագիրներ

Լվիվեան խորհրդաժողովի երկրորդ օրուան նիստին մէջ, Լեւրապայի գլխաւոր գաղթային պետութիւնները իրենց ներկայացուցիչներուն միջոցաւ յայտնեցին թէ տեղ չունին 650.000 անձեր Հրեաներու համար: Ցարմար վայրեր կը համարուէին բրիտանական գաղթապետութիւնները, Հարաւ. Ամերիկայի հանրապետութիւնները եւ ուրիչ անշծովեայ գաղթավայրեր, բայց Աւստրալիոյ, Քանատայի, Պրազիլիոյ, Արժանթինի, Հոլանտայի եւ Պելժիոյ ներկայացուցիչները պաղ ջուր լեցուցին, համակրանք յայտնելով հանդերձ: Աւստրալիոյ պատուիրակը յայտարարեց թէ իր երկիրը Հրեայ չի կրնար ընդունիլ, որովհետեւ ի՛ուղէ պահել իր անպիեւաքսոն դիմագիծը: Քանատայի ներկայացուցիչը առարկեց թէ իր երկիրը տնտեսական ապնայի եւ անդործութեան մատնուած է: Արժանթինի ներկայացուցիչը դիտել տուաւ թէ իր երկիրը միւսներուն ընդունած իւրաքանչիւր հարիւրին դէմ 270 Հրեաներ ընդունած ըլլալով, կատարած է իր մարդասիրական պարտականութիւնը: Հոլանտայի ներկայացուցիչը յայտարարեց թէ իր երկիրը արդէն 25.000 տարագիրներ ընդունած է, ինչ որ շատ մեծ թիւ մըն է չափազանց խճողուած երկրի մը համար: Պելժիոյ ներկայացուցիչն ալ նոյն առարկութիւնն ըրաւ:

ՋԱՆԱՋԱՆ ԼՈՒՐԵՐ ՔԱՆԻ ՍԸ ՏՈՂՈՎ

ՄՈՍԿՈՒԱՑԻՆ Պերլին հասած լուրերու համաձայն, տիկին Լէթվինով, արտաքին գործակալին կինը (Անկլուհի), Միսկերա աքսորուած է, բողոքած ըլլալով վերջին զնդակահարութեանց դէմ: Կ'ըսուի թէ Սթալին պահանջած է որ Լէթվինով ամուսնալուծում կատարէ... Տիկինը մերժած է եւ առնել իր մեղադրանքը:

Պատարագ Հայոց եկեղեցիին մէջ

Երուսաղէմի միաբաններէն Սիօն վարդապետ Մանուկեան որ պատահաբար քաղաքս կը գտնուի, այս կիրակի, 10 Յուլիս, պիտի պատարագէ եւ քարոզէ Փարիզի Հայոց եկեղեցիին մէջ:

ՄԱՐՍԷՅԼ-ՓՐԱՏՈՑԻ Ս. ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ ԵԿԵՂԵՑԻԻՆ ՄԷՋ եր-բակի օր, 10 Յուլիս, կը կատարուի Ս. Թարգմանչաց տօնը: Կը պատարագէ եւ կը քարոզէ Տ. Զգօն վրդ. Ցակոբեան: Նաեւ մասնաւոր հոգեհանգիստ կը կատարուի եկեղեցիին հիմնադիր-բարեբար Պ. Վահան Թորասանճեանի ծնողքին եւ ընտանիքին հանգուցեալներու յիշատակին:

Խոնարհաբար կ'ուզուի

Ծր. Կապոյտ Խաչի օգ. ափոխութեան կայանին համար լաւ խոհարարուհի մը կ'ուզուի, գոհացուցիչ վճարումով:

Դիմել գրաւոր Շրջ. վարչութեան հասցէին՝ Տիկ. Մխոքեան, 6 Rue d'Alsace, Asnières, (Seine):

Ամավերջի դարձուածային հանդէս Ալֆորվիլի մէջ

10 Յուլիս, կիրակի կէսօրէ վերջ ժամը 2ին, տեղւոյս եկեղեցիին մէջ: կը հրաւիրուի հայ հասարակութիւնը:

ՎԱԼԱՆՍԻ Հ. Յ. Դ. ԿՈՄԻՏԷԻ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍԸ որ տեղի պիտի ունենար Յուլիս 3ին, մնդրեւին պատճառաւ ՅԵՏԱՁԳՈՒՄԱՄ է Յուլիս 10ին:

Alimentation TIQ-TON
Գ. ՃԻՏՃԵԱՆ

20, Rue Tiquetonne, Paris, *Մէթրօ* **Halles**ի կամ **Etienne-Marcel**ի **2** *մատկեա*

Téléphone: Central 76 95

Բացուած է արեւելեան եւ եւրոպական ուտելիքներու ճոխ մթերանոց, անմրցելի գիներով: Մեծաքանակ եւ փոքրաքանակ:

Առաջնակարգ ճիւմակ պանիր, 14 ֆրանք քիլօն: Դաշգավալ 17 ֆր.: Պուլկուր, 4.50 ֆր.: Ձիքեապտուղ, 6 ֆր.: Բրինձ, 2.50ֆր.: Ապուխա, 22 ֆր.: Սուճուք, 18 ֆր.:

Միւս ապրանքները նոյն համեմատութեամբ: Փորձեցէք եւ պիտի ըլլաք մնայուն յաճախորդ:

Ծանուցք բաց է առաւօտեան ժամը 5էն, բացի երկուշաբթիէն: **Livraison à domicile**

Հ. Յ. Դ.

Փարիզ

ՊՐՕՖԱԿԱՆՑԻ ցանցնախումբի ժողովը *11* Յուլիս, երկուշաբթի երեկոյ ժամը 9ին ճաշօթ ֆաւուրքատեղին:

ՇԱՎԻԼԻ «Արզուհեան» խումբի ժողովը *10* Յուլիս, կիրակի երեկոյ ժամը 9ին սովորական ֆաւուրքատեղին:

Գաւառ

ՊՈՒՎՈՒՐ ՕՍՏՈՒՅԻ «Վռամեան» ենթակոմիտէի ընդհ. ժողովը 9 Յուլիս, Շաբաթ երեկոյ ժամը 8ին, սովորական ֆաւուրքատեղին:

ՍԷՆ ԺԷՌՄԻ (Մարսէյլ) «Վրէժ» խումբի ընդհ. ժողովը 9 Յուլիս. Շաբաթ երեկոյ ժամը ճիշդ 10ին սովորական ֆաւուրքատեղին: Բոլոր ընկերներու ներկայութիւնը կարեւոր է:

ՄԱՐՍԻԼԻԱ «ընկեր կարօ» ենթակոմիտէի ընդհ. ժողովը 9 Յուլիս. Շաբաթ երեկոյ ժամը 8ին, սէնթ Ալնտրէի օգաստուն պարտէզին մէջ:

ՊՈՒԱՒԻԺԻ «վարանդեան» խումբի դասախօսական ժողովը 9 Յուլիս, Շաբաթ երեկոյ ժամը ճիշդ 9ին. ընկ. Արապեանները քնակարանը: Ներկայանալ անդամատետրով: Պիտի դասախօսէ *ընկ. ՊՕՂՈՍ ՀԻՒՍԵԱՆ*,

Նիւթը՝ *«Տիպար Դաշնակցականի մը յատկանիշները»*

ԿՈՐՆՊԼԻ «Տօճենեգբայրեան» ենթակոմիտէն ընդհ. ժողովի ևր հրաւիրէ բոլոր ընկերները 9 Յուլիս, Շաբաթ երեկոյ ժամը 8.30ին ճաշօթ ֆաւուրքատեղին: Բոլոր ընկերներու ներկայութիւնը պարտաւորիչ է:

ԱՎԻՆԵՈՆԻ «Մուրատ» խումբը ժողով կը հրաւիրէ իր բոլոր ընկերները Շաբաթ, 9 Յուլիս, երեկոյեան ժամը 9ին, Ընկեր Մկրտիչ Գաբրիէլեանի քնակարանը: Ներկայանալ անդամատետրով կարեւոր օրակարգ:

ՎԱԼԱՆՍԻ կոմիտէի ընդհ. ժողովը 9 Յուլիս, Շաբաթ երեկոյ ժամը 8ին իր «Ցիամանկօ» ակումբին մէջ:

Պարապմունքի երեկոյթ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ՓԱՐԻԶԻ ՀԱՅ ԵՐԻՏ. ՄԻՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ

9 Յուլիս, Շաբաթ, ժամը 19էն մինչեւ կէս գիշեր իր կեդրոնատեղին 8, Rue Bossuet, Paris

SAUTERIE ORCHESTRE

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՄԲ Ֆ. Կ. ԽԱՉԻ ՊՈՒԼ. ՕՍՏՈՅԻ Մ ՃԻՒՂԻ

10 Յուլիս, կիրակի կէսօրէ վերջ ժամը 2ին

Սէնթ Ալնտրէի օգաստուն պարտէզին մէջ

ՑԵՏԱՁԳՈՒՄԱՄ է Մարսէյլի Հայ երաժշտական Միութեան դաշտապնացութիւնը որ տեղի պիտի ունենար 10 Յուլիսին:

ՅՕԻՇԱՏՈՒՏ

Ֆ. Հ. ԿԱՊՈՑ ԽԱՉԻ ԱՆԿԷՆԻ Մասնաճիւղի Ընդհ. ժողովը՝ կարեւոր օրակարգով, *9 Յուլիս, Շաբաթ, ժամը ճիշդ 9ին, սովորական հաւաքատեղին: Անդամներու ներկայութիւնը պարտաւորիչ է:*

ԻՍԻ-ԼԷ-ՄՈՒԼԻՆՈՑԻ «Արմէնեան» ղպրոցի վարչութիւնը խառն ժողովի կը հրաւիրէ կապոյտ Խաչի, Հ. Ը. Դ. «Զաւարեան» Կոմիտէի, Հայ Կամաւորներու եւ Մարտիկներու Միութեան եւ Իսիի Հայ Երիտասարդաց Միութեան բոլոր անդամները, 9 Յուլիս, Շաբաթ երեկոյ ժամը 8.30ին «Արմէնեան» սրահին մէջ: Օրակարգ՝ Սրահի ընդարձակման եւ բեմի շինութեան հարց:

ՏԱՐՕՆ - ՏՈՒՐՈՒԲԵՐԱՆԻ Հայրենակցական Միութեան Ֆրանսայի չրջանի 6րդ. Պատգ. ժողովը կը գումարուի յառաջիկայ Օգոստոս 13ին, Շաբաթ առաւօտ, Տէսինի մէջ: Օրակարգի նիւթերը առանձին չրջաբերականով պիտի հաղորդուին մասնակցող մասնաճիւղերուն:

ՀԱՑ ԿԱՄԱՒՈՐՆԵՐՈՒ ԵՒ ՄԱՐՏԻԿՆԵՐՈՒ Միութիւնը ընկերահաւաքական ժողովի կը հրաւիրէ Անիէդի եւ Քոլոնպլ զինակից ընկերները ու համակիրները 10 Յուլիս, կիրակի ժամը 3ին Անիէդ, Զաքարի սըրճարանը, 34 Villa Rouveyvolle: Ներկայ կ'ըլլայ Գնդ. Բաղդասարեան որ պիտի խօսի Միութեան նպատակներու եւ օրուան հարցերու շուրջ:

Զ. Ո. Մ. ՓԱՐԻԶԻ Մ. ճիւղի Ընդհ. ժողովը 11 Յուլիս, երկուշաբթի երեկոյեան ժամը 9ին, Քատէի սրճարանին վերնայարկը: Կարեւոր օրակարգ:

Պազար ու Ջոյեան, Անթառամ Միրզոյան, եւ գաւակները, Պազար Տէր Գրիգորեան, Յովսէփ Բարսեղեան, Տիկին Աճէյան Պազարեան եւ ազգականները սրտի խորունկ կսկիծով կը ծանուցանեն մահը

ՕՀԱՆ ՄԻՐԶՈՅԵԱՆԻ

որ տեղի ունեցաւ Յուլիս 5ին, ժամը 8.40ին Ռիվիէ հիւանդանոցին մէջ եւ թաղումը կատարուեցաւ Յուլիս 8ին Թիէի գերեզմանատունը:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Մարսէյլի Հայ Մշակութ. Միութեան Վարչութիւնը իր եւ բոլոր անդամներու կողմէ խորին ցաւակցութիւնները կը յայտնէ Միութեան անդամներէն Պ. Կ. Փոլատեանի եւ իր ալարադաններուն, իր մօր՝ Տիկ ՍԻՐԱՆՈՒՇ ՓՈԼԱՏԵԱՆԻ դառնադէտ մահուան առթիւ:

REXY CINEMA (Lyon)

8 Յուլիս — 14 Յուլիս

Cours Lafayette, angle Rue Garibal.

Ամէն օր ցերեկները **2.30**ին, իրիկուններ **20.30**ին:

Agustapag dans
«Coup.de.Vent»
Gustav-Froriche dans
«L'Aventure»

Գիներ **3, 5** եւ **7** ֆրանք

Ներկայ յայտարարութիւնը բերողին կը տրուի 2 մուտքի տոմսակ զեղչուած գինով:

ՐԱՖՖԻ

Փարիզահայերու միակ վայելուչ ճաշարանը

Տնօրինութեամբ Մ. Գ. ՄԻՐԻՃԱՆԵԱՆԻ

8, RUE MAUBEUGE Paris (9) *Մէթրօ* Cadet et le Peletier

Հոն պիտի գտնէք՝ արեւելեան եւ եւրոպական կերակուրներու ճաշուստ ճաշացուցակ մը, անմրցելի ժաքրութիւն եւ անձերի սպասարկութիւն, գոլսական օդի՝ եւ ջազիկով ջաջարանտիրոջ անվիճելի փորձառութեամբ: Ամէն տեսակ ճաշացոյներու համար կը տրամադրուի սրահ ամենաժամանակաւոր ժամադրութիւններու գիներով:

Ճաշը եւ կիրակի երեկոները արեւելեան նուագ:



ՐԱՔԸ ՏԻՒԶ

Ջուտ խաղողէ քաշուած եւ անիսոնով պատրաստուած ճշմարիտ արեւելեան օղին է ՐԱՔԸ ՏԻՒԶԸ: Ջգուշացէք արեւելեական օղիներէ ձեր ստամոքսը կ'ալլէ գիշերները ջուր կը խմէք եւ կը վնասէ ձեր առողջութեան: Խմեցէք միայն ՐԱՔԸ ՏԻՒԶԸ որուն անուրանալի, կազդուրիչ եւ ախորժաբեր, պատրաստուած զուտ չամիչէ ին-Ջով: Հայ աւանդական սեղանին զարդ:

Dalakupeian 8 Rue Suffren
Dépôt: 7 Rue de la Paix, Marseille. Tél. Dragon 70—89



Alimentation „TREVISE"

Իր անմահական «Moka» սուրճով

Café "HAREM„

5 ԱՌ ՀԱՐԻՒՐ ԲՈՑԱՒՈՒԿ ՉՔԼՉ

Ճոխ մթերանոց արեւելեան եւ արեւմտեան ընտիր ընդհէնեղէններու,

— Որ՝ ձեր պրձակուրդի օրերուն քակ չի մսանար ձեզ, գոհացնելով ձեր բոլոր փափաքները, որ սասպի տակն ալ որ գտնուի ք...

ՄԵՆԱՒԱՆԱԿ ԵՒ ՓՈՔՐԱԳԱՆԱԿ

Livraison à domicile

Tél. Taitbout 40—63

30, Rue de Trévise Paris (9) Metro Cadet



"ՇԻՐԱԿ"

Արեւելքի միակ իսկական օղին է: Անզուգական, անմրցելի: Ախորժաբեր: Առաջնակարգ զօրացուցիչ: Պատրաստուած զուտ չամիչէ ին-Ջով: Հայ աւանդական սեղանին զարդ:

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՋՈՑԱՐԱՆ

Համեղ, անդրարար արեւելեան կերակուրներու սիրահար էք, պիտի կարօտնալու պէտք չունիք, մտէք հայկական կեդրոնի մէջ

ՍԱՐԵԱՆԻՆ *ՃՈՑԱՐԱՆ «ԹՈՔԱԹԼԻ»Ն*

5, Rue du Baignoir, 5: Marseille

ու պիտի գտնէք զուարթ եւ բնկերական շրջանակ մը եւ ճաշեր խոստ մատչելի գիներով:

ՐԱՔԸ ՏԻՒԶ ճոխ աղանդերներով:

ԿԱՊՈՑՆԵՐ ՌՈՒՍԱՍՏԱՆ ՂՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ունինք մեծ մթերք անդիս կտաւներ եւ չափազանց կերպասներ՝ այր մարդոց վերարկուի, հագուստի, կանանց ռոպերու եւ հագուստներու համար: Առաջնակարգ կօշիկներ, ճերմակեղէններ եւ նպարեղէններ: Ամէնէրվուստ գրի մանքենայ: Ջափաւոր գիներ:

Դիմել՝ American Lloyd, Paris (9). 7 rue Auber

Tél. Opéra 67-77



Tailleur de ST. BERNARD

Pour Hommes et Dames

H. GULBOLIAN

64 rue Affre կամ 8 rue Cavé, Paris(18)

Մասնաճիւղ՝ 2 rue de la Charbonnière

Մէթրօ La Chapelle եւ Barbès Rochechouart

Թելեֆոն Montmartre 69—70

ՈՐՇԱԴՐՈՒԹԻՒՆ.— Կարեւոր նուէրներ մէկ ձեռք հագուստի համար մինչեւ Յուլիս 14:

ՄՏԱՑՆՔ ՆՈՐ ՅԻՐԱՆՈՒԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՄԱՌՆԱՑԻՆ ԿԵՐՊԱՄՆԵՐ.

ՄԵՐ ԳԻՆԵՐԸ.— Հագուստ (երկու փորձով) ակնակալ 350—450 ֆր.էն: Նուէր կը տրուի մէկ ֆանթէզիի տարատ կամ կոլֆ 450 ֆր.է վեր հագուստներու համար, 3 փորձ, նուէր կը տրուի Հայկուհի Կիւլպէնկեանի արհեստանոցին մէջ պատրաստուած, գարնան յատուկ, արժէքաւոր մուշտակ վզնոց մը: Ներկայանալ «ցաուագրի կարօնով» վերոյիշեալ նուէրները չեն օգտուիր մինչեւ 20 տարեկան այն երիտասարդները եւ երիտասարդուհիները որոնք չեն ուզեր խօսիլ ցաքենեւ չեն կրնար գրել իրենց անունները ժայրենի լեզուով:

Բաց է կիրակի մինչեւ կէսօր

Le Gérant : H. STEPHAN

17, Rue Damesme, PARIS (13) A. DER (AGOPIAN)

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՑԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
17, Rue Damesme, PARIS (13e)

Téléphone : Glacière 15 - 70
Chèque Postal Paris 1678 - 63
(ԵՐԹԵՒԵԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ —

	ՏԱՐԵԿԱՆ	ՎԵՑԱՄՍԵԱՑ	ԵՌԱՄՍԵԱՑ
Ֆրանսա եւ Գաղութներ	150 ֆրանք	75 ֆրանք	40 ֆր.
Անգլիա եւ Իտալիա	265 ֆրանք	140 ֆրանք	
Ուրիշ երկիրներ	215 ֆրանք	110 ֆրանք	

ԿԻՐԱԿԻ
10
ՅՈՒԼԻՍ
DIMANCHE
10 JUILLET
1938

ԺԹ ՏԱՐԻ — 14e Année No. 3779

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ՓՆԱՑՈՂՆԵՐՆ ԱԼ ԱՐԹՆՑԱՆ, ԵՒ ՍԱԿԱՅՆ...

Թէեւ չատ ուշ, բայց, վե՛րջապէս, քնացողներն ալ արթնցան: Շփելով իրենց քնաթաթախ աչքերը, անոնք ալ սկսեր են լո՛ւր պահանջել Ա. Հայաստանէն ու Էջմիածինէն :

Երկու օր առաջ յիշեցինք Եգիպտոսի ոամկավար օրկանին յունիս 28ին խմբագրականը, ուր այս պահանջը կը դրուի իբրեւ իրաւունք :

— « Հաւատարմութեան եւ օժանդակութեան մեր այդ պարտքը ինքնաբերաբար ու անշահախնդրօրէն կատարած ըլլալով՝ *կը խօսինք այսօր մեր իրաւունքին* վրայ. իրաւո՛ւնք գիտնալու՝ թէ ի՛նչ է Ա. Հայաստանի այսօրուան վիճակը »:

Հաւատած մը եւս, պատկերացնելու համար այն անճառ վիճակը որուն մատնուած են ոամկավարները .

— « Եթէ նոյնիսկ պատահած չըլլային այն բռնութիւնքն ու խորհրդաւոր դէպքերը որոնք Աղասի խանձարուրէն մահով սկսան եւ հասան Ամենայն Հայոց Կաթողիկոսին վախճանումին, մենք դարձեալ պիտի ուզէինք նամբորդի, ականատեսի ստոյգ լուրեր ունենալ մեր հայրենիքէն, ինչպէս պարբերաբար ունեցած ենք ասկէ առաջ՝ բանիցս մարդ դրկելով ուղղակի մեր կողմէն եւ մեր տեսնել ու դատել կրցող անդամներուն միջոցաւ այդ տեղեկութիւնները խղելով: Մինչդեռ հիմա, աւելի քան երկու տարիէ իվեր, ստիպուած ենք *լսել* մէկ կողմէ երեւանի թերթերուն եւ միւս կողմէ Դաշնակցական մամուլին յանախ իրարու հակասող լուրերը, ստուգել ստուգելու ոչ մէկը եւ ոչ միւսը»:

Սակայն կրնանք վստահապէս ըսել որ կասկածելի են թէ՛ մէկ եւ թէ՛ միւս կողմին ըսածն ու գրածը»:

Հարցը այն չէ որ մեր պատասխանատուները կը հաւատա՞ն թէ ոչ, երկու տարիէ ի վեր հաղորդուած, դանազան միջոցներով հաստատուած լուրերուն :

Անոնք մտանաւոր ճիգ մը մատնեցին մեզմացնելու նոյնիսկ այն քաղաքական մանրամասնութիւնները որ մամուլին հաղորդուեցան իրենց իսկ չըլլանակէն, «Լիբանանցի երիտասարդի» մը բերնով: Տեղեկութիւններ որոնց մեծ մասը ամխներ առաջ հրատարակուած էր Դաշնակցական մամուլին մէջ, միայն մանրամասնութեանց մէջ տարբերելով :

Անոնք իրենց յատուկ մեկնութիւններ ալ տուին խմբական դնդակահարութեանց, պատասխանատու համարելով բուն իսկ երեւանցիները, եւ ոչ թէ Թիֆլիսն ու Մոսկուան, իբրեւ վերկիչ ներկայացնելով Անաստաս Միկոյեանը, մինչդեռ «Ա. Հայաստան»ը զայն կը պանծացնէր իբրեւ յեղափոխութեան բոցավառ սուրը որ կոտրեց թաւիեց, «մերկացրեց, ոչնչացրեց», փոչիացո՛ւց «ժողովուրդի թշնամիները»...

Այս պարագաները չեն որ կը հետաքրքրեն մեզ, այլ ոամկավարներու եւ առ հասարակ «Հայաստանասէր»ներու մեատասանեցորդ ժամու իրարանցումը,— այն ալ էջմիածնի չարաչուք լուռ թենէն վերջը: Ամենայն Հայոց կաթողիկոսին մահէն — սպանութենէն — իննսուն օր վերջը: Այն ալ անչուշտ անոր համար որ, երուսաղէմի պատրիարքն ալ իրար անցեր է, եւ հետագիրներ կը զարնէ, պատասխան սպասելով էջմիածնի պատերէն ...

Աբթննալով իրենց խոր քունէն, ոամկավարները նորէն չեն հաւատար թէ Տօրէն Ա. սպաննուած է: Քա՛ւ լիցի:

— «Չհաւատացինք , եւ այսօր ո՛ւ եւ է նոր տեղեկութիւն չունինք որ մեզի ստիպէ խորհիլ թէ կրնայ ճիշդ ըլլալ ըսուածը: Բայց քուն իսկ այդ պակասը տեղեկութիւններու, այդ յամառ լռութիւնը էջմիածնէն ու Ա. Հայաստանէն ընդհանրապէս՝ մտահոգիչ կը գտնենք, ո՛չ թէ խեղդումին հաւատալու տեսակէտով, այլ ա՛յն խեղդիչ մթնոլորտին՝ որ կայ եւ կը շարունակէ տիրել մեր երկրին մէջ »:

Դուք դատեցէք խորութիւնը՝ այս հոգեկան թշուառութեան, որ պարզապէս հետեւանք է կուսակցական կիրքի:

Մարդոց գլխուն մէջ գոմուեր է թէ «արտասահմանի Դաշնակ թերթերն ու գործիչները աւելի կ՝օգուտին՝ աւելի եւս չբաշուք դէպքեր հնարելու համար »:

Կ՝ըմբռնէք, անշուշտ, իմաստը այս անճոռնի, այս գարշելի հոգեբանութեան :

Աւելի քան 40 գիւղեր գնդակահարուած, փչրուած կամ «անհետացած» են — կարելի է համրել անուններով — կաթողիկոսն ալ խեղդուած է, ինչպէս եւ երկու եպիսկոպոսներ գնդակահարուած են: Ամխներէ ի վեր կը դրուի այս դէպքերու մասին: Փոխանակ մատը մոխիրը թաթխելու եւ գոնէ հինգ սպանութեան կամ գնդակահարութեան դէպք ստուգելու, մարդիկ իրար կը մխիթարեն զանոնք վերագրելով Դաշնակցական յերիւրանքներու : — Ի՛նչ կ՝ուզէ ըլլայ, Դաշնակցութեան բանը չըլլայ :

Անշուշտ արթնցած են հիմա, եթէ ոչ խղճով, գոնէ չիղերով : կը զգան թէ «բաներ մը» պատահած են: Եւ լուր կը մուրան : Որ մէ՞,— Փարիզի խորհրդային դեսպանատունէն, միեւնոյն ատեն արտօնութիւն խնդրելով պատուիրակութիւն մը ղրկելու :

« Երանի՛ հոգիով աղքատներուն», պիտի ըսէր բարեպաշտ ընթերցողը :

Բայց ոչի՛նչ: Թող այդ ալ փորձեն: Թող զարնեն բոլոր դուռները: Թող շարժին եւ լոյս մըն ալ իրենք ճարեն, որովհետեւ, ինչ որ տեղի կ՝ունենայ Հայաստանի մէջ, երկու տարիէ իվեր, իսկապէս աննախընթաց է եւ զարհուրելի, — կրնայինք ըսել նոյն իսկ դժոխային, կշռելով բառին ամբողջ խորութիւնը:

Մտանաւանդ որ, հաղորդակցութեան վերջին թելն ալ խզուած է մէկ ամխէ ի վեր.— այլեւս չենք ստանար «Ա. Հայաստան»ը :

Շ.

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ՆՈՐԷՆ ՅԱՆՁՆ ԴԷՊՔԵՐ ՊԱՂԵՍՏԻՆԻ ՄԷՋ

Արաբները ընդհ. գործադուլ կը հռչակեն

Ուրբաթ օր երուսաղէմի մէջ ռումբ մը պայթած ըլլալով, անգլիացի վնասուորներ դիրք բռնեցին սուինաուոր հրացաններով եւ ձեռնամուխ եղան: Ռումբը արձակուած էր եաֆայի դրան առջեւ, Դաւիթի Աշտարակին մօտ, Արաբներով լեցուած հանրակառքի մը վրայ : Պայթումէն սպաննուեցան չորս Ա. րաբներ, իսկ վիրաւորուեցան 18 հոգի, մէկը ըլլալով անգլիացի պինուոր մը: Հանրակառքը չարդուփշուր եղաւ եւ կառորները քանի մը հարիւր եարտա անդին նետուեցան: Ոստիկանութիւնը ձերբակալեց երեք Հրեաներ եւ հրէուհի մը, իբրեւ հեղինակները այս ահաբեկման :

Դէպքը մեծ յուզում պատճառեց քաղաքին մէջ եւ բոլոր արաբական խանութները փակուեցան: Քիչ մը վերջը Հրեաներն ալ փակեցին իրենց խանութները, վախնալով փոխվրէժէ: Ընդհ. գործադուլը, որ հռչակուած էր եաֆայի եւ Հայֆայի դէպքերէն վերջը, արագօրէն կը ծաւալի: Փոխադրութեան բոլոր սպասարկութիւնները դադրած են, եւ բազմաթիւ խանութներ փակուած գրեթէ բոլոր քաղաքներուն մէջ: Աչքէն օր հազարաւոր արաբ բանթռողներ կը հաւաքուին մզկիթներուն առջեւ, իսկ անգլիացի նաւաստիները միշտ կը գրաւեն դանոնք: Անգլիական վիթխարի զրահաւոր մը Հայֆա հասած ըլլալով, նոր նաւաստիներ ցամաք հանուեցան: Թէլ - Ավիվի հրէական թաղերը պաշտպանութեան տակ առնուած են սուուարաթիւ զինուորներով:

Անգրյորդանանի Արաբները իրենց համակրանքը յայտնեցին Պաղեստինի ապստամբներուն, ցոյցեր կատարելով Ամանի փողոցներուն մէջ: Այս առթիւ բուռն ճառեր խօսեցան էմիր Ապտուլլահի պալատին եւ բրիտանական պատուիրակի պաշտօնատան առջեւ: Թերթերը կը դրեն թէ մեծ քանակութեամբ զէնք եւ ռազմանիւթ կը փոխադրուի Անգրյորդանանէն Պաղեստին :

Պաղեստինի հրէական գործակալութեան նախագահը կոչ մը ուղղեց Հրեաներուն, յորդորելով պահել իրենց պաղարիւնը եւ զգուշանալ վրէժխնդրական արարքներէ :

Կարգ մը թերթեր կը գրեն թէ Պաղեստինի այս դէպքերուն մէջ մատ ունին Իտալիա եւ Գերմանիա: Անգլիոյ երեսփ. ժողովին մէջ աշխատաւորական մը հարցումներ ուղղեց անցեալ օր, իմանալու համար թէ ո՛վ կը ճարէ այս դաւադրութեանց դրամները :

Չի՛սպրեկի դժգոհ Իտալիոյ քանած դիւլեն

Լանտոնի թերթերը կը գրեն թէ անգլեւիտալական համաձայնութենէն ի վեր (16 ապրիլ) առաջին անգամ ըլլալով, Պ. Չեմպըրլէն կծու ակնարկներ ուղղած է Մուսոլինիի, սպանիական գործերու ձգձգման առթիւ: Նոյն ապրիւրին համաձայն, Անգլիոյ վարչապետը ինքն ալ սկսեր է կասկածիլ թէ համաձայնութիւնը կրնայ ջուրը իյնալ, եթէ այսպէս չարունակուի :

Անգլիոյ վարչապետը աւելի քան երբեք անհրաժեշտ կը դտնէ որ սպանիական խնդիրը վերջնայ, որպէսզի անգլեւիտալական համաձայնութիւնը գործադրելի դառնայ: Արդ, Իտալիա կը յայտարարէ թէ կատարած է իր յանձնառութիւնները, զադրեցնելով հականգլիական քարոզութիւնները, կրճատելով Լիբիոյ պահակազօրքը եւ այլեւս օգնութիւն ղրկել չի տար Զօր. Ֆրանքոյի : Բայց եւ այնպէս, Անգլիոյ վարչապետը գոհ չէ եւ միշտ նեղացուցիչ հարցումներու կ՝ենթարկուի երեսփ. ժողովին մէջ :

Հռոմի անգլիական դեսպանը առջի օր տեսակցութիւն մը ունեցաւ Իտալիոյ արտաքին նախարարին հետ: Երկրորդ տեսակցութիւն մը պիտի ունենայ երկուշաբթի օր: Քաղաքական շրջանակներու մէջ կը կարծեն թէ Անգլիոյ վարչապետը գերագոյն փորձեր կը կատարէ, ելք մը գտնելու համար :

Քաղաքական տարագիրներու խնդիրը

Էվիանի ժողովին երրորդ օրուան նիստին մէջ, ամերիկեան պատուիրակը յայտարարեց թէ իր կառավարութիւնը պատրաստ է 27.000 տարագիրներ ընդունելու Մեծն Գերմանիայէն (Գերմանիա եւ Աւստրիա), յաւելիկայ տարուան ընթացքին: (Մինչեւ յունիս 30 ընդունած է 20.000 հոգի, իսկ նախընթաց տարի՝ 13.000) : Իրականին մէջ կաթիլ մը ջուր է այս, քանի որ 300.000 Հրեաներ կ՝ուզեն հեռանալ Գերմանիայէն, բայց ոչ մէկ երկիր կ՝ընդունի :

Աորհրդաժողովին դիմած են զանազան պատուիրակութիւններ, տարածքերու դառը պաշտպանելու համար: Ծուշպիր մը կ՝առաջարկէ խնդիրը չսահմանափակել միայն Գերմանիոյ եւ Աւստրիոյ տարագիրներով, այլ մտածել նաեւ այն տարագիրներու մասին որ զրկուած են միջազգային որեւէ պաշտպանութենէ (Իտալացիներ, Լեհեր, Հունգարացիներ, Ցոյներ, Հայկ՛ներ եւն.) : Ուրիշ յուշագիր մը կ՝առաջարկէ բողոքել Գերմանիոյ հակահրէական հալածանքներուն դէմ : Երրորդ մը կ՝առաջարկէ միջազգային ծրագիր մը մշակել, Հրեաներու տեղաւորման համար եւ աւելի լայն չափով Հրեաներ ընդունիլ Պաղեստինի մէջ :

Աորհրդաժողովը կազմած է բազմաթիւ յանձնախումբեր, որոնց մէկը չորս 22 ընկերակցութեանց ներկայացուցիչները: Ցանձնախումբերէն մէկուն նախագահն է Պ. Հանսոն, Նանսէնեան գրասենեակին վերատեսուչը, որուն փորձառութենէն կ՝ուզեն օգտուիլ պետութիւնները :

ՆիՍի մէջ ՁերբԱկալուԵցԱւ թժիշկ մը, Տօքթ. Ֆառօ, որ ամբաստանուած է թէ կենք եւ ռազմանիւթ կը ճարէր Գաղանի Կոմիտէին կամ «Սուրբ Ատեաններուն» :

ՕՏԱՐԱՁԳԻՆԵՐՈՒ հպատակութեան գործողութիւնները խստացնելու համար, փարիզի առեւտրական սենեակը քննեց ծերակոյտին ներկայացուած օրինագիծ մը: Այս առթիւ բազմանք յայտնեց որ հպատակութեան շնորհը տրուի մեծ զգուշութեամբ եւ նկատի առնելով առեւտրական սենեակներու վկայութիւնները: Մէջի առեւտրական սենեակին ալ նոյն բազմանքներն յայտնեց , չարք պայմաններ բանաձեւելով :

ՕՐԸ ՕՐԻՆ

ՎԱՐՈՒՆԳԻ ՄԱՍԻՆ

« *Նոր Օր*»ի էրոնիկագիրը փառաբանական մը գրած էր, անցեալները, վարունգի մասին, վկայութեան կանչելով պատմագիտական աշխատութիւնը մեր համակրելի բժիշկին՝ Տոքթ. Գ. Գալուստեանի, որ ի մէջ այլոց կը հաստատէր թէ Թիմուրլէնկ կը խնճթեցնար վարունգին վրայ: Այդպէս եւ Ֆաթիհ Մէհմէտ :

Բայց միայն Թիմուր Լէ՞նկ կամ Ֆաթիհ Մէհմէ՞տ:

Երբայեցիները, երբ Հրէաստան կը վերադառնային եգիպտոսէն, վարունգ կ՝երազէին անապատին մէջ՝ ծարաւ անցընելու համար: Յետոյ, երբ երկիր մտան, վարունգի անձայրածիր արտեր մշակեցին, արտերուն մէջն ալ խրտուիլակներ տնկեցին՝ հեռու պահելու համար գողերը :

Օգոստոս կայսրն ալ, ինչպէս եւ Տիբերիոսը, կը խնճթեցնային վարունգին համար, զոր կը կրծէին ճաշու վրայ թէ ճաշէ դուրս :

Վարունգը իրաւունք ունի, ուրեմն, երբ կը պաթծենայ, ինչպէս կը պատմէ Առակախօսը. «Վարունկն կոչեցեալ պտուղ պարտիզի՝ մեծարգոյ էան զայլսն կարծէր գանձնէ վասն կանխութեանն» : Սեխը վիճաբանութեան բռնուեցաւ վարունգին հետ եւ ըսաւ. — « Եթէ պատուիս՝ զի մերձ ոչ իցեմ, եւ եթէ ոչ այնպէս սակայն անպատուիս՝ դեղնութեամբ գարշելի եղեալ »:

Որեան պարծենկոտ, ցոյնիան վախկոտ է վարունգը: Հեղինակ մը կը վրկայէ թէ վարունգը կը սոսկայ... երկնչի որոտումէն, — երբ ամպեր կը պայթին, վախէն կը ծռի մահիկի պէս: կը վախնայ նաեւ ձէթէն,— շան պոչի պէս կը ծռի՝ երբ վրան ձէթ թափի: Ընդհակառակն շատ կը սիրէ ջուրը : Վարունգին մօտ, — 2 — 3 մատ հեռու, ամանով ջուր դրէք եւ վարունգը կ՝երկարի, կարծես ջուր խմելու եղելէր:

Վաստակոց գիրքը «Կօդայ» կ՝անուանէ վարունգը (մեծ տեսակը), զոր կը յանձնարարէ հասակովը դնել երեխայինի օրօրոցին մէջ՝ եթէ ջերմ ունի, — շուտ կ՝անցցնի ջերմը :

Քանի որ տեղը եկաւ, ըսեմ նաեւ որ վարունգը ոչ միայն կոկորդի ծարաւ կ՝անցընէ, այլեւ ... այն ծարաւը, զոր առաջին անգամ զգացին Ադամ եւ Եւա :

Այս պատճառով հին յոյն բժիշկները վարունգ կը կերցնէին ... կտաւ հիւսող այրի կիներուն, որոնք ատանկ ծարաւներ կ՝ունենան եղեր: Ուրիշ առասելութիւն մը,— վարունգի ջուրով *մչկլմը* սեանչելի դեղ է մորթային բորբոքումի եւ կեռիի: Կ՝ըսեն թէ կը ծառայէ նաեւ փափկացնելու մորթը:

Իսկ ո՞վ կրնայ մրցիլ վարունգին հետ իբրեւ զովացուցիչ, *ճաճիկ* ըլլայ կրծելիք: Վաստակոց գիրքը կ՝ըսէ.—

« Թէ ուզես որ յամէն ժամեռն ունենաս (վարունգ), ի կարաս՝ ուր սպիտակ գինի լինի կամ անոյշ բացախ՝ կախեա գինեն, այնպէս որ գինին չհասցնի, եւ ի վերայ ծեփեա, երբ ուզես՝ բաց, թազէ գտանիս»:

Բայց ճեզի զարմանալի բան մը պիտի ըսեմ: Հին ատեն, Հռովմայեցիները եւ ցոյները կը կարծէին թէ վարունգը խելացութիւն կուտայ: Մեր Լմիտռվլաթն իսկ կ՝ըսէ թէ *«խոմար, հայերէն խաւարտ, օգտէ սէրսէմին»*: Եւ խելացի բան մը կը խորհրդածէր վարունգը: Մինչդեռ հիմա, ընդհակառակն, վարունգ կ՝անուանեն ապուշները :

Արդեօք վարո՞ւնգը ապուշցու թէ ... արդի մարդկութիւնը :

ԱՐԱԶ

ՖՐԱՆՍԱՑԻ ԵՒ ԹՈՒՐՔԻՈՅ ՄԻՋԵՒ ԿՆՔՈՒԱԾ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԵԱՆՑ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆԵՐԸ

Ինչպէս հաղորդած էինք, Յուլիս 3ին Անտիոքի մէջ կնքուած գինուորական համաձայնութենէն վերջը, Յուլիս 4ին Էնկիւրիի մէջ ստորագրուեցաւ Ֆրանքեւթիւրք բարեկամութեան դաշնագիրը, Սանճաքի վերաբերեալ յայտարարութեամբ :

Պոլսոյ թերթերէն կ՝արտատպենք դաշնագրին եւ յայտարարութեան մանրամասնութիւնները :—

ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ԴԱՇՆԱԳԻՐ

ՅՕԴ. 1.— Մտորագիր բարձր կողմերը յանձնառու կ՝ըլլան թէ պիտի չմասնակցին քաղաքական կամ տնտեսական ո եւ է համաձայնագրի եւ ո եւ է խմբաւորումի մը որ իրենցմէ մէկուն դէմ ուղղուած է :

ՅՕԴ. 2.— Մտորագիր բարձր կողմերէն մէկը, հակառակ իր խաղաղասէր դիրքին մէկ կամ աւելի պետութեանց կողմէ եթէ յարձակումի ենթարկուի , ինչ կացութեան մէջ ալ գտնուի, ոչ մէկ օգնութիւն պիտի կատարէ յարձակողին կամ յարձակողներուն :

ՅՕԴ. 3.— Մտորագիր բարձր կողմերը, որոնք նոյն չափով կապուած են ընդհ. խաղաղութեան եւ Արեւելեան Միջերկրականի ապահովութեան պահպանման գործին, ի դէպ այն կացութեան, որ վերինք կը մղէ գործադրել այն յանձնառութիւնները զորս ընդունած են 29 մայիս 937 թուականի Սանճաքի ամբողջականութիւնը երաշխաւորելու մասին, իրարու հետ խորհրդակցութիւն պիտի կատարեն, իրենց այս յանձնառութեանց կատարման անհրաժեշտ դիւրութիւնները ընծայելու համար :

ՅՕԴ. 4.— Ընդհ. իրաւաբական դաշնագիրը, այս համաձայնագրին ստորագրութեան պահուն ինչպէս որ կը սկսի զօրու ըլլալ երկու ստորագիր բարձր կողմերուն միջեւ, նոյնպէս ի զօրու պիտի մնայ անոր գոյութեանը ընթացքին՝ երկու կողմերու միջեւ վէճ կամ անհամաձայնութիւն ծագած պարագային լուծման ձեւերը ճշդելու համար :

ՅՕԴ. 5.— Այս դաշնագիրը, ստորագիր բարձր կողմերու միջեւ ծագելիք կարգ մը վէճերու մասին չի հակասեր այն տրամադրութեանց որոնք մտանաւոր լուծումի ձեւ մը կը ճշդեն :

ՅՕԴ. 6.— Այս դաշնագիրը պիտի չմեկնաբանուի այնպիսի ձեւով մը թէ Ազգաժողովի վիճակած դերը կը սահմանափակէ կամ Ազգաժողովի ուխտին երկու կողմերուն պարտադրած պարտականութիւններուն կը վնասէ :

ՅՕԴ. 7.— Այս դաշնագիրը պիտի վաւերացուի եւ վաւերացեալ պատճէնները կարելի եղածին չափ շուտ պիտի փոխանակուին եւ փոխանակումէն անմիջապէս վերջ պիտի գործադրուին: Իր պայմանաժամը 10 տարի պիտի ըլլայ, եւ այս ժամանակամիջոցին լրանալէն 6 ամիս առաջ եթէ չծնուի, ինքնաբերաբար 5 տարուան համար վերանորոգուած պիտի համարուի :

ՄԻԱՑԵԱԼ ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

« Թուրքիոյ եւ Ֆրանսայի կառավարութիւնները, Թուրքիոյ եւ Ֆրանսայի միջեւ գոյութիւն ունեցող 3 փետրուար 930 թուականի բարեկամութեան, փո -

(Լուրերու շարունակութիւնը կարդայ Դ. էջ)

ՍՏԱՄԲՈՒԼԻ ՀԵՐՔԱԿԱԼՆ

The Bunch of Stamboul

By DENNIS WHEATLEY Գրեց՝ ՏԵՆՆԻՍ ՈՒԻՉԼԻ

Trans : J. M. Թարգմ. Ժ. Ս.

— Մեր, ասելով պետք է, մեր ընկերները ամբողջ ճանապարհին ոչ մի խոսք չեմ փոխանակել, որովհետև ամեն մեկս մեր մտքերով էինք զբաղված, մանավանդ որ մենք գիտեինք, որ մեզ համար վտանգավոր ժամանակներ էին գալու։ Ես ինքս ինձ համար ոչ մի վախ չունեի, բայց ինձ համար շատ ավելի դժվար էր մտածել այն մասին, թե ինչ կլինի իմ հարազատների հետ, եթե ես չվերադառնամ։ Ես գիտեի, որ Ռուսաստանում ես ոչ մի ազգական չունեմ, որ կարողանար ինձ օգնել, եթե ես ինչ-որ դժբախտության մեջ ընկնեի։ Ես գիտեի, որ ինձ համար ոչ մի ուրիշ ելք չկա, եթե ոչ ինքս ինձ սպանել։

Ես ուզում էի, որ Մերին ինձ հետ չգար, բայց նա ինձ հետ գալու համար այնքան էր պնդում, որ ես ստիպված եղա համաձայնել։ Ես գիտեի, որ նա ինձ համար մեծ զոհողություն է անում, որովհետև նա ինձ շատ էր սիրում։ Ես գիտեի, որ նա ինձ հետ գալով՝ ինքն իրեն մեծ վտանգի է ենթարկում, բայց ես գիտեի նաև, որ նա ինձ հետ գալով՝ ինքն իրեն ավելի ապահով է զգում, քան եթե ինքը մնար Կոստանդնուպոլսում։

Ես ուզում էի, որ Մերին ինձ հետ չգար, բայց նա ինձ հետ գալու համար այնքան էր պնդում, որ ես ստիպված եղա համաձայնել։ Ես գիտեի, որ նա ինձ համար մեծ զոհողություն է անում, որովհետև նա ինձ շատ էր սիրում։ Ես գիտեի, որ նա ինձ հետ գալով՝ ինքն իրեն ավելի ապահով է զգում, քան եթե ինքը մնար Կոստանդնուպոլսում։

ԶՐԿԱԲԵՐԻՆ ՅՈՒՇԵՐԸ

ՆՈՒՐՕՏԻ ՂԱԶԱՐԵՑԻ

(Ես ոչ միայն չեմ մոռացել, այլև միշտ հիշում եմ ամեն մանրամասնություն, որովհետև այդ օրերին ես ապրում էի ինձ համար ամենաերջանիկ ժամանակները։ Ես ապրում էի Ալեքսանդրապոլում, որտեղ ծնվել էի։ Ես ունեի ընտանիք, ընկերներ, ծանոթներ, որոնք ինձ սիրում էին, ես էլ սիրում էի նրանց։ Ես ունեի հայրենի քաղաք, որի փողոցներում ես ամեն քար գիտեի, ամեն ծառ ճանաչում էի։ Ես ունեի հայրենի լեզու, որով խոսում էի ամենքի հետ։ Ես ունեի հայրենի հող, որի վրա ոտքերս ամուր կանգնած էին։ Ես ունեի հայրենի երկինք, որի տակ ազատ շնչում էի։ Ես ունեի հայրենի ամառ, որ ինձ համար ամենագեղեցիկ եղանակն էր։ Ես ունեի հայրենի ձմեռ, որ ինձ համար ամենաուրախալի եղանակն էր։ Ես ունեի հայրենի գարուն, որ ինձ համար ամենասիրելի եղանակն էր։ Ես ունեի հայրենի աշուն, որ ինձ համար ամենահանգիստ եղանակն էր։ Ես ունեի հայրենի ամեն ինչ, որ ինձ համար ամենաթանկն էր։ Ես ունեի հայրենի ամեն ինչ, որ ինձ համար ամենասիրելին էր։ Ես ունեի հայրենի ամեն ինչ, որ ինձ համար ամենաերջանիկն էր։ Ես ունեի հայրենի ամեն ինչ, որ ինձ համար ամենաանմոռանալին էր։ Ես ունեի հայրենի ամեն ինչ, որ ինձ համար ամենաանգ

խաղարձ հասկացողութեան եւ իրաւարարութեան դաշնագրին փոխարէն այսօր ստորագրուած բարեկամական դաշնագիրը նկատի ունենալով,, այս միացեալ յայտարարութեամբ հետեւեալ խնդիրներու մասին համաձայնութեան յանգած են :—

1.— Գործադրել 1937 մայիս 29ին ընդունուած Ալեքսանդրէթի Սանճաքի իրաւակարգը եւ սահմանադրութիւնը : Սանճաքին մէջ Թուրք տարրին դերակշռութիւնը ընդունելով հանդերձ, Թուրք կառավարութեան կողմէ, Սանճաքի հարցը Թուրքիոյ համար հոգային խնդիր մը չնկատել, ինչպէս կը հաստատէ Ենկիւրիի 1921 հոկտեմբեր 20 Թուականի համաձայնագիրը :

2.— Հովանաւորութեան վարչաձեւին տակ պահել 30 մայիս 1936 Թուականի Անգարայի պայմանագրութեամբ Թուրքիոյ, Սուրիոյ եւ Լիբանանի միջեւ հաստատուած բարեկամութեան եւ բարի դրացնութեան յարաբերութիւնները : Եւ այս պայմանագրութեան եւ զայն ամրապնդացնող համաձայնագրերուն պայմանաժամը լրանալուն հետեւանքով այս յարաբերութեանց ո եւ է դադարումին արգելք ըլլալու համար, յիշեալ փաստաթուղթերու տեւողութիւնը տարի մը եւս յետաձգել :

Միայն թէ այս համաձայնագրերուն արօտատեղիներու իրաւունքներուն վերաբերեալ տրամադրութիւնները այսօրուընէ սկսեալ ջնջուած են :

3.— Նոյն պայմանաժամով տեւողութիւնը երկարաձգել այն իրերահասկացողութեան եւ իրաւարարութեան դրութիւններուն, որոնք Թուրքիոյ եւ Ֆրանսայի միջեւ 30 փետրուար 930 Թուականի բարեկամութեան, իրերահասկացողութեան եւ իրաւարարութեան դաշնագրի կցուած փրօթօքոլով հաստատուած են Թուրքիոյ եւ Ֆրանսայի հանրապետութեան իշխանութեան տակ դրուած երկիրներու միջեւ :

4.— Թրքահպատակներու Սուրիոյ եւ Լիբանանի մէջ, Սուրիոյ եւ Լիբանանի հպատակներուն ալ Թուրքիոյ մէջ բնակութեան իրաւունքը եւ պայմանները եւ մանաւանդ դատական իրաւասութեան մասին ամէնէն աւելի նպաստաւորուած ապրի վերաբերմունքի առարկայ ընել :

5.— Երկու կառավարութիւնները որոշած են, երբ Սուրիա ինքնավար դառնայ, Թուրքիոյ, Սուրիոյ եւ Ֆրանսայի միջեւ երթեակ բարեկամական դաշնագրի մը վերածել եւ ամրապնդացնել երկարաձգուած այն բարի դրացնութեան պայմանագիրը, որու մասին բացատրութիւն արուած է այս յայտարարութեան երկրորդ հատուածին մէջ :

6.— 1936 մայիս 30 Թուականի բարեկամութեան եւ բարի դրացնութեան պայմանագիրը, կնքուած ըլլալով Թուրքիոյ եւ Ֆրանսայի միջեւ որ միջազգային յանձնաժողովութեամբ Սուրիոյ եւ Լիբանանի վրայ ճանչցուած իրաւասութիւններ ունի, որոշուած է որ անոր տրամադրութիւնները պիտի չհակադրուին Լիբանանը :

Միւս կողմէ որոշուած է որ՝ երբ կարելի ըլլայ, բանակցութիւններ կատարուին՝ ապահովելու համար Թուրքիոյ, Սուրիոյ եւ Լիբանանի միջեւ հաստատուած առեւտրական յարաբերութեանց զարգացումը :

7.— Վերջապէս, Թուրքեւֆրանսական կառավարութիւնները, Թուրքերուն Ֆրանսայի մէջ եւ Ֆրանսացիներուն ալ Թուրքիոյ մէջ կացութիւնը ճշդելու համար, համաձայնած են որ մօտերս բանակցութեան սկսին, բնակութեան պայմանագրութիւն մը կնքելու համար :

*** Ենկիւրիէն կը հեռագրեն Թէ Թուրքիոյ եւ Սուրիոյ դաշնագրին բանակցութեանց առթիւ. խորհրդաժողովը որոշեց երեք յանձնախումբեր կազմել, մէկը՝ սահմանագլուխներու եւ առողջապահութեան մասին, երկրորդը՝ փոխադրութեանց , երրորդը՝ տնտեսական հարցերու համար :

*** «Ֆրանսա - Թուրքիա » խորհրդարանական խմբակին նախագահը , Պ. Պոսուէթօ, նամակ մը ուղղելով Փարիզի Թրքական դեսպանին, իր ջերմ ուրախութիւնը կը յայտնէ Ալեքսանդրէթի հարցին կարգադրութեան համար : Եւ կ'աւելցնէ.— «Մեր խմբակցութիւնը կը յուսայ Թէ շատ աւելի սերտ յարաբերութիւններ պիտի հաստատուին մեր երկու մեծ հանրապետութեանց միջեւ եւ կը խնդրէ Ամաթիւրքի հաղորդել իրենց խորունկ բարեկամութեան ըղձացումները Օսմանեան(?) հանրապետութեան հանդէպ» :

*** Նախարարական խորհուրդի առջի օրուան նիստին մէջ Պ. Ժոռժ Պոնէ մանրամասն դեկուցում մը հաղորդեց արտաքին քաղաքականութեան մասին : Այս առթիւ մանաւանդ ծանրացաւ Ֆրանքեւթուրք համաձայնութեան վրայ, նշելով Թէ ան մեծ կարեւորութիւն ունի ոչ միայն Ալեքսանդրէթի հարցին կարգադրութեան տեսակէտով, այլեւ իր տարողութեամբ :

*** Գերմանական Թերթերը կը յարուցակեն արծարծել Մօտաւոր Արեւելքի խնդիրը, «Ֆրանքֆուրթէր Ցայթունի» առաջին էջին մէջ հրատարակեց յօդուած մը երեք սիւնակի վրայ, ուր կը բացատրէ Թէ Ֆրանսա չի կրնար գաղթավայրի մը վերածել Սուրիան, բաւականաչափ ժողովուրդ չունենալով» :

Ազգ վիճակահանութեան պարգեւներ

Ազգ. պարգեւախազի 7րդ չարքին վիճակահանութիւնը տեղի ունեցաւ ուրբաթ գիշեր, Քասուռի մէջ: Հինգ միլիոնի մեծ պարգեւը չահեցաւ 0.964.546 թիւը :

Հետեւեալ չորս թիւերէն իւրաքանչիւրը չահեցաւ մէկ միլիոն ֆրանք.— 0.029.146, 1.319.672, 0.430.495, 0.447.226:

Հետեւեալ վեց թիւերէն իւրաքանչիւրը չահեցաւ 500.000 ֆրանք . — 0.270.603, 0.542.533, 0.008.907, 0.491.921, 0.669.378, 0.828.814 :

08.662 վերջացող թիւերը չահեցան 100.000 ֆրանք:
62.777, 14.823 վերջացող թիւերը չահեցան 80.000 ֆրանք :
84.756, 51.852 վերջացող թիւերը չահեցան 50.000 ֆրանք :
6891, 5230, 8713 եւ 8245 վերջացող թիւերը չահեցան 20.000 ֆրանք :
833 վերջացող թիւերը չահեցան 10.000 ֆրանք :
443 վերջացող թիւերը չահեցան 5000 ֆրանք :
61 վերջացող թիւերը չահեցան 1000 ֆրանք :
60 եւ 05 վերջացող թիւերը չահեցան 220ական ֆրանք :
3 վերջացող թիւերը չահեցան 110 ֆրանք :

ՋԱՆԱՉԱՆ ԼՈՒՐԵՐՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՄՈՍԿՈՒԱՑին քաղուած տեղեկութեանց համաձայն, 210 պաշտօնեաներ ձերբակալուած են Ուկրաինայի հոգագործական պաշտօնատան մէջ, յանկախ ընթացքին: Կ'ըսուի Թէ միայն յանկախ երկրորդ կիսուն 3800 անդամներ վտարուած են Ուկրաինայի բոլշեւիկեան չարքերէն :

ԳՈՐԾԱՉՐԿՈՒԹԵԱՆ ՆՊԱՍՏի յաւելման խնդիրը քննելով, Սէնի նահանգային ժողովը հետեւեալ սակերը որոշեց, յուլիս 1էն սկսեալ.— Ա. Մէկ ընտանիքի համար օրական 37 Ֆր. 50, որուն 21.25ը ընտանիքին պիտի, 16.25ը հինգը.— Բ. իւրաքանչիւր երկու առաջին զաւակներու համար 17.50.— Գ. երրորդ զաւակէն սկսեալ 15 ֆրանք (ինչպէս եւ անոնց համար որ բնակ են ընտանիքին վրայ) .— Դ. Անհատ գործադուրկին համար՝ օրական 21.25: Ժողովը 500.000 ֆրանքի վարկ մը սահմանեց, իբրեւ նահանգին բաժինը :

ՑԵՏԱԶԳՈՒՄԱՇ է Իսիի «Զաւարեան» կոմիտէի դաշտահաճդէսը որ տեղի պիտի ունենար այսօր, կիրակի:

Խոնաւատուհի կ'ուզուի

Ծր. Կապոյտ Աշէ օդափոխութեան կայանին համար լաւ խոհարարուհի մը կ'ուզուի, գոհացուցիչ վճարումով:

Դիմել գրաւոր Շրջ. վարչութեան հասցէին՝ Տիկ. Մխսաքեան, 6 Rue d'Alsace· Asnières, (Seine):

Alimentation TIQ-TON
Գ. ՃԻՏՃԵԱՆ
20, Rue Tiquetonne, Paris, Մէթրօ **Halles**էն կամ **Etienne-Marcel**էն **2** վայրկեան
Téléphone: Central 76 95
Բացուած է արեւելեան եւ եւրոպական ուտելիքներու ճոխ մթերանոց, անմրցելի գիներով: Մեծաքանակ եւ մանրաքանակ:
Առաջնակարգ ճերմակ պանիր, 14 ֆրանք քիլօն: Դաշգաւալ 17 ֆր.: Պուլկուր, 4.50 ֆր.: Զիթապտուղ, 6 ֆր.: Բրինձ, 2.50ֆր.:
Ապուխտ, 22 ֆր.: Մուճուք, 18 ֆր.:
Միւս ապրանքները նոյն համեմատութեամբ: Փորձեցէք եւ պիտի ըլլաք միայն յաժախորդ:
Յանձնելը բաց է առաւօտեան ժամը 5էն, բացի երկուշաբթիէն: **Livraison à domicile**

Հ. Ց. Դ.

Փոստ

ՑԵՏԱԶԳՈՒՄԱՇ է Պրօպականտի ցանձնախումբի ժողովը որ տեղի պիտի ունենար 11 Յուլիս, երկուշաբթի:

ՇԱՎԻԼԻ «Արդուճեան» խումբի ժողովը 10 Յուլիս, կիրակի երեկոյ ժամը 9ին սովորական հաւաքատեղին:

ՎԱՂԱՆՍԻ Հ. Ց. Դ. ԿՈՄԻՏԷԻ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍԸ որ տեղի պիտի ունենար Յուլիս 3ին, անձրեւին պատճառաւ ՅԵՏԱԶԳՈՒՄԱՇ է Յուլիս 10ին (այսօր):

Ֆ. Կ. ԽԱԶԻ ՓԱՐԻԶԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ
ՏԱՐԵԿԱՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍԸ

17 Յուլիս, կիրակի առաւօտեան ժամը 9էն գիշերուան 11.30
ՐՈՊԷՆՍՈՆԻ ՄԷՋ, *Grand Arbre, Maison Fiquet*

Գեղարուեստական հաճելի ածականկալներ, ընտիր նուագախումբ Անձրեւի պարագային գոց սրահ: Ճոխ պիւֆէ՝ պատրաստուած խոչոր հիներու կողմէ. Մուտք 5 ֆրանք

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ ԻՋՕՑՆԵՐ.— Denfertէն առնել սեթրոյի դէպի Ռոշէնսոն տանող գիծը, եւ կամ Բոռի տ'Որլէանէն օթօպիւս Թիւ 128:

ՏԱՐԵԿԱՆ ՄԵԾ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ՍԻՓԱՆ-ԿՈՄԻՏԱՍ ԵՐԳԱԽՈՒՄԲԻՆ ԿՈՂՄԷ
10 Յուլիս, կիրակի առաւօտ ժամը 10էն մինչեւ կէս գիշեր
ՌՈՊԷՆՍՈՆԻ ՄԷՋ, GRAND ARBRE, Maison FIQUET

Գեղարուեստական լաւ ժրիճն, զանազան խաղեր եւ անակնկալներ, ընտիր նուագախումբ Թանկ եւ ժող, ճոխ պիւֆէ դիւրամատչելի գիներով:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԻՋՈՑՆԵՐ.— Մեթրօն փոխել Denfer Rochereau եւ առնել Robinsonի գիծը:
Մուտք 5 ֆրանք
Ուտելիքը կարելի է միասին ընել

Դ-ա շ ն ա մ ա ն դ ի ս
ԴՊՐՈՑԱՍԷՐԻ ՍԱՆՈՒՑ ՄԻՈՒԹԵԱՆ
24 Յուլիս, կիրակի, ժամը 3ին, վարժարանին պարտէզը
1, Bld. du Nord, le Raincy

Կը ներկայացուի ԱՆՈՒՇ օփերէթէն պատկերներ զեկավարութեամբ ԴՄԲԼԹԵԱՆԻ: LES CHAUSSONS DE LA DUCHESSE ANNE (օփէրէթ), հայկական պարեր, ծաղիկներու պալէ, զանազան պատկերներ, մարզական խաղեր:

Ճաշ եւ պար մինչեւ մաժր 10: Ճոխ պիւֆէ ժատչելի գիներով, (կը խնդրուի միասին տեսիլք չբերել): Մուտք 5 ֆրանք:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ.— Operaէն կամ Jaurèsէն առնել օթօպիւս 21A եւ իջնել Raincy-Pavillons, Gare de l'Estէն շոգեկառք direction Gargan, իջնել Raincy Pavillons:

Ամառային դպրոցական ճաշկոյթ Ալֆորվիլի մէջ
10 Յուլիս, կիրակի կէսօրէն վերջ ժամը 2ին, տեղւոյս եկեղեցիին մէջ: Կը հրաւիրուի հայ հասարակութիւնը:

ՏԱՐԵԿԱՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ
ԱՄԱՍԻԱ-ՄԱՐԶՈՒԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
14 Յուլիս, Հինգշաբթի ամբողջ օրը ՍԷՆ - ԼՈՒԻ ԿՐԱՆ - ՓԷՆ, եօթնեղբայրեանի հովասուն տպարակը:

ԿԸ ԽՕՍԻ ՏՈՔԹ. ԼԵՒՈՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

Կը ներկայացուի «ՇԱՏ ԽՕՍ ՍԱՓՐԻԶԸ» զեկավարութեամբ Ց. ԻՆՃԻԼԵԱՆի եւ մասնակցութեամբ Գ. Գ. ԱԼԻՔՄԱՆԵԱՆի եւ ԳԱՍՄԱՃԵԱՆի: Կը նուագէ հայրենակից Ջութակահար Գ. ՆԱՋԻԿԵԱՆ: Պարերու ընթացքին կը նուագէ Գ. ՍԻՄՈՆ ՇԻՇՄԱՆԵԱՆ իր խումբով: Պարգեւաւոր խաղեր եւ գեղարճալի անակնկալներ: Առատ կերուխում: Մխսեթեանս վիճակահանութիւնը կը քաշուի տեղւոյն վրայ:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ.— Ուղիղ կարիպալեան առնել 15, 16, 18 Թիւ ճամրակառքերը եւ իջնել Սէն-Լուս կրան փէն:

ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Յ. Կ. Խաչի Փարիզի մասնաճիւղը իր խորին ցաւակցութիւնները կը յայտնէ, վարչութեան ժրաջան քարտուղարուհի Տիկ. Գաղանճեանի եւ պարագաներուն, իր եղբօրորդւոյն Տաճատ ՌՈՒԲԻՆ ԻԶՄԻՐԼԵԱՆի դառնագին մահուան առթիւ :

ՅՈՒՇԱՏԻՏ

Զ. Ո. Մ. ՓԱՐԻԶԻ Մ.ճիւղի Ընդհ. ժողովը 11 Յուլիս, Երկուշաբթի եւ բնակչեան ժամը 9ին, Քաւէի սրճարանին վերնայարկը: Կարեւոր օրակարգ:

ՄԱՐՍԷՅԼԻ ՀԱՅԴԵՐՁԵՂԷՆԻ

քանուոր - բանուորուհիներու սէնտիքան երկուշաբթի օրուան հաւաքի (11 Յուլիս) կազմակերպած է Ընդհ. ժողով մը, Սա Ֆէերէր, Վիէյլ Պուրս տը Թրավայլ, ժամը 18.30ին: Սէնտիքան կը հրաւիրէ բոլոր հայդերձեղէնի քանուորները ներկայ ըլլալ այս կարեւոր հաւաքոյթին:

ՆԱԽԱԿԱՌՈՒՑՈՒԱԾ

Լիոն. Թ. Ա.— Կարդալ Ա. Հ ի ուղղուած նամակը եւ կարգադրել:

Մեծ դաշտահանդէս
ԽԱՆԱՍՈՐԻ ՍՐՇԱԻԱՆՔԻ 41ՐԴ. ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻԻ
Կազմակերպուած Հ. Ց. Դաշնակցութեան Սարսէլի «Հրայր» և Առնուվիլի «Ռազմիկ» խումբերու կողմէ, հովանաւորութեամբ Հ. Ց. Դ. «Վարդան» Երիտասարդական Միութեան, 10 Յուլիս կիրակի, առաւօտեան մինչեւ ե. բեկոյ, Օ-ՏԻՒ-ՌՈՒԱԶԻ ետեւ, Օ-ՓՈՆ-ԻՒՈՆՏԷլի ծառաստանին մէջ:
ԿԸ ԽՕՍԻ **ԸՆԿ. Ս. ՏԷՐ ԹՈՎՄԱՍԵԱՆ**
Երգ., արտասանութիւն եւ դաշտային խաղեր:
Պիտի նուագէ Թառիստ ԳԱՐԵԳԻՆ եւ փոքրիկն Ռեժինա պիտի պարէ Զայկական եւ կովկասեան պարեր: Ճոխ եւ դիւրամատչելի պիւֆէ խմիչք: Մուտքը ազատ է:
Անձրեւի պարագային կը յետաձգուի

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ
ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՄԲ Ֆ. Կ. ԽԱԶԻ ՊԱՒԼ. ՕՏՏՈՅԻ Մ.ՃԻՒՂԻ
10 Յուլիս, կիրակի կէսօրէ վերջ ժամը 2ին
Սէնթ Ամպրուազ օգաստան պարտէզին մէջ
Բանաւոր մասնաբաժին, զեղարուեստական լիամասուած բաժին՝ խմբերգ, մեներգ, արտասանութիւն, ասմկնկալներ եւ հայկական պարեր կ, Խաչի սանուհիներու կողմէ: Հ. Ց. Դ. «Ադամեան» Քառատրախումբը կը ներկայացնէ «ԵՐԿՈՒ ԾԱՁՐԱԳՆԵՂՆԵՐԸ»: Մուտքը ազատ է:
ՀԻՒՐԱՍԻՐԱԿԱՆ.— Հանդիսավայրը երթալու համար Քուռ Պէյզոնսէն առնել 23 Թիւ ճամրակառքը եւ իջնել վերջաւորութեան:

ՓԱՐԻԶԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԱԿՈՒՄԲԻ
Ցառաջիկայ դասախօսութիւնը տեղի կ'ունենայ 12 Յուլիս, Երեքշաբթի երեկոյեան ժամը 9ին, 8 Ռիւ Պոսքիէ:
ԿԸ ԽՕՍԻ Պ. Հ. ՋԱՐԴԱՐԵԱՆ
Նիւթ՝ «Իրապաշտ շարժումը ժամանակակից գրականութեան մէջ (Սթմաքէչխանլեան)»:

Հ. ՋԱՐԴԱՐԵԱՆ
ՎԻՐԱՒՈՐԱԾ - ԱՏԱՄՆԱՒՈՐԱԾ
44 Rue Dunkerque (ՄԷՏՐՈ ԿԱՌ ՏԻ ՆՈՐ)
Tél. Trudaine 42—69
Կ'ընդունի ամէն օր ժամը 14—20:
Հաւաստները ժամագրութեամբ:

ԵԴՈՒԱՐԴ ԳԱԼՓԱՔՃԵԱՆ
ԴՐԱՄԱՏՈՒՌ, **48 rue de la République, Marseille**
Tél. Colbert 74—51, 47—22
Ծտար գրամներու փոխոխութիւն, ցէքեր կը տրուին ամէն երկրի համար: Կը գնենք եւ կը ծախենք ոսկի դրամներ:
ԼԱՒ ՊԱՅՄԱՆԵՐ.

ՀԱՅԵՐՈՒ ԺԱՄԱԴՐԱՎԱՃԱՐԸ
Ձեպարան **ՖԼՕՐԻԱ**
51, Rue Monsieur le Prince, Paris (6)
Մէթրօ՝ Օտէօն եւ Սէն Միշէլ
Աթենքեան եւ Եւրոպական խոհանոցի կերակուրներ:

ՕՆ DUZE.
MARQUE DÉPOSÉE


ՐԱՓԸ ՏԻԻԶ
Զուտ խաղողէ քաշուած եւ անիսոնով պատրաստուած հայկական օղին է ՐԱՓԸ ՏԻԻԶ: Զգուշացէք արուեստական օղիներէ որ ձեր ստամոքսը կ'ապրէ եւ գիշերները չուր կը խմցնէ եւ կը վնասէ ձեր առողջութեան: Խմեցէք միայն ՐԱՓԸ ՏԻԻԶը որուն անպարտ, կազդուրիչ եւ ախորժաբեր յատկութիւնները ճանչցուած է:
Dalakupeian 8 Rue Suffren, Dépôt: 7 Rue de la Paix, Marseille· Tél. Dragon 70—89·



"ՇԻՐԱԿ"
Արեւելքի միակ իսկական օղին է: Անզուգական, Անմրցելի, Անհարդարի: Առաջնակարգ զօրացուցիչ ախորժաբեր, պատրաստուած զուտ չամիչի ջիւրով Հայ աւանդական սեպհական գործ:

ԳԱՑԻՔ ՏԵՍԻՔ ԼԻՈՆի ՄԷՋ
Cinéma REXY
Cours Lafayette. angle Garibaldi

Le Gérant : H. STEPHAN
Imprimerie A. DER (AGOPIAN)
17, Rue Demesme — PARIS (13)

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

ՀԱՅՐԱՏԸ

HARATCH

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
17, Rue Damesme, PARIS (13e)

Téléphone : Glacière 15 - 70
Chèque Postal Paris 1678 - 63
(ՐՐԹԵՒԵԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ :—

	ՏԱՐԵԿԱՆ	ՎԵՑԱՄՍԵԱՅ	ԵՒԱՄՍԵԱՅ
Ֆրանսա եւ Գաղութներ	150 ֆրանք	75 ֆրանք	40 ֆր.
Անգլիա եւ Իտալիա	265 ֆրանք	140 ֆրանք	
Ուրիշ երկիրներ	215 ֆրանք	110 ֆրանք	

ՀԻՆԳՇԱԲԹԻ
7
ՅՈՒԼԻՍ
JEUDI
7 JUILLET
1938

ԺԹ. ՏԱՐԻ — 14e Année No. 3776

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍՍԱԿԵԱՆ

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ԱՒԱՆՑՔ ԱՒԱՆՑՔԻ ԴԷՄ

Հասարակ մահկանացուներու համար անթափանցելի կը մնայ այն գաղանիքը, որ մէկ օրէն միւսը փոխել տուաւ հոգատար իշխանութեան դիրքը՝ Ալեքսանդրէթի հարցին մէջ :

Այս առթիւ բերնէ բերան եւ թերթէ թերթ չրջան կ'ընեն զարմանազան պատմութիւններ ու մեկնութիւններ : Եւ զարմացողները միայն օտարազգիները չեն, այլեւ Ֆրանսացիները, որոնք պատասխանատու պաշտօններ վարած են տարիներով :

Օրինակ, Ձօր· Պրէմոն, Կիլիկիոյ երբեմնի մարզպանը, դառնօրէն կը տրտնջար «Լա Ֆրանս Միլիթէր»ի մէջ, յունիս 15ին, երբ տակաւին չէր տատրգրուած Ֆրանքեւիւորք համաձայնութիւնը :

— « 1919էն իվեր, Թուրքիոյ հետ մեր յարաբերութիւները ցաւալի ձեռնթափութիւններ արձանագրած են, առանց որ եւ է փոխարինութեան :

... Եթէ իրապէս Թուրքիա կ'ուզէ իր ուղղութիւնը փոխել, մեզի չի յիշեր երբեք աւնոր հատուցում ընել : 1921էն ի վեր,— կ'ըսէ Կիկիոյ պարպումի ողբալի տարին — մենք միշտ տուած ենք, տեղի տուած ենք, յանձնած ենք, ենթարկուած ենք, առանց երբեք բան մը ստանալու : Եւ այն լուտանքները զոր այս պահուն Թուրք մամուլը կը շռայլէ Ֆրանսայի, «այս կեղծաւոր ազգին, որուն հետ Հիթլերի լեզուով պէտք խօսիլ»,— կը ցուցնեն թէ պէտք է զգոյշ ըլլալ եւ ոչ թէ մայել մսավաճառին խոստացուած ոչխարներու պէս» :

Մենք տարիէ ունեցանք ներկայացնելու, նաեւ, մէկ - երկու թերթերու եւ մանաւանդ պրակս «Իմանիթէ»ի քննադատութիւնները՝ այս ձեռնթափութեանց առթիւ :

Աբդ, քաղաքական - դիւանագիտական չրջանակներու մէջ ի՞նչպէս կը բացատրեն հոգատար իշխանութեան վերջին նահանջը, այնքան անսպասելի եւ արկածալի :

Ամերիկեան յաւատեղեակ եւ հեղինակաւոր թերթ մը, « Նիւ Եորք Թայմզ», կը պատմէր յունիս 15ին, Պէյրութի թղթակցին բերնով :

— « Աթաթիւրքին գործը դիւրացնող իրողութիւնն այն է որ ֆրանսական ընդհ· սպայակոյտը չի հակառակիր Ալեքսանդրէթի Թուրքիոյ կցումին : Ֆրանսական զինուորապետութիւնը բրկան բարեկամութեան եռեւ է ամէն գնով :

Այս գրողը ի վիճակի է յայտնելու գաղտնի համաձայնութիւն մը որ գոյացած է Ֆրանսայի զինուորական իշխանութիւններուն եւ թուրք կառավարութեան միջեւ : Անցեալ փետրուարին Ֆրանսայի Արեւելքի ուժերու հրամանատարը Էնկիւրի գնաց եւ Թուրքերուն հետ գոյացուց համաձայնութիւն մը, որ միջազգային բախտումի մը պարագային թուրք զինուորները գրաւեն Ալեքսանդրէթի ամբողջ շրջանը : Ատոր փոխարէն Թուրքիան չէզոք պիտի մնայ եւ Տարտանէլէն ազատ անցք պիտի տայ ֆրանսական եւ բրիտանական պատերազմական նաւերուն :

Թէեւ տակաւին եւրոպական պատերազմ չկայ, բայց նախազգաի Աթաթիւրք կ'ուզէ որոշ թիւով զինուոր ունենալ Ալեքսանդրէթի մէջ » :

Թղթակիցը կ'աւելցնէ թէ Ֆրանսայի արտաքին գործերու պաշտօնատունն ալ «անձկութեամբ կ'ուզէ որ Թուրքերը հաճեցնէ» : Այս առթիւ պարզելով ընտրական արձանագրութեանց առթիւ ոչ - Թուրքերու վրայ կատարուած ճնշումները, կ'եզրակացնէ·

— « Պէտք չէ թշնամացնել Թուրքերը»,— այս է Ֆրանսայի ներկայ բաղաքականութիւնը, որուն ուժ կուտայ Մեծն Բրիտանիա » :

Օրուան դէպքերն ալ ճիշդ այդ պարագան է որ կ'ապացուցանեն, մանաւանդ ապատ եւ պիկ - պակ դասաւորումներով :

Ճիշդ այն պահուն երբ կը ստորագրուէին Անտիոքի եւ Էնկիւրիի համաձայնութիւնները, Ֆրանքեւիւորք դինուորական եւ քաղաքական գործակցութեան մասին, Անգլիոյ երեսփ· ժողովը երկրորդ ընթերցումով կը վաւերացնէր Թուրքիոյ չնորհուած վարկերուն օրինագիծը (4 յուլիս) :

Այս առթիւ փառաբանական ճառ մը խօսեցաւ ելմտական նախարարը, Սըր Ճօն Սայմըն, չեչտելով թէ 16 միլիոնէն վեց միլիոնը պիտի յատկացուի Թուրքիոյ վերազինման :

— « Անգլիոյ եւ Թուրքիոյ բարեկամութիւնը դրուած է ամուր հիման մը վրայ· երկու երկիրներն ալ նոյն գերագոյն նպատակն ունին,— պահպանել խաղաղութիւնը : Այս բարեկամութիւնը ուղղուած չէ ուրիշ որ եւ է ազգի դէմ » :

Նախարարին ճայնակցեցան ոչ միայն իր պահպանողական կուսակիցները, այլեւ ընկերվարականները, որոնց վարիչը հեռեւեալ ուշագրաւ խօսքերն արտասանեց .

— « Ընդհ· չունիմ· խելօք բան է օգնել որ Թուրքիա սպառազինուի : Մենք պէտք ունինք սպառազէն եւ բարեկամ Թուրքիայի մը՝ արեւելեան Միջերկրականի մէջ » :

Ուրիշ ընկերվարական մը հեղնեց այս յայտարարութիւնը, դիտել տալով թէ 1914ին ալ Մեծն Բրիտանիան էր որ սպառազինեց Թուրքիան... Բայց եւ այնպէս, ժողովը իր ջերմագին հաւանութիւնը յայտնեց զահլիճին քաղաքականութեան, բազմանք յայտնելով որ միեւնոյն դիւրութիւններն ընծայուին Պալքանեան պետութեանց, ամուր ցանց մը կազմելու համար :

Ո՞րու դէմ : Անշուշտ Գերմանիոյ եւ Իտալիոյ : Ուրեմն առանցք առանցքի դէմ, իրրեւ յենարան ունենալով Անգլիոյ, Ֆրանսայի եւ Թուրքիոյ միջեւ կնքուած բարեկամութիւնը, եւ ջուրին տալով մնացեալը ...

Շ.

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ԹՐՔԱԿԱՆ ԶՕՐՔԸ ՍԱՆՋԱՔ ՄՏԱԻ ՄԵԾ ՀԱՆԴԻՄԱԽՈՐՈՒԹԵԱՄԲ

Ֆրանսական զօրքն ալ 2500ի կը բարձրանայ

Անտիոքէն կը հեռագրեն·— *Թրքական զօրքը այս առտու (երեքշաբթի) ժամը 5.30ին անցաւ Ալեքսանդրէթի Սանճաքին սահմանագլուխը, Համիլտոնի կայանէն եւ ներս մտաւ : Թրքական դունդը, որուն առջեւէն հեծելազունդ մը կ'երթար, գարաոս գետն ի վեր բարձրացաւ, Գըզլխանի եւ Անտիոքի ուղղութեամբ : Թուրք գնդապետ Ֆէվզի Մանճուկ, որ Թրքական հրամանատարութիւնը պիտի ներկայացնէ Ֆրանսական հրամանատարութեան մօտ, զօրքը դիմաւորելու գնաց ընկերակցութեամբ Անտիոքի Թրքական հիւպատոսին, մինչեւ Ազքէփէ, վերջին գիւղը Թուրքիոյ համբուն վրայ, ուր գնդ· Քուլ՝ մարզպանին պատուիրակը, նոյնպէս գացած էր դիմաւորելու ընդհ· հրամանատարը :*

Թրքական դունդը հաւանարար այսօր պիտի տեղաւորուի այդ գիւղին մէջ· վաղը պիտի մտնէ Գըզլխան, յետոյ պիտի երթայ Անտիոք : Ուրիշ վաշտ մը, որ պիտի հասնի այս առտու Տաւրոսի ճամբով, պիտի տեղաւորուի Ալեքսանդրէթի մէջ :

Թուրք ժողովուրդը ջերմ ընդունելութեամբ ողջունեց զօրքը :

Ալեքսանդրէթէն կը հեռագրեն յուլիս 5 թուականով ·—

Այսօր ժամը 12.15ին Թրքական բանակէն երկրորդ զօրապունդ մը հանդիսաւորապէս մուտք գործեց քաղաքին մէջ, որ զարդարուած էր ֆրանսական եւ բազմաթիւ Թրքական դրօշներով (այժմ Թրքականը պիտի բոնէ Սանճաքի դրօշին տեղը) : Զօրքը, որ կը բաղկանար մէկ վաշտ հետեւակազօրքէ, մէկ հրետանիի եւ նիզակաւորներու դասակէ մը, պիտի տեղաւորուի քաղաքին մէջ, իսկ միւս զօրամասերը, որոնք այս առտու հասան Գարաոսի ճամբով, պիտի բամնուին Անտիոքի, Գըզլխանի, Պէյլանի եւ Ազքէփէի մէջ : Ճամբան կտրելով շրակէպ արեւի մը տակ, Թուրք զօրքը քաղաքին փողոցները մտաւ առաջնորդութեամբ քաղաքապետական նուագախումբին, մինչ բազմութիւնը կը ծափահարէր : Գետոյ իրենք տեղերը գացին առանց միջադէպի :

Հայերը կը հանգստանան...

Անտիոքէն կը հեռագրեն յուլիս 5 թուականով ·—

Թուրք զօրքին Սանճաք մուտքով այս առտու սկսաւ Անտիոքի պետութեան համաձայնութեան գործադրութիւնը : Երկու բանակներուն գործակցութիւնը այսուհետեւ պիտի ապահովէ Սանճաքին հոգային ամբողջութիւնը եւ քաղաքական իրաւակարգը :

Նոր կարգադրութեան հաստատումը արդէն իսկ թուլացում յառաջ բերած է քաղաքական կացութեան եւ զանազան հասարակութեանց թաքուն թշնամութեան մէջեւ : Ֆրանսական զինուորական գործակցութիւնը զգալի ապահովութիւն ներշնչեց մանաւանդ հայկական շրջանակներուն որոնք վտանգուած կը համարէին իրենց շահերը :

Ժողովուրդին հոգեկան վիճակի բարւոքումը հետեւանք է նաեւ Ֆրանսական զօրքին յանձնումն : Սանճաքին մէջ եղած երկու վաշտ մարոքեան արձակազննիներուն եւ երկու հեծելազունդներուն վրայ չուտով պիտի աւելնան ուրիշ երկու Սենեգալեան եւ Թունուզեան արձակազննիներու վաշտեր, որոնք պիտի տեղաւորուին Տաֆնէյի եւ Ռիհանիյէի մէջ· հրետանի մըն ալ պիտի հաստատուի Անտիոքի մէջ : Այս զինուորներուն թիւը պիտի չրանայ երեք օրէն, հասնելով մօտ 2500ի : Սենեգալեան վաշտ մը արդէն տեղաւորուած է հրամանատարութեամբ հազարապետ Մուրէյի :

Բնակիչներուն ցոյց տուած գործակցութեան չնորհիւ, հոգատար իշխանութիւնը կը խորհի ներում չնորհել քաղաքական բանտարկեալներուն : Այս կէսօրին հրամանատար Քոլէ վերցուց պաշարման վիճակը :

Այս իրիկուն Ֆրանքեւիւորք բարեկամութեան ցոյց մը պիտի կատարուի Հաչտեանով մը, մարզպանութեան Անտիոքի պաշտօնատան մէջ, մանակցութեամբ հրամանատար Քոլէի եւ գնդ· Շիւբրիի, որ հրամանատարն է Թուրք լեռնային հետեւակազօրքի 48րդ գունդին, ինչպէս եւ իր սպայակոյտի անդամներուն : Գնդ· Շիւբրի յետոյ Պէյլան պիտի երթայ, հոն հաստատելով իր հրամանատարութեան կայանը :

ՍՊԱՆԻՈՑ ՕՏԱՐ ԿԱՄԱՒՈՐՆԵՐՈՒ ԽՆԴԻՐԸ

Վերջնապէս ընդունուեցաւ անգլիական ծրագիրը

Ոչ-Միջամտութեան յանձնաժողովին երեքշաբթի օրուան նիստին մէջ, 27 պետութիւններ հաւանութիւն յայտնեցին անգլիական ծրագրին, օտար կամաւորներու յետս կոչման եւ պատերազմական իրաւունքներու մասին : Ծրագիրը երկի իսկ հաղորդուեցաւ Սպանիոյ հանրապետական եւ ազգայնական կառավարութեանց, Անգլիոյ միջոցաւ : Անհրաժեշտ է այդ երկու կառավարութեանց գործակցութիւնը, դիւրացնելու համար օտար կամաւորներու ցուցակագրութիւնը եւ փոխադրութիւնը : Վերադարձի ծախքը կը հաշուեն 2.500.000 անգլ· ոսկի, որ գլխաւորաբար կը ծանրանայ Անգլիոյ, Ֆրանսայի, Գերմանիոյ, Իտալիոյ եւ Բելճիա ի· Միութեան վրայ : Իբրեւ կանխիկ դրամ, առաջին չորս պետութիւնները անմիջապէս 12.500ական ոսկի յանձնեցին, համադրամար 50.000 ոսկի, որպէսզի յանձնաժողովը կարենայ գործի ձեռնարկել անմիջապէս :

Անգլիական ծրագրին համաձայն, զօր· Ֆրանքօ պատերազմիկ պիտի համարուի, երբ առնուազն 10.000 օտար կամաւորներ արձակած ըլլայ : Նոյնքան ալ պիտի արձակէ հանրապետական կառավարութիւնը :

Ծրագրին քննութեան առթիւ, ճառեր խօսեցան պետութեանց ներկայացուցիչները, որոնց կարգին նաեւ Թուրքիոյ պատուիրակը, որ անմիջապէս հաւանութիւն յայտնեց :

ՕՐԸ ՕՐԻՆ

ԲԱՐԵԿԱՄԸ ԲԱՐԵԿԱՄԻՆ

Միայն բաղաբական հորիզոնին վրայ չէ որ սեւ - մաւք ամպեր կուտակուած են : Ոչ ալ միայն Եւրոպայի մէջ :

Երէկ ամերիկեան թերթերը կը բզբաւտէի, եւ ի՞նչ տեսնեմ, ձեզի օրեր·

1. Հնչակ - բոլշեւիկ հատուածայնութիւնը խզուեր է :

2. Հայ բոլշեւիկներու օրաթերքը, «Բանուոր», որ կը պարծենար թէ հազար բաժանորդ ունի Հայաստանի մէջ, հոգին աւանդեր է :

3. Հօկը եւ յարակից կազմակերպութիւնները (Աշխատաւորական Միութիւն եւն·) նոր շապիկ մը հագնելով, դարձեր են··· «Ցառաջդիմական», ցնոր տնօրինութիւն :

Այս վերջին պարագան ամէնէն աւելի ջղագրգռութիւն պատճառած է նոյնիսկ «Հայաստանասէր» ռամկավարներուն որոնք միշտ գնդապետի հարուածներ կը տեղացնեն նախկին զինակիցներու գլխուն, ոտքին, կողերուն :

Ռամկավար բրոնիկագիր մը կը պատմէ, Հօկի «լուծարք»ին առթիւ·

— « Ինչպէս գիտէք, սկիզբէն յարատեցան (Հօկեանները), քարը խածին եւ իրենց իրական ու իրաւական դոյութեան վրայ պնդեցին՝ երկու ոտքերնին գետին դարնելով : Բայց, թէեւ ուշ, զգացին թէ անգլուխ մարմին մըն են եւ կը նմանին լայնաձաւալ ովկիանոսին մէջ տատանող անդէմ նաւի մը, որ վազ թէ անագան՝ պիտի զարնուի խութերուն եւ ջարդուփշուր պիտի ըլլայ :

Այդ սոսկումէն ահաբեկ եւ հանրայինն կչտամբանքին եւ իրենց հանդէպ ցոյց տրուած անվստահութենէն սարսափած՝ ամիսներով գլուխնին քարէ քար գարկին եւ վերջապէս ինքզինքնին (գրէ՝ իրենք զիրենք·— Վ·) փրկեցին «Ցառաջդիմական» նոր պիտակով մը : (Պայքար, 23 յունիս) :

Ամերիկան այսպէս, իսկ միւս գաղութներո՞ւն մէջ :

Ռամկավար բրոնիկագիրը էիթը կ'երկարէ մինչեւ մեր կողմերը·

— « Հիմա պիտի հետաքրքրուի է եւրոպայի զանազան չրջաններուն ինչպէս նաեւ Եգիպտոսի, Սուրիոյ եւ Հարաւ· Ամերիկայի Հօկիստներու կեցուածքը, որոնք տակաւին անորեսութեամբ կը չարունակեն իրենց անունն ու գործը՝ առանց տէր Տիրականի :

Այդ չրջաններու Հայաստանի իրականէն բարեկամ մամուլին ու հոսանքներուն պարտականութիւնն է խօսք մը հասկցնել այդ անուղղաներուն, հասկցնել՝ մանաւանդ, թէ իրենք այլեւս իրաւունք չունին «հաչուեյարդար»ի ենթարկուած մարմնոյ մը անունով տակաւին խլուրդի աչխատանք կատարել եւ իւրացնել միամիտ ու պարզամիտ հայրենասէրներու աբիւն - քրտինքով չահուած քանի մը լիմաները » :

Այս «բարեկամական» ազդարարութիւնը ինծի կը յիշեցնէ Պետրոսին եւ Գողոսին պատմութիւնը :

Գիտէք ամէնէդ ալ,— երկու բարեկամներ, Գողոս եւ Պետրոս, միւր կ'իջնեն տեղ մը : Երբ մէկը առաւնցին կը մնայ, տանտէրը կը հարցնէ միւսին,
— ընկերդ ի՞նչպէս մարդ է, Պ· Գողոս :
— Ձգէ եղբայր, իշուն մէկն է :
կարգը կուգայ միւսին·
— Գողո՞սը, կո՛ւ, կով···

Մեր «Հայաստանասէր» բարեկամներն ալ միասին ճամբայ ելեր էին, սէր ու սի՛ր ցանելով աչ ու ձախ : Եւ սակայն ···

Վ.Ա.Հէ

ԼՈ՛ՒՐ ԿԸ ՍՊԱՍԵՆ ԷՋՄԻԱԾԻՆԷՆ

«Սիոն», Երուսաղէմի պատրիարքութեան պաշտօնաթերթը, յուլիսի թիւին մէջ, կողքին վրայ կը գրէ թէ «նկատելով որ ապրիլ 23էն ի վեր հեռագրով եւ նամակով որ եւ է լուր չէ ստացուած Էջմիածինէն», Պատրիարքը հետեւեալ Ֆրանսերէն հեռագիրը ուղղած է Ձէօրէքճեան արք·ի, յունիս 13ին :

— « Կը սպասենք անվրէպ մանրամասնեալ ճամկի վասն յուղարկաւորութեան Սրբազան Հայրապետին, կացութեան Մայր Աթոռոյ, անդամոց Գերագոյն խորհուրդի եւ ձեր Տեղակալութեան կոնդակին» :

Յունիս 29ին ալ, Պատրիարքը հետեւեալ հեռագիրը ուղղած է, վճարեալ պատասխանով·

— « Ամէն կողմէ կը դիմեն մեզի· հաճեցէք փութացնել սպասուած տեղեկութիւնները» :

« Արեւ », Եղիպտոսի ռամկավար օրկանը, կ'աղաղակէ իր կարգին, խմբագրականով մը,— «Լուր կ'ուղենք Ե· Հայաստանէն» (28 յունիս) : Եւ կ'առաջարկէ դիմել Փարիզի խորհրդային դեսպանատան, այլեւ պատուիրակութիւն մը ղրկել Հայաստան···

ՕՏԱՐԱԿԱՆՆԵՐՈՒ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ՄԱՐՍԷՑԼԻ ՄԷՋ

Զինուորական խնդիրներ եւ գործադուլ

Մարսէյլէն կը գրեն մեզի·—

Օտարականներու վերաբերեալ հրամանագիր օրէնքին գործադրութենէն ի վեր, մինչեւ 10 յունիս, Մարսէյլի մէջ, իբրեւ «անկանոն» կամ «անբաղձալի» ձերբակալուած են 500 (հինգ հարիւր) հոգի եւ կը գտնուին նահանգային բանտերուն մէջ : Կը սպասեն դատավարութեանց :

Ցունիս 10էն մինչեւ 1 յուլիս Ապահովութեան Տեսչութեան պաշտօնեաները ձերբակալած եւ բանտարկած են 198 անկանոն եւ անբաղձալի օտարականներ : Ինչ կը վերաբերի պզտիկ անկանոնութեանց որոնց համար կը դատապարտուին ոստիկանական առեանններու առջեւ, ասոնց թիւը հազարներու կը հասնի : Առանք մէկ ֆրանքէն մինչեւ 5 ֆրանքի, եւ երբեմն աւելի մեծ տուգանքներու կը դատապարտուին :

**** Վերջերս զրոյց կը չրջէր թէ Սուրիահպատակ, Լիբանանահպատակներն ալ զինուորական ծառայութեան պիտի կանչեն : Ուզողը՝ Ֆրանսայի մէջ, չուղղը իրենց երկրին մէջ : Ես ալ, Լիբանանցի ըլլալով, գացի լուսաբանութիւններ ուզելու : Պատասխանը եղաւ այսպէս,— «Կը սխալիք, այդպիսի բան չկայ» : Հետեւաբար Սուրիա - Լիբանանցիները անհանգիստ ըլլալու բան մը չունին :*

**** Իրապէս անճնաւորութիւն մը որ չփումներ ունի զինուորական չրջա -*

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Դ· էջ)

ԱՆԱՐԱՄԱԼ ԼԱՐԵՐԸ
The Enemy of Stamboul

By DENNIS WHEATLEY Գրեց՝ ՏԵՆՆԻՍ ՈՒԻՆԹԼԻ
Trans : J. M. Թարգմ. Հ. Ս.

Մի ամիս անց Ֆրանսիայի դեսպանատունը Լոնդոնում ստացավ հետևյալ հեռագիրը Փարիզից.

«Ֆրանսիական հետախուզության գլխավոր տնօրինությունը հաստատ տեղեկություններ է ստացել, որ Ստամբուլում գտնվող գերմանական դեսպանատունը ամեն կերպ ձգտում է ամերիկյան դեսպանատան հետ սերտ կապեր հաստատել։ Ֆրանսիական հետախուզությունը կարծում է, որ գերմանական դեսպանատունը ամերիկյան դեսպանատան միջոցով ուզում է Ստամբուլում գտնվող ռուսական դեսպանատան հետ կապ

ՉԿԱՐԾԵՑ ՅՈՒԼԻՍԻ

Մեր մանուկ ընթ.— Ով մանուկներ, ուրախ եղեք ամառային արձակուրդների առթիվ: Ամառը ձեզ համար ուրախ ժամանակ է: Դուք կարող եք ձեր ծնողների հետ գնալ գյուղ, ուր կարող եք ազատ խաղալ, վազվզել, ձեր սրտերը հագեցնել ազատ օդով

նակներու հետ, հետեւեալը կը հաղորդէ : (Կուտամ վերապահութեամբ) :— *Այն բոլոր հայմաթլոնները որոնք բժշկական քննութենէ անցած պահուն իրենց տրուած հարցարան-թղթիկին ղրկան պատասխան չեն տար, (կ'ուզե՞ս զինուորագրուիլ, «դիւրացնելու համար հպատակութեան գործողութիւնները), պիտի կանչուին յառաջիկայ տարի : Եթէ ամուրի են՝ 18 ամիս, իսկ եթէ ա - մուսնացած եւ զաւակներու տէր՝ մարզանքի շրջան մը կատարելու համար :*

**** Մէկ շաբաթէ մը ի վեր մեռազադրծական 7 հաստատութիւններ, ո - րոնց մէջ Բօռէլը, զործադուլ յայտարարած են : Պատճառը հետեւեալն է.— Մասնագէտներու նախագահը, Ֆրանսահպատակ Հայ մը՝ հարիւր առ հարիւր համայնավար, դուրս կը հանուի Բօռէլի վարչութեան կողմէ, իբրեւ փոխ - դիրէժ անոր անցեալ տարուան գործունէութեան : Եւ ահա, մասնագէտները գործադուլ կը յայտարարեն : Առանց դլուխի մարմինը չաշխատիր : Եւ ի - բարու եռեւէ կը զոցուին 7 հաստատութիւններ 6000 (վեց հազար) հոգի դուրս ձգելով : Բանակցութիւնները կը չարունակուին :*

Ֆէրնան Պիւիսօնի չաբաթաթերթը, «La Tribune Provençale»ը զրէ այս չաբ - թուան թիւով թէ, ի՞նչպէս կ'ըլլայ որ անցեալ չաբաթ Սէն Պարնապէի մեռա - զադրծական հաստատութիւնէն չորս Ֆրանսացի ընկերվարական պատուի - րանները դուրս կը հանեն եւ զործադուլ չեն յայտարարեր, իսկ « հարիւրին հարիւր համայնավարի մը՝ նախկին Թրքահպատակ եւ պատերազմի ընթացքին մեր հայրենիքի դէմ դէնք վերցնողի մը համար ընդհանուր գործադուլ կը յայ - տարարուի, 6000 հոգի դուրս թափելով :

Ամէն կողմէ Թուրքիան կը գովեն

«Քան » երէկուան խմբագրականով Էնկիւրիի մէջ նշանագրուած համա - ձայնութիւնը կ'ողջունէ իբրեւ «կարեւոր դէպք մը որ նոր շրջան մը կ'աւետէ Ֆրանսայի եւ Թուրքիոյ յարաբերութեանց մէջ : Ֆրանքոֆիլութիւնը՝ երաշխաւորելու համար Ալեքսանդրէթի Սանճաքին ապահովութիւնը՝ կրնայ թանկագին մեկնակէտ մը կազմել որ եւ է նոր քաղաքականութեան հա - մար եւ պէտք է չնորհաւորել : Այն պայմանները որոնց մէջ համաձայնութիւն դոյացաւ, երբ Ազգերու Դաշնակցութիւնը չէր յաջողած վերջնապէս լուծել այս բարդ խնդիրը եւ երբ ահեղ վրայ ծագած դժուարութիւններ կրնային վհատեցնել ամէն բարեացակամութիւն, կարեւոր յաջողութիւն մը կը կազմեն Ֆրանսական դիւանագիտութեան եւ Թրքական դիւանագիտութեան համար» :

Կիսապաշտօնական օրկանը յետոյ բացատրելով կնքուած համաձայնու - թեանց իմաստը, դինուորական եւ քաղաքական, կ'եզրակացնէ .

— « Մինչդեռ կը վախցուէր որ Ալեքսանդրէթի խնդիրը լուրջ բարդու - թիւններ յառաջ բերէ ի վնաս մեր դիրքին եւ ազդեցութեան Մօտաւոր Արե - ւելքի մէջ, ընդհակառակն ան ծառայեց Ֆրանսայի եւ Թուրքիոյ մերձեցման՝ միջազդային դեռնի վրայ եւ կացութեան տեւական պայծառացման՝ աշխարհի ամէնէն զգայուն մէկ մասին մէջ : Թուրքիան խաղաղութեան հակառ ազդակ մը դարձաւ Մօտաւոր Արեւելքի մէջ : Իր քաղաքական եւ տնտեսական նշանա - կալից վերահաստատումը՝ Բէմալ Աթաթիւրքի մղումին տակ, իր բարոյական եւ ընկերային բարեչրջումը, իր կերպարանափոխումը արդիական պետութեան մը որ բոլոր ասպարէզներուն մէջ կը ներչնչուի արեւմտեան քաղաքակրթու - թենէն, վերջապէս իր յարաճուն չահագրգռութիւնը դէպի եւրոպական քաղա - քականութիւնը,— այս բոլորը անոր կ'ապահովեն դիրք մը եւ ազդեցութիւն մը զոր երբեք չեհասաւ նախկին օսմանեան կայսրութիւնը : Յայտնի է այն դե - րը զոր Թուրքիա կը կատարէ Պալքանեան Միութեան մէջ, թէ ինչպէս ան լայ - նամտօրէն կարդադրեց իր հինաւուրց կռիւները Յունաստանի հետ եւ ինչպէս այդ երկրին հետ կնքած համաձայնութիւնը դարձաւ հաւատարակչռութեան ուժ մը արեւելեան Միջերկրականի մէջ : Այս իրողութիւնները Թրքական բա - կամութեան կուտան արժէք մը զոր պէտք է դնահատել իր բուն գնով» :

**** Անգլիոյ երեսփ. ժողովին մէջ, երբ երկրորդ ընթերցումը կը կատար - ուէր Թուրքիոյ արուած վարկերու օրինագծին, երմտական նախարարը ուրա - խութիւն յայտնելով գոյացած համաձայնութեան համար, ըսաւ թէ փոխառու - թիւնները պիտի վերադարձուին տասը տարիէն, 1951էն 1962, վեցամսեայ մասնավճարներով եւ թէ տոկոսը հարիւրին մէկ պակաս պիտի ըլլայ գեղչի սակէն, նուազագոյն 3 առ հարիւրով : Այս առթիւ յայտարարեց .*

— « Քաղաքական տեսակէտով, մեր երկիրը երջանիկ է հաստատելով որ Մեծն Բրիտանիոյ եւ Թուրքիոյ բարեկամութիւնը զրուած է ամուր եւ առողջ հիմերու վրայ : Մեր երկու երկիրներուն զերագոյն նպատակն է պահպանել աշխարհի խաղաղութիւնը : Անոնց բարեկամութիւնը ուղղուած չէ ուրիշ ո եւ է ազդի դէմ : Երկուքն ալ կ'ուզեն զօրաւոր ըլլալ, բարելաւելու եւ պահպանելու համար իրենց ժողովուրդներուն բարգաւաճումը եւ կեանքի մակարդակը : Տնտեսական տեսակէտով, Թրքական կառավարութեան կատարած վերակազ - մութիւնը նշանակալից յառաջդիմութիւններ պահոված է : Երկրին էմտական վարչութիւնը չատ առողջ է : Թուրքիոյ վճարման կարողութիւնը ապրուեցաւ 1931ի տագնապէն եւ հարի եղաւ հաշուակցութեան համաձայնութիւններ կընք - ել ուրիշ երկիրներու հետ : Անդլեւմուրք համաձայնութիւնը միչտ լաւ չընդ - ծայաւ , քանի որ Թուրքիա չկրցաւ բաւականաչափ նեթածում կատարել դէպի Մեծն Բրիտանիա : Բայց երկրին տնտեսական յառջդիմութիւնը թոյլ կուտայ յուսալ թէ չուտով պիտի զարմանուի այս վիճակը : Անգլիական կառավարու - թիւնը մանաւորապէս գոհ է որ այս համաձայնութիւնը կնքեց Թուրքիոյ հետ »

Ինչպէս գրած էինք, բոլոր կուսակցութիւններն ալ հաւանութիւն յայտ - նեցին կառավարութեան, եւ մէկ երկու ընկերվարականներ միայն պիտի ուզեն թէ Գերմանիան պաշարելու փորձ մըն է որ կը կատարուի :

ՋԱՆԱՋԱՆ ԼՈՒՐԵՐՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՄՈՍԿՈՒԱՅի մէջ չրջած զրոյցներու համաձայն, որ արձանագրուած են լե - հական եւ Ֆրանսական թերթերու կողմէ, Տիմիթրով, Կոմինտէրնի վարիչը (Պուլկար) , ձերբակալուած է, իբրեւ պատասխանատու Սպանիոյ խորհրդային քաղաքականութեան ձախողման : Սեւ ցանկն անցած են նաեւ իր երկու զար - ձակիցները, Դանեյեւ եւ Պոպով : Իսկ իտալական թերթերը կը գրեն թէ նոր տուրքերը բուռն զժգոհութիւն պատճառած են Սպիտակ Ռուսիոյ եւ Ուկրայ - նայի մէջ : Ձերբակալութիւնները եւ դնդակահարութիւնները կը չարունակուին մոլեղնօրէն :

ՊԼԻՐՈՒԹԷՆ կը հետապրեն թէ երկու տարի բանտարկութեան դատապար - տուեցաւ Տոքթ . Շալֆուն, որ պետութեան դէմ դաւադրութիւն մը սարքած էր անցեալ մայիսին : Դատապարտուեցաւ նաեւ իր մէկ մեղսակիցը :

ՊԱՂԵՍՏԻՆի ՌԱՌվԱՒԹԻՒՆՆԵՐը կը չարունակուին անընդհատ : Հինգ Հրեաներ սպաննուեցան երեքչաբթի օր, 10—12 հոգի ալ վիրաւորուեցան : Կը վախցուի որ քաղաքացիական պատերազմ ծագի Հրեաներուն եւ Արաբներուն միջեւ :

ԻՏԱԼԱՑի ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ՉԻՆՈՒՈՐՆԵՐ Ֆրանսական հողը մտնելով, հրաչ բացին երկու Ֆրանսացի չրջիկներու վրայ, որոնց մէկը ծանրապէս վի - րաւորուեցաւ :

ԱՋԳ. ՊԱՐԳԵՒԱՒԱԶի 7րդ չաբթին վիճակահանութիւնը պիտի կատարուի վաղը, ուրբաթ, Քոպուրի մէջ (Բալքաններ) :

Հ. Յ. Դ.

Ժողով

ՇԱՎԻԼԻի «Արզուհեան» խումբի ժողովը *10* ցուլիս, կիրակի երեկոյ ժամը 9ին սովորական հաւաքատեղին։

Գործ. ԱՇԽ.

ԼԱՍԻՈՆԱՑի «Խաժակ» խումբի ընդհ. ժողովը 7 ցուլիս, Հինգչաբթի, երեկոյ ժամը 8 30ին սովորական հաւաքատեղին: Բոլոր ընկերներու ներկա - յութիւնը անհրաժեշտ է:

ԼԻՈՆի «Մուսա-Լեռ» խումբի ընդհ. ժողովը 8 ցուլիս, Ուրբաթ, երե - կոյեան ժամը 9ին. 15 Quai Victor Augagneur սրճարանի ներքին սրահը:

ՊՈՒԼՎԱՐ ՕՏՏՈՅի «Վռամեան» ենթակոմիտէի ընդհ. ժողովը 9 ցուլիս, շաբաթ երեկոյ ժամը 8ին, սովորական հաւաքատեղին:

ՄԱՐՍԷՅԼԻ «Ընկեր կարօ» ենթակոմիտէի ընդհ. ժողովը 9 ցուլիս. շա - բաթ երեկոյ ժամը 8ին, սէնթ Ընթուանի սովորական հաւաքատեղին, կա - րեւոր օրակարգ:

ՊՈՒԼՎԻՒԶԻի «Վարանդեան» խումբի դասախօսական ժողովը 9 ցու - լիս, շաբաթ երեկոյ ժամը ճիշդ 9ին, ընկ. Ազապեանցներու բնակարանը: Ներ - կայանալ անդամատեսրով: Գիտի դասախօսէ *ԸՆԿ. ՊՕՂՈՍ ՀԻՒՄԵԱՆ*:

Մեծ դաշնակահանդէս

ԽԱՆԱՍՈՐԻ ԱՐՇԱԻԱՆՔԻ 41ՐԴ. ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՒ

կազմակերպուած Հ. Ց. Դաշնակցութեան Սարսէլի «Հբայր» եւ Ան - նուվիլի «Ռազմիկ» խումբերու կողմէ, հովանաւորութեամբ Հ. Ց. Դ. «Վարդան» ենթակոմիտէի։ 10 Ցուլիս, կիրակի, առաւօտեան մինչեւ ե - րեկոյ, Օ.-ՏԻ.-ՌՈՒՄԱՆի եւեր. Օ-ՓՈՆ-ԻՈՒՆՏԷԼի ծառաստանին մէջ։

Բանախօսութիւն, երգ, արտասանութիւն եւ դաշտային խաղեր։ Պիտի նուագէ Քաուխտ ԳԱՐԵԳԻՆ եւ փոքրիկն Ռէժինա սիրտ պարէ ֆայկական եւ կովկասեան պարեր։ Ճոխ եւ դիւրամատչելի պիւֆէ, խմիչք։ Մուտքը ազատ է։

Ընծրեւի պարագային կը յետաձգուի

Դաշնակահանդէս

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ Հ. Ց. Դ. ԻՍԻՒ «ՋԱԽԱՐԵԱՆ» ԿՈՄԻՏԷԻ ԿՈՂՄԷ

10 Ցուլիս, կիրակի առաւօտեան մինչեւ երեկոյ
Մէօտօնի պաղ աղբիւրին մօտ (Քափի Վէրի կից)
Բանախօսութիւն, արտասանութիւն, էլգ եւ նուագ։
Ընծրեւի պարագային կը յետաձգուի։

Պարահանդէս

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ՓԱՐԻԶԻ ՀԱՅ ԵՐԻՏ. ՄԻՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ

9 Ցուլիս, Շաբաթ, ժամը 10էն մինչեւ կէս գիշեր իր կեդրոնա - տեղին 8, Rue Bossuet, Paris:

SAUTERIE — ORCHESTRE

ՏԱՐԵԿԱՆ ՄԵԾ ԳԱՇՏԱՀԱՆԴԷՍ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ՍԻՓԱՆ-ԿՈՄԻՏԱՍ ԵՐԳԱՍԻՈՒՄԲԻՒՆ ԿՈՂՄԷ

10 Ցուլիս, կիրակի առաւօտ ժամը 10էն մինչեւ կէս գիշեր
ՌՈՊԻՆՍՈՆի Մէջ, GRAND ARBRE, Maison FIQUET

Գեղարուեստական բաժին, զանազան խաղեր եւ անակնկալներ, ընտիր նուագախումբ Թանկօ եւ ժազ, ճոխ պիւֆէ դիւրամատչելի գիներով։

ՀԱԶՈՐԴԱԿՈՒԹԻՒՆ ՄԻՋՈՑՆԵՐ.— Մեթրօն փոխել Denfer Rochereau եւ առնել Robinson գիծը։

Մուտք 5 Ֆրանք
Ուտելիքը կարելի է միասին բերել

ԴԱՇՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

Մարսէյլի Հայ երաժշտական Միութեան դաշտագնացութիւնը 10 Ցուլիս, կիրակի, «Սէն Սիր»ի ծովահայեաց անտառին մէջ։

Արձանագրութեանց համար դիմել՝ Թէլեանի, 8 a Rue Francis de Pressensé, Մարսէյլ, ամէնաուշը մինչեւ 7 Ցուլիս, Հինգշաբթի երեկոեան ժամը 7ը։ Երթ-դարձ շոգեկառքով 7.50 Ֆրանք։

Դաշնակահանդէս

ԴՊՐՈՑԱՍԷԷրի ՍԱՆՈՒՑ ՄՇՈՒԹԵԱՆ

24 Ցուլիս, կիրակի, ժամը 3ին, վարժարանին պարտէզը
1, Bld. du Nord, le Raincy

կը ներկայացուի ԱՆՈՒՇ օփերէթէն պատկերներ զեկավարու - թեամբ ԴՄԲԷԹԵԱՆի։ LES CHAUSSONS DE LA DUCHESSE ANNE *(օփերէթ), հայկական պարեր, ծաղիկներու պալէ, զանազան պատկեր - ներ, մարզական խազեր։*

Ճաշ եւ պար մինչեւ մտիւ 10։ Ճոխ պիւֆէ ժատչելի գիներով, (կը խնդրուի մրասին ուտելիք չբերել)։ Մուտք 5 ֆրանք։

ՀԱԶՈՐԴԱՑՈՒԹԻՒՆ.— Opéraէն կամ Jaurèsէն առնել օմնիպիւս 21A եւ իջնել Raincy-Pavillons, Gare de l'Estէն շոգեկառք՝ direction Gargan, իջնել Raincy-Pavillons:

ԱՐՇԱԿ ԶՕՊԱՆԵԱՆի ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՅԻՍՆԱՄԵԱՑ ՕՐԱԿԱՐԳԱՆ

9 Ցուլիս, Շաբաթ երեկոյ ժամը 9ին, Պէյսան Մարսէյլեի սրա - հին մէջ, ներկայութեամբ յօբելեարին եւ հովանաւորութեամբ երիք յարանուանութեանց հոգեւոր հովիւներուն։

ԿԸ ՆԱԽԱԳԱՀԷ Պ. ՏԻՐԱՆ ՔԷՖԷԵԱՆ

Բանախօսութիւններ եւ գեղարուեստական բաժին։

ԿԸ ՓՆՏՈՒԻ

— Մարաշցի Վարդան Գալաֆեան կը փնտռէ իր եղբայրը Հաճի Յարու - թիւն Գալաֆեան եւ քեռայրը Յով - հաննէս Տօնապետեան Կէմէրկէկցի, ո - րոնք 8 տարի առաջ կը գտնուէին Ֆրանսա, Վիչէն։ Տեղեկացնել Վար - դան Գալաֆեանի Mikropolis, Drama, (Grèce)։

ԳԱՑԻՔ ՏԵՍԻՔ ԼԻՈՆի ՄԷՋ

Cinéma REXY

Cours Lafayette. angle Garibaldi

Le Gérant : H. STEPHAN

Imprimerie A. DER (AGOPIAN)

17, Rue Demesme — PARIS (13)

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ

«ՄԱՑԻՍ 28»

ԳԵՂԵՑԻԿ ՀԱՏՈՐ ՄԸ Հ. Հ. ՔՍԱՆԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻԻ ԱՇԽԱՏԱԿՑՈՒԹԵԱՄԲ ԾԱՆՕԹ ՄՏԱՒՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ

Հրատարակութիւն Հ. Ց. Դ. Արեւմտ. Եւր. Կ. Կ.ի։
Ապսպրանքները կանխիկ։
Գինն՝ Ֆրանսա եւ գաղութները 5 ֆր., փոսթի ծախքով 6 ֆր։ արտասահմ ան 25 սէնթ։ Դիմել՝ S. TOROSSIAN, 88 Rue de Bagneux Cachan, (Seine) France։

ՀԱՑ - ԲՈՑԺ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ

Խմբագիր՝ Շ. ՆԱՐԴՈՒՆԻ — ՁՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

Հաւաքածոյ կազմելու համար կը պակսին հետեւեալ թիւերը 1, 2. 13, 20, 39։ *Առաջին տոթիւ պէտք ունինք թիւ 39ին։ Վերապա - ձնողներուն պատրաստ ենք տալ պահանջուած փոխարինութիւնը։ (Շնորհակալութիւն մեր բարեկամներուն, որոնց բարեացակամութեա - լրացուցինք քանի մը հաւաքածոյ)։*

ՀԱՅ ԲՈՑԺի երեք տարուան հաւաքածոն, առանց ապահովա - պակաս բիւերը, *կը ծախուի 50 Ֆրանք,— մօտաւորապէս 700 էջ հատոր մը։*

Դիմել՝ 17, Rue Damesme, PARIS:

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ են Հայ-Բոյժի 45, 46 *եւ* 47 *թիւերը։*

ՀԱՅ - ԲՈՑԺի տարեկան բաժնեգինն է Ֆրանսայի համար 30, *արտասա - մանի համար* 35 *եւ* 40 *Ֆրանք (ըստ երկրի)։*

ՎԱՀԱՆ ԵՒՐՃԱՆԵԱՆ

ԻՐԱՒԱԳԷՏ - ԽՈՐՀՐԴԱԿԱՆ

Չտարհգէք դիմել իրեն, ամէն գատական եւ վարչական գոր - ծերու համար։

Ամէն օր ժամը 10էն 12 *եւ* 5էն 7. *բացի* ՇԱԲԱԹ *եւ կիրակի օրերէն։*

44, Rue Lafayette. Tél. Prov. 78-38.

Etude de Me BERNARD WAHÉ

(17e ANNÉE)

Licencié en Droit de la Faculté de Paris
Ancien élève de l'École des Hautes Études Sociales

JURISCONSULTE

de

Droit Français et International Privé

Mandataire en Justice

59 rue Lafayette, Paris (Gare du Nord) Tél. NORD 68—02

ԿԸ ՄՏԱՃԱՀՆԻ ամէն տեսակ գործեր, Փարիզի, գաւառի, գաղութներու եւ արտասահմանի մէջ։ Խորհրդակցութիւն իրաւագիտական ամէն տեսակ խնդիրներու։ Օրկածի գործեր, ամէն լեզուէ թարգմանութիւններ։ Նաթիւրալիզասիոնի օրինական ձեւակերպութիւններ եւ անուններու փոփոխութիւն, ընկերու - թիւններու կազմութիւն եւ լուծում։ Ամէն տեսակ գործերու խմբագրութիւն։ Իրաւագիտական քննութեանց եւ մրցումներու պատրաստութիւն։ Ճառերու եւ գասախօսութիւններու խմբագրութիւն։ Փողոցային երթեւեկութեան կանոնագիր ամէն չգաւառներուն կուտայ կանխավճար առանց տոկոսի եւ մէկնոդէէքի։ Կ'ընդունի ամէն օր ժամը 9—10 եւ 5—7։

Կ'ընդունի նաեւ ժամադրութեամբ։

ÜN DUZE

MARQUE DÉPOSÉE



Véritable Anisette Orientale

ԶՕՐԻՑ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ ՕՂԻ - ازمير مصنوعات اسلامى

DISTILLERIE OTTOMANE ISTAMBOUL

ՐԱԿԸ ՏԻԻԶ

Զուտ խաղողէ քաղուած եւ անիսոնով պատրաս - ուած հայկական օղի։ *ՐԱԿԸ ՏԻԻԶ*, զգուշու - արուեստական օղիներէ։ Ձեր ստամոքսը կ'այրէ։ Գիշերները չուր կը խմէ եւ կը վնասէ ձեր առո - ղութեան։ Խմեցէք *ՐԱԿԸ ՏԻԻԶ*ը որուն անո - յշատ, կազդուրիչ եւ ախո - ժարեր ըլլալը հաստատ - ուած է։

Dalak upeian 8 Rue Suffren
Dépôt: 7 Rue de la Paix, Marseille. Tél. Dragon 70—89



“ ՇԻՐԱԿ ”

Արեւելքի միակ իսկական օղին է։ Անզուգական Ընմրգելի։ Անխարդախ։ Առաջնակարգ զօրացուցիչ ախորժա - բեր, պատրաստուած կուտ չափիչ մի - ջոց Հայ տնտեսական սեզանին զարդ։

ԿԱՊՈՑՆԵՐ ՈՒԻՍԱՍՏԱՆ ՁԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Անխնայ մեծ մրցում անգլիա կայծ եւ չեխոս - լովաք կերպասներու։ այր մարդոց վերարկուի, տաքուստի, կա - նանց ռոպերու եւ հագուստներու համար։ Առաջնակարգ կօշիկ - ներ, ներմակեղէններ եւ նպարեղէններ։ Ունակրճատ գրի ծ. քեռնայ։ Ձափաւոր գիներ։

Դիմել՝ **American Lloyd, Paris (9). 7 rue Auber**
Tél. Opéra 67-77

ՀԱՑԵՐՈՒՆ ԺԱՄԱԴՐԱՒԱՑՐԸ

Ճաշարան Ֆ Լ Օ Ր Ի Ա

51, Rue Monsieur le Prince, Paris (6e)

Մէրթօ՝ Օտէօն եւ Սէն Միշէլ

Արեւելեան եւ հայկական խնամուած կերակուրներ։

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

ՀԱՅԱՉԱՅՆ

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
17, Rue Damesme, PARIS (13e)

Téléphone : Glacière 15 - 70
Chèque Postal Paris 1678 - 63
(ՐՐԹԵԻԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.—

	ՏԱՐԵԿԱՆ ՎՃՑԱՄՍԵԱՑ	ԵՒԱՄՍԵԱՑ	
Յրանսա եւ Գաղուքներ	150 ֆրանք	75 ֆրանք	40 ֆր.
Անգլիա եւ Իտալիա	265 ֆրանք	140 ֆրանք	
Ուրիշ երկիրներ	215 ֆրանք	110 ֆրանք	

ՈՒՐԲԱԹ
8
ՅՈՒԼԻՍ
VENDREDI
8 JUILLET
1938

ԺԴ. ՏԱՐԻ — 14e Année No. 3777

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒՒ ԽՕՍՔ

ԸՆԿԱԼ ՔԱՂՑՐՈՒԹԵԱՄԲ...

« Լա՛ւ կ'ուզենք Ա. Հայրապետէն», կ'ապաղաչէ Եգիպտոսի ռամկավար օրկանը, Յունիս 28ի խմբագրականով :

Լա՛ւ կը մուրայ Երուսաղէմի Պատրիարքը, «նկատելով որ ապրիլ 23էն ի վեր հեռագրով եւ նամակով որ եւ է լուր չէ առացուած Էջմիածինէն»:

Կարղացիք արդէն: Ճարահատ, պատրիարքը Փրանսերէն հեռագիր մը ուղղած է Էջմիածին, Չէօրէքճեան արք.ի, յունիս 13 թուականով.

--- « Կը սպասենք անվրէպ մանրամասնեալ նամակի վասն յուղարկաւորութեան Սրբազան Հայրապետին, կացութեան Մայր Աթոռոյ, անդամոց Գերագոյն Խորհուրդի եւ Ձեր տեղակալութեան կոնդակին»:

Որ եւ է լուր առացած չըլլալով, պատրիարքը երկրորդ հեռագիր մը զրկած է յունիս 29ին, (պատասխանը վճարուած).

--- « Ամէն կողմէ կը դիմեն մեզի. հաճեցէք փութացնել սպասուած տեղեկութիւնները »:

Ինչպէս գիտէք, Ամենայն Հայոց կաթողիկոսին մահուան լուրը --- կաթուածահա՛ր --- արտասահման հասաւ ապրիլ 12ին, Երուսաղէմի պատրիարքին միջոցաւ: Հեռագիրը կ'ըսէր թէ մահը տեղի ունեցած է ապրիլ 10ին: Համաձայն ընկալեալ սովորութեանց, կաթողիկոսները կը թաղուին մահէն եօթը օր վերջը :

Արդ, ապրիլ 10էն ի վեր ոչ մէկ լուր՝ թաղման մասին: Ե՞րբ թաղեցին: Ո՞վ կատարեց օծումը: Ո՞վ խօսեցաւ դամբանականը: Ո՞ւր թաղուեցաւ Սրբէն Ա.:

Ձիշդ իննսուն օր եւ ոչ մէկ լուր: Ոչ ալ որ եւ է կոնդակ՝ տեղապահութեան մասին:

Մեզի համար պատմելիք չեն այս բոլորը:

Մէկէ աւելի ապրիւրներ հաղորդեցին թէ Ի՛նչպէս «կաթուածահար եղած է» կաթողիկոսը: Ոչ թէ ապրիլ 10ին, այլ 6ին, երկու եպիսկոպոսներու եւ մէկ վարդապետի հետ:

Մեր թղթակիցները անցորդներու բերնէն քաղելով, մագլելով, նկարագրեցին սպանութեան մանրամասնութիւնները, որոնք չեն հերքուած մինչեւ այսօր :

Պատասխանատու անձնաւորութիւն մըն ալ իր կարգին հաստատեց թէ կաթողիկոսը ՍԵՂԱՒԱԾ են, իսկ Բագարան եւ Մեսրոպ եպիսկոպոսներ [illegible] մը հետ (Դանիէլ վարդ. Զաւոյեան):

Միեւնոյն ատեն հաղորդուեցաւ թէ Զեկան աւարի առած է Էջմիածինը, տանելով նոյնիսկ միւռոնի կաթսան :

Եւ ուրիշ քսմնելի պատմութիւններ, որոնք չըլլան կ'ընեն ամիսներէ ի վեր: (Ո՞ւր են, օրինակ, սա երեք ալեհեր վաստակաւորները, Հրաչեայ Աճառեան, Մանուկ Աբեղեան, Արսէն Տէր-Ոսկեան ...):

Մեր պատուարժա՛ն «Հայաստանասէրները» նախընտրեցին արդուզի դեր կատարել, այս քսմնելի դէպքերուն առթիւ: Փոխանակ իրողութիւններով զբաղելու, ճամարտակութիւններ թխեցին: Փոխանակ տեղէն չարժելով պրպտումներ կատարելու, առան ու իրարու առուգելու, անոնք չարունակեցին բուռ ալաքներ արձակել, գարչելի հէքեաթներ պատմել, հեգնել եւ օրօր կարդալ : Նոյնիսկ անթելի պատմութիւն մը հիւսեցին, այն ալ միայն եւ միայն Սոֆիայի մէջ լսուած, հայ խմբագրի մը ականջով ...

Եւ հիմա, ամիսներ վերջը, տեսնելով որ ոչ նամակ, ոչ ալ հեռագիր կը հասնի էջմիածինէն, նոյնիսկ իրրեւ պատասխան, ի՞նչ են անցեր, --- «Լա՛ւ կ'ուզենք Ա. Հայրապետէն»: Կը պահանջե՞ն: Եգիպտոսի ռամկավար օրկանն է որ կը յայտարարէ բարձրաձայն .

--- « Պահանջելու կ'ըսեմ եւ ոչ խնդրելու: Անցաւ խնդրանքին եւ ակնկալութեան պայմանաժամը: Կը պահանջե՛նք՝ այն իրաւունքով զոր մեզի կուտան տարիներէ իվեր մեր հայրենիքին հանդէպ մեր ունեցած հաւատարիմ վերաբերումը, մեր անոր մատուցած նիւթական պզտիկ եւ բարոյական մեծ օժանդակութիւնները»:

Հրաշալի՛, հրաշալի՛.--- Մենք ժամանակին չատ բարիք ըրինք քեզի, սիրելի Հայաստան, դուն ալ բարի եղիր լուր մը տալու մեզի: Ինտո՞ր ես, ողջ՞կ ես, իրա՞ւ է որ կաթողիկոսը խեղդեր են : «Ի՛նչպէս տեղի ունեցաւ մահը, ի՛նչպէս թաղումը եւ անկէ ասդին ի՛նչ կ'ընէ էջմիածինը ներկայի եւ ապագայի համար »:

Մենք ալ մեր կարգին խորապէս ապրուած՝ այս հոյակա՛պ կռչէն, կ'աղաղակենք ի խորոց սրտի.

-- « Ընկա՛լ քաղցրութեամբ, Տէր Մոսկով (Աստուած) հզօր, դառնացողին զաղաչանս, մաուիր զթութեամբ... »:

Այո, այո՛, «մաուիր զթութեամբ», Տէ՛ր Մոսկով: Ահա ծունկի են եկեր հաւատարիմները,--- անոնք որ միշտ բարձր պահեցին քու վարկդ եւ երեւանի վարկը:

« Ընկա՛լ քաղցրութեամբ» --- ահա քեզի կը դիմեն անոնք, «որդիական իրաւունքներուն պատշաճ յիշեցումով»:

Մեծ բան չէ իրենց ուզածը, լսէ՛.

--- « Ասոր համար՝ կը խորհիմ եւ որ նպատակայարմար բայլ մըն է, նախ, դիմել Ս. Միութեան Փարիզի դեսպանատան, օրինակ, եւ խնդրել որ իմ դեսպանատունը իմանայ եւ իմացնէ մասնակ, եւ խնդրել որ իմ դեսպանատունը իմանայ եւ իմացնէ մասնաւորապէս Էջմիածնի վիճակը՝ խորէն կաթողիկոսին մահուան, թաղման եւ իր յաջորդին ընտրութեան հարցերով միասին: Խընդրել, յետոյ, որ արտասահմանէն պատուիրակութիւն մը արտօնուի երթալ Ս. Հայաստան եւ տեղին վրայ անձամբ ծանօթանալ կացութեան »:

Եւ դուն, ժողովուրդ Հայոց որ ի սիրուս աշխարհի, դա՛ս առ: Սորվէ թէ աննման պատկներդ ի՛նչպէս կը սիրեն Հայաստանը...

Շ.

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ ԷՎԻԱՆԻ ՄԷՋ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԱՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

Շաբաթ օր Էվիանի մէջ բացուեցաւ միջկառավարական խորհրդաժողովը՝ ուսումնասիրելու համար քաղաքական տարագիրներու խնդիրը, որ երթալով կը ծանրանայ: Կը նախագահէր Ղ. Պէտնոժ, Շերակոյտի արտաքին գործերու յանձնաժողովին նախագահը, որ առաջին խօսքը տուաւ Մ. Նահանգներու պատուիրակին (այս ժողովը թելադրած էր նախագահ Րօզվելթ): Ամերիկայի ներկայացուցիչը բացատրեց թէ արտագաղթի հոսանքը կրնայ ազէտի մը յանգիլ եւ առաջակացնել միջազգային ճգնաժամը, եթէ այսպէս տեւէ եւ եթէ կարգ մը պետութիւններ չարունակեն դուրս նետել ահագին բազմութիւններ՝ իրենց բնակչութենէն: Եզրակացնելով, Մ. Նահանգներու պատուիրակը ըսաւ թէ անհրաժեշտ է միջազգային մնայուն յանձնաժողով մը կազմել, Փարիզի մէջ, անդամակցութեամբ ժողովին մասնակցող պետութեանց դեսպաններուն: Մնացեալ խօսքերն ալ այդ պետութիւններէն պիտի հոդան:

Ցետոյ խօսեցաւ Անգլիոյ ներկայացուցիչը, եւ յայտարարեց թէ Ը՛ր կառավարութիւնը պատրաստ է գործակցելու, տարագիրներու հարցը գործնապէս լուծելու համար: Այս առթիւ դիտել տուաւ թէ ժողովը հրաւիրուած է լուծելու միայն Գերմանիոյ եւ Աւստրիոյ քաղաքական տարագիրներուն խընդիրը, եւ ոչ թէ գաղթի ընդհանուր հարցը :

Ֆրանսայի ներկայացուցիչը, Պ. Պէտնոժ, յայտարարեց .

— Ֆրանսական կառավարութիւնը ամբողջովին կը գնահատէ ամերիկեան կառավարութեան նախաձեռնութիւնը: Ֆրանսա կը համակրի այս ձեռնարկին մանաւանդ անոր համար որ, Մեծ պատերազմէն ի վեր անընդհատ՝ընդունելիկը հիւրընկալէ եւ նոյնիսկ կը տնտեսուէ բազմաթիւ տարագիրներ եւ ամէն տեսակ ժխտականներ: Այս տարագիրներուն թիւը այսօր կ'անցնի 200.000ը 40 միլիոն ժողովուրդի մը համար, որուն մէջ երեք միլիոն օտարականներու ներկայութիւնը արդէն իսկ դժուարին խնդիր մը կը յարուցանէ: Այս թիւը համեմատաբար ամէնէն բարձրն է օրակարգի հարցին մէջ: Ֆրանսա այս հարցը լուծած է յանձն առնելով ամէն վտանգ, մտանուր հաստատութեանց մարդասիրութեամբ եւ համերաշխութեամբ, պետութեան օժանդակութեամբ եւ Ազգաժողովին կողմէ տեղծուած մարմիններու միջոցաւ: Ֆրանսա հաստատուած կը մնայ իր վարդեմի աւանդութեանց, թէեւ արդէն իսկ ծայրագոյն սահմանին հասած, եթէ անցած չէ»: Պ. Պէտնոժ եզրակացուց թէ իր կառավարութիւնը պատրաստ է աջակցելու նոր ձեռնարկին, հաշուի առնելով, սակայն որ [illegible]

Գերմանիա չի մասնակցիր այս ժողովին, քանի որ ամէնէն աւելի իրեն դէմ ուղղուած են քննադատութիւնները, հակահրէական օրէնքներու հետեւանքով ,

Անգլիական տեսակցութիւնը պատերազմի երկիւղներու մէջ

Անգլիոյ երեսփ. ժողովին մէջ, երբ կը քննուէր Թուրքիոյ տրամադրուած վարկերու խնդիրը, ելմտական նախարարը յայտարարեց թէ կառավարութիւնը նոյն քաղաքականութեան պիտի հետեւի ուրիշ երկիրներու հանդէպ ալ: Այս առթիւ մասնաւորապէս յիշեցուցին հարաւ. արեւելեան Եւրոպայի պետութիւնները :

Այս տրամադրութիւնը մեծ իրարանցում պատճառած է Գերմանիոյ մէջ : Թերթերը բացէ ի բաց կ'ըսեն թէ Անգլիոյ ձեռնարկները ուղղուած են Գերմանիոյ դէմ, անոր ձեռքէն առնելու համար առեւտրական շահաստանները Ռումանիոյ, Յունաստանի եւ ուրիշ երկիրներու մէջ: Յունական թերթերը արդէն կը գրեն թէ Անգլիա կ'ուզէ առեւտրական ընդհանուր ճակատ մը կազմել կեդր. Եւրոպայի դէմ, Յունաստանն ալ քաշելով: «Անշուշտ դժուար պիտի ըլլայ գերմանական ապրանքները քշել յունական հրապարակէն, որ վարժուած է անոնց, բայց Յունաստանի աշխարհագրական դիրքը այնքան կարեւոր է որ Անգլիա կրնայ կարգ մը զոհողութիւններ կատարել»:

Գերմանական թերթերը կը գանգատին թէ Ռումանիոյ մէջ ալ նշաններ կ'երեւան Գերմանիոյ երես դարձնելու եւ արեւմտեան պետութեանց կողմը հակելու, առեւտրական ճակատին վրայ: Կարեւոր թերթ մը դիտել կուտայ թէ Անգլիա չուզեր չվերադարձնել գերմանական գաղութները: Արդ, Գերմանիա հարկադրուած ըլլալով հարաւային արեւելեան Եւրոպային ճարել անհրաժեշտ նախանիւթերը, այժմ ալ կ'ուզէն իր ձեռքէն խլել տաժանելի աշխատանքով ստացուած պատուղը, «ճիշդ ինչպէս որ Աստուածաշունչին մէջ հարուստը կը սպաննէ աղքատին մէկ հատիկ ոչխարը: Ամէն անգամ որ վաճառականութեան մէջ նեղացուցիչ փոփոխութիւն մը կը կատարուի անգլիական շահերուն համար, բրիտանական կառավարութիւնը կ'որոշէ միջամտել առեւտրական բնականոն հոլովման դէմ: Տարակոյս չկայ թէ անտեսական բնական օրէնքներու հակառակ է իր միջամտութիւնը հարաւային արեւելեան Եւրոպայի անտեսութեան մէջ »:

Հրեաներու քշտատութիւնը Վիեննայի մէջ

Լոնտոնի թերթերը կը գրեն թէ վերջին քանի մը օրերու ընթացքին 800 (ութ հարիւր) Հրեաներ անձնասպանութիւն փորձած են Վիեննայի մէջ: Շաբաթ օր, երբ սովորաբար հրէական յուղարկաւորութիւն չի կատարուիր, բառնիները չարունակ մեռելական արարողութիւններով զբաղած էին եւ չկրցան վերջացնել արեւամուտէն առաջ: Սինակոկները, հրէական հիւանդանոցները, դերեզմանոցները եւ ուրիշ հաստատութիւններ չարունակ այցելուներ կ'ընդունին: Անձնասպանութենէն այս ահռելի յաւելման մէկ պատճառը կը համարուի այն հրամանը որուն համաձայն բոլոր հրեայ աշխատաւորները պէտք է արձակուին, արհիւններու քով ծառային թէ ցեղակիցներու: Կառավարութիւնը յայտարարեց թէ այդ հրամանը տպուած է առանց իր գիտութեան, բայց անոր աղետալի ազդեցութիւնը բոլորովին խորտակեց արդէն յուսահատ

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

ՕՐԸ ՕՐԻՆ

ՊԱՐԶ, ՊԱՐԶ ԵՒ ԿԱՐՃ

Սովորութիւն ունի՞ք աչքէ անցընելու հայկական «կոչ»երը,— հայրենասիրական, քարեգործական, կրթական, հայրենակցական կամ գրական - գեղարուեստական :

Ես որ ստիպուած եմ շաբաթը քանի մը հատ կարդալու, կռկելու եւ գրաշարին յանձնելու, հետզհետէ կը սոսկամ անոնց ոչ միայն առատութենէն եւ բովանդակութենէն, այլ եւ լեզուէն եւ շարադրութենէն :

Կարծես նոր սեռ մըն է որ կը ծաղկի մեր գրական անդաստանին մէջ, առանց հեղինակութեան խնդիր յարուցանելու:

Իրենց ծաղկազարդ նմոյշներ կան, արդէն տպուած կամ սեղանին վրայ:

Հայրենակցական մը կ'որոշէ սար մասնաճիւղ մը հաստատել, համերաշխութեան յորդոր կարդալ եւ կամ ձեռնարկ մը փորձել.— կո՛չ :

Կը յանձնեն գրոց - բրոցի մը, որ կը թխէ, կ'ուռեցնէ, կը ծաղկազարդէ եւ խասցէն գրելով կ'ուղղէ մամուլին :

Կան թերթեր որ նոյնութեամբ գրաշարին կը յանձնեն զայն: Որո՞ւ հոգ թէ ամէնէն առաջ խմբագիրը ինք բան չի հասկնար :

Ուրիշ թերթեր ալ , օրինակ «Ցառաջ»ը, կ'աշխատին ձեւի բերել, գոհացնելու համար ոչ միայն Միութիւնը, այլեւ «ընթերցող հասարակութիւնը»:

Այս տեղ է որ կը սկսի բուն չարչարանքը :

Չարդե՞լ: Բայց ո՞վ ըսաւ թէ դիւրին աշխատանք է «չարդելը», կարմիր կամ կապոյտ մատիտով :

Կոչը բան մը ըսել կ'ուզէ: Եւ դուն ստիպուած ես մտնել: Ջատել հողն ու քարը, խիճն ու աւազը, յարդն ու կեղեւը, գտնելու համար միջուկը.— քանի մը հատիկ ցորեն:

Իսկ այս կը նշանակէ ոչ թէ չարդել, այլ նորէն խմբագրել — յաճախ ուրիշ թուղթի մը վրայ եւ ոտ հասկցած լեզուով :

Մէկը չրհեղեղէն կը սկսի, ուրիշը՝ Սուլթան Համիտէն կամ համաշխարհային պատերազմէն: Իսկ ընդհանրապէս, բոլորն ալ մասնաւոր նիգ մը կը մատնեն կարելի եղածին չափ «գրաքար» գրելու, կարաւան-կարաւան ածականներ շարելու, խօսքերը օղակ օղակ իրար կապելու, կարծելով թէ աւելի ազդու կը դառնայ :

Նմոյշ մը՝ շատերու մէջէն. (տպագիր):

— « *Ուրեմն մասնաւորելով մեր խօսքը Թող մեր ցանկալի Թելադրանքն ալ ըլլայ կեդրոններու ծանօթ վարիչ անդամներուն՝ որպէսզի չուտով կատեցուի խուզ եւ համր սին ու սխերխամ պայքարը իրարու դէմ եղբայր եղբօր դէմ քէնն ու տեսլութիւնը ...ի հարկէն ներս որուն արդիւնքը ուրիչ բան չի կրնար ըլլալ եթէ ոչ քայքայումն ու ապերոսութիւն այս մեր ըղձալիօրէն, որ վազուց ի վեր, աւելի քան 4 — 5 տարիներու ընթացքին ի յայտ եկած է եւ կը շարունակուի ,եւ որու սխալ եղելութեան առջեւ ոմանց անվերջ լռութիւնը, ոմանց բոլորովին հեռանալն ու չէզոքացումը եւ չատերու լրեկեայն տածած վերապահ դիրքը, ալ աւելի լայն ասպարէզ բացած է մեր չքնաղ մոլեռանդ դեկավար մարմիններու առջեւ որոնք երբեմնի խաղաղ մթնոլորտն ու անոր հանդուցիչ ծոցը այսօր մոլեգնոտօրէն ադմկալի հակամարտութեան բոյներու վերածած են»:*

Ինչպէս կը տեսնէք, չգիտնալը չէ որ գործ կ'ւարէ, այլեւ չափազանց շատ գիտնալը :

Պարզ, պարզ եւ կարճ, սիրելի հայրենակիցներ:

Կռչերու նպատակն է կարելի եղածին չափ շուտ ազդել եւ գործի մղել :

Ուրեմն, մի յոգնեցնէք : Մի գրուէք : Մի ճապաղեցնէք : Գրեցէք այն՝ ինչ որ ըսել կ'ուզէք : Խօսքերն ալ, բառերն ալ կարճ եւ ամփոփ :

ՎԱՀԷ

ՀԱՅԵՐՈՒ ԱՐՏԱԳԱՂԹԸ ԱԼԵՔՍԱՆՏՐԻԹԻ ՇՐՋԱՆԷՆ

Պէյրութի Զարթօնքը (ռամկավար) հետեւեալ տեղեկութիւնները կը հրատարակէ Ալեքսանտրիթէն, յունիս 25 թուականով.—

Հայոց դիրքը՝ անորոշութիւն, սկեպտութիւն, ճակատագրապաշտութիւն բառերով միայն կ'որակուի: Մարդ չի գիտեր թէ ինչ պիտի ընէ, ինչ պիտի ըլլայ: Գացողները՝ գացին, մնացողներուն մէջ մնալու տրամադրութիւն չկայ, բայց բարեբախտաբար արտօնութիւն չի տրուիր մեկնելու համար: Մեկնումի արտօնագիրը պէտք է ստանալ Գնդ. Քոլէէն կամ Վալիէն, ,որոնք սրտանց փափաքող են որ մեկնող չըլլայ Սանճաքէն :

Եթէ բնականոն վիճակի վերադարձ իսկ ըլլայ, այս մէկ ամսուան մէջ Հայոց ունեցած անտեսական վերիվայրումը հինգ տարիէն չի զգամնուիր : Գիւղերու մէջ գրեթէ Հայ չմնաց: Ռիհանիէի մէջ միայն 7 տուն, Զաթալ — Հիւրիկի մէջ միայն 2 տուն Հայ է մնացեր: Սօվուգ-Սուճները դեռ կը մնան բայց ձեռքերնին արտերնուն վրայ: Նոյնը Գրըգխանի մէջ եւ գրեթէ ամէն տեղ: Հայոց հանդէպ Թուրքերու կողմէ բարի վերաբերում կայ միշտ եւ ըստ Պաշ Ս.ի Սանճաքի բոլոր մասերուն մէջ Հայերը անհանգստացնող դէպք չկայ :

Սուէտիոյ եւ Քէսապի հայութիւնը հանգարտած է եւ պիտի ընդունի կատարուած իրողութիւնը: Պ. Մոլսէս Տէր Գալուստեան մեկնած է Պէյրութ , կ'ըսուի: Համոզում կայ որ, տեսնելի մը համար, վտանգ չկայ մեզի, հետեւաբար կը մնայ ամփոփուիլ եւ որոշել ընդգրկուելիք ուղեգիծը :

*** Ուրիշ ռամկավար թերթ մը, Հալէպի Եփրատը կը գրէ նոյն առթիւ.—

Թուրքերուն չնորհուած արտաքսութեանց եւ կատարուած իրողութեան առջեւ, Սանճաքցին չչմած, կորսնցուց իր պաղարիւնը, եւ առաջ յուսահատ ու լքուած կերպարանք մը: Թուրքերու խաղաղ թափանցման անմիջական հակադարձութիւնը եղաւ ստեղծուած խուճապի արդիւնք, արտագաղթի չարժում մը :

Այս չարժումը բնականաբար աւելի լայն ծաւալ պիտի ստանար Հայերու մէջ, իրենց մօրթին վրայ կրած ըլլալով Թրքական բարիքները, իսկ աւելի նուազ թափով՝ Արաբներու մէջ:

Անտիոքի մէջ գտնուող 122 տնուոր հայութենէն 20 ընտանիք մնաց միայն: Ալեքսանտրիթէն մեկնող հայ ընտանիքներուն թիւը 100ը կ'անցնի, իսկ Գրըգխանէն 27 : Այս խուճապին ի տես, հրամանատար Քոլէ ուրիշ համայնքներու ներկայացուցիչներու կարգին իր մօտ հրաւիրեց Տ. Ծաղ արք.ը եւ անոր թելադրեց կարելի բոլոր միջոցներով յորդորել հայ համայնքը, կատարեալ պաղարիւնութիւն պահելու եւ վստահելու պատասխանատու կառավարութեան : Իսկ մյուս կողմէ արտագաղթը պաշտօնապէս կ'արգիլուէր: Հակառակ ասոր, վախուստի դիմողներ անպակաս են :

ՀԱՑԱԶԳԻ ՍԱԼԱՀԻ, Հունգարիոյ հիթլէրականներուն հրամանատարը , երեք տարի տաժանակիր աշխատանքի դատապարտուեցաւ Փէչթայի վերաքննիչ տեւանին կողմէ, իբրեւ խռովարար: Նախադատ տեւանը տասը ամիս բանտարկութեան դատապարտած էր, բայց Սալահի վերաքննութեան դիմած ըլլալով, չատ աւելի ծանր պատիժ մը կը կրէ :

ՍՏԱՄԲՈՒԼԻ ՎԱՐԴԱՊԵՏՆ

The Bunch of Stamboul

By DENNIS WHEATLEY Գրել՝ ՏԵՆՆԻՍ ՈՒԻԹԼԻ
Trans: J. M. Թարգմ. Ջ. Մ.

Մարկիզը ժպտաց:

— Լա՛վ, ասիա՛ծ ես, որ ինձ համար ոչ մի վտանգ չկա: Ես ի՞նչ պետք է անեմ:

— Եթե ամեն ինչ պատրաստ է, ապա ես կարող եմ հիմա գնալ, որպեսզի ես էլ ինձ համար ալիբի ստեղծեմ... Ես ուզում եմ, որ դուք ինձ տեսնեք ձեր տանը, որպեսզի ես էլ կարողանամ ասել, որ ես ամբողջ գիշերը ձեզ հետ եմ եղել...

— Ֆերնան, դուք մի՛ շտապեցրեք ինձ... Ես ուզում եմ ևս մի քանի րոպե ձեզ հետ մնալ...

— Ինչո՞ւ, ինչո՞ւ համար...

— Ես ուզում եմ ձեզ ասել, որ ես ձեզ սիրում եմ...

Մարկիզը ժպտաց:

— Ես էլ եմ ձեզ սիրում, Ֆերնան, ես էլ եմ ձեզ սիրում...

— Ուրեմն, ինչո՞ւ եք ինձ հրում ուրիշ տղամարդկանց գիրկը...

— Ֆերնան, ես ձեզ ասացի, որ ես ձեզ սիրում եմ, ուրեմն ես ձեզ ամուսնանալ եմ առաջարկում...

— Ես ձեզ չեմ հավատում, Մարկիզ, ես ձեզ չեմ հավատում... Ես ձեզ ասացի, որ ես ձեզ սիրում եմ, ուրեմն ես ձեզ ամուսնանալ եմ առաջարկում

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՒՇԱՐԱՆ

ՀՐԱՏ ՉԵՆ ՄԵՌՆԵԼ

Ա. Ա. ՄՈՒՐԱՏՅԱՆ

ՀՈՒՆ ԼԵ ՄՈՒՆԴՈ, 5 յուլս (ՑԱ-ՏԱՂ)։ — Մեր վիրավի կին ծօրէ վեր էլ ոտքի չէ կանգնել։ Հիւանդութեան առաջին օրերին նրան տեղափոխել էին հիւանդանոց, բայց հետագայում նրան տարել էին տուն, որովհետև հիւանդանոցում նրան ոչ ոք չէր կարողանում խնամել։ Հիւանդանոցում նրան ամէն օր այցելում էին ամուսինը, որդին, աղջիկը, հարևանները, ընկերները։ Ամէն անգամ, որ նրանք գալիս էին, նրանց հետ միասին գալիս էր նաև մի ոստիկան, որ հսկում էր նրանց։ Ոստիկանը ներս էր մտնում նրանց հետ միասին, նա նստում էր նրանց կողքին, երբ նրանք խօսում էին, նա էլ խօսում էր նրանց հետ։ Ոստիկանը ոչ մի րոպէ չէր թողնում նրանց միայնակ։ Ամուսինը, որդին, աղջիկը, հարևանները, ընկերները ոչ մի րոպէ չեն կարողացել միայնակ մնալ հիւանդի հետ։ Ոստիկանը միշտ նրանց հետ է եղել։

Հրեաները, որոնք խմբովին արձակուեցան եւ որ եւ է յոյս չունին ուրիշ գործ գտնելու :

Բոլոր այն Հրեաները որոնք փողոցի վրայ նայող յարկաբաժիններ կը բնակին, հրաման ստացան անմիջապէս հեռանալու : Հրեաներ հազիւ կը նշմարուին քաղաքին փողոցներուն մէջ, եւ ընդհանրապէս անցագրի համար պոչ կազմած առեն : Անոնք վտարուած են բոլոր հանրային պարտէզներէն, չեն կրնար սինեմա, թատրոն կամ սրճարան մտնել առանց անարգուելու : Անհրաժեշտ պիտոյքները կը գնեն հրէական խանութներէ, իրենց տուներուն մօտ :

Առեւտուրը կայուն վիճակ ստացած է Վիէննայի մէջ, նոյնպէս չրջագայութիւնը :

*** Կառավարութիւնը ամէն միջոց կը փորձէ օր առաջ լրացնելու համար Աւստրիոյ ճոլումը : Լուծուեցան նախկին պատերազմիկներու 174 ընկերութիւններ, ոստիկանական 37 ընկերակցութիւններ եւն. : Ապահանուած են չատ մը կարեւոր թերթեր : Վիէննայի փաստաբանական կաճառին գումէն վերջը, երբ 730 հրեայ փաստաբաններ վտարուեցան, այժմ ձեռնարկուած է միջնակարգ վարժարաններու արիականացման :

Տաճիր դեպքեր Պաղեստինի մէջ

Ահաբեկչական գործունէութիւնը օրէ օր կը սաստկանայ Պաղեստինի մէջ : Զորեքշաբթի օր ռումբ մը պայթեցաւ Հայֆայի հրապարակին վրայ, ուր բազմաթիւ Արաբներ հաւաքուած էին : Ոստիկանութիւնը միջամտեց եւ կատաղի կռիւ մը սկսաւ : Պայթիւնի եւ հրացանաձգութեան հետեւանքով մեռան 20 հոգի, որոնց 18ը Արաբ, երկուքը Հրեայ : Վիրաւորուեցան 38 հոգի, թեթեւապէս՝ 22 հոգի :

Ոստիկանութիւնը եւ զօրքը խստիւ կը հետապնդեն ահաբեկիչները : Ռումբ մը Արաբներ յարձակում կրեցին, երբ կը փորձէին քանդել Իրաքի նաւթատարը : Ինը Արաբներ սպաննուեցան :

ՋԱՆԱՋԱՆ ԼՈՒՐԵՐՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՄՈՍԿՈՒԱՑԻՆ ձափոն հասած լուրերու համաձայն, ռուս զօր. Լուչովի փախուստին հետեւանքով, բազմաթիւ բարձր պաշտօնատարներ ձերբակալուած են Մայր. Արեւելքի մէջ : Առաջին առթիւ դնդակահարուած են տասնեակներով երեւելիներ,— հրամանատար, գործակար, խմբապետ եւն. :

41 ԹՈՆ ՁՈՒԼ ՈՍԿի փոխադրուած է Սպանիայէն, 1931էն ի վեր եւ պահուած Պանք տը Ֆրանսի մէջ : Սպանիոյ երկու կառավարութիւնները եռ պահանջած ըլլալով այս հարստութիւնը, Փարիզի Վերաքննիչ Ատեանը առջի օր քննեց խնդիրը եւ վճռեց թէ ատ այժմ կարելի չէ վերադարձնել այդ աւանդը :

ՋԻՆԵՒԱՁԱՓՈՆԱԿԱՆ պատերազմին առաջին տարեդարձը լրացաւ յուլիս 6ին : Այս առթիւ իրավիկներ կը հաւաստեն թէ աւելի քան մէկ միլիոն մարդկային զոհ տրուած է, եւ սակայն ձափոն տակաւին չատ հեռու է իր գլխաւոր նպատակէն : Զինուցիները ունեցած են 450.000 մեռեալ եւ 850.000 վիրաւոր, ձափոնցիները՝ 90.000 մեռեալ եւ 100.000 վիրաւոր : Ձափոն գնքի տակ առած է մէկ միլիոն գինուոր, Զինաստան՝ երկու միլիոն, 1400 մղոն տարածութեամբ ճակատի մը վրայ :

ՍՊԱՆԻՈՑ ազգայնական կառավարութիւնը առաջարկած էր չէզոք նաւտանհգիստ մը յատկացնել օտար առեւտրական նաւերու համար (Ալմերիա) : Անգլիոյ նաւատէրերը մերժեցին : Բանակցութիւնները կը չարունակուին, ինչպէս եւ ռմբակոծութիւնները :

ՋԻՆՈՒՈՐՈՒԹԵՆԷ ԱԶԱՏԵԼՈՒ համար խորդուբոր վկայականներ կը բաժնէին Մարսէյլի մէջ : Ոստիկանութիւնը յաջողեցաւ երեւան հանել կեղծարարները եւ ձերբակալեց երեք հոգի, որոնց մէկը բժիշկ է :

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ՓԱՐԻԶԻ Հ. Յ. Դ. «ԵԳԻՊՏԱՑԻ» ԿՈՄԻՏԷԻ ԿՈՂՄԷ

24 Յուլիս, կիրակի առաւօտ ժամը 9էն մինչեւ գիշերուան 11ը ՌՈՊԻՆՈՆի GRAND ARBRE, Maison FIQUETի պարտէզին մէջ կը խնգրուի նկատի ունենալ այս թուականը։

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՄԲ Ֆ. Կ. ԽԱՉԻ ՊՈՒԼ. ՕՏՏՈՅԻ Մ.ՃԻՒՂԻ

10 Յուլիս, կիրակի կէսօրէ վերջ ժամը 2ին
Սէնթ Ճնտրէի օգաստն պարտէզին մէջ

ՄԱՐՍԷՅԼ-ՓԲԱՏՈՑԻ Ս. ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ ԵԿԵՂԵՑԻՒՆ ՄԷՋ կիրակի օր, 10 Յուլիս, կը կատարուի Ս. Թարգմանչաց տօնը : Կը պատարագէ եւ կը քարոզէ Տ. Զգօն վրդ. Յակոբեան։ Նաեւ մասնաւոր հոգեհանգիստ կը կատարուի եկեղեցիին հիմնադիր-բարերար Գ. Վահան Խարասանճեանի ծնողքին եւ ընտանիքին հանգուցեալներու յիշատակին։

Ամաւորի դպրոցական հանդէս Ալֆորվիլի մէջ

10 Յուլիս, կիրակի կէսօրէ վերջ ժամը 2ին, տեղւոյս եկեղեցիին մէջ։ Կը հրաւիրուի հայ հասարակութիւնը։

ՁՈՒՇԱՏԵՏԻՆ

Հ. Կ. ՄԱՋի ՇԱՒԻՒԼի Մասնաճիւղի Ընդհ. Ժողովը՝ 9 Յուլիս, Շաբաթ, իրիկուան ժամը 9ին, դպրոցի սրահին մէջ։ Բոլոր անդամ-անդամուհիներու ներկայութիւնը պարտաւորիչ է։ Կը հրաւիրուին նաեւ համակիրները։ Զեկուցում պատգամաւորի եւ ընտրութիւն նոր վարչութեան։

Ֆ. Հ. ԿԱՄՈՑ ՄԱՋի Անկախի Մասնաճիւղի Ընդհ. Ժողովը՝ կարեւոր օրակարգով, 9 Յուլիս, Շաբաթ, ժամը ճիշդ 9ին, սովորական հաւաքատեղին։ Անդամներու ներկայութիւնը պարտաւորիչ է։

ԻՍԻ-ԼԷ-ՄՈՒԼԻՆՈՑի «Արիմեան» դպրոցի վարչութիւնը խառն ժողովի կը հրաւիրէ Կապոյտ Սաչի, Հ. Ց. Դ. «Զաւարեան» Կոմիտէի, Հայ Կամաւորներու եւ Մարտիկներու Միութեան եւ Իսիի Հայ Երիտասարդաց Միութեան բոլոր անդամները, 9 Յուլիս, Շաբաթ երեկոյ ժամը 8.30ին «Արիմեան» սրահին մէջ։ Օրակարգ՝ Սրահի ընդարձակման եւ քեմի շինութեան հարց։

ՏԱՐՕՆ - ՏՈՒՐՈՒԲԵՐԱՆի Հայրենակցական Միութեան Ֆրանսայի Հիւանի 6րդ. Պատգ. Ժողովը կը գումարուի յառաջիկայ Օգոստոս 13ին, Շաբաթ առաւօտ, Տէսինի մէջ։ Օրակարգին նիւթերը առանձին շրջաբերականով պիտի հաղորդուին մասնակցող մասնաճիւղերուն։

ՀԱՑ ԿԱՄԱՒՈՐՆԵՐՈՒ ԵՒ ՄԱՐՏԻՆԵՐՈՒ Միութիւնը ընկերատնտեսական Ժողովի կը հրաւիրէ Անիւռի եւ Քոլոնպի գինակից ընկերներն ու համակիրները 10 Յուլիս, կիրակի ժամը 3ին Անիէռ, Զաքարի սըրճարանը, 34 Villa Rouveyvolle։ Ներկայ կ'ըլլայ Գնդ. Բաղդասարեան որ պիտի խօսի Միութեան նպատակներու եւ օրուան հարցերու շուրջ։

ԳԱՑԸՐ ՏԵՍԸՐ ԼԻՈՆԻ ՄԷՋ
Cinéma REXY
Cours Lafayette. angle Garibaldi

Le Gérant : H. STEPHAN
Imprimerie A. DER (AGOPIAN)
17, Rue Demesme — PARIS (13)

Ֆութպոլ

ՇԱՎԻԼԻ «Արդուճեան» խումբի ժողովը 10 Յուլիս, կիրակի երեկոյ ժամը 9ին սովորական հաւաքատեղին։

ՊԱՍՔԵՏԲՈԼ

ԼԻՈՆԻ «Մուսա-Լեռ» խումբի ընդհ. ժողովը 8 Յուլիս, Ուրբաթ, երեկոեան ժամը 9ին, 15 Quai Victor Augagneur սրճարանի ներքին սրահը։

ՊՈՒԼՎԱՐ ՕՏՏՈՅԻ «Վասպուրական» ենթակոմիտէի ընդհ. ժողովը 9 Յուլիս, Շաբաթ երեկոյ ժամը 8ին, սովորական հաւաքատեղին։

ՄԱՐՍԷՅԻ «Ընկեր կարօ» ենթակոմիտէի ընդհ. ժողովը 9 Յուլիս, Շաբաթ երեկոյ ժամը 8ին, ընկ. Ալեքեան ընտանիքի տունը։ Ներկայանալ անդամատետրով։ Պիտի դասախօսէ Ընկ. ՊՕՂՈՍ ՀԻՒՍԵԱՆ։

Նիւթը՝ «Տիպար Դաշնակցականի մը յատկանիշները»

ԿՈՒՐՆՈՎԻ «Ռոսթեղեան» ենթակոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները 9 Յուլիս, Շաբաթ երեկոյ ժամը 8.30ին ճանապհ հաւաքատեղին։ Բոլոր ընկերներու ներկայութիւնը պարտաւորի է։

ԱՎԻՆԵՕՆի «Մուրատ» խումբը ժողովի կը հրաւիրէ իր բոլոր ընկերները Շաբաթ, 9 Յուլիս, երեկոյեան ժամը 9ին, ընկեր Մկրտիչ Գաբրիէլեանի քնակարանը։ Ներկայանալ անդամատետրով, կարեւոր օրակարգ։

ՎԱԼԱՆՍԻ կոմիտէի ընդհ. ժողովը 9 Յուլիս, Շաբաթ երեկոյ ժամը 8ին իր «Պիամանթօ» ակումբին մէջ։

ՎԱԼԱՆՍԻ Հ. Յ. Դ. ԿՈՄԻՏԷԻ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍԸ որ տեղի պիտի ունենար Յուլիս 3ին, անձրեւին պատճառաւ ՅԵՏԱՁԳՈՒՄԸ է Յուլիս 10ին։

Մեծ դաշտահանդէս

ԽԱՆԱՍՈՐԻ ԱՐՇԱԿԱՆՔԻ 41ՐԴ. ՏԱՌԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՒ

Կազմակերպուած Հ. Յ. Դաշնակցութեան Սարսէլի «Հրայր» եւ Ահնուվիլի «Ռազմիկ» խումբերու կողմէ, հովանաւորութեամբ Հ. Յ. Դ. «Վարդան» ենթակոմիտէի։ 10 Յուլիս կիրակի, առաւօտէն մինչեւ երեկոյ, ՕՏԻԻ-ՌՈՒԱՆի եռեւ, ՕՓՈՆ-ԻՒՈՆՏԷԼի ծառաստանին մէջ։

Բանախօսութիւն, հպ., արտասանութիւն եւ դաշտային խաղեր։ Պիտի նուագէ Թառիստ ԳԱՐԵԳԻՆ եւ փոքրիկն Ռէմինա սիրտ պարէ հայկական եւ կովկասեան պարեր։ Ճոխ եւ դիւրամատչելի պիւֆէ, խմիչք։

Մուտքը ազատ է։
Անձրեւի պարագային կը յետաձգուի

Դաշտահանդէս

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ Հ. Յ. Դ. ԻՍԻԻ «ԶԱԽԱՐԵԱՆ» ԿՈՄԻՏԷԻ ԿՈՂՄԷ

10 Յուլիս, կիրակի առաւօտէն մինչեւ երեկոյ
Մէօտոնի պուղ ազբիւրին մօտ (Թաւրի Վէրի կից)
Բանախօսութիւն, արտասանութիւն, երգ եւ նուագ։
Անձրեւի պարագային կը յետաձգուի։

Պատանեկան երեկոյթ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ՓԱՐԻԶԻ ՀԱՅ ԵՐԻՏ. ՄԻՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ

9 Յուլիս, Շաբաթ, ժամը 9էն մինչեւ կէս գիշեր իր կեդրոնատեղին 8, Rue Bossuet, Paris

SAUTERIE — ORCHESTRE

ՏԱՐԵԿԱՆ ՄԵԾ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ՍԻՓԱՆ-ԿՈՄԻՏԱՍ ԵՐԳԱԽՈՒՄԲԻՆ ԿՈՂՄԷ

10 Յուլիս, կիրակի առաւօտ ժամը 10էն մինչեւ կէս գիշեր
ՌՈՊԻՆՈՆի Մէջ, GRAND ARBRE, Maison FIQUET

Գեղարուեստական բաժին, պանդոկ խաղեր եւ անակնկալներ, ընտիր նուագախումբ Թանկ եւ ժազ, ճոխ պիւֆէ դիւրամատչելի գիներով։

ՀԱՂՈՐԴԱԿՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ.— Մեթրօն փոխել Denfer Rochereau եւ առնել Robinsonի գիծը։

Մուտք 5 Ֆրանք
Ուտելիքը կարելի է միասին ընել

ԴԱՇՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

Մարսէյլի Հայ երաժշտական Միութեան դաշտագնացութիւնը 10 Յուլիս, կիրակի, «Սէն Պէր»ի Ծովահայեաց անտառին մէջ։

Արձանագրութեանց համար դիմել՝ Թէլեանի, 8 a Rue Francis de Pressensé, Մարսէյլ, ամէնաուշը մինչեւ 7 Յուլիս, Հինգշաբթի երեկոյեան ժամը 7ը։ Երթուգարձ շոգեկառքով 7.50 Ֆրանք։

Դաշտահանդէս

ԴՊՐՈՑԱՍԷՐԻ ՍԱՆՈՒՑ ՄԻՈՒԹԵԱՆ

24 Յուլիս, կիրակի, ժամը 3ին, վարժարանին պարտէզը
1, Bld. du Nord, le Raincy

Կը ներկայացուի ԱՆՈՒՇ օփերէթէն պատկերներ զեկավարութեամբ ԴՄԲԼԹԵԱՆի։ LES CHAUSSONS DE LA DUCHESSE ANNE (օփէրէթ), հայկական պարեր, ծաղիկներու պալէ, զանազան պատկերներ, մարզական խաղեր։

Ճաշ եւ պար մինչեւ մաս. 10 ճոխ պիւֆէ ժատչելի գիներով, (կը խնդրուի միասին ուտելիք չբերել)։ Մուտք 5 Ֆրանք։

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ.— Opéraէն կամ Jaurèsէն առնել օթոպիւս 21A եւ իջնել Raincy-Pavillons, Gare de l'Estէն շոգեկառք՝ direction Gargan, իջնել Raincy-Pavillons։

ԱՐՇԱԿ ՋՕՊԱՆԵԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՑԻՍՆԱՄԵԱՑ ՅՈՒԲԼԵԱՆ

9 Յուլիս, Շաբաթ երեկոյ ժամը 9ին, Պրէսան Մարսէյլեի սրահին մէջ, ներկայութեամբ յոբելեարին եւ հովանաւորութեամբ երեք յարանուանութեանց հոգեւոր հովիւներուն։

ԿԸ ՆԱԽԱԳԱՀԷ Պ. ՏԻՐԱՆ ԹԷՔԷԵԱՆ
Բանախօսութիւններ եւ գեղարուեստական բաժին։

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ

ՄԱԳԱՂԱԹՆԵՐ

(Քերթուածներ)

ԱՇԱՐՈՆ ՏԱՏՈՒՐԵԱՆ



Փառատիպ հատոր մը, **300** էջ, Տպուած սակաւաթիւ օրինակներով

Գլուխներ այս հայկական էջերէն.—

ՅԱՑԳՈՒՌԱՂԱՔ
ՍԻՐԸ ՓՈՒՇԷ ՊՍԱԿՈՎ
ԵԼԵՂ ՄԱՐԴԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ԳԵՀԵՆԱԿԱՆՔ
ԲԱՆԱՍՏԵՂԸԸ ԿԱՍՏՈՒԱԾԱՆԱՑ
ՍԻՐՏՍ ԿԱՐՄԻՐ ՎԱՐԴԵՐՈՎ
ԻՆՔՆԱԻՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ
ԳԻՒՂԻ ՍԻՒՐԵՐ՝ ԵԱՐՈՂ ԵՐԳԵՐ

Գին **40** ֆրանք

Դիմել հեղինակին,
17, Rue Damesme, PARIS

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Է

«Մատենաշար Ռազմիկի» բ
Հրատարակութիւն Հայ կամ. եւ Մարտիկներու Միութ

ԼԵՌՆԱՑԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Գրեց՝ ՀՐԱՆՏ ՓԱՍՏՐՄԱՃԵԱՆ

Այս գիտական խիստ արժէքաւոր ուսումնասիրութիւնը գործն է Հր. Փաստրմաճեանի, որ վերջերս անգլիերէն լեզուով լոյս տեսած է Վաշինկթ. մէջ։ Մեր համակրելի աշխատակիցը չատ պարզ եւ հասկնալի լեզուով կ'ուսումնասիրէ լեռնային զանազան ռազմաթեմերը — մասնաւորաբար Հայկական — տալով անոնց չուրջ կատարուած զանազան նշանակալից դէպքեր, թուական պատճառներ, թիւեր ու դէմքեր :

Հեղինակը սքանչելիօրէն կը պարզաբանէ լեռնային հողմամասերու իւրայատուկ կազմութիւնը ու անոնց դերը ռազմական գործողութիւններու վրայ։ Կը խօսի զանազան տեսակի կռիւներու մասին։ Կը պարզէ լեռնային երկիրներու պարենաւորման եւ փոխադրութեանց դժուարութիւնները, լեռնային յարուկ զօրամասերու կազմակերպութիւնը, քարերու գործը եւայլն։

Հայերէնի թարգմանուած այս գործը պիտի հետաքրքրէ անխտիր զ նախկին ռազմիկները, նորակոչ զինուորներ, եւ առհասարակ ամբողջ հա բակութիւնը :

Գիրքը 100 էջէ աւելի, գեղեցիկ տպագրութեամբ եւ հազուագիւտ նկար ներով զարդարուած է :

ՀԱՑ — ԲՈՑԺ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ

Խմբագիր՝ Շ. ՆԱՐԴՈՒՆԻ — ՋՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

Հաւաքածոյ կազմելու համար կը պակսին հետեւեալ թիւերը՝ 1, 2, 13, 20, 39։ Առաջին առթիւ ալէտք ունինք թիւ 39ին։ Վերադարձնողներուն պատրաստ ենք տալ պահանջուած փոխարինութիւն (Շնորհակալութիւն մեր բարեկամներուն, որոնց քարեացակամութեամբ լրացուցինք քանի մը հաւաքածոյ)։

ՀԱՑ ԲՈՑԺի երեք տարուան հաւաքածոն, առանց ապահովի պակաս թիւերու, կը ծախսի 50 Ֆրանք,— մօտաւորապէս 700 էջնոց հատոր մը։

Դիմել՝ 17, Rue Damesme, PARIS:

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ են Հայ.Բոյժի 45, 46 եւ 47 թիւերը։

ՀԱՑ - ԲՈՑԺի տարեկան բաժնեգինն է Ֆրանսայի համար 30, արտասահմանի համար 35 եւ 40 Ֆրանք (ըստ երկրի)։

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ (սահմանափակ թիւերով)

ՅԱԿՈԲ ՀԻՍԱՑԵԱՆԻ
ԴԻՒՑԱԶՆԱԿԱՆ ՀԱՑՈՐԴԻՆ
(Բնական լուսանկարներով)
ՄԿՐՏԻՉ ԵՕԹՆԵՂԲԱՅՐԵԱՆ
(Ուրջայի հերոսամարտի դեկավար)
Գին՝ Ֆրանսա 8 Ֆրանք, Սաւրիա 6 Ֆրանք, Ամերիկա 50 սէնթ։
Բոլոր ապսպրանքները կանխիկ
Յանձնելու համար դիմել H. Issayan, 38 Rue du Mésnil. Asnières (Seine) France.

Հ. ԶԱՐԴԱՐԵԱՆ

ՎԻՐԱԲՈՑԾ - ԱՏԱՄՆԱԲՈՑԾ
44 Rue Dunkerque (ՄԷՋՐՕ ԿԱՌ ՏԻՒ ՆՈՒ)
Tél. Trudaine 42—69
Ի'ընդունի ամէն օր ժամը 14—20։
Հաւաստիները ժամադրութեամբ։



ՐԱՔԸ ՏԻՒԶ

Ջուտ խայտով քաշուած եւ անխտրով պատրաստուած հայկական օղին ՐԱՔԸ ՏԻՒԶ, ձգուշացէք արուեստական օղիներէ։ Ձեր ստամոքսը կ'այրէ։ Գիշերները ջուր կը խմէք եւ կը վնասէ ձեր առողջ։ Չունենան։ Խմեցէք միայն ՐԱՔԸ ՏԻՒԶը որուն անուշ համ, կազդուրիչ եւ ախորժ ըլլալը ճաշատեսակներուն ուած է։

Dalakupeian 8 Rue Suffren
Dépôt: 7 Rue de la Paix, Marseille. Tél. Dragon 70—89.

ՀԱՅՐԵՆԻՔ

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՑԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HAYRATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
17, Rue Damesme, PARIS (13e)

Téléphone : Glacière 15 - 70
Chèque Postal Paris 1678 - 63
(ԵՐԹԵՒԵԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ — ՏԱՐԵԿԱՆ ՎՃՑԱՄՍԵԱՑ ԵՌԱՄՍԵԱՑ

Ֆրանսա եւ Գաղութքներ	150 ֆրանք	75 ֆրանք	40 ֆր.
Անգլիա եւ Իտալիա	265 ֆրանք	140 ֆրանք	
Ուրիշ երկիրներ	215 ֆրանք	110 ֆրանք	

ՇԱԲԱԹ 9 ՅՈՒԼԻՍ SAMEDI 9 JUILLET 1938

ԺԹ ՏԱՐԻ — 14e Année No. 3778

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ՆՈՐԷՆ ԴԷՄ ԴԻՄԱՑ՝ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ

Մի՛ջազգային մամուլը կը շարունակէ աւելի կամ պակաս վաւերական յայտնութիւններ հրատարակել, Սանճաքի անցուդարձին եւ առ հասարակ Մօտաւոր Արեւելքի նոր տագնապին առթիւ։

Իրականին մէջ, մեծ դաղտնիքներ չեն որ կը պարզուին։ Կան չարք մը բացորոշ իրողութիւններ, որոնց լոյսը կ'օգնէ քակելու հանդոյցը։

Սովորական բացատրութիւն մը գործածելով, կրնայինք ըսել թէ 1914ի պատմութիւնն է որ կը կրկնուի, — ազդեցութեան պայքար, ի հարկին պատերազմի յանգելու գնով։

Քսանըչորս տարի վերջն ալ, շատ բան փոխուած չէ պայքարի ձեւերուն մէջ։ Տնտեսական յարաճուն գործունէութիւն, եւեւէն ալ՝ քաղաքական ծրագիրներ, մերթ սողոսկուն, մերթ սպառնալից։

Արեւմտեան Եւրոպան կորնցուց իր հանդիսաը, այն օրէն ի վեր որ Ֆաշական Իտալիան աչքերն ուղղեց դէպի Արեւելք եւ իսլամական երկիրները, իսկ Յախճախուած Գերմանիան ոտքի կանգնեցաւ, շատ աւելի հզօր եւ սպառազէն։

Ֆրանսայի նախկին վարիչները (Լաւալ եւ ընկ.) յաջողեցան Իտալիոյ ծաւալման ճամբաները վերածել զիկ-զակի, մղելով դէպի Եթովպիա։ Հոմ յաղթեց, բայց կարմիր ծովը չէր որ պիտի բանար Հռոմէական կայսրութեան ճամբան։ Ուրիշ խօսքով, պահեստի ծրագիրներ միշտ ալ կան, առաւելապէս ուղղուած դէպի արեւելեան Միջերկրական։

Միւս կողմէ, Գերմանիա աստիճանաբար տեղաւորուեցաւ Պալքաններու եւ Թուրքիոյ մէջ, առ այժմ տնտեսական գետնի վրայ, բայց աւելի լայն թէեւ հեռաւոր ձգտումներով։ Միայն առեւտրական գետնի վրայ կատարուած նուաճումները արդէն վըրդոված էին Փարիզն ու Լոնտոնը։ Սեղմաւորական մեծ օրկանը, «Ինֆորմասիօն», կ'ողբար վերջերս։

— « Պերլին որ անշրկուէն ի վեր ամրապէս տեղաւորուած է կեդրոնական Եւրոպայի մէջ, ակնարկը դարձուցած է դէպի Արեւելք, ախորժակը բացուած է եւ կ'երազէ Պալիսն ու Պաղտատի գիծը։

Թուրքիոյ կացութիւնը խորհրդանշական է (*սէմպոլիք*)։ Ընդորիւ Տոքթ. Շախթի ճարպիկ մեքենայութեանց, Գերմանիա իր տնտեսական խնամակալութեանը ենթարկած էր այս երկիրը։ Այսպէս, 1936ին գնեց Թուրքիոյ արտածած բեբրին հարիւրին 51ը, իսկ Թուրքիա իր ներածած ապրանքներուն հարիւրին 45ը Գերմանիայէն առաւ։ Այս պայմաններուն մէջ, կարելի՞ էր միթէ որ Թուրքիա չենթարկուէր Գերմանիոյ։

... 1938ին պիտի աւելնայ այս ազդեցութիւնը, շնորհիւ Ազատրիոյ օգնութեան։ Վիէննա կը գտնուի Պոլսոյ ճամբուն վրայ։ Թուրքիոյ հետ Աւստրիոյ ունեցած առեւտուրով պիտի աւելնայ գերմանական ենթակայութիւնը Պալքաններու մէջ»։

Լոնտոն Փարիզէն առաջ արթնցած ըլլալով, իրրեւ դեսպան Ինկիւրի փութացուց արեւելեան գործերու մասնագէտ մը։ Նոյն իսկ իր նախորդ վեհապետը պարագ սեպեց առաջին պատյտին իսկ Աթաթիւրքի հանդիպիլ եւ մտերմական ասուլիս մը սարքել։

Ցետոյ յուշիկ –յուշիկ նուաճումներ կատարելով, Լոնտոն յաջողեցաւ իր թեւարկութեան տակ առնել Թուրքիան։ Այդ բոլորին ելքն էր 16 միլիոն ոսկիի բացառիկ վարկը, (վեց միլիոնը սպառազինութեանց, մնացեալը հանրօգուտ չինութեանց համար)։

Այս յաջողութեան հետ, անոր հետ գուգընթաց, Մեծն Բրիտանիա իր եռեւէն քաշեց Ֆրանսան։ Վրդովիչ հեռանկարներ պարզեց անոր առջեւ, եւ զիջումներ կատարել տուաւ։ (Աւ այժմ Ալէքսանտրէթի չրջանի մասին կը խօսուի, բայց կը կարծենք թէ աւելի չարաչուք է բուն դաղտնիքը)։

Այս ձեռնարկներն ու իրողութիւնները արդէն իրար անցուցած են Պերլինն ու Հռոմը, ուր շատ լաւ կ'ըմբռնեն թէ չափաւելու փորձ մըն է որ կը կատարուի։

Աւելի քաց խօսինք,— Մեծն Բրիտանիա մտահոգութեամբ դիտելով Գերմանիոյ ծաւալումը՝ դէպի հարաւային - արեւելեան Եւրոպա, մանաւանդ Աւստրիոյ կցումէն վերջ, կ'ուզէ ամուր ցանց մը հաստատել արեւելեան Միջերկրականի մէջ։

Ցանց մը՝ որ պիտի ծառայէ խափանելու գերմանական եւ մանաւանդ իտալական յարձակումն գործունէութեան, բուն բառով՝ աշխարհակալութեան ճամբաները։

Ատոր համար ալ, Լոնտոն անհրաժեշտ կը գտնէ Թուրքիոյ զօրացումը։ Ոչ միայն բանակով, նաւատորմիդով, այլեւ տնտեսութեամբ։

Անհրաժեշտ կը գտնէ, նաեւ, իր թաթն երկարել դէպի Պալքանները եւ մանաւանդ դէպի Ռումանիա, որ քարիւղ ունի եւ ուր նորէն Գերմանիան կեցած է իր ճամբուն վրայ։

Ուրեմն, ճակատները փոխուած են, բայց ոչ գործելու մեթոտները։

Երէկ Թուրքիոյ զինակիցներն էին Գերմանիա եւ Աւստրիա - Հունգարիա։ Այսօր Թուրքիան կը հովանաւորէն Մեծն Բրիտանիա եւ Ֆրանսա։ Երկուքն ալ, անգամ մը եւս չափուելու տրամադրութեամբ ...

Դժուա՞ր է ըսել թէ ո՛ւր կրնան յանգիլ այս պայքարները։

Աւ այժմ բոլորն ալ թուխսի նստած են։ Եւ կը զինուին, աննախընթաց մոլեգնութեամբ։ Նոյնիսկ պանծացնելով սպառազինութեանց բազմապատկութիւնը, իրրեւ ազդակ խաղաղութեան։ Կը զինուին ոչ միայն մեծերը իրենք, այլեւ «եղբայրաբար» կը զինեն միւսները, գլուխն ըլլալով Թուրքիան ...

Շ.

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ՆՈՐ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԷՆԿԻՒԻՐԻԻ ՄԷՋ

Աճիոճի իրաւունքները ալ կը դիտուին թուրք զօրքի

Էնկիւրիէն կը հեռագրեն յուլիս 7 թուականով ։—

Այս առաւօտ ժամը 11ին խորհրդաժողով մը գումարուեցաւ արտաքին գործերու պաշտօնատան մէջ, նախագահութեամբ Ր. Արասի, մշակելու համար բարեկամութեան եւ բարի դրացնութեան դաշնագիրը Թուրքիոյ եւ Սուրիոյ միջեւ։ Ֆրանսական պատուիրակութեան կը նախագահէր դեսպանը, Պ. Փոնսօ։ Ժողովին ներկայ էր նաեւ Սուրիոյ պատուիրակը ։

*** Անտիոքէն կը հեռագրեն յուլիս 7 թուականով ։—

Թուրք զօրքը կը շարունակէ իր տեղաւորումը։ Այս առաւօտ մէկ վաշտ լեռնային հետեւակազօրք մտաւ Անտիոք եւ ընդունուեցաւ հրամանատար Քոլէի, գնդապետներ Ֆէվզիի եւ Շիւքրիի, կուսակալ Ապտիւրահմանի, քաղաքին եւ բոլոր հասարակութեանց երեւելիներուն կողմէ։ Մարօքեան սրճակատներու վաշտ մը զինուորական պատիւներ կ'ընծայէր ։ Քրիստոնեայ եւ ալէվի հասարակութեանց բազմաթիւ անդամներ եկած էին ողջունելու թուրք զօրքը, այսպէս իրենց գոհունակութիւնը յայտնելով Ֆրանքեւթուրք գործակցութեան իրականացման համար ։

ԿԻՅՈՒԹԻՆԸ ՍԻԵԼԻ ԾԱՆՐԱՑՍԻ ՊԱՂԵՍՏԻՆԻ ՄԷՋ

Երկու վարսանաւ եւ երկու վշտ զինուոր

Պաղեստինի կացութիւնը աւելի ծանրացած ըլլալով, անգլիական կառավարութիւնը երկու վաշտ զօրք ճամբայ հանեց եգիպտոսէն։ Միեւնոյն առեն վիթխարի զրահաւոր մը եւ յածանաւ մը Հայֆա զացին չողեկինդ ։ Զրահաւորը, «Ռիփըլս», ունի 32.000 թոն տարողութիւն եւ Քորֆու հասած էր մէկ շաբաթ առաջ, իսկ յածանաւը կը գտնուէր եգիպտոս։ Անգլիացին ալ նոր կիսաբաժին մը պիտի ղրկուի ։

Վերջին քանըչորս ժամուան մէջոցին սպաննուած են 40 Հրեաներ եւ Արաբներ, իսկ վիրաւորներուն թիւը 100ը կ'անցնի։ Պաշարման վիճակ պիտի հռչակուի նոյնիսկ Երուսաղէմի մէջ ։

Պաղեստինի կարեւոր կէտերուն մէջ բարեկարգութեան կը հսկեն անգլիացի զինուորներ։ Հայֆայի մէջ զինուորները կը չրջին սուինաւոր հրացաններով։ Ներս հսկողութեան տակ առնուած է Մուսուլի նաւթագիծը։ Երթեւեկը դադրած է Հայֆայի եւ չրջականերուն մէջ։ Եաֆայի խանութները փակուած են եւ հետզհետէ կը զօրանայ Պաղեստինի բոլոր արաբական խանութները փակելու չարժումը։ Նազարէթի մէջ 150 սպառազէն մարդիկ յարձակելով քանդեցին հրեայ բանուորներու կայանը։ Հինգշաբթի օր չորս ռումբեր նետուեցան երուսաղէմի կեդրոնական պահականոցին վրայ։ Արաբ մը սպաննուեցաւ, ուրիշ մը ծանրապէս վիրաւորուեցաւ ։

ՄՕՏԱՒՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ԴԷՊՔԵՐԸ ԵՒ ԳԵՐՄԱՆԻՈՅ ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Խոր ժժգոհութիւն Անգլիոյ եւ Ֆրանսայի դէմ

Գերմանական մամուլը կը շարունակէ խստօրէն ձաղկել Անգլիոյ եւ Ֆրանսայի քաղաքականութիւնը՝ հարաւային - արեւելեան Եւրոպայի մէջ, Թուրքիոյ հետ կնքուած համաձայնութեանց եւ ղրամական աջակցութեան առթիւ։ Հանրային կարծիքը մեծապէս յուզուած է, Անգլիոյ եւ Ֆրանսայի տնտեսական գործունէութիւնը վերագրելով հակագերման ծրագրի մը։ Անգլիոյ փոխատուութիւնը Թուրքիոյ, Լոնտոնի մէջ ծրագրուած ուրիշ փոխատուութիւն մը՝ Ռումանիոյ, Ֆրանսայի կողմէ ցորենի գնումը՝ Եուկոսլաւիոյ մէջ՝ կը համարուին ախտանիշները նոր յարձակողականի մը, որ կը ձգտի Գերմանիան հեռացնել Պալքաններէն։ Երկու կարեւոր թերթեր, «Ֆրանքֆուրթէր Ցայթունկ» եւ «Քէօլնիշէ Ցայթունկ», դիտել կուտան թէ այս յարձակողականին առթիւ, քաղաքական տեսակէտով Անգլիա կը հետեւի Ֆրանսայի, իսկ տնտեսական տեսակէտով ծրագիրներ կ'որոճայ, քարիւղի նոր հանքեր երեւան հանելու համար Ռումանիոյ մէջ։ Առաջին թերթը կը գրէ ։

— « Կը վերակենդանացուին հին ծրագիրներ որոնք սկսան քանի տարի առաջ, բայց ոչ թէ հարաւային արեւելեան Եւրոպայի երկիրներուն ընծայելու համար այն աշակցութիւնը որ մերժուեցաւ անցեալին մէջ։ Այդ վերակենդանացումը կը կատարուի խափանելու համար յաւելումը խոալական եւ ամէն բանէ առաջ՝ գերմանական վաճառականութեան որմէ յայտնապէս կ'օգտուին այդ երկիրները։ Հետապնդուած ծրագիրն է Դանուբեան երկիրներու առեւտուրը բոնի չեղեցնել իր բնական ճամբէն եւ ֆրանսական դիւանագիտութիւնը յարձակուն ուժգնութեամբ մը կը բանի այս առաջադրութեամբ, բոլոր արամադրելի միջոցներով։ Կը խորհուի վերաշինման յատկացուած գումարները փոխադրել դէպի հարաւային - արեւելեան Եւրոպա։ Մինչեւ անգամ Պուքրէշէն կը հաղորդեն թէ Անգլիոյ եւ Մ. Նահանգներուն առեւտրական բանակցութիւնները յառաջդիմեցան, որովհետեւ Անգլիա կ'ուզէ այսուհետեւ աւելի մեծ քանակութեամբ ցորեն եւ քարիւղ գնել Ռումանիայէն։ Նոյն դիտումները կը վերագրուին Ֆրանսայի եւ Մ. Նահանգներուն։ Կ'ըսուի թէ Անգլիա կ'ուզէ հակակշռել գերմանական ազդեցութիւնը, վարկեր բանալով Ռումանիոյ եւ Յուգոսլաւիոյ, այնպէս ինչպէս վերջերս ըրաւ Թուրքիոյ։ Գերմանիա քաղաքական տեսակէտով Անգլիա կը հետեւի Ֆրանսայի, իսկ տնտեսական տեսակէտով ծրագիրներ կ'որոճայ, քարիւղի նոր հանքեր երեւան հանելու համար Ռումանիոյ մէջ։ Առաջին թերթը կը գրէ ։*

— « Կը վերակենդանացուին հին ծրագիրներ որոնք սկսան քանի տարի առաջ, բայց ոչ թէ հարաւային արեւելեան Եւրոպայի երկիրներուն ընծայելու համար այն աշակցութիւնը որ մերժուեցաւ անցեալին մէջ։ Այդ վերակենդանացումը կը կատարուի խափանելու համար յաւելումը իտալական եւ ամէն բանէ առաջ՝ գերմանական վաճառականութեան որմէ յայտնապէս կ'օգտուին այդ երկիրները։ Հետապնդուած ծրագիրն է Դանուբեան երկիրներու առեւտուրը բոնի չեղեցնել իր բնական ճամբէն եւ ֆրանսական դիւանագիտութիւնը յարձակուն ուժգնութեամբ մը կը բանի այս առաջադրութեամբ, բոլոր արամադրելի միջոցներով։ Կը խորհուի վերաշինման յատկացուած գումարները փոխադրել դէպի հարաւային - արեւելեան Եւրոպա։ Մինչեւ անգամ Պուքրէշէն կը հաղորդեն թէ Անգլիոյ եւ Մ. Նահանգներուն առեւտրական բանակցութիւնները յառաջդիմեցան, որովհետեւ Անգլիա կ'ուզէ այսուհետեւ աւելի մեծ քանակութեամբ ցորեն եւ քարիւղ գնել Ռումանիայէն։ Նոյն դիտումները կը վերագրուին Ֆրանսայի եւ Մ. Նահանգներուն։ Կ'ըսուի թէ Անգլիա կ'ուզէ հակակշռել գերմանական ազդեցութիւնը, վարկեր բանալով Ռումանիոյ եւ Յուգոսլաւիոյ, այնպէս ինչպէս վերջերս ըրաւ Թուրքիոյ։ Գերմանիա քաղաքական տեսակէտով Անգլիա կը հետեւի Ֆրանսայի, իսկ տնտեսական տեսակէտով ծրագիրներ կ'որոճայ, քարիւղի նոր հանքեր երեւան հանելու համար Ռումանիոյ մէջ։ Առաջին թերթը կը գրէ ։*

— « Կը վերակենդանացուին հին ծրագիրներ որոնք սկսան քանի տարի առաջ, բայց ոչ թէ հարաւային արեւելեան Եւրոպայի երկիրներուն ընծայելու համար այն աշակցութիւնը որ մերժուեցաւ անցեալին մէջ։ Այդ վերակենդանացումը կը կատարուի խափանելու համար յաւելումը իտալական եւ ամէն բանէ առաջ՝ գերմանական վաճառականութեան որմէ յայտնապէս կ'օգտուին այդ երկիրները։ Հետապնդուած ծրագիրն է Դանուբեան երկիրներու առեւտուրը բոնի չեղեցնել իր բնական ճամբէն եւ ֆրանսական դիւանագիտութիւնը յարձակուն ուժգնութեամբ մը կը բանի այս առաջադրութեամբ, բոլոր արամադրելի միջոցներով։ Կը խորհուի վերաշինման յատկացուած գումարները փոխադրել դէպի հարաւային - արեւելեան Եւրոպա։ Մինչեւ անգամ Պուքրէշէն կը հաղորդեն թէ Անգլիոյ եւ Մ. Նահանգներուն առեւտրական բանակցութիւնները յառաջդիմեցան, որովհետեւ Անգլիա կ'ուզէ այսուհետեւ աւելի մեծ քանակութեամբ ցորեն եւ քարիւղ գնել Ռումանիայէն։ Նոյն դիտումները կը վերագրուին Ֆրանսայի եւ Մ. Նահանգներուն։ Կ'ըսուի թէ Անգլիա կ'ուզէ հակակշռել գերմանական ազդեցութիւնը, վարկեր բանալով Ռումանիոյ եւ Յուգոսլաւիոյ, այնպէս ինչպէս վերջերս ըրաւ Թուրքիոյ։ Գերմանիա քաղաքական տեսակէտով Անգլիա կը հետեւի Ֆրանսայի, իսկ տնտեսական տեսակէտով ծրագիրներ կ'որոճայ, քարիւղի նոր հանքեր երեւան հանելու համար Ռումանիոյ մէջ։ Առաջին թերթը կը գրէ ։*

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

ՕՐԸ ՕՐԻՆ

«ՅՆԴԱՆԱՆ»Ը ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ԶԱՌԱՆՑԵԼ

Ո՞վ չի ճանչնար Քլօտ Ֆառէրը, — գրագէտ, ակադեմական, «նախկին» եւայլն ։

Իր գրագէտի հարթաւին հետ զուգընթաց շողաց միւսը, — քրէմոլ, ամիճէն գարշելի տեսակէն։ Այնքան ցած, որ Թուրքերն անգամ գանեցան ։

Տակաւին անցեալ տարի էր որ Թուրք թերթերը գետնի գետին զարկին զինքը, գունագեղ ածականներով, — հացկատակ, «ցնդած ծերուկ»(*պուռնաք իհթիյար*), կեղծաւոր, արծաթամոլ եւայլն։

Միեւնոյն ատեն պահանջեցին որ թողնէ այն փողոցին վրայ որ կը կոչուէր Քլօտ Ֆառէր, «ի վարձ բարւոք ծառայութեանց»։

Եւ վերջապէս, նոյն տարին, Իզմիրի խաղաքապետն էր որ կը յայտարարէր, Աթաթիւրքի առջեւ ·

— « Քլօտ Ֆառէր կոչուած այդ պուչուքը, Աթաթիւրք, այն ատեն ձեր ոտքը ինկաւ, բայց դուք մեծութիւն ըրիք եւ հրամայեցիք որ վեր կալնի...»։

Արդ, այս «ցնդած»ը փոխանակ իր պատեհութիւն մէջ ամփոփուելու եւ վէպ գրելու, կը շարունակէ խաղալ, տեսակէտներ յայտնել, վճիռներ արձակել ։

Այսպէս, «էյճօ տը Սիոն » թերթին փարիզի թղթակիցը իր կարծիքը հարցուցած կ'ըլլայ Սանճաքի եւ Սուրիոյ մասին, եւ Քլօտ Ֆառէր կը պատասխանէ ·

— « *Սուրիա դժուարաւ կառավարուելիք երկիր մըն է*։ 1919ին, երբ Սուրիոյ հոգատարութիւնը յանձնուեցաւ Ֆրանսայի, հանդիպեցայ հին բարեկամ Թուրքերու որոնք դիտել տըւին. «Հիմա ձերն է կարգը· պիտի տեսնէք թէ որքան զուարճալի է...»։ *Միայն զօր. Վէյգանն է որ բան մը ըրաւ Սուրիոյ մէջ։ Դժուարութիւնը հոն է որ Սուրիա բաղկացած է իրարու թշնամի բազմաթիւ ցեղերէ ։*

Մուսթաֆա Քէմալի սխալը այն եղաւ որ իսլամութիւնը չնչեց Թուրքիոյ մէջ։ Իսլամութիւնը կրաղիւս (չիմէնթօ) է որ ամրացուցած էր Թուրքիան։ Տունի մը քարերը կ'իյնան, երբ չաղաքը կ'իյնայ ։

Միջերկրականեան բոլոր ազգերու նման, Սուրիացիներն ալ անկարգութիւն կը տանին իրենց մտած տեղերը։ Սուրիա ահագին կորուստ ունեցաւ, երբ Թուրքիա քաշուեցաւ իր հողէն։ Թուրք ոստիկան զինուորը (ժանտարմա) լաւ էր։ Երբեմն բիրտ էր ան· բայց բաւական քաղցրաբարոյ իր մտանուոր կեանքին մէջ, շատ արդար եւ անչահախնդիր։ Ինկանաբար խօսքս պաշտօնեաներու մասին չէ, որոնք չէին կրնար ապրիլ՝ թոշակ չառնելնուն համար։ Կ'ըսեմ թէ ընդհանրապէս Թուրքը քաղցրաբարոյ եւ ուժեղ է»։

Թղթակիցը·— *Հապա հայկական չարդե՞րը, վարպետ ...*։

— Հայերը գրգռեցին Թուրքերը՝ վաշխառուութեամբ եւ շահագործումով։ *Օսմանեան կայսրութեան բոլոր եւրոպական նախարարները Հայեր էին։ Թրքահայերը ահագին հարստութիւն դիզեցին, մինչ Թուրք ազգը կը մնար քաղցկեղ։ Հայերը եւ Սուրիացիները սարսափելի մարդիկ են գործի տեսակէտով, շատ աւելի սարսափելի՝ արեւմտեան ազգին համար ։*

Սուրիոյ մէջ միշտ բանակ մը զբաղուելու է։ Ահա թէ ինչո՞ւ կը ցաւիմ թրքական բանակին մեկնումին հա - մար »։

Կը յիշեմ որ այս գանգիլիէը **1921**ին ալ ընդհատած ցնդաբանութիւն մը գրած էր գաւառական հանդէսի մը մէջ, ապացուցանելու համար թէ Թուրքերը չէին որ Հայ ջարդեցին, այլ Հայերը կոտորեցին անմե՛ղ թուրք ժողովուրդը ...

Մարդը ներկայացուցած եղայ։ Մըցացեալը թող լրացնէ Թուրքերը իրենմ «պուճաք ինթիյար»էն մինչեւ «պչաք»ը։

ՎԱՀԷ

300 ՖՐԱՆՔԻ ՆՈՒԷՐ ՉՔԱՒՈՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ

Ռօվնօ քաղաքէն (Լեհաստան) երեք հայրենակիցներ, Անտոն Մարչուեան, Գէորգ Թադէոսեան եւ Յովհ. Կիլանեան 100ական ֆրանք տրամադրելով, 300 ղրկած են «Ցառաչ»ի, յատկացուելու համար Նոր Սիսի Լուսինեան վարժարանին ։

Այդ հանգանակութիւնը փակուած ըլլալով, 300 ֆրանքը յատկացուինք նոյնքան կարօտ հաստատութեան մը, Հավրէգքի ազգ· դպրոցին (Մուսուլ)։

Սուրիոյ ներգաւոր պետերուն դիմումը

Արաբերէն «էլ Թէդամուսի» թերթը կը գրէ·—

Հալէպի հոգեւոր պետերը մարզպանին պատուիրակ Պ. Տավիտի դիմելով, պաշտպանութիւն խնդրած են Սանճաքի ոչ-թուրք տարրերուն համար։ Պատուիրակը հետեւեալ յայտարարութիւնն ըրած է ·

— *Ֆրանսական կառավարութիւնը իր կարելին ըրաւ՝ Սանճաքի մէջ սուրիական իրաւունքները պաշտպանելու համար։ Սանճաքիմէջլիսի դործածուելիք սուրիական դրամը։ Սուրիոյ եւ Սանճաքի միջեւ մաքսային սահման գոյութիւն պիտի չունենայ ։*

Բացատրելէ վերջ այն հարկադրիչ պատճառները որոնք ստիպեցին Ֆրանսան հաստատելու դալ Թուրքիոյ հետ, պատուիրակը ըսած է թէ Ֆրանսա որ եւ է պարագայի տակ չի կրնար թոյլ տալ որ ոչ — թուրք տարրեր բրնութեանց ենթարկուին։

Հոգեւոր պետերը, որոնք կը ներկայացնէին սուրիական դրեթէ բոլոր համայնքները, քրիստոնեայ թէ իսլամ, խնդրած են Պ. Տավիտէն որ Ֆրանսական կառավարութեան հաղորդէ իրենց փափաքներն ու խնդրանքները, Ֆրանքեւսուրիական դաշնագիրը օր առաջ վաւերացուած տեսնելու մասին։

*** Անտիոքի երեսփոխան Պ. Մոլէս Տէր Գալուստեան յունիս 29ին Սուրիոյ մարզպանին ներկայանալով, երկար տեսակցութիւն մը ունեցած է։ Կը մտանանք թէ այս առթիւ յուշագիր մը ներկայացուցած է Սանճաքի Հայերու կացութեան մասին, կարգ մը առաջարկներ ներկայացնելով ։

ՃԱՓՈՆԱԿԱՆ կառավարութիւնը բողոքեց Փարաստէլ կղզիներու գրաւման դէմ՝ Ֆրանսայի կողմէ ։— *Կայսրը պատգամագիր մը ուղղեց, ազգային բոլոր հարստութիւնները չարժման մէջ դնելու եւ պատերազմը չահելու համար ։*

ՄԱՐՍԻԳԼԻ մեռապատգործական բանուորներու գործադուլին առթիւ, « Իսմանիթէ» կը գրէ թէ մասնագէտները պահանջած են վերահաստատել փափկանը, մինչդեռ գործարանին վարչութիւնը կ'ուզէ արձակել ուրիշ երեսուն բանուորական պատուիրակներ։ Գործադուլը կը չարունակուի Կրընոպլի եւ Լիոնի մէջ։ Թուլուզի քաղաքապետութեան բանուորներն ալ գործադուլ հռչակեցին, յաւելում պահանջելով ։

ԳԵՐՄԱՆԻՈՑ արտաքին նախարարը ունկնդրութեան ընդունեց Թուրքիոյ արտաքին նախարարութեան խորհրդականը, Մէնէմէնճիօղլու, որ նախապատրաստական պատուիրակութեան մը։ Ժողակցութիւնը դարձաւ տնտեսական խնդիրներու եւ ընդհանրապէս գերմանաեթուրք յարաբերութեանց վրայ։

ՍՏԱՄԲՈՒԼԻ ԿԱՊՈՒՅՏԸ

The Bunch of Stamboul

By DENNIS WHEATLEY
Թարգ՝ ՏԻԳՈՒՀԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Trans : J. M. Թարգմ. Հ. Մ.

— Չգոսոտուհյուսդ հասը ի նիչ մի ինչ ին ին ին

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՒՇԵՐ

ՄԿԱՅ ՄԸ ՊԱՏՄԵԼ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՎԱՅՐԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

Ամէն տարի Ապրիլ 23-ին, Արտասահմանի Հայ Գաղութները կը տօնեն Ազգային Ինքնիշխանութեան Տօնը, որ կը յիշեցնէ Հայ Ժողովուրդին, որ ինքն ալ ունեցած է իր անկախ պետականութիւնը, որ ինքն ալ ունեցած է իր ոսկեդարը, որ ինքն ալ ունեցած է իր հզօր թագաւորները, որոնք տիրած են ոչ միայն Հայկական Լեռնաշխարհին, այլ նաեւ հսկայական տարածութիւններու, որոնք ձգուած են Միջագետքէն մինչեւ Կասպից ծովը, Կովկասէն մինչեւ Միջերկրական ծովը։

Ազգային Ինքնիշխանութեան Տօնը կը յիշեցնէ Հայ Ժողովուրդին, որ ինքն ալ ունեցած է իր Արտաշէսները, Տիգրանները, Երուանդները, Արտաւազդները, Վռամշապուհները, Վահագնները, Վահեւանները, Արշակունիները, Բագրատունիները, Արծրունիները, Կամսարականները, Մամիկոնեանները, Զաւէնեանները, Ռշտունիները, Սիւնիները, Վասակեանները, Պահլաւունիները, Օրբելեանները, Զաքարեանները, Հեթումեանները, Լուսինեանները, Ռուբինեանները, Լեւոնեանները, Կիւրիկեանները, Ռուբէնեանները, Ղազարեանները, Ռոստոմեանները, Ամատունիները, Վարդանները, Վահանները, Վասակները, Մուշեղները, Վարազներ, Վահրամներ, Վարդաններ, Վահաններ, Վասակներ, Մուշեղներ

Անգլիական նաւատորմի Սեւ ծովու մէջ

«Քէօլնիշէ Ցայթունկ» ասելի յառաջ երթալով, կը գրէ թէ Անգլիա կը փորձէ իր ազդեցութիւնը ամրապնդել Ռումանիոյ մէջ, ուղղակի Լոնտոնի եւ անուղղակի՝ Էնկիւրիի միջոցաւ: Այս առաջադրութեամբ, առաջին քայլ մը կը համարուի կարող թագաւորին վերջին այցելութիւնը Աթաթիւրքի, «քանի որ, երկու պետութիւններ որոնց մէջ կ'ածի բարեհաճական ազդեցութիւնը, այժմ կ'ընդարձակեն իրենց տնտեսական եւ զինուորական կապակցութիւնները»:

Գերմանական թերթին կարծիքով, ասոր ալ պատճառը քարիւղն է: «Քամբէյի եւ Մոսուլի (Ռումանիա) քարիւղի հորերը պիտի սպառին վեց-եօթը տարիէն, եւ նոր հորեր պէտք է բանալ կարպաթներու արեւելեան սարեան - ջերուն վրայ: Անգլիա այդ քարիւղին պէտք ունի իր տեղադրին վերազինման համար, եւ Ռումանիոյ քարիւղի ծրագիրները կրնան դիւրաւ զուգորդուիլ Ի - րաքի քարիւղի ծրագրին հետ: Այս առթիւ նշանակալից է քարիւղի անգլիացի ամենամեծ դիւանադէտ մանագէտներէն մէկուն՝ Սըր Ր. Հօրի փոխադրու - թիւնը Թէհրանէն Պուքրէշ»:

Գերմանական թերթը կ'ըսէ թէ Անգլիա ծրագիրներ կ'որոճայ, նաւային եւ օդանաւային կայան մը հաստատելու համար Սեւ ծովու մէջ, Քոնսթանցայի մօտ: Եւ եզրակացնելով, կ'ազդարարէ թէ Գերմանիոյ տնտեսական դիրքը այն - քան զօրաւոր է Պալքաններուն մէջ որ, Անգլիոյ ծրագիրները պիտի չյաջողին, «հակառակ անգլիական ոսկիին եւ արծաթ դնդակներուն»: Պալքանները «հաւատարիմ պիտի մնան Գերմանիոյ, ապացոյց՝ Պալքաններու վերջին ցու - ցահանդէսին մէջ, 609 օտար ցուցադրողներէն 386ը Գերմանացի էին եւ միայն վեցը Անգլիացի»:

Նոր յուշեր Էրտական ապստամբութեան մասին

Ինչպէս գրած էինք անցեալ օր, Թուրքիոյ վարչապետը Ազգ. ժողովին մէջ խօսելով Տէրսիմի մասին, կ'ըսէր թէ զինուորական գործողութիւնները այս տարի ալ պիտի շարունակուին» եւ թէ «անցեալ տարուան հետ բաղդատելով այս տարի աւելի շատ զինուոր համախմբած ենք»:

Ուրեմն դիմադրութիւնը կը շարունակուի Տէրսիմի մէջ:

Պէյրութի «Ազդակ»ը հետեւեալ տեղեկութիւնները կը հրատարակէ քրտա - կան չարժումներու մասին, քաղելով Տիգրանակերտէն հասած քիւրտ ցեղապե - տէ մը (2 յուլիս).—

Մոտկանի (Պիթլիսի չրջան), Քէյսարի (Կարճկանի չրջան) եւ Քէրպգի (Հա - ճոգի չրջան) աշիրէթները մէկ ամբողջ ի վեր ապստամբած են: Կառավարու - թիւնը այս երեք աշիրէթներուն միջեւ եղած յարաբերութեան միջոցները կըտ - րած է: Զապտմի ուրիշ միջոցներ օգուտ չեն տուած:

Տէրսիմի եւ Սասունի չրջաններուն մէջ աւելի լայն ծաւալ ստացած են ա - պստամբական չարժումները: Երիս ազգի աշիրէթը մեծ վնասներ պատճառած է Թրքական կառավարութեան: Վերջերս գիւղերով յարձակում մը գործած են իրենց դէմ ղրկուած երեք գումարտակ զօրքին վրայ եւ զգալի վնասներ հասցուցած: Զօրքը փախուստի դիմած է: կառավարութիւնը նոր ուժ կը ղրկէ:

Ապստամբութիւնը կարենալ զսպելու համար, կառավարութիւնը ձեռնարկած էր նեղ ճամբաներու չինութեան: Գործաւորները, թուով 700 հոգի, գի - չերով փախուստ կուտան եւ կ'ապաստանին անառիկ լեռներու վրայ, իրենց հետ տանելով բոլոր վրանները եւ գործիքները:

Իսկ արաբական գործակալութիւնը կը հաղորդէ.— Թուրքիայէն հասած նոր լուրերը կը հաստատեն թէ քրտական ըմբոստութիւն մը ծագած է Անա - տոլուի մէջ: Այս անգամ ալ Տերսիմն է ըմբոստութեան կեդրոնը, բայց եկած տեղեկութեանց մէջ չըսուիր թէ ո՞րոնք են այն քիւրտ ցեղերը որ կը վարեն չարժումը:

Ոչ մէկ երկիր կ'ընդունի 650,000 հրեայ տարագիրներ

Էվիանի խորհրդաժողովի երկրորդ օրուան նիստին մէջ, Եւրոպայի դէլ - խաւոր գաղթային պետութիւնները իրենց ներկայացուցիչներուն միջոցաւ յայտ - նեցին թէ տեղ չունին 650.000 անձամբ Հրեաներու համար: Ցարմար վայրեր կը համարուէին բրիտանական գաղթապետութիւնները, Հարաւ. Ամերիկայի հանրապետութիւնները եւ ուրիշ անդծովեայ գաղթավայրեր, բայց Աւստրա - լիոյ, Քանատայի, Պրազիլիոյ, Արժանթինի, Հոլանտայի եւ Պելժիոյ ներկա - յացուցիչները պաղ ջուր լեցուցին, համակրանք յայտնելով հանդերձ: Աւստ - րալիոյ պատուիրակը յայտարարեց թէ իր երկիրը Հրեայ չի կրնար ընդունիլ, որովհետեւ կ'ուզէ պահել իր անզբեւաքսոն դիմագիծը: Քանատայի ներկա - յացուցիչը առարկեց թէ իր երկիրը տնտեսական տագնապի եւ անգործութեան մատնուած է: Արժանթինի ներկայացուցիչը դիտել տուաւ թէ իր երկիրը միւս - ներուն ընդունած իւրաքանչիւր հարիւրին դէմ 270 Հրեաները ընդունած ըլլա - լով, կատարած է իր մարդասիրական պարտականութիւնը: Հոլանտայի ներ - կայացուցիչը յայտարարեց թէ իր երկիրը արդէն 25.000 տարագիրներ ընդու - նած է, ինչ որ շատ մեծ թիւ մըն է չափազանց խճողուած երկրի մը համար: Պելժիոյ ներկայացուցիչն ալ նոյն առարկութիւնն ըրաւ:

ՋԱՆԱՋԱՆ ԼՈՒՐԵՐՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՄՈՍԿՈՒԱՑին Պերլին հասած լուրերու համաձայն, տիկին Լիթվինով, արտաքին գործավարին կինը (Անգլուհի), Սիպերիա աքսորուած է, բողոքած ըլլալով վերջին գնդակահարութեանց դէմ: Կ'ըսուի թէ Սթալին պահանջած է որ Լիթվինով ամուսնալուծում կատարէ... Տիկինը մերժած է եւ ատնել իր մեղադրանքը:

Պատարագ Հայոց եկեղեցիին մէջ

Երուսաղէմի միաբաններէն Սիօն վարդապետ Մանուկեան որ պատահաբար քաղաքս կը գտնուի, այս կիրակի, 10 Յուլիս, պիտի պա - տարագէ եւ քարոզէ Փարիզի Հայոց եկեղեցիին մէջ:

ՄԱՐՍԷՅԼ-ՓՐԱՏՈՑԻ Ս. ՍԱՀԱԿ-ՄԵՍՐՈՊ ԵԿԵՂԵՑԻԻՆ ՄԷՋ եկ - բակի օր, 10 Յուլիս, կը կատարուի Ս. Թարգմանչաց տօնը: Եր պա - տարագէ եւ կը քարոզէ Տ. Զգօն վրդ. Ցակոբեան: Նաեւ մասնաւոր հոգեհանգիստ կը կատարուի եկեղեցիին հիմնադիր-բարերար Գ. Վա - հան Մորատեանճեանի ծնողքին եւ ընտանիքին հանգուցեալներու յի - շատակին:

Խոնարհութեան կ'ուզուի

Ֆր. Կապոյտ Խաչի օգնափոխութեան կայանին համար լաւ խո - հարարուհի մը կ'ուզուի, դոհացուցիչ վճարումով:

Դիմել գրաւոր Շրջ. վարչութեան հասցէին՝ Տիկ. Մխոքեան, 6 Rue d'Alsace, Asnières, (Seine):

Ամավերջի դպրոցական հանդէս Այֆուվիլի մէջ

10 Յուլիս, կիրակի կէսօրէ վերջ ժամը 2ին, տեղւոյս եկեղեցիին մէջ: կը հրաւիրուի հայ հասարակութիւնը:

ՎԱԼԱՆՍԻ Հ. Ը. Դ. ԿՈՄԻՏԷԻ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍԸ որ տեղի պիտի ունենար Յուլիս 3ին, անձրեւին պատճառաւ ՑԵՏՍԶԳՈՒՄԸ Է Յուլիս 10ին:

Alimentation TIQ-TON

Գ. ՃԻՏՃԵԱՆ

20, Rue Tiquetonne, Paris, *Մէթրօ* **Halles**ին *կամ* **Etienne-Marcel**ին **2** *վայրկեան*

Téléphone: Central 76 95

Բացուած է արեւելեան եւ եւրոպական ուտելիքներու ճոխ մթերանոց, անմրցելի գիներով: Մեծաքանակ եւ մանրաքանակ:

Առաջնակարգ ճերմակ պանիր, 14 ֆրանք քիլօն: Դաշգավալ 17 ֆր.: Պուլկուր, 4.50 ֆր.: Զիթապտուղ, 6 ֆր.: Բրինձ, 2.50ֆր.: Ապուխտ, 22 ֆր.: Սուճուք, 18 ֆր.:

Միւս ապրանքները նոյն համեմատութեամբ: Փորձեցէք եւ պիտի ըլլաք միայն յաժախտրգ:

Յանձնումը բաց է առաւօտեան ժամը 5էն, բացի երկուշաբթիէն: **Livraison à domicile**

Հ. Յ. Դ.

Փարիզ

ՊՐՕՊԱԿԱՆԻ ցանցնախումբի ժողովը *11* Յուլիս, երկուշաբթի երեկոյ ժամը 9ին ճանաճ ճաւաքատեղին:

ՇԱՎԻԼԻ «Արզուհեան» խումբի ժողովը *10* Յուլիս, կիրակի երեկոյ ժամը 9ին սովորական ճաւաքատեղին:

Գրասէր

ՊԱՒԼՎԱՐ Օ8ՏՈՅԻ «Վռամեան» ընթ. ակումիտէի ընդհ. ժողովը 9 Յուլիս, Շաբաթ երեկոյ ժամը 8ին, սովորական ճաւաքատեղին:

ՍԷՆ ԹԷՌՈՒԱ (Մարսէյլ) «Վրէժ» խումբի ընդհ. ժողովը 9 Յուլիս, Շաբաթ երեկոյ ժամը Գիշ. 10ին սովորական ճաւաքատեղին: Բոլոր ընկերներու ներկայութիւնը կարեւոր է:

ՄԱՐՍԷՅԻ «ընկեր կարօ» ընթ. ակումիտէի ընդհ. ժողովը 9 Յուլիս, Շաբաթ երեկոյ ժամը 8ին, ընթ. ընթուանի սովորական ճաւաքատեղին, կարեւոր օրակարգ:

ՊՈՒԼՒՒԻԶԻ «Վարանդեան» խումբի դասախօսական ժողովը 9 Յուլիս, Շաբաթ երեկոյ ժամը Գիշ. 9ին, ընկ. Արապեանները: ներկայանալ անդամատետրով: Գիտի դասախօսէ *Ընկ, ՊՕՂՈՍ ՀՐԻՍԵԱՆ*

ՆՇՈՒԹ՝ *«Տիպար Դաշնակցականի մը յատկանիշները»*

ԿՈՒՉՈՒՔԻ «ՅօՆԵՆԳԱՐԱՐԵԱՆ» ընթ. ակումիտէն ընդհ. ժողովի ներ հրաւիրէ բոլոր ընկերները 9 Յուլիս, Շաբաթ երեկոյ ժամը 8.30ին ծանաճ ճաւաքատեղին: Բոլոր ընկերներու ներկայութիւնը պարտաւորի. է:

ԱՎԻՆԵՈՆի «Մուրատ» խումբը ժողովի կը հրաւիրէ իր բոլոր ընկերնե րը Շաբաթ, 9 Յուլիս, երեկոյեան ժամը 9ին, ընկեր Մկրտիչ Գաբրիէլեանի բնակարանը: Ներկայանալ անդամատետրով կարեւոր օրակարգ:

ՎԱԼԱՆՍԻ կումիտէի ընդհ. ժողովը 9 Յուլիս, Շաբաթ երեկոյ ժամը 8ին իր «Յիսամնեակ» ակումբին մէջ:

Պատարագի հրաւէր

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ՓԱՐԻԶԻ ՀԱՅ ԵՐԻՏ. ՄԻՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ

9 *Յուլիս, Շաբաթ, ժամը 10էն մինչեւ կէս գիշեր իր կեդրոնատեղին* 8, Rue Bossuet, Paris

SAUTERIE ORCHESTRE

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՄԲ Ֆ. Կ. ԽԱՉԻ ՊՈՒԼ. ՕՏՏՈՅԻ Մ ՃԻՒՂԻ

10 *Յուլիս, կիրակի կէսօրէ վերջ ժամը 2ին*

Սէնթ Ամբրէյի օգաստան պարտէզին մէջ

ՑԵՏՍԶԳՈՒՄԸ Է Մարսէյլի Հայ երաժշտական Միութեան գաշ - տաչնացութիւնը որ տեղի պիտի ունենայ 10 Յուլիսին:

ԱՒԻՇԱՏՈՒԹԻՒՆ

Ֆ. Հ. ԿԱՊՈՑ ԽԱՉԻ ԱՆԿԷՆԻ Մասնաճիւղի Ընդհ. ժողովը՝ կարե - ւոր օրակարգով, 9 Յուլիս, Շաբաթ, ժամը ճիշդ 9ին, սովորական հաւա - քատեղին: Անդամներու ներկայու - թիւնը պարտաւորիչ է:

ԻՍԻ-ԼԷ-ՄՈՒԼԻՆՈՑի «Մրմրան» դպրոցի վարչութիւնը խառն ժողովի կը հրաւիրէ Կապոյտ Խաչի, Հ. Ը. Դ. «Զաւարեան» կոմիտէի, Հայ Կա - մաւորներու եւ Մարտիկներու Միու - թեան եւ Իսիի Հայ Երիտասարդաց Միութեան բոլոր անդամները, 9 Յու - լիս, Շաբաթ երեկոյ ժամը 8.30ին «Մրմրան» սրահին մէջ: Օրակարգ՝ Սրահի ընդարձակման եւ բեմի շինու - թեան հարց:

ՏԱՐՕՆ - ՏՈՒՐՈՒԲԵՐԱՆի Հայրե - նակցական Միութեան Ֆրանսայի չրջանի 6րդ. Պատգ. ժողովը կը գու - մարուի յառաջիկայ Օգոստոս 13ին, Շաբաթ առաւօտ, Տէսինի մէջ: Օրա - կարգի նիւթերը առանձին չրջաբեր - կանով պիտի հաղորդուին մասնակ - ցող մասնաճիւղերուն:

ՀԱՑ ԿԱՄԱՒՈՐՆԵՐՈՒ ԵՒ ՄԱՐ - ՏԻԿՆԵՐՈՒ Միութիւնը ընկերահա - ւաքական ժողովի կը հրաւիրէ Ա. - նիէռի եւ Քոլոնպի զինակից ընկեր - ներն ու համակիրները 10 Յուլիս, Կի - րակի ժամը 3ին Անիէռ, Զաքարի սըր - ճարանը, 34 Villa Rouveyvolle: Ներկայ կ'ըլլայ Գնդ. Բաղդասարեան որ պի - տի խօսի Միութեան նպատակներու եւ օրուան հարցերու չուրջ:

Զ. Ո. Մ. ՓԱՐԻԶԻ Մ.ճիւղի Ընդհ. ժողովը 11 Յուլիս, Երկուշաբթի ե - րեկոյեան ժամը 9ին, Քատէի սրճա - րանին վերնայարկը: Կարեւոր օրա - կարգ:

Ղազար Սիւրմէեան, Անթառամ Միրզոյեան. Եւ գաւակները, Ղազար Տէր Գրիգորեան, Յովսէփ Բարսեղեան, Տիկին Ալիս Ղազարեան եւ ազգականները սրտի խորունկ կսկիծով կը ծանուցանեն մահը

ՕՀԱՆ ՄԻՐԶՈՅԵԱՆ Նի

որ սեղմ ունեցաւ Յուլիս 5ին, ժամը 8.40ին Բիթիէ հիւանդանոցին մէջ եւ թաղումը կատարուեցաւ Յուլիս 8ին Թիէի գերեզմանատունը:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Մարսէյլի Հայ Մշակութ. Միու - թեան Վարչութիւնը իր եւ բոլոր ան - դամներու կողմէ խորին ցաւակցու - թիւնները կը յայտնէ Միութեան ան - դամներէն Պ. Կ. Փոլատեանի եւ իր պարագաներուն, իր մօր՝ Տիկ ՍԻՐԱ - ՆՈՇ ՓՈԼԱՏԵԱՆի գառնաղէտ մահ - ուան առթիւ:

REXY CINEMA (Lyon)

8 Յուլիս — 14 Յուլիս

Cours Lafayette, angle Rue Garibal.

Ամէն օր ցերեկները **2.30ին**, իրիկուանները **20.30ին**:

Aguistapag dans "Coup.de.Vent"

Gustav-Froriche dans "L'Aventure"

Գիները **3, 5** եւ **7** ֆրանք

Ներկայ յայտարարութիւնը բե - րողին կը տրուի 2 մուտքի տոմ - սակ զեղչուած գինով:

ՐԱՖՖԻ

Փարիզահայերու միակ վայելուչ ճաշարանը

Տնօրինութեամբ Մ. Գ. ՄԻՐԻՃԱՆԵԱՆի

8, RUE MAUBEUGE Paris (9) *Մէթրօ* Cadetet le Peletier

Հոն պիտի գտնէք՝ արեւելեան եւ եւրոպական կերակուրներու ճաշուստ ճաշացուցակ մը: Անմրցելի ժաքրութիւն եւ անձերի սպա - սարկութիւն: Գոլական օդի՝ եւ քաշելիք ճաշարանատիրոջ անվիճե - լի փորձառութեամբ: Ըմէն տեսակ ճաւաքոյթներու համար կը տրա - մադրուի սրահ անհամեմատ ժատչելի գիներով:

Ճաշաթ եւ կիրակի երեկոները արեւելեան նուագ:



ԲԱՒԸ ՏԻՒԶ

Ջուտ խաղողէ քաշուած եւ անիսոնով պատրաստուած ճայկական օղին՝ ԲԱՒԸ ՏԻՒԶը, Զգուշացէք արուեստական օղիներէ: Ձեր սուպրան կ'այլէ ԲԱՒԸ ՏԻՒԶը որուն անուշ բատ, կազդուրիչ եւ ախորժաբեր ըլլալը ճաստատուած է:

Dalakupeian 8 Rue Suffren Dépôt: 7 Rue de la Paix, Marseille. Tél. Dragon 70—89



Alimentation "TREVISE"

Իր անմահական **"Moka"** *սուրճովը*

Café "HAREM"

5 ԱՒՐ ՀԱՐԻՒՐ ԲԱՑԱՌԻԿ ՉԵՂՔ

Ճոխ մթերանոց արեւելեան եւ արեւմտեան ընտիր ընդեղէններու,

— Որ՝ ձեր պրպակուրդի օթերուն խակ չի մոռնար ձեզ, գոհացնելով ձեր բոլոր փա - փաքները, որ ատկի տակն ալ որ գըտ - նուիք...

ՄԵԾԱՔԱՆԱԿ ԵՒ ՓՈՔՐԱՔԱՆԱԿ

Livraison à domicile

Tél. Taitbout 40—63

30, Rue de Trévise Paris (9) Metro Cadet



"ՇԻՐԱԿ"

Արեւելքի ժիակ իսկական օղին է: Անզուգական, Անմրցելի, Աճախորդա - Առաջնակարգ զօրացուցիչ ախորժա - ներ, պատրաստուած գուտ չամիչէ հին Ցով. Հայ աւանդական սեղանին զարդ:

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՁԱՇԱՐԱՆ

Համեղ, անդգարար արեւելեան կերակուրներո՞ւ սիրահար էք, Պոյիար կարօտնալու պէտք չունիք, մտէք հայկական կեդ - րոնի մէջ

ՍԱՐԵԱՆԻՆ *ՃԱՇԱՐԱՆ «ԹՈՔԱԹԼԻ»*Ն

5, Rue du Baignoir, 5: Marseille

ու պիտի դանէք զուարթ եւ ընկերական շրջանակ մը եւ ճա - շեր խիստ մատչելի գիներով:

ԲԱՒԸ ՏԻՒԶ ճոխ աղանդերներով:

ԿԱՊՈՑՆԵՐ ՌՈՒՍԱՍՏԱՆ ՂՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ունինք մեծ մթերք անդլիական եւ ամերիկեան, որ անսկան եւ չեխոս - լովաք կերպասներու՝ այր մարդոց վերարկուի, հագուստի, կա - նանց ռոպերու եւ հագուստներու համար: Առաջնակարգ կօշիկ - ներ, ճերմակեղէններ եւ նպաստեղէններ: Ունէրվեար գրի մե - քենայ: Զափաւոր գիներ:

Դիմել՝ **American Lloyd, Paris (9). 7 rue Auber**

Tél. Opéra 67-77



Tailleur de ST. BERNARD

Pour Hommes et Dames

H. GULBOLIAN

64 rue Affre կամ 8 rue Cavé, Paris(18)

Մասնաճիւղ՝ 2 rue de la Charbonnière

Մէթրօ La Chapelle եւ Barbès Rochechouard

Թելեֆօն Montmartre 69—70

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ.— Կարեւոր նուէրներ մինչ ձեզ հագուստի համար մինչեւ Յուլիս 14:

ՍՏԱՑԱԾ ԵՆՔ ՅԱՐԱՆՑԱԿՈՒՄ ԵՒ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՄԱՌԱՑԻՆ ԿԵՐՊԱՍՆԵՐ:

ՄԵՐ ԳԻՆԵՐԸ.— Հագուստ (երկու փոքնով) ակսեալ 350—450 ֆր.էն: Նուէր կը տրուի մէկ ֆանթէզի տարատ կամ կոլֆ: 450 ֆր.է վեր հագուստներու համար, 3 փոքն, նուէր կը տրուի Հայկուհի Կիւլպօյեանի արտեստատոցին մէկ պատրաստուած, գարնան յատուկ, արժէքաւոր մուշտակ վզնոց մը: Ներկայանալ «ՅԱՌԱՋԻ կարօնով» վերոյիշեալ նուէրներէն չեն օգտուիր մինչեւ 20 տարեկան այն երիտասարդները որոնք երիտասարդութիւնները որոնք չեն ուզեր խօսիլ ճա - յերենէն չեն կրնար գրել իրենց անուններն այրենի լեզուով:

Բաց է կիրակի մինչեւ կէսօր

Le Gérant : H. STEPHAN

17, Rue Damesme, PARIS (13) A. DER (AGOPIAN)

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

ՀԱՐԱՁ

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
17, Rue Damesme, PARIS (13e)

Téléphone : Glacière 15 - 70
Chèque Postal Paris 1678 - 63
(ԵՐԹԵՒԵԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ —

	ՏԱՐԵԿԱՆ	ՎԵՑԱՄՍԵԱՑ	ԵՒԱՄՍԵԱՑ
Յրանսա եւ Գաղութներ	150 ֆրանք	75 ֆրանք	40 ֆր.
Անգլիա եւ Իտալիա	265 ֆրանք	140 ֆրանք	
Ուրիշ երկիրներ	215 ֆրանք	110 ֆրանք	

ԿԻՐԱԿԻ
10
ՅՈՒԼԻՍ
DIMANCHE
10 JUILLET
1938

ԺԹ ՏԱՐԻ — 14e Année No. 3779

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ՔՆԱՑՈՂՆԵՐՆ ԱԼ ԱՐԹՆՑԱՆ, ԵՒ ՍԱԿԱՅՆ...

Թէեւ չատ ուշ, բայց, վե՛րջապէս, քնացողները ալ արթնցան։ Շփելով իրենց քնաթաթախ աչքերը, անոնք ալ սկսեր են լո՛ւր պահանջել Ի։ Հայաստանէն ու էջմիածինէն։

Երկու օր առաջ յիշեցինք Եգիպտոսի ռամկավար օրկանին յունիս 28ին խմբագրականը, ուր այս պահանջը կը դրուի իբրեւ իրաւունք։

— « Հաւատարմութեան եւ օժանդակութեան մեր այդ պարտքը ինքնաբերաբար ու անշահախնդրօրէն կատարած ըլլալով՝ կը խօսինք այսօր մեր իրաւունքին վրայ· իրաւո՛ւնք գիտնալու՝ թէ ի՛նչ է Ի· Հայաստանի այսօրուան վիճակը »։

Հատուած մը եւս, պատկերացնելու համար այն անճար վիճակը որուն մատնուած են ռամկավարները ·

— « Եթէ նոյնիսկ պատահած չըլլային այն բստմնելի կամ խորհրդաւոր դէպքերը որոնք Աղասի Խանջեանի մահով սկսան եւ հասան Ամենայն Հայոց Կաթողիկոսին վախճանումին, մենք դարձեալ պիտի ուզէինք ճամբորդի, ականատեսի ստոյգ լուրեր ունենալ մեր հայրենիքէն, ինչպէս պարբերաբար ունեցած ենք ասկէ առաջ՝ բանիցս մարդ դրկելով ուղղակի մեր կողմէն եւ մեր տեսնել ու դատել կրցող անդամներուն միջոցաւ այդ տեղեկութիւնները ստանալով։ Մինչդեռ հիմա, աւելի քան երկու տարիէ իվեր, ստիպուած ենք լսել մէկ կողմէ երեւանի թերթերուն եւ միւս կողմէ Դաշնակցական մամուլին յաճախ իրարու հակասող լուրերը, ասոնց կարեւոր ստուգելու ոչ մէկը եւ ոչ միւսը»։

Սակայն կրնանք վստահապէս ըսել որ կասկածելի են թէ՛ մէկ եւ թէ՛ միւս կողմին ըսածն ու գրածը»։

Հարցը այն չէ որ մեր պատուիրժան ռամկավարները կը հաւատա՞ն թէ ոչ, երկու տարիէ ի վեր հաղորդուած, զանազան վկայութիւններով հաստատուած լուրերուն։

Անոնք մասնաւոր ճիգ մը մատնեցին մեղմացնելու նոյնիսկ այն քստմնելի մանրամասնութիւնները որ մամուլին հաղորդուեցան իրենց իսկ չըլլանակէն, «Լիբանանցի երիտասարդի» մը բերնով։ Տեղեկութիւններ որոնց մեծ մասը ամիսներ առաջ հրատարակուած էր Դաշնակցական մամուլին մէջ, միայն մանրամասնութեանց մէջ տարբերելով ։

Անոնք իրենց յատուկ մեկնութիւններ ալ տուին խմբական դնդակահարութեանց, պատասխանատու համարելով բուն իսկ երեւանցիները, եւ ոչ թէ Թիֆլիսն ու Մոսկուան, իբրեւ փրկիչ ներկայացնելով Անաստաս Միկոյեանը, մինչդեռ «Ի· Հայաստան»ը զայն կը պանծացնէր իբրեւ յեղափոխութեան բոցավառ սուրը որ կոտրեց թափեց, «մերկացրեց, ոչնչացրեց», փուչիացո՛ւց «ժողովուրդի թշնամիները»···

Այս պարագաները չեն որ կը հետաքրքրեն մեզ, այլ ռամկավարներու եւ առ հասարակ «Հայաստանասէր»ներու մեատասանեցորդ ժամու իրարանցումը,— այն ալ էջմիածնի չարաչուք լուռութենէն վերջը։ Ամենայն Հայոց կաթողիկոսին մահէն — սպանութենէն — իննսուն օր վերջը։ Այն ալ անշուշտ անոր համար որ, երուսաղէմի պատրիարքն ալ իրար անցեր է, եւ հեռագիրներ կը զարնէ, պատասխան սպասելով էջմիածնի պատերէն ···

Արթննալով իրենց խոր քունէն, ռամկավարները նորէն չեն հաւատար թէ Ի՞որէն Ա· սպաննուած է։ Քա՛ւ լիցի։

— «Զհաւատացիմ , եւ այսօր ո՛ եւ է ձեր տեղեկութիւն չունիմ որ մեզի ստիպէ խորհիլ թէ կրնայ ճիշդ ըլլալ ըսուածը։ Բայց քուն իսկ այդ պակասը տեղեկութիւններու, այդ յամառ լռութիւնը էջմիածնէն ու Ի· Հայաստանէն ընդհանրապէս՝ մտահոգիչ կը գտնեմ, ո՛չ թէ խեղդումին հաւատալու տեսակէտով, այլ ա՛յն խեղդիչ մթնոլորտին՝ որ կայ եւ կը շարունակէ տիրել մեր երկրին մէջ »։

Դուք դատեցէք խորութիւնը՝ այս հոգեկան թշուառութեան, որ պարզապէս հետեւանք է կուսակցական կիրքի։

Մարդոց գլխուն մէջ գամուեր է թէ «արտասահմանի Դաշնակ թերթերն ու գործիչները աւելի կ'օգտուին՝ աւելի եւս չարաշուք դէպքեր հնարելու համար »։

Կ'ըմբռնէք, անշուշտ, իմաստը այս անճոռնի, այս գարշելի հոգեբանութեան ։

Աւելի քան 40 գլուխներ դնդակահարուած, փչրուած կամ «անհետացած» են — կարելի է համրել անուններով — կաթողիկոսն ալ խեղդուած է, ինչպէս եւ երկու եպիսկոպոսներ դնդակահարուած են։ Ամիսներէ ի վեր կը դրուի այս դէպքերու մասին։ Փոխանակ մատը մոխիրը թաթխելու եւ գոնէ հինգ սպանութեան կամ դնդակահարութեան դէպք ստուգելու, մարդիկ իրար կը մրխիթարեն զանոնք վերագրելով Դաշնակցական յերիւրանքներու ։ — Ի՛նչ կ'ուզէ ըլլայ, Դաշնակցութեան ըսածը չըլլայ ։

Անշուշտ արթնցած են հիմա, եթէ ոչ խղճով, գոնէ չիղերով ։ կը զգան թէ «բաներ մը» պատահած են։ Եւ լուր կը մուրան ։ Որմէ՞,— Փարիզի խորհրդային դեսպանատունէն, միեւնոյն աւտեն արտօնութիւն խնդրելով պատուիրակութիւն մը ղրկելու ։

« Երանի՛ հոգիով աղքատներուն», պիտի ըսէր բարեպաշտ ընթերցողը ։

Բայց ոչի՛նչ։ Թող այդ ալ փորձեն։ Թող զարնեն բոլոր դուռները։ Թող չարժին եւ լոյս մըն ալ իրենք ճարեն, որովհետեւ, ինչ որ տեղի կ'ունենայ Հայաստանի մէջ, երկու տարիէ իվեր, իսկապէս աննախընթաց է եւ զարհուրելի, — կրնայինք ըսել նոյն իսկ դժոխային, կշռելով բառին ամբողջ խորութիւնը։

Մանաւանդ որ, հաղորդակցութեան վերջին թելն ալ խզուած է մէկ ամիսէ ի վեր·— այլեւս չենք ստանար «Ի· Հայաստան»ը ։

Շ·

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ՆՈՐԷՆ ՅԱՆՁ ԴԵՊՔԵՐ ՊԱՂԵՍՏԻՆԻ ՄԷՋ

Արաբները ընդհ. գործադուլ կը հռչակեն

Ուրբաթ օր երուսաղէմի մէջ ռումբ մը պայթած ըլլալով, անգլիացի վհինուորներ դիրք բռնեցին սուինաւոր հրացաններով եւ ձեռնաւումբերով։ Ռումբը արձակուած էր Եաֆայի դրան առջեւ, Դաւիթի Աշտարակին մօտ, Արաբներով լեցուած հանրակառքի մը վրայ ։ Պայթումէն սպաննուեցան չորս Ա· րաբներ, իսկ վիրաւորուեցան 18 հոգի, մէջն ըլլալով անգլիացի զինուոր մը։ Հանրակառքը ջարդուփշուր եղաւ եւ կտորները քանի մը հարիւր եարտա անդին նետուեցան։ Ոստիկանութիւնը ձերբակալեց երեք Հրեաներ եւ հրէուհի մը, իբրեւ հեղինակները այս ահաբեկման ։

Դէպքը մեծ յուզում պատճառեց քաղաքին մէջ եւ բոլոր արաբական խանութները փակուեցան։ Քիչ մը վերջը Հրեաներն ալ փակեցին իրենց խանութները, վախնալով փոխլրէժէ։ Ընդհ· գործադուլը, որ հռչակուած էր Եաֆայի եւ Հայֆայի դէպքերէն վերջը, արագօրէն կը ծաւալի։ Փոխադրութեան բոլոր սպասարկութիւնները դադրած են, եւ բազմաթիւ խանութներ փակուած դըլխաւոր քաղաքներուն մէջ։ Ամէն օր հազարաւոր արաբ բանթօղներ կը հաւաքուին մզկիթներուն առջեւ, իսկ անգլիացի նաւազները միշտ կը ցրուեն զանոնք։ Անգլիական վիթխարի զրահաւոր մը Հայֆա հասած ըլլալով, նոր նաւազներ ցամաք հանուեցան։ Թէլ - Ավիվի հրէական թաղերը պաշտպանութեան տակ առնուած են ստուարաթիւ զինուորներով։

Անդրյորդանանի Արաբները իրենց համակրանքը յայտնեցին Պաղեստինի ազգակիցներուն, ցոյցեր կատարելով Ամանի փողոցներուն մէջ։ Այս առթիւ բուռն ճառեր խօսեցան Էմիր Ապտուլլահի պալատին եւ բրիտանական պատուիրակի պաշտօնատան առջեւ։ Թերթերը կը գրեն թէ մեծ քանակութեամբ զէնք եւ ռազմանիւթ կը փոխադրուի Անդրյորդանանէն Պաղեստին ։

Պաղեստինի հրէական գործակալութեան նախագահը կոչ մը ուղղեց Հըրեաներուն, յորդորելով պահել իրենց պաղարիւնը եւ զգուշանալ վրէժխնդրական արարքներէ ։

Կարգ մը թերթեր կը գրեն թէ Պաղեստինի այս դէպքերուն մէջ մատ ունին Իտալիա եւ Գերմանիա։ Անգլիոյ երեսփ· ժողովին մէջ աշխատաւորական մը հարցումներ ուղղեց անցեալ օր, իմանալու համար թէ ո՛վ կը ճարէ այս դաւադրութեանց ըրամները ։

Չեմպըրէյն դժգոհ Իտալիոյ բռնած դիրքէն

Լոնտոնի թերթերը կը գրեն թէ անգլեւիտալական համաձայնութենէն ի վեր (16 ապրիլ) առաջին անգամ ըլլալով, Պ· Չեմպըրլէն կ'ուզէ ակնարկներ ուղղած է Մուսոլինիի, սպանիական գործերու ձգձգման առթիւ։ Նոյն աղբիւրին համաձայն, Անգլիոյ վարչապետը ինքն ալ սկսեր է կասկածիլ թէ համաձայնութիւնը կրնայ ջուրը իյնալ, եթէ այսպէս շարունակուի ։

Անգլիոյ վարչապետը աւելի քան երբեք անհրաժեշտ կը գտնէ որ սպանիական խնդիրը վերջանայ, որպէսզի անգլեւիտալական համաձայնութիւնը դրական դառնայ։ Արդ, Իտալիա կը յայտարարէ թէ կատարած է իր յանձնառութիւնները, դադրեցնելով հականգլիական քարոզութիւնները, կրճատելով Լիբիոյ պահակազօրքը եւ այլեւս օգնութիւն ղրկել չի տար Զօր· Ֆրանքոյի ։ Բայց եւ այնպէս, Անգլիոյ վարչապետը դոհ չէ եւ միշտ նեղացուցիչ հարցումներու կ'ենթարկուի երեսփ· ժողովին մէջ ։

Հռոմի անգլիական դեսպանը առջի օր տեսակցութիւն մը ունեցաւ Իտալիոյ արտաքին նախարարին հետ։ Երկրորդ տեսակցութիւն մը պիտի ունենայ երկուշաբթի օր։ Քաղաքական շրջանակներու մէջ կը կարծեն թէ Անգլիոյ վարչապետը գերագոյն փորձեր կը կատարէ, ելք մը գտնելու համար ։

Քաղաքական տարագիրներու խնդիրը

Էվիանի ժողովին երրորդ օրուան նիստին մէջ, ամերիկեան պատուիրակը յայտարարեց թէ իր կառավարութիւնը պատրաստ է 27.000 տարագիրներ ընդունելու Մեծն Գերմանիայէն (Գերմանիա եւ Աւստրիա), յառաջիկայ տարուան ընթացքին։ (Մինչեւ յունիս 30 ընդունած է 20.000 հոգի, իսկ նախընթաց տարի՝ 13.000)։ Իրականին մէջ կաթիլ մը ջուր է այս, քանի որ 300.000 Հրեաներ կ'ուզեն հեռանալ Գերմանիայէն, բայց ոչ մէկ երկիր կ'ընդունի ։

Սորհրդաժողովին դիմած են զանազան պատուիրակութիւններ, տարագիրներու դատը պաշտպանելու համար։ Ցուշագիր մը կ'առաջարկէ խնդիրը չսահմանափակել միայն Գերմանիոյ եւ Աւստրիոյ տարագիրներով, այլ մտածել նաեւ այն տարագիրներու մասին որ զրկուած են միջազգային որեւէ պաշտպանութենէ (Իտալացիներ, Լեհեր, Հունգարացիներ, Ցոյներ, Հայկէշներ եւն·)։ Ուրիշ յուշագիր մը կ'առաջարկէ բողոքել Գերմանիոյ հակահրէական հալածանքներուն դէմ։ Երրորդ մը կ'առաջարկէ միջազգային ծրագիր մը մշակել, Հրեաներու տեղաւորման համար եւ աւելի լայն չափով Հրեաներ ընդունիլ Պաղեստինի մէջ ։

Սորհրդաժողովը կազմած է բազմաթիւ յանձնախումբեր, որոնց մէկը չսեց 22 ընկերակցութեանց ներկայացուցիչները։ Ցանձնախումբերէն մէկուն նախագահն է Պ· Հանսոն, Նանսէնեան գրասենեակին վերատեսուչը, որուն փորձառութենէն կ'ուզեն օգտուիլ պետութիւնները ։

ՆԻՍԻ ՄԷՋ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԵՑԱՒ թժիշկ մը, Տօքթ· Ֆաուօ, որ ամբաստանուած է թէ զէնք եւ ռազմանիւթ կը ճարէր Գազանի Կոմիտէին կամ «Մուրի Ասպետներուն»։

ՕՏԱՐԱԶԳԻՆԵՐՈՒ հպատակութեան գործողութիւնները խստացնելու համար, Փարիզի առեւտրական սենեակը քննեց ծերակոյտին ներկայացուած օրինագիծ մը։ Այս առթիւ բաղձանք յայտնեց որ հպատակութեան շնորհը տրուի մեծ զգուշութեամբ եւ նկատի առնելով առեւտրական սենեակներու վկայութիւնները։ Մէջի առեւտրական սենեակն ալ նոյն բաղձանքներն յայտնեց , շարք պայմաններ բանաձեւելով ։

ՕՐԸ ՕՐԻՆ

ՎԱՐՈՒՆԳԻ ՄԱՍԻՆ

« Նոր Օր»ի էրանիկագիրը փառաբանական մը գրած էր, անցեալները, վարուճգի մասին, վկայութեան կանչելով պատմագիտական աշխատութիւնը մեր համակրելի բժիշկին՝ Տոքթ· Գ· Գալուստեանի, որ ի մէջ այլոց կը հաստատէր թէ Թիմուրլէնկ կը խենթեւեար վարուճգին վրայ ։ Այդպէս եւ Ֆաթիհ Մէհմէտ ։

Բայց միայն Թիմուր Լէ՞նկ կամ Ֆաթիհ Մէհմէ՞տ։

Երբայեցիները, երբ Հրէաստան կը վերադառնային եգիպտոսէն, վարուճգ կ'երազէին անապատին մէջ՝ ծարաւ անցընելու համար։ Ցետոյ, երբ երկիր մտան, վարուճգի անձայրածիր արտեր մշակեցին, արտերուն մէջն ալ խրտուիլակներ տնկեցին՝ հեռու պահելու համար զողերը ։

Օգոստոս կայսրն ալ, ինչպէս եւ Տիբերիոսը, կը խենթեւեային վարուճգին համար, զոր կը կրծէին ճաշու վրայ թէ ճաշէ դուրս ։

Վարուճգը իրաւունք ունի, ուրեմն, երբ կը պարծենայ, ինչպէս կը պատմէ Առակախօսը· «Վարուճգն կոչեցեալ պտուղ պարտիզի՝ մեծարգոյ հաւ զայլսն կարծէր զանձնէ վասն կանխութեանն»։ Սեխը վիճաբանութեան բռնուեցաւ վարուճգին հետ եւ ըսաւ· — « Եթէ պատուիս՝ զի մերձ ոչ ի ցիս, եւ եթէ ոչ այնպէս սակայն անպատուիս՝ դեղնութեամբ գարշելի եղեալ »։

Որբան պարծենկոտ, նոյնքան վախկոտ է վարուճգը ։ Հեղինակ մը կը վրկայէ թէ վարուճգը կը սոսկայ··· երկեմի որոտումէն, — երբ տմպեր կը պայթին, վախէն կը ծռի մահիկի պէս ։ Կը վախնայ եւեւ ձէքէն, — շան պոչի պէս կը ծռի՝ երբ վրան ձէք թափի ։ Ընդհակառակն շատ կը սիրէ ջուրը ։ վարուճգին մօտ, — 2 — 3 մատ հերու, ամանով ջուր դրէք եւ վարուճգը կ'երկարի, կարծես ջուր խմելու ելլէր ։

Վաստակոց գիրքը «Կօդայ» կ'անուանէ վարուճգը (մեծ տեսակը), զոր կը յանձնարարէ հասակովը դնել երեխային օրօրոցին մէջ՝ եթէ ջերմ ունի, — շուտ կ'անցնի ջերմը ։

Քանի որ տեղը եկաւ, ըսեմ նաեւ որ վարուճգը ոչ միայն կոկորդի ծարաւ կ'անցընէ, այլեւ ··· այն ծարաւը, զոր առաջին անգամ զգացին Ադամ եւ Եւա ։

Այս պատճառով հին յոյն բժիշկները վարուճգ կը կերցնէին ··· կտաւ հիւանդ այրի կիներուն, որոնք առանց ծարաւներ կ'ունենային եղեր ։ Ուրիշ առաւելութիւն մը,— վարուճգի ջուրով մկհկէմը աբանիչելի դեղ է մորթային բարբոռումի եւ կեռիի ։ Կ'ըսեն թէ կը ծառայէ նաեւ փափկացնելու մորքը ։

Իսկ ո՞վ կրնայ մրցիլ վարուճգին հետ իբրեւ զովացուցիչ, ճաճիկ ըլլայ կրծելիք ։ Վաստակոց գիրքը կ'ըսէ.—

« Թէ ուզես որ յամէն ձմեռն ունենաս վարուճգ, ի կարաս՝ ուր սպիտակ գինի լինի կամ անոյշ բացախ՝ կախեա գինեն, այնպէս որ գինին չհատուցնի, եւ ի վերայ ծեփեա, երբ ուզես՝ բաց, թազէ գտանիս»։

Բայց ձեզի զարմանալի բան մը պիտի ըսեմ ։ Հին ատեն, Հռովմայեցիները եւ Յոյները կը կարծէին թէ վարուճգը խելացութիւն կուտայ ։ Մերդ Ամիտովլաթն իսկ կ'ըսէ թէ «խիար, հայերէն խաւարտ, օգտէ սէրսէմին»։ Եւ խելացի բան մը կը խորհրդածէր վարուճգը ։ Միջնդեռ հիմա, ընդհակառակն, վարուճգ կ'անուանեն ապուշները ։

Արդեօք վարո՞ւճգը պատուշցու թէ ··· արդի մարդկութիւնը ։

ԱՐԱԶ

ՖՐԱՆՍԱՑԻ ԵՒ ԹՈՒՐՔԻՈՅ ՄԻՋԵՒ ԿՆՔՈՒԱԾ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԵԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ինչպէս հաղորդած էինք, Յուլիս 3ին Անտիոքի մէջ կնքուած վհինուրա կան համաձայնութենէն վերջը, Յուլիս 4ին Ժընեւրի մէջ ստորագրուեցաւ Ֆրանքեւթուրք բարեկամութեան դաշնագիրը, Սանճաքի վերաբերեալ յայտարարութեամբ ։

Պոլսոյ թերթերէն կ'արտատպենք դաշնագրին եւ յայտարարութեան մանրամասնութիւնները ։—

ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ԴԱՇՆԱԳԻՐ

ՅՕԴ· 1.— Ստորագիր բարձր կողմերը յանձնառու կ'ըլլան թէ պիտի չմասնակցին քաղաքական կամ տնտեսական ո եւ է համաձայնագրի եւ ո եւ է խմբաւորումի մը որ իրենցմէ մէկուն դէմ ուղղուած է ։

ՅՕԴ· 2.— Ստորագիր բարձր կողմերէն մէկը, հակառակ իր խաղաղասէր դիրքին մէկ կամ աւելի պետութեանց կողմէ եթէ յարձակումի ենթարկուի , ինչ կացութեան մէջ ալ գտնուի, ոչ մէկ օգնութիւն պիտի կատարէ յարձակող կողմերուն ։

ՅՕԴ· 3.— Ստորագիր բարձր կողմերը, որոնք նոյն չափով կապուած են ընդհ· խաղաղութեան եւ Արեւելեան Միջերկրականի ապահովութեան պահպանման գործին, ի դէպ այն կացութեան, որ վերինք կը մղէ գործադրել այն յանձնառութիւնները զորս ընդունած են 29 մայիս 937 թուակիր Սանճաքի ամբողջականութիւնը երաշխաւորելու մասին, իրարու հետ խորհրդակցութիւն պիտի կատարեն, իրենց այս յանձնառութեանց կատարման անհրաժեշտ դիւրութիւնները ընծայելու համար ։

ՅՕԴ· 4.— Ընդհ· իրաւաբական դաշնագիրը, այս համաձայնագրին ստորագրութեան պահուն ինչպէս որ կը սկսի գործել ըլլալ երկու ստորագիր բարձր կողմերուն միջեւ, նոյնպէս ի գործ պիտի մնայ անոր գոյութեանը ընթացքին՝ երկու կողմերու միջեւ վէճ կամ անհամաձայնութիւն ծագած պարագային լուծման ձեւերը ճշդելու համար ։

ՅՕԴ· 5.— Այս դաշնագիրը, ստորագիր բարձր կողմերու միջեւ ծագելիք կարգ մը վէճերու մասին չի հակասեր այն տրամադրութեանց որոնք մասնաւոր լուծումի ձեւ մը կը ճշդեն ։

ՅՕԴ· 6.— Այս դաշնագիրը պիտի չմեկնաբանուի այնպիսի ձեւով մը թէ Ազգաժողովի վիճակած դերը կը սահմանափակէ կամ Ազգաժողովի ուխտին երկու կողմերուն պարտադրած պարտականութիւններուն կը վնասէ ։

ՅՕԴ· 7.— Այս դաշնագիրը պիտի վաւերացուի եւ վաւերացեալ պատճէնները կարելի եղածին չափ շուտ պիտի փոխանակուին եւ փոխանակումէն անմիջապէս վերջ պիտի գործադրուին ։ Իր պայմանաժամը 10 տարի պիտի ըլլայ, եւ այս ժամանակամիջոցին լրանալէն 6 ամիս առաջ եթէ չծնուի, ինքնաբերաբար 5 տարուան համար վերանորոգուած պիտի համարուի ։

ՄԻԱՑԵԱԼ ԾԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

« Թուրքիոյ եւ Ցրնսայի կառավարութիւնները, Թուրքիոյ եւ Ցրանսայի միջեւ գոյութիւն ունեցող 3 փետրուար 930 թուակիր բարեկամութեան, փո -

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Դ· էջ)

ՍՏԱՄԲՈՒԼԻ ԼՈՒՐԵՐԸ

The Enemy of Stamboul

By DENNIS WHEATLEY

Թարգմ. Տ. ՏԱՂԱՊԵԱՆԻ

Trans: J. M. Թարգմ. Ա. Ս.

— Այո՛, արեցիր ուղիղ այն, ինչ որ պահանջում էին քեզնից պարտականությունդ եւ հայրենասիրական զգացումդ, — ասաց Տիգրան Պետրոսեանը, — եւ ոչ ոք չի կարող քեզ մեղադրել դրա համար: Բայց ես գիտեմ, որ դու ինձ ընկեր ես համարում, եւ ուրեմն ինձ պիտի ասես ճշմարտությունը: Ինչո՞ւ ես դու այդքան տխուր եւ ինչո՞ւ ես ինքդ քեզ մեղադրում:

— Ինչ որ ցանկանում ես, կարող ես ասել, — պատասխանեց Ռուբէն Ալեքսանեանը, — բայց ես ինքս ինձ մեղադրելու իրաւունք չունեմ: Ես ինձ համար ոչինչ չեմ խնայել, որ կարողանամ ազատել Ռուբինին, եւ ես գիտեմ, որ նա ինձ համար ոչինչ չէր խնայի, որ ինձ ազատի

ՉԱՐԵՆՑ ՅՈՒՇԵՐԸ

Ես տեսա այդ օրը, որպես ամեն ուրիշ օր, ինչպես միշտ, ինչպես ամեն առավոտ, ինչպես միշտ ես կարդում եմ իմ թերթը, ինչպես միշտ ես ուզում եմ իմանալ նորությունները, ինչպես միշտ ես ուզում եմ ծանոթանալ աշխարհի հետ։ Ես կարդում եմ, կարդում եմ, կարդում եմ... Ես կարդում եմ ամեն ինչ, ինչ որ տպված է թերթում, ես կարդում եմ ամեն տող, ամեն բառ, ամեն տառ։ Ես կարդում եմ ամեն ինչ, ինչ որ ինձ հետաքրքրում է, ինչ որ ինձ չի հետաքրքրում, ինչ որ ինձ հետաքրքրում է, ինչ որ ինձ չի հետաքրքրում։ Ես կարդում եմ ամեն ինչ, ինչ որ տպված է թերթում։

Ես կարդում եմ ամեն ինչ, ինչ որ տպված է թերթում։

Alimentation TIQ-TON

Գ. ՃԻՏՃԵԱՆ

20, Rue Tiquetonne, Paris, Մէթրօ **Halles**ին կամ **Etienne-Marcel**ին 2 վայրկեան

Téléphone: Central 76 95

Բացուած է արեւելեան եւ եւրոպական ուտելիքներու ճոխ մթերանոց, անմրցելի գիներով։ Մեծաքանակ եւ մանրաքանակ։

Առաջնակարգ ճերմակ պանիր, 14 ֆրանք քիլօն։ Դաշգավալ 17 ֆր.։ Պուլկուր, 4.50 ֆր.։ Զիթապտուղ, 6 ֆր.։ Բրինձ, 2.50 ֆր.։

Ապուխտ, 22 ֆր.։ Մուճուք, 18 ֆր.։

Մթնոլորտը նոյն համեմատութեամբ։ Փորձեցէք եւ պիտի ըլլաք միայն գոհ։

Խանութը բաց է առաւօտեան ժամը 5էն, բացի երկուշաբթիէն։ **Livraison à domicile**

Հ. Յ. Դ.

Փոստիզ

ՑԵՑԱԶԳՈՒՄ է Պրոպականտի յանձնախումբի ժողովը որ տեղի պիտի ունենար 11 յուլիս. երկուշաբթի։

ՇԱՒԻԼԻ «Արդութեան» խումբի ժողովը *10* յուլիս, կիրակի երեկոյ ժամը 9ին սովորական ցաւաքատեղին։

ՎԱՀԱՆԻ Հ. Յ. Դ. ԿՈՄԻՏԷԻ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍԸ որ տեղի պիտի ունենար Յուլիս 3ին, անձրեւին պատճառաւ ՑԵՑԱԶԳՈՒՄ է Յուլիս 10ին (այսօր)։

Ֆ. Կ. ԽԱԶԻ ՓԱՐԻԶԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ ՏԱՐԵԿԱՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍԸ

17 Յուլիս, կիրակի առաւօտեան ժամը 9էն գիշերուան 11.30

ՐՈՊԷՆՍՈՆԻ ՄԷՋ, *Grand Arbre, Maison Fiquet*

Գեղարուեստական հաճելի անակնկալներ, ընտիր նուագախումբ Անձրեւի պարագային գոց սրահ, ճոխ պիւֆէ պատրաստուած խնայուհիներու կողմէ. Մուտք 5 ֆրանք։

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ.— Denfert-ի առնել մեթրոյի դէպի Ռոպէնսոն տանող գիծը, եւ կամ բորթ տ'Որլէանէն օթօպիւս թիւ 128։

ՏԱՐԵԿԱՆ ՄԵԾ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ՍԻՓԱՆ-ԿՈՄԻՏԱՍ ԵՐԳԱՀՈՒՄԲԻՆ ԿՈՂՄԷ

10 Յուլիս, կիրակի առաւօտ ժամը 10էն մինչեւ կէս գիշեր

ՌՈՊԷՆՍՈՆԻ ՄԷՋ, GRAND ARBRE, Maison FIQUET

Գեղարուեստական բաժին, զանազան խաղեր եւ անակնկալներ, ընտիր նուագախումբ Թանկ եւ ժազ, ճոխ պիւֆէ դիւրամատչելի գիներով։

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ.— Մեթրօն փոխել Denfer Rochereau եւ առնել Robinsonի գիծը։

Մուտք 5 ֆրանք

Ուտելիքը կարելի է միասին ընել

Դ ա շ տ ա հ ա ն դ է ս

ԴՈՐՈՑԱՍԷՐԻ ՍԱՆՈՒՑ ՄԻՈՒԹԵԱՆ

24 Յուլիս, կիրակի, ժամը 3ին, վարժարանին պարտէզը

1, Bld. du Nord, le Raincy

Կը ներկայացուի ԱՆՈՒՇ օփերէթէն պատկերներ ղեկավարութեամբ ԴՄՐԻԹԵՒՆԻ։ LES CHAUSSONS DE LA DUCHESSE ANNE (օփէրէթ), *հայկական պարեր, Ճոպիկներու պալէ, զանազան պատկերներ, մաքրզական խաղեր։*

Ճաշ եւ պար մինչեւ մօտ 10։ Ճոխ պիւֆէ ժատչելի գիներով, (կը խնդրուի միասին ուտելիք չբերել)։ *Մուտք 5 ֆրանք։*

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ.— Opéra-էն կամ Jaurès-էն առնել օթօպիւս 21A եւ իջնել Raincy-Pavillons, Gare de l'Est-էն դուկնկառք՝ direction Gargan, իջնել Raincy-Pavillons։

Ամավերջի դպրոցական ձաշկոյթ Ալֆորվիլի մէջ

10 Յուլիս, կիրակի կէսօրէ վերջ ժամը 2ին, տեղւոյս եկեղեցիին մէջ։ Կը հրաւիրուի հայ հասարակութիւնը։

ՏԱՐԵԿԱՆ ԴԱՇՏԱ-ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

ԱՄԱՍԻԱ-ՄԱՐՄԱՐԱՒԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

14 Յուլիս, Հինգշաբթի ամբողջ օրը ՍԷՆ - ԼՈՒԻ ԿՐԱՆ - ՓԷՆ, եօթնեռդեայրեանի հովասուն ազարակը։

ԿԸ ԽՕՍԻ ՏՕՔԹ. ԼԵՒՈՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

Կը ներկայացուի «ՇԱՏԱԽՕՍ ՍԱՓՐԻԶԸ» ղեկավարութեամբ Ց. ԻՆՃԻԵԱՆԻ եւ մասնակցութեամբ Գ. Պ. ԱԼԻՔՍԱՆԵԱՆԻ եւ ԳԱՍՄԱՃԵԱՆԻ։ Կը նուագէ հայրենակից Ջութակահար Պ. ՆԱՋԻԿԵԱՆ։ Գարեբրու ընթացքին կը նուագէ Պ. ՍԻՄՈՆ ՇԻՇՄԱՆԵԱՆ իր խումբով։ Պարզ ճաշ եւ զուարճալի անակնկալներ։ Առատ կերուխում։

Միութեանս վիճակահանութիւնը կը քաշուի տեղւոյն վրայ։

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ.— Ուղիվար կարիպալաիէն առնել *15, 16, 18* թիւ ֆանրակառքերը եւ իջնել Սէն-Լուի կրան-փէնի։

ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Ք. Կ. Խաչի Փարիզի մասնաճիւղը իր խորին ցաւակցութիւնները կը յայտնէ, վարչութեան ժրաջան քարտուղարուհի Տիկ. Գազանճեանի եւ պարագաներուն, իր եղբօրորդւոյն Շահեայ ՌՈՒԲԻՆ ԻԶՄԻՐԼԵԱՆի դառնաղէտ մահուան առթիւ։

ՑՈՒՇԱՏԵՏՐ

Զ. Ո. Մ. ՓԱՐԻԶԻ Մ. ճիւղի Ընդհ. ժողովը 11 Յուլիս, երկուշաբթի երեկոյեան ժամը 9ին, Քառէի սրճարանին վերնայարկը։ Կարեւոր օրակարգ։

ՄԱՐՍԷԼԻ ՀԱՅԴԵՐՁԵՂԷՆԻ

քանուոր - քանուորուհիներու սէնտիքան երկուշաբթի օրուան համար (11 Յուլիս) կազմակերպած է Ընդհ. ժողով մը, Սա Ֆէրէր, Վիէյլ Պուրս տը Թրավայլ, ժամը 18.30ին։ Սէնտիքան կը հրաւիրէ բոլոր հանդերձեղէնի քանուորները ներկայ ըլլալ այս կարեւոր հաւաքոյթին։

ՆԱՄԱԿԱՏՈՒԻ

ԼԻՈՆ, Ք. Ա.— կարդալ Ա. Հ ի ուղղուած նամակը եւ կարգադրել։

Մ ա ծ դ ա շ տ ա հ ա ն դ է ս

ԽԱՆԱՍՈՐԻ ԱՐՇԱԿԱՆՔԻ 41ՐԴ. ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՒ

կազմակերպուած Հ. Ց. Դաշնակցութեան Սարսէլի «Հրայր» Առնուվիլի «Ռուպմիկ» խումբերու կողմէ, հովանաւորութեամբ Հ. Ց. «Վարդան» Մենթակոմիտէի։ 10 Յուլիս, կիրակի, առաւօտէն մինչեւ ընթրիք, Օ.-ՏԻՒ-ՌՈՒԱԶԻ ետեւ, Օ-ՓՈՆ-ԻՈՆՏԷվի ծառաստանին մէջ։

ԿԸ ԽՕՍԻ Ը"Նկ. Ս. ՏԷՐ ԹՈՎՄԱՍԵԱՆ

Երգ, արտասանութիւն եւ դաշտային խաղեր։

Պիտի նուագէ Թառիստ ԳԱՐԵԳԻՆ եւ փողբրիկն Ռեժիսիա պիտի պարէ Հայկական եւ կովկասեան պարեր։ Ճոխ եւ դիւրամատչելի պիւֆէ խմիչք։ *Մուտքը ազատ է։*

Անձրեւի պարագային կը յետաձգուի

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՄԲ Ֆ. Կ. ԽԱԶԻ ՊԱՒԼ. ՕՏՏՈՅԻ Մ.ՃԻՒՂԻ

10 Յուլիս, կիրակի կէսօրէ վերջ ժամը 2ին

Սէնթ Ալպուրէի օդաստն պարտէզին մէջ

Բանախօսութիւն, գեղարուեստական խնամուած բաժին՝ խրճիթ, մեներգ, արտասանութիւն, անակնկալներ եւ հայկական պարեր, Ք. Ժ. Դ. «Ազամեան» թատերախումբը կը ներկայացնէ «ԵՐԿՈՒ ՕՁԱԽՈՑՆԵՂՆԵՐԸ»։ *Մուտքը ազատ է։*

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ.— Հանդիսավայրը երթալու համար Ֆուր. Գէյոնի սեղմ առնել *25* թիւ հաւրակառքը եւ իջնել վերջաւորութեան։

ՓԱՐԻԶԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՄԿՈՒՄԲԻ

Ցառաջիկայ դասախօսութիւնը տեղի կ'ունենայ 12 Յուլիս, երեքշաբթի երեկոյեան ժամը 9ին, 8 Ռիւ Պոսքէ։

ԿԸ ԽՕՍԻ Պ. Հ. ԶԱՐԳԱՐԵԱՆ

Նիւթ՝ «Իրապաշտ շարժումը ժամանակակից գրականութեան մէջ (Սքմաքէյնեանէն)»։

Հ. ԶԱՐԳԱՐԵԱՆ

ՎԻՐԱՒՈՒԾԱԿ - ԱՏԱՄՆԱՒՈՒԾԱԿ

44 Rue Dunkerque (ՄԷԹՐՈ ԿԱՐ ՏԻ ՆՈՐ)

Tél. Trudaine 42—69

Կ'ընդունի ամէն օր ժամը 14—20։

Գործառները ժամադրութեամբ։

ԵԴՈՒԱՐԴ ԳԱԼՓԱՔՃԵԱՆ

ԴՐԱՄԱՏՈՒՌՆ, **48 rue de la République, Marseille**

Tél. Colbert 74—51, 47—22

Ծուար գրասենեակս փոփոխութիւն։ Ջէքեր կը տրուին ամէն երկրի ճաշակ։ կը գնենք եւ կը ծախենք ոսկի դրամներ։

ՀԱՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ.

ՀԱՅՏՆՈՒԻ ԺԱՄԱԴՐԱՎԱՃԱՌ

Ճաշարան **Տ Լ Օ Ր Թ Ա**

51, Rue Monsieur le Prince, Paris (6)

Մէթրօ՝ Օտէօն եւ Մեծ Միլէտ

Արեւելեան եւ եւրոպական խնամուած կերակուրներ։



ԲԱԺԱԿ ՏԻՒԶ

Ջուտ խաղողէ քաշուած եւ անիսոնով պատրաստուած հայկական օղին *ԲԱԺԱԿ ՏԻՒԶ*ն է, զգուշացէք արհեստական օղիներէ ձեր ստամոքսը կ'այրէ։ Գիշերները ջուր կը խմէ եւ կը վնասէ ձեր առողջութեան։ Խմեցէք *ԲԱԺԱԿ ՏԻՒԶ* որուն անունը կագդուրիչ եւ ախորժաբեր ըլլալը հաստատուած է։

Dalakupeian 8 Rue Suffren

Dépôt: 7 Rue de la Paix, Marseille. Tél. Dragon 70—89



“ ՇԻՐԱԿ ”

Արեւելքի սիրակ իսկական օղին է։ Անզուգական, անմրցելի, անհաղթ ախորժաբեր, Աւագնակարգ զօրացուցիչ ախորժաբեր, պատրաստուած զուտ չամիչի ճիւղով։ Հայ աւանդական սեղանին զարդ։

Խաղարձ հասկացողութեան եւ իրաւարարութեան դաշնագրին փոխարէն այսօր ստորագրուած բարեկամական դաշնագիրը նկատի ունենալով,, այս միացեալ յայտարարութեամբ հետեւեալ խնդիրներու մասին համաձայնութեան յանգած են ։—

1.— Գործադրել 1937 մայիս 29ին ընդունուած Ալեքսանտրէթի Սանճաքի իրաւակարգը եւ սահմանադրութիւնը։ Սանճաքին մէջ թուրք տարրին ղեկավարութիւնը ընդունելով հանդերձ, թուրք կառավարութեան կողմէ, Սանճաքի հարցը թուրքիոյ համար հողային խնդիր մը չկատել, ինչպէս կը հաստատէ Ենկիւրիւի 1921 հոկտեմբեր 20 թուակիր համաձայնագիրը ։

2.— Հովանաւորութեան վարչաձեւին տակ պահել 30 մայիս 1936 թուակիր Անգարայի պայմանագրութեամբ թուրքիոյ, Սուրիոյ եւ Լիբանանի միջեւ հաստատուած բարեկամութեան եւ բարի դրացնութեան յարաբերութիւնները ։ Եւ այս պայմանագրութեան եւ զայն ամբողջացնող համաձայնագրերուն պայմանաժամը լրանալուն հետեւանքով այս յարաբերութեանց ո եւ է դադարումին արգելք ըլլալու համար, յիշեալ փաստաթուղթերու տեւողութիւնը տարի մը եւս յետաձգել ։

Միեւնոյն ժամանակ այս համաձայնագրերուն արտատեղիներու իրաւունքներուն վերաբերեալ տրամադրութիւնները այսօրուընէ սկսեալ ընդունած են ։

3.— Նոյն պայմանաժամով տեւողութիւնը երկարաձգել այն իրերահասկացողութեան եւ իրաւարարութեան դրութիւններուն, որոնք Թուրքիոյ եւ Ֆրանսայի միջեւ 30 փետրուար 930 թուակիր բարեկամութեան, իրերահասկացողութեան եւ իրաւարարութեան դաշնագրի կցուած փրօթօքոլով հաստատուած են Թուրքիոյ եւ Ֆրանսայի հանրապետութեան իշխանութեան տակ դրուած երկիրներու միջեւ ։

4.— Թրքահպատակներու Սուրիոյ եւ Լիբանանի մէջ, Սուրիոյ եւ Լիբանանի հպատակներուն ալ Թուրքիոյ մէջ ընակութեան իրաւունքը եւ պայմանները եւ մանաւանդ գատական իրաւասութեան մասին ամէնէն ուշի նպաստաւորուած ազգի վերաբերմունքի առարկայ ընել ։

5.— Երկու կառավարութիւնները որոշած են, երբ Սուրիա ինքնավար դառնայ, Թուրքիոյ, Սուրիոյ եւ Ֆրանսայի միջեւ երբեակ բարեկամական դաշնագրի մը վերածել եւ ամբողջացնել երկարաձգուած այն բարի դրացնութեան պայմանագիրը, որու մասին բացատրութիւն տրուած է այս յայտարարութեան երկրորդ հատուածին մէջ ։

6.— 1936 մայիս 30 թուակիր բարեկամութեան եւ բարի դրացնութեան պայմանագիրը, կնքուած ըլլալով Թուրքիոյ եւ Ֆրանսայի միջեւ որ միջազգային յանձնառութեամբ Սուրիոյ եւ Լիբանանի վրայ ճանչցուած իրաւասութիւններ ունի, որոշուած է որ անոր տրամադրութիւնները պիտի չկիրագործուին Լիբանանը ։

Միւս կողմէ որոշուած է որ՝ երբ կարելի ըլլայ, բանակցութիւններ կատարուին՝ ապահովելու համար Թուրքիոյ, Սուրիոյ եւ Լիբանանի միջեւ հաստատած առեւտրական յարաբերութեանց զարգացումը ։

7.— Վերջապէս, Թուրքեւ-Ֆրանսական կառավարութիւնները, Թուրքերուն Ֆրանսայի մէջ եւ Ֆրանսացիներուն ալ Թուրքիոյ մէջ կացութիւնը ճշդելու համար, համաձայնած են որ մօտերս բանակցութեան սկսին, բնակութեան պայմանագրութիւն մը կնքելու համար ։

*** Էնկիւրիւէն կը հեռագրեն թէ Թուրքիոյ եւ Սուրիոյ գաշնագրին բանակցութեանց առթիւ. խորհրդաժողովը որոշեց երեք յանձնախումբեր կազմել, մէկը՝ սահմանագլուխներու եւ առողջապահութեան մասին, երկրորդը՝ փոխադրութեանց , երրորդը՝ տնտեսական հարցերու համար ։

*** «Ֆրանսա - Թուրքիա » խորհրդարանական խմբակին նախագահը , Պ. Պոսուէթրօ, նամակ մը ուղղելով Փարիզի Թրքական դեսպանին, իր ջերմ ուրախութիւնը կը յայտնէ Ալեքսանտրէթի հարցին կարգադրութեան համար ։ Եւ կ'աւելցնէ ։— «Մեր խմբակցութիւնը կը յուսայ թէ չատ աւելի սերտ յարաբերութիւններ պիտի հաստատուին մեր երկու մեծ հանրապետութեանց միջեւ եւ կը խնդրէ Աթաթիւրքի հաղորդել իրենց խորունկ բարեկամութեան զգացումները Օսմանեան(?) հանրապետութեան հանդէպ»։

*** Նախարարական խորհուրդի առջի օրուան նիստին մէջ Պ. Ժոռժ Պոնէ մանրամասն զեկուցում մը հաղորդեց արտաքին քաղաքականութեան մասին։ Այս առթիւ մասնաւորապէս ծանրացաւ Ֆրանքեւթուրք համաձախութեան վրայ, չեչտելով թէ ան մեծ կարեւորութիւն ունի ոչ միայն Ալեքսանտրէթի հարցին կարգադրութեան տեսակէտով, այլեւ իր տարողութեամբ։

*** Գերմանական թերթերը կը շարունակեն արծարծել Մօտաւոր Արեւելքի խնդիրը, «Ֆրանքֆուրթէր Ցայթունկ» առաջին էջին մէջ հրատարակեց յօդուած մը երեք սիւնակի վրայ, ուր կը բացատրէ թէ Ֆրանսա չի կրնար գաղթավայրի մը վերածել Սուրիան, բաւականաչափ ժողովուրդ չունենալով»։

Ազգ վիճակահանութեան պարգեւներ

Ազգ. պարգեւախաղի 7րդ շարքին վիճակահանութիւնը տեղի ունեցաւ ուրբաթ գիշեր, Քապուռի մէջ։ Հինգ միլիոնի մեծ պարգեւը չահեցաւ 0.964.546 թիւը ։

Հետեւեալ չորս թիւերէն իւրաքանչիւրը չահեցաւ մէկ միլիոն ֆրանք.— 0.029.146, 1.319.672, 0.430.495, 0.447.226։

Հետեւեալ վեց թիւերէն իւրաքանչիւրը չահեցաւ 500.000 ֆրանք . — 0.270.603, 0.542.533, 0.008.907, 0.491.921, 0.669.378, 0.828.814 ։

08.662 վերջացող թիւերը չահեցան 100.000 ֆրանք։

62.777, 14.823 վերջացող թիւերը չահեցան 80.000 ֆրանք ։

84.756, 51.852 վերջացող թիւերը չահեցան 50.000 ֆրանք ։

6891, 5230, 8713 եւ 8245 վերջացող թիւերը չահեցան 20.000 ֆրանք ։

833 վերջացող թիւերը չահեցան 10.000 ֆրանք ։

443 վերջացող թիւերը չահեցան 5000 ֆրանք ։

61 վերջացող թիւերը չահեցան 1000 ֆրանք ։

60 եւ 05 վերջացող թիւերը չահեցան 220ական ֆրանք ։

3 վերջացող թիւերը չահեցան 110 ֆրանք ։

ՋԱՆԱՋԱՆ ԼՈՒՐԵՐՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՄՈՍԿՈՒԱՅԷն քաղուած տեղեկութեանց համաձայն, 210 պաշտօնեաներ ձերբակալուած են Ուկրայնայի հողագործական պաշտօնատան մէջ, յունիսի ընթացքին։ Կ'ըսուի թէ միայն յունիսի երկրորդ կիսուն 3800 անդամներ վտարուած են Ուկրայնայի բոլշեւիկեան չարքերէն ։

ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹԵԱՆ ՆԳԱՍՏԻ յաւելման խնդիրը քննելով, Սէնի նահանգային ժողովը հետեւեալ սակերը որոշեց, յուլիս 1էն սկսեալ.— Ա. Մէկ ընտանիքի համար օրական 37 Ֆր. 50, որուն 21.25ը ընտանիքին պիտին, 16.25ը կնոջը.— Բ. իւրաքանչիւր երկու առաջին զաւակներու համար 17.50.— Գ. Երրորդ զաւակէն սկսեալ 15 ֆրանք (ինչպէս եւ անոնց համար որ բնակ են ընտանիքին վրայ).— Դ. Անհատ գործազուրկին համար՝ օրական 21.25։ Ժողովը 500.000 ֆրանքի վարկ մը սահմանեց, իբրեւ նահանգին բաժինը ։

ՑԵՑԱԶԳՈՒՄ է Իսիի «Զաւարեան» կոմիտէի գաշտահանդէսը որ տեղի պիտի ունենար այսօր, կիրակի։

Խոհարարուհի կ'ուզուի

Ֆր. կապոյտ Խաչի օգտախոհութեան կայանին համար լաւ խոհարարուհի մը կ'ուզուի, դեհացուցիչ վճարումով։

Դիմել գրաւոր Շրջ. վարչութեան հասցէին՝ Տիկ. Միսաքեան, 6 Rue d'Alsace, Asnières, (Seine)։

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՑԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՓՐԱԿԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
17, Rue Damesme, PARIS (13e)

Téléphone : Glacière 15 - 70
Chèque Postal Paris 1678 - 63
(ԵՐԹԵՒԵԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ — ՏԱՐԵԿԱՆ ՎՃՑԱՄՍԵԱՅ ԵՒԱՄՍԵԱՅ

Թրանսա եւ Գաղութներ	150 ֆրանք	75 ֆրանք	40 ֆր.
Անգլիա եւ Իտալիա	265 ֆրանք	140 ֆրանք	
Ուրիշ երկիրներ	215 ֆրանք	110 ֆրանք	

ԵՐԵՔՇԱԲԹԻ
12
ՅՈՒԼԻՍ
MARDI
12 JUILLET
1938

ԺԹ. ՏԱՐԻ — 14e Année No. 3780

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻԱՍԵԱՆ

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

«ՔԱՂԱՓԱՐԱԿԱՆ» ԱՇԽԱՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Ժամանակակից քաղաքական խմորումները ու զէպքերը այնքան ծանրակչիռ հանգամանք պիտի չունենային, ապահովաբար, եթէ անոնց հետ խառնուած չըլլար վարդապետական դիծ մը: Այն ինչ որ կը կոչուի «զգայնութիւն» (խէօղոժի):

Առաջ, պետութիւններ եւ արքաներ պատերազմ կը սարքէին, աշխարհակալութիւններ կը պատրաստէին յանուն քրիստոնէութեան եւ քաղաքակրթութեան:

Յետոյ մէջտեղ նետուեցան նոր նշանախօսքեր ,— արդարութիւն, իրաւունք , ազգերու ինքնորոշում եւ ուրիշ հրապուրիչ խայծեր, որոնց գոհ տարի առաջ մտաւոր զոհին գոհ միլիոն քաղաքացիներ, մեռեալ, վիրաւոր թէ հաշմանդամ :

Այսօր ալ մարդիկ նոյն պատրանաութիւնները կը տեսնեն յանուն խաղաղութեան, բայց վարպետօրէն կը գունաւորեն զայն , կատարեալ թնճուկ մը դարձնելով :

Այսպէս, աշխարհակալ պետութեանց մէկ մասը «խաղաղութիւն»ը կը մեկնէ պահպանում չհոտած աւարին :

Միւս մասը ինքզինքը զրկուած համարելով, միեւնոյն առեն հաստատուած կարգուսարքը իր նոր վարդապետութեան համաձայն չգտնելով, զէն ու զրահ կը դիպչ, «արդարութիւնը տեղը բերելու համար »:

Այս ճակատին վրայ, ամէնէն առաջ փայլեցաւ խորհրդային իշխանութիւնը, համաշխարհային յեղափոխութեան մարտակոչը հնչեցնելով: Յետոյ աստիճանաբար նահանջելով, այժմ «ռուս մեծ ժողովուրդին» հայրենասիրութիւնը կը պանծացնէ, 100--150 յեղուններով եւ գաւառաբարբառներով:

Մոսկուայէն արձակուած չեփորը թեւ առաւ երկու մեծ պետութեանց, բոլորովին նոր եղանակներ հնչեցնելու համար,— Ֆաշիականութիւն եւ ազգային - ընկերվարութիւն (հիթլէրականութիւն):

Երկուքն ալ ամէն բանէ առաջ վերազոյն ճիգեր թափեցին , միլիոնաւոր բաղմութիւններ ոտքի հանելու, ելեկտրականացնելու եւ սպառազինութիւնները ատամնապատկելու համար :

Հիմա որ արդէն հասած են իրենց նպատակին, ահռելի ուժ ամբարելով, երկուքն ալ կը խօսին ոչ միայն քաղաքական եւ տնտեսական իրաւունքներու մասին, այլեւ իրենց վարդապետութեանց գերազանցութեամբ: Ուրիշ խօսքով, կ'ուզեն ճիշդ այն դերը կատարել, ինչ որ փորձեցին բոլշեւիկները, բոլորովին տարբեր ուղղութեամբ :

Եւ, երկուքն ալ չեն ծածկեր թէ պատրաստ են պատերազմելու այդ սկզբունքներուն համար :

Ահաւասիկ վերջին վկայութիւնը, նոյնինքն Մուսոլինիի բերնով :

Իտալիոյ Առաջնորդը յառաջաբան մը գրած է Ֆաշական Գեղագոյն Մորհուրդին կողմէ հրատարակուած գրքի մը.— «Հաւատքածոյ Հրամանագիրներու »: Այդ յառաջաբանը, որ արտատպուեցաւ իտալական մամուլին մէջ, չատերու կարծիքով կը կազմէ Մուսոլինիի առաջին բացորոշ յայտարարութիւնը՝ պատերազմի հաւանականութեան մասին :

Հաւատած մը, գաղափար կազմելու համար: Մուսոլինի չհեռուելով Իտալիոյ միջամտութեան (Սպանիա) «պատմական ահագին նշանակութիւնը», կը յայտարարէ .

— « Առաջին անգամ էր — անշուշտ ոչ վերջինը — Սեւ Շապիկաւորները կը ճակատին համայնավարութեան ուժերուն եւ ժողովրդապետութեան անմահ սկզբունքներուն դէմ միջազգ· գետնի վրայ: Առաջին ընդհարումն է այս երկու յեղափոխութեանց միջեւ, անցեալ դարու յեղափոխութեան (որովհետեւ բոլշեւիզմն ալ յետաշրջական յեղափոխութիւն մըն է) եւ մերինին միջեւ : Մենք չենք գիտեր թէ այս ընդհարումը պիտի ծաւալի՞ վազը, եւ – րոպական եւ համաշխարհային աստիճանի մը վրայ, բայց գիտենք որ փաշականութիւնը չի վախնար ճակատամարտէ մը որ պիտի վճռէ Եւրոպայի ճակատագիրը »:

Շաբաթականութեան մէջ, « Տուչէ»ն կը բացատրէ թէ Իտալիա այժմ կը չնչէ համաշխարհային շունչով մը, «վճռապէս կանգնած՝ Հռոմ – Պերլին առանցքին եւ Հռոմ - Պերլին - Թոքիօ եռանկիւնին վրայ »:

Այսքանը ինքնին բաւական է, իմանալու համր թէ ո՛ւր կ'ուզէ յանգիլ Ֆաշականութիւնը: Մնաւանդ որ, իր զինակիցն ալ, հիթլէրականութիւնը նոյնքան խանդավառութեամբ կը հնչեցնէ իր նոր աւետարանը, քաղաքականութենէն մինչեւ զեղարուեստը :

Կիրակի օր, բանալով զերմանական արուեստի երկրորդ համագումարը Միւնիխի մէջ, Հիթլէր պարզեց նոր Գերմանիոյ զեղարուեստական ըմբռնումները եւ յայտարարեց .— «Մ՛վ որ կ'ուզէ արուեստագէտ ըլլալ այս երկրին մէջ, պէտք է պանծացնէ ա՛յս դարը»:

Իրմէ առաջ, Պավարիոյ չրջանապետն ալ պանծացնելով գերմանական նոր արուեստը, չեչտեց թէ «Ազգային - ընկերվարական Գերմանիան կ'առաջնորդէ աշխարհը, ստեղծագործ գեղարուեստի բոլոր ձեւերուն մէջ »:

Նոր վերլուծումներու չեն կարօտիր այս արտայայտութիւնները, իրրեւ ժամանակի նշան :

Թէ իտալական եւ թէ գերմանական արտայայտութեանց մէջ, երկու առաջնորդներն ալ նոյն հեղնական սլաքները կ'արձակեն «Ժողովրդապետութեան» դէմ, անխուսափելի դանելով ընդհարումը :

Ուրեմն, յառաջիկայ պատերազմը պիտի մղուի յանուն «զգայնական» աշխարհակալութեան, պարտկելու համար միւս տենչերը :

Շ.

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

50,000 ԹՈՒՐՔ ՋԻՆՈՒՈՐ ՏԷՐՍԻՄԸ ԽՈՐՏԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

«Տէյլի Թէլէկրաֆ»ի թղթակիցը կը հեռագրէ Էնկիւրիէէն.—

Թրքական բանակը մօտերս պիտի մասնակցի լայն ռազմափորձի մը՝ Տէրսիմի չրջանին մէջ: Ռազմափորձերուն հետ միաժամանակ զօրղական գործողութիւններ պիտի կատարուին ապստամբ ցեղերուն դէմ: Պիտի մասնակցին 50.000 զինուորներ, օդանաւային եւ հրետանիզ ուժերով: Զինուորներու համախմբումը սկսած է արդէն :

ՅԱՒԱՋ.— Ինչպէս հաղորդած էինք, Թուրքիոյ վարչապետն ալ Ազգ· Մեծ Ժողովին մէջ յայտարարեց թէ այս տարի աւելի ստուարաթիւ զինուորներ պիտի զրկուին Տէրսիմ, դիմադրութիւնը խորտակելու համար: Կառավարութիւնը վճռած է անխնայ չախչախել ապստամբութիւնը, ինչպէս եւ խափանել քրտական ցեղերու արշաւը արեւելեան սահմանագլուխէն, ուր ընդհարումներ յաճախադէպ են: Տէրսիմի առջեւ համախմբուած բանակը զօպլով այս արշաւանքները, միեւնոյն առեն վերջ պիտի տայ Տէրսիմի աւանդական սովորութիւններուն եւ քէմալական օրէնքները պիտի գործադրէ ամենայն խստութեամբ :

Գերմանիա կը հետաքրքրուի Քրանքեւթուրք համաձայնութեամբ

«Թայմզ»ի Թղթակիցը Պերլինէն գրած նամակի մը մէջ կ'ըսէ Գերմանիոյ պաշտօնական չրջանակները զարմանալի կը գտնեն որ Լոնտոն այնքան լայն վարկ բացաւ Թուրքիոյ: Ընդհանուր կարծիքը այն է թէ «Մեծն Բրիտանիա աչք առած է դրամ ալ կորսնցնել, վտանգելու համար Գերմանիոյ տնտեսական տիրապետութիւնը արեւելեան Եւրոպայի մէջ»:

Թղթակիցը կը կարծէ թէ Գերմանիոյ արտաքին նախարարը ունկնդրութեան ընդունելով Թուրքիոյ արտաքին նախարարութեան խորհրդականը՝ Նուման Մէնէմէնճիօղլու, լուսաբանութիւններ խնդրած է Անգլիոյ համար ենթադրեալ ֆրանքեւթուրք դաշնագրի մասին:

Ուրիշ անգլիական թերթեր ալ կը գրեն թէ Թուրք առեւտրական պատուիրակութեան բանակցութեանց առթիւ, գերմանական մամուլը նորէն կ'ապդատարկ թէ Անգլիա եւ Ֆրանսա մրցակցութիւն մը կը սարքեն Գերմանիոյ դէմ, հարաւային արեւելեան Եւրոպայի մէջ: «Գէրլիներ Թագլպլատ» խմբագրականով մը դիտել կուտայ թէ յանկարծ Անգլիոյ եւ Ֆրանսայի խելքին փչեց «բան մը ընել» հարաւային - արեւելեան Եւրոպայի պետութեանց համար: Եւ առաջին ձեռնարկը կատարուեցաւ Մօտաւոր Արեւելքի մէջ, երբ Անգլիա անսպասելի կերպով 16 միլիոն ոսկիի վարկ մը բացաւ Թուրքիոյ, գումար մը որուն մեծ մասը պիտի յատկացուի վերազինման :

Թերթը կ'նդրակացնէ թէ Պալքանեան երկիրներու եւ Թուրքիոյ պէտք ունեցածը քաղաքական վարկը չէ ,այլ կանոնաւոր շուկան :Իրազեկներ կը հաւատան թէ Գերմանիոյ արտաքին նախարարը այս մասին ալ խօսած է Մէնէմէնճիօղլուի հետ :

**** Մոսկուայի մամուլը, որ մինչեւ հիմա վերապահ դիրք մը բռնած էր Քրանքեւթուրք բանակցութեանց հանդէպ, իր ուրախութիւնը կը յայտնէ անոր յաջողութեան համար: «Իզվեստիա» կը գրէ .— «Քրանսայի եւ Թուրքիոյ միջեւ գոյացած այս համաձայնութիւնը պէտք է կազմէ եւ կը կարծենք թէ պիտի կազմէ կարեւոր տարր մը հաւաքական ապահովութեան զօրացման համար : Մեր հանրային կարծիքը անշուշտ կը դնահատէ այսպիսի համաձայնութիւն մը երկու պետութեանց միջեւ, որոնց հետ Խ· Միութիւնը կը գործակցի, միջազգային հարցերու լուծման համար :*

**** Անտիոխէն կը հեռագրեն յուլիս 10 թուականով.— Քրանքեւթուրք սիրալիր բարեկամութեան ցոյցերը կը շարունակուին Սանճաքին մէջ: Ալեքսանդրէթի Ֆրանսական Տան մէջ սեղան մը սարքուեցաւ Ֆրանսացի սպաներու նորմէ, ի պատիւ գնդ· Քէվզի Մուհնուքի: Միւս կողմէ Անտիոքի Հալք Էվին հաշտասէրն մը սարքեց ի պատիւ երկու պահակազօրքերու սպաներուն :*

«Իւմանիթէ» նորեն կը ներկայացնէ Քրանսայի նահանջը

«Իւմանիթէ»ի քաղաքական խմբագիրը, Պ· Կապրիէլ Փէռի, որ միեւնոյն առեն երեսփոխան է, երկկ զոհունակութեամբ արձանագրելով Քրանքեւթուրք բարեկամութեան դաշնագրին կնքումը, դիտել կուտայ·

— « Եթէ նշանագրուած դաշնագիրը կը կոսեցնէ իտալուգերմանական սադրանքները Թուրքիոյ մէջ, գնահատելի տարր մը պիտի կազմէ միջազգային խաղաղութեան համար: Իրականութիւնը այն է որ Հռոմի եւ Պերլինի մամուլը չատ դէշ ընդունելութիւն ըրաւ այս դէպքին, ինչ որ նպաստաւոր կարծիք մը կը ներշնչէ մեզի: Սակայն եւ այնպէս, մեզի համար անկարելի է չընել կարեւոր վերապահումներ: Ուզենք չուզենք, դաշնագիրը առաջնութիւն մը կ'ապահովէ Թուրքիոյ՝ Սանճաքին մէջ: Այդ առաջնութիւնը պարտադրուած է բռնութիւն բանեցնելով եւ՛ Ազգաժողովի որոշումներուն եւ՛ Սանճաքի ժողովուրդին վրայ: Թուրքերուն ուղած եղանակով կազմակերպուած եւ քանիցս էնկիւրիի կամքին համաձայն փոփոխուած ընտրական գործողութիւն մը,հակառակ ամէն տեսակ ենթադրութիւններու, հաստատեց թէ Սանճաքին քնակիչներուն մեծամասնութիւնը արաբական - հայկական է, թէ ժողովրդապետական կանոնը կը ժխտէ թրքական մեծամասնութեամբ օժտուած խորհրդարան մը: Ֆրանսա Թուրքիոյ բռնութեան սպառնալիքին տակ դիտակցօրէն եւ կեցաւ եւ՛ւ Ազգաժողովին յանձնարարած կանոնագիրը եւ՛ Սանճաքի ժողովուրդին կամքը յարգել տալու պահանջէն: Ֆրանսա տեղի տուաւ թրքական «շանթաժ»ին առջեւ: Այնչուշտ այս կերպով ի դերեւ ելան այն մեծ յոյսերը զոր Հռոմ եւ Պերլին կը սնուցանէին վէճին ծանրացման մասին: Բայց, ահարկու պատահականութիւններ չպատրաստուեցան այս եղանակով :

Ամէն պարագայի մէջ, դաշնագիրը կնքուելէ վերջ, երկու պարտականութիւններ կ'իյնան Ֆրանսական կառավարութեան վրայ: Սանճաքին Ֆրանք-

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Դ· էջ)

ՕՐԸ ԾՐԻՆ

ՇՈՒՆԸ ԵՒ ԻՐ ՊԱՏԻՒԸ

Վերջերս «զգայացուցիչ» միջադէպ մը պատահեցաւ Փարիզի մէջ, շուներու ցուցահանդէսին առթիւ :

Գնահատիչ յանձնախումբին անդամներէն մէկը «զգուելի խառնուրդ» կոչած էր ցուցադրուած շուներէն մէկը:

Տէրը, ազնուակա՞ր տիկին մը, խոցոտեալ վիրաւորուած՝ այս նախատինքէն, անմիջապէս դատ բացաւ, **30.000** ֆրանք տուգանք պահանջելով :

Չեմ գիտեր ի՛նչպէս վերջացաւ այս «շրեղ եւ անհնարին» միջադէպը : Կը յիշեմ, միայն, որ դատարանը մէկ աւիւս պայմանաժամ խնդրած էր, նախ դատին իրաւական հիմքը ճշդելու համար :

Անշուշտ այս պարագան արգելք չէ որ ես ալ իմ կարծիքս յայտնեմ, առանց դատաւոր կամ փաստաբան ըլլալու :

Իսկապէս որ շատ բարդ հանգամանք ունի խնդիրը :

Նախ, շուները որ եւ է առնն մարդարարածին վտահա՞ծ են իրենց կեանքըն ու պատիւը, այր թէ կին :

Անոնք թէեւ կարդալ - գրել չեն գիտեր, ոչ ալ հրապարակային ժողովներ կրնան գումարել, ետ խօսելու եւ բողոքի բանաձեւեր հրապարկելու համար, բայց ես վստահ եմ որ, իբրեւ ի ծնէ ուշիմ անասուններ, շատոնց գաղափար կազմած են մարդոց արդարութեան մասին:

Անշուշտ անոնք հայկական հարցի մասին ալ բան չեն գիտեր :

Բայց, կը յիշեն որ առեն մը հապարատ, անհամա՞ր հայկական գիւղեր կային, ուր իրենք ալ իրենց որջն ունէին արեւին տակ, ուր կը շրջէին ազատ հառարձակ, եւ հիմա չկան :

Չկա՞ն՝ շնորհիւ մարդկութեան մէկ մասին գազանութեան եւ միւս մասին միջամտութեան :

Մարդ - արարածներու ո՞ր անզօր բազմութիւնը զօրաւորներու միջամտութեան դիմելով արդարութիւն շահեցաւ, գոնէ կրցաւ փրկել իր պատիւը:

Ապահովաբար այս շունն ալ, որուն համար անուանարկութեան դատ բացած է ազնուական տիկինը, այնճան յարգ պիտի վայելէ որքան որ կը տեւէ իր համայիր, իրրեւ գգուիչ եւ կազդուրիչ :

Վա՛յ է եկեր իրեն, եթէ բիչ մը մաշի: Մանաւանդ՝ եթէ տիկինը շահի **30.000** ֆրանքը: Առտու մը խելիին կը փչէ եւ աւելի առդգ «փինճո» մը կը գնէ, **3000** ֆրանկի :

Միւս «ազնուականներն» ալ այդպէս չըրի՞ն:

Իշրահանչիւրը շոյեց ու խրախուսեց «փոքրիկ դաշնակիցը», — ես պատիւդ իմ պատիւս է, ես արիւնդ՝ իմ արիւնս, ես դատդ՝ իմ դատս»: Մինչեւ որ բամպակն ու բարիւդը սրբեցին տարին ամէն բան, եւ պատիւն ու դատը դարձան « հին հին դարուց յիշատակ »:

Դեռ շատ աւելի ծանր բարդութիւններ կրնայ պատճառել փարիզի մէջ բացուած դատը :

Եթէ տիկինը շահի գայն,— ի՞նչ պիտի ըլլան այն շնաբարոյ փաղաքշական բացատրութիւնները որ կը գործածուին աշխարհի բոլոր ժողովուրդներուն մէջ, մէկը միւսէն գունագեղ.— սկսելով «շունշանորդի»էն եւ «շնացում»էն ...

Վ.Ա.Հէ

ՖՐ. Կ ԽԱՉԻ ԿԱՑԱՆԻՆ Ա. ԽՈՒՄԲԻՆ ՄԵԿՆՈՒՄԸ

Ֆ· Կապոյտ խաչի վարչութիւնը կը խնդրէ մեզմէ ծանուցանել թէ մասնաճիւղերու կողմէ ընտրուած եւ պատրաստուած տղաքը պէտք է ներկայ ըլլան յառաջիկայ Ուրբաթ օր Ցուլիս **15**ին, ժամը **11**ին **Gare Montparnasse:** Ընկերութեան կողմէ պատօնուած է հաւաքուիլ **Ancienne gare Hall d'entrée** (մեծ սանդուղներէն բարձրանալով աջ կողմը) :

Տղաքը իրենց հետ պէտք է ունենան ԵՐԿՈՒ ԱՆԴԱՄ ճաշելու չափ ուտելիք :

ԷՋՄԻԱԾՆԷՆ ԿԸ ՀԵՐՔՁԵՆ ԽՈՐԷՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ...

Ընթերցող մը, որ եկեղեցի գացած էր կիրակի օր, պարտէզ սեպեր է մեզի հաղորդել հետեւեալ տեղեկութիւնները.— *(Կ'արձանագրենք պարզապէս իբրեւ դիտութիւն) .—*

Վեհափառ հայրիկ· ակնարկելով էջմիածնի վերջին անցուդարձերուն , հանդիսաւորապէս եւ բարձրաղաղակ յայտարարեց թէ առաւ են այն բոլոր վրդովիչ տեղեկութիւնները որ ամիսներէ ի վեր չրջան կ'ընեն հայերէն Թերթերու մէջ: Ըսաւ թէ կաթողիկոսը խեղդամահ չէ եղած, ոչ ալ էջմիածինը աւարի տրուած է, այլ ամէն ինչ բնականոն պայմաններու մէջ է: Գերագոյն խորհուրդն ու տեղակալ Գէորգ արք· Զէօրէքեան իրենց պարտականութեանց գլուխն են: Այս տեղեկութիւնները հաստատող բոլոր վաւերագրերը հասեր են չարաթ, թէեւ քիչ մը ուշ··· Ուրեմն Քանգարանը, գանձարանը բոլորը իրենց տեղն են: Թողլով որ Մոյեան քհնյ· կարգայ հասած երկու կոնդակները, ժողովուրդին թելադրեց աղօթել որ Աստուած երեւանի եւ Մոսկուայի իշխանաւորներուն սիրտը սիրով եւ բարեխղճութեամբ լեցնէ ու յոյս յայտնեց թէ մօտ օրէն նոր ընտրութիւնը տեղի պիտի ունենայ:

Ցետոյ Մոյեան քհնյ· կարդաց երկու կոնդակները, առաջինը՝ իբրեւ վաւերական պատճէնը այն կոնդակին զոր Մորէն կաթողիկոս իր կենդանութեան 1936 ապրիլ 18ին գրած է, իրեն տեղակալ նշանակելով Գէորգ արք· Զէօրէքեան եւ յորդորներ եղած էր Մորհուրդին, արտասահմանի եկեղեցական խնդութեանց, անոր ենթարկուելու եւ օժանդակելու :

Երկրորդ կոնդակը ղրկուած է տեղակալ Գէորգ արք·ի կողմէ Փարիզի հոգեւոր հովիւին , որով կը յայտնուի թէ Մորէն կաթողիկոսը սրտի կաթուածէ մեռած է ապրիլ 6ի գիշերը: Այս առթիւ կը յիշուի նոյնպէս երեւանէն եկած բժիշկներու, մասնաւորաբար Փրօֆ· Ռովսէփեանի մանրազնին դիտողութիւնը եւ անդամահատութիւնը, որով կը հաստատուի թէ կաթողիկոսը սրտի կաթուածէ մեռած է··· Կատարուեր է նոյնպէս օծում եւ թաղում :

Այս մասին գրուեր է Սահակ Բ· կաթողիկոսին, երուսաղէմի եւ Պոլսոյ պատրիարքութեանց, որպէսզի հաւատացեալ ժողովուրդը իրազեկ պահեն ու հոգեհանգստեան պաշտօն կատարեն ամէն տեղ: Նոյն թելադրութիւնը եղեր է նաեւ համամիութենական հանրապետութեանց մէջ ապրող թեմական ժողովուրդին :

ԿԱԹՈԼԻԿՈՒԹԻԻՆ ԵՒ ՀԱՄԱՅՆԱՎԱՐՈՒԹԻԻՆ

— • —

Ա.

Այս երկու միջազգային մեծ ուժերը մերթ կը բախին իրարու եւ մերթ զործակցութեան եզրեր կը փնտռեն:

Կեանքը, ընկերային եւ քաղաքական պայմանները, ի հարկէ, տեսակ լուծումէ աւելի, զործնական լուծում կը պահանջեն: Եւ ատոր համար կաթոլիկութիւնն ու համայնավարութիւնը որքան ալ հակոտնեայ ուժեր ըլլան, չեն կրնար դիրար անտեսել, իրենց աշխարհագրական դիրքի փոփոխութեան ժամանակ:

Այս երկու ուժերու մերձեցման փորձերը դլխաւորապէս բաղաքական արժէք ունին, որ պէտք չէ վրիպին մեր ուշադրութենէն: Սեւ կանխակալ կարծիք եւ նախապաշարում կըրնայ վնասել դրուած հարցերու ճշդրիտ լմընումին:

Արդ քննել, ճանչնալ կաթոլիկ կրօնի եւ եկեղեցիի միջազգային կշռոն ու արժէքը, ընկերային ու քաղաքական տեսութիւնները, անոր ներքին միութիւնն ու կազմակերպութիւնը, անչուշտ կարեւոր նպատակ մըն է, որ կրնայ, դէթ որոշ չափով, լուսաբանել օրուան խնդիրներու դաղափարական տարողութիւնը եւ անոնց տակ ծածկուած միտքը:

Ինչո՞ւ ֆրանսական - համայնավար կուսակցութիւնը կաթոլիկներու հետ զործակցութեան եղր կը փնտռէ, երբ Մոսկուան կրօնը՝ իր ազդային բոլոր ձեւերուն մէջ՝ «քնարեր թոյն» կը նկատէ եւ կը հալածէ: Ինչո՞ւ կաթոլիկ աշխարհը, տեղ մը «երկարած ձեռքը» կը սեղմէ, իսկ տեղ մըն ալ խաչակիրներու արշաւանք կը կազմակերպէ համայնավարութեան դէմ: Ինչո՞ւ բոլոր վարդապետութիւնները դիրք կը ճշդեն կրօնքի հետ ընդհանրապէս եւ կաթոլիկ եկեղեցւոյ հետ մասնաւորապէս: Ինչո՞ւ ֆաշականութիւնն անդամ հաշուեյարդարի կը նստի կաթոլիկութեան հետ Գերմանիոյ մէջ, մինչդեռ Լեհաստանի, Չեխոսլովաքիոյ եւ Սպանիոյ մէջ կը զործակցի անոնց հետ: Հարցեր, որոնք անտարակոյս կը բխին կաթոլիկ աշխարհի կարեւորութենէն եւ անոր հոգեւոր զօրութենէն:

Անոր հինաւուրց մեքին պատմութեան վրայ պէտք չկայ կանգ առնելու: Ներկայ կացութիւնը բաւական է զայն ներկայացնելու իր իրական դիմագծով:

Վիքթոր Հիւկօ, տեղ մը, թերեւս իրաւամբ կ'ըսէր թէ՝ այս աշխարհի վրայ «Աստուծոյ երկու կէսերն են Պապն ու Կայսրը»: Մէկը, ի հարկէ, իրրեւ ներկայացուցիչ հոգեւոր իշխանութեան, իսկ միւսը՝ աշխարհական իշխանութեան:

Պապութիւնը 1805էն ի վեր իրապէս հոգեւոր տէրն էր զարձած կաթոլիկ աշխարհի, որ ըստ Հիւսէյնի, 200 միլիոն հաւատացեալներու վրայ կ'իշխէր: Անցեալին մէջ կաթոլիկութիւնը, «առանց կարի չրջազգեստ մը» կը նկատուէր, իսկ յետազային այդ միակտոր «չրջազգեստը» պատռուածքներ ստացաւ եւ զոհ դարձաւ այլազան ձեղքերու:

Սակայն, հակառակ կրօնական բաղմազան հերձուածներու, պապութիւնը իրրեւ միջազգային հոգեւոր իշխանութիւն, այսօր աւելի ուժեղ է, քան Միջին-դարուն, երբ քաղաքական իշխանութեան հովերը առած հաւատաքննութեան խարոյկները կը սարքէր:

Կաթոլիկ կղերն ու եկեղեցին այսօր չատ են արդիացած: Անոնք զարձած են ոչ միայն քրիստոնէութեան, այլեւ պետական ազդեցութեանց տարած - ման հզօր ազդակներ:

Ամէն զատ, կաթոլիկ եկեղեցին չատ անդամ նպաստած է ազդային պետական իշխանութեանց վերա - կանգման: Կարելի է յիշել լեհ ժողովուրդը, որ օրթոտոքս Ռուսիոյ եւ բողոքական Գերմանիոյ մէջ, կաթոլիկ եկեղեցւոյ կռիւներ ինք - զինք փրկել իրրեւ ազգութիւն: Կաթոլիկ եկեղեցին չի ժխտեր որ մարդկէ բաժնուին ըստ ազգութեան եւ կազմակերպուին ազգային պետնի վրայ, թէպէտ ինք ազգային կամ աւելի ճիշդ գերազգային կազմակերպութիւն մըն է եւ հիմնուած միմիայն իր ներքին կուռ միութեան վրայ:

Սահմանադրականօրէն կաթոլիկ եկեղեցին եւ՛ միապետական է եւ՛ ժողովրդավարական: Անոխակալական միապետն է Պապը, որ կը կառավարէ իր հոգեւոր պետութիւնը քաղաքականո - րէն անկախ երկրի մը պէս:

Վատիկանի մէջ, օրէնսդիր ժողով եւ նախարարութիւն, պապութեան անմիջական զործակիցներն են եւ ա - նոնք են, որ կը վարեն այդ հոգեւոր պետութիւնը:

Օրէնսդիր ժողովը երկաստիճան է: 1.— Կարտինալներու ժողով կամ Կոնսիստորիա, որ Ծերակոյտի դեր կը կատարէ եւ Պապին խորհրդատու մարմինն է: Կաթոլիկ աշխարհին հետ Պապը այդ ժողովի միջոցով է որ կը հաղորդակցի եւ կը յայտնէ իր կար - ծիքները:

2.— Պապընտիր ժողով (Կոնքլավ), որ երեսի. ժողովին տեղը կը բռնէ եւ Պապին ընտրութեամբ ու եկեղեցական ներքին հարցերով կը զբաղի: Պապընտիր ժողովի կարտինալներուն թիւը ըստ ներքին կանոնադրութեան պէտք է ըլլայ 70, սակայն թափուր տեղեր միշտ ալ կը պատահին:

Կարտինալները կը նշանակուին Պապին կողմէ ըստ կամս, առանց տարիքի խորութեան: Նոյնիսկ պատահած է, որ եօթը տարեկան մանուկ մը կարտինալ ձեռնադրուի եւ ատանայ «խորհրդանիշ դլխարկը»:

Պապին ընտրութիւնը կը կատարուի գաղտնի քուէարկութեամբ: Օրը երեկոյ քուէարկութիւն տեղի կ'ունենայ, մինչեւ որ պահանջուած մեծամասնութիւնը զոյանայ: Նախապատրաստական ալ իր տեղը ունի: Երբ քուէարկութիւնը որեւէ արդիւնք տուած չըլլայ, թաց յարդի հետ, ծխնելոյղի մը ծէն, կը վառուն վառ քուէները, որ - պէսզի զուրսն սպասող ժողովուրդը ծուխէն զուշակէ թէ տակաւին Պապը ընտրուած չէ:

Զեւականօրէն դահլիճի կազմ դո - յութիւն չունի, բայց նախապարիներ ունի, որ կը վարեն պապական իշխանութեան զործերը: Մասնաւոր արժէք ունի արտաքին զործերու վար - չութիւնը, եւ Պապին արժէքաւոր կապակները անոր միջոցով կը ղբր - կուին: Ներքնական վարչութիւնը, որ նոյնպէս առաջնակարդ նշանակութիւն ունի պետական եկեղեցին հաւա - տարակչելու համար: Բնագրերու տեսչութիւնը, որ կը խմբագրէ Պա - պին բոլոր վաւերական թուղթերը, վարդապետական թուղթերու եւ լա - տիներէն նամակներու տեսչութիւնը, իմամուած դիւանագիտական ոճով թուղթերու համար, նուիրակները, որ կաթոլիկ երկիրներու մէջ դիւանագի - տական ներկայացուցիչներ են:

Բացի այս նախարարութիւններէն, պայութիւն ունին զատական իշխանութիւններ եւ զատարաններ չորս ատ - տիճաններով:—

1.— Ապաշխարանքի Առեան, ուր կը զատուին խղճի վերաբերեալ զատեր:

2.— Երկոտասնից Առեան, որ եկեղեցական օրէնքներու համար 12 վարդապետներէ կազմուած է քննելու համար նախադատ առեաններու վճիռ - ները:

3.— Քահանայապետական Առեան, որ վճռաբեկ առեանի դերը կը կատարէ:

4.— Թուղթական Առեան, որ կը զբաղի ներում շնորհելու խնդիրնե - րով:

Այս չորս տեսակի զատարաններէն զատ կան միաբանութիւններ, որոնց ամէն մէկուն կարտինալ մը կը նախադահէ: Այդ միաբանութեանց թիւը ատաձ 15 էր, այժմ իջած է 11ի: Կրնայ ապագային զարձեալ փոփոխութեան ենթարկուիլ, որովհետեւ համաձայն ժամանակի եւ կարեւորութեան, միաբանութեանց թիւը միշտ փոփոխու - թիւններ կը կրէ:

Գաղափար մը տալու համար թէ ու - նենք ամէնէն կարեւորները միայն.—

1.— Հռոմէական սրբազան Հաւա - տաքննութեան միաբանութիւն կամ ուխտ, որուն կը նախագահէ Պապը: Այս միաբանութեան կոչումն է հակել հաւատքի զործադրութեան եւ բար - քերու պահպանութեան վրայ:

2.— Կոնսիստորական միաբանու - թիւն, որուն դերն է հակել եպիսկո - պոսներու եւ հոգեւոր դպրոցներուն վրայ: Քաղաքական կարեւորութիւն ունի այս միաբանութիւնը եւ ատոր ալ կը նախագահէ Պապը ինք:

3.— Կարդապահական միաբանու - թիւն: Անունը արդէն ցոյց կուտայ իր կոչումը:

4.— Քարոզչութեան ուխտ կամ միաբանութիւն, որ կը զբաղի կաթո - լիկ երկիրներու զատական կազմակեր - պութեամբ, քարոզչական առաքելու - թեամբ (փրոփականտա): Իր նախա - գահ կարտինալը դպիրապետ կը կոչուի: Այս ուխտը չատ լայն իրա - ւունքներ ունի եւ նախագահը ծանօթ է «կարմիր Պապ» անունով: Արեւելեան կեսակիրթ եւ վայրենի ժողովուրդնե - րու մէջ քրիստոնէութիւնը տարածե - լու զործը ծանրացած է այս միաբա - նութեան վրայ: Մասնաւորաբար օ - տար ծէսեր ալ կը սորվին, որպէսզի կարենան դիւրաւ նուաճել հաւատաց - եալները: Պապութեան մէջ կատարեալ պապութիւն մըն է այս ուխտը:

5.— Մատեաններու ուխտ, որ կը հսկէ դիրքերու եւ հրատարակութիւն - ներու վրայ: Տեսակ մը զրաքննական մարմին է:

6.— Արտակարգ զործերու միաբա - նութիւն, որ քաղաքական յանձնա - խումբ մըն է եւ կ'օգնէ արտաքին զոր - ծերու վարիչին:

7.— Ուսումնասիրութեանց միաբա - նութիւն, որ ուսումնական խորհուր - դի դեր կը կատարէ եւ կը հսկէ հո - գեւոր դպրոցներուն վրայ:

ԶՐՈՑՑ ՀՕՐՍ ՀԵՏ

Հայր, կ'ըսեն որ հոգիները չեն մեռնիր եւ կ'ապրին, չատ յստակօրէն, կ'ապրին մեղի պէս, բայց մենք չենք տեսներ զանոնք:

Կը հաւատամ ես հոգիներու անմա - հութեան, որովհետեւ, հայր, դուն ինձ համար երբեք մեռած չես եւ ամա - միայն այս հաւատքս է որ ինծի խօսիլ կուտայ քեզի հետ յաճախ, քու սիրած թերթերուդ էջերէն:

Այսօր, հայր, կ'ուզեմ քեզի հետ խօսիլ այն սիրելի նիւթին չուրջ, որ տարիներ եղաւ քու միակ սէրը, քու միակ խաչալը, քու միակ նպա - ւակը: Անոր համար դուն պատրաստ էիր զոհել կին ու զաւակ, դուն որ այնքան ընտանեսէր, զաւակասէր է - իր,— քու սրբազան կուսակցութիւնդ, որ քու կրօնդ դարձած էր:

Խօսինք, հայր, քիչ մը Դաշնակցու - թեան վրայ:

Իրաւունք ունիմ ես այսօր, խօսելու քեզի հետ այդ զմայլելի նիւթին չուրջ, որովհետեւ այլեւս մեծցած եմ եւ կը հասկնամ իմաստը «Մեր Հայ - րենիք»ին, «Դաշնակցական խոս - ր»ին:

Անոնք այլեւս երդեր չեն ինծի հա - մար, եղանակներ չեն որ իմ փոքրիկ ծոքերուս բոլոր ուժովը կը պռռայի, որովհետեւ հօրս սիրած երգերն էին:

Հայր, ես հիմա աւելի մօտէն ծա - նօթ եմ այն խոչալին որ քուկդ էր ու կարծես քու հոգիով, քու սրտով կը սիրեմ Զայն, քու աչքերով կը դիտեմ Անոր դեղեցիկ դէմքը եւ քու զգացում - ները ունիմ Անոր հանդէպ:

Ան՝ ամէն բանէ առաջ:

Բայց քու խաչալդ, հայր, ազնիւ կուսակցական ըլլալ էր միայն: Դուն Դաշնակցական ըլլալէ առաջ Հայ էիր, եւ հայ մանուկին երջանկութիւնը, ա - նոր դասը՝ որ զասն է մեր կուսակ - ցութեան, քեզի համար նոյնքան եւ աւելի սիրելի էին: Ես համոզուած եմ որ այսպէս է ամէն իրական Դաշնակ - ցականի համար:

— « Մեր կուսակցութիւնը »:

Ես հպարտանքով հիմա իրաւունք ունիմ ըսելու՝ «Մեր»:

Գիտես, չէ՞, հայր, արդէն չատանց է որ մտած եմ այն չարքերէն ներս ուր միայն զոհաբերութիւն, աշխատանք եւ զոհողութիւն կը սպասեն մեղի:

Ի՞նչ է Հ. Ց. Դ.ն:

Ո՛րքան խօսած են անոր մասին: Որ - քան էջեր լեցուած են այս նիւթին չուրջ եւ որքան վէճերու առիթ տուած է ան:

Կ'ըսեն թէ ան կուսակցութիւն մը չէ պարզ ...

Կ'ըսեն թէ՝ ան կը ներկայացնէ հայ ժողովուրդը:

Հակառակորդները կ'ըսեն թէ ան «Հակահայասանեան» է, դիկտատուրա է, որ միայն կործանում կրնայ պատ - ճառել:

Կ'ըսեն թէ ան ոչին է հայ ցեղին, պատճառ հայ ժողովուրդին, աչ թեւը Մայր - Հայաստանին: Ու կ'ըսեն, կ'ըսեն, դեռ չատ բաներ կ'ըսեն ...

Բայց դուն, հայր, կ'ըսէիր, մէկ խօսք ու այդ իմ մէջս տպաւորուած է եւ երբեք պիտի չաւրուի անոր իմաս - ը իմ մտքիս բառարանին մէջ: »

— « Հայը չի կրնար այլեւս առանց Հ. Ց. Դ.ական ըլլալ »:

Պարզ է այս խօսքդ ու վայլուն ա - ծականները խոր իմաստ մը չեն տար անոր: Լուսապսակ չկայ քու այս չատ համեստ նախադասութեանդ չուրջ, բայց հայր, որքան հարազատ է ան եւ որքան իրական:

Ան ինքնին պատկերն է մեր կու - սակցութեան:

Կը յիշես, չէ՞, որքան կ'աղաչէի քե - զի որ առնես դիս ներս այդ «հսկայ - դունէն» որ քեզ կը մղոնէր փայլուն «պատատը»:

Երեխայիդ չատ երեւակայող հոգին արդէն պարիկներու աչխարհ մը զար - ձուցած էր այդ երեք դրերու իմաստը եւ ամէն ինչ որ կը պատկանէր անոր, — նկար, թուղթի չնչին կտոր, դրօ - չակ, ուրիշ փայլ մը ունէին իմ մա - նուկ հոգւոյս համար: Եթերային, երկնային, պարիկներու յատուկ էր ամէն ինչ որ մաս կը կազմէր Հ. Ց. Դ.ին:

Ու կարծես տարօրինակ վախ մը կը համակէր դիս, երբ կ'երեւակայէի ինքզինքս այդ պարիկներու աչխար - հին մէջ:

Սիրտս կը տրոփէր ուժգին, երբ կ'երդէի «Մչակ բանուոր»ը, որովհե - տեւ ասիկա անոր երդն էր:

Ու ահա օր մը եկաւ ուր երեխայ մեծցայ եւ արժանի նկատուեցայ մա - նելու խորհուրդներու աչխարհը:

Հսկայ դուռը բաց էր իմ առջեւ ու յանկարծ երբ ինքզինքս զտայ անոր հիւրընկալ, լայնաբաց փեղկերուն առջեւ, փնտռեցի թեւդ, հայր, որ - պէսզի անոր կոթնած աւելի ուժով մանեմ այդ նոր աչխարհը:

Բայց չկայիր դուն եւ ես կարծեցի թէ պիտի սկարանամ: Ոչ:

Դուն եթէ երեւութապէս չկայիր, չէիր զադրած երբեք քու երեխային ձեռքէն բռնելէ ու դուն ձեռքովդ տա - րիր դիս ներս: Այո, ձեռք - ձեռքի մտանք մենք ու երբ զարմացած երեսդ նայեցայ, հսկայ զիս եւ ըսիր ին - ձի՝

— « Աղջիկս, պարիկներու այս փայլուն աչխարհին մէջ երբեք պիտի չմնաս ես զիտեմ, ազամանդ, ոսկի կառք եւ փետուր անկոզին: Բարի պա - րիկները այս աչխարհին որուն ա - նունն է «զոհողութիւն», կը կրեն չատ ղարդ, կոշտ հագուստներ, կը պատ - կին չոր տախտակէ անկողիններու վը - րայ ...

Բայց դուն միեմ այս զմայլելի «լոյսէն» աւելի բոցավառ ազամանդ ս եսա՞ծ էիր երբեք, դաւակս: Տես որ - քան ջինջ է ան, տես որքան լուսաւոր է եւ ինչպէս փայլ կուտայ համեստ զարիկներու կոշտ հագուստին:

Ու տեսայ, հայր, ես այդ «լոյսը», ազամանդեայ «լոյսը» փայլուն եւ սի - րով հագայ համեստ պարիկներու կարծր զգեստը, որպէսզի Ան իր լոյ - սով ազամանդներ դնէր իմ կոշտ հա - գուստին վրայ եւ տար անոր փայլը դեղեցիկ, չատ պարզ պարիկներու կոշտ «պատմուճանին»:

Տես, հայր, այսօր իմ ալ հագուս - ւքս լուսավառուած է այդ հրաշալի լոյսով եւ հոգիս կարծես հիմա կը հրճուի պարիկներու աչխարհի փայլե - րով:

Տես, հայր, այդ լոյսը վառած է նաեւ բոցը աչքերուս եւ ես կարծես մեր ժողովուրդը ուրիշ ակնոցով կը դիտեմ, ուրիշ սիրտով կը սիրեմ հի - մա: Ես համոզուած եմ, հայր, որ համեստ պարիկներու այս վառ բոցը, միշտ անչէջ պիտի մնայ եւ պիտի բո - ցավառէ մեր ազգին խորոյկը եւ մենք երբեք պիտի չմեռնինք, ինչպէս չմե - ռար դուն, ինչպէս չեն մեռած բոլոր դոհ պարիկները իմ «պարիկներու հէքեաթին»:

Մանուկ օրերու լաւ հէքեաթ որ զարձած ես այսօր իմ կեանքս, իմ լոյս, երանի ամէն հայ երեխայ, ազ - րի քեզմով, քու յոյսով, քու լոյսով եւ սիրէ քեզ այնպէս ինչպէս իմ հայ - րըս սորվեցուց ինձի սիրել քեզ իմ չատ մանուկ հոգիովս:

ԱՐՄԷՆ - ՆԱՑԻՐԻ

ԹՈՒՐՔԻՈՅ
ՁԱՐՏԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՀՆԳԱՄԵԱՅ ԾՐԱԳԻՐԸ

— • —

Թրքական սուլիչ մը, որ Փարիզի «Թան»ին էնկիւրիի թղթակիցն է, երկար յօդուած»ով մը կը ներկայա - ցնէ Թուրքիոյ անտեսական յաջո - ղութիւնները ու կատարելիք նուա - ճումները («Թան», 7 յուլիս):—

Ցեսպատերազմեան շրջանին նորոյթ դարձած բացատրութիւններու կար - գին, մասնաւորաբար սիրելի է «ծրա - գիր» բառը:

Դարմանուհիներու, երկնի, Տօրսի եւ այլ անուն ծրագիրներէն վերջ ճակտեցան նաեւ հայ, քառամեայ, հնգամեայ ծրագիրները: Մանուտու - բատր Մորտ. Միութիւնը չատ կը սի - րէ մշակել չինարարական ծրագիրներ, այդ բացատրութեան զործածութեան հետ ծախսելով մեծ զումարներ, փոր - փոկանտի համար, համայն աչխարհի տալեւ պարբերաբար յայտարարելով իր նուաճումները եւ .. նուաճելիք - ները:

Թուրք երիտասարդ հանրապետու - թիւնը — որ յառաջիկայ հոկտեմբե - րին կը տօնէ իր տասնըհինգերորդ տա - րեդարձը — իր կարգին՝ փարած է, 1933ի վերջին ամիսներէն ի վեր, ճար - տարարուեստական հնգամեայ ծրագրի մը զործադրութեան:

Պէտք է ըսել թէ Թուրքիա չատ աչ - խատանք ունէր կատարելիք այդ ուղ - ղութեամբ: Օսմ. կայսրութիւնը չէր չահադրգռուած ճարտարարուեստա - կան եւ հանքագործական հարցերով, այլ ընդհանրապէս կը նախընտրէր դիւրին լուծում մը՝ մենաշնորհ տալ օտար խմբակցութեանց: Ցետոյ, պէտք չէ մոռնալ որ Պալքանեան երկ - րորդ պատերազմը հազիւ աւարտած էր՝ երբ ծագեցաւ համաչխարհային պատերազմը, ուր քչուեցաւ Թուր - քիա՝ կեդր. Եւրոպայի պետութեանց կողքին: Աւելի վերջ, ձեռնարկելով անկախութեան պատերազմին, որ վեր - ջացաւ յունական բանակին նահան - ջով Փոքր Ասիայէն, մինչեւ 1922 ժա - մանակ չունեցաւ զբաղելու երկրին անտեսական վերականգնումով: Միւս կողմէ, համաձայն Լոզանի զաշնա - զրին՝ ժողովուրդներու փոխանակու - թիւն կատարելով, Թուրքիայէն մեկ - նեցաւ յունական տարրը, որ բարգա - ւաճառատարուեստ մը ստեղծած էր երկրին մէջ, մասնաւորաբար մե - հրձուի պարիկներու աչխարհի փայլե - րով:

Տես, հայր, այդ լոյսը վառած է նաեւ բոցը աչքերուս եւ ես կարծես մեր ժողովուրդը ուրիշ ակնոցով կը դիտեմ, ուրիշ սիրտով կը սիրեմ հի - մա: Ես համոզուած եմ, հայր, որ համեստ պարիկներու այս վառ բոցը, միշտ անչէջ պիտի մնայ եւ պիտի բո - ցավառէ մեր ազգին խորոյկը եւ մենք երբեք պիտի չմեռնինք, ինչպէս չմե - ռար դուն, ինչպէս չեն մեռած բոլոր դոհ պարիկները իմ «պարիկներու հէքեաթին»:

Մանուկ օրերու լաւ հէքեաթ որ զարձած ես այսօր իմ կեանքս, իմ լոյս, երանի ամէն հայ երեխայ, ազ - րի քեզմով, քու յոյսով, քու լոյսով եւ սիրէ քեզ այնպէս ինչպէս իմ հայ - րըս սորվեցուց ինձի սիրել քեզ իմ չատ մանուկ հոգիովս:

ԱՐՄԷՆ - ՆԱՑԻՐԻ

ՍՏԱՄՊՈՒԼԻ ՆԵՐՔԻՆԻՆ

The Eunuch of Stamboul

By DENNIS WHEATLEY

Trans: J. M.

Գրեց՝ ՏԷՆՆԻՍ ՀՈՒԻԹԼԻ

Թարգմ. Ժ. Մ.

« ՁԱՐԱՒԱՉ ՅԻ ԹԵՐԹՕՆԷ (105)

Մոչոր չէնք մըն էր ան. Ներքին մասը կը յիշեցնէր սովորական մղկիթ մը, բայց տարբերութիւն ըլլալով ուն - էր ընդարձակ սրահ մը որուն մեղ - րամոմով յդկուած կեդրոնը բազրիք - ներով չրջապատուած էր: Անոնց բո - լորտիքը կը բարձրանային լրանման դորդերով ծածկուած պատուանդան - ներ՝ հանդիսատեսներուն համար: Այս վերջինները, մեծ մասով Թուրք, իրենց տեղերը գրաւած էին, երբ Սու - լթան ներս մտաւ: Նայուածք մը նե - ւեց չորս դին, Տայանան տեսնելու յոյսով: Շատ ուրախ էր որ ճիշդ ժա - մանակին հասած էր. աղջիկը ճամբայ նչած էր, բայց տակաւին պիտի ուշա - նար: Պատուանդաններուն կոնակը կը ոեսնուէին գափէսներով պաշտպան - ուած պատուհաններ: Սուլթան դի - տէր թէ հին տաճիները Թրքուհին մի - այն անոնց եռեւէն կրնար տեսնել այս արարողութիւնը, որովհետեւ օրէնքը Թոյլ չէր տար որ ան իր ամուսինէն զատ ուրիշին երեսը: Մորհեցաւ որ չատ աղէկ պիտի ըլլար եթէ այդ գա - փէսներուն եռեւը պահուըտէր՝ Տա - յանային սպասելու համար: Առանց ներկաներուն ուշադրութիւնը դրաւե - լու զուրս ելաւ ու քանի մը վայրկեան անցնելով, դնաց պատուհանի մը դիմացը տեղաւորուելացաւ:

Արարողութիւնը սկսելու վրայ էր: Քանի այլ պարոդներ, ամէն տարիքի ու տիպարի, երկար պատմուճաններ հագած, բոկոտն ու փէսաւոր, կար - գով սրահին կեդրոնը եկան: Հետոն նստած էր Մոլլան: Պարողներուն ա - ռաջնորդը խոնարհութիւն մը ըրաւ ա - նոր առջեւ ու յետոյ սկսաւ պատուա - կի մը արագութեամբ դառնալ. կը նմանէր իլիկի մը ճախարակին: Հետ - զհետէ միւսներն ալ հետեւեցան անոր ու մէկ վայրկեան վերջը քսան պա - րողները, իրարմէ հաւասար հեռաւո - րութեամբ բաժնուած, կը դառնային ու կը դառնային, իւրաքանչիւրը պա - հելով իր ծիրը եւ առանց խանդարե - լու չրջանակին ամբողջութիւնը:

Սուլթան անձկութեամբ դրան կող - մը կը նայէր չարունակ եւ հազիւ թէ կը դիտէր պարը: Տէրվիշները կը դառնային անդադար. կարծես դի - տակցութիւնն ալ հեռացած էր անոնց դլխէն. կը դառնային անկենդան մարմիններու նման՝ հնազանդելով արտասովոր ու անծանօթ օրէնքի մը որ չափ կուտար իրենց չարժումնե - րուն, օրէնք մը որուն խմաստը մար - դուն միտքը չէր կրնար ըմբռնել: Բրտինքի յուլունքներ կը կաթկթէին անոնց բոսիկ ոտքերէն ու տախտա - կամածը հետզհետէ կը խոնաւնար: Երբեմն կ'արագացնէին իրենց քայլե - րը ու պատմուճանները անոնց մէջքին կը փաթթուէին: Ոմանք իրենց գը - լուխներէն վեր կը բռնէին իրենց թեւ - երը ու յետոյ զարձեալ կը խոնար - հէին մինչեւ տախտակամածը:

Ցանկարծ Տայանան էր որ ներս մը - տաւ: Սուլթան չափէն աւելի ուրա - խացաւ, տեսնելով որ ան ողջ առողջ էր մինչեւ այդ վայրկեանը: Տեղէն ելաւ ու անոր ճամբան կտրեց՝ տա - կաւին բաժանութեան չմտածելով:

— Ուրեմն կարմիր Ասպետը ժամա - դրութիւնը յարդեր է, փափաց Տա - յանա ժպտելով:

— Այո՛, չնորհիւ ատաուածներուն, խնդաց Սուլթան. անիկա երկու ան - դամ ծուղակը ինկաւ Մեքերանոցին մէջ՝ ճատրակի մասին կատարուած խօսակցութենէն ի վեր. բայց ատ - եսուիկ նորէն դուրսն է... չիտակ Բե - րա երթալու ենք, որովհետեւ Թա - զուհին վտանգի մէջ է...

— Վտանգը Ասպետի՞ն պիտի զայ, հարցուց աղջիկը, անոր աչքերուն մէջ նայելով:

— Երանի թէ անկէ զար ու թագու - հին ուրիշ բանէ վախնալու պատճառ չունենար... դժբախտաբար նախա - պատմական անատունը անոր եռեւէն ինկած է... քալէ՛...

— Այստե՞ղ ալ վտանգ կայ...

— Աչքէն տեղ՝ Պոլսոյ մէջ, բացի բրէտանական դեսպանատունէն եւ հի - մա քեզ հոն պիտի տանիմ՝ անմիջա - պէս...

Տայանա խնդաց եւ անոր հետեւե - ցաւ.

— Ձեմ կարծեր որ այդքան ալ մե - ղի մօտիկ ըլլայ... քանի մը վայր - կեան սպասենք... պիտի ուզէի սա պարերը տեսնել...

— Իսկ ես կը նախընտրեմ որ ա - նանց ժամանակ կորսնցնելու ճամբայ իյնանք...

— Ո՛չ, խնդրեմ. քիչ մը կենանք, յետոյ խօսքդ մտիկ կ'ընեմ, որովհե - տեւ ոստիկան զարձեր ես... անչուշտ այդ ատոհման չես տեր պիտ որ պլու - խէդ ճամբել ուզես...

— Աստուա՛ծ իմ, ինչի՞ր կ'ըսես, պատասխանեց Սուլթան չերմպին. խնդիրը այն է որ չափազանց մտահոգ էի քու մասիդ...

— Նոյնը կրնամ ըսել ես, խոստո - վանեցաւ աղջիկը. երեսիդ վէրքերէն կը հասկնամ որ կռիւ ըրեր ես... պատմէ նայիմ, ի՞նչ պատահեցաւ...

— Շատ լաւ, բայց եկուր սա պա - տուհաններուն տակին երթանք ու այն - տեղէն դիտենք պարերը. եթէ մեր լուխներէն վեր կը բռնէին իրենց թե - ւերը ու յետոյ զարձեալ կը խոնար - հէին մինչեւ տախտակամածը:

Ցանկարծ Տայանան էր որ ներս մը - տաւ: Սուլթան չափէն աւելի ուրա - խացաւ, տեսնելով որ ան ողջ առողջ էր մինչեւ այդ վայրկեանը: Տեղէն ելաւ ու անոր ճամբան կտրեց՝ տա - կաւին բաժանութեան չմտածելով:

— Ուրեմն կարմիր Ասպետը ժամա - դրութիւնը յարդեր է, փափաց Տա - յանա ժպտելով:

— Այո՛, չնորհիւ ատաուածներուն, խնդաց Սուլթան. անիկա երկու ան - դամ ծուղակը ինկաւ Մեքերանոցին մէջ՝ ճատրակի մասին կատարուած խօսակցութենէն ի վեր. բայց ատ - եսուիկ նորէն դուրսն է... չիտակ Բե - րա երթալու ենք, որովհետեւ Թա - զուհին վտանգի մէջ է...

— Վտանգը Ասպետի՞ն պիտի զայ, հարցուց աղջիկը, անոր աչքերուն մէջ նայելով:

— Երանի թէ անկէ զար ու թագու - հին ուրիշ բանէ վախնալու պատճառ չունենար... դժբախտաբար նախա - պատմական անատունը անոր եռեւէն ինկած է... քալէ՛...

— Այստե՞ղ ալ վտանգ կայ...

— Աչքէն տեղ՝ Պոլսոյ մէջ, բացի բրէտանական դեսպանատունէն եւ հի - մա քեզ հոն պիտի տանիմ՝ անմիջա - պէս...

Տայանա խնդաց եւ անոր հետեւե - ցաւ.

— Ձեմ կարծեր որ այդքան ալ մե - ղի մօտիկ ըլլայ... քանի մը վայր - կեան սպասենք... պիտի ուզէի սա պարերը տեսնել...

— Իսկ ես կը նախընտրեմ որ ա - նանց ժամանակ կորսնցնելու ճամբայ իյնանք...

— Ո՛չ, խնդրեմ. քիչ մը կենանք, յետոյ խօսքդ մտիկ կ'ընեմ, որովհե - տեւ ոստիկան զարձեր ես... անչուշտ այդ ատոհման չես տեր պիտ որ պլու - խէդ ճամբել ուզես...

— Աստուա՛ծ իմ, ինչի՞ր կ'ըսես, պատասխանեց Սուլթան չերմպին. խնդիրը այն է որ չափազանց մտահոգ էի քու մասիդ...

— Նոյնը կրնամ ըսել ես, խոստո - վանեցաւ աղջիկը. երեսիդ վէրքերէն կը հասկնամ որ կռիւ ըրեր ես... պատմէ նայիմ, ի՞նչ պատահեցաւ...

— Շատ լաւ, բայց եկուր սա պա - տուհաններուն տակին երթանք ու այն - տեղէն դիտենք պարերը. եթէ մեր

(Շար.)

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ա.

Տիրող պահեստամթերքների պակասը զգալի էր դարձրել նաև գրքերի պակասը։ Իսկ «գրքի» մասին ինչ ասես որ չէին պատմում։ Ասում էին, որ «ոչխարի գլխի» պես մի բան է եղել, որ ոչ ոք չի կարողացել ուտել, որ ինչ-որ մեկը մի անգամ ուտելով՝ ամբողջ գիշեր չի կարողացել քնել։ Ասում էին, որ «գրքի» մեջ ինչ-որ թունավոր նյութեր են եղել, որ ինչ-որ մեկը մի անգամ կարդալով՝ ամբողջ գիշեր չի կարողացել քնել։ Ասում էին, որ «գրքի» մեջ ինչ-որ մի ուրիշ

եւթուրք դինուորական դրաւումը պէտք չէ ծառայէ Թրքական ահաբեկչութեան յանձնելու Սանճաքը։ Թրքական կազմակերպութիւնները կը հալածեն Արաբ - ները, ասպի կռտան տուները, արտագաղթի կը մղեն բնակիչներու մեծ մասը։ Ահռեսարապիը պէտք է դադրի Սանճաքին մէջ։ Ֆրանսայի կ'իյնայ պահանջել որ դադրի ։

Անհրաժեշտ է նաեւ ուրիշ տնօրինութիւն մը։ Փարիզի եւ Ենկիւրիի միջեւ դոյացած համաձայնութիւնները կը նախատեսեն Ֆրանքեւթուրք - սուրիական երբեակ դաշնագիր մը։ Արդ, որպէսզի սուրիական պետութիւնը իրաւական անձնաւորութիւն մը դառնայ, Ֆրանսական խորհրդարանը պէտք է վաւերացնէ այն դաշնագիրը որ ազատ պետութիւն մը կը դարձնէ Սուրիան։ Պ. Ժուժ Պոնէ կը խորհի Ենկիւրի երթալ յառաջիկայ սեպտեմբերին, ստորագրելու համար Ֆրանքեւթուրք դաշնագիրը։ Եթէ վճռած է երթալ, պէտք է որ միջոցը գտնէ նախեւառաջ վաւերացնելու Ֆրանքեւսուրիական դաշնագիրը, կամ գոնէ իր ճամբորդութենէն առաջ, ծերակոյտին եւ երեսփ. ժողովի ձեռնհաս յանձնաժողովներէն ստանայ քուէ մը՝ որ յանձնառութեան տակը դնէ խորհրդարանը։

Եթէ բնականոն վիճակ մը չհաստատուի Սանճաքին մէջ, եթէ շարունակուի Արաբները, եւ Հայերու դէմ սարբուած հալածանքը, եթէ, վերջապէս, տակաւին ձգձգուի Ֆրանքեւսուրիական դաշնագրին վաւերացումը, Ֆրանսա արաբական աշխարհին մէջ պիտի կորսնցնէ այն ինչ որ կը պարծենայ թէ շահած է Թուրքիոյ մէջ»։

Պոլսոյ Հայերը եւ Սանճաքին «ազատագրումը»

Ֆրանքեւթուրք համաձայնութեան կնքումէն եւ մանաւանդ Թուրք զօրքին Սանճաք մտնելէն ի վեր, Թուրք մամուլը կը յորդի ցնծութեան աղաղակներով։ Ամէն Թերթ սիւնակ-սիւնակ նկարագրութիւններ կը հրատարակէ, ապացուցանելու համար թէ Թուրք զօրքին մուտքը օրհնութիւն մը եղած է Սանճաքի ժողովուրդին համար։ Այս առթիւ կը չեշտեն թէ Հայերն ալ չատ գոհ են ։

« Ճիւմհուրիյէթ» արձանագրելով այդ գոհունակութիւնը, կը գրէ հետեւեալ խորագրին տակ ։— « Հայ հայրենակիցներու մեծ ուրախութիւնը» (6 յուլիս) ։—

Հայոց պատ. տեղապահ Ասլանեան արքեպ. երէկ Բեբա - Փալասի մէջ ներքին գործակալ եւ Հալքի ընդհ. քարտուղար Շիւքրիւ Գայալին այցելելով, Հաթայի ազատագրումին առթիւ Թուրքիոյ Հայերուն ուրախութիւնը յայտնած եւ խնդրած է որ Մեծ ղեկավար Աթաթիւրքի եւ վարչապետ Ճէլալ Պայարի հաղորդէ Թրքահայերուն անկեղծ զգացումները։

Այս առթիւ Ասլանեան արքեպ. հետեւեալը յայտարարած է Բեբա Փալասի պանդոկին մէջ իրեն հետ տեսակցող մեր խմբագրին ։

— Հաթային ազատագրութեան առթիւ Թրքահայերուն անկեղծ ուրախութեան զգացումները յայտնելու եկայ։ Հաթայի դատին առթիւ, սկիզբէն ի վեր ,Թրքահայերը պահ մը եւս չմոռցնէին այս ազգ.դատին մէջ իրենց վիճակուած պարտականութիւնը կատարելէ ։

Մենք արտասահմանի Հայերու գործերուն միջամտել չենք ուզեր եւ չենք միջամտեր ալ։ Բայց Հաթայը Թուրք հայրենիքին անբաժանելի մէկ մասը նկատելով, մեզի համար ազգային պարտականութիւն մը կը սեպենք հոն գըտնուող մեր ցեղակիցները զգուշացնել իրենց սպառնացող վտանգներուն դէմ ։ Ինչպէս ամէն ատեն, իրենց էութիւնը ծանօթ կարգ մը մարդիկ, առիթէն օգտուելով, կը ջանան խառնակութիւն առաջ բերել, իրենց գործերովը զբաղող մարդոց սպառնալով։ Մինչդեռ Հաթայի Հայերուն ճնշող մեծամասնութիւնը առաջին օրէն իսկ կը գործակցի իր Թուրք եղբայրներուն հետ։ Ջանանք այս ուղիղ ճամբէն չեղեցնել ուղղները Թէեւ վերջերս ուզած են ընդարձակել իրենց գործունէութիւնը, բայց ամէն կողմ ժողովուրդին բուռն ընդդիմութեանը կը բախին։ Ինչպէս որ ապարդիւն անցած են Հաթայի Հայերը Սուրիա պաղթել պատգարելու համար Թափուած ջանքերը, նոյնպէս յաղթանակած է իրաւունքը տեսնող ժողովուրդին ողջմտութիւնը ։

Մեր Մեծ Պետին՝ Աթաթիւրքի ազատագրած Հաթայի նոր վարչաձեւին տակ, Թուրքերու եւ Հայերու համար բարօրութեան նոր շրջան մը բացուած պիտի ըլլայ։ Վստահ ենք որ, Հաթայի մեր ցեղակիցները, դնահատելով այս ճշմարտութիւնը, պիտի չարունակեն գործակցութիւնը իրենց Թուրք եղբայրներուն հետ։ Իրենց այս ուշադիր ընթացքով, Հաթայի Հայերը գործնապէս ապացուցած պիտի ըլլան Թէ արժանի են նոր վարչաձեւին ։

Նոր դեպեր Պաղեստինի մէջ

Կիրակի օր նոր դէպքեր ծագեցան Պաղեստինի զանազան մասերուն մէջ։ Հայֆայի մէջ ռումբ մը պայթեցաւ հանրակառքի մը մէջ, վիրաւորելով ութ հոգի։ Ուրիշ հանրակառքի մը վրայ եւ ռումբ մը նետուելով, վիրաւորուեցան 16 հոգի։ Արաբները Հրեաներուն վրայ յարձակեցան, քարեր նետելով եւ ապտակներ տեղացնելով։ Արաբական խումբեր հրէական թաղին վրայ պիտի յարձակէին, բայց անգլիացի նետաձիները արգիլեցին ։ Ռումբ մը պայթեցաւ Եաֆայի եւ Թել-Ավիվի սահմանին վրայ, յետոյ կռիւ մը ծագեցաւ Արաբներու եւ Հրեաներու միջեւ։ Դժոխային մեքենայ մը գտնուեցաւ երուսաղէմի մէջ , սինեմայի մը առջեւ, իսկ ուրիշ մը պայթեցաւ հրէական թաղին մէջ։ 400 հոգի արգելափակուեցան կեդրոնացման կայանի մը մէջ ։

Անգլիական կառավարութիւնը որոշեց վեց վաշտ զինուոր ղրկել Պաղեստին, բարեկարգութիւնը վերահաստատելու համար։ Զօրքերը պիտի ղրկուին Եգիպտոսէն, կարելի եղածին չափ չուտ ։

Անցեալ չաբթուան դէպքերուն հետեւանքով սպաննուած են 52 Արաբներ եւ 12 Հրեաներ, վիրաւորուած՝ 145 Արաբներ եւ 20 Հրեաներ ։

ՋԱՆԱՋԱՆ ԼՈՒՐԵՐՔԱՆԻ ՍԸ ՏՈՂՈՎ

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ հպատակութենէ ղրկուեցաւ, ուրիշ 68 տարագիրներու հետ, էրիխ Մարիա Ռեմարք, հեղինակը հռչակաւոր գրքին — «Ոչ մէկ նորութիւն արեւմտեան ճակատէն», որ չարժանկարի ալ վերածուած է ։

ՆԱԽԱԳԱՀ ՐՕԶՎԵԼԹ Օքլահոմայի նահանգին մէջ պատյտ մը կատարած տաճն, անձնաօթ մը ոտիկանական չղթայէն սողոսկելով կառքին վրայ խոյացաւ։ Գաղտնի ոտիկաններ անմիջապէս ձերբակալեցին մարդը եւ փախցուցին, մինչ ամբոխը կ'ուզէր բզկտել։ Հարցաքննուած տաճն անծանօթը յայտարարեց թէ կ'ուզէր պարզապէս ներկել նախագահին կօշիկները։ Վրան գէնք չունէր։ Հաստատուած է թէ խելագար մըն է, որ ասկէ առաջ ալ տոպրակ մը փետուր նետած էր պատերազմական նախարարին դլխուն ։

ՀԱԿԱՀԱՐԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ կը սաստկանան Գերմանիոյ մէջ, Աւստրիոյ կցումէն ի վեր։ Նոր օրէնք մը Հրեաներուն կ'արգիլէ չարք մը արհեստներ, մասնաւորապէս կալուածական միջնորդութիւնը, տուներու մատակարարութիւնը, ամուսնական միջնորդութիւնը, օտար չրջիկներու առաջնորդութիւնը եւն.։ Անասատղները պիտի բանտարկուին։ Ուրիշ հրամանագրի մը տրամադրութեամբ, բոլոր ծովեզերեայ, գետային եւ լճային բաղնիքները, օդի եւ արեւի լոգանքները այսուհետեւ կրնան արգիլուիլ Հրեաներուն, այդ հաստատութեանց վարչութեան կողմէ, առանց ոտիկանական հրահանգի ։

ԻՏԱԼԻՈՑ սպայակոյտին պետը, որ Գերմանիա կը գտնուի մէկ չաբաթէ ի վեր, ունկնդրութեան ընդունեցաւ Հիթլերի կողմէ։ Երկու զինակից պետութեանց սպայակոյտներուն խորհրդակցութիւնները մեծ ուշադրութիւն գրաւած են քաղաքական չրջանակներու մէջ ։

ՍՊԱՆԻՈՑ ազգայնականները չարունակելով իրենց յառաջխաղացութիւնը, խորտակեցին չատ ամուր դիրքեր։ Այժմ միայն 25 մղոն հեռու են Վալենցիայէն։ Հանրապետականները հերոսաբար կը դիմադրեն։ Ազգայնական զեկոյց մը կ'ըսէ թէ 395 պատդիներ հրացանի բռնուած են կառավարութեան կողմէ ։

ՁԵՆԱԿԱՆ կառավարութիւնը որոշեց լիազօրութիւն պահանջել խորհրդարանէն, կարդադրելու համար հրատապ խնդիրները ։

ԱՆԳԼԻՈՑ թագաւորը անկողին ինկած է, սոսկոքսի տկարութեան մը հետեւանքով։

ԱՆԳԼԵԻՖՐԱՆՍԱԿԱՆ օդանաւային մարզանքներ կատարուեցան կիրակի օր, Վիլլաքուպլէի մէջ, մեծ յաջողութեամբ։ Ներկայ էր նաեւ հանրապետութեան նախագահը, 50.00 հանդիսատեսներով ։

ՌԻՆՈՒ ՄԱՑՐ ԵԿԵՂԵՑԻՆ, որ Գերմանացիներուն կողմէ քանդուած էր մեծ պատերազմին առեն եւ կը նորոգուէր մինչեւ այսօր, հանդիսաւորապէս բացուեցաւ կիրակի օր, պապական նուիրակին կողմէ, որ հայրենասիրական ճառ մը խօսեցաւ այս առթիւ ։

«Ցառաջ» կը ծախուի

Place des Fêtes-ի լրագրավաճառի խանութը գոց ըլլալով Ցուլիս 14-էն մինչեւ 18ը, «Ցառաջ» կը ծախուի Place des Fêtes-ի ծանօթ հայ նպարավաճառին քով, S. Baldjian 2 Rue de Crimée (Տոքթ. Դըրդոյեանի քլինիքին քովը)։

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ՓԱՐԻԶԻ Հ. Յ. Դ. «ԵԳԻՊՏԱՑԻ» ԿՈՄԻՏԷԻ ԿՈՂՄԷ

24 Ցուլիս, կիրակի առաւօտ ժամը 9էն մինչեւ գիշերուան 11ը ՌՈՊԷՆՍՈՆԻ GRAND ARBRE, Maison FIQUET-ի պարտէզին մէջ

Կը խնդրուի նկատի ունենալ այս թուականը։

Ֆ. Կ. ԽԱՉԻ ՓԱՐԻԶԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ ՏԱՐԵԿԱՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍԸ

17 Ցուլիս, կիրակի առաւօտեան ժամը 9էն գիշերուան 11.30

ՐՈՊԷՆՍՈՆԻ ՄԷՋ, Grand Arbre, Maison Fiquet

Գեղարուեստական հաճելի անակնկալներ, ընտիր նուագախումբ

Անձրեւի պարագային գոց սրահ։ Ճոխ պիւֆէ՝ պատրաստուած խաչտուհիներու կողմէ. Մուտք 5 ֆրանք։

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ.— Denfert-էն առնել մեթրոյի դէպի Ռոպէնսոն տանող գիծը, եւ կամ բարի տ'Օրլեանէն օթոպիւս Թիւ 128։

ՓԱՐԻԶԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԱԿՈՒՄԲԻ

Ցառաջիկայ դասախօսութիւնը տեղի կ'ունենայ 12 Ցուլիս, երեքշաբթի երեկոյեան ժամը 8ին, 8 Ռիւ Պոսիւէ։

ԿԸ ԽՕՍԻ Պ. Հ. ՉԱՐԴԱՐԵԱՆ

Նիւթ՝ «Իրապաշտ շարժումը ժամանակակից գրականութեան մէջ (Սրմաքէշխանլեան)»։

ՏԱՐԵԿԱՆ ԴԱՇՏԱ-ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

ԱՄԱՍԻԱ-ՄՄԱՐԶՈՒԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

14 Ցուլիս, Հինգշաբթի ամբողջ օրը Սէն - Լոի Կրըն - փէն, եօթնեղբայրեանի հովասուն ագարակը։

ԿԸ ԽՕՍԻ ՏՈՔԹ. ԼԵՒՈՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

Կը ներկայացուի «ՇԱՏԱԽՕՍ ՍՍՓՐԻԶԸ» դեկավարութեամբ Ց. ԻՆՃԻԷԱՆի եւ մասնակցութեամբ Գ. Գ. ԱԼԻՔՍԱՆԵԱՆի եւ ԳԱՍՄԱՃեանի։ Կը նուագէ հայրենակից Ջութակահար Պ. ՆԱՋԻԿԵԱՆ։ Գարեբուն ընթացքին կը նուագէ Պ. ՍԻՄՈՆ ՇԻՇՄԱՆԵԱՆ իր խումբով։ Պարգեւաւոր խաղեր եւ գեղարուեստական ասեկնկալներ։ Առատ կերուխում։ Մուտքեանս վիճակահանութիւնը կը քաշուի տեղւոյն վրայ։

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ.— Տուփեր կարելի է առնել 15, 16, 18 Թիւ հանրակառքերը եւ իջնել Սէն-Լուս կրան փէն։

Ամավերջի դպրոցական ուսումնական

ՓՈՐԹ Տ'ԻԹԱԼԻԻ ԴՊՐՈՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ Ա. ՅԻՒԼԻՒՆ ԿՈՂՄԷ

14 Ցուլիս, Հինգշաբթի ժամը 2.30ին Ցովհաննէսեանի սրահին մէջ, 15 Rue Pierre Curie. Bicetre (մէթրօ Փորթ տ'Իթալի)։

Ընդ. արտասահմանութիւն, ներկայացում, պար եւ զանազան անակնկալներ երկսեռ աշակերտներու կողմէ։ Մուտք 3 ֆրանք։

Կ'ՈՒԶՈՒԻՆ վարժ գործաւորուհիներ luxe ճերմակեղէնի համար։ Անհրաժեշտ է ձեւել գիտնալ։ Դիմել ժամը 17—20 E. Startchenko, 6 Rue Meilhac, մէթրօ Emile Zola et Cambronne։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՑ ԿԵՍԱՐԻՈՑ

Գրեց՝ ԱՐՇԱԿ ԱԼՊՕՑԱՃԵԱՆ

Երկու ստուար հատորներով Լ.Դ+2479 էջով, զեղազարդուած 687 պատկերներով եւ վիմատիպ 16 բազմադոյն պատմական քարտէսներով պատկառելի գործ մը, որ ոչ միայն Կեսարիոյ եւ Շրջակայից պատմութիւնն է այլ՝ պատմութիւնը Փոքր Ասիոյ հայ գաղութներուն։ Կը պարունակէ համայնագիտական ծանօթութիւններ, տեղագրական, վիճակագրական, ազգագրական, մատենագրական եւ կենսագրական ամենաճոխ տեղեկութիւններ։

Նուազագոյն գինը 25 լիւրն։ Փարիզի մէջ կը ծախուի Պ. Սարգիս Ջաղջաղեանի քով։ 13 բիս Սէն Լազար, Փարիզ (9)։

Etude de Me BERNARD WAHÉ

(17e ANNÉE)

Licencié en Droit de la Faculté de Paris

Ancien élève de l'École des Hautes Études Sociales

JURISCONSULTE

de

Droit Français et International Privé

Mandataire en Justice

159 rue Lafayette, Paris (Gare du Nord) Tél. NORD 68—02

Կը սպասէ նէ ամէն տեսակ դատեր, Փարիզի, գաւառի, գաղութներու եւ արտասահմանի մէջ։ Ներկրագործութիւն իրաւագէտ ամէն տեսակ խնդիրներու Ազգային դատեր, ամէն լեզուէ թարգմանութիւններ։ Նաթուրալիզասիոնի օրինական ձեւակերպութիւններ եւ անոնցներու փոփոխութիւն, ընկերութիւններու հաղորդութիւն եւ լուծում։ Ամէն տեսակ գրութերու իմաստագրութիւն։ Իրաւաբանական քննութեանց եւ մրցութիւններու պատրաստութիւն։ Ճառերու եւ գասախօսութիւններու իմաստագրութիւն։ Փողոցային արկածներու ենթարկուած չաւարներուն կուտայ կանխավճար առանց տոկոսի եւ միջնորդէ։ Կ'ընդունի ամէն օր ժամը 9—10 եւ 5—7։

կ'ընդունի նաեւ ժամադրութեամբ։

ԿԱՐԱՊԵՏ Յ. ԷՄՄԷՐԵԱՆ

Maison E. CHARLES հիմնուած 1869

29 rue Mathis, Métro Crimée

Autobus: AJ, AV, CP, 52, 50/71 Tel. Botzaris 12—60

Կը ծախենք գոհարեղէններ, ամէն տեսակ ժամացոյցներ մասնաւորներ եւն.։ Նորոգութիւն ժամացոյցներու եւ գոհարեղէններու։ Կը գնենք՝ ըլլաթէն, ոսկի, արծաթ եւ գոհարեղէններ՝ նպաստաւոր գիներով։

Մի մոռնաք որ վստահելի ձեռքէ գնուած ոսկեղէն եւ գոհարեղէններն անփոփոխ կը պահեն իրենց արժէքը։

Գաւառներէն եղած ապապրանքները կը կարգադրուին արագ եւ խղճմտօրէն։

ՎԱՀԱՆ ԵԱՐԾԱՆԵԱՆ

ԻՐԱՒԱԳԷՏ - ԽՈՐՀՐԴԱԿԱՆ

Հաճեցէք դիմել իրեն, ամէն դատական եւ վարչական գործերու համար։

Ամէն օր ժամը 10էն 12 եւ 5էն 7. բացի ՇԱԲԱԹ եւ ԿԻՐԱԿԻ օրերէն։

44, Rue Lafayette. Tél. Prov. 78-38.

Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆԻ


ԻՐԱՒԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

28 Avenue Victor Hugo, Vanves (Seine)

(Վիսէ Մէշլէի հրապարակին վրայ)

Կ'ընդունի երկուշաբթի, Չորեքշաբթի եւ Ուրբաթ օրերը ժամը 10—12 եւերեկոները 4—7, եւ մասնաւոր ժամադրութեամբ։

Hommes **Dames**



15, Bld. Bonne Nouvelle

Métro: Bonne Nouvelle Tél.: Gut. 93-70



ՐԱՔԸ ՏԻՒԶ

Ջուտ խադողէ քաշուած եւ անիսոնով պատրաստուած հայկական օղին է ՐԱՔԸ ՏԻՒԶը։ Զգուշացէք արուեստական օղիներէ որոնց ստամոքսը կ'այրէ եւ գիշերները ջուր կը խմցնէ եւ կը վնասէ ձեր առողջութեան։ Խնդրեցէք միայն ՐԱՔԸ ՏԻՒԶը որուն անուրբատ, կազդուրիչ եւ ախորժաբեր ըլլալը հաստատուած է։

Dalakupeian 8 Rue Suffren; Dépôt: 7 Rue de la Paix, Marseille. Tél. Dragon 70—89։

ԿԱՊՈՑՆԵՐ ՌՈՒՍԱՍՏԱՆ ՂՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ունինք մեծ մթերք անգլիական, ֆրանսական եւ չեխոսլովաք կերպասներու՝ այր մարդոց վերարկուի, տաղտուկի, կանանց ոսպերու եւ տաղտուկներու համար։ Առաջնակարգ կօշիկներ, ճերմակեղէններ եւ նպաստեղէններ։ Ունտերվուտ զրկի մեքենայ։ Ձափաւոր գիներ։

Գիմել՝ **American Lloyd, Paris (9). 7 rue Auber**

Tél. Opéra 67-77

Tailleur de ST. BERNARD

Pour Hommes et Dames

H. GULBOLIAN

64 rue Affre կամ 8 rue Cavé, Paris (18)

Մասնաճիւղ՝ 2 rue de la Charbonnière

Մէթրօ La Chapelle եւ Barbès Rochechouart

Թելեֆոն Montmartre 69—70

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ.— Կարեւոր նուէրներ մեկ ձեռք տագտուկի համար մինչեւ Ցուլիս 14։

ՍՏԱՑՄԱ ԵՆՔ ՓՐԱՆՍԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՄԱՌՆԱՑԻՆ ԿԵՐՊԱՍՆԵՐ։

ՄԵՐ ԳԻՆԵՐԸ.— Տաղտուկ (երկու փոքձով) սկսեալ 350—450 ֆր.է.։ Նուէր կը տրուի մեկ ֆանթեզի տարատ կամ կոլֆ։ 450 ֆր.է վեր տաղտուկներու համար, 3 փոքձ, նուէր կը տրուի Հայկուհի կիլոպօլեանի արհեստանոցին մէջ պատրաստուած, գաքնան յատուկ, արժէքաւոր մանշակ վզնոց մը։ Ներկայանալ «Ցառաջի» կտրօնով։ Վերոյիշեալ նուէրներէն չեն օգտուիր մինչեւ 20 տարեկան այն երիտասարդները եւ երիտասարդուհիները որոնք չեն ուզեր խօսիլ ծնողներէնեւ չեն կրնար գրել իրենց անուններն ժայրենի լեզուով։

Բաց է կիրակի մինչեւ կէսօր

ԴԱՅՃԻ ՏԵՍԻԼ ԼԻՄՆԻ ՄԷՋ

Cinéma REXY

Cours Lafayette. angle Garibaldi

Le Gérant : H. STEPHAN

Imprimerie A. DER (AGOPIAN)

17, Rue Demesme — PARIS (13)

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՑԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ. ԳՐԱԿԱՆ

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
17, Rue Damesme, PARIS (13e)

Téléphone : Glacière 15 - 70
Chèque Postal Paris 1678 - 63
(ԵՐԹԵՒԵԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԳԱՑՄԱՆՆԵՐ — ՏԱՐԵԿԱՆ ՎԵՑԱՄՍԵԱՑ ԵՒԱՄՍԵԱՑ

Ֆրանսա եւ Գաղութներ	150 ֆրանք	75 ֆրանք	40 ֆր.
Անգլիա եւ Իտալիա	265 ֆրանք	140 ֆրանք	
Ուրիշ երկիրներ	215 ֆրանք	110 ֆրանք	

ՉԱՐԵԹՇԱԹԻ 13 ՅՈՒԼԻՍ MERCREDI 13 JUILLET 1938

ԺԴ. ՏԱՐԻ — 14e Année No. 3781

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Մ Խ Ի Թ Ա Ր Ա Ն Ֆ . . .

Փարիզի հոգեւոր հովիւը կիրակի օր կարդալ տալով երկու նամակներ՝ էջմիածինէն, յայտարարեր է «հանդիսաւորապէս եւ բարձրաղաղակ», ինչպէս կը հաղորդէր աշխատակից մը.

— Սուտ են այն բոլոր վրդովիչ տեղեկութիւնները որ ամիս - ներէ ի վեր շրջան կ'ընեն հայերէն թերթերու մէջ: Կաթողիկոսը խեղդամահ չէ եղած, ոչ ալ էջմիածինը աւարի տրուած է, այլ ա - մէն ինչ բնականոն պայմաններու մէջ է...

Ի՞նչքան պիտի ուզէինք որ սուտ ըլլային, իսկապէս, «բոլոր վրդովիչ տեղեկութիւնները»:

Դժբախտաբար հաստած վաւերաթուղթերը բաւական չեն այդ - պիսի վճիռ մը արձակելու համար: Անոնք չատ - չատ կրնան ծա - ռայել իրեւ էրած սրտի մխիթարանք, տաճկի մը համար : Մին - չեւ որ կարելի ըլլայ վերջնապէս աւուդել ամէն բան :

Իրականին մէջ, ի՞նչ կը ներկայացնեն երկու վաւերաթուղ - թերը :

Առաջինը ուշացած նամակ մըն է— գրուած՝ 1938 Մայիս 24-ին, զոր արտասպած ենք նոյնութեամբ եւ որ հաղորդելով կաթո - ղիկոսին մահը՝ «սրտի կաթուածէ», հոգեչահ քարոզներ կը կար - գայ :

Միւսը, զոր պիտի հրատարակենք վաղը, պատճէնն է այն կոն - դակին որով հանդուցեալ կաթողիկոսը տեղապահ կը նշանակէ Գէորգ արք. Չէօրէքճեանը (1936 ապրիլ 18):

Փորձենք յետահայեաց ակնարկ մը նետել, դիւրացնելու հա - մար կացութեան վերլուծումը :

Ամենայն Հայոց կաթողիկոսին մահուան հեռագիրը զարնուած էր ապրիլ 10ին, երուսաղէմի պատրիարքին միջոցաւ, եւ մեր թեր - թին մէջ հրատարակուեցաւ ապրիլ 13ին :

Այս գոյժին յաջորդեց խոր լռութիւն մը, մինչեւ մայիս 10, երբ հրատարակեցինք առաջին վրդովիչ տեղեկութիւնները,— կա - թողիկոսը խեղդամահ, էջմիածինը աւարի տրուած, երկու եպիս - կոպոս եւ մէկ վարդապետ ալ խեղդուած կամ ապաննուած :

Վառահ ըլլալով հանդերձ մեր թղթակիցներուն վրայ, մենք այս տեղեկութիւնները հրատարակեցինք հետեւեալ դիտողու - թեամբ, —« Սպասելով վերջնական ստուգման»: Նոյն օրուան խմբագրականն ալ կը վերջնաբար այսպէս.

— « Բայց եւ այնպէս, մենք պիտի ուզէինք որ սուտ կամ չա - փազանցուած ըլլային այս բոլորը: Որովհետեւ, չափազանց հաստնելի է պարզուած պատկերը, չըսելու համար յուսահատա - կան »:

Ուրիշ մանրամասնութիւններ ալ հրատարակուեցան յաջորդ օրը, ինչպէս եւ ուշի ուշով: Նոյն տեղեկութիւնները լոյս տեսան նաեւ «Յուսարեր»ի մէջ: Եւ, ինչպէս «Յառաջ»ի, նոյնպէս «Յու - սարեր»ի տեղեկատուները մէկ հոգի չէին, ոչ ալ սոսկական ան - հատներ:

Ողբերգութեան վերջին դրուագը հրատարակեցինք Յունիս 23ին, որ կը հաղորդէր թէ կաթողիկոսին հետ նահատակուած վար - դապետը Դանիէլ Ծ. Վ. Զաւոյեանն է, մխարան Աղթամարի, 70 տարեկան: Իսկ ամենավերջինը լոյս տեսաւ յուլիս 5ին, հետեւեալ բովանդակութեամբ եւ յունիս 24 թուակիրով.

— « Ստոյգ է այլեւս, որ կաթողիկոսին խեղդել են չէկիստնե - րը: Իր եղերական մահից երկու օր առաջ, չէկիստները կաթո - ղիկոսից պահանջում են Մայր Աթոռի գանձատան բանալիները : Մեսրոպ (Մագիստրոս) եւ Բագրատ եպիսկոպոսները գնում են չէկիստներին յայտնելու կաթողիկոսի ժխտական պատասխանը : Չէկիստները տեղն ու տեղը գնդակահարում են Մագիստրոսին եւ Բագրատին» : Եւայլն:

Այս տեղեկութեանց առթիւ էր որ, Երուսաղէմի պատ - րիարքը իրար անցած, առիթողական հեռագիրներ ուղղեց էջմիա - ծին, յունիս 13ին եւ 29ին, լուսաբանութիւններ խնդրելով :

Այդ հեռագիրներուն պատասխանը եկա՞ծ է թէ ոչ — տեղե - կութիւն չունինք: Ան այժմ եղած - չեղած երկու նամակներ կան:

Այնպէս որ, Վառամշապուհ արք. առնուազն կը չափազանցէ , մէկ անգամէն «սուտ» հռչակելով բոլոր վրդովիչ տեղեկութիւն - ները:

Երբ մենք այնքան բազմակողմանի նիւթեր ունենալով հան - դերձ որոշ վերապահութիւն կը յայտնենք, Փարիզի հոգեւոր հո - վիւը հինգ անգամ աւելի վերապահ պիտի ըլլար, այնքան «հան - դիսաւոր եւ բարձրաղաղակ» վճիռ մը արձակելու համար : Մա - նաւանդ որ, ինք էջմիածինն ալ տեսած է, աւելի բախտաւոր օրե - րու մէջ, եւ դարձեալ խորհրդային իշխանութեան օրով: Տեսած եւ ողբե՛ր արձակած է, դամբարաններու առջեւ...

Ի վերջոյ ի՞նչ կ'ըսէ էջմիածնի մայիս 24 թուակիր նամակը, որուն գոնէ մէկ չարաչուք ստորագրութիւնը — Աբա՛ղն արքե - պիսկոպոս — բաւական էր աչքերը բանալու. —

1· Դիտողութիւն կատարուեր եւ հաստատուեր է որ կաթո - ղիկոսի մահը «հեռեւանք է եղել սրտի կաթուածի»:

2· Անմիջապէս հեռագրուեցաւ մահուան լուրը, Կիլիկիոյ կա— թողիկոսին, երուսաղէմի եւ Պոլսոյ պատրիարքներուն, ինչպէս եւ «Համամիութենական հանրապետութիւններում գտնուած բո - լոր թեմերին»: (Կա՞ն այդպիսի թեմեր, երբէ՞ն ի վեր...):

3· «Կատարուեցաւ հանգուցեալի օծումը եւ թաղումը»: (Ե՞րբ, ի՞նչպէս):

4· «Աղօթենք Բարձրեալին», որ «յաջողէ» համազգային եկե - ղեցական ժողով գումարել, նոր կաթողիկոս ընտրելու համար :

Հարցում մը եւս.— Քանի՞ օր էՆերեւանէն Փարիզ, Մոսկուայի ճամբով: Ինչո՞ւ ապրիլ 6ին պատահած դէպքի մը մանրամասնու - թիւնները դրի կ'առնուին Մայիս 24ին, եւ Փարիզ կը հասնին շա - բաթ օր, 9 յուլիս:

Շ.

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ԻՏԱԼԻՈՅ ՎԵՐԱՊԱՀ ԴԻՐՔԸ ՖՐԱՆՔԵԻԹՈՒՐՔ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԷՊ

«Թան»ի թղթակիցը կը գրէ Հռոմէն, յուլիս 11 թուակիրով.—

Իտալիա չատ վերապահ դիրք մը բռնեց Ալեքսանդրէթի Սանճաքին վերա - բերեալ համաձայնութեան հանդէպ: Ան բացէ ի բաց չարտայայտուեցաւ կող - մերէն որ եւ է մէկուն համար,— Ֆրանսա, Թուրքիա, Սուրիա: Պատճառը այն է որ, Իտալիոյ հանրային կարծիքին համաձայն, խնդիրը ճշմարտապէս լուծ - ուած չէ տակաւին եւ անդրագոյն հետեւանքներ պիտի ունենայ : Կարճ խօսքով, Իտալիա իրեն կը վերապահէ դիրք բռնել աւելի ուշ, համաձայն իր մտահոգու - չահերուն :

Բայց եւ այնպէս մամուլը չի ծածկեր թէ Սանճաքի հարցին մէջ Թուրքիա բազմաթիւ առաւելութիւններ ստացաւ: Գալով Ֆրանսայի, իր բռնած դիրքէն այնպէս կը դատեն թէ կ'ուզէ Թուրքերը ազատ ձգել Սանճաքին մէջ, իրրեւ փոխարինութիւն Ֆրանքեւթուրք բարեկամութեան դաշնագրին: Մինչեւ ան - դամ այս վերջինը կը կապուի Ֆրանքեւտուս պինակցութեան հետ: Թուրքիան այսուհետեւ բացարձակ իրաւարարն ըլլալով Նեղուցներուն, կը կարծուի թէ Ֆրանսա պիտի փորձէ զայն կապել իր պինակցութիւններու ցանցին, որպէսզի ամէն առիթի մէջ ապահովուի Ֆրանքեւտուս ուժերու լծակցութիւնը Վոսփորի եւ Տարտանէլի մէջէն :

«Ռէյլայոնի ինթէրնացիոնալի» հանդէսը այս տեսակէտը կը յայտնէ, բա - ցատրելով թէ համաչխարհային պատերազմին փորձառութիւնը Ֆրանսայի - ներուն աչքին կ'արդարացնէ ամէն զոհողութիւն, Թուրքիոյ հաւանութիւնը ստանալու համար Ֆրանքեւտուս այս կապակցութեան: Ահա թէ ինչու չատ մեծ ճիգ մը պիտի փորձուի Ենիւերլի մէջ. ճիգ մը որուն անատրերը չէ Անգլիա :

Այս հրատարակութիւններէն կրնան հետեւցնել թէ Իտալիա տակաւին ոչ բարեացառեհ, ոչ ալ անհրաժեշտ կը գտնէ արեւելեան Միջերկրականի հաւա - սարակշռութեան փոփոխութեան խնդիր յարուցանել, Սանճաքի համաձայնու - թեան առթիւ : Ան մեկուսի կը մնայ, առանց ամենափոքր առարկութիւն մը յայտնելու. եւ սակայն, երբ հրատարակուեցաւ անգլիական քննիչ յանձնաժո - ղովին տեղեկագիրը Պաղեստինի բաժանման մասին, Իտալիա փութաց բաղո - քել, այն պարագային որ ջուրի գլխով թէ Միջերկրականի հաւասարակշռութիւնը պէտք չէ փոխուի : Ի՞նչ է իր ներկայ դիրքին պատճառը: Արդեօք Իտալիա կը խորհի՞ ինք անձամբ գործողութիւն մը կատարել Ենիւերլի մէջ: Կամ Ձիանօ չէ հրաժարած Աթաթիւրքի այցելելու ծրագրէն: Ի հարկին արաբ - հրէական տեսակէտը պաշտպանելով Սանճաքի հարցին մէջ, Իտալիա դեր մը պիտի կա - տարէր: Ան այժմ չէզոք է եւ լուռ: Չուզեր կանխավճռել ապագան :

Գերմանիոյ ազդեցութիւնը Թուրքիոյ մէջ

Պերլինէն կը հեռագրեն Լոնտոնի թերթերուն.—

Առեւտրական չրջանակներու մէջ կը կարծեն թէ մեծապէս պիտի ծաւալի գերմանահետեւութիւնը, իրրեւ հետեւանք Թուրքիոյ եւ Գերմանիոյ տնտե - սական նախարարութեանց միջեւ կատարուած բանակցութեանց: Թուրքիոյ հետ առեւտրական յարաբերութիւնները զարգացնելու քաղաքականութիւնը բացառ Յօքի - Շախէ, երբ տնտեսական նախարար էր: Նոյն ճամբան կը չա - բունակէ իր յաջորդը, Պ. Ֆունք որ մօտերս Ենիւերլի պիտի այցելէ :

Մտահոգիչ մը քննելով այս հարցը, կը դանդատի թէ անգլիութուրք փո - խառութեան համաձայնութիւնը ուղղուած է Գերմանիոյ դէմ, հակազդելու համար անոր գերակշռութեան՝ Պալքանեան եւ Դանուբեան երկիրներու մէջ: Մանաւանդ որ, կ'ըսուի թէ Անգլիա կ'ուզէ վարկը բանալ նաեւ այդ պետու - թեանց: Թերթ մը կը բացատրէ թէ Անգլիա կ'ուզէ «տոկոսի գերութեան դա - տապարտել հարաւային արեւելեան եւրոպայի երկիրները, քաղաքական փո - խառութիւններով որոնք պարտականը կը գրկեն իր չարժումի ազատութե - նէն »:

Մոսկուայի տեսակէտը Թուրքիոյ հետ համաձայնութեան մասին

«Իզվեստիա», Մոսկուայի կառավարական պաշտօնաթերթը, կը գրէ Ֆրանքեւթրքական համաձայնութեան առթիւ.

— « Ֆրանսայի եւ Թուրքիոյ համաձայնութիւնը կրնայ ըլլալ եւ մենք վըս - տահ ենք թէ պիտի ըլլայ կարեւոր տարր մը հաւաքական ապահովութեան զօ - րացման համար: Ֆրանքեւթուրք դաշինքը ոչ միայն բարեկամութեան դաշ - նադիր մըն է, այլեւ իր իսկութեամբ դաշինք մը նախապարձակ պետութեան չօգնելու, նախապարձակ չըլլալու, չարեւնման այն համաձայնութենց դէմ: Միութիւնը կնքեց Ֆրանսայի, Թուրքիոյ եւ իր չատ մը դրացիներուն հետ: Ի· Միութեան հանրային կարծիքը կը գնահատէ այսպիսի համաձայնութիւն մը կնքումը երկու պետութենց միջեւ որոնց հետ կը գործակցի խորհրդա - յին կառավարութիւնը, լուծելու համար միջազգային խնդիրներ: Եթէ Ֆրան - սական եւ Թրքական կառավարութիւնները կրցան, չափազանց բարդ կացու - թեան մը մէջ խաղաղօրէն լուծել հին վէճը եւ միանգամայն կարգադրել Ֆրանքութուրք չարաբերութենց խնդիրը, պատճառներ կան յուսալու թէ այդ համաձայնութեան գործադրութիւնը վիրկարար արդիւնքներ պիտի տայ երկու երկիրներուն եւ խաղաղութեան գատին համար »:

**** Արտաքին նախարարութիւնը առջի օր հրատարակութեան յանձնեց էնկիւրիի մէջ ստորագրուած համաձայնութիւնները, որոնց պատճէնները հրատարակեր էինք կիրակի օր :*

Եկեղեցի մը եւս փակուեցաւ Մոսկուայի մէջ

« Տէյլի Թելէկրաֆ»ի թղթակիցը կը հեռագրէ Մոսկուայէն.—

Օրթոտոքս քրիստոնէութեան դէմ բացուած պայքարը նոր չրջանի մը մէջ մտաւ Աստուածայայտնութիւն եկեղեցւոյ բռնագաւեալ փակումով, Դորոկո - միլովսկայայի մէջ (Հարաւ. - արեւմտեան արուարձան մը): Այս տաճարը իրրեւ մայր եկեղեցի կը ծառայէր Մոսկուայի մէջ, աւելի նշանաւոր հաստա -

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Դ· էջ)

ՕՐԸ ՕՐԻՆ

ԿՆԿՏԻՒ

Հայկական գիւղերու մէջ սովորու - թիւն էր·

1.— Կիները ամօթ կը համարէին ի - րենց ամուսինը անուանել անունով , ու կ'ըսէին· «Գլխաւորս», «Մեծս», կամ «Տղուս հայրը»:

2.— Այրերը եւս՝ «մօրս հարսը» կ'ը - սէին, երբ հարկ կ'ըլլար յիշել իրենց կինը:

Գայթակղութի՜ւն էր ըսել «հրեշ - տակս», «աստուածուհիս», կամ «փի - սիկս», «աղաւնեակս» եւ նման բաներ:

Մեծ - հայրս, երբ կիրակի օրերու զգեստները հագնէր եւ վրայէն կապէր նախշուն ու հոտաւէտ գօտին, (գի - տէ՞ք թէ ի՛նչպէս կը կապէր գօտին, — մէկ ծայրէն կը բռնէի ես եւ կը կանգնէի ընդարձակ չարտախին ամէ - նէն հեռուտր անկիւնը, իսկ միւսը իմին իր մէջէը կը խօթէր ու կը սկը - սէր դառնալ մէվլէվիի պէս ճեռքերը վեր բռնած եւ այնքան արագ, որ կը գինովնար եւ ես կը նաթէի խնդալէն), այդ պահուն միտքը կ'իյնար չեմ գի - տեր ինչ բան մը, ու կը պռռար մեծ - մօրս·

— Կնի՛կ ...

Այս դրուագը կը պատմեմ՝ հաս - ուատելու համար թէ մեծ - հայրս ա - նանձնութիւն - մաւանդութիւն չէր յարգեր,— կնիկին կնիկ կ'ըսէր: Նոյն - իսկ, եթէ մեծ - մայրս չլսէր էգէստա - նը ժաժ հանող ստեմտորեան իր ձայ - նը, այս անգամ կ'ըսէր·

— Կնի՛կ, կնկո՛ւս ...

Յետոյ իմծի կը դառնար եւ ընկե - րաբար կը բացատրէր պակասութիւն - ները այս կնիկ դասակարգին, զոր կ'անուանէր կնկտիճ: Եւ մեծ - հայր ու թոռնիկ, երկու ընկերներ, կը խըն - դայինք կնկտոց պակասութիւններուն վրայ, մանաւանդ ես՝ երբ մեծ - հայրս, էէֆեաթ պատմած առեն, աչ - քով իմծի հրամայէր «ւիօ՛» մը պո - ռալ ճստած տեղը բնացող մեծ - մօրս ականջին:

— *Կնիկն ի՞նչ ընէ բառ ու բան, ժամերգութիւն, չարական ...*

Այս ռտանաւորով կը հեգնէր մեծ - մայրս որ ականջ չէր տար իր «բառ ու բան»ին (էէֆեաթ): Թէմինիսթ չէր մեծ - հայրս, բայց կը սիրէր էրիկ - մարդու պէս վերէն նայիլ կիներուն վրայ, հովանաւորել ու թուարկու - թեան տակ պահել զանոնք: Ու եօթը - յարկեն հայհոյութիւն մը կը գտնէր, երբ կը լսէր որ գիւղացի մը ծեծեր է իր կնիկը՝ դասական ձեւով, կրամ - բաճղուելն ճնկելէ եւ լոլիկ դառնալէ վերջ:

Կնիկ ծեծելու պատմութիւն շատ էի լսած: Բայց կ'երեւի թէ փոխուեր են դարերը:

Պըճնոյի մէջ, ամերիկեան դատա - րանը վեց ամիս բանտարկութեան դա - տապարտեց կին մը, որ ամէն իրիկուն կը ծեծէր իր էրիկը, «բիրիք» դար - ձնելով զայն: Այս առթիւ, դատարա - նին նախագահը, ցաւով դիտել տուաւ·

— Ատեն մը էրիկն էր որ կը ծեծէր իր կնիկը, ամէն իրիկուն: Իսկ հիմա փոխուած է սովորութիւնը, կինն է որ կը ծեծէ իր էրիկը՝ դրամ վաստկելու եւ *սթորթիվ* դառնալու նամբան սոր - վելէ վերջ:

Ուրեմն, այսուհետեւ, գլուխները վա՛ր ... կնկտոց առջեւ :

ԱՐԱԶ

ԷՋՄԻԱԾՆԷՆ ՀԱՍԱԾ ՍՈՒՏԻՆ ՆԱՄԱԿԸ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԹԻՒ

ԽՄԲ.— Ինչպէս հաղորդած էինք երէկ, Փարիզի եկեղեցիին մէջ կիրակի օր կարդացուեցան էջմիածինէն հասած երկու նամակներ, մէկը՝ կաթողիկոսին մահուան, երկրորդը՝ տեղապահի նշանակման մասին, երկուքն ալ ուղղուած Փարիզի հոգեւոր հովիւին եւ եկեղեցւոյ վարչութեան :

Ահաւասիկ առաջին նամակը (երկրորդը՝ վաղը) ....

Նորին Ս· Օծութիւն Տ· Մորէն Կաթողիկոսը տաբոյս Ապրիլի լոյս 6ի դիշերը հանգեաւ ի Տէր սրտի կաթուածէ: Գերագոյն Հոգեւոր Մորհուրդը խնդոյն եւեթ հաղորդեց այս մասին կառավարութեան, որի հետեւանքով երե - ւանեից ժամանեցին բժիշկներ, որոնք մանրազնին քննութիւնէ յետոյ՝ յայտա - րարեցին թէ՝ հանգուցեալ Հայրապետի մահը տեղի է ունեցել սրտի կաթուա - ծից: Կառավարութեան առաջարկութեամբ եւ Գերագոյն Հոգեւոր Մորհուրդի համաձայնութեամբ յիշեալ բժիշկները՝ Պրօֆ· Շեկ-Յովսէփեանի գլխաւորու - թեամբ՝ անդամահատեցին հանգուցեալի դին, որով վախճանապէս հաստատ - ուեցաւ թէ Մորէն Ա· Կաթողիկոսի մահը հետեւանք է եղել սրտի կաթուածի: Անմիջապէս հեռագրուեցաւ Տանն Կիլիկիոյ Շնորհազարդ Տ· Սահակ Բ· Կա - թողիկոսին, Ս· Երուսաղէմի եւ Կ· Պոլսի ամենապատիւ պատրիարքներին, որոնցից առաջինին խնդրուեցաւ իրազեկ անել արտասահմանի բոլոր թեմերին Տ· Մորէն Ա· կաթողիկոսի մահուան մասին՝ կարգադրելով հանգուցեալի յի - շատակին հոգեհանդիստ կատարել: Նոյնանման հեռագրեր ուղարկուեցան նաեւ համամիութենական հանրապետութիւններում գտնուած բոլոր թեմերին: Մատուցուեցաւ հանգիստաւոր Ս· Պատարագ եւ կատարուեցաւ հանգուցեալի օծումը եւ թաղումը :

Տ· Մորէն Ա· կաթողիկոսի վաղաժամ մահը խոր վիշտ պատճառեց Ս· Էջ - միածնի մխարանութեան, սակայն, աչխարհի ամէն կողմից եւ մասնաւորապէս Հանրապետութիւններից տեղացող վշտակցութեան, սիրոյ եւ հաւա - տարմութեան զգացմունքներով լի հեռագրերը առ պատմական Մայր Աթոռ Ս· Էջմիածինը մխիթարում եւ քաջալերում են մեզ :

Գերագոյն Հոգեւոր Մորհուրդը բերում է իր շնորհակալիքը պատուարժան Մորհրդին եւ թեմիդ հաւատացեալ ժողովրդին Տ· Մորէն Ա· Կաթողիկոսի մահուան առթիւ արտայայտած ջերմ ցաւակցութեան եւ բարեմաղթութեանց համար: Գերագոյն Հոգեւոր Մորհուրդը կատարելապէս հաւատացած է, որ թէ ձեր եւ թէ հայ հաւատացեալ ժողովրդի հաւատարմութեան եւ բարեացա - կամութեան զգացմունքները միշտ վառ ու կենդանի կը մնան առ ընդհանրա - կան Հայրապետութիւնն ու առ Մայր Աթոռ Ս· Էջմիածինը :

Աղօթենք Բարձրեալին, որ պարգեւէ Ամենայն Հայոց Հայրապետութեան եւ Ս· Էջմիածնին անսասանութիւն եւ յաջողէ՝ Հայաստանեայց եկեղեցու ա - նանղական կարգերի համաձայն՝ գումարել Էջմիածնում Համազգային եկեղե - ցական ժողով եւ ընտրել նոր ընդհանրական Հայրապետ :

Հայաստանի խորհրդային սոցիալիստական հանրապետութեան բարեհաճ վերաբերմունքը այս խնդրի նկատմամբ հաստատուն գրաւական է սոյն հարցի բարւոք լուծման :

Ընդ սմին Գերագոյն Հոգեւոր Մորհուրդը անհրաժեշտ է համարում հա - ղորդել ձեզ, որ հանգուցեալ Տ· Մորէն Ա· Կաթողիկոսը 1936 թուի ապրիլի 18ի Հայրապետական կոնդակով Գերագոյն Հոգեւոր Մորհրդի անդամ Գերա - շնորհ Տ· Գէորգ Արքեպիսկոպոս Զօրեքճեանին կարգել է Ամենայն Հայոց Կա - թողիկոսի տեղապահ: Գերագոյն Հոգեւոր խորհուրդը ընդ սմին ներփակում է յիշեալ կոնդակի վաւերական պատճէնը :

Տեղապահ Ամենայն Հայոց Հայրապետութեան՝ Սուրբ· Գէորգ Արքեպիսկո - պոս, անդամ Գերագոյն Հոգեւոր Մորհրդի՝ Սուրբ· Աբրէն Արքեպիսկոպոս :

Թիւ 201, 24 Մայիսի 1938 թ· Ս· Էջմիածին :

ԼՔՈՒԱԾԸ

Քաղաքական ծանր օրեր կ'ապրինք. արտակարգ, անակնկալ դէպքեր կ'ալեկոծեն մեր կեանքը։ Հայրենիքէն ընկած մինչեւ հեռաւոր գաղութներու մէջ, Հայը ապահով չէ. կը պայքարի՝ ոչ միայն ապրելու համար, այլեւ իր գոյութեանը համար։ Ու, յաճախ, կը պայքարի միայն ապրելու համար։ Մոռցած վաղն ու ապագան, հարկադրաբար մտածելով միայն առօրեայի մասին։

Այս անողոք, անհաւասար պայքարին մէջ, շատ բաներ մոռցուած են. շատ արժէքներ զոհ տրուած. վերկուլա կամ որպէս թէ վերկելու համար միայն մեր առժամեայ գոյութիւնը. յետագային թողլով մեր տեսական, հիմնական գոյութեան խնդիրը։

Այս մոռցուած կամ անտեսուած «բաներ»էնաւաղինը՝ կասկած չկայ, որ հայ գրականութիւնն է. աւելի լայն բացատրութեամբ մը՝ հայ մշակոյթը, իր բոլոր ճիւղերովը։ Մոռցուած՝ ոչ միայն ժողովրդական խաւերէն, այլեւ մտաւորականութենէն։

Գրական հանդէս մը, նոր գիրք մը, արտակարգ յօդուած մը կամ հրատարակութիւն մը, մահ մը կամ յոբել-եան մը միայն կը յիշեցնեն մեզ՝ որ հայ գրականութիւն կայ դեռ եւ մարդիկ՝ որ գրականութեամբ կը զբաղին տակաւին։

Գրական նոր գիրք մը՝ զուր վատակ կը համարուի, վէպ մը՝ ժամանց. քերթուած մը՝ խաղ եւ ուսումնասիրութիւն մը՝ տաղտուկ։

Ո՞վ կամ քանի՞ հոգի այլեւս լըրջութեամբ, արժանավայել կարեւորութեամբ կը վերաբերուի այս բոլորով. «Ամենը չէ հմա»— այս է ընթացիկ բացատրութիւնը. նախ՝ կեանքը, ապահովութիւնը, կենսականքը, գործնականը եւ յետոյ՝ զարդն ու զարդարանքը։

Ու այս «զարդն ու զարդարանքը»՝ գրականութիւնն է, արուեստը, մշակոյթայինը առհասարակ։

Եւ ճիշդ հոս է մեր դժբախտութիւնը. հայ կեանքի մեծագոյն ողբերգութիւններէն մէկը. հանրային մտածողութեան ամէնէն հիւանդ կէտերէն մէկը։

Այնպէս կը կարծուի, ընդհանրապէս, թէ կեանքը չերտաւորումներով կ'ընթանայ, անջատ հատուածներ, զատ երեսներ ունի ապրելու կեանքը եւ թէ անոր մէկ կողմը կան կարեւոր ու անկարեւոր խնդիրներ, առիթողական ու երկրորդական լուծումներով։ Կը կարծուի թէ, օրինակ, քաղաքականը աւելի կարեւոր, կենսական, անմիջականն է, մինչ մտաւորականն ու մշակոյթայինը՝ անկարեւոր, երկրորդական, ոչ-անհրաժեշտ։

Այսպէս չէ՞ նաեւ պատերազմական ճակատներուն վրայ, ուր վճռականը՝ դէնքն ու զօրքը կը կազմեն։

Բայց, չեն անդրադառնար շատեր, որ բանական չէ զօրքերու թիւ ունենալ միայն, այլ հարկ է որ անոնք զուտ ըլլայ, սպառազէն, եւ այս բոլորէն վեր՝ հոգիզէս առողջ ու հաւատարակիտ։ Լաւագոյն բանակները անոնք չեն, որ ամէնէն շատ թիւ, զէնք ու նոյնիսկ քաջութիւն ունին. այլ անոնք՝ որ այս բոլորը ունին հաւատակատուած վիճակի մէջ։ Մեծ ժողովուրդները շատ թիւ, շատ զրամ ու շատ կորով ունեցողները չեն, այլ անոնք՝ որ կրցած են իրենց պատմութեան մէջ նպատակ, փիլիսոփայական ու բարոյական ուժերու միջեւ հաւասարակշռութիւն հաստատել, կրցած են զարգացնել իրենց բոլոր կարողութիւնները, զուգընթացաբար։

Արդ, ո՛ւր ենք մենք այս տեսակէտէն։ Կրցա՞ծ ենք զտնել մեր ներքին հաւասարակշռութիւնը. մեր կեանքի ճակատագրական հարցերը դիմագրաւել համապատասխան միջոցներով, քաղաքական, մտաւորական ու մշակութային աղէտներուն առջեւ պատնէշներ կեցնել՝ լայն սահմաններու վրայ։

Ձենք կրնար զրական ու վճռական պատասխան տալ։

Գիտենք, թէ երբ քաղաքական հարուածը կ'իջնէ մեր վրայ, կը տրորուի մեր կեանքը, իր բոլոր մարզերովը— ազգային, մտաւորական, մասնաւոր, կրթական։ Գիտենք ասիկա. բայց չենք գիտեր կամ չենք ուզեր գիտնալ՝ թէ մեր ինքնապաշտպանութեան միջոցները պէտք է ըլլան նոյնքան լայն ու բազմազան։

Որքան մեծ աղէտը, այնքան ուժեղ դիմադրութիւնը. որքան փոթորկոտ մեր ճակատագիրը, այնքան լայն ու հզօր մեր նաւը ամուր ու հաւատարակշիռ պահելու ջանքերը։

Այս ջանքերուն մէջ փոքր գէր մը չէ վերապահուած մեր մշակոյթին ու մանաւանդ մեր գրականութեան։ Մինչ, քանի կ'աւելնայ տագնապը, քանի քաղաքական մտահոգութիւնները կը պաշարեն մեզ, այնքան աւելի կ'անտեսուին, կը լքուին մեր մտքի ու մշակոյթի ճակատները։

Ի՞նչ կուտայ ամէն մէկ գաղութ հայ մշակոյթին, ի՞նչ աշխատանք ու զոհաբերութիւն յանձն կ'առնենք յանուն գիրքի ու գրականութեան։ Պըրպտում մը ցոյց պիտի տար մեր աչխատանքին ու զոհաբերութեան չափը.— քանի մը հանդէս, քանի մը դասախօսութիւն եւ մէկ երկու թերթ գլխաւոր գաղութներու մէջ։

Մինչ հարկ էր, որ այս ծանր տարիներուն, մասնաւորապէս, կրկնապատկուէր մեր եռանդը, բազմապատկուէին մեր զոհաբերութիւնները, ոչ թէ իբրեւ անհատական պահանջներու զոհացում, այլ իբրեւ արտայայտութիւն ազգային պաշտպանութեան ըզպացումին։

Հարկ էր որ արժէքով թերթ մը հանդէս մը, գիրք մը կամ հրատարակութիւն մը, նկարի կամ երգի հանդէս մը, դասախօսական հաւաքոյթ մը կամ հայ դպրոց մը հանդիսին բարձրագոյն յաջողութեան, իրենց չուրջ ստեղծելով ազգային ու ժողովրդական այն ոգեւոր մթնոլորտը, որ անհրաժեշտ է նման ձեռնարկներուն, ցեղային առաքելութիւններ կատարելու համար։

Ամէնէ ժողովուրդ, տագնապի մէջ, ազգային պաշտպանութեան համար անհուն զոհողութիւններ կը ստանձնէ։ Ահաւոր զումարներ կը յատկացնեն բոլորը, ոչ միայն զէնք ու զրահի համար, այլ եւ մշակութային ձեռնարկներու համար։

Ի՞նչ կ'ընենք մենք, թողունք բուն ճակատը, մշակոյթի ճակատին վրայ. ի՞նչ զոհողութիւններ կը ստանձնենք, ի՞նչ զումարներ կը տրամադրենք, ողեպէս բարձրանալու, չունչ ու կորով ստեղծելու համար։ Մեր զրականութիւնը՝ հաղիւ կը շնչէ, մեր հրատարակութիւնները կը ծածկուին փոշիով, մեր թերթերն ու հանդէսները յաբատեւ տագնապի մէջ են եւ մեր դպրոցները կը ժպտունին, փոխանակ վայլ առնելու տարուէ տարի։

Կասկած չկայ, որ ձենք անդրադառնար թէ ի՞նչ զառիթափի վրայ ենք կեցած եւ ո՛ւր կ'երթանք։ Պատրանք ու պատրուակ դարձուցած ենք օրուան տագնապները, առանց մտածելու որ մեր հայրերը ճիշդ այդ տագնապներու ընթացքին է որ ստեղծած են ցեղային այն զանձերը, որ մեր պարծանքը կը կազմեն այսօր։ Տագնապն ու մղձաւանջը, երբեք պակաս չեն եղած հայ կեանքէն. պիտի պայքարինք ու պիտի ստեղծենք. պիտի դիմադրենք ու տէր պիտի կենանք։ Հաւաքական ջանքերով գործի պիտի լծուինք, բոլոր ճակատներուն վրայ եւ մանաւանդ մշակոյթի ճակատին վրայ։ Ազգային զգացումով ու մտահոգութիւններով պիտի մօտենանք հայ մտքի արտայայտութեանց, ոչ միայն պիրն ու արուեստը վրկելու, այլ հայ ցեղը պաշտպանելու համար։ Ունինք կազմակերպութիւններ, որոշ ճակատներու համար։ Ինչո՞ւ կերպ մը չգտնել հայ մտքի եւ մշակոյթի լքուած ճակատին համար. ինչո՞ւ հաւաքական, ազգային զոհողութիւններ չստանձնել այդ ճակատի պաշտպանութեան համար։

Այս մութ օրերուն, հայ ժողովուրդը, իր տագնապին մէջ եւ ճիշդ այդ տագնապին համար պէտք է մտածէ այս մասին։ Եւ ամէնէն առաջ՝ հայ մտաւորականութիւնը։ Քանի լքումը դեռ չէ դարձած համատարած ու անդարմանելի։

Եւ այս՝ ոչ միայն յանուն ազգակա-նութեան եւ արուեստի.

Ոչ թէ յանուն հայ ժողովուրդին, այլ յանուն ազգային պաշտպանութեան։

(Խմբագրական «ՅՈՒՍԱԲԵՐ»ի

ԹՈՒՐՔԻՈՅ
ՁԱՐՏԱՐԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՀՆԳԱՄԵԱՅ ԾՐԱԳԻՐԸ

(Բ. եւ վերջին մաս)

Այն առեն կառավարութեան նախձեռնութեամբ ստեղծուեցաւ Սուլթան Պանքը (1933), սկիզբը 20 միլիոն թրքական ոսկի դրամագլուխով, այժմ 80 միլիոն։ Այս դրամատան գործունէութեան ծրագիրն էր բանեցնել պետական գործարաններ համաձայն ազգային տնտեսութեան կարիքներուն, ինչպէս նաեւ հիմնել արհեստանոցներ, ստեղծել ռոճիկներ արտասահմանի մէջ ուսանող պահելու համար։ Այդ պայմաններուն մէջ հրապարակ հանուեցաւ ճարտարարուեստական հնգամեայ ծրագիրը։ Այս-պէս, Սուլթան Պանքը իր ամբողջ գործունէութիւնը նուիրեց հետեւեալ 5 ճիւղերուն.

1— Հիւսուածեղէնի ճարտարարուեստ (բամպակ, բուրդ, կանեփեղէն)։

2— Հանքային ճարտարարուեստ (երկաթ, հանքածուխ, պղինձ, ծըծումբ)։

3— Մէյլիւղի ճարտարարուեստ (թուղթ, խաւաքարդ, արհեստական մետաքս)։

4— Ապակեղէն ճարտարարուեստ (շիշ, ապակեղէն, յախճապակի)։

5— Քիմիական ճարտարարուեստ։ Այս արդիւնաբերութեանց մէջ հիւսուածեղէնը կը զբաւէ գլխաւոր տեղը։ Կառավարութիւնը, իր կարգին, ուժգուսւ բամպակամշակութեան, բաշխելով ընտիր հունտ, որպէսզի արդիւնաբերութիւնը յատկապէս բաղկանայ «քլիվլընտ» եւ «ազալա» կոչուած տեսակներէն, երկարաթել, որովհետեւ ասոր համար ոչ միայն հարկ պիտի չըլլայ նախապէս ներածել, այլեւ չատ կը փնտռուի համաշխարհային չուկաներու վրայ։

Թուրքիա չուտով ինքնաբաւ կը դառնայ հիւսուածեղէնի ճարտարարուեստի ոլորտին մէջ, ուր նոյնիսկ կըրնայ որոշ փոխադրութեամբ բամպակ արտածել, յօգուտ իր առեւտրական կշիռին։

Գալով հանքային ճարտարարուեստին, Սուլթան Պանք չհաղորդել ակըսաւ Քէչիբուրնուի ծծումբի եւ Զոնկուլտաքի ածուխի հանքերը 1935էն ասդին։ Հանքածուխի արտադրութիւնը աւելի մեծ չափով պիտի կատարուի անշուշտ, երբ գործել սկսին ձուլարանները՝ համաձայն անգլիական ճարտարարուեստի ծրագրին։ Ծծումբի արտադրութիւնը եւս չուտով կը հասնի այնպիսի չափերու, որ կը յուսացուի վերջ դնել ներածումին (տարեկան 3 — 4 հազար թոն)։

Գալով ֆէլմելոզի ճարտարարուեստին, ծրագրուած էր հիմնել թուղթի երկու գործարաններ, մէկը սկսաւ բանիլ Իզմիրի մէջ 1936 հոկտեմբերէն ի վեր, տարեկան 12.000 թոն արտադրութեամբ, միւսը կը չինուի 1936 նոյեմբերէն ի վեր նոյն չրջանին մէջ, նոյնքան տարողութեամբ։ Արդ, Թուրքիա տարեկան կը ներածէր 19 — 23 հազար թոն թուղթ, կը տեսնուի որ չուտով Թուրքիա պէտք չունենար Թուղթ ներածելու։ Այս տարի փետրուարին Աթաթիւրք պատուոյ կառավար արհեստակցական մետաքսի գործարանին բացումը։ Ծրագիր մը պահուած է անոտա տնկելու, որպէսզի նախանիւթ չպակսի այս ճարտարարուեստին համար։

Ապեղէնի ճարտարարուեստին ծրագիրը եւս գլուխ կը հանուի յաջողպէս։ Փաչալաղչէլի ապակիի գործարանը հիմնուեցաւ Ֆրանսացի ճարտարագէտներու կողմէ եւ կը գործէ 1935 դեկտեմբերէն ի վեր, իսկ Քէօթահիոյ մէջ, որ հին կեդրոն մըն է ծաղկաղարդ յախճապակեղէնի՝ մանր արհեստաւորներու ձեռքով, ի մտոյ կը բացուի ճենապակիի արդիական գործարան մը։

Քիմիական ճարտարարուեստը, սակայն, չատ ետ կը մնայ։ Միայն Սպարթայի վարդի իւղի գործարանն է որ կը բանի 1935 մայիսէն ի վեր։ Իսկ քիմիական այլ նիւթերու արդիւնաբերութիւնը (ֆլօր, սուտ ֆոսֆիտ, սիւփէրֆոսֆաթ եւայլն) տակաւին ուսումնասիրութեան տակ է, միայն գործարաններուն տեղերը ճշդուած են։

Քիմիական ճարտարարուեստին ետ մնալուն մեղքը կ'իյնայ գերմանական հաստատութեանց վրայ, որոնք մեր-ժած են հիմնել գործարանները, երբ իրենց առաջարկուած է փոխարժէքը առանձ թրքական ապրանքով։

Ճարտարարուեստական այս հսկայ ծրագիրը անշուշտ պիտի պահանջէր նաեւ պէտք է ստանամ զայն...

— Ո՛չ, խնդրե՛մ, պիտի չերթաս, ապաչեց Տայանա. չափազանց վտանգաւոր քայլ է մանաւանդ որ քեզի կը հետապնդեն հիմա Պոլսոյ մէկ ծայրէն միւսը. խնդրեմ Սուլթին, պիտի չերթաս, վտանգին մէջ պիտի չնետուիս այլեւս... երկու գիշերէ ի վեր քուն քնացած չեմ, որովհետեւ չէի գիտեր թէ ինչ պատահած էր քեզի... խընդրե՛մ, մի՛ երթար... քեզ այնքան կը սիրեմ...

Ամբողջ վայրկեան մը Սուլթին չկրցաւ հաւատալ թէ այդ բառերը արտասանողն էր Տայանան։ Ցետոյ նայեցաւ անոր աչքերուն որոնք հիմա արցունքով լեցուած էին։

— Տայա՛նա, իրա՞ւ կ'ըսես, հարցուց հեւալով։

— Ա՜խ՝ նէ տղայ, անշուշտ իրաւ կ'ըսեմ...

Ու արցունքի կաթիլները սահեցան աղջկան այտերն ի վար։

— Օ՜հ, Աստուա՜ծ իմ... չէի գիտեր... ինչպէ՞ս կ'ուզէիր որ գիտնայի...

— Դա՛ւն, դուն չկա՞ս, կ'ուզես որ ամէն բան առջեւդ նետեն որպէսզի հաւատաս... դիտեմ որ զիս կ'ատես... ինչ ընեմ...

Տայանա սկսաւ դառնօրէն արտասուել ու անդին դարձաւ։

— Քեզ կ'ատե՞մ... Աստուած վկայ թող ըլլայ որ կը պաշտեմ այն հողը որուն վրայ կը քալես...

Սուլթին բռնեց անոր թեւէն ու անճարակ չարժումով մը դէպի իրեն քաշեց զայն։

Ցետոյ, հին օրերու հարէմին թըքուհիները վարդուրող այդ վանդակներուն տեսին անոնք զրկեցին դիմար ու անյագօրէն սիրուրտեցան, մոռնալով ժամը, վայրը եւ վտանգը եւ բոլորովին անձնատուր այն յափշտակող երանութեան զոր առաստրէն կը վայելէին հիմա։

Նորէն իրարմէ բաժնուեցան. Տայանա իր արցունքները սրբեց պըզուկիկ թաշկինակով մը ու կակազեց.

— Խենթո՛ւկ, ինչո՞ւ մինչեւ հիմա չըսիր թէ կը սիրէիր զիս...

— Հապա դո՞ւն, խենթ աղջիկ, ինչո՞ւ համար առիթ մը չտեղեցիր որ ըսէի. կը յիշե՞ս այն օրը երբ միասին Բէյ կ'առնէինք ձեր տունը... որեւէ բան չհասկցուցիր. մինչդեռ ես իմ չեղբօս եկածը ըրի...

— Բայց այն ատեն քեզի հաղիւ թէ կը ճանչնայի եւ պէտք է վստահ ըլլայի...

Անյագօրէն իրարու աչքի մէջ նայեցան՝ բոլորովին անհաղորդ իրենց չրջապատին ու երջանկութեամբ պինդ նուագած։ Դարձեալ տարիներ փոխանակեցին ու իրար զրկեցին։ Ցետոյ հեւալով բաժնուեցան ու Տայանան փսփսաց ցած ձայնով.

— Տակաւին կրնանք այստեղ մնալ, չվերադառնանք, կ'ըսե՞յ հին պալատը ու զեղեցիկ պարտէզներ կան. ետքը երթանք պատինք՝ թէ թեւ, որպէսզի բոլորովին համոզուիմ թէ խնայ քիչ մը ատեն... նորէն մինակ պիտի մնամ չուտով եւ քու մասիդ պիտի մտածեմ...

— Ինչպէս որ կ'ուզես, հոգիս...

Սուլթին աղջկան թեւը մտաւ ու իր ափին մէջ սեղմեց անոր մատները։ Ցետոյ աղօտ կերպով լուսաւորուած սենեակներէն անցնելով, դանդաղ քայլերով հասան չէնքին գլխաւոր մուտքին առջեւ։

— Հոգիս, կ'ուզեմ նորէն լսել այն բառերը զորս քիչ մը առաջ արտասանեցիր — «քեզ այնքան կը սիրեմ»...

(Շար.)

« ՅԱՌԱՋ »ի ԹԵՐԹՕՆԸ (106)

ՍՏԱՄՊՈՒԼԻ ՆԵՐՔԻՆԻՆ
The Eunuch of Stamboul

By DENNIS WHEATLEY

Frans : J. M.

Գրեց՝ ՏԷՆՆԻՍ ՀՈՒԻԹԼԻ

Թարգմ. Ծ. Մ.

— Ա՜խ՝ զէ Սուլթին, սարսափելի օրեր անցուցեր ես, բացագանչեց Տայանա երբ երկուսասրդը աւարտեց իր պատմութիւնը. եւ սակայն հրաշալի գործ տեսեր ես...

— Իրա՞ւ կ'ըսես, ուրեմն անկեղծօրէն կը հաւատա՞ս ատոր, հարցուց Սուլթին ուրախութեամբ։

— Ձեմ հանդիպած այս տեսակ գործերու մէջ փորձառութիւն ունեցողի մը կամ սկանակի մը որ աւելի լաւ աչխատանք կատարած ըլլար...

— Իրա՞ւ, իրա՞ւ կ'ըսես Տայանա, կրկնեց ուրան վախնալով որ ան թերեւս կը ծաղրէր զինքը. թէեւ անոր ձայնին չէշտը անզգալաբար տպաւորութիւն մը ձգած էր իր վրայ։

— Այո՛, պատասխանեց աղջիկը. անշուշտ հիմա դիւրին է եւ առանձին այն տիմար բաները զորս քեզի ըսի չարաճներ առաջ. պիտեմ որ իմ մասիս ունեցած կարծիքդ ալ փոխած չես, բայց չատ չար, չիմար ու անբիրա եղայ քեզի հանդէպ, մինչդեռ, ընդհակառակն, պարտաւոր էի քեզ քաջալերել ու օժանդակել այս դժուարին պաշտօնիդ մէջ...

— Պարո՞ւպ խօսք, բողոքեց Սուլթին. անդամ մը որ արդէն գործի լծուկանք, դուն քու կարելիդ ըրիր. հըրաչալի կերպով վարուեցար, Տայանա՛...

— Երանի՛ թէ ես ալ այդ կարծիքը ունենայի, ըսաւ աղջիկը գլուխը օրօրելով։ Ինչ որ է, վտանգ Տէրոյը ու ամէն բան վերջացաւ. հիմա քրնաս նախ պէտք է ստանամ զայն...

— Ո՛չ, խնդրե՛մ, պիտի չերթաս, ապաչեց Տայանա. չափազանց վտանգաւոր քայլ է մանաւանդ որ քեզի կը հետապնդեն հիմա Պոլսոյ մէկ ծայրէն միւսը. խնդրեմ Սուլթին, պիտի չերթաս, վտանգին մէջ պիտի չնետուիս այլեւս... երկու գիշերէ ի վեր քուն քնացած չեմ, որովհետեւ չէի գիտեր թէ ինչ պատահած էր քեզի... խընդրե՛մ, մի՛ երթար... քեզ այնքան կը սիրեմ...

Ամբողջ վայրկեան մը Սուլթին չկրցաւ հաւատալ թէ այդ բառերը արտասանողն էր Տայանան։ Ցետոյ նայեցաւ անոր աչքերուն որոնք հիմա արցունքով լեցուած էին։

— Տայա՛նա, իրա՞ւ կ'ըսես, հարցուց հեւալով։

— Ա՜խ՝ նէ տղայ, անշուշտ իրաւ կ'ըսեմ...

Ու արցունքի կաթիլները սահեցան աղջկան այտերն ի վար։

— Օ՜հ, Աստուա՜ծ իմ... չէի գիտեր... ինչպէ՞ս կ'ուզէիր որ գիտնայի...

— Դա՛ւն, դուն չկա՞ս, կ'ուզես որ ամէն բան առջեւդ նետեն որպէսզի հաւատաս... դիտեմ որ զիս կ'ատես... ինչ ընեմ...

Տայանա սկսաւ դառնօրէն արտասուել ու անդին դարձաւ։

— Քեզ կ'ատե՞մ... Աստուած վկայ թող ըլլայ որ կը պաշտեմ այն հողը որուն վրայ կը քալես...

Սուլթին բռնեց անոր թեւէն ու անճարակ չարժումով մը դէպի իրեն քաշեց զայն։

Ցետոյ, հին օրերու հարէմին թըքուհիները վարդուրող այդ վանդակներուն տեսին անոնք զրկեցին դիմար ու անյագօրէն սիրուրտեցան, մոռնալով ժամը, վայրը եւ վտանգը եւ բոլորովին անձնատուր այն յափշտակող երանութեան զոր առաստրէն կը վայելէին հիմա։

Նորէն իրարմէ բաժնուեցան. Տայանա իր արցունքները սրբեց պըզուկիկ թաշկինակով մը ու կակազեց.

— Խենթո՛ւկ, ինչո՞ւ մինչեւ հիմա չըսիր թէ կը սիրէիր զիս...

— Հապա դո՞ւն, խենթ աղջիկ, ինչո՞ւ համար առիթ մը չտեղեցիր որ ըսէի. կը յիշե՞ս այն օրը երբ միասին Բէյ կ'առնէինք ձեր տունը... որեւէ բան չհասկցուցիր. մինչդեռ ես իմ չեղբօս եկածը ըրի...

— Բայց այն ատեն քեզի հաղիւ թէ կը ճանչնայի եւ պէտք է վստահ ըլլայի...

Անյագօրէն իրարու աչքի մէջ նայեցան՝ բոլորովին անհաղորդ իրենց չրջապատին ու երջանկութեամբ պինդ նուագած։ Դարձեալ տարիներ փոխանակեցին ու իրար զրկեցին։ Ցետոյ հեւալով բաժնուեցան ու Տայանան փսփսաց ցած ձայնով.

— Տակաւին կրնանք այստեղ մնալ, չվերադառնանք, կ'ըսե՞յ հին պալատը ու զեղեցիկ պարտէզներ կան. ետքը երթանք պատինք՝ թէ թեւ, որպէսզի բոլորովին համոզուիմ թէ խնայ քիչ մը ատեն... նորէն մինակ պիտի մնամ չուտով եւ քու մասիդ պիտի մտածեմ...

— Ինչպէս որ կ'ուզես, հոգիս...

Սուլթին աղջկան թեւը մտաւ ու իր ափին մէջ սեղմեց անոր մատները։ Ցետոյ աղօտ կերպով լուսաւորուած սենեակներէն անցնելով, դանդաղ քայլերով հասան չէնքին գլխաւոր մուտքին առջեւ։

— Հոգիս, կ'ուզեմ նորէն լսել այն բառերը զորս քիչ մը առաջ արտասանեցիր — «քեզ այնքան կը սիրեմ»...

(Շար.)

ՊԱՏՄՈՒԱԾՔ ՄԱՍՆԱՒՈՐ

Ես նախ դիմեցի Հայկազն Վարդապետին՝ ի նկատի ունենալով անոր ուսումնասիրութիւնները Հայ Դիցաբանութեան մասին։ Ան ինծի ըսաւ թէ ինքը ոչ մէկ ժամանակ ուսումնասիրած է այդ նիւթը, եւ թէ ինծի պիտի ուղղորդէ ուրիշ մը, որ կրնայ ինծի օգնել։ Ան ինծի յանձնարարեց երթալ Տիար Մինասեանի մօտ, որ ամէն կողմէ ինծի պիտի օգնէ։

Ես ալ գացի Տիար Մինասեանի մօտ, որ ինծի ըսաւ թէ ինք ոչ մէկ ժամանակ ուսումնասիրած է այդ նիւթը, բայց ինծի պիտի ուղղորդէ Տիար Ալիշանի մօտ, որ ինծի պիտի օգնէ։ Ես ալ գացի Տիար Ալիշանի մօտ, որ ինծի ըսաւ թէ ինք ոչ մէկ ժամանակ ուսումնասիրած է այդ նիւթը, բայց ինծի պիտի ուղղորդէ Տիար Մինասեանի մօտ, որ ինծի պիտի օգնէ։

տութեանց փակումէն ի վեր: Շարաթ օր բանուորներ վար կ'առնէին գմբէթ - ներուն եւ զանգակատան խաչերը,— իրրեւ նախաքայլ քանդումի: Կեդրոնական գմբէթին վրայ դրուած մեծ խաչը վար կախուած է չղթայի մը ծայրէն: Այս եկեղեցին վերջերս վերանորոգուեցաւ մեծագումար ծախքով, օրթոտոքս հա - ւատացեալներու զոհողութեամբ: Յեղափոխութենէն ի վեր այստեղ կը պահ - ուի մանաւորապէս նուիրական իկոնա մը (պատկեր), զոր ժողովրդական աւանդութիւնը կը վերագրէ Ղուկաս առաքեալին: Այս մասունքին ճակատա - գիրը մեծ մտահոգութիւն կը պատճառէ հաւատացեալներուն: Եկեղեցին կը դանուի Սթալինի ճամբուն վրայ որ իր ամառանոցը կ'առաջնորդէ: Սթալինի հակակրօնական տեսլութիւնը կը սկսի Թիֆլիսէն, երբ զպրանոց կը յաճախէր: Սակայն քանդումին պլիսեւոր պատճառը այն է որ քրիստոնէական մեծ տօնե - րուն առթիւ եկեղեցին պաշարուած էր ահագին բազմութիւններով որոնք համ - բերութեամբ կարգի կը սպասէին, երկար սպասողութեանց դոնէ մէկ մասը տեսնելու համար :

Այժմ Մոսկուայի մէջ բաց մնացած միակ մեծ եկեղեցին կը դանուի Լը - խովսկայա եւ նոյնպէս վտանգուած է: Նովկորոտի Չնորհապուրկ մետրոպոլի - տը, Սէրգէյ, որ 11 տարիէ ի վեր պատրիարքի պաշտօնը կը վարէր եւ կանո - նաւորապէս կը պատարագէր վակուած եկեղեցիին մէջ, պաշտօնական մամու - լին կողմէ կ'ամբաստանուի իրրեւ գործակից ֆաշական պետութեանց գործա - կալներուն :

Նոր խռովութիւններ Պաղեստինի մէջ

Երուսադէմէն կը հեռագրեն թէ երկուշաբթի օր նոր դէպքեր պատահեցան Հայֆայի մէջ: Սպաննուեցան 10է աւելի մարդիկ: Աւելի մեծ թիւ մը կը կազ - մեն վիրաւորները, որոնց մէջ կը դանուին անգլիացի սպաներ եւ զինուորներ :

Հայֆայի կեդրոնին մէջ Արաբները քարկոծեցին պահականոցը, ուստի մը նետելէ վերջ հանրակառքի մը վրայ որ լեցուած էր Հրեաներով: Ոստիկանու - թիւնը կրակ բացաւ պարապ փամփուշտներով, եւ երբ ամբոխը մերժեց հե - ռանալ, անգլիացի նաւաստիներ յարձակում գործեցին սուիններով: Նազարէթի մէջ ալ երկու ոստիկաններ նետուեցան հրէական հանրակառքի մը վրայ: Ոստիկանները նաեւ երուսադէմի հին քաղաքին վրայ: Հեռագրի եւ հեռաձայնի թելերը կարուած են չատ մը վայրերու մէջ: Հայֆայի արաբական բոլոր խա - նութները փակուած են, իսկ բաց մնացած հրէական խանութները կը քարկոծ - ուին, հակառակ ցամաքային եւ ծովային զինուորներու պաշտպանութեան : Հայֆայի հարաւային մասին մէջ 300 Արաբներ յարձակեցան հրէական գաղու - թի մը վրայ, վիրաւորելով չատ մը բնակիչներ: Թուլքարէմի մէջ ահաբեկիչ - ներ սափրիչի մը խանութը խուժելով տեղն ու տեղը սպաննեցին ոստիկանա - կան քննիչ մը, Արաբ, երբ կ'սափրուէր :

Այդ օրը Պաղեստին հասան եգիպտոսէն զրկուած օդնական զինուորներ:

Անգլիոյ երեսփ. ժողովին մէջ, պատասխանելով զանազան հարցումներու, գաղթային նախարարը հաւաստեց թէ կառավարութիւնը ձեռք առած է բոլոր անհրաժեշտ միջոցները, զսպելու համար ապստամբութիւնը եւ թէ նոր զինուոր - ներ պիտի զրկուին :

Նիւ Եորքի Փարիզ 16 ակէս ժամերն

Ամերիկայի օդաչու մը, Հօուրըտ Հիւզ, որ միլիոններ վիսած է իբրեւ չարժանկարի արտադրիչ եւ որ անցեալ չաբթու ձեռնարկած էր աշխարհի չըր - ջանը կատարելու, չայոզնացաւ կոտրել համաչխարհային մրցանիշը: Օդանա - ւորդը Նիւ Եորքէն Փարիզ, Պուռժէի օդակայանը հասաւ 16 ժամ 31 վայրկեա - նէն, երկուշաբթի իրիկուն ժամը 4.51ին: Նիւ - Եորք - Փարիզ առաջին ուղ - ղակի թռիչքն է այս: Գնդ. Լինտպէրկ նոյն ճամբան կատած էր 33 ժամ 20 վայրկեանէն, որով նոր ախոյեանը չահած կ'ըլլայ 16 ժամ եւ 49 վայրկեան :

Այս չայթանակը աննկարագրելի խանդավառութիւն պատճառեց Մ. Նա - հանդներուն մէջ: Թերթերը սիւնակներով նկարագրութիւններ կը հրատարա - կեն: Ցաղթականին կ'ընկերանան երկու տեղակալներ, անթելի մեքենավարը եւ մեքենագէտ մը: Ցանդուդն օդանաւորդները հանդստանալէ անմիջապէս վերջը, դիչերուան ժամը 1.24ին ճամբայ ելան դէպի Մոսկուա: Իրենց թռիչքին ժամական միջին արագութիւնը եղած է 353 քիլոմեթր 980 :

*** Օդանաւով աշխարհի չրջանը կատարելու առաջին փորձը տեղի ունե - ցաւ 1924ին, երեք ամերիկացի սպաներու կողմէ, եւ տեւեց 175 օր: Երկրորդ փորձը կատարեց զերմանական ցկիլինը, տասնեւրով 20 օր եւ 4 ժամ: Եր - րորդը՝ 1931ին, (Ամերիկացիներ), 8 օր եւ 15 ժամ եւ 51 վայրկեան տեւողու - թեամբ: Չորրորդը՝ 1933ին, (դարձեալ Ամերիկացի), 7 օր, 13 ժամ, 50 վայր - կեան :

ՋԱՆԱՉԱՆ ԼՈՒՐԵՐՔԱՆԻ ՍԸ ՏՈՂՈՎ

ԱՆԳԼԵԻՏԱԼԱԿԱՆ համաձայնութեան գործադրութեան մասին նոր տե - սակցութիւն մը ունեցան Իտալիոյ արտաքին նախարարը եւ Հռոմի անգլիական դեսպանը: Ձամբան բաւական հարթուած կը թուի, քանի որ ընդհանուր հա - մաձայնութիւն գոյացած է Սպանիոյ օտար կամաւորները ետ կանչելու համար :

ՍՊԱՆԻՈՑ օտար կամաւորներու չուտս կոչման խնդիրը միչտ կը դրաղեցնէ մեծ պետութիւնները: Հակառակ գոյացած համաձայնութեան, կը կարծուի թէ 3 —5 ամիս պիտի տեւեն վերադարձի գործողութիւնները , եթէ նոյնիսկ նոր բարդութիւններ չծագին: Ամբողջ ծրագիրը, որ 2.750.000 անգլ· ոսկի պի - տի արժէ, չի կրնար գործադրուիլ առանց Սպանիոյ երկու կառավարութեանց վերջնական հաւանութեան :

ԵՐՋՆԿԱՅԻՆ կը հեռագրեն թէ ահռելի ողողումներ աւերեցին ամբողջ չրջանը: Առաջին տօթիւ երեւան հանուեցան 19 մեռեալներ :

ՁԵՒՈՍԼՈՎԱԿԻՈՑ Գերմաններու հարցին տօթիւ, վերմանական մամուլը նորէն կրակ կը տեղայ չեխական կառավարութեան դէմ, անոր վրայ ձգելով ապագայ բոլոր պատասխանատուութիւնները: Այս տօթիւ կը պահանջէ որ Անգլիա միջամտէ, եթէ իրապէս խաղաղութիւն կ'ուզէ :

ՁԱՓՈՆ վճռապէս մերժեց որ եւ է օտար միջամտութիւն՝ չինական պատե - բազմին մէջ :

ԻՐԱՆԵԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ (Պարսկաստան) պայմանագրութիւններ կնքեց երկու զերմանական ընկերութեանց հետ, երկաթի հանքեր չահագործե - լու համար թէհրանէն 20 քիլոմեթր հեռու: Մանգադաներ 30 միլիոն մարք կը հաչուեն այս պայմանագրութեանց արժէքը: Ի· Մութենէն վերջ, Գերմանիա երկրորդ տեղը կը բռնէ Իրանի արտաքին առեւտուրին մէջ :

ՖՐ. Կ. ԽԱՉԻ ԿԱՑԱՆԻՆ Ա. ԽՈՒՄԲԻՆ ՄԵԿՆՈՒԻՄԸ

Ֆ· կապոյտ խաչի վարչութիւնը կը խնդրէ մեզմէ ծանուցանել թէ մասնա - ճիւղերու կողմէ ընտրուած եւ պատրաստուած տղաքը պէտք է ներկայ ըլլան յառաջիկայ Ուրբաթ օր Յուլիս **15**ին, ժամը **11**ին **Gare Montparnasse:** Ընկերու - թեան կողմէ արտօնուած է հաւաքուիլ **Ancienne gare Hall d'entrée** (մեծ սան - դուղներէն բարձրանալով աջ կողմը) :

Տղաքը իրենց հետ պէտք է ունենան ԵՐԿՈՒ ԱՆԴԱՄ ճաշելու չափ ուտե - լիք: .

«Յառաջ» կր ծախուի

Place des Fêtes-ի լրագրավաճառի խանութը գոց ըլլալով Յու - լիս 14էն մինչեւ 18ը, «Յառաջ» կը ծախուի Place des Fêtes-ի ծանօթ հայ նպարավաճառին քով, S. Baldjian 2 Rue de Crimée (Տոքթ. Գըր - գոյեանի քլինիքին քովը):

ԽԱՆԱՍՈՒՐԻ ԱՐՇԱԻԱՆՔԻ 41ՐԴ ՏԱՏԵՂԱՐՁԸ ԿԸ ՏՕՆՈՒԻ

ՇԱՎԻԼԻ ԱՆՏԱՌԻՆ ՄԷՋ Յուլիս 31ին կիրակի օր, է. Ց. Դ. «Ար - զուեթեան» խումբին կողմէ: Այցելութիւն իշխան Արզուեթեաններու չիրիմին, Մանրամասնութիւնները մօտ օրէն:

ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԷՍ

Ֆ. Կ. ԽԱՉԻ *Romainville-Montreuil* ՆՈՐԱԿԱԶՄ ՄԱՍՆԱՂԻՒՂԻ

16 **Յուլիս, Շաբաթ գիշեր ժամը 9էն մինչեւ լոյս**

Salle des Fête de la Mairie· Porte des Lilas**էն առնել օթօպիւս 95 B**

ԿԸ ՆԱԽԱԳԱՀԷ Ս. ԱՂԱՊԱԼԵԱՆ

ԿԸ ԲԱՆԱԽՕՍԷ ՕՐ. ՑԼՕՐԱ-ԱՆՆԱՀԻՏ

Գեղեցիկ անակնկալներ, ընտիր ճաշ, հայկական եւ եւրոպական պարեր ճոխ եւ աժան պիւֆէ պատրաստուած անդամուհիներու նուէրներով: Մուտք 5 ֆրանք:

Ֆ. Կ. ԽԱՉԻ ՓԱՐԻԶԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ ՏԱՐԵԿԱՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍԸ

17 **Յուլիս, կիրակի առաւօտեան ժամը 9էն գիշերուան 11.30**

ՐՈՊԷՆՍՈՒԻ ՄԷՋ, *Grand Arbre, Maison Fiquet*

Գեղարուեստական հաճելի անակնկալներ, ընտիր նուագախումբ Անձրեւի պարագայի գոց սրահ: Ճոխ պիւֆէ պատրաստուած խաչու - հիներու կողմէ. Մուտք 5 ֆրանք:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ.— Denfert էն առնել մեթրոյի դէպի Թոպէնսոն տանող գիծը, եւ կամ Բորթ տ'Օրլէանէն օթօպիւս Թիւ 128:

ՏԱՐԵԿԱՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

ԱՄԱՍԻԱ-ՄՈՐՋՈՒԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

14 **Յուլիս, Հինգշաբթի ամբողջ օրը Սէն - Լուի կրչն - փէն, եօթ - նեղբայրեանի հովասուն ագարակը:**

ԿԸ ԽՕՍԻ ՏՈՔԹ. ԼԵՒՈՆ ՉԱՄԲՐՋՈՒՄԵԱՆ

Կը ներկայացուի «ՇԱՏԱԽՕՍ ՍԱՓՐԻՉԸ» վեկավարութեամբ Թ. ԻՆՁԻԵԱՆի եւ մասնակցութեամբ Գ. Գ. ԱԼԻՖՍԱՆԵԱՆի եւ ԳԱՍՄԱ - ՁԵԱՆի: Կը նուագէ հայրենակից Չուքախահար Գ. ՆԱԶԻԿԵԱՆ: Գարե - րու ընթացքին կը նուագէ Գ. ՍԻՄՈՆ ԵՒՇՄԱՆԵԱՆ իր խումբով: Պարգեւաւոր խաղեր եւ զուարճալի անակնկալներ: Առատ կերուխում: Միութեանս վիճակահանութիւնը կը քաշուի տեղւոյն վրայ:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ.— Ուղիվար կաթիպալաին առնել 15, 16, 18 Թիւ ինքնաւարքերը եւ իջնել Սէն Լուի կրան փէն:

Ամսվերջի դպրոցական ճաշկերոյթ

ՓՈՐԹ Տ'ԻՒԱԼԻԻ ԴՊՐՈՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ Ս. ՅԻՒԼԻՆ ԿՈՂՄԷ

14 **Յուլիս, Հինգշաբթի ժամը 2·30ին Ցովհաննէսեանի սրահին մէջ, 15 Rue Pierre Curie, Bicetre (մէթրօ փորթ տ'Իթալի):**

Ընդ. արտասանութիւն, ներկայացում, պար եւ զանազան ուրա - կնկալներ երկսեռ աշակերտներու կողմէ: Մուտք 3 ֆրանք:

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ

ՄԱԳԱՂԱԹՆԵՐ

(Գերբուածներ)

ԱՇԱՐՈՆ ՏԱՏՈՒՐԵԱՆ



Փառատիպ հատոր մը, **300** էջ, Տպուած սակաւաթիւ օրինակներով

Գլուխներ այս հոյակապ էջերը - ղագիրքէն.—

ՑԱՑԳԱԲԱՂԱՔ
ՍԷՐԸ ՓՈՒՇԷ ՊՍԱԿՈՎ
ՏԵՂՁ ՄԱՐԴԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ
ԳԵՂԵՑԱԿԱՆՔ
ԲԱՆԱՍՏԵՂԾԸ Կ'ԱՏՈՒԱԾԱՆԱՑ
ՍԻՐՏՍ ԿԱՐՄԻՐ ՎԱՐԴԵՐՈՎ
ԻՆՔՆԱԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ
ԳԻՒՂԻ ՍԻՒԴԵՐ՝ ԵԱՐՈՋ ԵՐԳԵՐ

Գին 40 ֆրանք

Դիմել հեղինակին, 17, Rue Damesme, PARIS

ԵՓՐԱՏ ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲ

Ղեկավար Տ· ՕՆՈՍԵԱՆ

15, Rue du Pourtour, Clamart, Seine Tél. Observatoire 13 - 45

Հեռաձայնել երեկոները 8էն վերջ :

Հայկական, եւրոպական եւ կովկասեան եղանակներ: Միակ նուագախումբը հաճելի դարձնելու համար ձեր հանդէսները, հարսնիքները եւ հաւաքոյթ - ները :

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ (սահմանափակ թիւերով)

ՅԱԿՈԲ ՀԻՍԱՑԵԱՆԻ

ԴԻՒՅԱԶՆԱԿՑԱՆ ՀԱՑՈՐԴԻՆ

(Բնական լուսանկարներով)

ՄԿՐՏԻՉ ԵՕԹՆԵՂԲԱՅՐԵԱՆ

(Ուրֆայի հերոսամարտի ղեկավար)

Գին՝ Ֆրանսա 8 ֆրանք, Մուրիա 6 ֆրանք, Ամերիկա 50 սէնթ, Բոլոր ապսպրանքները կանխիկ

Մատնելու համար դիմել H. Issayan, 38 Rue du Mésnil. Asnières (Seine) France.

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ

ՆՇԱՆ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆԻ

«ԾԱՂՐԱՆԿԱՐՆԵՐ»

երգիծական նոր հատորը (**208** էջ)

Ծանօթ դէմքեր եւ ժողովրդական տիպեր: Վարդաստան մը ժպիտի, խինդի, ծիծաղի եւ հեգնութեան լաւագոյն նուէրը ինքզինքին ու բարեկամին.

«Մնդալ գիտցիր որ առողջութիւնն ու բախտն ալ քեզի խնդան» Մէտիգիան
«Իւրաքանչիւր ժպիտ հոգիին մէջ լոյս մը կը վառէ» Ասկէէպիան
«Ծիծաղը սրտին արեւն է» Հաճու - Հիքմա

Հատորին գինն է Ֆրանսա եւ գաղութներ 20 ֆր·, արտասահման 25 ֆր·:

Դիմել հեղինակին·— 21, Rue Ampère, Cachan, Seine, France:

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Է

«Մատենաշար Ռազմիկ»ի թիւ 2

Հրատարակութիւն Հայ Կամ· եւ Մարտիկներու Միութեան

ԼԵՌՆԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Գրեց՝ ՀՐԱՆՏ ՓԱՍՏՐՄԱՃԵԱՆ

Այս պիտական խիստ արժէքաւոր ուսումնասիրութիւնը գործն է Հրանտ Փաստրմաճեանի, որ վերջերս անգլիերէն լեզուով լոյս տեսած է Վաչինկթոնի մէջ: Մեր համակրելի աչխատակիցը չատ պարզ եւ հասկնալի լեզուով կ'ու - սումնասիրէ լեռնային զանազան ռազմաբեմները — մասնաւորաբար Հայկակա - նը — տալով անոնց չուրջ կատարուած զանազան նչանակալից դէպքերը, թուե - լով պատճառներ, թիւեր ու դէմքեր :

Հեղինակը սքանչելիօրէն կը պարզաբանէ լեռնային հողամասերու իւրա - յատուկ կազմութիւնը ու անոնց դերը ռազմական գործողութիւններու վրայ: Կը խօսի զանազան տեսակի կռիւներու մասին: Կը պարզէ լեռնային երկիրնե - րու պաշենաւորման եւ փոխադրութեանց դժուարութիւնները, լեռնային յա - տուկ զօրամասերու կազմակերպութիւնը, քարտերու դործը եւայլն:

Հայերէնի թարգմանուած այս գործը պիտի հետաքրքրէ անխտիր մեր նախկին ռազմիկները, նորակոչ զինուորներ, եւ առհասարակ ամբողջ հասա - րակութիւնը :

Գիրքը 100 էջէ աւելի, գեղեցիկ տպագրութեամբ եւ հաղուագիւտ նկար - ներով զարդարուած է :

ՀԱՑ — ԲՈՑԺ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ

Խմբագիր՝ Շ· ՆԱՐԴՈՒՆԻ ԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

Հաւաքածոյ կազմելու համար կը պակսին հետեւեալ թիւերը— 1, 2, 13, 20, 39: Առաջին տօթիւ պէտք ունինք թիւ 39ին: Վերադար - ձնողներուն պատրաստ ենք տալ պահանջուած փոխարինութիւնը (Շնորհակալութիւն մեր բարեկամներուն, որոնց բարեացակամութեամբ լրացուցինք քանի մը հաւաքածոյ):

ՀԱՑ ԲՈՑԺԻ երեք տարուան հաւաքածոն, առանց ապահովելու պակաս թիւերը, կը ծախուի 50 ֆրանք,— մօտաւորապէս 700 էջնոց հատոր մը:

Դիմել՝ 17, Rue Damesme, PARIS:

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ Հայ.Բոյժի 45, 46 եւ 47 թիւերը:

ՀԱՑ - ԲՈՑԺԻ տարեկան բաժնեգինն է Ֆրանսայի համար 30, արտասահ - մանի համար 35 եւ 40 ֆրանք (ըստ երկրի):

Հ. ՋԱՐԴԱՐԵԱՆ

ՎԻՐԱԲՈՑԺ - ԱՏԱՄՆԱԲՈՑԺ

44 Rue Dunkerque (ՄԷՐՁ ԿԱՊ ՏԻ ՆՈՐ)

Tél. Trudaine 42—69

Կ'ընդունի ամէն օր ժամը 14—20:

Առաւօտները ժամադրութեամբ:



Alimentation „TRÉVISE"

Իր անմահական «Moka» սուրճով

Café "HAREM„

5 ԱՌ ՀԱՐԻՒՐ ԲԱՑՕՌԻԿ ՉԵՂՉ

Ճոխ մեներանոց աթեւելեան եւ արեւմ - եան ընտիր ընդհէնների,

— Որ՝ ձեր աշխատութիւնի օրերուն իսկ չի մոռնար ձեզ, զոհացնելով ձեր բոլոր փա - փաքները, որ սատիկ տակն ալ որ դա - նուի...

ՄԵԹՐԱՒԱՆԱԿ ԵՒ ՓՈՒՐԱՔԱՆԱԿ

Livraison à domicile

Tél. Taitbout 40—63

30, Rue de Trévise Paris (9) Metro Cadet

ՀԱՑԵՐՈՒ ԺԱՄԱԴՐԱՎԱՃԱՐԸ

Ծարաւած Ֆ Լ Օ Ր Ի Ա

61, Rue Monsieur le Prince, Paris (6)

Մէքթօ՝ Օպէօն եւ Մէն Մինչեւ

Արեւելեան եւ եւրոպական խնամուած կերակուրներ :



ՐԱՔԸ ՏԻՒԶ

Ջուտ խազողէ քաշուած եւ անխոնով սլուարատուած ճայկական օղին է *ՐԱՔԸ ՏԻՒԶը*. Ջգուշացէք արուեստական օղիներէ ու ձեր սպասմունքը կ'այրէ եւ գիշերները ջուր կը խմցնէ եւ կը վնասէ ձեր առող - ջութեան: Խմեցէք միայն *ՐԱՔԸ ՏԻՒԶը* որուն անա - րատ, կազդուրիչ եւ ախորժաբեր ըլլալը ճաստատուած է:

Dalakupeian 8 Rue Suffren, Dépôt: 7 Rue de la Paix, Marseille· Tél. Dragon 70—89·

ԳԱՑԵՐ ՏԵՍԷՔ ԼԻՄՈՆԻ ՄԷՋ

Cinéma REXY

Cours Lafayette. angle Garibaldi

Le Gérant : H. STEPHAN

Imprimerie A. DER (AGOPIAN)

17, Rue Demesme — PARIS (13)

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՑԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ. ԳՐԱԿԱՆ

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
17, Rue Damesme, PARIS (13e)

Téléphone : Glacière 15 - 70
Chèque Postal Paris 1678 - 63
(ԵՐԹԵՒԵԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ :—

	ՏԱՐԵԿԱՆ	ՎԵՑԱՄՍԵԱՅ	ԵՒԱՄՍԵԱՅ
Ֆրանսա եւ Գաղութներ	150 ֆրանք	75 ֆրանք	40 ֆր.
Անգլիա եւ Իտալիա	265 ֆրանք	140 ֆրանք	
Ուրիշ երկիրներ	215 ֆրանք	110 ֆրանք	

ՀԻՆԳՇԱԲԹԻ
14
ՅՈՒԼԻՍ
JEUDI
14 JUILLET
1938

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

Ամբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

Ժ. ՏԱՐԻ — 14e Année No. 3782

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ՅԱՆՈՒՆ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ...

Ի՛նչ օրհնութիւն է, որ եւ է ժողովուրդի համար, կարենալ ծանել իր յաղթանակները: Մանաւանդ ազատութեան անունով կատարուած նուաճումները :

Այդպիսի յաղթանակի մը տարեդարձն է որ կը կատարուի այս երկրին մէջ, ամէն տարի յուլիս 14ին: Յաղթանակ մը՝ ժողովրդական ու յեղափոխական, որ խորտակեց ներքին բռնութեան չղթաները, հռչակելու համար ազատութիւն, եղբայրութիւն եւ հաւասարութիւն :

Անշուշտ մէկ անգամէն չիրականացան յեղափոխութեան բոլոր բարիքները :

Մինչեւ այսօր ալ, նորէն առանձնաշնորհեալ դասակարգեր են որ կ'իշխեն ու կը վայելեն: Մի՛ննադարեան աւատապետութեան աւերակներուն վրայ բարձրացաւ ուրիշ սակաւապետութիւն մը, — այն որ կը կոչուի քաղքենի - դրամատիրական: Ազնուականութեան եւ հոգատիրութեան տապեններուն յաջորդեցին դրամատիրութեան եւ կալուածատիրութեան կամ ճարտարագործութեան կալուածատիրութեան կամ ճարտարագործութեան հսկաները: Եւ բազմութիւնները նորէն ստրկին — մինչեւ այսօր ալ կը հեւան — «քաղաքակրթեալ», աւելի նուրբ լուծերու տակ:

Եւ սակայն, այս բոլորը չեն նսեմացներ 1789 յուլիս 14ի յեղափոխութեան խորհրդաւորութիւնն ու տարողութիւնը :

Ընդհակառակն, մինչեւ այսօր ալ, նոյնիսկ ծայրագոյն ճակատագրական հոսանքները ներշնչումի, խանդավառութեան, խոյանքի պղպեւներ կը գտնեն անոր մէջ: Կը փորձեն խորացնել, ընդլայնել, ժողովրդականացնել անոր հիմնական սկզբունքները:

Ո՛րքան խօսուն է, այս տեսակէտէն, Ֆրանսայի բոլշեւիկներուն վարած քաղաքականութիւնը: Շատ չըներ որ անոնք մասնաւոր շրջաբերականներ ալ հրատարակեցին, չարքերը գիտակցօրէն կապելու համար Յուլիս 14ի յեղափոխութեան դիտելիքներուն :

Ուշագրաւ է, զարձեալ, որ 1935էն ի վեր, յուլիս 14ի աւանդական թափորը Պասթիլէն դէպի Նասիոնի հրապարակը, կը կատարուի բոլոր ճախակողմեան տարրերու մասնակցութեամբ, — կուսակցութիւններով :

Այդպէ՞ս էր որ կազմուեցաւ ժողովրդական ճակատը, հանդիսաւոր ուխտ մը պարտադրելով բոլորին:

Ինչ որ ալ ըլլան այդ ճակատին վրիպումները, կարելի չէ ժխտել անոր չնորհիւ իրականացած նուաճումները, ընկերային բարենորոգման տեսակէտէն: Իսկապէս նոր չունչ մը ծաւալեցաւ այս երկրին մէջ, վարակելով ուրիշ երկիրներ ալ :

Ուրիշ խօսքով, նոյն պայքարն է որ կը չարունակուի յանուն ազատութեան, տարբեր պարագաներու մէջ: Եղբայրքում՝ առանց արիւնահեղութեան: Մարանչում՝ բազմապիսի անարդարութեանց դէմ, յարաճուն բազմութեանց ճնշումով: Արդիացում եւ խորացում հաստատուած կարգուսարքին՝ քուէներու վճիռով :

×

Ազատութեան պայքար մըն ալ մենք մղեցինք եւ կը մղենք տակաւին: Ազատութիւն՝ տարրական, տառական իմաստով: Եւ պայքար մը, որ իր նմանը չունի ազգերու պատմութեան մէջ, եթէ ոչ տեւողութեամբ, գոնէ արիւնահեղութեամբ :

« Զարկինք — զարկուանք», — եւ տակաւին ճամբուն կէսը հարիւր կարած ենք: Կարուած ճամբուն վրան ալ, նորէն խաւարն է որ կը սիրապետէ: Երբեմն լուսաւոր, բայց յաճախ անթափանցելի :

Իսկ ամէնէն քամնելին — նոյնիսկ այն ինչ որ նուաճում կըրնար համարուիլ, քանի տարի վերջն ալ կը դառնայ վիճելի: Առնուազն՝ անճանաչելի :

Ցիչեցէք, օրինակի համար, այսօրուան հայրենիքը մինուճար: Կամ սա վրդովիչ ելեւէջները որ կը խմորուին Միջերկրականի ափերուն վրայ...

Ի՞նչն էր որ պակսեցաւ մեզի, յանգելու համար այս նորագոյն յուսախաբութեանց: Շատ աւելի գառն եւ ըմբռստացուցիչ :

Զոհողութեան ոգի՞ն: Ձի՞զը թէ արիւնը: Եւ կամ խե՞լքը :

Զմտնենք պատճառներու քննութեան մէջ, որոնք չատ հեռուները պիտի տանէին մեզ:

Կը բաւէ յիշեցնել, մեծ ժողովուրդի մը այս յեղափոխական տարեդարձին առթիւ ալ, թէ ամէն բանէ առաջ կը կարօտինք խոր, անսասան հաւատքի մը եւ գործօն վճռակամութեան մը, նորէն յուսաւորելու համար մեր ճամբան, յանուն ազատութեան :

Թող Յուլիս Տասնչորսն ալ դառնայ, մեզի համար, կենդանի աղբիւր մը ներշնչումի եւ գործունէութեան, ինչպէս դարձեր է այս ժողովուրդին համար, տարբեր հանգամանքներով :

Մոռ է եւ փոթորիկ՝ ժողովուրդներու կեանքը :

Մեծ թէ փոքր, այդ ամէնի ալեկոծութեան մէջ ի վերջոյ կը յաղթեն անոնք միայն որ օժտուած են դարերու իմաստութեամբ, — դիմանալ եւ պայքարիլ, յարատեւել եւ գործել:

Եթէ միջազգային դիւանագիտութեան լպրծուն ալիքներն են որ կը սպառնան, — չմոռնանք պատմութեան դասերը, այնքան պերճախօս եւ արիւնագանգ :

Եթէ լեռներ են որ կը ցցուին մեր առջեւ, սորվինք փնտռել գտնել անոնց կիրճերը :

Եթէ աւազուտի մը ափին ենք իյնկեր, սերտենք լողալու արուեստը:

Իսկ ամէն բանէ առաջ, — հաւատանք մենք մեզի, չափելով խորութիւնը պարտադրուած ճիդին: Ամփոփելով, կեդրոնացնելով յարելով բոլոր պիտանի ուժերը: Լեցնելով թափուր դիրքերը: Ա՛ր հացնելով մեր գործելու մեթոտները: Եւ գործելով, անընդ - հատ գործելով՝ մէկ ընդհանրական նշանախօսքի տակ, — իմիքնա - պաշտպանութիւն եւ ազատութիւն :

Այսպէս ծոնած կ'ըլլանք, մենք ալ, Յուլիս 14ը:

Շ.

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ՔԻՄԻԱԿԱՆ ԵՒ ՈՒՐԻՇ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐ ԹՈՒՐՔԻՈՅ ՄԷՋ ՄԵԾԱՔԱՆԱԿ ՌԱԶՄԱՆԻՒԹ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Էնկիւրիէն կը հեռագրեն Լոնտոնի թերթերուն.— *Այսօր , երկուշաբթի , անհետաձգելի նախարար Շաքիր Քէսէպիր կատարեց հիմնարկէքը քլորիտի նոր գործարանի մը, Իզմիտի մէջ,— գինուորական արգիլեալ գօտի մը ուր կը գտնուի Թուրքիոյ նաւային կայանը՝ Մարմարայի վրայ: Նախարարը չեչտեց իր ճառին մէջ.*

— *«Ամբողջ աշխարհ գիտէ որ Աթաթիւրքի արդիական Թուրքիան խաղաղութիւն կ'ուզէ . բայց միջազգային կացութիւնը կը հարկադրէ զգուշանալ : Ահա թէ ինչու կ'ուզենք արագօրէն ստեղծել քիմիական ազգային գործարան մը, պաշտպանուելու համար բարբարոսական յարձակումներու դէմ»:*

Արարողութեան ներկայ էին հազարաւոր հիւրեր, մէջն ըլլալով երեսփոխաններ, զօրավարներ, ծովակալներ եւ կառավարական բարձր պաշտօնատարներ .

Նոր գործարանը կը չինուի գերմանական հաստատութեան մը կողմէ , յանձգուած վճարումներով: Մոտաքը պիտի ըլլայ 350.000 անգլ. ոսկի: Այս ձեռնարկը սկիզբն է քիմիական եռամեայ ընդարձակ ծրագրի մը: Պիտի չինուին ուրիշ բազմաթիւ գործարաններ — միայն տեղական հում նիւթեր գործածելով — արտադրելու համար ամէնէն քանակութեամբ ռազմամթերք եւ քիմիական ամէն տեսակ նիւթեր :

**** Հինգշաբթի երկուշաբթի օր Պերլինի կուսակցական կեդրոնին մէջ ունկնդրութեան ընդունեց Թուրքիոյ արտաքին նախարարութեան խորհրդականը, Մկնէմկնճիօղլու, որ Գերմանիա կը գտնուի առեւտրական բանակցութեանց համար: Տեսակցութեան ներկայ էին նաեւ Թրքական դեսպանը եւ Միւննիխի ընդհ. հիւպատոսը :*

Տպատիճ կը գնահատէ Գերմանիոյ յոնված դիրքը

Վարչապետ Պ. Տալատիէ առջի օր ճառ մը խօսելով հացկերոյթի մը առթիւ, բացատրեց թէ անցեալ մայիսին չեխական տագնապը ծանր փորձի մը ենթարկեց աշխարհի խաղաղութիւնը, եւ «քիչ մնաց որ բազմաթիւ ժողովուրդներ անդարմանելի աղէտի մը մատնուէին»: Բայց, կարելի եղաւ առաջքը առնել, չնորհիւ բոլոր բարեացակամութեանց աջակցութեան, ուր Մեծն Բրիտանիոյ եւ Ֆրանսայի խաղաղասիրական վճռականութիւնը դիմաւորուեցաւ ուրիշ ազգերու եւ մասնաւորապէս Գերմանիոյ նոյն տրամադրութեամբ: Կ'ուզեմ աւելցնել թէ այս առթիւ Ֆրանսական կառավարութիւնը ուղեց վստահութիւն ընծայել այն խաղաղասիրական տենդերուն դէմ Գերմանիոյ վարչապետը միշտ կ'արտայայտէ հրապարակաւ »:

Ցիշելէ վերջ Ֆրանսայի հանդիսաւոր եւ նուիրական յանձնառութիւնները Չեխոսլովաքիոյ հանդէպ, վարչապետը յայտարարեց .

— *«Ֆրանսա տոգորուած է երկու զգացումներով.— 1. երբեք առիթ չտ նենալ գործադրելու այդ յանձնառութիւնները.— 2. երբեք չուրանալ իր խոս - տումը, եթէ, դժբախտաբար, ի դերեւ ելլէ այդ յոյսը: Անգլիա, Ֆրանսա եւ Գերմանիա ջերմապէս չահագրգռուած են չեխական հարցին խաղաղ լուծումով եւ պատրաստ՝ օգնելու այդ ելքին: Ես երբեք չեմ հաւատացած եւ պիտի չհաւատամ պատերազմին ճակատագրականութեան: Այս վերջին փորձառութիւնը իրաւունք կուտայ հաւատալու ապագային »:*

Վարչապետը յետոյ լաւատես հաւաստիքներ ընծայեց ելմտական կացութեան մասին :

Ֆրանսական զօրքի ձեռքէր Մուսոլի մէջ

Սուրիոյ թերթերը կը գրեն, ծանուցանելով Թրքական եւ Ֆրանսական զօրամասերուն մուտքը.—

Երէկ, երկուշաբթի (4 յուլիս), կէսօրէն վերջ Հալէպէն Ֆրանսական զօրամասեր մեկնեցան «քամիօն»ներով եւ դիւղերեցին Սանճաքի սահմանին վրայ: Այսօր, 5 յուլիս, նոյն ժամուն այդ զօրամասերն ալ Սանճաք մտան: Մէկ մասը Անտիոք ուղղուեցաւ, միւսը՝ Գրըքխան: Ուշագրաւ պարագայ մը,— Ֆրանսական եւ Թրքական զօրամասերը միաժամանակ մեկնեցան նոյն ուղղութեամբ ,— Գրըքխան եւ Անտիոք: Միւս կողմէ, երկու օր առաջ խումբ մը Ֆրանսացի սպաներ պատեցան Սուէտիոյ եւ Քէսապի շրջանը եւ յատակագիծ մը պատրաստեցին, Ֆրանսական զօրանոցներու հաստատման համար :

**** Կ'ըսուի թէ Սուրիոյ դաշինքը պիտի հրաժարի, իբրեւ հետեւանք Ֆրանքեթիոյք համաձայնութեան :*

Ֆրանս՝ չի հեռանար Սուրիայէն...

Ջօրավար Պրէմօն Փարիզի մէջ, Գաղթային Գիտութեանց կաճառին առջեւ արտասանած ճառի մը միջոցին, յայտարարեց թէ միայն Լիբանանը չի բաւեր ապահովելու համար Ֆրանսական հակակշիռը Միջերկրականի արեւելեան աւազանին մէջ, եւ թէ իր ներքին ու արտաքին դժուարութիւններուն մատնուած եւ ինքն իր բախտին ձգուած Սուրիա մը կրնայ դիւրութեամբ դառնալ խարխոխ մը վտանգաւոր գործողութեանց՝ ընդդէմ Լիբանանի :

Ասկէ զատ, Պ. Պրէմօն հաւաստեց թէ Ֆրանսա հանդիսաւոր յանձնառութիւններ կնքած է Սուրիոյ փոքրամասնութեանց հանդէպ եւ թէ իր պատիւը պիտի չթոյլատրէ իրենց բախտին ձգել զանոնք, առանց նախապէս ձեռք բերելու բաւարար երաշխիքներ որոնց լաւագոյնը պիտի ըլլար — զօրավարին կարծիքով — ֆրանսական զօրքի պահպանումը երկրին մէջ :

Գաղթային Գիտութեանց Ակադեմիան աւարտեց ջննութիւնը « Սուրիոյ դաշնագրերուն կարեւոր հարցին, որ անդադար կը յեղաշրջուի», ինչպէս կը չեշտէ զեկոյց մը :

Կարծիքներու փոխանակութենէ մը վերջ, որուն մասնակցեցան զօր. Պրէ-

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

ՕՐԸ ՕՐԻՆ

ԱՍԴԻՆ ՊԱՐ, ԱՆԴԻՆ ՊԱՐ

Յուլիս 14ի պարերը այս տարի պիտի տեւեն տասը օր, պատուելու համար Անգլիոյ թագաւորն ու թագուհին, որոնց այցելութիւնը յեղաշրջած է փարիզի փողոցներն ամբողջ :

Ոստիկանական տեսչութիւնը մասնաւոր շրջաբերականով մը ճշդած է տասը գիշերներու պարի ժամերը, որպէսզի պահպանութիւններ չծագին :

Դժբախտաբար, մինչեւ այսօր ալ սմսկն ու անձրեւը են որ կը պարեն :

Ամէն տարի այս ատեն բազմութիւնները կը հալէին տաբէն, դէպի ծով , դէպի լեռ փախչելով :

Այս տարի, յունիսէն ի վեր, մարդիկ տունէն դուրս կ'ելլեն վերարկուով : Առ նուազն հովանոցով մը:

Ամերիկայի մէջ արդէն իսկ մահեր կը պատահին զարհուրելի տաբէն, մտահոգութեան մատնելով մինչեւ անգամ էսքիմոները: Պոլսոյ մէջ կը խեղդուին տաբէն **(37—40** աստիճան): Թուրք զօրը Սանճաք մտեր է **42** աստիճան տաբութեան մէջ:

Իսկ այստեղ, փարիզի մէջ, մինչ ուրիշ տարիներ յուլիս **14**ի զօրահանդէսը երբեմն կը յետաձգուէր, տաբին հետեւանքով, մարդիկ ի զո՞ւր օդին բացուելուն կը սպասեն :

Արեւն անգամ գաղթական է դարձեր, տարագիր : Փախստակա՞ն :

Կարծեմ գառնուն ալ աւելի քախտաւոր չէ :

Քանի շարաթ է որ դաշտահանդէսները կը ծանուցուին եւ կը յետաձգուին :

Եւ սակայն, պարողը պիտի պարէ անպայմանն, եթէ ոչ տասը գիշեր վըրայէ վրայ, գոնէ տասն օրուան մէջ երկու գիշեր: Եթէ դուրսը չեղաւ ,ներսը: Եթէ գետինը թաց է, մայթին վրայ: Եթէ սրճարանը շարժելու տեղ չկայ՝ տունին մէջ :

Մնացեալը բոդ սրճարանատէրերը մտածեն :

Բայց այս չէր ըսելիքս: Թուրք թերթերը ցնծագին աւետելով իրենց «յաղթապանծ» զօրքին տեղաւորումը Սանճաքին մէջ, կը պատմեն.

— « *Հաթայի սուգը վերջացաւ : Մեր հազուստներու մէջ փաթթուած երիտասարդ աղջիկներ առտուն կանուխ Թուրք բանակը դիմաւորելու փութացին, եւ անոնց գալուստէն վերջ սեւերը նետելով ճերմակ հագուստներ հագան: Ժողովուրդը չափազանց յուզուեցաւ այս այլաբանական չարժուձեւէն եւ չատեր լացին»:*

— « *Գրըքխան ծայրէ ծայր նոր հարսի պէս զարդարուած է: Գիւղերէն եկած հազարաւոր Թուրքեր փողեր եւ թմբուկ հնչեցնելով, Թափորէն վերջ սկսան պարել եւ ցնծալ »:*

Պարը պար է ամէն տեղ:

Բայց ես մէկ նրբութիւն կը տեսնեմ այս երկու պարերուն միջեւ :

Այստեղ կը պարեն՝ գօտիները աւելի շուտ բակելու համար: Այնտեղ՝ աւելի ամուր կապելու համար :

Honni soit qui mal y pense!

ՎԱՀԷ

ՀԱՆԳԱՒԱՑԵԼ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԿՈՆԴԱԿԸ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

ՄՄՔ.— երէկ հրատարակեր էինք էջմիածինէն փարիզի եկեղեցւոյ վարչութեան հաղորդուած նամակը՝ կաթողիկոսի մահուան մասին: Ստորեւ՝ տեղապահութեան վերաբերեալ կոնդակը, որու վաւերականութեան մասին ոչինչ կրնանք ըսել.—

ՅՈՐԻՆ ԾԱՌԱՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ,ԾԱՁՐԱԳՈՑՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱՑԻՆ ՆԱԽԱՄԵՆԱՐ ԱՔՈՐՈՑ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՍԲՐՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ, անդամոց Գերագոյն Հոգեւոր Ժողովոյ Ս. Էջմիածնի, լիազօր ներկայացուցչի մերում Գերաշնորհ Տ. Գէորգ Արքեպիսկոպոս Զօրեքճեան, հարազատի Մայր Աթոռոյս ողջոյս քրիստոսաւանդ եւ օրհնութիւն Հայրապետական :

Ի նկատի առեալ գիտողութիւն ձեր յընթացս բազմամեայ եւ պատասխանատու պաշտօնավարութեանդ, նաեւ գիտակից եւ զգօնութիւն ձեր, այսու Հայրապետական կոնդակաւս նշանակեմք զձեզ Հայրապետական Տեղակալ եւ նախագահող Գերագոյն Հոգեւոր Ժողովոյ Ս. Էջմիածնի :

Պատուէր տամք Գերաշնորհութեանդ յետ մահուան մերոյ, խորհրդակցութեամբ Գերագոյն Հոգեւոր Ժողովոյ Ս. Էջմիածնի տալ զընթացս ամենայն գործոց վերաբերելոց հաւատացեալ հօտին մերոյ եւ եկեղեցւոյ Հայոց, որք կան ի սփիւռս աշխարհի, պահելով եւ պահպանելով անաղարտ եւ սրբութեամբ զամենայն աւանդս եւ զիրաւունս եկեղեցւոյ, նշանակել զկանոնաւոր ընտրութիւն յաջորդին Մերոյ Նորոյ կաթուղիկոսի Ամենայն Հայոց, ըստ կարգաց եւ կանոնաց Հայաստանեայց ժողովրդական Սուրբ եկեղեցւոյս :

Լիասյս եմք եւ հաւատամք, զի մխաթանութիւն Մայր Աթոռոյս եւ Առաջնորդք եւ Առաջնորդական Փոխանորդք Թեմօրէից, Թեմական Խորհուրդք եւ եկեղեցական Հոգաբարձութիւնք աջակից լիցին ձերդ Գերաշնորհութեան ըստ ամենայն մասանց ի կատար ածելով զկարգադրութիւնս ձեր :

Հաւատամք նաեւ պատուէր տամք հայրաբար սիրելի եղբարցս եւ զաւակացս, Ամենապատիւ Պատրիարքաց, ամենայն Առաջնորդաց, Ազգային եւ եկեղեցական վարչութեանց եւ հաւատացեալ հայ ժողովրդեան լինել զօրավիգ եւ գործակից ձեզ, Տեղակալիդ Ամենայն Հայոց Կաթուղիկոսի, միաբան եւ համեբաչխ ընդ միմեանս յամենայն գործս բարիս եւ վարել զազգային-եկեղեցական հաստատութիւնս եւ գձեռնարկս քրիստոնէականս սիրով, յուզով եւ հաւատով:

Օրհնելով զձեզ եւ զամենեսին, մաղթենք ի Տեառնէ չնորհել ձեզ կար եւ զօրութիւն, Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյս անսասանութիւն եւ պայծառութիւն, Ազգիս Հայոց եւ Հայրենեացս խաղաղութիւն եւ երջանկութիւն :

Աղօթեմք առ Աստուած նաեւ խաղաղութեան աշխարհիս եւ համերաշխութեան ազգաց :

Ողջ լերուք, զօրացեալ ի Տէր եւ յաւէտ օրհնեալ ի ՄԻՆԴ, ԱՄԷՆ :

Խորէն Ա. Գերագոյն Պատրիարք-Կաթողիկոս Ամենայն Հայոց

Ի 18ն Ապրիլի **1936** ամի, ըստ Տումարիս ՌՃՁԵ, Ի Հայրապետութեան մերում Դ.ամի , ծայրաբատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, Ի վաղարշապատ, Թ. **660**:

Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը հաստատում է սոյն Հայրապետական կոնդակի պատճէնի նոյնութիւնը բնագրի հետ ստորագրութեամբ եւ կնիքոյ դրոշմամբ: **14**ն Մայիսի **1938** թ., Ս. Էջմիածին, Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի անդամ , Ստոր. Արսէն Արքեպիսկոպոս :

(Կնիք)

ՅՈՒԼԻՍ 14ի տօնին առթիւ, «Յառաջի յաջորդ համարը լոյս կը տեսնէ չաբաթ օր :

ՍՏԱՄԲՈՒԼԻ ԼԵՐՔԱԿԸ

The Eunuch of Stamboul

By DENNIS WHEATLEY

Թարգ՝ ՏԱՐՈՆՈՒ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Trans : J. M. Ֆարգ. Ա. Ս. Ր.

— Ֆեյ պրեշ մե սրեկդ, միրեդ, միրեդ սալկիմ. սրեկդ մե մշդ սալկիմ... նէյն...

— Դոկտոր իսկ ասօսաւտ ըն պրոֆեսոր իմս... Ուրախ եմ ձեզ տեսնելու համար, պարոն Տարոն, ինչպես նաև ձեր ազնիվ ընկերոջը՝ պարոն Ֆարֆարյանին...

Ուրախությունը ամբարիշտ հայերեն արտասանելով Ֆարֆարը ձեռքը մեկնեց Տարոնին, որ ընդունեց այն ու սեղմեց ամուր, ապա նաև Ֆարֆարի ձեռքը, որ ոչ պակաս ուժգնությամբ սեղմեց Տարոնի ձեռքը:

— Ինչպես տեսնում եք, պարոն Ֆարֆար, ես ձեզ չեմ մոռացել, ինչպես որ խոստացել էի, ձեզ հրավիրել եմ Ստամբուլ...

— Ա՛խ, ա՛խ, այս ինչպես կարելի է մոռանալ... Ինչպես կարելի է մոռանալ ձեր ազնիվ վերաբերմունքը ինձ հանդեպ, երբ ես ձեր հյուրն էի Փարիզում, ձեր ընտանիքի հետ ապրելու ընթացքում ես ձեզ համոզվեցի, որ դուք ոչ միայն հմուտ գիտնական եք, այլև ազնիվ մարդ, որի հետ հաճելի է ընկերանալ... Ես ուրախ եմ, որ ձեր հրավերն ինձ հասավ ճիշտ այն պահին, երբ ես ամենից շատ կարիք ունեի հանգստի, ինչպես նաև ձեր ընկերական հյուրընկալության...

— Ես ուրախ եմ, որ ձեր ուզածը կատարվեց, պարոն Ֆարֆար, ինչպես նաև ուրախ եմ, որ ձեր առողջությունը վերականգնվեց, ինչպես որ ես ցանկանում էի... Ես ուրախ եմ, որ ձեր ուզածը կատարվեց, պարոն Ֆարֆար, ինչպես նաև ուրախ եմ, որ ձեր առողջությունը վերականգնվեց, ինչպես որ ես ցանկանում էի...

Ֆարֆարը ժպտաց, ապա ձեռքը դրեց Տարոնի ուսին և ասաց.

— Ես ուրախ եմ, որ ձեր ուզածը կատարվեց, պարոն Տարոն, ինչպես նաև ուրախ եմ, որ ձեր առողջությունը վերականգնվեց, ինչպես որ ես ցանկանում էի... Ես ուրախ եմ, որ ձեր ուզածը կատարվեց, պարոն Ֆարֆար, ինչպես նաև ուրախ եմ, որ ձեր առողջությունը վերականգնվեց, ինչպես որ ես ցանկանում էի...

Տարոնը ժպտաց, ապա ձեռքը դրեց Ֆարֆարի ուսին և ասաց.

— Ես ուրախ եմ, որ ձեր ուզածը կատարվեց, պարոն Ֆարֆար, ինչպես նաև ուրախ եմ, որ ձեր առողջությունը վերականգնվեց, ինչպես որ ես ցանկանում էի... Ես ուրախ եմ, որ ձեր ուզածը կատարվեց, պարոն Ֆարֆար, ինչպես նաև ուրախ եմ, որ ձեր առողջությունը վերականգնվեց, ինչպես որ ես ցանկանում էի...

Ֆարֆարը ժպտաց, ապա ձեռքը դրեց Տարոնի ուսին և ասաց.

— Ես ուրախ եմ, որ ձեր ուզածը կատարվեց, պարոն Տարոն

ԳԻՇԵՐՈՒՄ ՎՃՌՄԱՎՈՒ

Երկրորդ օրը նա ոչ մի խոսք չասաց։ Ես էլ չհարցրի, թե ինչ է եղել։ Ես գիտեի, որ նա ինքն ինձ կպատմի։ Եվ իրոք, նա ինձ պատմեց։

— Ես մի ուրիշ տեղ էի գնացել, ուր ինձ հրավիրել էին ընթրիքի։ Ես ուզում էի գնալ, որովհետև ուզում էի տեսնել այդ տունը, որ ամբողջ քաղաքում հռչակավոր է իր հարուստ սեղանով։ Ես գիտեի, որ այնտեղ կհանդիպեմ մի քանի ծանոթների, որոնց հետ ինձ հետաքրքրական էր խոսել։ Ես գիտեի նաև, որ այնտեղ կհանդիպեմ մի կնոջ, որին ես սիրում էի։ Ես ուզում էի նրան տեսնել, որովհետև ինձ թվում էր, թե նա էլ է ինձ սիրում։

Ես գնացի։ Ընթրիքը շատ հարուստ էր։ Ես ինձ զգում էի ինչպես ձկնորսը, որ ուզում է ձուկ բռնել, և ամեն կողմից ձկներ են լողում նրա շուրջը։ Ես ուզում էի ընտրել ամենամեծ ձուկը, բայց չգիտեի, թե որն է ամենամեծը։ Ես ուզում էի ամենաշատ սիրելի կնոջը, բայց չգիտեի, թե որն է ամենաշատ սիրելի կինը։

Ես նստած էի սեղանի մոտ, ինձ շրջապատած էին ինձ ծանոթ կանայք, որոնք ինձ հետ խոսում էին, ես էլ նրանց հետ խոսում էի, բայց ոչ ոքի չէի նայում։ Ես ուզում էի տեսնել միայն նրան, որին ես սիրում էի։ Ես ուզում էի նրան տեսնել, որովհետև ինձ թվում էր, թե նա էլ է ինձ սիրում։

Ես նրան տեսա, երբ նա ներս մտավ։ Նա ինձ չնկատեց։ Նա ներս մտավ և նստեց սեղանի մոտ։ Ես ուզում էի նրան տեսնել, որովհետև ինձ թվում էր, թե նա էլ է ինձ սիրում։

Ես նրան տեսա, բայց

մօն (կառաղի հակառակորդ վաւերացման), Ժալապէր, Ռընէ Սիմոն, Ֆրան-սուա Փիէթըի (նախկին ծովային նախարար) եւ Սէրէթի սը լա Ռօքա, ժողովը միաձայնութեամբ ընդունեց բանաձեւ մը, որ սկզբունքով դէմ է վաւերացման:

Կ'իմանանք թէ — կ'աւելցնէ Արաբական Դիւանի թղթակիցը — վաւերացման խնդիրը առայժմ մէկ կողմ դրուած է: Եւ սակայն, համաձայն իրաւասու չրջանակներու մէջ տիրող տպաւորութեան, կասկած չկայ թէ վաւերացումը տեղի պիտի ունենայ 1938ի վերջերը, մանաւանդ որ լուծուած է Մանճաքի խնդիրը:

Տճեռական վերակազմութիւնը Ֆրանսայի մէջ

Պ. Փաթընոթր, ազգ. անտեսութեան նախարարը, ճառ մը խօսելով ազգ. անտեսական խորհուրդին առջեւ, յայտարարեց.

— Քանի մը տարիէ ի վեր առաջին անգամ ըլլալով Ֆրանսա կը վայելէ անտեսական նպաստաւոր պայմաններ: Հաւասարակշռութիւն հաստատուած է մեծաքանակի եւ փոքրաքանակի գիներուն, ներքին եւ արտաքին չուկաներու գիներուն միջեւ: Դրամը հաստատուն վիճակ ստացած է: Այս ազդակները բաւական են վերահաստատելու ազգին վստահութիւնը, փարատելու հաւաքական ջղազարութիւնը եւ ստեղծելու հիմք մը մխացեալ ճիգերու, միւժմանակ զարգացնելու համար արտադրութիւնը եւ սպառումը:

*** Պ. Ժուհօ Աչխատանքի Դաշնակցութեան ընդհ. քարտուղարը, բանախօսութեան մը ընթացքին յայտնեց թէ ճիշդ է որ մեծ քանակութեամբ փաստական դրամագլուխ վերադարձած է, բայց տակաւին 560.000.000 անգլ. ոսկիի գումար մը կը մնայ օտար երկիրներու մէջ:

1000 Արաբներ կը վտարուին Ամերիկա...

Ամերիկի Համամ գիւղախումբէն հետեւեալ հեռագիրը ուղղուած է արաբերէն Նահար թերթին, յուլիս 1 թուականով.—

Հազար Արաբներ Ամերկի մէջ ենթարկուեցան Թուրքերու յարձակումներուն եւ ստիպուեցան ապաստանիլ Համամ, ուր կը մնան կիսիչ արեւի մը տակ, անպատսպար եւ անօթի: Թուրքերը բռնաբարած են աղջիկներն ու կիներէն: Այս Արաբներուն բոլոր հարստութիւնները աւարի տրուած են: Բազմաթիւ Արաբներ բանտարկուած: Ցանուն մարդկութեան կը խնդրեն վերջ տալ այս դժբախտութեանց:

Ահաբեկում եւ չարդ Պաղեստինի մէջ

Երուսաղէմէն կը հեռագրեն յուլիս 12 թուականով.—

Հակառակ ձեռք առնուած խստութեանց եւ անգլիական զօրքի յաւելման, խռովութիւնները կը չարունակուին նոյն ոստոկութեամբ: Այս առտու Երուսաղէմի հին չուկային մէջ ապառնուեցաւ Էմիրի մզկիթին քարոզիչը, իսմամ Ալի Նուրի Խաթիպ, ինչ որ մեծ յուզում պատճառեց Արաբներուն մէջ: Արձակուած դնդակներէն մէկը ծակեց իմամին թոքերը, երկու դնդակներ ալ մտան սամոթքին մէջ: Մահը վայրկենական եղաւ: Մարմինը փոխադրուեցաւ կառավարական հիւանդանոցը: Արար կին մը, որ իմամին քովէն կ'անցնէր ահաբեկման միջոցին, նոյնպէս վիրաւորուեցաւ:

Իմամը 60 տարեկան էր, չրջանաւարտ Գահիրէի էլ Ազհար համալսարանէն եւ իրրեւ քարոզիչ Էմիրի մզկիթին իր հօրը յաջորդեց 1910ին, համամաչն Թուրքիոյ Սուլթաններուն չնորհած ժառանգական իրաւունքին: Քաջուած կեանք մը կը վարէր, վայելելով բոլոր հաւատացեալներուն յարգանքը: Կ'ըսուի թէ իմամը զոհ գացած է արար ահաբեկիչներուն, ըլլալով թշնամի՝ մեծ մուֆթիին (փախստական): Կասկածներ կան թէ կապ ունէր ոստիկանութեան հետ:

*** Նաղարէթի մօտ, հրէական Մաշա գաղութը յարձակման ենթարկուեցաւ: Առաջին տեղեկութեանց համաձայն, գիւղը քանդուած է եւ 60 Հրեաներ սպաննուած են: Միեւնոյն չրջանին մէջ, Թաբոր լերան մօտ, բուռն կռիւ մը տեղի ունեցաւ ոստիկանութեան եւ ահաբեկիչներու միջեւ: Կացութիւնը չատ ծանր է հիւսիսային Պաղեստինի մէջ: Հայֆայի հրէական հիւանդանոցը խճողուած ըլլալով, դպրոցն ալ հիւանդանոցի վերածուեցաւ, վիրաւորները ընդունելու համար:

Ծովային հետեւակազօրքը եւ ոստիկանութիւնը կը գործակցին, բարեկարգութիւնը պահպանելու համար Հայֆայի մէջ, որուն կարգ մը թաղերը ամբողջովին փակուած են: Վերջին ահաբեկումներու զոհերուն մէջ կը դասուի հրեայ գործարանատէր մը, Թոպիաս, որ արար ամբոխին կողմէ իր կառքէն քաշ-կոտուելով, խոչտանգուած եւ սպաննուած է:

Ամէն կողմէ բողոքներ կը հասնին այս դէպքերուն առթիւ: Անդրյորդանի Էմիրը իր հեռագրին մէջ զուն զանգատներ յայտնելով, դիտել կուտայ թէ ներկայ կացութիւնը ի դերեւ կը հանէ ամէն յոյս՝ Պաղեստինի հարցին խաղաղ կարգադրութեան համար: Քրիստոնեայ եկեղեցիներու ներկայացուցիչներն ալ կոչ մը ուղղեցին մարզպանին, ապահովութիւն խնդրելով իրենց հաւատացեալներուն համար: Անգլիա չարունակ զինուոր կը ղրկէ:

ՋԱՆԱՋԱՆ ԼՈՒՐԵՐՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՀԱՑ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄԸ ԱՆՋՆԱՊԱՆ.— Վաղուն հաստատուած երիտասարդ մը, Լիւսն Գասարճեան, Առանացի, վերջերս հիւծախտէ վարակուած ըլլալով, յուսահատ՝ կ'երթայ Մարսէյլ եւ անձնասպան կ'ըլլայ: Ղողներ ալ կան թէ թունաւորուած է:

ՊԻՇՐՈՒԻ հասաւ Զօր. Քայլօ, արեւելեան բանակին ընդհ. հրամանատարը, որ պիտի յաջորդէ Զօր. Էյսնկիկէրի: Քարափին վրայ պինուորական պատիւներ եղան նոր հրամանատարին:

ԹՐԲԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԸ առջի օր տեսակցութիւն մը ունեցաւ փոխ-վարչապետ պէտ Պ. Շօթանի հետ:

Ա.ԶԳ. ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ նոր մուրհակներ չրջաբերութեան պիտի հանուին երկուչաբթի օր, 100, 500, 1000, 10.000, 100.000 եւ մէկ միլիոն ֆրանքնոց թուղթերով եւ 18 ամիս պայմանաժամով: Ընդհ. գումարը անորոշ կը մնայ: Տոկոսը պիտի ըլլայ 3ուկէս առ հարիւր (առաջինը 3առ հարիւր էր):

ՄԻԼԻՈՆԱՏԷՐ ՕԴԱԶՈՒՆ, Հօուըրտ Հիւզ եւ իր չորս ընկերները չարունակելով իրենց յանդուգն թռիչքը, փարիզէն Մոսկուա հասան երեքչաբթի ժամը 8.5ին, մեկնեցան ժամը 10.31ին, Օմսք հասան 19ին, դէպի Եաքուցք մեկնեցան ժամը 22.45ին: Ամբողջ աչխարհ հետ ի հետ կը սպասէ այս աննախընթաց թռիչքի վերջնական ելքին:

ՏԱՐԱԳԻՐՆԵՐՈՒՆ խորհրդաժողովը որոչեց մնայուն մարմին մը կազմել, իբրեւ կեդրոն ունենալով Լոնտոնը, դրազելու համար Մեծն Գերմանիոյ Հրրէաններու ճակատագրով: Վերջին ժողովը պիտի գումարուի վաղը, ուրբաթ:

ԻՏԱԼԻԱ գոհացում տալով Ֆրանսայի բողոքին, որոշեց պատժել այն սահմանապահ զինուորը որ Ֆրանսական հող մտած եւ ուսանող մը վիրաւորած էր: Զոհին ալ հատուցում պիտի տրուի:

ՄԱՐՍԷՅԼԻ մէջ զինուորութենէ ազատելու համար կեղծ թուղթեր առած երիտասարդներէն վեց հոգի եւս ձերբակալուեցան (ընդամէնը 7): Դեռ կը հետապնդուին 202 երիտասարդներ, որոնց մէջ օտարականներ ալ կան: (Երկու կալանաւորներու համար «Թուրք» էին գրած տեղական թերթերը, բայց անունները չեն համապատասխաններ):

Հ. Յ. Դ.

Գաւառամ

ՄԱՐՍԷՅԼԻ «Էրիստափոր» ենթակովփէյէի ընդհ. ժողովը՝ 16 յուլիս, շաբաթ իրիկուն ժամը 8ին: կարեւոր օրակարգ:

ՊՈՄՈՆԻ «Զաւարեան» ենթակովիւթէի ընդհ. ժողովը՝ 16 յուլիս, շաբաթ երեկոյեան ժամը 8.30ին «Վարանդեան» սրահին մէջ: կարեւոր օրակարգ: Բոլոր ընկերներու ներկայութիւնը անհրաժեշտ է:

"Յառաջ" կը ծախուի

Place des Fêtesի լրագրավաճառի խանութը գոց ըլլալով յուլիս 14էն մինչեւ 18ը, «Յառաջ» կը ծախուի Place des Fêtesի ծայրէն հայ նպաստավաճառին քով, S. Baldjian, 2 Rue de Crimée (Տոքթ. Գրիգոյեանի քլինիքին քովը):

ԽԱՆԱՍՈՐԻ ԱՐՇԱԿԱՆՔԻ 41ՐԴ ՏԱՏԵԳԱՐՁԸ ԿԸ ՏՕՆՈՒԻ

ՅԱՎԻԼԻ ԱՆՏԱՌԻՆ Մէջ յուլիս 31ին կիրակի օր, Հ. Յ. Դ. «Արդուհեան» խումբին կողմէ: Այցելութիւն Իշխան Արդուհեաններու չիրիմին, Թանրամատնութիւնները մօտ օրէն:

ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԷՍ

Ֆ. Կ. ԽԱՉԻ Romainville-Montreuil ՆՈՐԱԿԱԶՄ ՄԱՍՆԱՂԻՒՂԻ

16 Յուլիս, Շաբաթ գիշեր ժամը 9էն մինչեւ լոյս

Salle des Fête de la Mairie. Porte des Lilasէն առնել օթօպիւս 95 B

ԿԸ ՆԱԽԱԳԱՀԷ Ս. ԱԶԱՊԱԼԵԱՆ

ԿԸ ԲԱՆԱԽՕՍԷ ՕՐ. ՖԼՕՐԱ-ԱՆԱՀԻՏ

Գեղեցիկ անակնկալներ, ընտիր ճաշ, հայկական եւ եւրոպական պարեր ճոխ եւ ժամն սլիւֆէ պատրաստուած անդամուհիներու նուէրներով: Մուտք 5 ֆրանք:

Ֆ. Կ. ԽԱՉԻ ՓԱՐԻԶԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ ՏԱՐԵԿԱՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍԸ

17 Յուլիս, կիրակի առաւօտեան ժամը 9էն գիշերուան 11.30

ՐՈՊԷՆՍՈՆԻ ՄԷՋ, Grand Arbre, Maison Fiquet

Գեղարուեստական հաճելի անակնկալներ, ընտիր նուագախումբ Անբրեւի պարագային գոց սրահ: Ճոխ սլիւֆէ պատրաստուած խաչուհիներու կողմէ. Մուտք 5 ֆրանք:

ՀԱՂՈՐԴԱՑՈՒԹԻՒՆ ՄԻՏՈՑՆԵՐ.— Denfertէն առնել մեթրոյի դէպի Ռոպէնսոն տանող գիծը, եւ կամ Բորի տ'Օրլեանէն օթօպիւս Ֆիւ 128:

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

ՖՐ. Կ. ԽԱՉԻ ԻՍԻԻ ՄԱՍՆԱՃԼԻՒՂԻՆ ԿՈՂՄԷ

17 Յուլիս, առաւօտէն մինչեւ երեկոյ, Մէօտօնի անտառին մէջ, «Թափի Վէռ»:

Երգ, նուագ, արտասանութիւն: Ճոխ սլիւֆէ պատրաստուած անդամուհիներու կողմէ: Անճրեւի պարագային «Ժրմիհան» ռեսթորանին մէջ խնջոյք տեղի պիտի ունենայ: Մուտքը ազատ է:

ՏԱՐԵԿԱՆ ԴԱՇՏԱ-ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

ԱՄԱՍԻԱ-ՄԱՐԶՈՒԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

14 Յուլիս, Հինգշաբթի ամբողջ օրը Սէն - Լուի կրպակ - Փէն, եօթնեղբայրեանի հովասուն ագարակը:

ԿԸ ԽՕՍԻ ՏՈՔԹ. ԼԵՒՈՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

Կը ներկայացուի «ՇԱՏԱԽՕՍ ՍԱՓՐԻԶԸ» վեկավարութեամբ Ց. ԻՆՃԻԷԱՆի եւ մասնակցութեամբ Գ. Գ. ԱԼԻՓԱՆԵԱՆի եւ ՊԱՍՄԱՃԵԱՆի: Կը նուագէ հայրենակից Ջութակահար Պ. ՆԱՋԻԿԵԱՆ: Գարեբրու ընթացքին կը նուագէ Պ. ՍԻՄՈՆ ՇԻՇՄԱՆԵԱՆ իր խումբով: Պարգեւատուր ճաշեր եւ գուարճալի անակնկալներ: Առատ կերուխում:

Միութեանս վիճակահանութիւնը կը քաշուի տեղւոյն վրայ:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ.— Տուկաք կարիպալարիէն առնել 15, 16, 18 թիւ ճանրակառքերը եւ իջնել Սէն-Լուս կրան փէն:

Ամավերջի դպրոցական ուսդէս

ՓՈՐՔ Տ'ԻՒՔԱԼԻՒ ԴՊՐՈՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ Ս. ՅԻՒԼԻՆ ԿՈՂՄԷ

14 Յուլիս, Հինգշաբթի ժամը 2.30ին Ցովհաննէսեանի սրահին մէջ, 15 Rue Pierre Curie. Bicetre (մէթրօ փորթ տ'Իթալի):

Երգ, արտասանութիւն, ներկայացում, պար եւ զանազան անակնկալներ երկսեռ աշակերտներու կողմէ: Մուտք 3 ֆրանք:

ՀՐԱՊԱՐԱԿԱՑԻՆ ՄԵԾ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ

ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՄԲ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ

15 Յուլիս, Ուրբաթ երեկոյ ժամը 8.30ին Շաբէրթի սրահին մէջ: կը խօսի Պ. ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ, Նիւթ՝ «ԿԱՍՏԱՆԴԻՆ ԵՐԶՆԿԱՑԻ» (ժողովրդական լեզուով մինչեւ դարեւան հայ գրականութեան առաջին մեծ բանաստեղծը):

Ծախսերու մասնակցութիւն 2 ֆրանք:

ՀՐԱՊԱՐԱԿԱՑԻՆ ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Հաճընի Հայրենակց. Վերաշինաց Միութեան

Շասի մասնաճիւղին կողմէ

17 Յուլիս, կիրակի կէսօրէ վերջ ժամը 2ին Սալ տը Ֆեթի ընդարձակ սրահին մէջ: Երգ եւ արտասանութիւն:

Պիտի քանախօսէ Զէյթունի հերոս ԱՂԱՍԻ: Մուտք 2 ֆրանք:

ՖՐ. Կ. ԽԱՉԻ ԿՑՑԱՆԻՆ Ա. ԽՈՒՄԲԻՆ ՍԵԿՆՈՒՄԸ

Ֆ. կապոյտ խաչի վարչութիւնը կը խնդրէ մեզմէ ծանուցանել թէ մասնաճիւղերու կողմէ ընտրուած եւ պատրաստուած տղաքը պէտք է ներկայ ըլլան յառաջիկայ Ուրբաթ օր Յուլիս 15ին, ժամը 11ին Gare Montparnasse: Ընկերութեան կողմէ արտօնուած է հաւաքուիլ Ancienne gare Hall d'entrée (մեծ սանդուղքէն բարձրանալով աջ կողմը):

Տղաքը իրենց հետ պէտք է ունենան ԵՐԿՈՒ ԱՆԴԱՄ ճաշելու չափ ուտելիք:

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻԻՆ

(ՀԻՆ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՄԲ)

Նոր մատենաշարին Ա. հատորը

Հայաստանի ամէնէն տաղանդաւոր արձակագիրը, Նահատակ

ԱԿՍԷԼ ԲԱԿՈՒՆՑԻ

ՇԻՐԱՆԻ ՓՈՂԸ, ԽՈՆԱՐՀ ԱՂՋԻԿԸ, ՍԵՒ ՅԵԼԵՐԻ ՍԵՐՄԱՆՑԸ եւ ՍՊԻՏԱԿ ՁԻՆ:

Հետզհետէ լոյս պիտի տեսնեն ուրիշ հատորներ ԳՈՒՐԳԷՆ ՍԱՀԱԿԵԱՆԻ, ԵՂԻՇԷ ԶԱՐԵՆՑԻՆ, ՎԱՂԱՐՇԱԿ ՆՈՐԵՆՑԻՆ, ԱԼԱՔՍԱՆԷՆ, ՎԱՀԱՆ ԹՈՒՈՒՎԵՆՑԻՆ եւ ուրիշներէ:

Խմբագրական եւ հրատարակչական մարմինը մէկդ նպատակ կը հետապնդէ.— զաղութներուն ծանօթացնել Հայաստանի գրականութիւնը լոյս ընծայելով ժողովրդական ժառանգի գինով գրքոյկներու այս չարքը


Մատենաշարին Բ. հատորը՝ ՊԱՅՄԱՆԱԴՐՅԱԼ Ստեփան Զօրեանէ:

Վաճառման կեդրոնատեղին է ԳՐԱՏՈՒՆ ՀՐԱՆՏ-ՍԱՄՈՒԷԼ 51, Rue Monsieur le Prince, Paris (6) chèque postal, Paris 1278—35, հեռաձայն Danton 88—65:

Մեծաքանակ գնողներու մասնաւոր զեղչ:

Առաջին հատորին գինն է 7.50 ֆր., աթոռասահման՝ 1ուկէս 21. լին կամ 40 սէնթ., Ապատրանքները՝ կանխիկ դրամով:

Hommes Dames



15, Bld. Bonne Nouvelle

Métro: Bonne Nouvelle Tél.: Gut. 93-70



"ՇԻՐԱԿ"

Ընտելքի միակ իսկական օղին է: Անզուգական, Անմրցելի, Ջեխարդախ: Առաջնակարգ զօրացուցիչ ախորժաբեր, պատրաստուած զուտ չամիչի ին: Ցով: Հայ աւանդական սեղանին զարդ:



ՐԱՓԸ ՏԻԻԶ

Զուտ խաղողէ քաշուած եւ անիսոնով պատրաստուած հայկական օղին է ՐԱՓԸ ՏԻԻԶը: Զգուշացէք արուեստական օղիներէ որ ձեր ստամոքսը կ'այրէ եւ գիշերները ջուր կը խմցնէ եւ կը վնասէ ձեր առողջութեան: Խմեցէք միայն ՐԱՓԸ ՏԻԻԶը որուն անյարատ, կազդուրիչ եւ ախորժաբեր ըլլալը հաստատուած է:

Dalakupeian 8 Rue Suffren Dépôt: 7 Rue de la Paix, Marseille. Tél. Dragon 70—89:

ԿԱՊՈՑՆԵՐ ՌՈՒՍԱՍՏԱՆ ՂՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ունինք մեծ մթերք անգլիական, իր անսկան եւ չեխոսլովաք կերպասներու՝ այր մարդոց վերարկուի, հագուստի, կանանց ռոպերու եւ հագուստներու համար: Առաջնակարգ կօշիկներ, ճերմակեղէններ եւ նպարեղէններ: Ունտէրվուտ գրի մեքենայ: Ձափաւոր գիներ:

Դիմել՝ American Lloyd, Paris (9). 7 rue Auber

Tél. Opéra 67-77

ՇՈՒԵՅԱՏԵՏՐ

Ց. Կ. ԽԱՉԻ Փարիզի մասնաճիւղը, փոքրիկն ՌՈՒԲԻՆ ԻԶՄԻՐԼԵԱՆի մահուան տխուր առթիւ, փոխան ծաղկեպսակի, կը նուիրէ Կապոյտ Աչի կայանի համար մէկ երախայի անկողին՝ ողբացեալին անունով:

ՀԱՑ ԿԱՄԱՒՈՐՆԵՐՈՒ ԵՒ ՄԱՐՏԻԿՆԵՐՈՒ ՄԱՐՍԷՅԼԻ չրջանի Ընդհանուր Ժողովը 17 Յուլիս, կիրակի առաւօտեան ժամը ճիշդ 9ին, «Բաֆէ Նուա»յի ներսի սրահին մէջ (1 Bld. Dugomier): կարեւոր օրակարգ: Ներկայ պիտի չըլայ կեդր. Վարչութեան ներկայացուցիչը:

ՅԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Լասիօթայի «Ժամակ» խումբի բոլոր ընկերները ցասկացութիւն կը յայտնեն ընկ. Ղուկաս Կորկոտեանի՝ իր քրոջ զաւկին զառնաղէտ մահուան առթիւ, նոյնպէս իր քեռայրին եւ քրոջը եւ բոլոր պարագաներուն:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Ց. Սահակեան (Ալֆորվիլ) խորին չնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց, որոնք ներկայ գտնուեցան ՇՈՒՊ ՓԱՎԱՑԵԱՆի յուղարկաւորութեան:

ԾԱԽՈՒ Է

Ալֆորվիլի մէջ, հայաչատ կեդրոնի վրայ, բանուկ սրճարան մը, ՆԸՆի վրայ, բանուկ սրճարան մը, ՊԱՍՏԱՒՈՐ ՊԱՑՄԱՆՆԵՐՈՎ: Դիմել այրէ Տիկին Մարիամ Փափազեանի, 29 bis, Rue Etienne-Dolet, Alfortville (Seine):

ԳԱՂԻՔ ՏԵՍԼԻՔ ԼԻՈՆԻ ՄԷՋ

Cinéma REXY

Cours Lafayette. angle Garibaldi

Le Gérant : H. STEPHAN

Imprimerie A. DER (AGOPIAN)

17, Rue Demesme — PARIS (13)

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՑԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
17, Rue Damesme, PARIS (13e)

Téléphone : Glacière 15 - 70
Chèque Postal Paris 1678 - 63
(ԵՐԹԵԼԵԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.— ՏԱՐԵԿԱՆ ՎԵՑԱՄՍԵԱՅ ԵՒԱՄՍԵԱՅ

Ֆրանսա եւ Գաղութներ	150 ֆրանք	75 ֆրանք	40 ֆր.
Անգլիա եւ Իտալիա	265 ֆրանք	140 ֆրանք	
Ուրիշ երկիրներ	215 ֆրանք	110 ֆրանք	

ՇԱԲԱԹ 16 ՅՈՒԼԻՍ SAMEDI 16 JUILLET 1938

ԺԹ. ՏԱՐԻ — 14e Année No. 3783

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ԵՐԵՔ ՏԱՐԻ ՎԵՐՋԸ

Այս տարի ալ կրկնուեցաւ Ժողովրդական Համախմբումի ցոյցը՝ երկու մեծ թափօրներով, Պասթէյէն մինչեւ Նասիոն, կրկնելու համար 1935 յուլիս 14ի հանդիսաւոր երդումը:

Ինչպէս միշտ, այս տարի ալ ցոյցը անցաւ դնդհատելի բարեկարգութեամբ, որուն կը հսկէին մասնակցող հոսանքներու կարգադիր յանձնախումբերը:

Երկու թափօրները որոշ ուղեգծի մը հետեւելով, կը հասնէին Նասիոնի հրապարակը, որուն մեծ յիշատակարանին վրայ կախուած էր երդումի բանաձեւը: Իւրաքանչիւր հոսանք թափօրին կը մասնակցէր իր բազմապիսի մասնաճիւղերով եւ խմբակցութիւններով, որոնց ամէն մէկն ունէր իր նշանախօսքը, մեծատառ եւ ընդհանրապէս կարճիկ: Ամբողջ բազմութեան, ինչպէս եւ ճամբուն վրայ չարուած հանդիսաւորութիւններուն մէջ կը տիրապետէին բոլշեւիկները, որոնք «միութի՛ւն, միութի՛ւն» կ'աղաղակէին, մանաւանդ երբ ընկերվարական խմբակցութիւն մը կ'անցնէր:

Օրուան գլխաւոր նշանախօսքերն էին.

— Յանուն հացի, ազատութեան եւ խաղաղութեան: Գործադրեցէ՛ Ժողովրդական Համախմբումի ծրագիրը: Հաւատարմութիւն 1934 յուլիս 14ի երդումին:

— Դէպի բանտ՝ վեղարաւորները (Գաղտնի Կոմիտէին անդամները): Բանտարկեցէ՛ Տը լա Ռոֆը եւ Տոռիօն:

— Բացէ՛ սահմանագլուխը: Թնդանօթ եւ օդանաւ ճարել Սպանիոյ:

— Անկո՛ւղ պատերազմը.— Անկո՛ւղ փաշականութիւնը.— Լուծեցէ՛ խռովարարական կազմակերպութիւնները:

— Գոհացում պետական պաշտօնեաներու: Կա՛մ յաւելում, կա՛մ գործադուլ: Մեր 10 առ հարիւրը ...

— Կեցցէ՛ Թորէզ: Իշխանութեան գլուխ Թորէզը:

Թերեւս աւելորդ չէ թարգմանել 1935 յուլիս 14ի երդումն ալ.

— « Կ'երդնումնիք միացեալ մնալ պաշտպանելու համար Ժողովրդապետութիւնը, գինաթափ ընելու եւ լուծելու համար խռովարար կազմակերպութիւնները, փաշականութեան դէմ անմատչելի դարձնելու համար մեր ազատութիւնները: Կ'երդնումնիք պաշտպանել Ֆրանսայի Ժողովուրդին շահած ժողովրդապետական ազատութիւնները, հաց տալ աշխատաւորներուն, աշխատանի՛ երիտասարդութեան, և Մարդկային Մեծ Խաղաղութիւնը աշխարհի»:

Անոնք որ կանոնաւորապէս հետեւած են վերջին երեք տարիներու այս աւանդական ցոյցերուն, դիտեցին կարգ մը յատկանշական երեւոյթներ :

Նախ՝ մեծապէս պակասած էր բազմութիւնը, եւ անոր հետ ալ՝ խանդավառութիւնը :

Նախընթաց տարիներուն, մանաւանդ երբ առաջին երդումը կը կատարուէր, Նասիոնի փապուղին կը կազմէր տեսակ մը սահմանագիծ: Ուրիշ խօսքով, փապուղիէն դուրս ելլելով, ստիպուած էիր կանգ առնել անոր բերանը,— այնքան որ խիտ էր բազմութիւնը:

Այս տարի, կրնայիր պտտիլ առանց դժուարութեան, հասնելով մինչեւ թափօրին ափը, ուր բազմութիւնը հազիւ քանի մը շարքերէ կը բազկանար: Ընդարձակ հրապարակը թափուր էր գրեթէ կէս առ կէս :

Երկրորդ՝ թափօրը վերջացաւ ժամը 6ին, մինչդեռ նախընթաց տարիներուն մինչեւ ժամը 9ը տակաւին բազմութիւններ կը հոսէին Սէնթ Անթուանէն եւ ուրիշ փողոցներէ :

Երրորդ՝ զգալապէս նուազած էր խանդավառութիւնը: Մինչ ուրիշ տարիներ «Ինթէրնասիոնալ»ը կը գոռար անընդհատ, եւ ծափերն ու բացագանչութիւնները կը ճեղքէին օդը, կը թնդացնէին գետինը, այս անգամ տարօրինակ թուլութիւն մը կը տիրէր: Եւ ընդհանրապէս բոլշեւիկներ էին պոռացողներն ու ցնծացողները:

Իսկ ամէնէն ուշագրաւը՝ ընկերվարականներուն եւ բոլշեւիկներուն վոխադարձ վերաբերումն էր (արմատականները կը մնային երրորդ կարգի վրայ):

Այսպէս, ամէն անգամ որ ընկերվարական խմբակցութիւն մը կ'անցնէր, առաջնորդութեամբ յայտնի վարիչի մը, կարմիր հանդիսատեսները կ'աղաղակէին.

— Միութի՛ւն, միութիւն գործի :

Այս կանչը տեսակ մը սրտնեղութիւն կը պատճառէր ընկերվարականներուն, որոնք անոր կը պատասխանէին դժգոհ չարժուճաճեւերով եւ կամ հեգնութեամբ:

Ամէնէն նշանակալից դէպքը պատահեցաւ այն պահուն երբ ընկերվարական խմբակցութիւն մը՝ առաջնորդութեամբ Պ. Ժան Լոնկէի, սահպուած էր կանգ առնել, ճամբան խճողուած ըլլալով:

« Միութի՛ւն, միութի՛ւն» կ'աղաղակէին կարմիրները: Եւ ահա բանավէճ մը: Լոնկէ ինքն ալ ջղագրգռուեցաւ: Քանի մը ընկերներ սկսան տալ - առնել: Ի վերջոյ լսուեցաւ հեգնական ձայն մը.

— Այո՛, միութիւն, բայց առանց ժողովրդապետներու : (Կ'ակնարկէ համայնավարներու այն կոչին որ ուղղուած է կաթոլիկ վարդապետներուն եւ քահանաներուն):

Ուրիշ անցքի մը առեն, քիչ մնաց որ ընդհարում պատահէր: Համայնավար տիկին մը ճայնը ձգած «Միութիւն» կ'աղաղակէր : Ընկերվարական տիկին մը ջղագրգռուելով պոռաց.— «Հասկցանք, հերի՛ք է»:

Դեռ կային ընկերվարականներ ալ որոնք արձակուած կանչին կը պատասխանէին կարուկ չարժուճեւով մը — ցուցամատը ցցելով ժխտական իմաստով (ո՛չ):

Ո՛րքան խօսուն է, իրրեւ հոգեբանական վիճակ, այս արտայայտութիւնը, ճիշդ այն պահուն երբ երկու կուսակցութեանց միութեան ալ բանավէճի մը բռնուած է, միութեան հարցին առթիւ, եւ նամակներ կը փոխանակուին կեդրոնէ կեդրոն : Շ.

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ՅՈՒԼԻՍ 14Ի ՋՕՐԱՀԱՆԴԷՍԸ ՀԱՐԻՒՐԱՒՈՐ ՀՐԱՍԱՑԵՐՈՎ ԵՒ ՕԴԱՆԱՒԵՐՈՎ

Յուլիս 14 աւանդական զօրահանդէսը այս տարի փայլեցաւ զէնի ու զրահի պատկառելի ցուցադրութիւնով մը, հինգշաբթի առաւօտ, ժամը 9էն մինչեւ 11, մանաւանդ որ քանի մը օրէն Փարիզ կը հասնին Անգլիոյ թագաւորն ու թագուհին (Յուլիս 19 — 22): Ինչպէս ամէն տարի, Զօրահանդէսին ներկայ էին Հանրապետութեան նախագահը, նախարարները եւ օտար դեսպանները, բազմաթիւ բարձրաստիճան պաշտօնատարներով, որոնց առջեւէն չարք - չարք անցան Ֆրանսական բանակին ամէնէն ընտիր եւ արդիական զօրամասերը, երկրին ամէն կողմերէն: Մանաւանդ աչքի կը զարնէին հրասայլերը՝ ամենավերջին դրութեամբ, սովորականէն մինչեւ 35 թոննոց «հրէչներ», սպառազին - ուած՝ թնդանօթներով եւ գնդացիրներով, մինչ օդին մէջ կը սաւառնէին չարք չարք սաւառնակներ եւ օդանաւեր, դրեթէ տուներու տանիքներուն քսուելով: Նոր տպաւորութիւն գործեցին նաեւ մեքենաչարժ զօրամասերը: Անհամար բազմութիւն մը խռնուած էր Շան զ'Էլիզէի պողոտային մայթերուն եւ կողմնակի փողոցներուն վրայ, ինչպէս եւ տուներու տանիքներուն, պատշգամներուն եւ պատուհաններուն առջեւ: Բարեկարգութեան կը հսկէին ոստիկանները եւ շրջուն պահակները :

Կէս օրէն վերջը տեղի ունեցաւ Ժողովրդական ճակատի թափօրը, կրկնելու համար 1935 յուլիս 14ի ուխտը: Նախապէս կարգադրուած էր որ ինը ճառեր խօսուին, մասնակցող հոսանքներու ներկայացուցիչներուն կողմէ, բայց վերջին պահուն մէկդի դրուեցան բոլոր ճառերը, վէճ մը ծագած ըլլալով ա - նոնց դրաքննութեան առթիւ (առաջարկուած էր որ վարիչ մարմինը նախապէս աչքէ անցընէ ճառերը): Այս տարի ոչ նախորդին բազմութիւնը կար, ոչ ալ համառաթած խանդավառութիւնը:

Յուլիս 14ը մեծ հանդիսաւորութեամբ տօնուեցաւ նաեւ Ֆրանսայի բո - լոր մասերուն եւ արտասահմանի մէջ: Օդը մոայլ է միշտ, բայց անձրեւը դադրած ըլլալով, աւանդական պարերը կը չարունակուին նոյն ոգեւորութեամբ :

*** Պէլճրութէն կը հեռագրեն թէ երեքշաբթի օր Սուրիայէն մեկնեցաւ Ազգերու Դաշնակցութեան այն յանձնաժողովը որ պաշտօն ունէր հսկելու Ա - լեքսանդրէթի Սանճաքին ընտրութեանց վրայ:— Յուլիս 14ի տօնին առթիւ, Սանճաքին ֆրանսական եւ թրքական զինուորները միասին մասնակցեցան աւանդական զօրահանդէսին, հրամանատարութեամբ գնդ. Քոլէի եւ գնդ. Ֆէվզիի: Պէյրութի մէջ զինուորները աչքէ անցուց արեւելեան բանակին հին հրամանատարը, զօր. Հէօնցիկէր, Դամասկոսի մէջ՝ նորը՝ Զօր. Քայէօ :

Խաղիղ մէջ ալ ցեղապաշտ չարժում

Իտալական կառավարութիւնը յուլիս 14ին հրատարակել տուաւ յուշագիր մը, որ հետեւեալ խնդիրը կը յարուցանէ — Իտալիա պիտի հետեւի ցեղապաշտական քաղաքականութեան մը: Յուշագիրը, որ ստորագրուած է խումբ մը փրոֆէսէօրներու կողմէ, կը պարունակէ հետեւեալ տասը կէտերը.—

1. Աչխարհի մէջ կ'ընդունուին տարբեր ցեղեր: Այս չի նշանակեր, ի յառաջդունէ, թէ անոնք գերազանց կամ ստորադաս են, այլ տարբեր են:

2. Կան մեծ եւ փոքր ցեղեր: Հիւսիսական եւ Միջերկրականեան ժողովուրդները, օրինակի համար, կենսաբանական տեսակէտով կը կազմեն ճըշմարիտ ցեղեր որոնց գոյութիւնը ակներեւ իրողութիւն մըն է :

3. Ցեղային ըմբռնումը խիստ եւ խիստ կենսաբանական է :

4. Իտալացի ժողովուրդը եւ իր քաղաքակրթութիւնը արիական են :

5. Իտալիոյ համար առասպել մըն է տարբեր բազմութեանց նպաստը՝ պատմական ժամանակներու մէջ:

6. Այսուհետեւ գոյութիւն ունի զուտ իտալական ցեղ մը: Այս հաստատումը հիմնուած է արիւնի այն զուտ խնամութեան վրայ որ կը միացնէ այսօրուան Իտալացիները զարեր առաջ Իտալիան լեցնող բնակիչներու հետ:

7. Եկած է ժամանակը որ Իտալացիները բացէ ի բաց իրենք զիրենք հըրաւիրեն ցեղապաշտ: Բայց խնդիրը պէտք է չօշափել զուտ կենսաբանական տեսակէտով, առանց փիլիսոփայական կամ կրօնական դիտումի:

8. Հարկ է բացորոշ զանազանութիւն մը հաստատել Եւրոպայի Միջերկրականեան ցեղերուն (արեւմտեան Ժողովուրդներ) եւ Արեւելքցիներուն ու Ափրիկէցիներուն միջեւ :

10. Իտալացիներու զուտ եւրոպական ֆիզիքական եւ հոգեբանական յատկանիշները պէտք չէ խաթարուին որ եւ է ձեւով: Միութիւնը կ'ընդունուի միայն եւրոպական ցեղերու շրջանակին մէջ:

Յուշագիրը կը ձգտի նաեւ ապացուցանել թէ մեծ ցեղերուն չհար պէտք է դերազանց փոքր ցեղերուն վրայ :

Յուշագրին բովանդակութենէն կը հետեւի թէ նպատակայարմար չեն Իտալացիներու եւ Հրեաներու միջեւ եղած ամուսնութիւնները :

Իտալական թերթերը խօսելով այս յուշագրին վրայ, դիտել կուտան թէ « հիւսիսական » բացատրութիւնը անպատճառ չի նշանակեր հիւսիսային Եւրոպայի ժողովուրդներ, այլ Եւրոպացի, որուն ֆիզիքական տիպարը «կը համապատասխանէ մեր մեծ բանաստեղծներուն պանծացուցած ինչպէս եւ հելլէն, լատին եւ իտալացի արուեստագէտներու կողմէ արձանագործուած դասական դիցեցկութեան »:

Աչխարհի շրջանը հրեի օր, 19 ժամ, 14 վայրկեանէն

Ամերիկացի միլիառատէր օդաչուն, Հօուըրտ Հիւզ եւ իր չորս ընկերները յաջողեցան պլուս հանել իրենց յանդուգն ծրագիրը աչխարհի շրջանը ամենակարճ ժամանակամիջոցի մը մէջ: Օդաչուները, որոնք Նիւ Եորքէն ճամբայ եղած էին անցեալ չաբթու, հոն վերադարձան ողջ առողջ եւ արժանացան ընդունելութեան մը որ տեսնուած չէր մեծ պատերազմի դինադադարէն ի վեր: 800.000 հոգինոց բազմութիւն մը խորտակեց ոստիկանական շրջանները, ողջունելու համար օդաչուները: Աչխարհի շրջանը տեւած եղաւ 3 օր, 19 ժամ եւ 14 վայրկեան, ինչ որ կ'նշանակէ չորս օր եւ 35 վայրկեան պակաս՝ նախորդ անոյհանէն (հանդուցեալ Ուիլի Փոստ, Ամերիկացի, որ 1933 յուլիս 15 — 22

(Վարերու շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

ԱՌԱՋԻՆ ՑԵՂԵԿԱՏՈՒԻՆԵՐԸ ԿԸ ՊՆԴԵՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ, ԼՐԱՑՈՒՑԻՉ ՄԱՆՐԱՄԱՍՆԱՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՂՈՐԴԵԼՈՎ

ԽՄԲ.— Ճիշդ այն պահուն երբ կը պատրաստուէինք մէկ - երկու լուսաբանութիւններ բաղել կաթողիկոսի սպանութեան պարագաներուն մասին, թղթաթերը չորեքշաբթի օր յանձնեց ապահովագրեալ ծրար մը,— երկար թղթակցութիւն մը, որ ոչ միայն կը հաստատէ առաջին տեղեկութիւնները, այլեւ շարք մը նորութիւններ կը հաղորդէ :

Կը հրատարակենք նաեւ այս թղթակցութիւնը, կարելի փորձելով կարգ մը լուրերու ՎԵՐՋՆԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԱՆ համար: (Տարրական պարկեշտութիւնը կը պահանջէ որ «Հայաստանասէր»ներն ալ նոյն փորձը կատարեն, փոխանակ օրօր կարդալու կամ «հերքումներ» թխելու նստած տեղը, չորս պատի մէջ).—

..... 30 Յունիս 1938

*Էջմիածնի մէջ կատարուած ողբերգութեան, կաթողիկոս Խորէն Ա.ի նահատակութեան եւ մանաւանդ Հայաստանի մէջ տիրող զարհուրանքի մասին ամէնէն աւելի ընդարձակ եւ մանրամասն տեղեկութիւնները ես հաղորդեցի արտասահմանի երեք կարեւոր օրաթերթերուն,— «Ճառաջ», «Հայրենիք» եւ «Նուասարդ»: Այս թերթերէն ալ արտասպումներ կատարեցին արտասահմանի բազմաթիւ թերթեր, բացի ամէնամեծ եւ «Հայաստանասէր» մամուլէն, որի բրածոյ խմբագիրներն ու ղեկավարները մինչեւ այսօր ալ կարծում են թէ Հայաստանում կատարուած դէպքերի եւ Էջմիածնի ողբերգութեան, Խորէն Ա. կաթողիկոսի նահատակութեան մասին Դաշնակցական թերթերի թղթակիցների հաղորդած տեղեկութիւններն ու թղթակցութիւնները չարամտօրէն գրուած, չինծու, սուտ - սխալ եւ կամ բոլորովին չափազանցուած են: Ամէնավար թերթերին եւ նրանց խմբագիրներին պատասխանելու ժամանակ չունիմ եւ խորհուրդ եմ տալիս, որ Դաշնակցական թերթերի խմբագիրներն ալ սիրտ ու միտք չմաչեցնեն ամէնավարներին եւ միւսներին համոզելու եւ հաւատացնելու, թէ Ամենայն Հայոց կաթողիկոս նահատակ Խորէն Ա.ը խեղդամահ եղած է Զեկայի հրամանով, թէ Էջմիածնի Մայր Տաճարը թալանուած է, թէ տարուած են Էջմիածնի ամբողջ հարստութիւնները, եկեղեցական սրբազան անօթները եւ մինչեւ իսկ միւռոնի կաթսան: Ձուր է ամէնավարներին հաւատացնել թէ Զեկան գլխատել է երեւանի հայ լուսագոյն մտաւորականներին, ախտորել, բանտարկել, անհետացրել է հազարաւոր անմեղ մարդկանց՝ մեղադրելով նրանց իբր տրոցկիստ, ևացիոնալիստ, Դաշնակցական, հակայեղափոխական եւայլն:

*Այսօր դարձեալ հաղորդում եմ տեղեկութիւններ Էջմիածնի եւ Հայաստանի մասին: Այդ տեղեկութիւնները ստացել եմ Հայաստանից եկած իրանահպատակներից: Աւելորդ եմ համարում հրապարակով յայտնել իմ տեղեկատուների անուն - ազգանունները: Ամէնավար եւ միւս թերթերը արտասահմանում անչուշտ ունին իրենց «տեփական թղթակից»ներ եւ ուղտի ականջում քնած այդ թղթակիցները լսեն են այն բոլոր պատմութիւնները, որ անում են Հայաստանից Իրան անցած՝ աւելի ճիշդ քչուած իրանահպատակները, սակայն ամէնավար թղթակիցները կը պահեն այդ բոլորը, չեն գրում իրենց թերթերին:

Հայաստանից վերջերս եկած Իրանահպատակներից մէկը, որ կաթողիկոսի նահատակութիւնից վեց օր վերջը գնացել է Էջմիածին, հետեւեալ տեղեկութիւնները է հաղորդում Ամենայն Հայոց կաթողիկոս Խորէն Ա.ի նահատակութեան մասին.—

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՍՊԱՆՆՈՒԱԾ Է ՄՈՍԿՈՒԱՅԻ ԱՆՄԻ - ՋԱԿԱՆ ՀՐԱՄԱՆՈՎ, ԹԻՖԼԻՍԻ ԳԻՏՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԵՐԵՒԱՆԻ ԶԵԿԱՅԻ ԳՈՐ - ԾԱԿԱԼՆԵՐՆ ԱՒ ԿԱՏԱՐԵԼ ԵՆ ՄՈՍԿՈՒԱՅԻ ՀՐԱՄԱՆԸ :

ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՆԱՀԱՏԱԿՈՒԱԾ Է ԱՊՐԻԼ 6ի ԳԻՇԵՐԸ, ԼՈՑՍ ԱՊՐԻԼԻ 7Ը: ՄԱՀՈՒԱՆ ԼՈՒՐԸ ԳԻՇԵՐՆ ԻՍԿ ԻՄԱՑՈՒԵԼ Է ՎԱՆՔՈՒՄ, ԲԱՑՑ ՈՉ ՈՔ ՉԻ ՀԱՄԱՐՁԱԿՈՒԵԼ ՁԱՑՆ ՀԱՆԵԼ :

Զեկիստները երկու ինքնաչարժերով գալիս են Էջմիածին՝ գիշերուան ժամը 10ին: Մտնում են վանքի բակը եւ Էջմիածնի Զեկայի հետ խորհրդակցելուց վերջ, պատրաստում են կաթողիկոսի սպանութեան եւ վանքը թալանելու ծրագիրը :

Գիշերուան ժամը 1ին, երբ ամբողջ վանքի շրջապատում ահ ու սարսափ եւ չեկիստների զարգանդն էր տիրում, ոճրագործները զգուշութեամբ մտնում են Վեհարանը, դուռը ներսից կողպում եւ բարձրանում են կաթողիկոսի կացարանը, թակում են ննջարանի դուռը: Դժբախտ կաթողիկոսը դեռ չէր պառկել, արթուն նստած կարծես զահճներին էր սպասում :

Ոճրագործները ներս են մտնում եւ առաջին առթիւ ասում են.

— Աղասի Յանճեանը ամբողջ հինգ տարի Էջմիածնից տուրք չի վերցրել, նա պաշտպանել է ձեզ եւ ազատել է տուրքից եւ տուգանքից, որոնց գումարը հասնում է 240.000 րուբլու (երկու հարիւր քառասուն հազար): Դուք այդ գումարը չէք վճարել: Կառավարութիւնը այժմ Էջմիածնից պահանջում է միայն 40.000 րուբլի (մօտ 8000 տոլար — ութ հազար): Այդ գումարը հիմայ պէտք է վճարէք, առանց որ եւ է առարկութեան :

Հոգեկան անհնարին տագնապի մատնուած կաթողիկոսը ժամանակ է խնդրում, այդ գումարը վճարելու համար: Խնդրում է թոյլ տալ իրեն հեռագրել արտասահման եւ դրամ ստանալ: Մերժում են :

(Շարունակելի)

ՅՈՎՆԵՑԻ

*** Երուսաղէմի Պատրիարքը յուլիս 2 թուականով հեռագիր մը ստացած է Ս. Էջմիածնէն Տեղակալ Գէորգ Արք. Զէօրէքճեանի կողմէ ստորագրուած, որ կ'ըսէ թէ «տեղեկագիրը ուշարկուած է, համեցէք յայտարարել»:

Պատրիարքը կը խորհի թէ այս տեղեկագիրը պէտք է ըլլայ այն որուն մասին խնդրանք ներկայացուցած էր Էջմիածին :

ՏԷՍԻՆի ոստիկանապետութիւնը կը հրաւիրէ հայ գաղթականները, ոստիկանատունէն ստանալ իրենց ինքնութեան թուղթերը: Միեւնոյն առեն կը յիշեցնէ թէ Ֆրանսա բնակող օտարականներու վերաբերեալ նոր հրամանագրին համաձայն, պարտին իրենց ինքնութեան թուղթերուն նորոգութիւնը խնդրել, անոնց տեւողութեան թուականէն երեք ամիս առաջ :

ՏԱՐԱԳԻՐՆԵՐՈՒ խորհրդաժողովը կատարեալ համաձայնութեան յանգեցաւ Էվիանի մէջ: Միջկառավարական մնայուն յանձնաժողով մը պիտի կազմուի Լոնտոնի մէջ, նախագահութեամբ անգլիացի պաշտօնատարի մը:

ՍՏԱՄԲՈՒԼԻ ԿԱՆԱՉԸ

The Bunch of Stamboul

By DENNIS WHEATLEY

Թարգմ. Տ. ՀԱՅԿԱԶՅԱՆԻ

Էջ M. — Թարգմ. Փ. Ս.

Երբ ինքնաթիռը վայրէջք կատարեց Լե Բուրժէ օդակայանում, ես ուշադրութիւն դարձրի, որ ինձ դիմաւորելու համար այնտեղ կանգնած էին ոչ միայն ֆրանսիական զինուորական իշխանութիւնների, այլև ամերիկեան դեսպանատան ներկայացուցիչները։ Ակնյայտ էր, որ ինձ ուշադրութեան առարկայ էին դարձրել։ Ես ինձ ոչ այնքան կարևոր անձնաւորութիւն էի համարում, որպէսզի ինձ համար այդքան մեծ պատիւ անէին։ Ես ենթադրեցի, որ ինձ ուղարկած հեռագրի մէջ Ռոդնի Սթրիթը ինչ-որ բան էր ակնարկել։

Ես ուզում էի անմիջապէս հարցնել, թէ ինչ է պատահել, բայց ինձ ստիպեցին սպասել, մինչև ինձ համար ուղարկուած մեքենան կը հասնի։ Ես ստիպուած էի համբերել։

Ինձ տարան Լե Բուրժէ քաղաքի ամենաշքեղ հիւրանոցներից մէկը, որտեղ ինձ համար մի մեծ սենեակ էին պատրաստել։ Ես ինձ ներկայացրի հիւրանոցի տնօրէնին, որը ինձ ասաց, որ ինձ համար հեռագրեր կան։ Ես ուզում էի անմիջապէս ստանալ դրանք, բայց նա ինձ ասաց, որ նախ պէտք է ճաշեմ, որովհետև ինձ համար սեղան է պատրաստուած։

— Ներեցէք, պարո՛ն, ասի ես, — ես ուզում եմ իմանալ, թէ ինչ է պատահել։ Ես ուզում եմ ստանալ հեռագրերը։

— Ներողութիւն եմ խնդրում, պատասխանեց նա, — բայց ես հրամայուած եմ ձեզ ոչինչ չասել, մինչև դուք ճաշէք։

Ես ուզում էի բողոքել, բայց ինձ ասացին, որ ինձ համար ամենաշքեղ սենեակներից մէկը պատրաստուած է, և ես ստիպուած էի ենթարկուել։

Ես ճաշեցի, և ինձ ասացին, որ հեռագրերը ինձ կը բերեն սենեակս։ Ես ուզում էի ինքս գնալ, բայց ինձ ասացին, որ ինձ համար ուղարկուած մեքենան դեռ չի հասել։

Ես ստիպուած էի սպասել։

Ես ուզում էի հանգստանալ, բայց ինձ համար անհնար էր հանգստանալ։ Ես ուզում էի իմանալ, թէ ինչ է պատահել։ Ես ուզում էի ստանալ հեռագրերը։

Ես ուզում էի ինձ համար ուղարկուած մեքենան տեսնել

ԴԱՇՆԱՄԱՆ ՎՃԱՌՈՎՈՒ

— Ի՞նչ ... Ինչպե՞ս ... Ես ինչ-որ բան չեմ հասկանում ... Ես ինչ-որ բան չեմ հասկանում ... Ես ինչ-որ բան չեմ հասկանում

մրցանիշը կոտրեց 7 օր, 19 ժամ եւ 49 վայրկեանէն):

Ահաւասիկ այս հոյակապ թռիչքին մանրամասնութիւնները.—

Նիւ Եորք Փարիզ.— 5800 քիլոմեթր, տեւողութիւն՝ 16 ժամ 55, հանդիստ՝ 7 ժամ:

Փարիզ - Մոսկուա.— 2780 քիլոմեթր, տեւողութիւն՝ 7 ժամ 41, հանդիստ՝ 2 ժամ 26:

Մոսկուա - Օմսք.— 2250 քիլոմեթր, տեւողութիւն՝ 8 ժամ 39, հանգիստ՝ 3 ժամ 37:

Օմսք-Եաֆուցք.— 3480 քիլոմեթր, տեւողութիւն՝ 10 ժամ 31, հանգիստ՝ 2.53:

Եաֆուցք - Ֆէրպէնֆս (Ալասքա).— 3960 քիլոմեթր, տեւողութիւն՝ 12 ժամ 17, հանգիստ՝ 1 ժամ 18:

Ֆէրպէնֆս - Մինէապոլիս.— 3790 քիլոմեթր, տեւողութիւն՝ 12.55 ժամ, հանգիստ՝ 50 վայրկեան:

Մինէապոլիս - Նիւ Եորք.— 1650 քիլոմեթր, տեւողութիւն 4.45:

Ուրեմն, օդաչուները կտրած են համադրմամբ 23,710 քիլոմեթր, թռչելով 73 ժամ 23 վայրկեան եւ հանգստանալով 17.51 վայրկեան: Ուրիշ խօսքով, ամբողջ շրջանը տեւած է 91 ժամ 14 վայրկեան, ժամական միջին արագութիւնը՝ 260 քիլոմեթր: Օդանաւային ամենափառաւոր թռիչքն է այս, եւ նոր էջ մը կը բանայ օդագնացութեան մէջ:

Նոր դէպքեր Գաղեստինի մէջ

Շաբաթ երեկոյ երկու Հրեաներ դաշունահար սպաննուեցան Հայֆայի մէջ: Շիշդ նոյն օրը անգլիական մեքենաշարժ զօրամաս մը հասած էր Եգիպտոսէն: Ուրիշ դէպքեր ալ պատահեցան նոյն շրջանին մէջ: Բաղդատաբար հանդարտութիւն կը տիրէ երուսաղէմի մէջ: Արաբներուն չափ Հրեաներն ալ վրէժխնդրական միջոցներու դիմած ըլլալով, Լոնտոնի թերթերը կը կարծեն թէ հրէական կազմակերպութեան վարիչն է Վլատիմիր Եապոթինսքի, վերաքննական կուսակից Սիոնականներուն առաջնորդը: Այս կուսակցութիւնը մասնաւոր տեղութիւն մը կը սնուցանէ Արաբներուն դէմ:

Ճիպրոպարահի միջեւ Թուրքիա

Լոնտոնի թերթեր կը գրեն թէ կառավարութիւնը նկատի առնելով Գերմանիոյ եւ Իտալիոյ դիտումները՝ Սպանիոյ եւ Փորթուկալի վրայ, նոր միջոցներ կը ծրագրէ, աւելի ամրացնելու համար Ճիպրալթարը եւ Արեւելեան Միջերկրականի դիրքերը: Որոշուած է ծանր թնդանօթներ տարել Փորթուկալ, որուն կը զարպասեն թէ Հռոմ-Պերլին առանցքը եւ թէ անգլեֆրանսական դինակցութիւնը: Դրամ ալ պիտի տարուի Փորթուկալի, որ Անգլիոյ վաղեմի դինակիցն է: Ճիպրալթարի ամրութիւնները պիտի օժտուին արդիական սպառազինութիւններով: Կ'ըսուի նաեւ թէ իսկ եւ իսկ զինուորական դաշինք մը պիտի կնքուի Անգլիոյ, Ֆրանսայի եւ Թուրքիոյ միջեւ: Այս տեսակէտէն մեծ կարեւորութիւն կը ներկայացնէ անգլիական 16.000.000 ոսկիի վարկը՝ Թուրքիոյ վերազինման համար: Անգլիա կ'ուզէ հակադրել Իտալիոյ՝ արեւելեան Միջերկրականի մէջ եւ Սուէզի համբուն վրայ: Հաւանական է որ Անգլիա զարպասէ նաեւ Զօր. Ֆրանքոյի, նոյն մտահոգութիւններով:

ՋԱՆԱՋԱՆ ԼՈՒՐԵՐ ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՀԱՐՄՆՑՈՒՆԵՐՈՒ ՇՈՒԿԱՑ մը գոյութիւն ունի Օսթրուկայի մէջ (Եուկոսլավիա), երկար տասնիկ մը վերը: Հաւնած աղջիկը կը գտուի, գինը կը վճարես, 100 տոլար կամ աւելի պակաս, չիտակ եկեղեցի կը տանիս: Մասնաւոր միջնորդներ կը դիւրացնեն գործողութիւնները: Արդ, առաջին անգամ ըլլալով, վերջերս երեք Անգլիացիներ ալ, որոնք ինքնաշարժով պտոյտի ելած էին, զացին երեք հարսնցուներ գտնեցին, ամէնէն գեղեցիկը, Օր. Մելիցա Ռատոսլաւիէչ, կ'արժէր 1500 տինար (400 տոլար): Պսակը տեղի ունեցաւ օրթոտոքս եկեղեցին, յետոյ աւանդական խրախճանքները կատարուեցան, եւ երեք փեսաները հարսերն առին տարին, թէեւ իրարու լեզու չեն հասկնար:

ԱԻելի ՔԱՆ ՄԷԿ ՄԻԼԻՈՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ «մաքրապործումի»ի ենթարկուած են Ա. Միութեան մէջ, համաձայն փախստական զօր. Լուչքովի, որ ձախող կը դտնուի այժմ: Զօրավարը այս առթիւ կը նկարագրէ այն ահռելի չարչարանքները որոնց կ'ենթարկուին բանտարկեալները, խոստովանութիւն ներ կատարելու համար:

ՁԱՓՈՆ որոշեց մէկդի դնել 1940ի ցուցահանդէսը, ինչպէս եւ ողիմպիականը, իրրեւ հետեւանք չինեւճափոնական պատերազմին:

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ՓԱՐԻԶԻ Հ. Յ. Դ. «ԵՓԻՊՏԱՑԻ» ԿՈՄԻՏԷԻ ԿՈՂՄԷ

24 Յուլիս, կիրակի առաւօտ ժամը 9էն մինչեւ պիշերուան 11ը

ՌՈՊԵՆՍՈՆԻ GRAND ARBRE, Maison FIQUETի պարտէզին մէջ

Կը խնդրուի նկատի ունենալ այս թուականը:

Յիշատակի օր Վարդավառի առթիւ

Տաթեւ-Յուրաբերդցիի Հայրենակից. Միութեան կողմէ

24 Յուլիս, կիրակի ժամը 3ին, Պ. Յովհաննէսեանի սրահը, Քրէմլէն-Պիսէթը: Մանրամասնութիւնները շուտով:

Կ'ՈՒԶՈՒԻ 15—18 տարեկան ճարպիկ տղայ մը ժամագործի քով աշխատելու եւ քուրսի հաճար: Նկատի յանձնել դպրոցական վկայագրով: Դիմել Maison Daron (Թաթուլեան), 4 Rue de Liban, Paris (20e.):

Etude de Me BERNARD WAHÉ

(17e ANNÉE)

Licencié en Droit de la Faculté de Paris

Ancien élève de l'École des Hautes Études Sociales

JURISCONSULTE

de

Droit Français et International Privé

Mandataire en Justice

159 rue Lafayette, Paris (Gare du Nord) Tél. NORD 68—02

Կը ՍՏԱՆՁՆԷ ամէն տեսակ դատեր, Փարիզի, գաւառի, գաղութներու եւ արտասահմանի մէջ: Ներգրդակցութիւն իրաւագէտ. ամէն տեսակ թղթածրարներու Ճարկածի դատեր, ամէն լեզուէ թարգմանութիւններ: Նաթերալիզասթեան օրինական հետաքննութիւններ եւ անուններու փոփոխութիւն, ընկերութիւններու կազմութիւն եւ լուծում: Ամէն տեսակ գործերու խմբագրութիւն: Իրաւագիտական քննութիւններ եւ մրցումներու պատրաստութիւն: Ճառերու եւ գաւառեսութիւններու խմբագրութիւն: Փաղոցային ոսկածներու ներքուած չքաւորներուն կուտայ կանխավճար առանց տոկոսի եւ մինչդատէքի: Կ'ընդունի ամէն օր ժամը 9—10 եւ 5—7:

Կ'ընդգծենք նաեւ ժամադրութեամբ:

Ճիշատակի or Վարդավառի առթիւ

Տաթեւ-Յուրաբերդցիի Հայրենակից. Միութեան կողմէ

24 Յուլիս, կիրակի ժամը 3ին, Պ. Յովհաննէսեանի սրահը, Քրէմլէն-Պիսէթը: Մանրամասնութիւնները շուտով:

Հ. Յ. Դ.

Գաւառամատ

ՄԱՐՍԷՅԻ «Էրիստափոր» ՆԱՒԱԿՈՎՓԻՏԷի ընդհ. ժողովը 16 Յուլիս, Շաբաթ իրիկուն ժամը ժիշդ 9ին: կարեւոր օրակարգ:

ՊՈՄՈՆԻ «Զաւարեան» ՆԱՒԱԿՈՎԻՏԷի ընդհ. ժողովը՝ 16 Յուլիս, Շաբաթ երեկոյեան ժամը 8.30ին «վարանդեան» սրահին մէջ, կարեւոր օրակարգ: Բոլոր քնկերներու ներկայութիւնը անհրաժեշտ է:

"Յառաջ" կը ծախուի

Place des Fêtesի լրագրավաճառի խանութը դոց ըլլալով Յուլիս 14էն մինչեւ 18ը, «Յառաջ» կը ծախուի Place des Fêtesի ծանօթ հայ նպաստավաճառին քով, S. Baldjian, 2 Rue de Crimée (Տոքթ. Գըրգեսեանի քլինիքին քովը):

ԽԱՆԱՍՈՐԻ ԱՐՇԱԻԱՆԲԻ 41ՐԴ ՏԱՏԵՂԱՐՁԸ ԿԸ ՏՕՆՈՒԻ

ՇԱՒԻԼԻ ԱՆՏԱՌԻՆ ՄԷՋ Յուլիս 31ին կիրակի օր, Հ. Յ. Դ. «Արդուհեան» խումբին կողմէ: Այցելութիւն իշխան Արզուհեանները շիրիմին: Մանրամասնութիւնները մօտ օրէն:

ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԷՍ

Ֆ. Կ. ԽԱՉԻ Romainville-Montreuil ՆՈՐԱԿԱԶՄ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ

16 Յուլիս, Շաբաթ գիշեր ժամը 9էն մինչեւ լոյս

Salle des Fête de la Mairie. Porte des Lilasէն առնել օթօպիւս 95 B

ԿԸ ՆԱԽԱԳԱՀԷ Ս. ԱԶԱՊԱԼԵԱՆ

ԿԸ ԲԱՆԱԽՕՍԷ ՕՐ. ՖԼՕՐԱ-ԱՆԱՀԻՏ

Գեղեցիկ անակնկալներ, ընտիր ճաշ, հայկական եւ եւրոպական պարեր ճոխ եւ ժամն պիւֆէ պատրաստուած անդամուհիներու նուէրներով: Մուտք 5 ֆրանք:

Ֆ. Կ. ԽԱՉԻ ՓԱՐԻԶԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ ՏԱՐԵԿԱՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍԸ

17 Յուլիս, կիրակի առաւօտեան ժամը 9էն պիշերուան 11.30

ՐՈՊԵՆՍՈՆԻ ՄԷՋ, Grand Arbre, Maison Fiquet

Գեղարուեստական հաճելի անակնկալներ, ընտիր նուագախումբ Անձրեւի պարագային գոց սրահ, ճոխ պիւֆէ պատրաստուած խաչուհիներու կողմէ. Մուտք 5 ֆրանք:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ ՍԻՄՈՑՆԵՐ.— Denfertէն առնել սեռ երայի դէպի Ռոպէնսոն տանող գիծը, եւ կամ Բարթ տ'Օրլէանէն օթօպիւս 38 եւ 128:

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

Ֆր. Կ. ԽԱՉԻ ԻՍԻԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻՆ ԿՈՂՄԷ

17 Յուլիս, առաւօտէն մինչեւ երեկոյ, Մէօտօնի անտառին մէջ, «Թափի Վէռ»:

Երգ, նուագ, արտասանութիւն: Ճոխ պիւֆէ պատրաստուած անդամուհիներու կողմէ: Անձրեւի պարագային «Խրմի Հան», գպրոցին մէջ խնջոյք տեղի պիտի ունենայ: Մուտքը ազատ է:

ՅԱՒԻՇԱՏՏՍՐ

ԿԱՐ. ԵՒ ՄԱՐՏ. Միութեան Իսկ. Լէ-Մուլինոյի Մ. Ճիւղը կազմակերպած է դասախօսութիւն մը այօր, Շաբաթ, 17 Յուլիս, երկոյեան ժամը 9ին «Արմենեան» սրահին մէջ: կը դասախօսէ Գնդ. ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ:

ՀԱՑ ԿԱՄԱՒՈՐՆԵՐՈՒ ԵՒ ՄԱՐՏԻԿՆԵՐՈՒ ՄԱՐՍԷԱՑԻ չըշնանի Ընդհանուր ժողովը 17 Յուլիս, կիրակի առաւօտեան ժամը ճիշդ 9ին, «Քաֆէ Նուար»ի ներսի սրահին մէջ (1 Bld. Dugomier): կարեւոր օրակարգ: Ներկայ պիտի ըլլայ կեդր. Վարչութեան ներկայացուցիչը:

ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ

Ֆր. Կ. Խաչի Վարչութիւնս չնորհակալութեամբ ստացած է հետեւեալ նուիրատուութիւնները ի նպաստ չքաւոր մանուկներու օգտակարութեան կայանին, Տէր եւ Տիկին Տոքթ. Իսմիրլեան իրենց սիրասուն զաւկին՝ փոքրիկ Ռուբէնի կսկծալի մահուան առթիւ 500 ֆրանք, Տիկին Ազնիւ Տամլամեան 100 ֆրանք, Պ. Պ. Սահակեան, Կասաճեան եւ Պայրամեան 50ական ֆրանք:

Շնչ. վարչութիւն

ՆԱԻԱՐԿԱՑՈՒԹԻՒՆ

ՍՏԱՑԱՆՔ

Ցունիս 24— Յուլիս 13

ԱՒԱՐԱ. ՅՐԹ.— 115 ֆրանք
ՆԻՒ. Հ. Մ.— 40
ՄԱՐՍԷՅԼ. Գործ.— 900
ՏԵՍԻՆ. Rabotel.— 396.10
ԼԻՒ. Ա.— 175
ՓԱՐԻԶ. Կ. Թ.— 100
ՓԱՐԻԶ. Օ. Ս.— 40
ՄԱՐՍԷՅԼ. Քիւր.— 80
ԼԱՊԱՐ. Տ. Թ.— 40
ՄԱՐՍԷՅԼ. Գործ.— 903
ՓԱՐԻԶ. Տ. Գ.— 50
Ս. ՇԱՄՈՆ. Ա. Ա.— 150
Մ. ՇԱՄՈՆ. Ճար.— 150
ՄՈՆՄՈՐԱՆՍԻ. Թոս.— 150
ՖՐԻԺԻԻՄ. Գրի.—75
ԹՈՒԼՈՆ. Գրկ.— 80
ՐԸՆԱԺ. Շնորհ.— 50
ԼԱՖԱՎԻԼՒՈ. Ռ. Պ.— 75
ՇԱՍ. Ապր.— 25
ՊՕՒՏՕ. Զ. Ք.— 150
ՓԱՐԻԶ. Տիւ.— 75
ՓԱՐԻԶ. Տիկ. Ն.— 50
ԿՈՒՍԿՆՎԻԼ. Մ. Գ.— 40
Պ. ՔՈԼՈՆՊ. Ց. Գ.— 75
ՄՈՆ-ՍԷՆ-ԿԼՕԶՈՆ. Փր.— 150
ՊԵՐ-ՏԸ-ՊԱՄՔ. Վրդ.—75
ԼԱՊՕՔՔԱ. Ասա.— 40
ՄԵՆ. Տ. Ա.— 70
ՄՈՐՊԻՀԱՆ. Ալիք.— 120
ՄՈՆՓԼԻԻԷ. Ս. Ճ.— 75
ՌՈՄԱՆ. Գ. Թ.— 200
ՌՈԱՆ. Գ. Ք.— 150
ՓԱՐԻԶ. Պայ.— 100
ՅՈՒԺԵԹ. Տէր.— 75
ՄՕՐԵՍԹԵԼ. Պաս.— 40
ՏՐԱԿԻՆԵԱՆ. Թերզ.— 40
ԿԱՐՏԱՆ. Ե. Յ.— 150
ՇԱՄՊԵՐԻ. Գոն.— 255
ՎԻԼԵՐՊԱՆ. Պեա.— 75
ՆԻՍ. Գալ.— 70
ՇԵՕՎՐԵԶ. Նոթ.— 75
ՄԵՎԼՈՆ. Տ. Վ. Ա.— 75
ԳՈՐԿ.— ԼԻՈՆ.— Ստացանք
ԼԻՈՆ. Տիկ. Ը.— 40
ՓԱՐԻԶ. Կ. Պ.— 70
ՄԱՐՍԷՅԼ. Գործ.— 831
ՄԱՐՍԷՅԼ. Պ. Օ.— 912
ՌՈՊԵՆՍՈՆ. Գավ.— 40
ՄԱՐՍԷՅԼ. Վէմ.— 75
ԼԻՈՆ. Տիկ. Ս.— 150
ՊՕՄՕՆ. Գործ.— 260
ՇԱԼԷԹ. Յով.— 115
ՎԻԻՐԻ-ՍԻՒՐ-ՍԷՆ. Մաթ.— 75
ՐՈԼՈՆՊ. Տիկ. Ռ.— 75
ՐԱԶԱՊԼԱՆՔԱ. Զաք.— 510
ԱԼՊԻ—ԻՄՊ.— 150
Լ.Ա. ՍԻՈՒԱ. Մոմ.—364
ԺՈՒԱՆ-ԼԻ-ՓԷՆ. Իչխ. Ա.— 40
ՌՈԱՆ. Պօղ.— 100
Լ.Ա-ՊՕՔԱ. Գար.— 75
ՓԱՐԻԶ. Դա.— 75
ԼԻՈՆ. Տան.— 150
ՕՐԼԷԱՆ. Մալ.— 100
ՎԵՐՍԱՅԼ. Պալ.— 150
ԼՈՆՏՈՆ. Նիկ.— 70

ԳԱՂԷՔ ՏԵՍԷՔ ԼԻՈՆԻ ՄԷՋ

Cinéma REXY

Cours Lafayette. angle Garibaldi

Le Gérant : H. STEPHAN

Imprimerie A. DER (AGOPIAN)

17, Rue Demesme — PARIS (13)

Հ. ՋԱՐԴԱՐԵԱՆ

ՎԻՐԱԲՈՑԾ - ԱՏԱՄՆԱԲՈՑԾ

44 Rue Dunkerque (ՄԷՋՐՕ ԿԱՌ ՏԻՒ ՆՈՒՄ)

Tél. Trudaine 42—69

Կ'ընդունի ամէն օր ժամը 14—20:

Ձառւօտները ժամադրութեամբ:

ԵԴՈՒԱՐԴ ԳԱԼՓԱՔՃԵԱՆ

ԴՐԱՄԱՏՈՒՌ, **48 rue de la République, Marseille**

Tél. Colbert 74—51, 47—22

Ցտաւ գրաւոներու փոփոխութեան, ֆէքեր կը տրուին ամէն երկրի համար: Կը գնենք եւ կը ծախենք ոսկի դրամներ:

ԼԱՒ ԳԱԶՄԱՒԵՒ.



"ՇԻՐԱԿ"

Արեւելքի միակ իսկական օղին է: Անզուգական, Ընտրելի, Ախորժելի: Աւազնակարող զօրացուցիչ ախորժակբեր, պատրաստուած զուտ չամիչի ին. Ծով: Շայ աւանդական սեղանին զարդ:



ՐԱՔԸ ՏԻՒԶ

Ջուտ խաղողէ քաշուած եւ անիսոնով պատրաստուած հայկական օղին է ՐԱՔԸ ՏԻՒԶ: Զգուշացէք արուեստական օղիներէ, ձեր առաջմոքը կ'ապրէ գիշերները ջուր կը խմէք եւ իր վնասէ ձեր առողջութեան: Խմեցէք միայն ՐԱՔԸ ՏԻՒԶ որուն անուրանալի կազդուրիչ եւ ախորժաբեր յատկութիւնները ճանաչուած է:

Dalakupeian 8 Rue Suffren

Dépôt: 7 Rue de la Paix, Marseille. Tél. Dragon 70—89

ՐԱՖՖԻ

Փարիզահայերու միակ վայելուչ ճաշարանը

Տնօրինութեամբ Մ. Գ. ՄԻՐԻՃԱՆԵԱՆԻ

8, RUE MAUBEUGE Paris (9) Մէթրօ Cadetet le Peletier

Հոն պիտի գտնէք արեւելեան եւ եւրոպական կերակուրներու ճարտասր ճաշացուցակ մը, ձնմրցելի ժաքրութիւն եւ անձերու սպասարկութիւն, Գոյակայն օղի՝ եւ շաշլիկ, շաշլարանաիրոջ անվիճելի փորձառութեամբ: Ունէն տեսակ ճաւաքոյթներու ճամար կը տրամադրուի սրահ՝ անճամեմատ ժատչելի գիներով:

Շաբաթ եւ կիրակի երեկոները արեւելեան նուագ:



Alimentation "TRÉVISE"

Իր անմոռանալի «Moka» սուրճովը

Café "HAREM"

5 ԱՌ ՀԱՐԻՒՐ ԲԱՑԱՌԻԿ ՉԵՂՔ

Ճոխ մթերանոց արեւելեան եւ արեւմտեան ընտիր ընդեղէններու,

— Ոչ՝ ձեր պրձակուրդի օթերուն իսկ չի մոռնար ձեզ, գոհացնելով ձեր բոլոր փափաքները, որ ատոր տակ նալոր գըտնէք...

ՄԵԾԱՔԱՆԱԿ ԵՒ ՓՈՔՐԱՔԱՆԱԿ

Livraison à domicile

Tél, Taitbout 40—63

30, Rue de Trévise Paris (9) Metro Cadet

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՃՈՇԱՐԱՆ

Համեղ, անոդնարար արեւելեան կերակուրներո՞ւ սիրահար էք, Պոլիսը կարօտնալու պէտք չունիք, մտէք հայկական կեդրոնի մէջ

ՍԱՐԵԱՆԻՆ ՃՈՇԱՐԱՆ «ԹՈՒՐԹԼԻ»Ն

5, Rue du Baignoir, 5: Marseille

ուր պիտի գտնէք զուարթ եւ ընկերական շրջանակ մը եւ. ճաշեր խիստ մատչելի գիներով:

ՐԱՔԸ ՏԻՒԶ ճոխ ազանդերներով:

Tailleur de ST. BERNARD

Pour Hommes et Dames

H. GULBOLIAN

24 rue Affre կամ 8 rue Cavé, Paris(18)

Մասնաճիւղ՝ 2 rue de la Charbonnière

Մէթրօ La Chapelle եւ Barbès Rochechouard

Թելեֆոն Montmartre 69—70

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ.— Կարեւոր նուէրներ մէկ ձեռք հագուստի համար մինչեւ Յուլիս 14:

ՍՏԱՑԱՒ ԵՆՔ ՅՐԱՆՄԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՄԱՌՆԱՑԻՆ ԿԵՐԳԱՍՆԵՐ:

ՄԵՐ ԳԻՆԵՐԸ.— Հագուստ (երկու փորձով) սկսեալ 350—450 ֆր.էն: Նուէր կը տրուի մէկ ֆանէլէզի տարատ կամ կոլֆ: 450 ֆր.է վեր հագուստներու համար, 3 փորձ, նուէր կը տրուի Հայկուհի կիւլպօլեանի արհեստանոցին մէջ պատրաստուած, գաքնան յատուկ, արժէքաւոր ժոգքոտկ վզնոց մը: Ներկայանալ «Յառաջի կտրօնով» վերոյիշեալ նուէրներէն չեն օգտուիր մինչեւ 20 տարեկան այն երիտասարդները եւ երիտասարդուհիները որոնք չեն ուզեր խօսիլ ֆրանսերէն չեն կրնար գալ իրենց անուններր մայրենի լեզուով:

Բաց է կիրակի մինչեւ կէսօր

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՑԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
17, Rue Damesme, PARIS (13e)

Téléphone : Glacière 15 - 70
Chèque Postal Paris 1678 - 63
(ՐՊԵՏԻԵԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ — ՏԱՐԵԿԱՆ ՎԵՑԱՄՍԵԱՅ ԵՌԱՄՍԵԱՅ

Ֆրանսա եւ Գաղուքներ	150 ֆրանք	75 ֆրանք	40 ֆր.
Անգլիա եւ Իտալիա	265 ֆրանք	140 ֆրանք	
Ուրիշ երկիրներ	215 ֆրանք	110 ֆրանք	

ԿԻՐԱԿԻ 17 ՅՈՒԼԻՍ DIMANCHE 17 JUILLET 1938

ՅԴ ՏԱՐԻ — 14e Année No. 3784

ԽՄԲԱՊԵՏ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

«ՀԱՅ ԵՂԲԱՅՐՆԵՐՈՒՆ ԱՉՔԵՐԸ...»

Թուրքերէն թերթ մը, Անտիոքի «Եօնի Կիւն»ը նկարագրելով Թուրք զօրքին յաղթական մուտքը, մանաւորապէս կը չեչէ.

— « Էքի թուրխ (Ալէվի), Յոյն - օրթոտոքս, Հայ , Մարօնի եւ միւս համայնքներու ներկայացուցիչները ողջերթի գացին Ա - լեքսանտրէթի կայարանը եւ մէկիկ մէկիկ ներկայացուեցան Զօր. կիւնտիւզի: Համայնքներու ներկայացուցիչները խնդրեցին իրենց յարգանքն ու յարտւմը յայտնել Աթաթիւրքին: --- Շատ լաւ, պիտի ըսեմ, ձեր համակրանքն ու յարգանքը պիտի հաղորդեմ, շատ փափկօքէն պատասխանեց զօր. կիւնտիւզ :

«Զօրավարը մէկիկ մէկիկ սեղմեց իրեն ներկայացուածներուն ձեռքը եւ հարցուց անոնց որպիսութիւնը: Մասնաւորաբար հարցուց հայ համայնքին ներկայացուցչին որպիսութիւնը եւ ըսաւ.

— « Մեր հայ եղբայրները ինչպէ՞ս են: Իրենց աչքերը կը համբուրեմ » . . . :

Ահա այսպէս, ոչ միայն «ցեղակից» ենք արդէն, այլեւ արժանի «համբոյր»ի :

Եղբա՛յր մը միայն կրնար այսքան կարօտ զգալ մեր աչքերը համբուրելու,— աչքեր որոնք պաղեցան տառապանքէն եւ սպասումէն . . .

Անշուշտ այս տեղեկութիւնը նորէն պիտի ոգեւորէ անոնք որ վերադարձի կարօտովը կը տառչորին,— ճիշդ այն պահուն երբ սրընթաց կը փլի, փչուր - փչուր կը հալի Պոլսոյ ամէ մը հայութեան հանրային կեանքը :

Ամէն պարագայի մէջ, այս երեւոյթն ալ պատմական պիտի մնայ, Ալեքսանտրէթի հարցին այնքան լուրջուն կարգադրութենէն վերջը :

Մնացեալը կը տեսնենք հետզհետէ, երբ ձեւ ու մարմին առնէ վիճելի շրջանին թրքացումը,— «օրինաւոր» խորհրդարանով եւ անկէ բխած կառավարութեամբ :

Ճիշդ է որ Ֆրանսական զօրքն ալ հաւասարապէս տեղաւորուած է հոն, մանաւորաբար ոչ-թուրք շրջաններուն մէջ: Եւ սակայն,— ոչ Արսլր հանդիսաւ քուն կը քաշէ, ոչ ալ, մանաւանդ, տարագիր Հայը, որ բեռ մը բան դիտէ այսպիսի կարգադրութեանց վերջնական ելքի մասին:

Մէկ մխիթարական պարագայ,— արտագաղթը դադրած է առ այժմ: Անոնք որ տուն – տեղ ձգած հեռացած էին առաջին խուճապին առեն, թերեւս կը վերառեն իրենց հին բոյները, իսկ մնացողները անշուշտ պիտի մնան, ցնոր տնօրինութիւն:

Ըսենք, անցողակի, որ շատ բան կախում ունի ընտրութեանց նոր եղանակէն: Առ այժմ հակասական լուրեր կը շրջին այդ մասին :

Այսպէս, սուրբական թերթերու տեղեկութեանց համաձայն , գնդ. Քոլէ բանտէն արձակելով եւ ունկդրութեան ընդունելով արար վարիչը՝ Զէքի Արսուզի, յայտներ է թէ Ազգաժողովին չէզոք յանձնախումբը իրեն պաշտօն տուած է չարունակել արձանագրութիւնները: «Հետեւաբար քիչ առենէն պիտի վերակսին արձանագրութիւնները»:

Բայց ի՞նչպէս,— նոր արձանագրութիւնները յանձնախումբին կէս ձգած տեղէ՞ն պիտի չարունակուին, թէ ծայրէն պիտի սկսին, իրրեւ բոլորովին նոր գործողութիւն :

Ուրիշ հարց մը: Զէզոք յանձնախումբին պաշտօնավարած շրջանին անգամ բռնութիւններ կատարուեցան --- թէեւ ապարդիւն — թրքական մեծամասնութիւն ապահովելու համար: Արդ, Սանճաքին բնակիչները ի՞նչ տեսակ ազատութիւն պիտի վայելեն այժմ, երբ թրքական զօրքն ալ կը հսկէ բարեկարգութեան, եւ երբ հոգատար իշխանութիւնը պաշտօնապէս յանձնառութեան տակ մտած է, թրքական մեծամասնութիւնը անպատճառ յայտնելու համար :

×

Սպասելով այս հարցերուն լուսաբանութեան, դառնանք զօր. կիւնտիւզի «համբոյր»ին :

Այդ համբոյրը ձեղի չի՞ յիշեցներ այն ողջագուրումները որ կատարուեցան 1908 յուլիսին, իրրեւ չօչափելի արդիւնք յանդելով Կիլիկիոյ առաջին սպանդին (1909) :

Ցետոյ, ձեր միտքը չի՞ն գար այն միւս համբոյրները, որ փոխանակուեցան Պալքանեան պատերազմին առեն (1911 -- 1912), ի վերջոյ յանդելու համար 1915 - 1918ի հայասպիներուն :

«Հին պատմութիւննե՞ր» կը քրքրենք :

Լա՛ւ: Հապա Փոքր Ասիոյ եւ Կիլիկիոյ վերջին սարսափնե՞րը (1920-1922), --- առանց հաշուելու կարսն ու Ալեքսանդրապոլը , երբ իշխանութիւնը արդէն իսկ անցած էր նոր ուժերուն -- միլլի եւ քէմալական . . . Եւ այն միւս «խաղաղ» եւ «օրինական» ջարդե՞րը, որ կը չարունակուին մինչեւ այսօր, յանուն հանրապետական եւ արդիական՝՛ Թուրքիոյ: Եւ դեռ ուրիշ հեռանկարներ որ կ'ուրուագծուին արեւելեան կամ հարաւային սահմաններուն վրայ . . .

Այս ո՛րքան թանկագին դարձան «հայ եղբայրներուն աչքերը», առանց մէկ ՀԱՏԻԿ լուսաւոր գիծ տեսնելու նոր Թուրքիոյ հայկական քաղաքականութեան մէջ :

Կը կարծէինք թէ գոնէ զօրավարները այդքան չուտ չեն փղձկիլ, քանի որ ամէն բանէ առաջ սուրն է իրենց պարգեւը, եւ ոչ թէ համբոյրը:

Պատմութիւնը կ'ըսէ թէ հազար համբոյր՝ մէկ հատիկ տերեւ չեն չարժեր թրքական անդաստանին մէջ, երբ հարցը կապ ունի հայ ժողովուրդին հետ :

Էնկիւրի փոխա՞ծ է իր աչխարհահայեացքը,— իրեն կ'իյնայ ապացուցանել, ոչ թէ համբոյր բաժնելով այլ ուժ ու ճախ, այլ ափ մը հող՝ մեր ժառանգութենէն :

Շ.

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ՆՈՐ ԴԷՊՔԵՐ ՊԱՂԵՍՏԻՆԻ ՄԷՋ

20 հոգի սպանուած, 100 վիրաւոր

Երուսաղէմէն կը հեռագրեն յուլիս 15 թուականով .— *Քսան հոգի սպանուեցան եւ աւելի քան 100 հոգի վիրաւորուեցան այսօր, ռումբ մը նետուած ըլլալով Դաւիթի փողոցի արաբական շուկային մէջ: Փողոցը եւ շրջակաները խճողուած էին Արաբներով որոնք մզկիթ կ'երթային, երբ ռումբը պայթեցաւ: Ազմուկէն հարիւրաւոր մարդիկ խռնուեցան հին քաղաքին բոլոր մասերէն : Երբ իրարանցումը մեղմացաւ, 18 դիակներ հանուեցան, որոնց հինգը կիներ էին: Ոստիկանութիւնը եւ զօրքը վերահաստատեցին բարեկարգութիւնը, մինչ 40 ծանր վիրաւորներ հիւանդանոց կը փոխադրուէին: Երկուքը մեռան ճամբան: Քաղաքը խորապէս յուզուած է: Արաբ ժողովուրդը զրգռուած է երկրին զանազան մասերուն մէջ: Պաշարման վիճակ հրատարակուեցաւ անորոշ տեւողութեամբ, սկսելով երեկուան ժամը 6էն: Հարիւրաւոր ոստիկաններ եւ զինուորներ հսկողութիւն կը կատարեն հին քաղաքին մէջ:*

Նոյն օրը ուրիշ ռումբ մը եւս նետուեցաւ Սաֆէտի մէջ (հիւսիսային Պաղեստին): Արաբները զրգռուելով փորձեցին գրոհ տալ դէպի հրէական թաղը: Եզիպտոսէն նոր հասած անգլիական զինուորները կրակ բացին, վիրաւորելով երեք Արաբներ որոնց մէկը մեռաւ քիչ վերջը: Սաֆէտի մէջ ալ պաշարման վիճակ հրատարակուեցաւ 22 ժամուան համար :

Երէկ խուզարկութիւններ կատարուեցան Խմէրի մզկիթին մօտերը, եւ երեւան հանուեցաւ զինարան մը որ կը պարունակէր բազմաթիւ հրացաններ եւ փամփուշտներ: Անգլիացի սուինաւոր զինուորներ կը հսկեն քաղաքին բոլոր դուռներուն առջեւ, եւ գնդացիր մը տեղաւորուած է Եաֆայի դրան առջեւ:

Հայֆայի մէջ ալ ծանր խռովութիւններ ծագեցան: Շուկան թալանուեցաւ, հրէական չէնքեր կրակի տրուեցան: Ցարձակման լուրեր կը հասնին Պաղեստինի հիւսիսային եւ արեւմտեան բոլոր շրջաններէն: Ռամկէն մօտ արաբական դիւղեր յարձակում կրած են, ահաբեկիչներ չոգեկառքի գիծը հանած են Հայֆայի ճամբուն վրայ եւն.: Նպաստուսի լեռներուն մէջ ապաստանած ըմբոստներ կրակ բացին զօրքին վրայ :

Երուսաղէմի դէպքին հետեւանքով բազմաթիւ ձերբակալութիւններ կատարուեցան: Կալանաւորներուն մէջ կը գտնուին երկու հրեայ կիներ որոնց մէկուն համար կ'ըսեն թէ գժոխային մեքենան կողովի մը մէջ դնելով բերած պայթեցուցած է Արաբներուն վրայ :

Սաւրիացիներու բուռն ցոյցը Սանճաքի հարցին առթիւ

Դամասկոսէն կը հեռագրեն յուլիս 15 թուականով .—

Ազգային խմբակցութեան համագումարը բացուեցաւ այսօր, վարչապետին ամառանոցին մէջ, նախագահութեամբ ներքին նախարար Սաատալլահ Ճաբրիի :Իր բացման ճառին մէջ,նախագահը բացատրեց ժողովին նպատակը,— կառավարութեան կրած դժուարութիւնները, Ալեքսանտրէթի Սանճաքին խրնդիրը եւն. : Վարչապետը, ձէմիլ Մէրտամ պէյ, խօսք առնելով պարզեց քաղաքական կացութիւնը եւ մասնաւորապէս Սանճաքի խնդիրը, Ֆրանքեւսութիական դաշնագրին կնքումէն մինչեւ Ենեվիւրի համաձայնութիւնները : Ցետոյ պահանջեց ստիպողական որոշումներ տալ, չէշտելով թէ կառավարութիւնը ամուր կը մնայ իր դիրքին վրայ: Գալով ձէզիրէի հարցին, վարչապետը յոյս յայտնեց թէ պիտի կարգադրուի գոհացուցիչ եղանակով մը :

**** Այս համագումարէն առաջ, նախապատրաստական ժողովներ գումարուեցան Դամասկոսի մէջ, ուր ազգ. խմբակցութեան ներկայացուցիչները բուռն ճառեր խօսեցան, յայտարարելով թէ «չենք ճանչնար Սանճաքի մասին եղած կարգագրութիւնները»: Վարչապետը չափաւոր էր իր արտայայտութեանց մէջ, իսկ դաշական եւ կրթական նախարարը, Քէյալի, շատ բուռն ճառ մը խօսեցաւ: Թերթերը կը գրեն թէ Քէյալի այնքան կրակոտ խօսքեր արտասանեց որ քիչ մնաց միջադէպեր ծագէին: «Պէտք է կռուինք, ըսաւ նախարարը, վաճեր են անոնք որ կը հրաժարին կռիւէն: Մենք պիտի չկրենք Ալեքսանտրէթի հարուածը, եթէ տոգորուած ըլլայինք այս կամքով»: Ուրիշ ճառախօսներէ վերջ, բանաստեղծ Բաչատ Րուէհա բանաստեղծութիւն մը կարդաց բուռն ծափերու մէջ :*

**** Արաբական թերթերը կը գրեն թէ Հայերը եւ Արաբները վերապահ դիրք մը բռնեցին, երբ Թուրք զօրքը Սանճաք մտաւ: Սանճաքի պաշտպանութեան մասնախումբը կը տեղեկացնէ թէ դէպքերու սկիզբէն ի վեր Արաբները եւ Հայերը ունեցած են 11 սպանեալ եւ 40 վիրաւոր, թէ 2000 հոգի խուճապահար ապաստանած են Հարեւան երկիրները, մասնաւորապէս Լաթաքիէ եւ Լիբանան, եւ թէ անոնց մեծ մասը մասնուած է թշուառութեան :*

ԱՆԳԼԻՈՅ ԹԱԳԱՒՈՐԻՆ այցելութեան առթիւ, վերէն վար չտկուեցաւ Քէ ա'Օրսէյ պալատը, ուր պիտի բնակին Թագաւորն ու Թագուհին: Մեծ պատրաստութիւններ տեսնուած են նաեւ Վերսայլի պալատին մէջ: Թագաւորին պիտի ընկերանան երկու անձնական բժիշկներ: Նախկին եւ Մաւր Անթուանէթի անկողիններուն մօտ, ուր պիտի պառկին Թագաւորն ու Թագուհին, հեռաձայնի գիծ մը հաստատուած է, ուղղակի Լոնտոնի հետ, որպէսզի արքայական հիւրերը կարենան խօսիլ իրենց երկու աղջիկներուն հետ:

ՅՈՐՀՐԴԱՑԻՆ ջոկատ մը Մանչուրիոյ սահմանը անցնելով, գրաւեց կարեւոր դիրք մը: Մանչուրիոյ կառավարութիւնը բողոքագիր մը ուղղեց, ապատիճելով ձախոնի պաշտպանութեան :

Կ. Խաչի օդաչութեան առաջին խումբը

Ռուսյաձէն կը հեռագրեն մեզի յուլիս 16 թուականով .— *Կ. Խաչի օդաչութեան առաջին խումբին տղաքը, 37 մանչ եւ աղջիկ, իրենց կայանը հասան այսօր: Բոլորին ալ առողջական վիճակը շատ լաւ է:*

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԵԿԱՑՈՒՆԵՐԸ ԿԸ ՊՆԴԵՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ, ԼՐԱՑՈՒՑԻՉ ՄԱՆՐԱՄԱՍՆԱՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՂՈՐԴԵԼՈՎ

Ոչ միայն խեղդած են, այլ եւ սուիններ կոկորդը խրած...

(ՄԱՄՆԱՒՈՐ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ «ՅԱՌԱՋ»Ի)

ՅՄՔ.— Երէկ հրատարակած էինք այս թղթակցութեան առաջին մասը,— մինչեւ այնտեղ ուր կաթողիկոսը պայմանաժամ կը խնդրէ, հեռագիր զրկելու եւ արտասահմանէն բերելու պահանջուած գումարը, բայց Զեկան կը մերժէ : Անասելի շարունակութիւնը :—

Կաթողիկոսը խնդրում է սպասել մինչեւ լուսաբաց, թերեւս հնարաւոր լինի այդ գումարը գտնել: Դարձեալ մերժում են: Զեկիստները պահանջում են յանձնել բանալիները Մայր Տաճարի մէջ գտնուած եկեղեցական անօթների եւ սպասների թանգարանին, ուր պահւում էին էջմիածնի թանկագին քարերը, կաթողիկոսների եւ եպիսկոպոսների շքանշաններ, պնակէներ, մատանիներ , լանջախաչեր եւայլն: Էջմիածինն ունէր ոսկեայ եւ արծաթեայ բազմաթիւ խաչեր, սկիհներ եւ եկեղեցական զանազան սպասներ եւ այս բոլորի մէջ նաեւ միւռոնի կաթսան, այլեւ մետաքսագործ եւ թանկարժէք զարդաշորեր, հին գորգեր, եւայլն եւայլն:

Ազգային - եկեղեցական այս նուիրական աւանդները, որոնք դարերի սուր ու հուրի, արիւնի եւ արհաւիրքների միջից եկել ու հասել էին մինչեւ մեր օրերը եւ պահուել էին այնքան սրբութեամբ, հիմայ Զեկան եկել եւ կորուկ կերպով պահանջում է այդ բոլորը: Կաթողիկոսը մերժում է յանձնել բանալիները: Զեկիստները սպառնում են ատրճանակներով եւ սուինով — դարձեալ մերժում է բանալիները յանձնել :

Ահա այս մերժումին վրայ է, որ չորս Զեկիստներ գազանի նման ԲԱՐՁԱԿՈՒՄ ԵՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՎՐԱՑ, ԲՌՆՈՒՄ ԵՆ ԹԻԹԵՐԸ ԵՒ ԲՌՆՈՒԹԵԱՄԲ ԳՊՊԱՆՆԵՐԻՑ ՀԱՆՈՒՄ ԵՆ ԲԱՆԱԼԻՆԵՐԸ: ՏԱՐԱԲԱԽՏ ԶՈՀԸ ՕԳՆՈՒԹԻՒՆ Է ԿԱՆԶՈՒՄ, ԱՂԱՂԱԿՈՒՄ, ԲԱՑԱ ԻՍԿՈՅՆ ՈՃԲԱԳՈՐԾՆԵՐԸ ԲՌՆՈՒՄ ԵՆ ԶՈՀԻ ԲԵՐԱՆԸ ԵՒ ՍԿՍՈՒՄ ԵՆ ԽԵՂԴԵԼ:

Խեղդամահ - Նահատակի դիակը փռուած է ննջարանի յատակի վրայ : Ոճրագործները նախապէս ծրագրուած որոշման համաձայն բաց են ձգում նահատակի բերանը եւ սուինը կոխում են կոկորդը, որտեղից սկսում է հոսել առատ արիւն, ողողելով բերանն ու կուրծքը: Դիակը չարչարելու այդ սարսափելի, կրկնակի ոճիրի նպատակը եղել է այն, որ կարծեն թէ կաթողիկոսը մեռել է սրտի կաթուածից եւ խեղդուել արիւնից :

Դիակը փռուած մնում է սենեակում: Ոճրագործները դուրս դրսից փակում եւ հեռանում են, երբ արդէն Վեհարանի դռնապանն ու գիշերապահը , ինչպէս նաեւ կաթողիկոսի շաքիրները անհետացել էին:

Կաթողիկոսի այս չարաչար մահուան, այս ճշմարիտ նահատակութեան լուրը նոյն գիշերն իսկ տարածւում է վանքում եւ վաղարշապատում:

Բացւում է ապրիլ 7ի առաւօտը, ոչ ոք չի համարձակում Վեհարանին մօտենալ: Ապա Զեկան լուր է տարածում թէ կաթողիկոսը յանկարծամահ է եղել: Միաբանիներից ոչ մէկը չի համարձակում վեհարանը մտնել :

Եւ արդէն կաթողիկոսին սպանելուց վերջ, ԶԵԿԻՍՏՆԵՐԸ ԳՆՈՒՄ ՍՊԱՆՈՒՄ ԵՆ ՆԱԵԻ ԵՐԿՈՒ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ԵՒ ՄԻ ՎԱՐԴԱՊԵՏԻ : Եպիսկոպոսների եւ վարդապետի սպանութեան մասին խօսում են, բայց չեն կարող հաստատ մի բան ասել: Ասում են վարդապետը Ազթամարի միաբան Դանիէլ վրդ. Զատոյեանն է :

Էջմիածնի վանքում թէ կաթողիկոսը եւ թէ միաբաններն ապրել են ծայրայեղ աղքատութեան մէջ, օրուան հացի կարօտ եւ զուրկ ապրուստի տարրական միջոցներից: Ասում են, որ Դանիէլ վրդ.ը մտնում էր վաղարշապատի տները եւ կաթողիկոսի ու միաբանութեան համար հաց եւ ուտելիք էր հաւաքում: Միաբանութիւնը նիւթապէս ապրեցնելու գործին մէջ Դանիէլ վրդ.ը յիշատակութեան արժանի ծառայութիւն կատարած է: Վանքի ունեցած մէկ ողորմելի ջրաղացն էլ կառավարութիւնը գրաւեց եւ էջմիածինը մատնուեց աղքատութեան :

Պատուիրեր դապատ մը կը բերեն, Զեկան կ'արգիլէ

Կաթողիկոսին խեղդելուց յետոյ, Զեկիստները մտնում են Մայր Տաճարը եւ թանգարանը բաց անելով ամբողջ հարստութիւնը լեցնում են արկղների մէջ եւ տանում են Երեւան :

Ապրիլի **7, 8, 9**ին կաթողիկոսի դիակը մնում է ննջարանում, դուռը փակ: Ապրիլ **9**ի առաւօտ երկու պառաւ կին կառքով գնում են Երեւան եւ մի դագաղ են բերում, կաթողիկոսին թաղելու համար: Զեկիստները պառաւների ձեռքից դագաղն առնում եւ ջարդում են:

Անժառանգ, անզաւակ եւ անտէր պառաւները հաւաքւում են Զեկայի առջեւ եւ պահանջում են կաթողիկոսի դիակը, որ տանին թաղեն: Զեկան մերժում է: Պառաւները սկսում են աղմկել: Զեկիստները ատրճանակ են կրակում պառաւների վրայ, որոնք սակայն գրիւ չեն գալիս, աւելի են սկսում աղմկել եւ խարեր նետել, հայհոյել եւ անիծել՝ պահանջելով կաթողիկոսի դիակը : Ի վերջոյ Զեկան համաձայնւում է եւ կարգադրում է, որ նահատակի դիակը վերցնեն եւ թաղեն էջմիածնի Ներսիսեան լճի հարաւակողմը, Ս. Գայիանէի վանքի արտաքին դարբասի առջեւ գտնուող անտէր եւ պանդուխտ մեռելներին յատկացուած գերեզմանոցում: Աչքից հեռու, սրտից հեռու, մոռացուած մի վայր, ուր շատ մեռելներ թաղուած են **1915**ի վանի նահանջից յետոյ էջմիածին եկած վասպուրականցիներից եւ **1918—1919** թուականների Հայաստանի սովին ու վարակիչ հիւանդութիւններին զոհ գացած Արարատեան դաշտի Հայերից: Եւ թորէն կաթողիկոսը (այն ատեն եպիսկոպոս) որ վասպուրականի եւ Արարատեան նահանգների հայութեան համար անձնուէր աշխատանք կատարեց, ի վերջոյ նահատակուեց Զեկիստների ձեռքով ու թաղուեց նահատակ մեռելների մէջ:

Սակայն Զեկան այստեղ էլ ունեցաւ ստոր եւ յետին միտք: Բարեպաշտ կոյսեր եւ պառաւները կաթողիկոսի մարմինը դրին ջարդուած դագաղի մէջ: Զեկայի կարգադրութեամբ չորս բանուորներ վերցրին դագաղը, որի յետեւից մղկտալով եւ իրենց յուզումն ու արցունքը զսպելով գնում էին միայն յիշեալ

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

ՍՏԱՄԲՈՒԼԻ ԿԵՐՔԸ

The Enmesh of Stamboul

By DENNIS WHEATLEY

Թարգմ. ՅԱՐՈՒՍ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ

Trans : J. M. Թարգմ. ը. Ս.

Ծխելու համար ոտքի ելավ, ապա մոտեցավ պատուհանին եւ երկար ժամանակ նայեց դրսի խավարին։ Ֆիքրի մը ետեւ կը թաքնուէր, որ ան չէր ուզեր արտայայտել։ Ան գիտէր, որ Ռուսիոյ մէջ ինքնիշխանութիւնը կը պատկանի ժողովուրդին, եւ որ ցարը ոչ աւելի է, քան ժողովուրդի ձեռքին մէջ գտնուող գործիք մը։ Ան գիտէր, որ ցարը ինքնակալ չէ, այլ՝ ժողովուրդի ներկայացուցիչներու խորհուրդին կողմէ ընտրուած նախարարներու միջոցով կը կառավարէ։ Ան գիտէր, որ ցարը ինքնին ոչ մէկ իրաւունք ունի, բացի այն իրաւունքներէն, որոնք ժողովուրդը կամ անոր ներկայացուցիչները կը շնորհեն իրեն։

ԳԱՂԱՓԱՐԻ ՍԻՒՆԸ

ՀԱՏՈՒԱԾ

Իրեն ծանօթացուցած ըլլալով Հայ դոհոսիրաբանութեան

— Ա՛յ, սիրուհի՛ս, ըսաւ Տէյզի, ինծի համար ոչինչ աւելի դիւրին է քան ամուսնանալ, եթէ միայն ինծի տուած խոստումդ կատարես։

— Ի՞նչ խոստում։

— Թէ պիտի ինձմէ չբաժնուիս։

— Ես ալ նոյն բանը կ՚ուզեմ։ Ես ալ չեմ ուզեր որ ինձմէ բաժնուիս։

— Ուրեմն ամուսնանանք։

— Ես պատրաստ եմ։

— Ուրեմն ես ալ պատրաստ եմ։

Տէյզի ոտքի ելաւ, ու ձեռքը երկնցուց Ռիչըրտին։ Ռիչըրտ ալ ոտքի ելաւ, ու ձեռքը Տէյզիին երկնցուց։ Ձեռք ձեռքի տուին, ու ժպտելով իրարու նայեցան։

Ռիչըրտ ըսաւ.

— Ես ալ ուրախ եմ որ ամուսնանալու որոշումը տուիր։

պատուներն ու կոյաերը: Զեկայի կողմից մի չեկիստ եւ չորս զինուորներ էլ հետեւում էին դագաղին, որպէսզի ժողովուրդ չմօտենայ եւ կամ դիակը բընցուքեան չենթարկուի :

Այսպէս ապրիլի 10ին թաղում են կաթողիկոսին եւ նոյն օրն էլ Գէորգ արքեպ. Զէօրէքճեանը հեռագրում երուսաղէմի պատրիարք Թորգոմ արք.ի թէ կաթողիկոսը վախճանել է «սրտի կաթուածից»:

ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄԱՐՄԻՆԸ ԱՃԱՑԱԾ ԵՆ

Երկու ցերեկ - գիշեր կաթողիկոսի գերեզմանի մօտ պահակներ են կանգնում, որպէսզի ժողովուրդից չգան եւ դիակը չհանեն: *Մի քանի օրից յետոյ, վանքում եւ Վաղարշապատում տարածւում է հետեւեալ սարսափելի լուրը.—*

Զեկան կաթողիկոսի դիակը գերեզմանից հանել է տուել, կտրատել եւ ապա պէնզին լցնելով վրան այրել ու ոչնչացրել են, ոսկրի հետքը ամբողջապէս կորցնելու համար: *Այս կրկնակի ոճրագործութեան մասին յամառ կերպով խօսում են Վաղարշապատում* : Երեւանում ով որ կաթողիկոսի մահուան մասին խօսք է անում, իսկոյն բանտարկում են:

Ինչպէս յիշեցի, կաթողիկոսին սպանելուց յետոյ Զեկան աքսորում կամ բանտարկում է էջմիածնի միաբաններին: Ասւում է որ Բագրատ արքեպ. Վարդազարեանը էջմիածնի դէպքերի ազդեցութեան տակ ծանր կաթուած է ստացել, այնպէս որ խօսելու եւ շարժելու վիճակում չէ այժմ : Կասկածով առում են, որ սպանուած երկու եպիսկոպոսներն են՝ Բագրատ եւ Արտակ :

Այս բոլորից յետոյ փաստական իրողութիւնն այս է.

Զեկայի գործակալների եւ չեկիստ ոճրագործների ձեռքով.—

ա) Նահատակուած է Ամենայն Հայոց կաթողիկոս Խորէն Ա., որի դիակը չարչարելուց յետոյ թաղել եւ գերեզմանից հանել, կտրատել, այրել ու ոչնչացրել են :

բ) Էջմիածնի Մայր Տաճարը թալանուած է եւ կողոպտուած Զեկայի կողմից: Էջմիածնի թանկագին եւ պատմական հարստութիւնները, ակնեղէն, ոսկեղէն եւ արծաթեղէն զանձերը, սրբազան անօթներն ու սպասները Զեկան կողոպտել ու տարել է, մինչեւ իսկ տաճարի գորգերն ու միւռոնի կաթսան:

գ) Այժմ փակ է եւ կնքուած Զեկայի կողմից՝ Էջմիածնի Մայր Տաճարը:

դ) Էջմիածնում միաբաններ չկան , սպանուած , մեռած , աքսորուած կամ բանտարկուած են: Էջմիածնի ոէկն ու տիրականն է Գերագոյն Հոգեւոր Մարհրդի անդամ գերապատիւ սրիկան --- Արսէն արք. Ղլճեանը : Աղաբէկովի յայտնագործած այդ սրբազան սրիկան կատաղի հակառակորդ էր նահատակ կաթողիկոսին :

(Շարունակելի) ԾՈՎԵՑԻ

ՔՐՏԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԾԱԻԱԼԻ

Զրոյցներ ռուսական օգնութեան մասին

Հալէպի «Թաքաուոմ» թերթը կը գրէ թէ քրտական ապստամբական ճանը չարժում մը կրկին պայթած է Տէրսիմի շրջանին մէջ: Ըմբոստները յանկարծակի յարձակած են ապստամբութեան վայրերուն մէջ բանակած քրտական զօրամասերուն վրայ, եւ հարիւրաւոր թուրք զինուորներ սպանած ու վիրաւորած են: Նոյն տեղեկութեան համաձայն, ըմբոստներէն գրաւուած զէնքեր կը հաստատեն թէ ըմբոստութեան ուժ կուտան խորհրդային իշխանութիւնները :

Կը հաւաստուի թէ քրտական չատ մեծ ուժեր կեդրոնացած են Թուրքիոյ զինուորական իշխանութեանց կողմէ, պաշարելու համար ապստամբ շրջանները որոնք կը պատրաստուին լուրջ դիմադրութեան մը համար :

**** Թուրքիոյ մէջ տիրող կարծիքին համաձայն, ըմբոստութեան վարիչ Քիւրտերը Սուրիայէն Տէրսիմ գացած են: Միւս կողմէ, ըմբոստները մեծ քանակ զէնք ստացած են:*

Եգիպտոսի թերթերն ալ կը գրեն թէ Տէրսիմէն ստացուած լուրերու համաձայն, Քիւրտերը կանոնաւոր ապստամբութիւն մը կազմակերպած են եւ յարձակում գործած թրքական պահականոցներու վրայ, սպանելով հարիւրաւոր զինուորներ: Ասկէ զատ, գրաւած են կարեւոր թիւով գերիներ, պաշար եւ ռազմանիւթ :

Կը կարծուի թէ քրտական այս նոր ապստամբութիւնը կը բացատրուի Ռուսիայէն, ստանալով անկէ զէնք եւ դրամ: Ասիկա կը հաստատուի անով որ, Տէրսիմի մէջ Թուրքերուն կողմէ գրաւուած զէնքերը բոլորն ալ ռուսական են: Ասոր վրայ Թուրք կառավարութիւնը հարկադրուեցաւ մեծ ուժեր կեդրոնացնել Ուրֆայի մէջ, ուր պիտի կառարուին զինուորական մեծ ռազմախոյզներ: Թուրքերուն ծրագիրն է օդակի մէջ առնել Տէրսիմի լեռները:

Քիւրտիստանի բոլոր շրջաններուն մէջ ցրուած են թռուցիկներ, որոնցմով Քիւրտերը կը հրաւիրուին համախմբուիլ մէկ դրօշի տակ, թօթափելու համար Թրքական լուծը: Քիւրտ ցեղապետները ընդունեցին հրաւէրը եւ իրենց մարդոցմով բարձրացան անառիկ լեռները, մասնակցելու համար հրոսակային կռիւներուն, որոնք կը փախցնեն Թուրքերուն քունը :

Զեկայի մը Սուրիոյ եւ Լիբանանի թրխպաստակներուն

1938 յուլիս 4ին կնքուած ֆրանքեւթուրք պայմանագրութեան համաձայն, Սուրիոյ եւ Լիբանանի բնակիչներէն անոնք որ, ըստ Լոզանի դաշնագրին 31րդ յօդուածին, թրքական հպատակութիւնը նախընտրած են, պարտաւոր են Թուրքիա փոխադրել իրենց բնակութիւնը :

Պէյրութի Թուրք հիւպատոսարանը մարզպանութեան մէջոցաւ մամուլին ուղած վերյյյին մէջ, կ'ըսէ թէ այդ կարգի անձերը պէտք է մինչեւ 15 օգոստոս 1938 դիմեն Լիբանանի եւ Սուրիոյ թրքական հիւպատոսարաններուն եւ յայտնեն թէ կը նախընտրեն թրքական հպատակութիւնը: Այլապէս կը կորսնցնեն այդ իրաւունքը :

Միւս կողմէ պէտք է Թուրքիա փոխադրուին մինչեւ 15 յունուար 1939:

Զեկոյցը կը ճշդէ թէ Թուրքիա մեկնողները ամբողջովին ազէր կը մնան Լիբանանի եւ Սուրիոյ մէջ իրենց ունեցած կալուածներուն: Գալով չարժուն գոյքերուն, կրնան փոխադրել Թուրքիա, առանց վճարելու ո եւ է տուրք , թէ Լիբանանի եւ Սուրիոյ եւ թէ Թուրքիոյ մէջ :

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ ՔԱՆԻ ՍԸ ՏՈՂՈՎ

ՊՈԼՍՈՑ գերմաներէն օրկանը, «Փիւրքիչէր Փոսա» գրած էր թէ հակաբոլշեւիկ ճակատ մը կազմուած է Թուրքիոյն մինչեւ Մէքքէ, մասնակցութեամբ Թուրքիոյ: Անատոլուի գործակալութիւնը պաշտօնապէս կը հերքէ այս լուրը :

ՍՊԱՆԻՈՑ ազգայնական բանակը յառաջ խաղալով, կարեց Հանրապետական զօրքին ճամբան դէպի Թէրուէլ: Կռիւները կը չարունակուին մոլեգնօրէն:

ՄԱՐՍԷՑԼԻ մէջ քննութիւնները յառաջ կը տարուին, երեւան հանելու համար գինուորական կեղծ վկայականներու ամբողջ գաղտնիքը: Ինչպէս գրած էինք, 208 հոգի կեղծ թուղթեր ստացած են, իբրեւ հիւանդ կամ անկար, գինուորութենէ ազատելու համար: Երկու ամբաստանեալներ ալ ձերբակալուեցան, որոնց մէկը յայտնեց թէ 640 ֆրանք վճարած է, բժշկական կեղծ վկայական ստանալու համար :

ԿԵՂԾ ԱՆՁԱԳԻՐի գրասենեակ մը երեւան հանուեցաւ Փարիզի մէջ: Վարիչներն էին երեք օտարականներ, մէկը՝ Ռուս, Շաքին, մէկը՝ Գերմանացի, միւսը՝ Աւստրիացի: Թուղթերը այս գէպքն ալ կը չահագործեն, օտարականները հարուստ ելու համար :

«Ցառաչ» կը ծախուի

Place des Fêtesի լրագրավաճառի խանութը գոց ըլլալով Յուլիս 14էն *մինչեւ* 18ը, «Ցառաչ» կը ծախուի Place des Fêtes**ի** ճանապ*հայ նպարավաճառին քով*, S. Baldjian, 2 Rue de Crimée (*Տոքթ. Գըրգոյեանի քլինիքին քովը*):

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ՓԱՐԻԶԻ Հ. Յ. Դ. «ԵԳԻՊՏՍՏՑԻ» ԿՈՄԻՏԷԻ ԿՈՂՄԷ

24 Յուլիս. Կիրակի առաւօտ ժամը 9էն մինչեւ գիշերուան 11ը

ՌՈՊԷՆՍՈՆի GRAND ARBRE, Maison FIQUET*ի պարտէզին մէջ*

ԿԸ ՆԱԽԱԳԱՀԷ ԸՆԿ. ՀՐԱՆՏ-ՍԱՄՈՒԷԼ

ԿԸ ԽՕՍԻ ԸՆԿ. Վ. ԻՇԽԱՆԵԱՆ

Անձրեւի պարագային պատսպարուած ընդարձակ սրահ

Գեղարուեստական խնամուած բաժին, խմբերգ, մեներգ, արտասանութիւն երիտասարդ ուժերու կողմէ: Հայկական պար ընկերակցութեամբ Թառիստ ԴԷՐԵՑԻՆի:

Գեղարուեստական բաժինէն յետոյ եւրոպական պար՝ ղեկավարութեամբ CARIO CANTI *նուագախումբին:*

Առատ եւ աժան պիւֆէ: կարելի է ուտելիքը միասին քերել:

Մուտք 4 ֆրանք:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ.— Մեթրօն փոխել Denfert Rochereau եւ առնել Robinsonի գիծը:

Ֆ. Կ. ԽԱՉԻ ՓԱՐԻԶԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻ ՏԱՐԵԿԱՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍԸ

17 Յուլիս, Կիրակի առաւօտեան ժամը 9էն գիշերուան 11.30

ՐՈՊԷՆՍՈՆի ՄԷՋ, *Grand Arbre, Maison Fiquet*

Գեղարուեստական հաճելի անակնկալներ, ընտիր նուագախումբ

Անձրեւի պարագային գոց սրահ, ճոխ պիւֆէ՝ պատրաստուած խնամքով.

Մուտք 5 ֆրանք:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ.— Denfertէն առնել մեթրոյի դէպի Ռոպէնսոն տանող գիծը, եւ կամ բարձրանալ օմնիպիւս թիւ 128:

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

Ֆր. Կ. ԽԱՉԻ ԻՍԻԻ ՄԱՍՆԱՃԻՒՂԻՆ ԿՈՂՄԷ

17 Յուլիս, առաւօտէն մինչեւ երեկոյ. Մէօսօյի ախտաւին մէջ, «Թափի Վէա»:

Երգ, նուագ, արտասանութիւն: Ճոխ պիւֆէ պատրաստուած անդամուհիներու ողմէ: Անձրեւի պարագային «Թրէմեան» դպրոցին մէջ խնջոյք տեղի պիտի ունենայ: Մուտքը ազատ է:

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԵՐԻԿՈՑԹ

կազմակերպուած Չամադայիի փարիզի Մ.ճիւղին կողմէ

Նաւիրուած ՅԻՒԶ. ԹՈՒՄԱՆԵԱՆի իր մահուան 15ամեակին առթիւ

23 Յուլիս, Շաբաթ երեկոյ, 8 Ռիւ ժան կուժոն:

Դաշնամուրի.

ԴՈՐՈԹԱՍԼԵՐԻ ՍԱՆՈՒՑ ՄԻՈՒԹԵԱՆ

24 Յուլիս, կիրակի, ժամը 3ին, վարժարանին պարտէզը

1, Bld. du Nord, le Raincy

Կը ներկայացուի ԱՆՈՒՇ օփերէթէն պատկերներ դերակատարութեամբ ԴՄԲԷԹԵԱՆի: LES CHAUSSONS DE LA DUCHESSE ANNE *(օփերէթ), հայկական պարեր, ճաշիկներու պալէ, զանազան պատկերներ, մարզական խաղեր:*

Ճաշ եւ պար մինչեւ մաժ 10 ճոխ պիւֆէ ժատչելի գիներով, (կը խնդրուի միասին ուտելիք չբերել): *Մուտք 5 ֆրանք:*

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ.— Opéraէն կամ Jaurèsէն առնել օմնիպիւս 21A եւ իջնել Raincy-Pavillons, Gare de l'Estէն ղոպէկառք՝ direction Gargan, իջնել Raincy-Pavillons:

10 Յուլիս, կիրակի կէսօրէ վերջ ժամը 2ին, տնկուելու եկեղեցիին մէջ: կը հրաւիրուի հայ հասարակութիւնը:

Տոհմական դաշնամուրդիա

Ֆր. Կ. Խաչի Ս. Շամոնի Մ.ճիւղին կողմէ: Այսօր, կիրակի կէսօրէ վերջ ժամը 2.30ին, Վարիգլի ծանօթ վայրը, առուակին եղերքը:

ՀԱՅ - ԲՈՑԺ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ

Խմբագիր՝ Շ. ՆԱՐԴՈՒՆԻ ԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

Հաւաքածոյ կազմելու համար կը պակսին հետեւեալ թիւերը.— 1, 2. 13, 20, 39: Առաջին տասիւ պէտք ունինք թիւ 39ին: Վերադարձնողներուն պատրաստ ենք տալ պահանջուած փոխարինութիւնը (Շնորհակալութիւն մեր բարեկամներուն, որոնց բարեացակամութեամբ լրացուցինք քանի մը հաւաքածոյ):

ՀԱՅ ԲՈՑԺի երեք տարուան հաւաքածոն, առանց ապահովելու պակաս թիւերը, կը ծախուի 50 ֆրանք,— մօտաւորապէս 700 էջնոց հատոր մը:

Դիմել՝ 17, Rue Damesme, PARIS:

ՀԱՅ - ԲՈՑԺի տարեկան բաժնեգինն է Ֆրանսայի համար 30, արտասահմանի համար 35 եւ 40 ֆրանք (ըստ երկրի):

ՅՕԽՇԱՒՏԻՒԹԻՒՆ

ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐՆԵՐՈՒ ԵՒ ՄԱՐՏԻԿՆԵՐՈՒ ՄԱՐՄԱՆՑԻ ՀԸՋԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ 17 Յուլիս, Կիրակի առաւօտեան ժամը ճիշդ 9ին, «Քաֆէ Նուար»ի ներսի սրահին մէջ (1 Bld. Dugomier): Կարեւոր օրակարգ: Ներկայ պիտի ըլլայ Կեդր. Վարչութեան ներկայացուցիչը:

«ՑԻՇԼ» ՑԱՆԶՆԱԺՈՂՈՎԸ

Յուլիս 14ի ոօնին առթիւ «Ցիշլ» Ցանճնաժողովը դրամական նուէր մը ուղարկած ըլլալով Ֆրանսահայ նոր բաղիր պինուորներուն՝ կը յանձնարարէ բոլոր չահագրգռուողներուն ուրանք տակաւին հաղորդակցութեան չեն մտած իրեն հետ, որ փութան տեղեկացնել իրենց անունը եւ հասցէն Ցանճնաժողովին, 15, Rue Jean- Goujon Paris (8): (կնիք)

ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ

Մարսէյլի Հայ Մշակութային Միութիւնը 20 ֆրանք կը նուիրէ Նահատակ Գրողներու Բարեկամներու Միութեան, փոխան ծաղկեպսակի, Տիկին Ս. ՓՈԼԱՏԵԱՆի մահուան առթիւ:

REXY CINEMA (Lyon)

15 *Յուլիս — 21 Յուլիս*

Cours Lafayette, angle Rue Garibal.

Ամէն օր ցերեկները **2.30**ին, իրիկուընները **20.30**ին:

Tino-Rossi dans

„Au son des guitars" et

„Trafic - d'armes"

Գիները **3, 5** եւ **7** ֆրանք

Ներկայ յայտարարութիւնը բերողին կը տրուի 2 մուտքի տոմսակ զեղչուած գինով :

ՄԱԳԱՂԱԹՆԵՐ

(Քերթուածներ)

ԱՇԱՐՈՆ ՏԱՏՈՒՐԵԱՆ



Փառատիպ հատոր մը, **300** էջ, Տպուած սակաւաթիւ օրինակներով

Գլուխներ այս հոյակապ հերքազգիրէն.—

ՅԱՑԳՈՒՐԱՂԱՐ
ՍԷՐԸ ՓՈՒՇԷ ՊՍԱԿՈՎ
ՅԵՂԵՌ ՄԱՐԴԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ԳԵՂԵՑԿԱԿԱՆՔ
ԲԱՆԱՍՏԵՂԸԸ ԿՊԱՏՈՒԱԾԱՆՔ
ՍԻՐՏՍ ԿԱՐՄԻՐ ՎԱՐԴԵՐՈՎ
ԻՆՔՆԱՒՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ
ԳԻՒՂԻ ՍԻՒՐԵՐ՝ ԵՒՐՈՊ ԵՐԳԵՐ

Գին **40** ֆրանք

Դիմել հեղինակին,
17, Rue Damesme, PARIS

Հ. ԶԱՐԴԱՐԵԱՆ

ՎԻՐԱԲՈՑԱԾ - ԱՏԱՄՆԱԲՈՑԱԾ

14 Rue Dunkerque (ՄԷՔՐՕ ԿԱՌ ՏԻՒ ՆՈՌ)

Tél. Trudaine 42—69

Կ'ընդունի ամէն օր ժամը 14 -20:

Ցառաւտեները ժամադրութեամբ:

Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆԻ

ԻՐԱՒԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

28 Avenue Victor Hugo, Vanves (Seine)

(Վիսէ Մէթրոյէի հրապարակին վրայ)

Կ'ընդունի երկուշաբթի, Չորեքշաբթի եւ Ուրբաթ օրերը ժամը 10—12 եւ երեկոյեան 4—7, եւ մասնաւոր ժամադրութեամբ:

ՎԱՀԱՆ ԵԱՐՃԱՆԵԱՆ

ԻՐԱՒԱԳԷՏ - ԽՈՐՀՐԴԱԿԱՆ

Հաճեցէք դիմել իրեն, ամէն դատական եւ վարչական գործերու համար:

Ամէն օր ժամը 10էն 12 *եւ* 5էն 7. *բացի* ՇԱԲԱԹ *եւ* ԿԻՐԱԿԻ *օրերէն:*

44, Rue Lafayette. Tél. Prov. 78-38.



„ ՇԻՐԱԿ „

Արեւելքի միակ իսկական օղին է: Անգուգական, Անմրցելի, Ճեխարդախ: Աւանդական ախորժակ բերող, պատրաստուած զուտ չամիչի ճիւղով Հայ աւանդական սեղանին զարդ:



ԲԱՔԸ ՏԻՒԶ

Զուտ խաղողէ քաշուած եւ անիսոնով պատրաստուած հայկական օղին *ԲԱՔԸ ՏԻՒԶ*ը, զգուշացէք արուեստական օղիներէ, ձեր սառամոքսը կ'այրէ, գլխերները ջուր կը խմցնէ եւ կը վնասէ ձեր առողջութեան: Խմեցէք միայն *ԲԱՔԸ ՏԻՒԶ*ը որուն անբաղատ, կազդուրիչ եւ ախորժաբեր ըլլալը հաստատուած է:

Dalakupeian 8 Rue Saffi
Dépôt: 7 Rue de la Paix, Marseille. Tél. Dragon 70—89

ՀԱՑԵԲՈՒՆ ԺԱՄԱՓՐԱՎԱՍՓԸՐ

Ճաշարան **Ֆ Լ Օ Ր Ի Ա**

31, Rue Monsieur le Prince, Paris (6e)

Մէքրօ՝ Օտէօն եւ Ցէն Միշէլ

Արեւելեան եւ ելրոպական խոհանոցի կերակուրներ :

ԿԱՊՈՑՆԵՐ ՌՈՒՍԱՍՏԱՆ ՂՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ունինք մեծ մթերք անգլիական, իր անսակարան եւ չխթոլովաք կերպասներու՝ այր մարդոց վերարկուի, հագուստի, կանանց առպերու եւ հագուստներու համար: Առաջնակարգ կօշիկներ, ձերմակեղէններ եւ նպաքեղէններ: Ունէէրվուա գրի մանրամասն գիներ:

Դիմել՝ **American Lloyd, Paris (9e). 7 rue Auber**

Tél. Opéra 67-77

Կ'ՈՒԶՈՒԻ

15—18 տարեկան ճարպիկ տղայ մը քուրքի համար, Ներկայանալ դպրոցական վկայագրով, Maison Daron (*Թաֆթուլեան*), 4 Rue de Liban, Paris (20e.):

Le Gérant : H. STEPHAN

17. Rue Damesme. PARIS (13) A. DER (AGOPIAN)

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՑԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
17, Rue Damesme, PARIS (13e)

Téléphone : Glacière 15 - 76
Chèque Postal Paris 1678 - 63
(ԵՐԹԵՒԵԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ — ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՐՄԱՆԱՑ ԵՒ ԱՄՍԱԿԱՆ ՎՃԱՐՄԱՆԱՑ

Ֆրանսա եւ Գաղութներ	150 ֆրանք	75 ֆրանք	40 ֆր.
Անգլիա եւ Իտալիա	265 ֆրանք	140 ֆրանք	
Ուրիշ երկիրներ	215 ֆրանք	110 ֆրանք	

ԵՐԵՔՇԱԲԹԻ
19
ՅՈՒԼԻՍ
MARDI
19 JUILLET
1938

ԳԻՆ 50 ՄԱՆԹԻՄ

ԺԴ ՏԱՐԻ — 14e Année No. 3785

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

"ՏԷՐ, ԿԵՑՈ..."

Ամբողջ Փարիզը կը խլրտի ամիսներէ ի վեր, ի պատիւ Մեծն Բրիտանիոյ թագաւորին, որ կը հասնի այսօր, երեքշաբթի, իբրեւ հիւր ունենալով թագուհին եւ բազմաթիւ բարձրաստիճան պաշտօնեաները :

Արքայական ընդունելութիւնները միշտ իրարու կը նմանին, համաձայն ընկալեալ սովորութեանց :

Բայց, անժխտելի է որ իսկապէս աննախընթաց պատրաստութիւններ կատարուեցան այս անգամ : Ոչ միայն իրերու մեծարանք, այլեւ իրերու զուարթութիւն: Մէկ անգամ յետադարձեցաւ այցելութիւնը, բայց պատրաստութիւնները չարունակուեցան նոյն թափով: Եւ այսօր Փարիզը զարդարուած է նոր հարսի մը պէս: Ծաղիկներ, դրօշներ, խորհրդանշաններ, թանկագին օթոցներ և պատմական հնութիւններ ցոյցի մը տուած են քաղաքին, որ պիտի ցնծայ մանաւանդ գիշերները: Ցուլիս 14ի աւանդական պարերն անգամ կը չարունակուին մինչեւ այսօր եւ պիտի տեւեն մինչեւ թագաւորին մեկնումը :

Փարիզ ուրիշ առեն ալ արքաներ ընդունած է, մանաւանդ Մեծ Պատերազմէն առաջ: Եւ իր նախագահներն ալ զացած են մինչեւ Փեթերսպուրգ (այժմ Լէնինկրատ):

Այն առեն ալ, քաղաքական մտահոգութիւններ էին որ առնն կուտային այսպիսի այցելութեանց (ցար Նիքոլա, նախագահ Լուբէ եւայլն):

Եւ սակայն, չատ աւելի լայն եւ խոր իմաստ մը կը ներկայացնէ ներկայ այցելութիւնը, թէ իր բովանդակութեամբ եւ թէ այս առթիւ սարքուած շողշողուն ցոյցերով :

Այցելութիւնը կը զուգադիպի այնպիսի չրջանի մը, երբ Եւրոպան մտանուած է սուր եւ քրոնիկ ջղագրգռութեան մը :

Երկու անգամ է որ, Ֆրանսայի վարչապետը հրապարակաւ կը խոստովանի թէ մեծ վտանգ մը անցուցին անցեալ մայիսին: (Զեխական տագնապին առթիւ): «Քիչ մնաց որ բազմաթիւ ժողովուրդներ անդարմանելի ազէտի մը մատնուէին»: Այս առթիւ գնահատելով Անգլիոյ եւ Ֆրանսայի «խաղաղասիրական վճռակամութիւնը», Պ. Տալատիէ մեծարանքի խօսքեր ուղղեց նաեւ Գեր – մանիոյ :

Անցած վտանգի մասին չատ աւելի բաց խօսելու ընդդիմադիր թերթերը, պնդելով թէ զօրաշարժի թուղթերը պատրաստ էին արդէն, եւ միայն ազդ. պաշտպանութեան նախարարին սառբագրումը կը պակսէր :

Իրականութիւն է որ Զեխոսլովաքիա զօրաշարժ կատարած էր, դերմանական սահմանագլուխին վրայ. իսկ Պերլին ալ անմիջապէս պատասխանեց, տանտպատիկ աւելի ուժ համախմբելով:

Բարեբախտաբար կարելի եղաւ կանխել վտանգը, չնորհիւ Մեծն Բրիտանիոյ վճռական աղդարարութեանց, ուղղուած՝ երկու կողմերուն ալ :

Այդ օրէն ասդին, աւելի սերտացաւ Անգլիոյ եւ Ֆրանսայի գործակցութիւնը: Իսկ Հիթլէր թէեւ նահանջեց, բայց կը պահէ խոր լուութիւն մը որ չարաչուք իմաստ ունի, բանգէտներու կարծիքով :

Բրիտանական միջամտութիւնը կը ձգտէր երկու հիմնական նպատակներու, — 1. Թոյլ չտալ որ Գերմանիա նորէն կատարուած իրողութեան մը առջեւ դնէ Եւրոպան, երկրորդ «անշլուս» մը սարքելով, ինչպէս Աւստրիոյ պարագային.— 2. Փակել Ֆրանսայի դինեալ միջամտութեան բոլոր դուռները :

Այ այժմ երկու նպատակներն ալ իրագործուած են: Լոնտոնի իր ճնշումը կը չարունակէ թէ Պերլինի եւ թէ Փրակայի վրայ, միեւնոյն առեն հանգստացնելով Փարիզի մտահոգութիւնները:

Արդ, ձորձ Զ.ի չունդալից այցելութիւնն ալ պիտի ծառայէ այդ հանգստացման :

Լոնտոն կ'ուզէ այս հանդիսաւոր առիթով ալ ապացուցանել թէ՝ միշտ Ֆրանսայի հետ է, անոր նեղ օրերուն, ապահովելու համար խաղաղութիւնը: Ամէն պարագայի մէջ, յետաձգելու համար պատերազմը, եթէ ընդունինք թէ անխուսափելի է ան :

Պերլին լիովին կ'ըմբռնէ այս պարագան: Եւ զարմանալի չէ որ, ճիշդ այս պահուն անոր մամուլը նորէն մտած կը թափէ Զեխերուն վրայ, նոյնիսկ նոր եւ աւելի լայն զօրաշարժ մը վերագրելով անոր :

Իրազեկներու կարծիքով, եթէ կարելի ըլլայ այս գործակցութեան չնորհիւ մինչեւ աշուն կամ ձմեռ կանխել վտանգը, յառաջիկայ տարի այլեւս հաւանական չէ պատերազմը, քանի որ Մեծն Բրիտանիա եւ Ֆրանսա բազմապատկած, ահարկու ստիճանի մը հասցուցած պիտի ըլլան իրենց սպառազինութիւնները :

Ահա թէ ինչու, Փարիզի մէջ ալ «Տէր կեցո» կամ «պահէ թագաւորը» կ'երգեն անգլերէն, պատերն ալ զարդարելով անգլիական քայլերգին առաջին պարբերութեամբ :

Մնաց որ, Անգլիոյ արքայական ամոլին այցելութիւնը միայն արարողական չէ: Թագաւորին կ'ընկերանան բազմաթիւ խորհրդականներ, գլուխն ըլլալով արտաքին նախարարը: Նոյնիսկ բաժակառաները նախապէս խմբագրուած են քաղաքական դիւանագործումով, ի լուր աշխարհի հռչակելու համար անգլեւֆրանսական «սրբալիր համաձայնութիւնը», որ հաւասար է դինակցութեան մը, ինչպէս Մեծ Պատերազմին :

Այս այցելութիւնը կերպով մը պատասխանն է Մուսոլինիի եւ Հիթլէրի վոխանակած այցելութեանց, առանց ունենալու պիկնատութեան յատուկ ուժականութիւնն ու չինդը : Երկու ժողովրդավար երկիրները իրենց ուխտն է որ կը նորոգեն, Մեծն Բրիտանիոյ արքայական - կայսերական մականի չուքին տակ :

Շ.

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ԱՆԳԼԻՈՑ ԹԱԳԱՒՈՐՆ ՈՒ ԹԱԳՈՒՀԻՆ ՓԱՐԻԶ ԿԸ ՀԱՍՆԻՆ ԱՅՍ ԻՐԻԿՈՒՆ

Առաջադրուած չափագրութիւններ եւ զգուշութիւններ

Այսօր, երեքշաբթի, իրիկուան ժամը 4.50ին Փարիզ կը մտնեն Անգլիոյ թագաւորն ու թագուհին, բազմաթիւ հետեւորդներով եւ 40 մետուկ հատուստներով, որոնց 35 — 36ը թագուհիին արդուզարդը կը կազմեն :

Կէս օրին, թագաւորն ու թագուհին Պուլոնյը պիտի հասնին ուղեկցութեամբ Ատլանտեանի Ֆրանսական տորմիղին, եւ պիտի դիմաւորուին Փա որ թեամբ Ատլանտեանի ֆրանսական տորմիղին, եւ պիտի դիմաւորուին Փա որ թեամբ Ատլանտեանի Ֆրանսական տորմիղին, եւ պիտի դիմաւորուին Փա որ թեամբ Ատլանտեանի

ՍՏԱՄԲՈՒԼԻ ԿԵՐԳԱԿԸՆ

The Eunuch of Stamboul

By DENNIS WHEATLEY

Թարգ. ՏԻԳՈՒՀԻ ՀՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Trans: J. M.

Թարգմ. ծ. Ս.

ԳԼՈՒԽ 23

ՀՏՏՈՒԹՅՈՒՆ

Ես ժամ մը տարա որ ոտքս ուժասպառ ըլլայ եւ ինքզինքս ստիպեցի ուտելու համար ինչ-որ բան գտնել: Ես գիտէի որ ոչ մէկ տեղ կրնայի աղուոր ճաշ մը ուտել, որովհետեւ ամէն տեղ ռամատան էր: Ուստի ուզեցի ինքզինքս ուրախացնել ծանօթ ճաշարանի մը մէջ, ուր ես ու Պարոն Քեմալ ամէն անգամ որ Պոլիս կ'երթայինք, կ'ուտէինք: Ես գիտէի որ ինքը ինծի պիտի ներէ որ ինքզինքս հրաւիրեմ իր սեղանին, եւ ես ալ ուզեցի որ ինքը ինծի հետ ճաշէ, որպէսզի կարենամ իրեն պատմել թէ ինչ պատահեցաւ ինծի հետ:

Ան ինծի ուրախութեամբ ողջունեց եւ ես ալ ուրախ էի որ կրկին իր ընկերութեան մէջ կ'ըլլայի: Ան ինծի հետ ճաշեց, եւ ես ալ ուրախ էի որ ինքը

ԳԱՂԱՓԱՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

ՀԱՅ ՄԱՐԴՈՒ ՀՈԳԵՎՈՐ ԿԵՐՊԱՐԸ

Ֆրանսիայի մայրաքաղաքում հայ գաղթականության մեջ ամենից հարգված ու սիրված մարդկանցից մեկը, անշուշտ, Գաղափարի մասին հոդվածների հեղինակն է: Ֆրանսահայ գրական ասպարեզում նա հանդես է գալիս դեռ 1910-ական թվականներից: Ֆրանսիայի հայ գաղութի կյանքի ամեն մի կարևոր երևույթ, ամեն մի կարևոր իրադարձություն նրա գրչի տակից դուրս է գալիս ինչ-որ առանձնահատուկ ջերմությամբ, ինչ-որ առանձնահատուկ սիրով: Ֆրանսահայ գրական ասպարեզում նա հանդես է գալիս դեռ 1910-ական թվականներից: Ֆրանսիայի հայ գաղութի կյանքի ամեն մի կարևոր երևույթ, ամեն մի կարևոր իրադարձություն նրա գրչի տակից դուրս է գալիս ինչ-որ առանձնահատուկ ջերմությամբ, ինչ-որ առանձնահատուկ սիրով:

լին, որոնց չռայլած քծնանքն ու դուր գալու տենչանքը ղղուանք էր պատճառում Զեկային :

Վերջերս կ. Պոլսոյ հայերէն թերթերի խմբագրութիւնները, կ. Պոլսոյ ռուսական դեսպանից տեղեկութիւններ էին ուզել Էջմիածնի եւ Ամենայն Հայոց կաթողիկոսի մասին : Հիւպատոսը պատասխանել էր, որ Էջմիածնում սմենայն ինչ կատարեալ է, իսկ կաթողիկոսը մեռել է բնական մահով : Դեսպանը այլ կերպ չէր կարող ասել : Կը գայ ժամանակ որ Էջմիածնի ողբերգութեան ամբողջ մանրամասնութիւնը հրապարակ պիտի գայ՝ իր արիւնոտ էջերով :

ՆՈՎԵՑԻ

(Վերջ)

Զհիւսուվափոյ Գերմանացիներուն նոր պահանջները

Փրակայի քաղաքական շրջանակներուն մէջ մեծ կարեւորութիւն կուտան Գերմաններու մէկ նոր պահանջին որ ահաւասիկ.— Ազգային ժողովին մէջ, միեւնոյն ժողովուրդին ներկայացուցիչները ազգային խմբակցութիւն մը կը կազմեն եւ իրենց ժողովուրդին բարոյական անձնաւորութիւնը կը ներկայացնեն : Այս ազգային խմբակցութիւնը կը կազմէ իւրաքանչիւր ժողովուրդի ազգ. խորհրդարանը եւ իրաւասու է ինքնորոշման բոլոր խնդիրներուն համար : Ան կը քուէարկէ օրէնքները եւ կը ձեռնարկէ հանրաքուէներ :

Ուրիշ յօդուածի մը տրամադրութեամբ, ազգ. փոքրամասնութեանց վերբերչները ի պաշտօնէ անդամ են կառավարութեան, հետեւաբար կախում չունին ազգ. ժողովի քուէարկութենէն : Անոնք միեւնոյն ատեն անդամ են ազգային պաշտպանութեան գերագոյն խորհուրդին :

Գերմանական յուշագիրը կ'առաջարկէ ընդել հետեւեալ նախարարութիւնները.— Հանրային կրթութեան, խնամատարութեան, առողջապահութեան : Անոնց պաշտօնները կը փոխացուին իւրաքանչիւր ժողովուրդի ինքնօրէն վարչութեանց : Պետական պաշտօններն ալ պիտի բաշխուին համաձայն ժողովուրդներու թիւին :

*** Զեխական կառավարութիւնը վճռապէս կը հերքէ գերմանական թերթերու այն լուրերը թէ չեխական բանակը զօրաշարժի ենթարկուած է : Կառավարութիւնը միեւնոյն ատեն այս հերքումով հաղորդեց գերմանական կառավարութեան : Գերմանական մամուլը կը չարունակէ անխնայ հարուածել չեխական կառավարութիւնը, մանաւանդ հիմա որ Անգլիոյ թագաւորն ու թագուհին, Փարիզ կը գտնուին :

Սպանիոյ պատերազմին երկամեակը

Յուլիս 18ին լրացաւ Սպանիոյ քաղաքացիական պատերազմին երկամեակը : Այս առթիւ բուռն յարձակողականի մը ձեռնարկած է Զօր. Ֆրանքօ, որուն յառաջապահները արդէն իսկ մտած են Վալենսիայի նահանգը : Ազգայնական աղբիւրէ կը հաղորդուի թէ 20.000 հանրապետական զինուորներ խուճապահար կը փախչին : Օդանաւերը եւ թնդանօթները անընդհատ ռումբ կը տեղացնեն հանրապետական դիրքերուն վրայ :

*** Երկու տարուան պատերազմէն վերջ, Զօր. Ֆրանքօ գրաւած է երկրին մեծագոյն մասը : Իր իշխանութիւնը ճանչցած են մինչեւ հիմա.— Գերմանիա, Իտալիա, Ճափոն, Վատիկան, Փորթուկալ, Ռումանիա, Եուկոսլաւիա, Զեխոսլովաքիա, Պրազիլիա, Թուրքիա, Հունգարիա, Ալպանիա եւն. : Անգլիա առեւտրական ներկայացուցիչ մը նշանակած է : Այս տարեդարձին առթիւ, ազգայնական հրամանատարը բարձր պատուանշաններ նուիրած է Իտալիոյ արտաքին նախարարին եւ զօր. Կէօրինկի, ինչ որ անգամ մը եւս կ'ապացուցանէ երէք պետութեանց սերտ գործակցութիւնը :

Գերմանական թերթերը փառաբանելով ազգայնական իշխանութիւնը, կը կարծեն թէ պատերազմը դեռ երկար պիտի տեւէ : Հանրապետականները ուժ - դնօքէն դիմադրեն բոլոր ճակատներուն վրայ : Երէք բանակներ կը սպառնան Վալենսիայի :

ՋԱՆԱՉԱՆ ԼՈՒՐԵՐ ՓԱՆԻ ՄԸ ՏՐՂՈՎ

ՖՐԱՆՍԱՅԻ ԵՒ ԱՆԳԼԻՈՅ վարչապետները նամակներ փոխանակած են այս օրերս, չեչտելով երկու երկիրներուն գործակցութեան սերտացումը : Մանրամասնութիւնները գաղտնի կը պահուին :

ՀՈՒՆԳԱՐԻՈՅ վարչապետը Հոմ գնաց, կարգ մը քաղաքական խնդիրներ քննելու համար : Քաղաքական շրջանակներու մէջ մեծ կարեւորութիւն կուտան այս այցելութեան : Փչէթայի թերթերը կը չեչտեն Իտալիոյ կենսական դերը Դանուբեան աւազանին մէջ :

ՄՈՍԿՈՒԱՅէն կը հեռագրեն թէ 1938ի հունձքը չատ լաւ պիտի ըլլայ այս տարի,— 100 — 110 միլիոն թոն : Բայց քաղը մեծ դժուարութեանց կը հանդիպի : Եւատ մը շրջաններու մէջ մեքենաները չեն բաներ կամ վնասուած են : Տեղ-տեղ ալ քաղը կը կատարուի նախնական միջոցներով, ինչ որ մեծ վնասներ կը պատճառէ : Կուսակցական պաշտօնաթերթը կ'աղդարարէ թէ «կուսակցութիւնը եւ կառավարութիւնը հաչիւ պիտի պահանջեն ցորենի իւրաքանչիւր կենդինարի փճացման համար » :

ՄԱՐսԼԻԱԻի նաւահանգիստի բանուորները գործադուլ հռչակած ըլլալով, ճամբորդներու բեռները չեն պարպուիր, իսկ հիւսիսային Ափրիկէէն հասած մեծաքանակ բանջարեղէններ կը փճանան :

«ՄԱՑԻՍ 28»

ԳԵՂԵՑԻԿ ՀԱՏՈՐ ՄԸ Հ. Հ. ՔՍԱՆԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻԻ ԱՇԽԱՏԱԿՑՈՒԹԵԱՄԲ ԾԱՆՕԹ ՄՏԱՒՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ

Հրատարակութիւն Հ. Յ. Դ. Արեւմտ. Եւր. Կ. Կ.ի։

Ընդարձակ նկարներով։

Գին՝ Ֆրանսա եւ գաղութները 5 ֆր., փոստի ծախքով 6 ֆր., արտասահման 25 սէնթիմ։ Դիմել՝ S. TOROSSIAN, 88 Rue de Bagneux, Cachan, (Seine) France։

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ՓԱՐԻԶԻ Հ. Յ. Դ. «ԵՓԻՊՏՍՈՑԻ» ԿՈՄԻՏԷԻ ԿՈՂՄԷ

24 Յուլիս, Կիրակի առաւօտ ժամը 9ին մինչեւ գիշերուան 11ը

ՌՈՊԻՆՍՈՆԻ GRAND ARBRE, Maison FIQUETի պարտէզին մէջ

ԿԸ ՆԱԽԱԳԱՀԷ ԸՆԿ. ՀՐՕՆԴ-ՍԱՄՈՒԷԼ

Անձրեւի պարագային պատսպարուած ընդարձակ սրահ

Գեղարուեստական խնամուած բաժին, խմբերգ, մեներգ, արտասանութիւն երիտասարդ ուժերու կողմէ։ Հայկական պար քնկերակցութեամբ թառիստ ԴԱՐԲԻՆԻ։

Գեղարուեստական բաժինէն յետոյ եւրոպական պար՝ դեհլավաթութեամբ CARIO CANTI *նուագախումբին։*

Առատ եւ աժան պուֆէ։ կարելի է ուտելիքը միասին քերել։

Մուտք 4 ֆրանք։

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ.— Մետրօն փոխել Denfert Rochereau եւ առնել Robinsonի գիծը։

ՓԱՐԻԶԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԱԿՈՒՄԲԻ

Տարեշրջանի վերջին ՊԱՐԱՆՑԻԿ ՀԱՒԱՔՈՒԹԸՆ. տեղի կ'ունենայ յառաջիկայ Շաբաթ, 23 Յուլիս ժամը 5էն մինչեւ կէս գիշեր. 8 Ռիւ Պասիւէ։ Մուտք՝ 5 ֆրանք։

ԹԷՅԱՄԵՆ

կազմակերպուած Ֆ. Հ. Կ. ԽԱՉԻ ԱՆԿԷՆԻ Մասնաճիւղին կողմէ

կը բանախօսէ՝ Գ. Ա. ԳԻՒԼԱՆՑԱՆԵԱՆ

Յուլիս 24ին կիրակի, ժամը 3.30ին, Անկէնի լճին դէմ, Cascade du Lac *սրահը։ Մասնակցութիւն 6 ֆրանք։*

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՑ

կազմակերպուած Համազգայինի Փարիզի Մ.ճիւղին կողմէ

Նուիրուած ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆի իր մահուան 15ամեակին առթիւ

23 Յուլիս, Շաբաթ երեկոյ, 8 Ռիւ Ժան Կուժոն։

ԽԱՆԱՍՈՐԻ ՍՐՇԱԻԱՆՔԻ 41ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ ԿԸ ՏՕՆՈՒԻ

Ժողովի ԱՆՏԱՌԻՆ ՄԷՋ Յուլիս 31ին կիրակի օր, Հ. Յ. Դ. «Արդութեան» խումբին կողմէ։ Այցելութիւն իշխան Արդութեաններու չիրիմին։ Մանրամասնութիւնները մօտ օրէն։

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ (սահմանափակ թիւերով)

ՅԱԿՈԲ ՀԻՍԱՅԵԱՆԻ

ԴԻՒՅԱՆԶՆԱԿԱՆ ՀԱՅՕՐԴԻՆ

(Բնական յուսանկարներով)

ՄԿՐՏԻՉ ԵՕԹՆԵՂԲԱՅՐԵԱՆ

(Ազգեցայի հերոսամարտի ղեկավար)

Գին՝ Ֆրանսա 8 ֆրանք, Սուրիա 6 ֆրանք, Ամերիկա 50 սէնթ, Բոլոր ապսպրանքները կանխիկ

Ստանալու համար դիմել H. Issayan, 38 Rue du Mésnil. Asnières (Seine) France.

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

(ՀԻՆ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՄԲ)

Նոր մատենաշարին Ա. հատորը

Հայաստանի ամէնէն տագնդաւոր արձակագիր, Նահատակ

ԱԿՍԷԼ ԲԱԿՈՒՆՑԻ

ԾԻՐԱՆԻ ՓՈՂԸ, ԽՈՆԱՐՀ ԱՂՋԻԿԸ, ՍԵՒ ՅԵԼԵՐԻ ՍԵՐՄՆԱՑԱՆԸ եւ ՍՊԻՏԱԿ ԶԻՆ։

Հետեւեցէք լոյս պիտի տեսնեն ուրիշ հատորներ ԳՈՒՐԳԷՆ ՄԱՀԱՐԻԷՆ, ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑԻՆ, ՎԱՂԱՐՇԱԿ ՆՈՐԵՆՑԷՆ, ԱԼԱՋԱՆԵՆ, ՎԱՀԱՆ ԹՈՓՈՒԶԵՆՑԷՆ եւ ուրիշներէ։

Խստագրական եւ հրատարակչական մարքինը մէկ նպատակ ևր հետապնդէ — գազութներուն ծանօթացնել Հայաստանի գրականութիւնը լոյս ընծայելով ժողովրդական ժառանգի գինուոր գրքոյկներու այս շարքը

Մատեանի տակ է մատենաշարին Բ. հատորը՝ ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ՝ Մեսրոպ Զօրեանէ։

Վաճառական կեդրոնատեղին է ԳՐԱՏՈՒՆ ՀՐԱՆՏ-ՍԱՄՈՒԷԼ

51, Rue Monsieur le Prince, Paris (6) chèque postal, Paris 1278—35, հեռաձայն Danton 88—65։

Մեծաքանակ գնողներու մասնաւոր զեղչ։

Առաջին հատորին գինն է 7.50 ֆր., արտասահման՝ 1ուկէս շիլլին կամ 40 սէնթ։ Ապսպրանքները՝ կանխիկ գրամով։

ԵՓՐԱՏ ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲ

Ղեկավար Տ. ՕՆՈՍԵԱՆ

15, Rue du Pourtour, Clamart, Seine Tél. Observatoire 13 - 45

Հեռաձայնել երեկոները 8էն վերջ։

Հայկական, եւրոպական եւ կովկասեան եղանակներ։ Միակ նուագախումբը հաճելի դարձնելու համար ձեր հանդէսները, հարսնիքները եւ հաւաքոյթները։

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

ՄԱՐՍԻԼԻԱ.— Տէր եւ տիկին Շամբարձում Օյնեեան եւ իրենց ազգականները խորին շնորհակալութիւն կը յայտնեն, սէնէ Լուի Շ. Յ. Դ. ընկերներուն եւ կ. խաչի մասնաճիւղին, Թաղեցիներուն, եւ բոլոր անոնց որ անձամբ կամ նամակով իրենց ցաւակցութիւնը յայտնած էին մեր սիրեցեալ զաւկին, ԽԱՉԱՏՈՒՐ ՕՅՆՕՅԵԱՆի մահուան առթիւ որ տեղի ունեցաւ Յուլիս 7ին։

ԳՕՒՇԱԼՏԵՍ

ՀԱՒՈՒՆ ԺՈՂՈՎ

Իսի-լէ-Մուլինոյի «Թրիմեան» դպրոցի վարչութիւնը խառն ժողովի կը հրաւիրէ կ. խաչի, Շ. Յ. Դ. «Զաւարեան» կոմիտէի, Հայ կամաւորներու միութեան, իսիի երիտասարդաց միութեան բոլոր անդամները անխտիր, նաեւ բոլոր ծնողքները եւ դպրոցով հետաքրքրուները, շաբաթ (23 Յուլիս) երեկոյ ժամը 8.30ին դպրոցի սրահին մէջ։ Օրակարգ.— *Սրահի ընդարձակման կամ դպրոցի համար հողի մը գնման հարց,*

ԳՈՑՑԻՔ ՏԵՍՔԻ ԼԻՈՆԻ ՄԷՋ

Cinéma REXY

Cours Lafayette. angle Garibaldi

«Յառաջ» կը ծախուի

Place des Fêtesի լրագրավաճառի խանութը գոց ըլլալով Յուլիս 14էն մինչեւ 18ը, «Յառաջ» կը ծախուի Place des Fêtesի ծայրի հայ նպաստավաճառին քով, S. Baldjian, 2 Rue de Crimée (Տոքթ. Գրեգոյեանի քլինիքին քովը)։

ԿԱՐԱՊԵՏ Յ. ԷՄԷՐԵԱՆ

Maison E. CHARLES հիմնուած 1869

29 rue Mathis, Métro Crimée

Autobus: AJ, AV, CP, 52, 50/71 Tel. Botzaris 12—60

Կը ծախենք՝ գոհարեղէններ, ամէն տեսակ ժամացոյցներ մատուհիներ եւլն.։ Նորոգութիւն ժամացոյցներու եւ գոհարեղէններու։ Կը գնենք՝ թլաթին, ոսկի, արծաթ եւ գոհարեղէններ՝ նպաստաւոր գիներով։

Մի մոռնաք որ վստահելի ձեռքէ գնուած ոսկեղէն ու գոհարեղէնները տնփոփոխ կը պահեն իրենց արժէքը։

Գաւառներէն եղած ապսպրանքները կը կարգադրուին արագ եւ խղճմտօրէն։



FOURRURES DE ST. BERNARD

ՀԱՑԿՈՒՀԻ ԿԻՒԼՊՕԼԵԱՆ

Մեծաքանակ ՄՈՒՇՏԱԿՆԵՐ ներածած ենք ուղղակի։ Կը ծախենք դիւրամատչելի գիներով կարճ ժամանակուան համար։ VERITABLES MARTRES (սամուր) 100 ֆր.էն սկսեալ։ VERITABLES RENARDS ARGENTÉS (արծաթէ աղուէս) 500 ֆրանքէն սկսեալ։

ՓԻԹՈՒԱ ՕՊԻՀՕՆ, 60 ֆրէն սկսեալ։

Բաց է ԿԻՐԱԿԻ օրերը մինչեւ կէս օր։

24, Rue Affre կամ 8, Rue Cavé — PARIS - 18e

Մասնաճիւղ՝ 2, Rue de la Charbonnière —

Մետրօ՝ La Chapelle — Barbès Roch. Tél. Montmartre 69-70

Hommes **Dames**

15, Bld. Bonne Nouvelle

Métro: Bonne Nouvelle Tél.: Gut. 93-70



Tailleur de ST. BERNARD

Pour Hommes et Dames

H. GULBOLIAN

24 rue Affre կամ 8 rue Cavé, Paris (18e)

Մասնաճիւղ՝ 2 rue de la Charbonnière

Մետրօ *La Chapelle եւ Barbès Rochechouart*

Թելեֆոն Montmartre 69—70

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ.— Կարեւոր նուէրներ մի՛ձեռք հատուտի համար մինչեւ Յուլիս 14։

ՄՏԱՑԱԾ ԵՆՔ ՖՐԱՆՍԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՄՈՒՆՆԱՑԻՆ ԿԵՐՊԱՍՆԵՐ։

ՄԵՐ ԳԻՆԵՐԸ.— Հագուստ (երկու փորձով) սկսեալ 350—450 ֆր.էն։ Նուէր կը տրուի մինչեւ 4500 ֆրանքէզի տարբեր կամ կոշիկ 450 ֆր.է վեր հագուստներու համար, 3 փորձ, նուէր կը տրուի Հայկուհի Կիւլպէօլեանի արհեստանոցին մէջ պատրաստուած, գարնան յատուկ, տրիկոտաժ ուշագակ վզնոց մը։ Ներկայացնող «Յառաջի» կտրոնով։ Վերոյիշեալ նուէրները չեն օգտուիր մինչեւ 20 տարեկան այն երիտասարդները եւ երիտասարդուհիները որոնք չեն ուզեր խօսիլ ի ներկայութեան չեն կրնար գրել իրենց անունները մայրենի լեզուով։

Բաց է ԿԻՐԱԿԻ օրերը մինչեւ կէս օր։



ՐԱՔԸ ՏԻՒԶ

Ջուտ խաղողէ քաշուած եւ անթոռնով պատրաստուած հայկական օղին *ՐԱՔԸ ՏԻՒԶ*, զգուշացէք արուեստական օղիներէ։ Ձեր ստամոքսը կ'այրէ։ Գիշերները ջուր կը խմէ եւ կը վնասէ ձեր առողջութեան։ Խմեցէք *ՐԱՔԸ ՏԻՒԶ* որուն անուշ համ, կաղդուրիչ եւ ախորժաբեր յատկութիւնները ճանաչուած է։

Dalakupeian 8 Rue Sufflot

Dépôt: 7 Rue de la Paix, Marseille. Tél. Dragon 70—89

Կ'ՈՒԶՈՒԻ 15—18 *տարեկան ճարպիկ տղայ մը քուրքի համար։ Ներկայանալ դպրոցական վկայագրով։* Մատ Maison Daron (*Թաթուլեան*), 4 Rue de Liban, Paris (20e.)։

Le Gérant : H. STEPHAN

17, Rue Dameme, PARIS (13) A. DER (AGOPIAN)

ՀԱՐԱՁ

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՑԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
17, Rue Damesme, PARIS (13e)

Téléphone : Glacière 15 - 70
Chèque Postal Paris 1678 - 63
(ԵՐԹԵՒԵԱՆԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ —

	ՏԱՐԵԿԱՆ	ՎԵՑԱՄՍԵԱՅ	ԵՒԱՄՍԵԱՅ
Ֆրանսա եւ Գաղութներ	150 ֆրանգ	75 ֆրանգ	40 ֆր.
Անգլիա եւ Իտալիա	285 ֆրանգ	140 ֆրանգ	
Ուրիշ երկիրներ	215 ֆրանգ	110 ֆրանգ	

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
20
ՅՈՒԼԻՍ
MERCREDI
20 JUILLET
1938

ԺԴ. ՏԱՐԻ — 14e Année No. 3786

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱԿԵԱՆ

ԳԻՆ 50 ՄԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ՇԱԲԱԹ

ԱՊՐԻԼ 6_ՄԱՅԻՍ 24

Ուրեմն, ամենավերջին տեղեկութիւններն ալ — մինչեւ յունիս 30 — կը հաստատեն Ն. Ա. Գերազնիւ Հոգեւոր Հովիւին Ամերիկայի եւ Կանատայի թեմերուն ուղեւորութիւնը, որ կը կատարուի ապրիլ 6_մայիս 24 ամսաթիւերուն :

Այս է ամբողջ եղրակացութիւնը այն ընդարձակ հետաքրքրական թղթակցութեան, որ հրատարակուեցաւ «Յառաջ»ի մէջ, երեք օր իրարու վրայ (յուլիս 16, 17 եւ 19) :

Այդ ողբերգութեան սկիզբէն մինչեւ այսօր, մեր տեղեկատուները կանգ առին այս կէտին վրայ,— սպանութիւն, իրենց լուրերը քաղելով Հայաստանէն եւ Կովկասէն հասած հայ թէ օտար ուղեւորներէ :

Զուսնելով ուղղակի եւ անմիջական միջոցներ՝ ամէն բան տեղին վրայ ստուգելու, անհատականօրէն չէ որ անոնք չափազանցութիւններ ալ խմացած ըլլան : Անխուսափելի են եւ՛ չափազանցութիւնները եւ՛ թիւրիմացութիւններն ու հակասութիւնները՝ այսպիսի պարագաներու մէջ :

Առաջին անգա՛մ է որ մարդիկ անյայտելի դժուարութեանց առջեւ կը գտնուին, տեղն ի տեղոյ ստուգելու համար եղերական դէպքեր՝ Ս. Միութեան անծայրածիր տարածութեան վրայ :

Նոյն իսկ այստեղ, Եւրոպայի մէջ, հարեւան Սպանիոյ քաղաքացիական պատերազմին առթիւ, ի՛նչ ողբերգութիւններ պատահած են եւ կը պատահին, որոնց վաւերական պատմութիւնը տակաւին վերջը միայն կարելի կ՛ըլլայ ստուգել : Դեռ նոր էր որ հասատուեցաւ թէ միապետական երեւելի մը սպաննուած է երկու տարի առաջ…

Դառնալով նորէն Հայաստան, վերջին երկու տարիներու ընթացքին կատարուած զազանային խոշտանգումներէն, սպանութիւններէն կամ գնդակահարութիւններէն ո՞րն էր որ խմացուեցաւ ճիշդ ժամանակին, բոլոր վաւերական մանրամասնութիւններով :

Նենգամիտ կամ բթամիտ մարդիկ իրենց նատած տեղը «սո՛ւտ է», «Սպիտակ Ռուսերու յերիւրանք է» չպոռա՞ցի՛ն, երբ առաջին անգամ կը հաղորդէինք Ազատ Ռանչեանի «անձնասպանութիւնը», քաղելով «Տէյլի Թելէկրաֆ»ի Մոսկուայի թղթակիցէն :

Նոյն վայնասունը չփրթա՞ւ, երբ, ամիսներ վերջը, կը հաղորդուէին ուրիշ ձերբակալութիւններ եւ մահացումներ,— դէմքառումը բազմաթիւ կուսակցական եւ պետական վարիչներու եւ երիտասարդ զրագէտներու : Մինչեւ որ «Հայաստանագէտները» իրենք ալ բարեհաճեցան արձանագրել, հիմնուելով «Երեւանէն եկած իրազեկ մտաւորականի մը» կամ «Լիբաննացի ուսանողի մը» տեղեկութեանց վրայ :

Եւ ըսե՛լ թէ երիտասարդ զրագէտներու գնդակահարութենէն մինչեւ Շահվերտեանի եւ Սահակ Տէր Գաբրիէլեանի մահացումը՝ բոլոր սեւ լուրերը բերնէ բերան չըլլան կ՛ընէին դեռ անցեալ տարի, ամառը եւ աշունը, «Հայաստանեայց» չըլլանակներու մէջ, իսկ մենք վճռական բան չգրեցինք, մինչեւ որ թերթ մը ձեռագիր չանցաւ մեր ձեռքը կամ «Ա. Հայաստան»ի սիւնակներուն մէջ սպրդած տող մը չզարկաւ մեր աչքին (ներկայումս գնդակահարուած Ն. Ստեփանեան)…

Այսպէս նաեւ կաթողիկոսին, երկու եպիսկոպոսներու եւ մէկ վարդապետի եւ թերեւս ուրիշներու սպանութեան պարագան :

Ժամանա՛կ պէտք է անցնի, ամիսներ, նոյնիսկ տարի, — մինչեւ որ մեր սմսեղուկ երանելիներն ալ առաու մը արձիւնան եւ իրենց կարգին արձանագրեն որոշ իրողութիւններ, հոգ չէ թէ իրեւ ոճիր - արկած :

Առ այժմ, ի՞նչ ունին անոնք, հերքելու համար հրատարակուած տեղեկութիւնները :

Նախ՝ իրենց խելապատակը, որ կը գործէ միայն մէկ ուղղութեամբ,— գրիչը մելանը թաթխել եւ մրոտել : Առանց տեղէն չարժելու : Առանց տող մը գիր գրելու եւ հարցնել - փնտռելու :

Երկրորդ՝ Էջմիածնի «Գերագոյն Հոգեւոր Խորհուրդ» կոչուած խրտուիլակին սա պատմակա՛ն նամակը, գրուած՝ 1938 մայիս 24ին եւ Փարիզ հասած՝ յուլիս 9ին : Նամակ մը, որ ոչ թէ կը բանայ , այլ աւելի կը թանձրացնէ մթութեան, խորհրդաւորութեան քօղը :

Մեր հակառակորդները չատ կը սիրեն «տրամաբանել», դիտնալով հանդերձ որ, այդ մարդկային յատկութիւնը լեզուապատառ կը փախչի, երբ խնդիրը կապ ունի խորհրդային կոչուած աշխարհի անցուդարձին հետ :

Ոչինչ· մենք ալ տրամաբանութիւն փորձ մը կատարենք, հետեւեալով այդ մեթոտին :

1· Ո՞ւր կ՛երեւան էջմիածնի «Գերագոյն Խորհուրդ»ը, ապրիլ 6էն մինչեւ մայիս 24:

Երկունքի՞ նատած էին Գէորգ եւ Արսէն արքեպիսկոպոսները, ապրիլ 6ին պատահած մահուան մը տեղեկագիրը խմբագրելու համար, երբ Արտաշահմանի կղերական իշխանութիւնը եւ հաւատացեալները անհամբեր լուրի կը սպասէին, հեռագիրներ կը տեղացնէին, կաթողիկոսին մահուան պարագաները, օծումը, թաղումը եւ ուրիշ մանրամասնութիւններ իմանալու համար :

2· Մենք աւանդապաշտ չենք, բայց գիտենք որ կաթողիկոսները եւ պատրիարքները դիտողութեան չեն ենթարկուիր: Այդ ոչինչ: Եթէ իսկապէս դիտողութիւն կատարուած է, ո՞ւր է բժշկական տեղեկագիրը, իր դիտական պատճառաբանութեամբ եւ մանրադիտներու ստորագրութեամբ :

Դեռ կարելի էր երկարել հարցումներուն չարքը: Բայց մենք բաւական կը սեպենք այսքանը, պարզելու համար այլապէս քաոսնելի եւ ըմբռնողութենէ դուրս պատկեր մը :

Շ.

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ԱՄԲՈՂՋ ՖՐԱՆՍԱ Կ՛ՈՂՋՈՒՆԷ ԱՆԳԼԻՈՅ ԹԱԳՒՒՀՈՐՆ ՈՒ ԹԱԳՈՒՀԻՆ ՈՐՈՆՔ ՓԱՐԻԶ ՀԱՍԱՆ ԵՐԷԿ ԻՐԻԿՈՒՆ

Անգլիոյ թագաւորն ու թագուհին երեքշաբթի առաւ ժամը 10.55ին մեկնելով անգլիական ծովախիի, Պուլոներ հասան ժամը 12.40ին, մասնաւոր կառախումբ մը նստան ժամը 1ին, եւ Պուա որ Պուլոնեըի կայարանը հասան ժամը 4.50ին : Ծովուն վրայ 26 ֆրանսական մրատորներ կը հետեւէին արքայական դրօսանաւուն : Այս տարմիղին գլուխը կը գտնուէր Ֆրանսայի ամենագեղեցիկ եւ ամենահզօր զրահաւորը, «Տէօնքէրք», որ ունի 26.500 թոն տարողութիւն : Երեք յածանաւեր դեռ անցեալ տարի լրացան : Տարմիղին մէջ էր նաեւ Ֆրանսայի ամենամեծ սուզանաւը, «Էմիլ Պէրթէն», որ ունի 5886 թոն տարողութիւն եւ 34 հանգոյց արագութիւն եւ կրնայ տանիլ 200 ական :

Պուա որ Պուլոնեըի կայարանին մէջ Թագաւորն ու Թագուհին ընդունուեցան Հանրապետութեան նախագահին, Ձերակոյտի եւ Երեսփ. Ժողովի նախագահներուն, վարչապետին եւ կառավարութեան անդամներուն կողմէ : Պաշտօնական ներկայացումներէն վերջը, Հանրապետութեան նախագահը իր հիւրերը առաջնորդեց Քէ տ՚Օրսէյի պալատը (արտաքին գործերու պաշտօնատուն), որ յատկացուած է իրենց բնակութեան : Արքայական խմբորը կը բաղկանար 11 կառքերէ : Դիւշերը չքեղ հացկերոյթ մը սարքուեցաւ Շան զ՚Էլիզէի պալատին մէջ, յետոյ գեղարուեստական երեկոյթ մը :

Ամբողջ Ֆրանսան կը ցնծայ այս այցելութեան առթիւ, որուն համար սարքուած պատրաստութիւնները աննախընթաց կը համարուին : Միլիոնաւոր դրօշներ, խորհրդանշաններ, պէսպիսուն պարզարանքներ եւ ծաղիկներ կերպարանափոխած են Փարիզը, մասնաւորապէս Շան զ՚Էլիզէի պողոտային վրայ : Առեւտրական հրապարակը զրեթէ կանգ առած է : Զրի թորոններ սարքուած են ժողովուրդին համար : Ֆրանսայի ամէնէն հարուստ թանգարաններն իրագեկներ կ՚ըսեն թէ Փարիզը այսքան ծաւալուն խանգավառութիւն չէր տեսած Մեծ պատերազմէն ի վեր : Զայնասփիւռ կարգիչները անընդհատ կը բանեցնեն, յետին մանրամասնութիւնները հաղորդելով արքայական այցելութեան մասին : Թագաւորն ու Թագուհին Փարիզ մտած ատեն հսկայական ղրօշ մը պարզուեցաւ Էյֆէլի կառարէն :

Հազարաւոր Անգլիացիներ Փարիզ թափած են, այս այցելութեան առթիւ :

Երէկ հանրակառքի եւ մեթրոյի հաղորդակցութիւնները ընդհատուեցան երեք ժամ, դիմաւոր պողոտաներուն վրայ :

Առաքելու ապառճոխիկ Գադնատիճի մէջ

Լոնտոնի թերթերը կը գրեն թէ Գադնատիճի Արաբները որոշած են բուռն յարձակումներ կատարել հրէական գաղութներուն դէմ, լայն ճակատի մը վրայ : Մինչեւ հիմա Արաբները կը գոհանային տեղական արշաւներով : Այժմ կազմուած են մասնաւոր հրոսախումբեր, առաջնորդութեամբ գերազոյն, ապայակոյտի մը : Եւ որովհետեւ հրէական գաղութները վերջերս ուելի զօրացուցած են իրենց ինքնապաշտպանութեան միջոցները, կը վախցուի որ չատ աւելի ծանր դէպքեր պատահին : Այդ գաղութներէն չատերը սպառազինուած են զնդացիրներով, բայց Արաբներն ալ նոր ուժ եւ զէնք ճարած են : Այնպէս որ, հոգատար իշխանութիւնը կը խորհի նոր զինուորներ փոխադրել : Ամէն պարագայի մէջ, կացութիւնը նոյնքան ծանր է որքան երկու տարի առաջ, եթէ ոչ աւելի գէշ : Օրինակ, Հայֆա մեռեալ քաղաքի մը կերպարանքն առած է : Արաբական խանութներուն մեծ մասը դոց է եւ առեւտուրը կանգ առած է :

*** Առջի օր ծանր դէպքեր պատահեցան, նոր զոհերով :

ՌՈՒՄԱՆԻՈՅ Մարիա թագուհին, որ հիւանդ էր երկար տաեներ ի վեր, մեռաւ երկուշաբթի օր : Ծնած էր՝ 1875ին եւ մօտիկ ազգական էր Անգլիոյ արքայական ընտանիքին : 16 տարեկանին ամուսնացաւ Հոհենցոլէրնի Ֆէրտինանտ իշխանին հետ, որ Ռումանիոյ գահը բարձրացաւ 1914ին :

ՕՐԸ ՕՐԻՆ

ԵՐԲ ԱՑԼԵՒՍ ՉԵՆ ՍԻՐԵՐ

Ամերիկուհի մը , հազիւ 29 տարեկան եւ շատ գեղանի, դառնօրէն կը գանգատի նիւ - Եորքի լուրջ թերթերէն մէկուն մէջ·—

« Տասը տարի առաջ Եւրոպա գացած էի՝ պտոյտի համար : Այս տարի եւս, զարնաւն, Եւրոպա գացի՝ պտոյտի համար : Հին աշխարհի գլխաւոր մայրաքաղաքներուն , մասնաւորաբար Փարիզի մէջ, երկրորդ այցելութեանս ընթացքին, ուշադրութիւնս գրաւեց պարագայ մը·— Տասը տարի առաջ կարելի չէր խալել տասը մեթր, առանց հանդիպելու երիտասարդի մը որ ինծի կը փակչէր կարծես, ետեւէդ կուգար, հաղարումէկ ձեւով սիրային յայտարարութիւններ կ՚ընէր : Իսկ այս տարի՝ կրնաս հանգարտ պտըտիլ Փարիզի պողոտաներուն վրայ, ոչ ոք կը նայի վրադ »:

Օրիորդը, Միս Տորոթի Սփրինկըրս, իր յուշատետրն ալ վկայութեան կանչելով, կը գրէ·— «1928ին, Մայիսեան սուսուօտ մը, էքսուայէն Քոնֆորտ գացած ժամանակ, ետեւէս եկան 17 երիտասարդներ : Այս տարի՝ միայն 6 երիտասարդ» : Ի՞նչ, ուրեմն կրակը մարա՞ծ է Փարիզի երիտասարդութեան սրտին մէջ : «Եւ սակայն, կ՚ըսէ Ամերիկուհին, ծերացած չեմ, տգեղացած ալ չեմ, ընդհակառակն» : 29 տարեկան եւ թա՞րմ, թա՞րմ : Ի՞նչպէս չցաւիլ որ ետեւէն գացողները բիչցած են հիմա : Նոյն «անակնկալը» պանդոկին, թատրոններուն եւ սրճարաններուն մէջ, ոչ ոք կը մտածեայ օրիորդին՝ նուազեցնելու համար «հրեշտա՞կս» կամ «աստուածուհի՛ս» :

Այս պարագան կը հաստատեն նաեւ իր ընկերուհիները, որոնք պտըտած են կեդր· Եւրոպա : Զարմանալի է որ Միջերկրականեան երկիրներու մէջ եւս, ուր կնոջ հպապղրը մինչեւ խեղճութիւն կ՚տառապորդէ այրերը, նոյնիսկ պակ են այս տարի : Միակ երկիրը, Եւրոպայի մէջ, որ տակաւին կը պահէ հովուերգական աւանդութիւնները, ՝Շուէտն է,— ուրեմն, սիրերգութիւնը խոյս տուած է դէպի հիւսիս, դէպի պաղ երկիրները :

Օրիորդը կը պատմէ թէ շուէտական ընտանիքներու մէջ չես կրնար դուրս հլլել միանգամ, ամէնքէապէս հովիդ կը վազէ երիտասարդ մը, կ՚առաջարկէ պլուոյտի տանիլ քեզ պարտէզները, գիւղերը կամ սրսփացող ջուրերու վրայ : Եւ սիրային այնպիսի արտայայտութիւններ կ՚ընեն, որ ··· կը դողաս : Օր մը, երիտասարդ մը այնքան նեղեր է գինիէ, որ ստիպուեր է ոստիկանի մը դիմել : Եւ ի՞նչ պատասխաններ է ոստիկանը, գիտէ՞ք : «Եթէ ես ալ ըլլայի այդ երիտասարդին տեղը, նոյն բաները պիտի ըսէի » :

Մի՛ կարծէք թէ Ամերիկուհիի շատ դառնացած է այս միջադէպին համար : Ընդհակառակն մխիթարուած է, տեսնելով որ գէթ Շուէտացիները եկեր շոյեր են, անուշիկ խօսքեր են ըսեր, եւ կրակէ դողով մը կը սարսռացուցեր : Ամերիկուհին, Նիւ - Եորքի լուրջ թերթին մէջ, լրջօրէն կը յանձնարարէ, որ այսուհետեւ իր սեռակիցները երթան··· Շուէտ, ուր կնոջ գեղեցկութեան մասին գովեստը սակարկութեամբ կամ կրամով չեն ծախեր, այլ կը շնորհեն առատ առատ, փողոցին մէջ, բարձրաձայն :

Ուրեմն, այս Ամերիկուհիները, որ հիմա Եւրոպա կուգան, ուրիշ ցանկութիւն չունին, բայց եթէ լսել իրենց հասելէն :

—Հրեշտա՛կս, հրեշտա՛կս, պագնեմ կրծեմ ···

— Փիսի՛կս, եկուր սեղմեմ կուրծիս··· (Ափսո՛ս, շատո՛նց հեռացած բլլալով դպրոցական գրասեղաններէն, հիմա չեմ գիտեր թէ դեռ ի՛նչ աղուոր բաներ ալ կարելի էր ըսել) :

Ի՛նչ տարօրինակ էմոյթներ ունին այս Ամերիկուհիները : Կը յիշեմ, տասիներ առաջ անոնք Արեւելք կուգային ուրիշ բաներու համար, որոնց դասակարգ մը Հայեր բարեգործութիւն սեռնուը կուտային, իսկ մենք՝ ուրիշ ցնուն : Այդ անունը կը կարդամ հայ որքերու տխուր պատմութեան մէջ :

ԱՐԱԶ

Ի՞ՆՉՈՒ ԶԱԽՈՂԵՑԱՒ ՀՅՑԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՀՈԳԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ

Լոյտ Ճորճի կարգ մը յայտնութիւններ

ՆՄՐ.— Անգլիոյ երբեմնի վարչապետը, Լոյտ Ճորճ, երկու շաբաթ ի վեր զանազան գլուխներ կը հրատարակէ իր յուշերէն, «Տէյլի Թելէկրաֆ»ի մէջ, Մեծ Պատերազմի հաշտութեան բանակցութեանց եւ մասնաւորապէս վերսայլի դաշնագրի մասին : (Ամբողջութիւնը լոյս պիտի տեսնէ առանձին հատորով) : Այդ յուշերու վերջին մասին մէջ, շօշափելով Հայաստանի եւ Պոլսոյ ամերիկեան հոգատարութեան խնդիրը, նախկին վարչապետը կը գրէ (*Տէյլի Թելէկրաֆ*, 18 յուլիս).

Այն դաշնի դաշնագիրները որոնցմով Պոլիսը եւ Նեղուցները եւ Հայաստանի նահանգին կէսը պիտի դրուէին ցարերու տիրապետութեան տակ, *անմիջապէս չեղեալ հռչակուեցան առաջ բոլշեւիկներուն կողմէ : Ուրեմն ի՞նչ պէտք էր ընել անոնց մասին :*

Նեղուցները կարելի էր ձգել Թուրքաստանի, չատ մը պատմական եւ ազգագրական հիմերու վրայ : Պոլիսը երբեմն եղած էր մայրաքաղաքը յունական հռչակաւոր եւ չողչողուն կայսրութեան, միլիոնաւոր Յոյներ բնակած են Նեղուցներու ափերուն վրայ, յարակից կղզիներով : Ելք մը կրնար ըլլալ այս , բայց ոչ ոք Վենիզելոսէն աւելի լաւ ի՛ըմբռնէր թէ այս լուծումը պիտի հանդիպէր Իտալիոյ բացայայտ թշնամութեան եւ Ֆրանսայի գաղտնի ընդդիմութեան, աւելի ահարկու :

Ուրիշ ելք մը կրնար ըլլալ Նեղուցներուն միջազգայնացումը : Այս ձեւը կը նշանակէր կազմել վերստուգիչ յանձնաժողով մը, որուն մէջ ապահովաբար ներկայացուցիչներ պիտի ունենային Բրիտանիա, Ֆրանսա, Ամերիկա եւ Իտալիա : Բայց ամէն անգամ որ այս ներկայացուցչական ձեւը՝ փորձուեցաւ, տեղի տուաւ բուռն անհամաձայնութեանց որոնք փոխադարձ բարեացակամութիւնը խախտեցին նոյնիսկ ամէնէն բարեկամ պետութեանց միջեւ :

Հետեւաբար, մեզի համար պարզ էր թէ լաւագոյն լուծումը պիտի բլլար ընտրել հոգատար պետութիւն մը որ խանդուած չըլլար եւրոպական պետութեանց նախանձներուն եւ մրցակցութեանց, պետութիւն մը որուն հետաքրքրութիւնը այս գաղաւոր վէճերէն՝ կրնար անաչառութեան գրաւական մը կազմել, որուն ուժն ու դիրքը աշխարհի մէջ կրնային հեղինակութիւն տալ իր որոշումներուն :

Նոյն սկզբունքը նաեւ Հայկական Հարցի մասին : Այստեղ ալ անգործնական էր միջազգային հսկողութիւնը, *եւ մենք այն եզրակացութեան եկանք թէ միայն Ամերիկան կրնար տիրաբար ստանձնել հոգատարի մը պատասխանատուութիւնները :*

Հայաստանի եւ Պոլսոյ հոգատարութեան հեռանկարը կը համապատասխանէր նախագահ Ուիլսընի գաղափարապաշտութեան : *Ոչ ոք կրնար Ամերիկա-*

(Յուրքրա շարունակութիւնը կարդալ Դ· էջ)

ԿԱԹՈԼԻԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՄԱՑՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ

(Դ. եւ վերջին մաս)

1936ին, ժողովրդական ճակատի կազմութենէն վերջ, Ֆրանսայի Կաթոլիկ եկեղեցին եւս դիրք ճշդեց ընկերային անյապաղ բարենորոգութեանց հանդէպ։

Նախ յամառօրէն պաշտպանեց այն տեսակէտը, թէ կիներու տեղը ընտանիքին մէջն է, եւ ոչ գործարաններու, արհեստանոցներու եւ այլ հասարակութեանց մէջ։ Երկրորդ, բանուորական աշխատավարձի չարժուն սանդղակի (echelle mobile) կողմնակից հռչակեց ինքզինքը, երրորդ, ընկերային օրէնքներու հանդէպ բացարձակապէս թշնամական դիրք չբռնեց եւ մինչ այդ կրօնական վիճակի մէջ։

Սակայն իր ալեքներն արձակեց Արհեստ. Միութեան դէմ, որ կը պատակաէ «քրիստոնեայ ցեղակից եղբայրները եւ կաթոլիկ արհեստ. միութիւնները»։

Դէմ արտայայտուեցաւ նաեւ համայնավար կուսակցութեան գործակցութեան առաջարկին։

Սակայն հոս անհրաժեշտ կերպով պէտք է կանգ առնենք հրապարակուած փաստերու վրայ, ցոյց տալու համար անոնց պահանջներն ու առաջարկները։

Ֆրանսայի համայնավար կուսակցութիւնը կարտինալ Լիէնաէին ուղղուած նամակով մը կը բացատրէր այն գաղափարական հիմքերը, որ զիրենք կը միացնեն «կաթոլիկ եղբայրներ»ուն։

Մ. Թորէզի ստորագրութիւնը կրող այդ նամակը կ'ըսէր.

— «... Կաթոլիկութիւնն ու համայնավարութիւնը գաղափարական չփման ընդհանուր կէտեր չատ ունին։ Մենք ալ կողմնակից ենք, կ'ըսեն համայնավարները, որ ընկերային այնպիսի կարգեր հաստատուին, ուր Աւետարանի խօսքին համաձայն «ամէն մարդ իր ճակտի քրտինքով չհի իր հացը»։ Մեր նչանաբանն է.— Ով որ չաշխատիր՝ չուտեր։ Կը ժխտենք տնտեսական ապատակաութիւնը, որ պատճառ կը դառնայ դրամատիրական անարդար կարգերու եւ զասակարգային կռուի։ Մի մոռնաք, որ դասակարգային կռիւը ընչազուրկներու ծնունդը չէ, այլ դրամատիրութեան։ Ահա ձեզի օրինակ Խորհրդային Հռուսաստանը, ուր անհատական, ընկերային եւ կրօնական ազատութիւններ կան։ Մեր վէճը Աստուծոյ գոյութեան չուրջ չէ, այլ ժողովուրդի նիւթական երջանկութեան։ Հին լէների եւ Մուսոլինիի խաչակրութեանց դէմ երկուքս ալ պէտք է ցցունք եւ այժմէն հաշտութեան լուրջ եղերք փնտռենք»։

Որեւէ մեկնութեան պէտք չունին այս խօսքերը։ Թող կարտինալ Լիէնաէրը պատասխանէ կաթոլիկ նրբամտութեամբ.

— «Անաստուած նիւթապաշտութիւնը, որ պատմութեան մէջ չատոնց գոյութիւն ունէր, ընդունուած է մարքսեան վարդապետութեան կողմէ։ Եւ այդ հիմնական սխալ մըն է եղած։ Ճիշդ է որ դուք ժողովուրդի նիւթական բարօրութեան եւ խաղաղութեան համար կ'աշխատիք, բայց ի գործ կը դնէք այնպիսի միջոցներ, որ մենք չենք կրնար իւրացնել։ Դուք դէմ էք սեփականատիրութեան, դէմ էք անհատական ազատութեան եւ կրօնքի։ Մարդու աշխատանքի իրաւունքն ալ կը բացատրէք ձեր հասկացած ձեւով»։

Բայց կայ դեռ աւելին։

Մ. Թորէզ կը պատասխանէ նոյն կարտինալին խիստ վաղաքչական ոճով.

— « Արդեօք պէտք կա՞յ քրիստոնէութեան եւ մարքսականութեան անհաշտելի հակադրութեան մասին խօսելու, աշխատաւորութեան պատակտումը խորացնելու եւ զանոնք անպօտութեան եւ թշուառութեան մատնելու։ Մեզի համար, իրրեւ հաւատարիմ աշակերտները Մարքսի եւ Լէնինի, կ'ուզենք եղբայրներ ճանչնալ անոնք որ կը տանջուին։ Համայնավարներն ու կաթոլիկները, — ամէնքն ալ աշխատաւորներ — պէտք է տնտեսական գետնի վրայ գործակցին իրարու, առօրեայ հացի ապահովութեան համար։ Մենք դէմ չենք կաթոլիկ Արհեստ. Միութեան հետ գործակցութեան։ Կաթոլիկները մեզի պէս չահագրգռուած են ֆաշականութեան սպառնալիքին ենթարկուած ազատութիւնները եւ միջազգային խաղաղութիւնը պաշտպանելու։ Հիթլէրականութեան դէմ մղուած պայքարը որքան մեզ նոյնքան եւ ձեզ կը չահագրգռէ, որովհետեւ խորութիւն չի դներ քրիստոնեայի եւ անաստուածի, կաթոլիկի եւ համայնավարի միջեւ։ Մենք չենք ուզեր որ յիստերիական չարժումը աշխատաւորութիւնը իրարու դէմ ծառացնէ կրօնական հասկացողութեանց համար։ Մենք ձեռք կը մեկնենք ձեզի, որովհետեւ դուք ալ կը պայքարիք նոյն իրաւունքներուն համար, ինչ որ ժողովրդական ճակատի երեք մեծ կուսակցութիւնները »։

Այս փոխատացութիւնը չվերջացած, իսկոյն վէճին կը խառնուի կարտինալ Վէրտիէն եւ կը բացագանչէ.

— « Ի՞նչ կ'ուզէք մեզմէ. գործակցութի՞ւն։ Ձեր վարդապետութիւնը մերինին պէս չէ։ Մեր գործը հոգեւոր է, մինչդեռ ձեր գաւանանքը նիւթապաշտութիւն է։ Միթէ՞ կարելի է գործակցիլ ձեզի հետ։ Մենք կ'ուզենք միխիթարել անոնք որ կը տանջուին։ Կ'ուզենք օգնել բանուորին, որ իր իրաւունքը պահանջէ։ Կ'ուզենք պատրաստել վաղուան արդարութիւնն ու դիմութիւնը, համերաշխութիւնն ու միութիւնը։ Եթէ ձեռք կը մեկնէք այս նպատակներով, եկեղեցին կրնայ ձեզի երջանկութեան ուղիներ ցոյց տալ »։

Պապն ալ անտարբեր չէ այդ վէճին։

— « Մենք կ'ուզենք օգնել բոլոր անոնց որ թշուառութեան մէջ են, բայց մեզմէ պէտք չէ պահանջուի ամենադոյդ զիջողութիւն արքայութեան ճշմարտութեանց որ կը կազմեն հիմնաքարը ամէն տեսակ դիմութեան եւ իրաւունքի »։

Վերջին խօսքը տանք Լիոնի կարտինալ Թերլիէի, որ յատկանչական ձեւով մը կ'ըսէ. «Բոնել երկարած ձեռքը եւ քաշել դէպի ճշմարտութիւն»։

Ինչպէս կը տեսնէք, երկու կողմէն ալ, բանակցութիւնները կը վարուին խիստ ճարտար կերպով։ Բայց հակառակ ատոր, երկու ուժերու զործակցութիւնը չի յաջողիր, առայժմ։

Ի զուր չէ որ ընկերվարական զանգուածները ժողովրդական երդի վերածած, հեգնանքով կ'երգեն Մ. Թորէզի անունը։

ՕԳՏՈՒԻՆՔ ՄԵՐ ԱՐՁԱԿՈՒՐԴԷՆ

Անգամ մըն ալ կը դիմեմ ձեզի, անծանօթ այլ սիրելի ընկերներ, իմ ընկեր ուսանող եւ ուսանողուհիներ, իմ դժբախտ եղբայրներ ու քոյրեր, ձեզի վերջապէս, ժրաջան երիտասարդներ,

Անգամ մըն ալ լրացուցինք դժուարին չրջանը ուսանողութեան ինը ամիսներու, որմէ ամէն տարի արձակուրդները կը բաժնեն մեզ։ Դպրոցի դուռը ուրկէ յամախդժկամակութեամբ կ'անցնէինք, գոցուեցաւ վերջապէս՝ մօտաւորապէս երեք ամսուան համար։ Սիրալիր ձայնը մեր մայրերուն ալիտի չզայ խանդարելու այլեւս առաւան ժամերու մեր այս քունը, գուներուորած հազար ու մէկ զարմանահրաչ երազներով եւ հինգշաբթի ու կիրակի օրերը կանուխ պառկելու ալարտադրանքը պիտի չզան այլեւս... բայց աւա՛ղ մեր դրքերն ու տետրակներն ալ պիտի պիտի ենթարկուին այս ընթացքին։ Մօտ տասնէն մինչեւ պիտի պատչ զանոնք, մինչեւ այն օրը, ուր ժամանակ պիտի չունենանք կատարելու ուսուցիչին մեզի յանձնած պարտականութիւնները։ Այն դարմանելի է այս, չատեր եղան, աւելի պարտաճանաչ քան ես, որ փորձեցին դարմանել զայն։ Սակայն քանիննե՞ր գտնուեցան մեզմէ որ արդէն օգտակար դարձնէին այս երեք ամիսներու ազատութիւնը եւ անկախութիւնը։ Քանիննե՞ր հետեւեցան օգտուելու գործնականապէս իրենց պարապոյ ժամերէն։ Անոնց է որ նախ կը դիմեմ մանաւանդ ալ եւ կը մաղթեմ որ անոնք զգան ազնիւ բաղձանքը, հետեւելու լաւ օրինակի մը։

Կան որ ստացած են արդէն վարձատրութիւնը իրենց յարատեւ ճիգերուն, ուրիշներ ընդհակառակն իրենց կամքին անկախ չունեցան այդ երջանկութիւնը։ Այս բնական էր արդէն. բայց այս բոլորը չեն կրնար արդարացնել մեզ։

Մեր ապագան, նոյնիսկ մեր կեանքը չեն կապուած սեմսօրէն մեր հայրենիքի կացութեան։ Ուրիչ խօսքով պէտք չէ՞ր ստանալ առաջ տիեզերական կրթութեան վկայականը, ձեռք բերել ամենակարեւորը, հայրենասիրական կրթութեան վկայականը։ Սիրելի հայրենակիցներ, մոռցէք վայրկեան մը հարցին երկրորդական կողմը եւ մտածեցէք հաւաքական կողմը, ս ղգային կողմը։ Այն ատեն դուք պիտի տեսնէք թէ որքան եւ էք մնացեր մեր հայրենիքի ճանաչողութեան ճամբուն վրայ։ Այս խորհրդակցութենէն վերջ, ես չեմ տարակուսիր որ դէպի լաւը չզործածէք ձեր երեք ամսուան արձակուրդը։

Հայրենասիրութիւնը պայմանն է ժողովուրդի մը գոյութեան. առաջին դպրեւականը անոր փրկութեան, գըլխաւոր տարրը անոր մեծութեան եւ ուժին։ Չի բաւեր ըլլալ հայրենասէր, պէտք է դիտնալ թէ ի՞նչու եւ ի՞նչպէս։ Այն ատեն այս զգացումին կատարեալ ճանաչողութեամբ, հայրենասիրութիւնը կը դառնայ բարոյական ուժ մը, զոր պէտք է ընդարձակել մեր մէջ։ Այս եւս կարեւոր է այնքան, որքան ընդարձակումը նիւթական ուժին։

Հայրենիքի սէրը, նախ ծաւալումի ենթակայ զգացում մըն է։

Կան որ կ'ըսեն թէ հայրենիքի սէրը չտեսուցուիր։ Ինչո՞ւ համար։ Քանի որ հայրենասիրութիւնը զգացում մըն է։ Ինչո՞ւ համար մարդու բոլոր զգացումներուն պէս պիտի չծաւալի ան կրթութեամբ։ Արդեօ՞ք չեն ուսուցաներ փոքրիկներուն ընտանեկան սէրը։ Անտարակոյս, փոքրիկը կը զգայ թէ պէտք է սիրել ծնողքը եւ հարեւանները։ Ան դիտէ նաեւ թէ արգիլուած չարութիւնը, բայց այս ամէնը դիտէ չատ քիչ, աւելի ճիշտը՝ բնազդով կը զգայ թէ իրաւունքով։ Բայց զգացուցէք պզտիկին իրաւունքները, որոնց մասին պարտաւոր է սիրել իր ծնողքին։ Ցիչեցէք անոր բոլոր զոհողութիւնները որ կը պարտադրուին ապահովել իր գոյութիւնը։ Պզտիկը պիտի սիրէ այն ատեն իր ծնողքը պարտաճանաչ զորովով, աւելի ծանր եւ աւելի ուժեղ։ Նոյնիսկ բարոյական ուսուցումը պիտի ընդլայնէ իր սրտին մէջ լաւ սէրը եւ հարեւան սէրը։ Ինչո՞ւ համար ուրեմն պիտի չտրուէր պզտիկին հայրենասիրութեան կրթութիւնը, ինչպէս կը տրուի անոր բարոյական կրթութիւնը։ Ինչո՞ւ համար հայրենիքի այս բնազդական սէրը, զոր բնութիւնը կոկոնի մը պէս զետեղած է բոլոր մարդոց սրտին մէջ, պիտի չկրնար փթթիլ մշակութով մը, ամէն օր։ Կրնա՞ք բաղդատել միամիտի մը հայրենասիրութիւնը մշակուած մարդուն հայրենասիրութեան հետ։ Որոշ է որ հասունցած զորովը կը գերազանցէ բնազդական, անմշակ զորովը։ Ինչո՞ւ համար ուրեմն այս տարբերութիւնը, եթէ ան կրթութեան խնդիր չէ։

Տարակոյս չկայ որ Ֆրանսայի մէջ մանաւանդ դասընթացք չեն յատկացներ հայրենասիրութեան, ինչպէս կ'ընեն քերականութեան եւ թուաբանութեան համար։ Բայց հայրենիքի սէրը կը զարգանայ մանուկներու չրջանակին մէջ անուղղակի ցուցմունքներով պիտողութիւններով եւ դասական ծրագրի որոշ կէտերու յարմար ուսուցումով։ Այսպէս, ո՞ր ուսուցիչները աւելի աղուս են պատրաստելու համար փոքրամբ հայրենասիրական զգացումներուն, քան պատմութիւնը եւ աշխարհագրութիւնը։ Աշխարհագրութիւնը մեզի ճանչցնել կուտայ հայրենիքը նիւթականօրէն, իր պատմական սահմանները, լեռները, գետերը եւ հովիտները։ Իսկ պատմութիւնը պատմութիւնն է մեր երկրին, դարերու ընթացքին։ Այսպէս պատմութիւնը պիտի ըլլայ ուսում մը՝ կենդանի եւ չարունակական, դաս մը որմէ երիտասարդութիւնը պիտի կրնայ ապագայի դասեր առնել։

Ահաւասիկ թէ ինչու ձեզմէ կը խնդրեմ, սիրելի հայրենակիցներ, համախմբուիլ՝ լեցնելու համար այս պարապը, որ օտարական կը նկատուի հայրենասիրական զգացումներու ճանաչողութեան համար։ Մտածեցէք որ ձեր մէջէն, չատեր անտեղեակ են ձեր ժողովուրդի պատմութեան։ Մտածեցէք որ երկար տարիներու ընթացքին ուղք ձեզ լքած էք, ժամանակի պակասէն, անհոգութեան կամ անգիտակցութեան պատճառաւ, մտածելու սեր մայր հայրենիքի մասին։ Ահաւասիկ եկած է ժամանակը, ուր Ֆրանսական միջավայրի մտահոգութենէն ազատ, բանաք գիրք մը, ուր յուպիչ էջեր ձեզի կը տեղեկացնեն այս լեզուն հպարտացուցիչ ... Գիրք մը հրդուն համաչ եւ փառասէր, որուն մակդրութիւնը ըլլայ հայերէն — «Պատմութիւն»... Գիրք մը վերջապէս, ուր մեր բանաստեղծները եւ պատմագիրները երգած ըլլան մեր հրաչապատում լեզուն։

Առիթ մը ահաւասիկ պատասխանելու ձեր հայրենիքի կոչին... Ըսէք ուրեմն — «ցտեսութիւն» ժամանակի մը համար ձեր Ֆրանսական յարաբերութիւններուն, եւ դարձէք դէպի ձեր հայրենիքը որ միշտ ձեր կողքին է, եւ պտոյտէք անոր ցնծութեամբ.— « մայր հայրենիք, ահաւասիկ»։

Լ. Գեւոնդեան

ԱՐԺԷՔԱՒՈՐ ԳՈՐԾ ՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

«Հայրենիք»ի մէջ կը կարդանք.—

Լիւնոյի համալսարանը վերջերս հրատարակած է մեր հայրենակից եւ աշխատակից Ա. Սարգիսեանի անդրիւքէն մէկ խիստ չահեկան ուսումնասիրութիւնը « Հայկական հարցի պատմութիւնը մինչեւ **1885** », (History of the Armenian Question to 1885) վերնագրով։

Մեծ համոյքով պիտի արձանագրենք, որ այս դիրքը ծայր աստիճան խղճամիտ աշխատութիւն մըն է։ Հեղինակը զրեթէ սպառիչ կերպով օգտագործած է թէ՛ օտար եւ թէ՛ հայ ընդարձակ ազբիւրները եւ յաջողած է իր նիւթը ներկայացնել եւ լուսաբանել դիտնականի մը համուեւեմտութեամբ, լրջութեամբ ու անկողմնակալ տարողականութեամբ։ Այնպէս որ, ով կուզէ ճշդրիտ եւ յստակ գաղափար մը կազմել Հայկական Հարցի նախաձեռնական չրջանի պատմութեան մասին, հարկ թէ կարենայ ունենալ աւելի լաւ միջոց մը, քան այս խնամուած արժէքաւոր գիրքը։

Կասկած չունինք, որ այս աշխատութիւնը մեծապէս հետաքրքրական ու հրահանգիչ պիտի ըլլայ ոչ միայն օտար, այլեւ մինչեւ իսկ հայ ընթերցողներուն համար։

Ճիշտ է, թէ հեղինակը նոր բաներ չբսեր, բայց այն, ինչ որ կ'ըսէ հրատարակութեամբ ու բարեխղճութեամբ հաւաքած ու ներկայացուցած պատմական չախչախիչ փաստերու հիման վրայ, այնքան պերճախօս է, որ կը խօսի ու կը տպաւորէ նորութեան մը պէս։

Այս գիրքը կարդացողը, որքան ալ նախապաշարուած ըլլայ, չի կրնար չկարենալ հետեւեալ կարեւոր եզրակացութիւններուն, այն է՝

ա) Որ Հայկական Հարցը ծագած է առնուազն 50 տարի աւելի ուշ, քան պէտք է ծագէր։

բ) Որ հայ ժողովուրդը, փոխանակ օգտուելու իր բախտակից Պալքանեան ազգերու ազատագրական պայքարէն եւ միաժամանակ ձեռնարկելու իր վիճակի բարելաւման անոնց կիրարկած ազդու միջոցներով, աւելի քան 50 տարի մնացած է գրեթէ անշարժ կամ զոհացած է ազգրատներով միայն։

գ) Որ Հայկական Հարցը միջազգային դիւանագիտութեան առջեւ առաջին ձեւակերպողներն ու պաշտպանները եղած են ոչ-յեղափոխականները, այլ միանգամայն օրինապահ ու բարեպաշտ մարդիկ, հոգեւորականներ եւ անոնց յարող անձեր։

դ) Որ Հայկական Հարցը միջազգային դիւանագիտութեան սեղանին վրայ դրուելէ յետոյ ալ, հայ ժողովուրդը պէտք չէ զգացած դիմելու յեղափոխական միջոցներու հայկական պահանջներուն ուժ տալու համար։

ե) Որ, ուրեմն, կատարեալապէս սխալ է թշնամիներու այն կարծիքը, թէ եթէ հայ յեղափոխականները չէին, ոչ Հայկական Հարց կ'ըլլար, ոչ եւրոպական դիւանագիտութեան միջամտութիւն եւ ոչ ալ ատոր հետեւանքն եղող հայկական ջարդերը։

ԿԱՐԴԱՑՂԻ ՏԱՐԱԿԾՈՒԹԻՒՆ

« ԵԱՌԱՋ »Ի

— Ինչո՞ւ անգթօրէն կը ծեծես խեղճ շնիկը։

—Անգլիացին կենդանիներու պաշտպան ընկերութեան տոմսակս պատռեր է։

** Մուրացիկը.— Ինձի հին կօշիկ մը կրնա՞ք տալ։

Պարոնը.— Բայց հագածդ բոլորովին նոր է։

Մուրացիկը.— Ճիշդ այդ է որ ծրծլս կ'աւրէ։

ՄԻՄԱՂ

— Ինչո՞ւ համար ուրիշներուն կը խրատես որ ուտելէ առաջ ձեռքերնին լուան, երբ դուն ինքդ երբեք չես լուար։

— Որովհետեւ ուրիշներուն ձեռքերը չեն կրնար այնքան կեղտոտ ըլլալ որքան իմս։

— Ինչո՞ւ համար ամէն անգամ որ ես կը խօսիմ, դուն կը հեռանաս սենեակէն։

— Որովհետեւ ուզեցի որ ես ինքզինքս լսեմ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԿՐՏՉԵԱՆ ՏԱՊԱՐԵԱՆԻ
Ա. ՏԱՊԱՐԵԱՆ, Ա. ՏԱՊԱՐԵԱՆ

յի վերագրել որ եւ է աղտոտ դիտում յափշտակելու ուրիշներու պատկանող տարածութիւնները՝ միայն իր սեփական շահուն համար: Այս հոգատարութիւնը պիտի ըլլար ամերիկեան ժողովուրդին մնայուն օժանդակութիւնը մարդկութեան եւ խաղաղութեան դատին :

Լրիւ խորհրդակցութիւններ կատարելէ վերջ նախագահ Ուիլսընի եւ Պ. Քլէմանսոյի հետ, եւ անոնց կատարեալ հաւանութեամբ, 1919 մայիս 4ին, ես Զորսերու Մորուրդին մէկ նիստին մէջ առաջարկեցի որ Մ. Նահանդներուն յանձնուի հոգատարութիւն մը Հայաստանի ճահանգին (Մեր.— ձիշդ այսպէս է բնագրին մէջ) եւ հոգատարութիւն մըն ալ Պոլիս Բաղտիին, Վոսփորի եւ Տարտանէլի նեղուցներուն, Մարմարայի ծովուն եւ յարակից փոքր տարածութեան մը վրայ :

Նախագահ Ուիլսըն ընդունեց այս առաջարկը, յանուն Միացեալ Նահանգներու, պայմանաւ որ Ծերակոյտին հաւանութեան ենթարկուի: Ան բացորոշապէս հակադրեց Պ. Քլէմանսոյի եւ ինծի թէ ի վիճակի չէ վերջնապէս յայտարարելու թէ Մ. Նահանդները պիտի ընդունին առաջարկը: Դաղափարը նորութիւն մըն էր: Նախագահը արդէն չօշափած էր իր յայտնի աջակիցներուն միտքը եւ հաստատած էր որ անոնք նպաստաւոր են: Դժբախտաբար միջոցներ ձեռք չէր առած մօտենալու հանրապետական վարիչ դիւանադէտներուն, ոչ իսկ անոնց որոնք անկեղծօրէն կը համակրէին իր քաղաքականութեան՝ Ազգերու Դաշնակցութեան մասին:

Ամերիկա վերադառնալով, նախագահը ժամանակ չկորսնցուց հանրային կարծիքը սորճելու Պոլսոյ եւ Հայաստանի ծրագրեալ հոգատարութեանց մասին: Ծրագիրը նախ ընդունուեցաւ պզտ սարսուռով մը, եւ նախագահը չկրցաւ կեդրոնանալ քարոզչական պայքարի մը վրայ, լուսաբանելու համար ամերիկեան կարծիքը, որովհետեւ Ազգերու Դաշնակցութեան ուխտի մասին բացուած պայքարը չուտով կլանեց իր բոլոր սպառած ուժերը: Նախագահը կուռեցաւ իր պաշտպանած դատին արժանի քաջութեամբ եւ եռանդով: Բայց իր առջեւ կը ցցուէին ահարկու դժուարութիւններ, որոնց մէկը այն էր որ Ծերակոյտը ունէր հանրապետական մեծամասնութիւն մը, խորթացած եւ դառնացած՝ 1918ի իր ընտրական սխալէն: Երկրորդը իր գործելու խստակրօն մեթոտն էր: Երրորդը՝ իր անկար վիճակը (անգալուծութիւն ֆիզիքական եւ մտային) :

Ի՞նչ եամակներ փոխանակած էին Թրանսպի եւ Աճգլիոյ վարչապետներ

Քաղաքական շրջանակներու մէջ մեծ կարեւորութիւն կուտան Պ. Զէյմսպրլէնի եւ Պ. Տալատիէի միջեւ փոխանակուած անձնական նամակներուն, որոնց բովանդակութիւնը մինչեւ հիմա գաղտնի կը պահուի :

Անգլիոյ երեսփ. ժողովին մէջ, աշխատաւորական մը հարցումներ ուղղեց այս մասին: Վարչապետը պատասխանեց թէ նամակները անձնական են եւ երբեք խնդիր չէ եղած գանոնք հրատարակելու: Յետոյ աւելցուց.— «Սակայն կրնամ յայտարարել թէ նամակներու այս փոխանակութիւնը անգամ մը եւս հաստատեց երկու կառավարութեանց միջեւ տիրող սերտ ներդաշնակութիւնը ընդհանուր հարցերու մասին »:

« Տէյլի Թէլէկրաֆ»ի դիւանագիտական բաժնին խմբագիրը կը գրէ այս առթիւ.— Նամակներու փոխանակութիւնը տեղի ունեցած է տասը օր առաջ, բայց գաղտնի պահուած է: Պ. Տալատիէի նամակը կնքուած յանձնուեցաւ Պ. Զէյմսպրլէնի: Անգլիոյ վարչապետին պատասխանն ալ նոյն ձեւով յանձնուեցաւ Պ. Տալատիէի, Փարիզի անգլիական դեսպանին միջոցաւ: Այնպէս որ, նամակներուն բովանդակութեան ծանօթացան միայն երկու վարչապետները եւ անոնց անմիջական գործակիցները: Պ. Տալատիէի յայտնած բաղձանքին վրայ էր որ նամակները գաղտնի պահուեցան, բայց կարելի է գաղափար մը տալ անոնց բովանդակութեան մասին: Ես կը կարծեմ թէ Պ. Տալատիէ լրջօրէն մտատանջուած էր արեւմտեան Միջերկրականի դէպքերու ընթացքէն: Այս անձկութիւնը կը ծանրանար սա իրողութեամբ որ երկու ամիսէ ի վեր ընդհատուած են ֆրանքեւիտալական խօսակցութիւնները: Յետոյ, Պիրէնեան սահմանագլուխին փակումը բան չէ փոխած Իտալիոյ ընթացքէն: Ընդհակառակն, Ֆրանսա կը նկատէ որ Իտալիա կը բարմադատակէ իր ճիգերը, փութացնելու համար զօր. Ֆրանքոյի յաղթանակը: Փարիզի մէջ այն տպաւորութիւնն ունին թէ Սպանիան կրնայ մեկնակէտ ծառայել Ֆրանսայի դէմ ուղղուած յարձակումի մը, եթէ յանկարծ վատթարանան ֆրանկոֆեւգերման յարաբերութիւնները: Եւ կը վախնան թէ իտալեւգերման քաղաքականութիւնը կը ձգտի Մեծն Բրիտանիան ալ սիրաշահիլ ի նպաստ զօր. Ֆրանքոյի եւ Ֆրանսան հեռացնել Անգլիայէն :

Նկատի ունենալով անգլեւիտալական համաձայնութեան գործադրութեան յապաղումը եւ ուրիշ պարագաներ, Պ. Տալատիէ հարկ դատած է Պ. Զէյմսպրլէնի ուշադրութեան յանձնել անգլեւֆրանսական սերտ գործակցութեան անհրաժեշտութիւնը: Յետոյ, Անգլիոյ վարչապետին ուշադրութիւնը հրաւիրած է Գերմանիայէն քաղուած տեղեկութիւններ՝ «Գերմանիոյ զինուորական պատրաստութեանց մասին»: Լոնտոնի մէջ, ուր նոյնպէս տեղեկութիւններ քաղուած էին այդ մասին, տրամադիր չեն այնքան վրդովիչ եզրակացութիւններ հանելու որքան Փարիզի մէջ :

Կը կարծուի թէ Պ. Զէյմսպրլէն պատասխանած է Պ. Տալատիէ թէ ճիշդ իրեն պէս կը մտածէ այս հարցերու մասին: Անգլիոյ վարչապետին նամակը, որ չատ լաւ խմբագրուած է եւ լայնօրէն կը չօշափէ բոլոր խնդիրները, մեծ գոհունակութիւն պատճառած է Փարիզի մէջ: Երկու մայրաքաղաքներուն մէջ ալ համաձայն են ամենամեծ արթնութիւն պահելու Չեխոսլովաքիոյ հարցին հանդէպ եւ Ֆրանսա հաւաստիք ստացած է թէ Մեծն Բրիտանիա նուազ կարեւորութիւն չընծայեր ֆրանքեւիտալական համաձայնութեան մը, որքան Անգլիոյ եւ Իտալիոյ միջեւ կնքուած համաձայնութեան:

*** Անգլիոյ թագաւորին կ'ընկերանայ արտաքին նախարարը, լորտ Հալիֆէքս, որ չատ կարեւոր խորհրդակցութիւններ պիտի ունենայ Ֆրանսայի արտաքին նախարարին հետ: Թէ Փարիզի եւ թէ Լոնտոնի մէջ անհրաժեշտ կը դտնեն չեխական տագնապին արագ լուծումը, ինչպէս եւ ֆրանքեւիտալական բանակցութեանց վերսկսումը :

ՋԱՆԱՋԱՆ ԼՈՒՐԵՐՔԱՆԻ ՍԸ ՏՈՂՈՎ

ՀՈՒՆԳԱՐԻՈՅ վարչապետը եւ արտաքին նախարարը Հռոմ հասնելով, արժանացան ջերմ ընդունելութեան մը: Մուսոլինի անձամբ կայարան գացած էր, դիմաւորելու համար հիւրերը, որոնց հետ սիրալիր տեսակցութիւններ ունեցաւ: Իրիկունը ճաշ մը տուաւ: Պ. Մուսոլինի իր բաժակաճառին մէջ փառաբանեց Իտալիոյ եւ Հունգարիոյ բարեկամութիւնը եւ գործակցութիւնը եւ Հռոմ - Պերլին առանցքին արժէքը: Հունգարիոյ վարչապետն ալ պատասխանեց նոյնքան խանդավառ հաւատաքներով :

ՍՊԱՆԻՈՅ քաղաքացիական պատերազմին երկամեակին առթիւ, զօր. Ֆրանքօ պատգամ մը ուղղելով ժողովուրդին, հպարտութեան սպանութեանց պատասխանատու կը հռչակէ բոլշեւիկները: Այս առթիւ կ'ըսէ թէ աւելի քան 70.000 հոգի սպանուած են Մատրիտի մէջ, 20.000 հոգի Վալենսիայի մէջ, 54.000 հոգի Պարսելոնայի մէջ եւն.:— Հանրապետական Սպանիոյ վարչապետն ալ նոյն առթիւ կը յայտարարէ թէ դիմադրութիւնը պիտի չարունակի նոյն ուժգնութեամբ , յանուն ազատութեան եւ ժողովրդապետութեան :

ԱՄԵՐԻԿԱՅԻ օդաչու մը, Տըկլէս Քորիկըն, որ միայն օդանաւ մը նստած եւ ինքն իր գլխուն ճամբայ ելած էր, Նիւ Եորքէն Տբլլին (Իրլանտա) հասաւ երկուշաբթի կէս օրին: Օդաչուն Ատլանտեանը կտրած կ'ըլլայ 28 ժամ 13 վայրկեանէն, ժամը 177 քիլոմեթր արագութեամբ: Ամերիկացիները խենդի տեղ դրած էին այս մարդը :

Հ. Յ. Դ.

Գործադ. մ

ԼԻՈՆԻ ՇՐՋ. կոմիտէն ժողովի կը հրաւիրէ «Մուսա Լեռ», «Գայլ վաիյան» են «Ուիւծ Գեւօ» խումբերու ընկերները այս ուրբաթ երեկոյ ժամը 8.30ին «Զարդարեան» գրադարանին մէջ:

ԼԱ ՄԵԹՈՔԱՅԻ «Խաժակ» խումբի ընդհ. ժողովը՝ այս ուրբաթ, (ցուլիս 22) ժամը 8 30ին սովորական ճաւաքատեղին:

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ՓԱՐԻԶԻ Հ. Յ. Դ. «ԵԳԻՊՏԱՑԻ» ԿՈՄԻՏԷԻ ԿՈՂՄԷ

24 Ցուլիս, Կիրակի առաւօտ ժամը 9էն մինչեւ գիշերուան 11ը

ՌՈՊՆՆՍՈՆԻ GRAND ARBRE, Maison FIQUETի պարտէզին մէջ

ԿԸ ՆԱԽԱԳԱՀԷ ԸՆԿ. ՀՐԱՉՆ-ՄԱՄՈՒԼԵԱՆ

Անձրեւի պարագային պատսպարուած ընդարձակ սրահ

Գեղարուեստական խնամուած բաժին, խմբերգ, մեներգ, արտասանութիւն երիտասարդ ուժերու կողմէ: Հայկական պար ընկերակցութեամբ թառիստ ԳԱԲՐԻԳԻՆի:

Գեղարուեստական բաժինէն յետոյ եւրոպական պար՝ դեկավարութեամբ CARIO CANTI *Նուագախումբին:*

Առատ եւ աժան պիւֆէ: Կարելի է ուտելիքը միասին բերել:

Մուտք 4 ֆրանք:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ.— Մեթրօն փոխել Denfert Rochereau եւ առնել Robinsonի գիծը:

ՓԱՐԻԶԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՍԿԱՈՒՄԲԻ

Տարեշրջանի վերջին ՊԱՐԱՆՑԻԿ ՀԱՒԱՔՈՒՈՒԹԸՔ. տեղի կ'ունենայ յառաջիկայ Շաբաթ, 23 Ցուլիս ժամը 5էն մինչեւ կէս գիշեր, 8 Ռիւ Գոսիւէ: *Մուտք՝ 5 ֆրանք:*

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՒԹ

Նուիրուած ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆի իր մահուան 15ամեակին առթիւ

23 Ցուլիս, Շաբաթ երեկոյ, 8 Ռիւ Ժան Կուժոն:

կազմակերպուած ՀԱՄԱԶԳԱՅԻՆի ՓԱՐԻԶԻ Մասնաճիւղին կողմէ

23 Ցուլիս, Շաբաթ, ժամը ճիշտ 8.30ին

Salle Jean-Goujon, 8, Rue Jean-Goujon.

ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՄԲ Հ. ՍԱՀԱԿ ՏԷՐ ՄՈՎՍԷՍԵԱՆԻ

ՊԻՏԻ ԽՕՍԻՆ Հ. ԶԱՐԴԱՐԵԱՆ ԵՒ Ս. ՎՐԱՑԵԱՆ

Պիտի նուագեն՝ Ֆ. ԱԶԱԶԶԱՐԵԱՆ (Լութակ), ՆԱԶԱՐԵԱՆ (դաշնակ):

Պիտի երգէ՝ Օր. Ա. ԱՌԱՔԵԼԵԱՆ,

Պիտի արտասանեն՝ Ռ. Զարդարեան, Բ. Նիւսկալեան եւ Ս. Զաժալեան:

Մուտք 3 ֆրանք.

ԹԱՏՐՈՆ

կազմակերպուած Ֆ. Հ. Կ. ՔԱՉԻ ԱՆԿԷՆի Մասնաճիւղին կողմէ

Կը բեմադրէ՝ Գ. Ա. ԳԻՒԼԽԱՆԴԱՆԵԱՆ

Ցուլիս 24ին կիրակի, ժամը 3.30ին, Անկէնի լճին դէմ, Cascade du Lach *սրահը:* *Մասնակցութիւն 6 ֆրանք:*

ՑԵՏԱՁԳՈՒԹԻՒՆ Է

Փարիզի Տարօեցիներու հանդէսը յետաձգուած է 31 Ցուլիսին, չխաչաձեւելու համար նախապէս յայտարարուած բսրեւեմ միութեան մը հանդէսը:

ԼՈՑՍ ՏԵՍԱ

ՄԱԳԱՂԱԹՆԵՐ

(Թերթուածներ)

ԱՀԱՐՈՆ ՏԱՏՈՒՐԵԱՆ



Փառատիպ հատոր մը, **300** էջ, Տպուած սակաւաթիւ օրինակներով

Գլուխներ այս հայկական էքզոդագիրէն.—

ՅԱՑԳԱՌԱՂԱՌ
ՍԻՐԸ ՓՈՒՇԷ ՊՍԱԿՈՎ
ՏԵՂԾ ՄԱՐԴԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ
ԳԵՀԵՆԱԿԱՆՔ
ԲԱՆԱՍՏԵՂԾԸ Կ'ԱՍՏՈՒԱԾԱՆԱՑ
ՍԻՐՏՍ ԿԱՐՄԻՐ ՎԱՐԴԵՐՈՎ
ԻՆՔՆԱՀՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ
ԳԻՒՂԻ ՍԻՒՔԵՐ՝ ԵԱՐՈՂ ԵՐԳԵՐ

Գին **40** ֆրանք

Տիմել հեղինակին,
17, Rue Damesme, PARIS

ՅԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Հ. Յ. Դ. Մարսէյլի Օրջ. կոմիտէն բոլոր խումբերու եւ ենթակոմիտէներու կողմէ ցաւակցութիւն կը յայտնէ լրնկեր Խորէն Ալտուեանին, տիկնոջ եւ պարագաներուն, փոքրիկն ՋԱՐԻՒՀի ՈՒԼՈՒՍԵԱՆի դառնապէտ մահուան առթիւ:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Խորին շնորհակալութիւն կը յայտնեմ բոլոր անոնց, որոնք մասնակցեցան ողբացեալ կնոջս՝ *Թիլօր Մարգիսեանի* (ծնեալ Խաչատուրեան) յուղարկաւորութեան, մասնաւորապէս Ջէնկիլէրցիներուն եւ մեծնոր Գիւղի Սիւքերներուն եւ Եարոզ Երգեր

ՍԱՐՈՅ ՏԻՒՐԻՒԲԵԱՆ

ԳՕՒՇԱԼՏԵՍՐ

ԽԱՒՈՒՆ ԺՈՂՈՎ

Իսի լէ-Մուլինոյի «Թրիմեան» դպրոցի վարչութիւնը խառն ժողովի կը հրաւիրէ կ. Խաչի, Հ. Ը Դ. «Զաւարեան» կոմիտէի, Հայ կամաւորներու միութեան, Իսիի երիտասարդաց միութեան բոլոր անդամները անխիթր, նաեւ բոլոր ծնողքները եւ դպրոցով հետաքրքրուղները. Շաբաթ (23 Ցուլիս) երեկոյ ժամը 8.30ին դպրոցի սրահին մէջ: Օրակարգ.— *Սրահի ընդարձակման կամ գպրոցի համար հողի մը գնման հարց,*

ՏԱՐՕՆ ՏՈՒՐՈՒԲԵՐԱՆի Հայրենակցական միութեան փարիզի մասնաճիւղի ընդհ. ժողովը այս կիրակի 6 Ավրիլ ու՝ Թ՝ Թ՝ալիի սրճարանին վերնայարկը: Օրակարգ.— Պատգամաւորի ընտրութիւն, վարդավառի հանդէս եւյլն:

Դաշտահանդէս

ԴՊՐՈՑԱՍԷՐԻ ՍԱՆՈՒՑ ՄԻՈՒԹԵԱՆ

24 Ցուլիս, կիրակի, ժամը 3ին, վարժարանին պարտէզը

1, Bld- du Nord, le Raincy

Կը ներկայացուի ԱՆՈՒՇ օփերէթէն պատկերներ ղեկավարութեամբ ԴՄԲԷԹԵԱՆի: LES CHAUSSONS DE LA DUCHESSE ANNE (*օփէրէթ*), *հայկական պարեր, ծաղիկներու պալէ, զանազան պատկերներ, մարզական խաղեր:*

Ճաշ եւ պար մինչեւ մաս. 10: Ճոխ պիւֆէ ժատչելի գիններով (կը խնդրուի միասին ուտելիք չբերել): *Մուտք 5 ֆրանք:*

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ.— Opéraէն կամ Jauréսէն առնել օթոպիս 21A եւ իջնել Raincy-Pavillons, Gare de l'Estէն շոգեկառք՝ direction Gargan, իջնել Raincy-Pavillons:

10 Ցուլիս, կիրակի կէսօրէ վերջ ժամը 2ին, տեղւոյն եկեղեցիի մէջ: կը հրաւիրուի հայ հասարակութիւնը:

Հ. ՋԱՐԴԱՐԵԱՆ

ՎԻՐԱԲՈՑԱ - ԱՏԱՄՆԱԲՈՑԱ

44 Rue Dunkerque (ՄԷԶՐՕ ԿԱՓ ՏԻՒ ՆՈՒ)

Tél. Trudaine 42—69

Կ'ընդունի ամէն օր ժամը 14—20:

Առաւօտները ժամադրութեամբ:

Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆԻ

ԻՐԱՒԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ

28 Avenue Victor Hugo, Vanves (Seine)

(Ափսէ Մէշրլէի հրապարակին վրայ)

Կ'ընդունի երկուշաբթի, Չորեքշաբթի եւ Ուրբաթ օրերը ժամը 10—12 եւ երեկոները 4—7, եւ մասնաւոր ժամադրութեամբ:

ՀԱՅԵՐՈՒ ԺԱՄԱԴՐԱՎԱՃԸՐ

Ձ՛ապրտրան Ֆ Լ Օ Ր Ի Ա

71, Rue Monsieur le Prince, Paris (6)

Մէթրօ՝ Օտէօն եւ Սէն Միշէլ

Ազնիւ եւ ետքնակատ խնամուած կերակուրներ :

Etude de Me BERNARD WAHÉ

(17e ANNÉE)

Licencié en Droit de la Faculté de Paris

Ancien élève de l'École des Hautes Études Sociales

JURISCONSULTE

de

Droit Français et International Privé

Mandataire en Justice

159 rue Lafayette, Paris (Gare du Nord) Tél. NORD 68—02

ԿԸ ՍՏԱՆՁՆԷ ամէն տեսակ դատեր, Փարիզի, գաւառի, գաղութներու եւ արտասահմանի մէջ: Խորհրդակցութիւն իրաւագէտ. ամէն տեսակ խնդիրներու Արկածի դատեր, ամէն լեզուէ թարգմանութիւններ: Նաթերալիզասիօնի օրինական ձեւակերպութիւններ եւ անուններու փոփոխութիւն, ընկերութիւններու կազմութիւն եւ լուծում: Ամէն տեսակ դործերու խմբագրութիւն: Իրաւագիտական քննութեանց եւ մրցումներու պատրաստութիւն: Ճաւարտ. եւ գաստախօսութիւններու խմբագրութիւն: Փողոցային արկածներու ենթարկուած չքաւորներուն կուտայ կանխաւճար առանց տոկոսի եւ միջնորդէքի: Կ'ընդունի ամէն օր ժամը 9—10 եւ 5—7:

Կ'ընդունի նաեւ ժամադրութեամբ:

Alimentation „TRÉVISE"

Իր անմահական «Moka» սուրճով

Café "HAREM„

5 ԱՌ ՀԱՐԻՒՐ ԲԱՑԱՌԻԿ ՉԵՂՉ

Ճոխ սեթևեռնոց արեւելեան եւ արեւմտեան ընտիր ընդեղէններու,

— Որ՝ ձեր արձակուրդի օրերուն իսկ չի մոռնար ձեզ, դոհաչնելով ձեր բոլոր փափաքները, որ ասոդի տակն ալ որ դտնուիք...

ՄԵԹՐԱՒԱՆԱԿ ԵԻ ՓՈՒՐԱՒԱՆԱԿ

Livraison à domicile

Tél. Taitbout 40—63

30, Rue de Trévise Paris (9) Metro Cadet

ԿԱՊՈՑՆԵՐ ՌՈՒՍԱՍՏԱՆ ՂՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ունինք մեծ մթերք անգլիական, իր անուանական եւ չեխոսլովաք կերպասներու՝ այր մարդոց վերարկուի, հագուստի, կանանց ռոպերու եւ հագուստներու համար: Առաջնակարգ կօշիկներ, ճերմակեղէններ եւ նպաստեղէններ: Ունէրվուատ գրի մեքենայ: Ձափաւոր գիներ:

Գիմել՝ American Lloyd, Paris (9). 7 rue Auber

Tél. Opéra 67-77



ՐԱՔԸ ՏԻՒԶ

Ջուտ խաղողէ քաշուած եւ անիսոնով պատրաստուած հայկական օղին է *ՐԱՔԸ ՏԻՒԶ*ը, Ջգուշացէք արուեստական օղիներէ որ ձեր ստամոքսը կ'այրէ եւ գիշերները ջուր կը խմցնէ եւ կը վնասէ ձեր առողջութեան: Խմեցէք միայն *ՐԱՔԸ ՏԻՒԶ*ը որուն անպարտ, կազդուրիչ եւ ախորժաբեր յատկութիւնները ճանաչուած է:

Dalakupeian 8 Rue Suffren

Dépôt: 7 Rue de la Paix, Marseille. Tél. Dragon 70—89.

Le Gérant : H. STEPHAN

17, Rue Damesme, PARIS (13) A. DER (AGOPIAN)

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

(Fondé en 1925) ;-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
17, Rue Damesme, PARIS (13e)

Téléphone : Glacière 15 - 70
Chèque Postal Paris 1678 - 63
(ԵՐԹԵՒԵԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.—

	ՏԱՐԵԿԱՆ	ՎԵՑԱՄՍԵԱՅ	ԵՒԱՄՍԵԱՅ
Թրանսա եւ Գաղութներ	150 ֆրանք	75 ֆրանք	40 ֆր.
Անգլիա եւ Իտալիա	265 ֆրանք	140 ֆրանք	
Ուրիշ երկիրներ	215 ֆրանք	110 ֆրանք	

ՀԻՆԳՇԱԲԹԻ
21
ՅՈՒԼԻՍ
JEUDI
21 JUILLET
1938

ՅԴ ՏԱՐԻ — 14e Année No. 3787

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

«ՔԱՌԱՍՈՒՆԷՆ ՎԵՐ ՄԱՐԴ ՉԵՍ ՏԵՍՆԵՐ»...

Միթէ էջմիածնի ողբերգութեան պարագան չէ որ սուրբ խենդութեան, անբռնացման չքմեղ մը բոլորել կուտայ հակադաշնակցական խառնիճաղանճին :

Այդ ողբերգութենէն առաջ եւ անկէ վերջն ալ պատահած են նոյնքան քամնելի դէպքեր, որոնց հանդէպ միեւնոյն ամպրպի, անասնական դիրքն է բռնած այդ նոյն խառնիճաղանճը :

Այդ երանելիներուն համար երկրորդական, չորրորդական ազիճանի վրայ կ'իյնան Հայաստանի անպարտկելի տաղնապները, ձերբակալութիւններէն, աքսորներէն, գնդակահարութիւններէն եւ գաղտագողի սպանութիւններէն մինչեւ էջմիածնի ողբերգութիւնը : Անոնց համար կարեւորը, բուն հայրենասիրական պարտականութիւնը այդ լուրերուն առուգումը եւ մանաւանդ պատահած դէպքերուն հետեւանքները չեն, այլ, ամէն բանէ առաջ, հարկաշնակցական պայքարին զարգացումն ու գունաւորումը :

Եթէ այդպէս չըլլար, ամէն բանէ առաջ իրենք ապարդիպի նեռուէին, աղէտին ծանրութիւնը չափելու եւ կացութիւնը լուսաբանելու համար, քանի որ իրենք իրենց ընծայած են «Հայաստանի բարեկամներ»ու մենաշնորհը :

Վաղը պիտի կարդաք չարք մը տեղեկութիւններ եւս, այս անդամ բոլորովին տարբեր աղբիւրէ մը, ուղղակի Հայաստանէն : (Ուղեւոր մը, մեկնած՝ յունիսի վերջերը) :

Բանի մը տող միայն՝ այս օրուան համար.

— « Քառասունէն վեր մարդ չէք տեսներ գրեթէ : «Արմատախիլ ոչնչացրել են», «հողմացրիւ արած», ինչպէս կ'ըսեն, կամ բանտարկած, կա՛մ աքսորած եւ կամ տունը փակուելու դատապարտած : Ի զո՞ւր նեղութիւն կը կրէք անուններ հարցնելով : Այնտե՛ղ ալ շատ բան չեն գիտեր, չեն համարձակիր գիտնալ թէ ո՛վ ինչ եղած է, ո՛ւր է, ո՞ղջ է թէ մեռած : Շատերու համար սովորութիւն եղած է ըսել,— «նստած է», հասկցիր՝ բանտարկուած : Նոյնը նաեւ կաթողիկոսի մահուան պարագաներու մասին : Միջանկեալ ըսեմ որ սերունդ մը հասած է արդէն, եւ մարդիկ երբեմ չեն հետաքրքրուիր կաթողիկոսով կամ էջմիածինով ...» :

« Քառասունէն վեր մարդ չես տեսներ»...

Զենք մոռնար «գրեթէ»ն : Բայց այդ մէկ հատիկ բառը բան մը կը պակսեցնէ՞ պատկերին եղերական, քամնելի եւ ըմբոստացուցիչ հանդամանքէն :

Այսքանը, ինքնին, չի՞ հաստատեր թէ անդին կատարուեր են գործեր — «մաքրագործումներ» — որոնք իսկապէս ազէտի մը հանդամանքն ունին :

Եգիպտոսի ռամկավար օրկանը բարեմիտ խմբագրականի մը մէջ կը պարզէ «յուսահատութիւնը արգիլող եւ նոյն չափով սփոփանքի առիթ տուող տեսութիւն մը» : Կարդացէք հիմնական մասը.

— « Խորհրդային Հայաստանի մէջ, ուղղակի եւ գրեթէ կէտ առ կէտ նոյնն է աւերը ինչ որ է ամբողջ Խ· Միութեան մէջ : Ոչ մէկ տարակոյս՝ որ եթէ Մոսկուան իր անմիջական շրջապատին մէջ չխեղդուէր կասկածի մթնոլորտէ մը եւ այն «մաքրագործելու» համար ահաբեկման ամէնէն վայրագ միջոցներուն դիմած չըլլար՝ Երեւանի մէջ դեռ կ'աշխատէին այսօր ե՛ւ Ազասի Խանճեանը ե՛ւ Զարեհնցը ե՛ւ Բակունցը ե՛ւ Մահարին ե՛ւ Թոթովենցը ե՛ւ Ալազանը եւ դեռ ա՛յնճան ուրիշներ որոնց անունին վրայ չարաշուք լռութիւնն է տարածուած հիմա» : (*Արեւ*, 5 յուլիս) :

Ի՛հ, այս ալ մխիթարութիւն մըն է,— «դիտնալ թէ մեզի յատուկ ցաւով մը չէ որ կը տառապինք, ու պիտի բուժուինք անկէ աշխարհի հետ միասին, կը բաւէ որ տոկանք մինչեւ այն ատեն» :

Բայց, այս դիտակցութիւնը կ'արդարացնէ՞ այն խայտառակ վերաբերումը զոր կ'արտայայտեն «Հայաստանասէրները», երբ անճար փորձեր կը կատարուին լուսաբանելու համար «չարաշուք լռութիւնը» :

Փոխելով հարցումին եղանակը, բոլորիս պարտականութիւնը չէ՞ չարժիլ, պրպտել, ստուգել, երեւան հանել ամբողջ իրականութիւնը, քանի որ խնդիրը կապ ունի ոչ թէ այս կամ այն հոսանքին տեսութեան, այլ բուն իսկ հայրենիքի ճակատագրին հետ :

Բարեմիտներ կան որ կը կարծեն թէ սեւ լուրերու հրատարակութիւնը կը պատճառէ դաղութներու սէրը Հայաստանի հանդէպ, կը թուլցնէ հոգեկան կապերը :

Որ եւ է քննութեան չի դիմանար այս մտավախութիւնը :

Նախ որ, սեւ լուրերը ինքնին չեն ծնիր, ոչ ալ կրնան հնարուիլ : Առանց կրակի ծուխ չըլլար, եւ երբ զանազան աղբիւրներէ եւ իրարու եռեւէ նոյն պատմութիւնները կը պատմուին որ եւ է դէպքի մասին, կը նշանակէ թէ լուրջ հիմքեր կան իրար անցնելու :

Երկրորդ, ի՞նչ օգուտ ծածկել ճշմարտութիւնը եւ օրօր կարդալ, երբ գիտես որ բան մը կը փլի անդին...

Օրինակ, զանազան աղբիւրներէ հաղորդեցին թէ հայկական (ինչպէս եւ վրացական եւ թաթարական) զօրամասերը փոխադրուած են Սիպերիա :

Մենք վաւերական տեղեկութիւններ չունինք այս մասին, բայց պիտենք որ բոլոր ազգային զօրամասերը այլուր փոխադրած են, անոնց տեղ դնելով ռուսական զօրք :

Արդ, ի՞նչ կը շահին դաղութները, ծածկելով այս լուրը, ինչպէս ուրիշ այնքան չարաշուք իրողութիւններ :

Ազգով եւ սրտաբաս հայրենասիրութիւնը չի՞ թելադրեր դիտնալ թէ ի՛նչ կ'անցնի կը դառնայ անդին, մեր աչխարհին մէջ, որպէսզի անոր համեմատ ձեւակերպենք մեր պարտականութիւնները, համաձայն պարագաներուն :

Շ.

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ԱՆԳԼԻՈՅ ԹԱԳԱՒՈՐԸ ԵՒ ՖՐԱՆՍԱՅԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԿԸ ՓՍՐՈՒԲԱՆԵՆ ՍԻՐԱԼԻՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ

Ինչպէս հաղորդած էինք երէկ, Անգլիոյ թագաւորն ու թագուհին Փարիզ հասան երեքշաբթի, իրիկուան ժամը 4.50ին : Այս առթիւ կազմակերպուած ընդունելութեան ծրագիրը գործադրուեցաւ դիտական ճշդութեամբ : Կարգապահութիւն ալ անթերի էր : Անհամար բազմութիւն մը խռնուած էր Պուլոնեաի կայարանէն մինչեւ Քէ տ'Օրսէ եւ նախագահական պալատը, մինչեւ կէս դիշեր : 1914էն ի վեր առաջին անգամ էր որ Անգլիոյ վեհապետը պաշտօնական այցելութիւն մը կուտար Ֆրանսայի մայրաքաղաքը, իսկ չորրորդ այցելութիւնն էր այս, Հէնրի Ը.էն ի վեր (ԺԶ· դար) :

Թագաւորն ու թագուհին Քէ տ'Օրսէի մէջ հանդստանալէ վերջ, առաջնորդուեցան նախագահական պալատը, ուր Անգլիոյ թագաւորը Բաղնանաց պատուանշանին մեծ խաչը յանձնեց Ֆրանսայի հանրապետութեան նախագահին, իսկ այս վերջինը էլիզապէթ թագուհիին նուիրեց Պատուոյ լեգէոնի մեծ խաչը : Թագաւորն ալ ունի Պատուոյ լեգէոնի մեծ խաչը, որ Ֆրանսայի ամենաբարձր պատուանշանն է :

Իրիկուան ժամը 8ին փառաւոր սեղան մը սարքուած էր Էլիզէի պալատին մէջ, եւ այս առթիւ չատ սիրալիր բաժակաճառեր փոխանակեցին հանրապետութեան նախագահն ու Անգլիոյ թագաւորը : Երկուքն ալ ջերմապէս փառաբանեցին անգլեւֆրանսական սիրալիր համաձայնութիւնը, իբրեւ ապդակ խաղաղութեան :

Նախագահ Պ· Լըպրէօն չէչտեց իր բաժակաճառին մէջ.

— « Ինձ՝ փոխադարձ յարգանքի երկար աւանդութենէ մը, ամբապնդուած՝ մտածումներու եւ ճիգերու տեւական մերձեցումով մը, նուիրագործուած՝ ամէնէն տաժանելի փորձերով, տոգորուած՝ ազատութեան եւ խաղաղութեան նոյն իտէալով, մեր երկու երկիրները միացնող բարեկամութիւնը իր զարգացման ընթացքին ստացաւ ամրութիւն մը զոր կրնան տալ միայն մարդկային արժէքներու նոյն ըմբռնումը եւ ազգային ու միջազգային կեանքի զանազան հարցերը լայն հասկացողութեամբ դիմագրաւելու նոյն մտահոգութիւնը : Կնքուած՝ ձեր պայծառափայլ մեծ հօր կողմէ, անգլեւֆրանսական համաձայնութիւնը Ն· Վեհափառութիւն Ձորճ Ե.ի փառապանծ իշխանութեան օրով իր արդիւնաւորութեան չափը հաստատեց Մեծ Պատերազմին մոայլ չրջանին : Ցետագային, իր ձեւը փոխուեցաւ, բայց երբեք ի դերեւ չելաւ այն համերաշխութիւնը զոր դարբնած էր կրակին մէջ, երբ հարցը կը վերաբերէր աւելի բարօրութիւն հաստատելու մարդոց միջեւ եւ աւելի ներդաշնակութիւն՝ սիրտերու մէջ : Այն բարոյական խառնակութեան մէջ որուն մատնուած է աչխարհը, նոր պարտաւորութիւններ կ'իյնան մեր երկու ազգերու վրայ, որոնք հաւատարապէս տոգորուած են մարդկային յառաջդիմութեամբ : Խաղաղութեան պահպանումը միջազգային օրէնքի գործադրութեամբ՝ ոչ վարանում կը վերցնէ կատարուելիք պարտականութեան մէջ, ոչ ալ թուլացում՝ ամենօրեայ ճիգին մէջ : Դէպի այդ նպատակը պէտք է ձգտին մեր սերտօրէն միացած դաղութները՝ անխախտ եւ անսասան : Ձեր օգոստափառ ներկայութիւնը Ֆրանսայի մայրաքաղաքին մէջ՝ կը կազմէ ամենաբարձր եւ ամէնէն թանկագին վկայութիւնը այն հաստատակաց կամքին զոր ամէն օր կը զօրացնեն երկու երկիրներուն վստահելից համակրանքը եւ անոր ներկայացուցիչներուն սերտ գործակցութիւնը : Աւելի քան երբեք, երկու ժողովուրդներուն կատարեալ համաձայնութիւնը, որ բեղնաւոր եղած է բոլոր ասպարէզներուն մէջ, կը ներկայանայ իբրեւ կեանքի տարր մը ապահովութեան եւ ներդաշնակութեան, յոգուտ քաղաքակրթութեան եւ խաղաղութեան : Մնաց որ, ոչ մէկ պետութիւն չի կրնար ծուռ նայիլ այդ համաձայնութեան, քանի որ այլամերժ չէ ան եւ չանառներ ուրիշ որ եւ է բարեկամութիւն : Համոզուած եմ թէ Ձեր վեհափառութիւնը եւ իր կառավարութիւնը պիտի չխնայեն, ինչպէս ես ինքս եւ հանրապետութեան կառավարութիւնը, այս կենդանի իրականութեան տալ միշտ աւելի գործօն եւ աւելի բարերար ճառագայթում մը» :*

Անգլիոյ թագաւորը՝ իր կարգին յայտարարեց.

— « Մեզի համար մեծ գոհունակութիւն մըն է որ մեր իչխանութեան հաստատումէն ի վեր մեր առաջին այցելութիւնը արտասահման՝ նուիրեցինք Փարիզի, ազնուական մայրաքաղաքը այս բարեկամ երկրին որուն Մեծն Բրիտանիա կապուած է այնքան յիչատակներով եւ հասարակացդոհողութիւններով : Թագուհին եւ ես խորապէս զգածուած ենք այն ընդունելութենէն զոր այսօր ընծայեցիք մեզի : Հակառակ ափ մը ծովուն որ կը բաժնէ մեզ, մեր երկու երկիրները տեսան որ իրենց ճակատագիրները անվերջ միացած են դարերու ընթացքին, եւ այսօր մեզի համար անկարելի պիտի ըլլար չիչել չրջան մը ուր մեր յարաբերութիւնները աւելի սերտ եղած ըլլային : Անցեալին մէջ, մեր երկու երկիրներուն մեծ մարդիկը երբեմն դանդաղութիւն ցոյց տուին իրարու յառաջդիմութիւնները հասկնալու համար : Այսօր այդպէս չէ պարագան : Երկար եւ սերտ գործակցութիւն մը հաստատեց թէ մենք տոգորուած ենք միեւնոյն իտէալով : Մեր ժողովուրդները միեւնոյն սէրն ունին ժողովրդապետական սկզբունքներու հանդէպ որոնք լաւագոյնս կը պատչաճին իրենց բնական ոգիին եւ մենք միեւնոյն դաւանանքն ունինք անհատական ազատութեան բարիքներու մասին : Մենք հպարտ ենք այս քաղաքական հաւատքով զոր կը բաժնենք ուրիչ մեծ ազգերու հետ : Բայց միեւնոյն ատեն կ'ըմբռնենք թէ այդ հաւատքը իրեն հետ կը բերէ մեծ պատասխանատուութիւններ : Արդ, այն չրջանին մէջ ուր կ'ապրինք, այդ հաւատքը մեզ բոլորիս կը պահանջէ, բարձր աստիճանով մը, քաջութեան եւ յարատեւ ու իմաստուն ուժի մը ազնիւ յատկութիւնները : Միեւնոյն ատեն, ինչպէս ըսիք, պարոն նախագահ, մեր համաձայնութիւնը ոչինչ ունի այլամերժ : Մեր բարեկամութիւնը ուղղուած չէ ուրիչ որեւէ պետութեան դէմ : Ընդհակառակն, մեր երկու կառավարութեանց ջերմ բաղձանքն է միջազգային համաձայնութիւններով դանել լուծում մը այն քաղաքական հարցերուն որ կը սպառնան աչխարհի խաղաղութեան եւ այն տնտեսական դժուարութեանց որ կը խանգարեն մարդկային բարօրութիւնը » :*

**** Երէկ, չորեքչաբթի, թագաւորն ու թագուհին առաջնորդուեցան Փարիզի քաղաքապետարանը, ուր չքեղ ընդունելութիւն մը սարքուած էր : Կէս օրին անգլիական դեսպանատան մէջ ճաչելէ վերջ, այցելեցին Լուվրի թանգարանը, հանրապետութեան նախագահին հետ : Դիշերը չքեղ ներկայացում մը սարքուած էր Օփերային մէջ, ի պատիւ արքայական հիւրերուն :*

ՕՐԸ ՕՐԻՆ

«ԹԱՊԷԼԱ» ԿԸ ՓՆՏՌՆ

— Իմացա՞ք :

— Նոր նամա՞կ եկեր է էջմիածէն :

— Ի՞նչ էջմիածին, լուր չունի՞ս մեր բաղաքին անցուդարձէն :

— Ի՞նչպէս թէ չունիմ : Անգլիոյ թագաւորն ու թագուհին Փարիզ են եկած եւ պիտի մնան մինչեւ ուրբաթ : Ամբողջ բաղաքը տօնի մէջ է :

— Եղբայր, խօսքս ազգային կեանքին մասին է :

— Լաւեցի որ Բարեգործականը սկսեր է շարժիլ, Սանճաքի գործազուրկներուն եւ չքաւորներուն օգնութեան հասնելու համար :

— Այդ ոչինչ : Ես աւելի կարեւոր լուրեր ունիմ :

— Այս ո՛րբան ծամծմեցիր : Պատմէ վերջացուր :

— Ուրեմն չես գիտեր : Երկու շաբաթ առաջ, կարծեմ յուլիս 9ին, Հօկը ժնդովի կը հրաւիրէ Հայր· եւ Վերաշինաց Միութիւնները, անոնց հաղորդելու համար իր վերակազմութիւնը : Այս առթիւ, ընդհ· բարտուղարը կը խոստովանի թէ մէկուկէս տարիէ ի վեր որ եւ է գրութիւն չեն ստացած Հայաստանէն : Եւ հաստատելով ծանօթ «լուծարք»ը, կը յայտնէ թէ Հօկը այստեղ պիտի կոչուի **France - Arménie,** մասնաւորապէս ուժ տալու համար Ֆրանսահայերու հպատակութեան :

— Կամ ցնդեր ես, եւ կամ կը չափազանցես :

— Մտիկ ըրէ ինչ որ կ'ըսեմ : Ցետոյ տեղի կ'ունենայ Հօկի արտակարգ 7րդ սլստգամարտական ժողովը, յուլիս **14, 15, 16** եւ **17**ին, ուր փոխելով ծրագիր - կանոնագիրը, կ'որոշեն այստեղ գործել հետեւեալ անունին տակ.— « Ֆրանսահայ ժողովրդական Միութիւն (Ֆրանսօ-Հայկական բարեկամութեան կոմիտէ) :

— Հիւսիսային Ամերիկայի մէջ ալ ուրիշ անուն մը թխեր են,— «Ամերիկահայ Ցառաջդիմական Միութիւն», որուն կրնան մասնակցիլ մանր առեւտրականները, մտաւորականները, աչխատաւորները, կազմակերպուած կոմունիստները եւ «բրիստոնէական դաւանանքի հաւատացողները, ... Քրիստոսի պատուէրները իրականացնելու համար» : Ուրեմն «թապէլա» կը փընտռեն ամէն կողմ :

— Կը կարծէ՞ք որ յաջողին, այս նոր դիմակով :

— «Ոմն ի նոցանէ», Սահակ Զըրչեան, թեթեւ մը կը բանայ վարագոյրը : Կարդա՛ :

— «Գալիս եմ հրապարակով յայտարարելու, որ ես ոչ մի կապ չեմ պահելու սրանից յետոյ մի որ եւ իցէ մարմնի հետ, որի ղեկավարներն են Քէօսեեանը եւ Նիւ Եորքի Բիկը :

ՀՕԿ - Պէկհի լուծարքից յետոյ Նիւ Եորքի կլիկը մի նոր մարմին է ստեղծում «կուսակցական տոմսակաւորների» ղեկավարութեան տակը՝ ամերիկահայ աչխատաւորութիւնը չահագործելու :

Պիտի աչխատիլ որ այդ չահագործումը սրանից յետոյ տեղի չունենայ :

Ամերիկահայ աչխատաւորութիւնը այնքա՜ն է Քօթաթի սորկութեան լուծը եւ դէն չպրտի «Բանւոր»ի Թութակներին Թափթփուկներին :

Մինչեւ հիմա մենք ենթարկւում էինք մի մասով Մորհրդ· Հայաստանին : Սրանից յետոյ Քէօսեեան քլիկն է ղեկավարելու : Ամօթ է գիտակից մարդկանց՝ ենթարկուել մի այդպիսի ոչնչութեան : Ես հաւատում եմ ամերիկահայ աչխատաւորութեան ուժին եւ կամքին :

« Ամերիկահայ Ցառաջդիմական Միութեան » կեդրոնների մասին կը դրեմ չուտով եւ ցոյց կը տամ թէ ովքեր են նրա ղեկավարները,— այդ Բիալագէօզ կումունիստները, «դէմո - կրատներ»ը եւ եկեղեցու լուրեր հրատարակող խաչագողները : (« Պչակ » 28 *յունիս*) :

— Ես ուրիշ ըսելիքներ ալ ունէի, բայց դուն կ'ամչեցիր : Ցը··· **Վ.Ահէ**

Սանճաքի բնեռութիւններ կը վերսկսին

Անտիոքէն կը հեռագրեն յուլիս **19** թուականով.— Գնդ· Քոլէ, մարզպանին պատուիրակը եւ ձէվատ Աճիքալըն, Թուրքիոյ արտակարգ ներկայացուցիչը, հաւաքական յայտարարութիւն մը հրատարակեցին այսօր, ծանուցանելով թէ Ալէքսանդրէթի չրջանին ընտրական գործողութիւնները պիտի վերսկսին յուլիս 22ին :

Ինչպէս յայտնի է, ընտրական գործողութիւնները ընդհատուեցան յունիս 26ին, Թուրքիոյ բողոքին վրայ եւ Ազգաժողովին յանձնախումբը հարկադրուեցաւ ձեռնթափ ըլլալ : Ընտրութեանց հսկողութիւնը պիտի կատարեալ միասնաբար, Ֆրանսական եւ Թրքական կառավարութեանց կողմէ, որոնք երաչխաւորներն են Սանճաքին միջազգային վարչութեան :

**** Արաբական Դիւանը հետեւեալ տեղեկութիւնները կը հաղորդէ Սանճաքի մասին գոյացած համաձայնութեան առթիւ .*

Ֆրանքեւթուրք համաձայնութիւնը կը չարունակէ զբաղեցնել Ֆրանսական մամուլն ու քաղաքական չրջանակները : Համաձայնութեան դլխաւոր կէտերը հետեւեալներն են .—

1.— *Երբ Սանճաքի նոր կանոնագրութիւնը գործադրուի , Սանճաք գըտնուող 2500 Թուրք զինուորները պիտի հեռանան : Ֆրանսական կառավարութիւնը առաջարկած է որ մինչեւ սեպտեմբեր **15** գործադրուի այդ կանոնագրութիւնը :*

2.— *Թրքական զօրամասերը , որոնք կը դտնուին մեծամասնութեամբ Թրքաբնակ չրջաններու մէջ, ներքին խռովութեանց պարագային կրնան միջամտել միայն այն ատեն երբ այդ տեսակ պահանջ մը ըլլայ Ֆրանսական իչխանութեանց կողմէ :*

3.— *Ֆրանքեւթուրք համաձայնութիւնը պայմանաւորուած է Ֆրանքեւսուբիական համաձայնութեամբ մը, որուն հիմը պիտի կազմէ Ֆրանքեւսուբիական դաչնագրին վաւերացումը : Այդ վաւերացումը հետզհետէ աւելի ստոյգ կը Թուի :*

4.— *Ֆրանսա կ'երաչխաւորէ սուրիական չահերը Սանճաքին մէջ :*

**** Նոյն աղբիւրին համաձայն, Ֆրանսական կառավարութիւնը որոչած է հինգ միլիոն Ֆրանքի վարկ մը բանալ, նոր զօրանոցներ չինելու համար Սանճաքին մէջ :*

**** «Լիվի Պէ» Թերթը կը ղրէ Թէ Սանճաք մտած Թուրք պինուորներէն չատեր հիւանդացած են եւ առաջին առթիւ հիւանդանոց փոխադրուած են 40 հոգի :*

Քրտական ապստամբութիւնը կը ծաւալի

Սուրիոյ էլ Պայրաք Թերթը կը գրէ (**10** յուլիս).—

Թուրքիոյ, Իրանի եւ Իրաքի սահմաններուն վրայ գանուող Քիւրտերը կոչեր ուղղած են այդ չրջանի իրենց ցեղակիցներուն, օգնութիւն փութացնելու համար Քիւրտիստանի մէջ բռնութեան եւ ճնշումներու ներքեւ գտնուող իրենց եղբայրներուն : Իրանի սահմանէն, իսկ Սըմկօ աղայի առաջնորդութեամբ,

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Դ· էջ)

ՍՏԱՄԲՈՒԼԻ ԼԵՐԱԿԱՆԸ

The Enamel of Stamboul

By DENNIS WHEATLEY Գրաց՝ ՏԵՆՆԻՍ ՀՈՒԻԹԼԻ

Trans : J. M. Թարգմ. Ջ. Մ.

Չեր ի չեւ չուտ ուշադրութեան կենց տուած իր մարդու վրայ, որ ամէն անգամ իրեն կը մօտենար։ Ուշադրութեան արդիւնքն էր, որ Ռոզալին ամէն անգամ կը տեսնէր, թէ ինչպէս Ֆիլիպ Ռոմանոս կը մօտենար իրեն։ Ան ալ իր կարգին ուշադրութեամբ կը հետեւէր Ռոզալինի ամէն մէկ շարժումին։ Ռոզալին ամէն անգամ, որ Ֆիլիպ կը մօտենար իրեն, կը զգար, թէ ինչպէս իր սիրտը կը սկսէր ուժգին բաբախել։ Ֆիլիպ ալ, որ ամէն անգամ Ռոզալինի կողքին կը նստէր, կը զգար, թէ ինչպէս իր ներսերը կը դողդողային։ Ռոզալին ամէն անգամ, որ Ֆիլիպ կը մօտենար իրեն, կը զգար, թէ ինչպէս իր սիրտը կը սկսէր ուժգին բաբախել։ Ֆիլիպ ալ, որ ամէն անգամ Ռոզալինի կողքին կը նստէր, կը զգար, թէ ինչպէս իր ներսերը կը դողդողային։

ՓԱՐԻԶԻ ՆԱՄԱԿԻՑ

Մ. ՀԱՅԿԱԶՈՒՆԻ

— ԱՐՁԱԿ —

Ես ամբողջ ժամանակ ինձ ասում էի, որ ինչ-որ բան պիտի պատահի, որ ինչ-որ բան պիտի փոխվի իմ կյանքի ընթացքին մեջ, որ ինչ-որ բան պիտի տեղի ունենա, որ ինչ-որ բան պիտի գա ինձ հանդիպելու։ Ես ինքս ինձ կը խաբեի, կը հավատացնեի, թե ոչինչ չի պատահելու, թե ոչինչ չի փոխվելու, թե ամեն բան պիտի մնա նույնը, ինչպես որ կար։ Ես ինքս ինձ կը համոզեի, թե ոչ մի նոր բան չի կրնար ինձ հանդիպիլ, որովհետև ես ինքս ինձ կը զգայի ծեր, հոգնած, ուժասպառ, անկարող ամեն նոր բանի դիմադրելու, ամեն նոր բանի հանդիպելու։ Ես ինքս ինձ կը զգայի ինչպես մի ծերունի, որ ոչ մի բանի կարիք ունի, որ ոչ մի բան կրնայ ուրախացնել զինք, որ ոչ մի բան կրնայ հետաքրքրել զինք, որ ոչ մի բան կրնայ գրգռել զինք։

Ես ինքս ինձ կը զգայի ինչպես մի ծերունի, որ ոչ մի բանի կարիք ունի, որ ոչ մի բան կրնայ ուրախացնել զինք, որ ոչ մի բան կրնայ հետաքրքրել զինք, որ ոչ մի բան կրնայ գրգռել զինք։

Ես ամբողջ ժամանակ ինձ ասում էի, որ ինչ-որ բան պիտի պատահի, որ ինչ-որ բան պիտի փոխվի իմ կյանքի ընթացքին մեջ, որ ինչ-որ բան պիտի տեղի ունենա, որ ինչ-որ բան պիտի գա ինձ հանդիպելու։ Ես ինքս ինձ կը խաբեի, կը հավատացնեի, թե ոչինչ չի պատահելու, թե ոչինչ չի փոխվելու, թե ամեն բան պիտի մնա նույնը, ինչպես որ կար։ Ես ինքս ինձ կը համոզեի, թե ոչ մի նոր բան չի կրնար ինձ հանդիպիլ, որովհետև ես ինքս ինձ կը զգայի ծեր, հոգնած, ուժասպառ, անկարող ամեն նոր բանի դիմադրելու, ամեն նոր բանի հանդիպելու։

քրտական զինեալ խումբեր մտած են Թրքական սահմանէն ներս: Միեւնոյն ատեն Զիլանի ցեղապետին ղեկավարութեամբ ուրիշ քրտական զինեալ խումբեր յարձակումներ գործած են Թրքական ուժերուն վրայ, մեծ կորուստներու մատնելով զանոնք: Գրաւած են կարեւոր քանակութեամբ զէնքեր :

Քրտական ապստամբախումբեր Սղերդի եւ Մխոխթի շրջաններուն մէջ յարձակած են Թրքական դունդի մը վրայ, սպանած 70 թուրք զինուոր ու գրաւած երկու թնդանօթ եւ քանի մը գնդացիր :

Քիւրտերը համախմբուած են Զիլանի, Թունճալի եւ Մալազկերտի լեռներուն մէջ եւ կը պատրաստուին յարձակումներ գործելու Թրքական զինուորական կէտերու վրայ· այդ կերպով անոնք Թուրքիոյ ուշադրութիւնը Տերսիմէն պիտի փոխադրեն ուրիշ շրջաններու վրայ :

Հասկցուած է որ Թրքական ուժերը, Ուրֆայի շրջաններուն մէջ իրենց ռազմափորձերը լրացնելէ վերջ, մեկնած են դէպի Տերսիմի լեռները: Բայց անոնք կ'ենթարկուին սաստկալի դժուարութեանց եւ յարձակումներու՝ պաշարելու համար Տերսիմը: Թրքական յառաջապահ զինուորները սպանուած են Քիւրտերէն :

Եգիպտոսի վաճառը Թուրքիոյ դէմ

« Ճիւմհուրիյէթ»ի Գահիրէի թղթակիցը դառնօրէն կը գանգատի թէ Եգիպտոսի մեծ թերթերը Թուրքիոյ դէմ դարձած են, Սանճաքի հարցին առթիւ: Քանի մը հատուածներ՝ իր վերջին նամակէն.— *Մինչ այսպէս լաւ յարաբերութեան մը կ'ներթայ Թրքական մեծ դատ մը, միւս կողմէ պարտուելու վրայ ենք բարոյական գետնի վրայ: Ասիկա ալ՝ արաբական աշխարհին մէջ մեզի դէմ կատարուած քարոզութիւնն է :* Այսպէս, բացի քանի մը թերթերէ որոնց ամբողջ զբաղումը ներքին վէճերէ կը բաղկանայ, եղիպտական բոլորմեծթերթերը, գլխաւորութեամբ «Ալ Մօքաթթամ»ի, Հաթայի խնդրին մէջ Սուրիոյ կողմը կը բռնեն :

« Էլ Ահրամ»ի նման կարեւոր օրկան մը, որ հինէն ի վեր ծանօթ է իրրեւ Թուրքերու բարեկամ, մօտաւորապէս 10 օրէ ի վեր կանոնաւորապէս կը զբաղի Հաթայի խնդրով եւ կը չարունակէ ըսել թէ Թուրք զինուորներուն Հաթայ մուտքով՝ այդ հողամասը վերջնապէս պիտի բաժնուի Սուրիային: Վերջին յօդուածին մէջ, այդ թերթին քաղաքական բաժնի խմբագիրը կ'ըսէ որ եթէ Թրքական զինուորներուն քանակը Հաթայի մէջ կարեւոր դեր մը կատարելու չափ ըլլայ, այն ատեն արաբականութեան տեսակէտով պէտք է յոյսը կորսնցնել Հաթայէն: «Այս տեսակ դէպք մը — կը չարունակէ խմբագիրը — լրջօրէն բուռն ազդեցութիւն պիտի գործէ Սուրիոյ եւ արաբ այլ երկիրներու մէջ: Այդ· ժողովին մէջ Րիւշտիւ Արասի արտասանած պերճախօս ճառը չպիտի նուազեցնէ այս ազդեցութիւնը: Այս դէպքով՝ Թուրքիա կը վիրաւորէ արաբական աշխարհին սիրտը »:

« Ալ Մօքաթթամ»ի քաղաքական բաժնի խմբագիր էմին Սայիտն ալ այս նիւթին կ'անդրադառնայ օր ընդ մէջ: Ան ալ զբաղեցաւ Րիւշտիւ Արասի ճառով եւ պնդեց թէ այդ դեղեցիկ խօսքերը վերջ ի վերջոյ խօսք են եւ թէ իրողութիւն է որ Հաթայի նման արաբական արժէքաւոր նահանգ մը կը կորզուի արաբ Սուրիայէն: Տարօրինակը այն է որ ,մեր եգիպտացի պաշտօնակիցը կը պաշտպանէ ոչ միայն Արաբները, այլեւ Հայերը: Յօդուածին մէջ միշտ միասին կը յիշէ արաբ եւ հայ տարրերը եւ յաճախ «ազնիւ» ածականը կուտայ երկուքին ալ: Այս ձեւով , Արաբները պաշտպանած ատեն, Հայերն ալ պաշտպանած կ'ըլլայ :

Հիթլեր ներկայացուցիչ մը կը դրկէ Լոնտոն

Ձիշդ այն պահուն երբ Անգլիոյ թագաւորն ու թագուհին Փարիզի մէջ կը դիմաւորուէին արտակարգ պատիւներով, Լոնտոն հասաւ Հիթլէրի մէկ մտերիմը, հարիւրապետ Վիմման եւ ուղղակի արտաքին նախարարին ներկայացնալով, հաղորդեց Գերմանիոյ Առաջնորդին տեսակէտները միջազգ· հարցերու լուծման մասին:

Տեսակցութեան մանրամասնութիւնները գաղտնի կը պահուին, բայց թերթերը կը գրեն թէ Հիթլէր առաջարկած է վերսկսիլ անգլիւգերման բանակցութիւնները, միջոցներ խորհիլ՝ զինաթշալը կասեցնելու համար եւն. : Այս անգամ ալ Հիթլէր խաղաղասիրական հաւատամքներ կ'ընծայէ չեխական հարցին առթիւ:

Քաղաքական շրջանակներու մէջ խոր տպաւորութիւն գործեց բարեկամեցողութեան այս ցոյցը, որ կը զուգադիպի Անգլիոյ թագաւորին այցելութեան: Կ'ըսուի թէ Գերմանիա կ'ուզէ որ վերսկսին չորս պետութեանց խօսակցութիւնները, գործակցութիւն մը հաստատելու համար (Անգլիա, Ֆրանսա, Գերմանիա, Իտալիա) : Իսկ չեխական հարցի մասին կ'ըսեն թէ Գերմանիա պիտի պահանջէ որ Զեխոսլովաքիոյ կառավարութեան մէջ գտնուին չորս գերման նախարարներ :

Հիթլէրի ներկայացուցիչը իր պաշտօնը լրացնելէ վերջ, Պերլին վերադարձաւ օդանաւով : Անգլիոյ արտաքին նախարարը լայն լուսաբանութիւններ պիտի հաղորդէ այս մասին, Փարիզի մէջ :

ՋԱՆԱՁԱՆ ԼՈՒՐԵՐ ՔԱՆԻՍԸ ՏՈՂԱՎ

ԿԱԶԻՆ ԳԻՆԸ (խորանարդ մեթրը) 1.35 պիտի ըլլայ յուլիս 21էն վերջ, մինչեւ 1939 յունուար 31:


ՈՒՈՎՈՒԹԻՒՆՆԵՐԸ կը չարունակուին Պազեսթինի մէջ: Առջի օր չորս հոգի եւս սպանուեցան , որոնց մէկը անգլիացի պետական պաշտօնեայ մըն է:

ՁԱՓՈՆՑԻՆԵՐԸ ահռելի ոմբակոծութեան մը ենթարկեցին Հանքէու քաղաքը (Զինաստան) : Զոհերուն թիւը հազարը կ'անցնի :

Ա· ՄԻՈՒԹԻՒՆԸ ամրութիւններ կը չինէ Մանչուրիոյ սահմանին վրայ : Ճափոն նորէն պահանջեց որ եա կանչուին Մանչուրիա մտած խորհրդային պինուժերները :

ՀՈՒՆԳԱՐԻՈՑ վարչապետին Հոմ այցելութեան առթիւ, քաղաքական շրջանակներու մէջ կը կարծեն թէ Մուսոլինի կը ջանայ նոր ճակատ մը կազմել, Իտալիոյ, Հունգարիոյ եւ Եուկոսլաւիոյ միջեւ :

Hommes **Dames**



15, Bld. Bonne Nouvelle

Métro: Bonne Nouvelle Tél.: Gut. 93-70

Հ. Յ. Դ.

Գումարտակ

Լիոնի շրջ. կոմիտէն ժողովի կը հրաւիրէ «Մուսա Լեռ», «Գայլ վահան» են «Ալուճ Գեւօ» խումբերու ընկերները այս Ուրբաթ երեկոյ ժամը 8.30ին «Զարդարեան» գրադարանին մէջ:

Լա Սիօթաթի «Թաժակ» խումբի ընդ. ժողովը՝ այս Ուրբաթ, (ցուլիս 22) ժամը 8 30ին սովորական հաւաքատեղին:

Վիէննի կոմիտէն ժողովի կը հրաւիրէ իր շրջանի բոլոր ընկերները ցուլիս 24ի կիրակի կէս օրէ վերջ ժամը 2.30ին «Թաժակ» սրահին մէջ: Բոլոր ընկերներու ներկայութիւնը պարտաւորիչ է:

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ՓԱՐԻԶԻ Հ. Յ. Դ. «ԵԳԻՊՏԱՑԻ» ԿՈՄԻՏԷԻ ԿՈՂՄԷ

24 Ցուլիս, Կիրակի առաւօտ ժամը 9էն մինչեւ գիշերուան 11ը

ՌՈՊԵՆՍՈՆԻ GRAND ARBRE, Maison FIQUET*ի պարտէզին մէջ*

ԿԸ ՆԱԽԱԳԱՀԷ ԸՆԿ. ՀՐԱՉՆԱՑ-ՍԱՄՈՒԷԼԵԱՆ

Անձրեւի պարագային պատսպարուած ընդարձակ սրահ

Գեղարուեստական խնամուած բաժին, խմբերգ, մեներգ, արտասանութիւն երիտասարդ ուժերու կողմէ: Հայկական պար ընկերակցութեամբ թաւխաս ԳԱՐԵԳԻՆԻ:

Գեղարուեստական բաժինէն յետոյ եւրոպական պար՝ դեկավարութեամբ CARIO CANTI *նուագախումբին:*

Առատ եւ ժամանակակից պիւֆէ: կարելի է ուտելիքը միասին բերել:

Մուտք 4 ֆրանք:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ.— Մեթրօն փոխել Denfert Rochereau եւ առնել Robinsonի գիծը:

Մեծ պարտականութիւն

Նուիրուած ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ԳԱՄԲՌԻՒ ՎՐԱՅ ԻՆԿԱԾ

ՀԵՐՈՄՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Նախաձեռնութեամբ՝ Մարսէյլի ՍԵՒԱՆ ԱՆԹԱՌԱՅԻ Հ. Յ. Դ. ԸՆԿԵՐ ԿԵՐՈ ԵՒ ԱԿՈՄԻՏԷԻ ԵՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՄԲ ՍԵՒԱՆ ԱՆԹԱՌԱՅԻ ԽՄԲԻ

Հովանաւորութեամբ ՄԱՐՍԼԻԱՅԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԿՈՄԻՏԷԻ

Երեկոյ մը նուիրուած Հայ Ազատագրութեան Գամբռին եւ մասնակցութեամբ ՍԵՒԱՆ ԱՆԹԱՌԱՆԻ ԵՒ ԼԱՒԻՍՏԻ Ֆ Հ. Կ. ԽՄԱՅԻ Մ.ԴԵՐՈՒ

24 Ցուլիս Կիրակի ամբողջ օրը Գանք Ռօշերի ՆԱՁԱՐԵԱՆՆԵՐՈՒ ագարակը:

Բացման խօսք՝ Ս. ՊՕՅԱՃԵԱՆ

Նաեւ առաւօտուն ժամը 10ին կը սկսի պոչի մեծ մրցում:

Հանդէսի պաշտօնական մասը կը սկսի ժամը 2ին, երգ, արտասանութիւն, մեներգ, ֆանթէզիներ:

Ծանոթ.— Հանդիսավայր երթալու համար Փլաս Թիեէրէն առնել 26 թ/ւ հանրակառքը եւ իջնել Օգիւստաց:

ՄՈՒՏՔ 2 ՖՐԱՆՔ:

ԽԱՆԱՍՈՐԻ ԱՐՇԱԻԱՆՔԻ 41ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ ԱՒԻՆԵՕՆԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Հ. Յ. Դ. ՄՈՒՐԱՏ ԽՈՒՄԲԻ,

Հովանաւորութեամբ Հ. Յ. Դ. Մարսէյլի ՇՐՋ. ԿՈՄԻՏԷԻ

24 ցուլիս կիրակի կէս օրէ վերջ ժամը 2ին, ՊԱՐ ՓԻԺՕՆԻԷի վերնայարկը,

Երգ, արտասանութիւն, նուագ,

Մանրամասնութիւնները տեղւոյն վրայ:

Մուտքը՝ ազատ է:

Դաշտահանդէս

ԽԱՆԱՍՈՐԻ 41րդ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻՒ

կազմակերպուած՝ ԿԻԼԻՆՕՎԼԻՒ ԵՕԹՆԵՂԲԱՅՐԱՆ կոմիտէի կողմէ

24 ցուլիս կիրակի, առաւօտէն մինչեւ երեկոյ, ՓՈԼԻԿՈՆԻ ծառերուն տակ

Ծանօթ.— Երթեւեկի համար յատկապարութիւններ պիտի փակցուին Կրընօպլըի ծանօթ հայկական վայրերը:

ՓԱՐԻԶԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՍԿԱՈՒՄԲԻ

Տարեշրջանի վերջին ՊԱՐԱՆՑԻԿ ՀԱՒԱՔՈՂՔԸ. տեղի կ'ունենայ յառաջիկայ Շաբաթ, 23 Ցուլիս ժամը 5էն մինչեւ կէս գիշեր, 8 Ռիւ Գոսիէ: *Մուտք՝ 5 ֆրանք:*

ԳՐԱԿԱՆ-ԴԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՓԹ

Նուիրուած ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ իր մահուան 15ամեակին սոթիւ

23 Ցուլիս, Շաբաթ երեկոյ, 8 Ռիւ Ժան Կուժոն:

կազմակերպուած ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՓԱՐԻԶԻ Մասնաճիւղին կողմէ

23 Ցուլիս, Շաբաթ, ժամը ճիշտ 8.30ին

Salle Jean-Goujon, 8, Rue Jean-Goujon.

ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՄԲ Հ. ՍՐՀԱԿ ՏԷՐ ՄՈՎՍԷՍԵԱՆԻ ՊԻՏԻ ԽՕՍԻՆ Հ. ՋՕՐԴՕՐԵԱՆ ԵՒ Ս. ՎՐՑՅԿԱՆ

Պիտի նուագեն՝ երկու հայ վերթիոզներ Ֆ. ԱՂԱՋԱՐԵԱՆ (Ջութակ), ՆԱՋԱՐԵԱՆ (դաշնակ): Պիտի երգեն՝ Ար. ԱՌԱՔԵԼԵԱՆ եւ Պ. ՎԱՐԴԱՆԵԱՆ, Պիտի արտասանեն՝ Տիկ. Բ·ուդաղեան, Պ. Պ. Ռ. Զարդարեան, Յ. Եղիազարեան եւ Ա. Ջամալեան:

Մուտք 3 ֆրանք.

Դաշտահանդէս

ԽԱՆԱՍՈՐԻ 41րդ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻՒ

կազմակերպուած՝ Ֆ. Հ. Կ. ԽԱՉԻ ԱՆԿԵՆԻ Մասնաճիւղին կողմէ

կը քանախօսէ՝ Պ. Ա. ԳԻԻԼԽԱՆՏՃԵԱՆ

Ցուլիս 24ին կիրակի, ժամը 3.30ին, Անկէի լճին դէմ, Cascade du Lac *սրահը:* *Մասնակցութիւն 6 ֆրանք:*

Դասախօսական հանդէս Պաոտոյի մէջ

«ԱՐԱՐԱՏ» Միութեան դպրոցի սաներու ամավերջի հանդէսը 24 ցուլիս, կիրակի կէս օրէ վերջ ժամը ճիշդ 3.30ին, Շ Ց· Դ· «ԲԱՐՍԵՂ - ՇԱՀԳԱԶ» ը'յուժի մէջ, Պընօն:

Ըրտասանութիւն, երգ, խմբերգ, երաժշտական բաժնի հետեւող աշակերտները առանձին պիտի նուագեն դաշնակի վրայ:

«ՀՈՎԻՒՆԵՐՈՒ ԽՐԱԽՃԱՆՔ» (կենդանի պատկեր):

Մուտք՝ 3 ֆրանք:

Դաշտահանդէս

ԴՊՐՈՑԱՍԷՐԻ ՍԱՆՈՒՑ ՄԻՈՒԹԵԱՆ

24 Ցուլիս, կիրակի, ժամը 3ին, վարժարանին պարտէզը

1, Bld· du Nord, le Raincy

Կը ներկայացուի ԱՆՈՒՇ օփերէթէն պատկերներ զեկավարութեամբ ԳՄԲԷԹԵԱՆԻ: LES CHAUSSONS DE LA DUCHESSE ANNE *(օփէրէթ), հայկական պարեր, ծաղիկներու պալէ, պանազան պատկերներ, մարզական խազեր:*

Ճաշ եւ պար մինչեւ մօտը 10: Ճոխ պիւֆէ ժառչելի գիներով, (կը խնդրուի մէասին ուտելիք չբերել): *Մուտք 5 ֆրանք:*

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ.— Opéraէն կամ Jaurèsէն առնել օթօպիւս 21A եւ իջնել Raincy-Pavillons, Gare de l'Estէն շոգեկառք՝ direction Gargan, իջնել Raincy-Pavillons:

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ

ՄԱԳԱՂԱԹՆԵՐ

(Ռեբրուածներ)

ԱՇԱՐՈՆ ՏԱՏՈՒՐԵԱՆ



Փառատիպ հատոր մը, **300** էջ, Տպուած սակաւաթիւ օրինակներով

Գլուխներ այս հատորէն կը հրատարակենք.—

ՅԱՑԳԱՌԱՂԱՌ
ՍԼՐԸ ՓՈՒՇԷ ՊՍԱԿՈՎ
ԵԵՂԾ ՄԱՐԴԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
ԳԵՂԵՆԱԿԱՆՔ
ԲԱՆԱՍՏԵՂԾԸ ԿԱՍՏՈՒԱԾԱՆՑ
ՍԻՐՏՍ ԿԱՐՄԻՐ ՎԱՐԴԵՐՈՎ
ԻՆՔՆԱԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ
ԳԻՒՂԻ ՍԻՒՐԵՐ՝ ԵԱՐՈՂ ԵՐԳԵՐ

Գին **40** ֆրանք

Դիմել հեղինակին,
17, Rue Damesme, PARIS

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Է

«Մատենաշար Ռազմիկ»ի բիւ
Հրատարակութիւն Հայ Կամ· եւ Մարտիկներու Միութեան

ԼԵՌՆԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Գրեց՝ ՀՐԱՆՏ ՓԱՍՏՐՄԱՃԵԱՆ

Այս պիտական խիստ արժէքաւոր ուսումնասիրութիւնը գործն է Հրանտ Փաստրմաճեանի, որ վերջերս անգլիերէն լեզուով լոյս տեսած է Վաչինկթոնի մէջ: Մեր համակրելի աշխատակիցը շատ պարզ եւ հասկնալի լեզուով կ'ուսումնասիրէ լեռնային զանազան ռազմաբեմները — մասնաւորաբար Հայկական — տալով անոնց չուրջ կատարուած զանազան նշանակալից դէպքեր, թուական պատճառներ, թիւեր ու դէմքեր :

Հեղինակը սքանչելիօրէն կը պարզաբանէ լեռնային հողամասերու իւրայատուկ կազմութիւնը ու անոնց դերը ռազմական գործողութիւններու վրայ, կը խօսի զանազան տեսակի կռիւներու մասին: Կը պարզէ լեռնային երկիրներու պարենաւորման եւ փոխադրութեանց դժուարութիւնները, լեռնային յատուկ զօրամասերու կազմակերպութիւնը, քաղաքներու գործը եւայլն:

Գիրքը 100 էջէ աւելի, դեղեցիկ տպագրութեամբ եւ հաղուագիւտ նկարներով զարդարուած է :



“ ՇԻՐԱԿ ”

Ազեւելքի միակ իսկական օղին է: Անզուգական, Անմրցելի· Անհարդարի: Առաջնակարգ զօրացուցիչ ախորժաբեր, պատրաստուած զուտ չամիչէ ին Թով· Հայ աւանդական սեղանին զարդ:



ՐԱՓԸ ՏԻՒԶ

Ջուտ խաղողէ քաշուած եւ անիսոնով պատրաստուած հայկական օղին է ՐԱՓԸ ՏԻՒԶ, Ջգուշացէք արուեստական օղիներէ որ ձեր ստամոքսը կ'այրէ եւ գիշ երները ջուր կը խմցնէ եւ կը վնասէ ձեր առողջութեան: Խմեցէք միայն ՐԱՓԸ ՏԻՒԶը որուն անուրանալի, կազդուրիչ եւ ախորժաբեր ըլլալը հաստատուած է:

Dalakupeian 8 Rue Suffren
Dépôt: 7 Rue de la Paix, Marseille· Tél. Dragon 70—89

ՅՕՒՇԱՏԵՏՐ

ԽԱՒՌՆ ԺՈՂՈՎ

Իսի-լէ-Մուլինոյի «Թրիմեան» դպրոցի վարչութիւնը խառն ժողովի կը հրաւիրէ կ. Խաչի, Հ. Յ. Դ. «Զաւարեան» կոմիտէի, Հայ կամաւորներու Միութեան, իսիի երիտասարդաց Միութեան բոլոր անդամները անխտիր, նաեւ բոլոր ծնողքները եւ դպրոցով հետաքրքրուողները, Շաբաթ (23 Ցուլիս) երեկոյ ժամը 8.30ին դպրոցի սրահին մէջ: Օրակարգ.— *Սրահի ընդարձակման կամ գպրոցի համար հողի մը գնման հարց,*

ՏԱՐՕՆ ՏՈՒՐՈՒԲԵՐԱՆԻ Հայրենակց. Միութեան փարիզի մասնաճիւղի ընդհ. ժողովը այս կիրակի 6 Ալբնիւ տ'Իթալիի սրճարանին վերնայարկը: Օրակարգ.— Պատգամաւորի ընտրութիւն, վարդավառի հանդէս եւլլն:

Ջ. Ը· ՄԻՈՒԹԵԱՆ փարիզի ժասնաժիւղին ընդհ. ժողովը տեղի կ'ունենայ Ցուլիս 25ին, Երկուշաբթի երեկոյ ժամը 9ին, Քատէի սրճարանին վերնայարկը· կարեւոր օրակարգ:

ԴԱՃԷՔ ՏԵՍՔ ԼԻՈՆԻ ՄԷՋ

Cinéma REXY

Cours Lafayette. angle Garibaldi

Le Gérant : H. STEPHAN

Imprimerie A. DER (AGOPIAN)

17, Rue Demesme — PARIS (13)

ՏԱՐՕՆԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Տարօն-Տուրուբերան նահանգային Հայր· Միութեան Մարսէյլի մասնաճիւղը սարքած է Սգատօն մը վաղը Կիրակի 24 Ցուլիս ժամը 4ին, Դավառի կիրակի առաւօտ Գուլվէ Օտտոի Մատրան մէջ, ի յիշատակ Տարօն Տուրուբերանի Նահատակներուն:

Կը խնդրուի քոլոր Միութիւնները եւ կազմակերպութիւնները օր քեզի իրենց յարգանքի բաժինը:

ՀՐԱՒԻՐ

Ի գիտութիւն Շաւիլլի եւ շրջակայքի բարեպաշտ ժողովուրդին կը յայտնենք թէ՝ կիրակի, 24 յուլիս վաղուան դավառաց հրաշալիստ տօնին առթիւ տեղւոյս Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ մատրան մէջ հանդիսաւոր պատարագ պիտի մատուցանէ Տէր Եսայի քհնյ Ալթունեան եւ այս առթիւ մատրան բարերարներէն Ա.թբենապոլսեցի Պ. Գաբրիէլ Փափազեանի ծնողացը եւ իր ընտանեաց բոլոր ննջեցելոց հոգւոյն մասնաւոր հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի :

Կը հրաւիրենք ներկայ գտնուիլ այդ հանդիսաւոր արարողութեան:

Երգեցողութիւն պիտի կատարուի դեկավարութեամբ Պ. Կարապետ Բաղտասարեանի եւ մասնակցութեամբ տեղւոյս պարիներու :

Սկիզբ ժամերգութեան ժամը 9ին
Սուրբ պատարագ ժամը 11ին:

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՑԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HARATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
17, Rue Damesme, PARIS (13e)

Téléphone : Glacière 15 - 70
Chèque Postal Paris 1678 - 63
(ԵՐԹԵՒԵԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.—

	ՏԱՐԵԿԱՆ	ՎԵՑԱՄՍԵԱՅ	ԵՒԱՄՍԵԱՅ
Թրանսա եւ Գաղութները	150 ֆրանգ	75 ֆրանգ	40 ֆր.
Անգլիա եւ Իտալիա	265 ֆրանգ	140 ֆրանգ	
Ուրիշ Երկիրներ	215 ֆրանգ	110 ֆրանգ	

ՈՒՐԲԱԹ
22
ՅՈՒԼԻՍ
VENDREDI
22 JUILLET
1938

ԺԹ ՏԱՐԻ — 14e Année No. 3788

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ԿԱՄՈՒՐՋԸ ՓԼԱՒ, ԿԵՑՑԷ՛ "ՖՐԱՆՔՕ,,Ն...

Այլեւս յուսահատ՝ Երեւանի քար լռութենէն, Արտաւահմանի Հոկերու վարիչները սկսեր են զարմանազան ծրագիրներ որոճալ, քաշքշելու համար իրենց գոյութիւնը:

Ինչպէս հաղորդեց հանդուգնալ «Բանուոր»ը, Ամերիկայի Հոկը հագեր է նոր չապիկ մը,—«Ամերիկահայ Ցառաջդիմական Միութիւն», որուն կրնան անդամակցիլ մանր առեւտրականները, մասւորականները, աշխատաւորները, կազմակերպուած կոմունիստները եւ «քրիստոնէական դաստիարակի հաւատացողները»:

Եւ ահաւասիկ նորագոյն աւետիսը, սեւով ճերմակի վրայ տպուած՝ Փարիզի մէջ, իբրեւ պաշտօնական զեկոյց.

— « Ֆրանսայի Հոկի արտակարգ 7րդ պատգամաւորական ժողովը գումարուած Փարիզի մէջ 14, 15, 16 եւ 17 յուլիսին, 120 Պուլվար Պէլվիլ, փոփոխութեան ենթարկեց իր ծրագիր կանոնագիրը եւ որոշեց այսուհետեւ գործել հետեւեալ անուանով.— ՖՐԱՆՍԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (Ֆրանճօ - Հայկական բարեկամութեան կոմիտէ) որուն նպատակն է.—

ա) Ամրապնդել եղբայրական կապը Ֆրանսացի եւ հայ ժողովուրդներուն միջեւ, փոխադարձաբար ճանչցնել անոնց պատմութիւնն ու մշակոյթը :

Հայկական շրջանակներուն ծանօթացնել եւ գանոնք մասնակից դարձնել Ֆրանսական ընկերային եւ բարենպատակ հիմնարկութիւններու գործունէութիւններուն :

Երախտագէտ անձնուիրութեամբ կատարել ամէն պարտականութիւն Հանրապետական Ֆրանսայի շահերու պաշտպանութեան համար :

բ) Զբաղիլ ֆրանսաբնակ Հայերու հասարակական, մշակութային եւ իրաւական կեանքին հետ կապուած խնդիրներով՝ տեղական օրէնքներու սահմանութիւններուն մէջ :

գ) Բարոյական կապ հաստատել երկրի եւ արտասահմանի հայ ժողովուրդին միջեւ եւ հաջալերել այն բոլոր ձեռնարկները որոնք կը ատարեն անոր շահերուն :

դ) Ընկերակցութիւնը բացարձակապէս քաղաքական որեւէ նպատակ չի հե – տապնդեր»:

Մենք «աւետիս» կոչեցինք այս պաշտօնական զեկոյցը: Բուն բառը պիտի ըլլար՝ մահազդ :

Իսկապէս ալ, Հոկին մահն է որ կը ծանուցանեն անոր վարիչները, եւ ոչ թէ պարզապէս անունի փոփոխութիւն մը:

Տակաւին երէկ, «ոսկի կամուրջն» էր այս դիմակաւոր կազմակերպութիւնը: Մի՛կը՝ իբրեւ կապ Հայաստանի եւ Արտասահմանի միջեւ, ինչպէս կը յոխորտային տարիներով :

Այժմ վրի՛ր է կամուրջը, իր տեղը տալով... «Ֆրանքօ»ին — «Կոմիտէ Ֆրանքօ-Հայկական բարեկամութեան»:

Անունին հետ, փոխուած է նաեւ բովանդակութիւնը :

Կէտ առ կէտ կարդացէք ծրագիրը - կանոնագրին հիմնական կէտերը, եւ փորձեցէք որ եւ է նմանութիւն գտնել՝ Հայրենիքի Օգնութեան Կոմիտէին (Հօկ) եւ այս նոր միութեան հետապնդած նպատակներուն միջեւ, բացի մէկ տողէ,— բարոյական կապ Հայաստանի հետ :

Հարցումները ինքնին կը ծնին, ի տես այս գլխիվայր թաւալումին :

Անբնական չէ որ միութիւններ անուն փոխեն, իրենց կամքէն անկախ պատճառներով :

Բայց, ո՞ւր տեսնուած է որ, օրինակ , փոստատարներու միութիւն մը վերածուի Սափրիչներու Միութեան, կամ Գրողներու կազմակերպութիւն մը՝ Կօշկակարներու միութեան : Ի՞նչպէս մէկը միւսին յաջորդ կամ ժառանգորդ կրնայ դառնալ, այնքան հակոտնեայ առաջադրութիւններով :

Հակառակ իր խարդախ դիմակին, հիմնականը, հանդուգնալ Հօկին համար, Մ. Հայաստանն էր, — քարոզութիւն կատարել, պայքար մղել, դրամ հաւաքել, ձեռնարկները փորձել անոր համար: Այսպէս կամ այնպէս օգնել անոր ճանաչման եւ զարգացման:

Այդ առաջադրութեամբ ալ, չեղելով բուն Հօկի (աւելի ճիշդ՝ Հօմի) նպատակին, այս խարդախ կոմիտէն ամէն բանէ առաջ քաղաքական գործերով կը զբաղէր, «ներքաւորումներ» եւ «ճակատ»ներ կը ստեղծէր, ճեղքեր կը բանար Հայրենակցական եւ ուրիշ ազգային կազմակերպութեանց մէջ ,— եւ կը ճգնէր իւղ լեցնել հակադաշնակցական կրակին վրայ :

Այժմ հանդիսաւորապէս թաղուած է դիմաւորը,— հայրենիքի օգնութեան գործը, իր տեղը տալու համար բոլորովին տարբեր նպատակի մը,— «երախտագէտ անձնուիրութեամբ կատարել ամէն պարտականութիւն՝ հանրապետական Ֆրանսայի շահերու պաշտպանութեան համար.—«Զբաղիլ Ֆրանսաբնակ Հայերու հասարակական, մշակութային եւ իրաւական կեանքին հետ կապուած խնդիրներով» եւն. :

Մշակոյթի միութի՞ւն: Ազգային Մորմո՞ւռք: Հպատակութիւնը դիւրացնելու սահմանուած դրասենեա՞կ: Նորօրինակ Նանսէնեա՞ն մը:

Կոչեցէք ինչպէս որ կ'ուզէք : Ո՛ր կողմէն ալ քննէք, եղրակացութիւնը այս է, — Հօկին վարիչները նոր խարդախութիւն մը կը փորձեն, դիմիմայր չբզելով իրենց կանոնագիր — ծրագիրը : Հետապնդելով նպատակներ, որոնք որքան ալ բանաւոր թուին, որ եւ է կապ չունին Հօկին սկզբնական, հիմնական առաջադրութեանց հետ :

Եւ այստեղ է որ կը ծագի բուն հարցը,— Հապա Հօկին ժառանգութի՞ւնը, բարոյական թէ նիւթական, մանաւանդ դրամական...

Պարժէ առանձին քննել այս հիմնական խնդիրը :

Շ.

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ԱՆԳԼԻՈՅ ԹԱԳԱՒՈՐՆ ՈՒ ԹԱԳՈՒՀԻՆ ՎԵՐՍԱՅԼԻ ՄԷՋ

Բազմահիւ զօրավանդակ 50,000 գիւղատրճակով

Անգլիոյ թագաւորը եւ հանրապետութեան նախագահը Վերսայլ գացին երէկ, հինգշաբթի, եւ ժամը 11.20էն 12.30 աչքէ անցուցին ամենամեծ զօրահանդէսը՝ զինադադարէն ի վեր: Այս առթիւ չարժման մէջ դրուած էին Ֆրանսական բանակին ամէնէն ընտիր զինուորները , բոլոր զօրամասերէն եւ զէնքերէն: Ֆրանսայի զինուորական վարիչները ջանք չէին խնայած , որպէսզի այս զօրահանդէսը վերազանցէ Պերլինի եւ Հռոմի մէջ կատարուած զօրահանդէսները: Յատկանշական պարագայ մը,— Վերսայլը այն վայրն է ուր Ֆրանսայի թագաւորները սովորութիւն ունէին լսելու իրենց զօրավարներուն զեկուցումները՝ «զարաւոր թշնամի» Անգլիոյ դէմ տարուած յաղթանակներու մասին: Այժմ անգլեւֆրանսական սիրալիր համաձայնութիւնն է որ կը փառաբանուի նոյն պալատին զարասաններուն մէջ:

Զօրահանդէսէն վերջը, թագաւորն ու նախագահը գացին Վերսայլի Դըղեակը, ուր կը սպասէին թագուհին եւ Տիկին Լըպրէօն: Ժամը 1ին սեղան մը սարքուեցաւ Հայելիներու պալատին մէջ, ուր ատորագրուած էր Վերսայլի դաշնագիրը: Կը մասնակցէին 250 կոչնականներ: Ցետոյ հիւրերը պտոյտ մը կատարեցին պատմական դարասաններէն մէջ եւ Փարիզ վերադարձան ժամը 4.30ին : Գիշերը հացկերոյթ մը սարքած էր արտաքին նախարարը :

**** Թագաւորն ու թագուհին Փարիզէն կը մեկնին այսօր , ուրբաթ: Առտուան ժամը 10.30ին պիտի երթան Վիլէ - Պըրթոնէօ, ուր Ռոթզ Զ. պիտի կատարէ պատերազմական յիշատակարանի մը բացումը: Ցետոյ պիտի վերադառնան Անգլիա , Քալէի ճամբով :*

**** Զորեքշաբթի օր , Փարիզի քաղաքապետարանին մէջ կատարուած ընդունելութեան առթիւ, թագաւորը 100.000 ֆրանք նուիրեց, Փարիզի աղքատներուն համար: Քաղաքապետական խորհուրդը թագաւորին նուիրած էր ընտիր ծխատուփ մը, իսկ թագուհիին՝ թանկագին սպասներ: Նոյն առտուն կանուխ թագաւորը դեղեցիկ ծաղկեպսակ մը դրաւ Ցաղթական Կամարին տակ,, խոնարհելով Անծանօթ Զինուորի յիշատակարանին առջեւ: Գիշերը անհամար բազմութիւն մը խռնուած էր Օփերային չորս կողմերը ,ուրկէ հեռաւակ զինուորներ եւ ոստիկաններ չդիմայ կազմած էին: Թագաւորն ու թագուհին Օփերա մտան ժամը 10ին, առաջնորդութեամբ հանրապետութեան նախագահին եւ կառավարութեան անդամներուն, դղրդապին ծափերու մէջ: Ներկայացուցան գլուխ մը՝ «Սալամպօ»էն եւ պարախաղեր՝ մասնակցութեամբ հռչակաւոր արուեստագէտներու :*

**** Ֆրանսական մամուլը չերմապէս կ'ողջունէ թագաւորին այցելութիւնը, առանց կուսակցական խորութեան: Բոլորն ալ կը չեշտեն թէ այս այցելութիւնը պիտի նպաստէ աշխարհի խաղաղութեան, զօրացնելով անգլեւֆրանսական գործակցութիւնը :*

**** Թագաւորին եղած ընդունելութիւնը մեծ գոհունակութիւն պատճառած է Անգլիոյ մէջ, իբրեւ հզօր ազդակ մը աշխարհի խաղաղութեան:*

**** Վերսայլի պալատին հացկերոյթը տեղի ունեցաւ 1772ին հաստատուած աւանդութիւններով (կեղծամ եւն.):*

Երկու պետութենց հախուռն տրամիր կը խոհրդակցին միջազգային կացութեան մասիվ

Արքայական այցելութեան հանդիսաւոր ցոյցերուն մէջ, երկու երկիրներու կառավարութիւնները առիթէն կ'օգտուին, աւելի ամրապնդելու համար գործակցութիւնը: Առջի օր Ֆրանսայի վարչապետը եւ արտաքին նախարարը մանաւանդ խօսակցութիւններ ունեցան Անգլիոյ արտաքին նախարարին հետ, Եւրոպայի կացութեան մասին: Այս առթիւ մանաւանդապէս խօսեցան չեխական հարցին եւ Հիթլերի թիկնապահին այցելութեան վրայ: (Թիկնապահը , հարիւրապետ Վիմման, Լոնտոն երթալով, մասնաւոր տեսակցութիւն մը ունեցած էր Անգլիոյ արտաքին նախարարին հետ): Երեք նախարարներու խօսակցութիւնները շարունակուեցան կէս օրուան ճաշին, ուր ներկայ էին նաեւ Պ. Պ. Խոթ, Լէոն Պլում եւ Շօթան, ինչպէս նաեւ Փարիզի եւ Լոնտոնի դեսպանները: Առաջին երեքին խօսակցութիւնը տեւեց մէկուկէս ժամ: Խօսակցութիւնները շարունակուեցան ճաշէն վերջն ալ, մինչեւ ժամը 4: Ցետոյ զեկոյց մը հրատարակուեցաւ , որ կ'ըսէ թէ թագաւորին այցելութիւնը պատեհութիւն ընծայեց Լորտ Հալիֆէքսի, Պ. Պ. Տալատիէի եւ Ժորժ Պոնէի՝ «քննելու քաղաքական կացութիւնը, ինչպէս եւ այն խնդիրները որ մասնաւորապէս կը շահադրգռեն երկու երկիրները: Այս խօսակցութեանց ընթացքին, որոնք տեղի ունեցան փոխադարձ վստահութեան ոգիով, նախարարները ստուգեցին թէ ամբողջովին կը պահպանուի տեսակէտներու այն կատարեալ ներդաշնակութիւնը որ հաստատուած էր անցեալ ապրիլ 28ին եւ 29ին, երբ Ֆրանսայի նախարարները Լոնտոն այցելեցին »:

Իրազեկներու կարծիքով, Անգլիոյ արտաքին նախարարը հաւաստած է թէ իր կառավարութիւնը վերջնական համաձայնութիւն պիտի չկնքէ Իտալիոյ հետ , ցորչափ Մուսոլինի չկատարէ չարունակելու Ֆրանսայի հետ սկսած բանակցութիւնները: Հաւաստիքներ տրուած են նաեւ չեխական հարցի մասին, որ ծանր մտահոգութիւններ կը պատճառէ Ֆրանսայի: Կարճ խօսքով, կատարեալ է անգլեւֆրանսական համաձայնութիւնը :

Անգլիոյ եւ Ֆրանսայի սպարապետներն ալ տեսակցութիւն մը պիտի ունենան, ըրիտանական յիշատակարանին բացման առթիւ :

**** Հիթլերի թիկնապահին այցելութեանը ըղձօրէն կը դրաղեցնէ Անգլիոյ վարչապետը, որ սկսած է քննել անոր բերած առաջարկները: Պերլինի անգլիական դեսպանը մօտէս տեսակցութիւն մը պիտի ունենայ Գերմանիոյ արտաքին նախարարին հետ: Իրազեկներ կը հաւաստեն թէ Հիթլերի ներկայացուցիչը յուսախաբ եղած է Լորտ Հալիֆէքսի պատասխաններէն: Պերլինի թերթերը մեծ կարեւորութիւն չեն տար այս այցելութեան, ժխտելով թիկնապահին վերագրուած արտակարգ հանդամանքը:*

ՁԵՆՈՍԼՈՎԱՔԻՈՑ վարչապետը որոշեց ունկնդրութեան ընդունել Գերմաններու պաշտօնական պատուիրակութիւնը, խորհրդակցելու համար վարչական վերակազմութեան մասին :

ՕՐԸ ՕՐԻՆ

« ՄԱՐԱՆԱԹԱ »

Ըսի թէ պակաս չեն գիս «փրկել » ուզողները: Այս ամգամ Ամերիկայէն կը կատարուի փորձը: Տիկին մը, որ գիս կը ճանչնայ թերթով միայն, միտը դրեր է անպայման փրկել գիս : Եւ սիրուն նամակի մը հետ ծրար մը«Մարանաթա» դրկեր է ինծի :

Նամակին ոճէն կը հետեւցնեմ որ շէն շող կնիկ մըն է, նոյնիսկ շատակարար: Ինծի ճամակ գրած պահուն՝ խոհանոցին մէջ գործ ունի եղեր ու չէ մոռցեր արձանագրել կրակին վրայ գիրտացող կերակուրին անունն ալ : Շատագոյթ արմակ Հայուհի մը վերջապէս, որ թէ՛ խոհանոցին գործերուն կը հասնի, թէ՛ գիս «փրկելու» կ'աշխատի, եւ գուարթ իր ճամակովը **typologie**ի մէջ ունեցած հմտութիւնս սնոտի կը հանէ,— արդարեւ *բուհճի* կեր – սող ունենալու համար, ըստ իմ գիտութեանս եւ փորձառութեանս, պէտք է առնուազն **hypocondriaque** ըլլալ, եթէ ոչ ուրիշ տեսակի հիւանդ : Բայց այս տիկինը, իր արեւշող տրամադրութեամբ, ի՞նչպէս կրնայ *բուհճի* ըլլալ, կարդալ *Մարանաթա* եւ յիսուսամոլութեան նուիրուած նման յիմարագրութիւններ: Ի՞նչպէս կրնայ ըլլալ եռանդաշատ Հայուհի եւ մոռնալ մեր ազգային հոգերը ,տարուելու համար սպաւշ աղօթքներու ընթերցումով , հանոյք զգալու համար այսպիսի հատած ոտանաւորներէ :

Ցիսուս, աչխարհը եմ ձգած ,
Ու խաչս առի որ առ Քեզ գամ,
Մերկ եւ աղքատ ու անարդուած,
Հերիք է ինձ որ Քեզ ճանչնամ :

Կամ այսպիսի թելադրանքներ.—

« Ձեր երկրաւոր անդամները սպանեցէք »:

(Այսպիսի թելադրանքներու հետեւելով՝ հայ երիտասարդ մը, Սուրիոյ մէջ, փորեց հանեց իր աչքերը որոնք գայթակղեցուցած էին զինք՝ աղուոր ազջկան մը տեսքով) :

« Նոր մարդը հագած հաւատացեալը գիտնալու է թէ ինք թէեւ մեղքին (համար) մեռած է, բայց մեղքը մեռած չէ, ինք թէեւ հին մարդէն հրաժարելով արքնցած ու անոր մէջէն եկած է, սակայն հին մարդը չէ հրաժարած իրմէ : Հաւատացեալը առեն մը ասոնց մէջ կը խլէր ու կ'ապրէր, բայց հիմա երկրաւոր անդամները հաւատացեալին մէջ չեն, ինչու որ մերկացած է : Հաւատացեալը իր անդամները Աստուծոյ կ'ընծայէ որպէս արդարութեան գործիքներ, հին մարդուն անդամները հոգիով կը սպանէ, եթէ ոչ անոնց անմնատուր ըլլալով մարմնատրապէս սպրելու ըլլայ՝ Աստուծոյ դէմ կ'ապստամբի եւ բարկութիւն կուգայ վրան ու կը մեռնի»:

Այս հէնական միսթիսիզմը ինչո՞ւ այսօրուան վարդակէր Հայուհիները՝ անոնց մոռցնել տալով ազգային սրբազան պարտականութիւններ, շատերն ալ առաջնորդելով խեղճութեան, «վեցհազարեակ»ին զոհերէն ատելի:

Զիս «փրկելու» աշխատող տիկինը թերեւս վիրաւորուի, բայց չեմ կրնար ուրիշ կերպով պատասխանել իրեն , որովհետեւ չեմ ներեր հայ տիկինի մը որ հայ տէրտէրին իր գլխուն կարդացած Աւետարանէն աւելին կը կարդայ ուրիշին գլխուն, փոխանակ ուզելու հասկնալ թէ երկու հանճարեղ Հայեր, Սահակը եւ Մեսրոպը, ազգային ոգի դրին հրիստոնէութեան մէջ՝ զայն ընդունակ վնասակար դարձնելու համար :

Կրօնական բա՞ն կարդալ կ'ուզէք , կարդացէք Նարեկացի կամ Շնորհալի, եւ ոչ թէ հէնական եւ ամերիկեան ցափրտուքներ, «Մարանաթա» կամ «խարախաթա»:

ԱՐԱԶ

ՇԱՀՄՈՒՐԱՏԵԱՆԻՆ ՀԱՄԱՐ

Մոսկոֆեան	25
Մայիս 31ի դումարը	746
Ընդհ. դումար	771

Ի՞ՆՉ Կ'ԱՆՑՆԻ ԿԸ ԴԱՌՆԱՑ ՀԱՑԱՍՏԱՆԻ ՄԷՋ

« ՔԱՌԱՍՈՒՆԷՆ ՎԵՐ ՄԱՐԴ ՁԵՔ ՏԵՍՆԵՐ »

Անցորդ մը կը պատմէ (Հայաստանէն մեկնած է Յունիսի վերջերը) .—

Կաթողիկոսի մահուան առթիւ հոգեհանգիստ կատարուեցաւ Երեւանի Ս. Սարգիս եկեղեցին,— միակը ամբողջ Երեւանի մէջ, նախազգուշութեամբ քահանայի մը: Ինչ որ դուք անլուր ողբերգութիւն կը կոչէք այստեղ, գրեթէ աննշմար անցաւ այնտեղ: Ո եւ է բոլշեւիկ վարիչի մահը աւելի հետաքրքրութիւն կը չարժէ քան կաթողիկոսին սպանութիւնը :

Քառասունէն վեր մարդ չէք տեսներ Երեւանի մէջ: Կարելի չէ մէկ - մէկ թուել «անհետացածներու թիւը: Բանտարկեալներուն մէջ կը գտնուին պրոֆ. դամբարեան, պրոֆ. Ա. Ցակոբեան եւ ուրիշ պրոֆէսօրներ :Աւելի առաջ ձերբակալած էին Հրաչեայ Աճառեան, Մանուկ Աբեղեան եւն.: Բանտն են նաեւ տիկին Զապէլ Եսայեան, Տիգրան Զաւէն, Գուրգէն Քէլէկեան, Գալիկեան, Բակուր եւն.: Ոչ մէկ լուր՝ Քալաղնուներէն, բայց ստոյգ է որ Երեւան չի գտնուիր :

Երբ մէկը ձերբակալուի, իբրեւ առաջին պատիժ կինը բնակարանէն կը հանեն, ինչ որ կը նշանակէ պարզապէս փղոց նետել : Միեւնոյն տեղն կը զրկուի ապրուստի միջոցներէն: Անհնարագրելի է այս առթիւ պարզուած թշուառութիւնը: Մուղտուսի, (Չեկայի նախկին վարիչը), Ամատունի (կեդր. Կոմիտէի քարտուղարը՝ Յանկեանէն վերջ), եւ Գուլոյեան (նախկին վարչապետը) երեքը մէկ ձերբակալուեցան այն ամբաստանութեամբ թէ Թուրքիա փախչելու կը պատրաստուէին... Հիներէն անոնք որ «անհետացած», աքսորուած կամ բանտարկուած չեն, իրենց տուներուն մէջ կծկուած, չեն համարձակիր դուրս ելլել :

ՄՈՍԿՈՒԱՅԻ ԵՒ ԹԻՖԼԻՍԻ ԱՐԻՒՆԱՑ ԽԱՂԵՐԸ

Ուրիշ անցորդ մը, նոյնպէս վերջերս հասած Հայաստանէն, կը գրէ մեզի.—

Ձեր թերթի ապրիլ 27 թիւին մէջ հրատարակեր էիք ականատեսի մը հաղորդած տեղեկութիւնները, որ այն տպաւորութիւնը կը ձգէր թէ Հայաստանի մէջ պատահած դէպքերը հետեւանք են տեղական ոխակալութեանց եւ թէ Մոսկուա մեղք չունի ասոնց մէջ: (ՄՄԲ.— Այս տեղեկութիւնը մեզի, ինչպէս եւ ռամկավար մամուլին հաղորդուած էր ազգային հաստատութենէ մը եւ այն ատեն գրուեցաւ թէ տեղեկատուն Լիբանանցի ուսանող մըն է: Տրուած մեկնութիւնն ալ իր անձնական տեսակէտն էր):

Ընդհակառակն , բոլոր դէպքերը կատարուած են Մոսկուայի եւ Անդրկովկասի իշխանաւորներու կարգադրութեամբ: Հայաստանի կառավարութիւնը պարզապէս գործիք մըն է «Հայր» Սթալինի եւ Անդրկովկասի ժողովուրդներու «սիրելի բարեկամ» Բերիայի :

Այսպէս, 1936 ապրիլին, Թիֆլիսի մէջ սպաննուեցաւ Ա. Ազուլեան: Ցետոյ գրեցին թէ ան մեռած է իբրեւ հետեւանք ինքնաչարժի արկածի մը: Այս դէպքին յաջորդեց Ազասի խանչեանի սպանութիւնը նոյն քաղաքին մէջ: Այդ գործին գաղտնիքն ալ հարցուցէք Սթալինի եւ Բերիայի :

Այնուհետեւ սկսաւ ընդհանուր հալածանք եւ չատեր բանտ նետուեցան : Յանկեանի սպանութենէն վերջը Մոսկուայի եւ Թիֆլիսի կարգադրութեամբ

(Յուրերու շարունակութիւնը կարդալ Դ. էջ)

ՍՏԱՄԲՈՒԼԻ ԿԱՐԳԱԽՆԴԸ

The Enemies of Stamboul

By DENNIS WHEATLEY Թարգմ. Ե. Ս.

Հատ : 1. Մ. Թարգմ. Ե. Ս.

Ա

1937ի աշուն Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի մահվան տարին էր, երբ Եվրոպան դեռևս ապրում էր Աբիսինիայի նվաճման ոգևորությամբ, Իտալիան հանդիսանում էր Ազգերի Լիգայի ամենաուժեղ անդամներից մեկը, Հիտլերը Գերմանիայի միակ տիրակալն էր, Ռուսաստանը դեռևս չէր ներկայացել Ազգերի Լիգայի ժողովներին, Ֆրանսիան ներքաղաքական անկայունության մեջ էր գտնվում, իսկ Անգլիան ամենևին էլ չէր մտածում, որ մի քանի տարի հետո ինքն էլ պիտի ներքաշվի պատերազմի մեջ։

Ք. Ո. Մխիթեան վաստակի մասնաճիւղի ընդհ. անդամական ժողովը տեղի կ'ունենայ 26 Յուլիս երեքշաբթի իրիկուն, ժամը 8.30ին, իր սովորական հաւաքատեղին: Խիստ կարեւոր օրակարգ: Ներկայանալ անդամատեսրով:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

ՄԱՐՍԷՅԼ.— Տէր եւ տիկին Կ. Կիլիմիրեան, գաւակները եւ մօտաւոր պարագաները իրենց խորին շնորհակալութիւնները կը յայտնեն Հ. Ը. Դ. «Թաժակ» խումբին եւ բոլոր անոնց որոնք, անձամբ, նամակով իրենց ցաւակցութիւնը յայտնեցին մեր սիրեցեալ գաւկին, Թոռան, եղբօրորդւոյն, քրոջորդւոյն եւ ազգականին փոթրիկն՝ ԳԷՈՐԳ ԿԻԼԻՄԻՐԵԱՆի մահուան առթիւ, որ տեղի ունեցաւ 7 Յուլիս յետ կարճատեւ ֆիւանդութեան, 4 տարեկան ծաղիկ հասակին մէջ:

Le Gérant : H. STEPHAN

Imprimerie A. DER (AGOPIAN)

17. Rue Demesme — PARIS (13)

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ

«ՄԱՑԻՍ 28»

ԳԵՂԵՑԻԿ ՀԱՏՈՐ ՄԸ Հ. Յ. Դ. ԱՐԵՒՄՏ. ԵԿԴ. Կ. Կ.ԻՆ

ԱՇԽԱՏԱԿՑՈՒԹԵԱՄԲ ԾԱՆՕԹ ՄՏԱՒՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ

Հրատարակութիւն Հ. Յ. Դ. Արեւմտ. Եւր. Կ. Կ.ին:

Ապատրանքները կանխիկ:

Գին՝ Ֆրանսա եւ գաղութները 5 ֆր., փոստի ծախքով 6 ֆր., արտասահման 25 սէնթ: Դիմել՝ S. TOROSSIAN, 88 Rue de Bagneux, Cachan, (Seine) France:

ՅԱՌԱՋ կը ծախուի

24, Rue des Petits Carreaux, *Փարիզ* **Mr. Pierre Marechal**ի *խանութը:*

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ

ՄԱԳԱՂԱԹՆԵՐ

(Պերթուածներ)

ԱՇԱՐՈՆ ՏԱՏՈՒՐԵԱՆ



Փառատիպ հատոր մը, **300** էջ, Տպուած սակաւաթիւ օրինակներով

Գլուխներ այս հայկական *բերքը* դագիրէն.—

ՅԱՑԳԱՒԱՌԱՂԱՒ
ՍԷՐը ՓՈՒՇԷ ՊՍԱԿՈՎ
ԽԵՂՃ ՄԱՐԴԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆը
ԳԵՀԵՆԱԿԱՆՔ
ԲԱՆԱՍՏԵՂԾԸ ԿԱՍՏՈՒԱԾԱՆԱՑ
ՍԻՐՏՍ ԿԱՐՄԻՐ ՎԱՐԴԵՐՈՎ
ԻՆՔՆԱԹՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ
ԳԻՒՂԻ ՍԻՒԴԵՐ՝ ԵԱՐՈՋ ԵՐԳԵՐ

Գին **40** փրանք

Դիմել հեղինակին,
17, Rue Damesme, PARIS

ԿԱՐԱՊԵՏ Ց. ԷՄՄԷՐԵԱՆ

Maison E. CHARLES *հիմնուած 1869*

29 rue Mathis, Métro Crimée


Autobus: AJ, AV, CP, 52, 50/71 Tel. Botzaris 12—60

Կը ծախենք գոհարեղէններ, ամէն տեսակ ժամացոյցներ մատանիներ եւլն.: Նորոգութիւն ժամացոյցներու եւ գոհարեղէններու: Կը գնենք՝ թլաթին, ոսկի, արծաթ եւ գոհարեղէններ՝ նպաստաւոր գիներով:

Մի մոռնաք որ վստահելի ձեռքէ պնուած ոսկեղէն եւ գոհարեղէններն անփոփոխ կը պահեն իրենց արժէքը:

Գաւառներէն եղած ապսպրանքները կը կարգադրուին արագ եւ խղճմտութեան:

Hommes **Dames**



15, Bld. Bonne Nouvelle

Métro: Bonne Nouvelle Tél.: Gut. 93-70



Tailleur de ST. BERNARD

Pour Hommes et Dames

H. GULBOLIAN

24 rue Affre կամ 8 rue Cavé, Paris(18)

Մասնաճիւղ՝ 2 rue de la Charbonnière

Մէթրօ La Chapelle եւ Barbès Rochechouart

Թելեֆոն Montmartre 69—70

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ.— Կարեւոր նուէրներ մեկ ձեռք հագուստի համար մինչեւ Յուլիս 14:

ՍՏԱՑԱԾ ԵՆՔ ՖՐԱՆՍԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՄՈՌՑԱՅԻՆ ԿԵՐՊԱՍՆԵՐ:

ՄԵՐ ԳԻՆԵՐԸ,— Հագուստ (երկու փորձով) *սկսեալ 350—450 ֆր.էն՝ նուէր կը տրուի մէկ ֆանթէզի տաբատ կամ կոֆի 450 ֆր.է վեր հագուստներու համար, 3 փորձ, նուէր կը տրուի հայկական կիլոլոլեանի արհեստանոցին մէջ պատրաստուած, դաբնան յատուկ, արժէքաւոր մուշակ վզնոց մը: Ներկայանալ «Ցաւայնի կտրուածով» վերոյիշեալ նուէրներէն չեն օգտուիր մինչեւ 20 տարեկան այն երիտասարդները եւ երիտասարդուհիները որոնք չեն ուզեր խօսիլ ֆրանսերէն չեն կրնար գրել իրենց անուններնը մայրենի լեզուով:*

Բաց է կիրակի մինչեւ կէսօր



ՐԱՔԸ ՏԻԶ

Ջուտ իսպառ քաշուած եւ անիսոնով պատրաստուած հայկական օղին է *ՐԱՔԸ ՏԻԶ*ը: Ջգուշացէք արուեստական օղիներէ որ ձեր ստամոքսը կ'այրէ եւ գիշերները ջուր կը խմցնէ եւ կը վնասէ ձեր առողջութեան: Խմեցէք միայն *ՐԱՔԸ ՏԻԶ*ը որուն անպարտ, կազդուրիչ եւ ախորժաբեր ըլլալը ֆաստաուած է:

Dalakupeian 8 Rue Suffren
Dépôt: 7 Rue de la Paix, Marseille. Tél. Dragon 70—89.

ՀԱՅԵՐՈՒ ԺԱՄԱԴՐԱՎԱՃԱՌ

Ճաշարան ՅԼՕՐԻԱ

31, Rue Monsieur le Prince, Paris (6)

Մէթրօ՝ Օտէօն եւ Սէն Միշէլ

Արեւելեան եւ Եւրոպական ֆեթահուած կերակուրներ :

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

ՀԱՅՐԱՆԴ

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

HAIRATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
17, Rue Damesme, PARIS (13e)

Téléphone : Glacière 15 - 70
Chèque Postal Paris 1678 - 63
(ԵՐԹԵՒԵԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ :—

	ՏԱՐԵԿԱՆ	ՎԵՑԱՄՍԵԱՅ	ԵՒԱՄՍԵԱՅ
Ֆրանսա եւ Գաղութներ	150 ֆրանք	75 ֆրանք	40 ֆր.
Անգլիա եւ Իտալիա	265 ֆրանք	140 ֆրանք	
Ուրիշ երկիրներ	215 ֆրանք	110 ֆրանք	

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
27
ՅՈՒԼԻՍ
MERCREDI
27 JUILLET
1938

ԺԴ ՏԱՐԻ — 14e Année No. 3792

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ՁԱՐԱՇՈՒՔ ԲԱՆԱՁԵՒԸ

Տեսանք որ « Կավկազ»ի խմբագիրը ձախաւեր խաղ մը կը փորձէ, ոչ միայն Դաշնակցականները, այլեւ ամբողջ հայ ժողովուրդը իրար ձգելու համար, զանոնք բաժնելով կովկասեան եւ Թրքահայ հատուածներու: Ցետոյ, իբրեւ հիմ ունենալով նոյն իրականութիւնը — ներկայ Հայաստանը — ամբողջ հայկական խնդիրը կ'ամփոփէ կովկասի մէջ:

Թրքամէտ օրկանին համար՝ մնացեալը երազ է : Ոչ տարադիր բազմութիւնները արժէք ունին, ոչ մինչեւ հիմա կտրուած ճամբան, ոչ ալ ուրիշ հեռանկարներ :

Տեղ մը, Հայտար Պամաթ Հայերու ճակատագիրը կը նմանցնէ իր ազգակիցներուն՝ Լեռնականներու (Տաղստան) ճակատագրին : Կ'ըսէ թէ իրենք ալ ունին հարիւր հազարաւոր հայրենակիցներ, որոնք ակամայ կամ իրենց կամքով զաղթած են օտար երկիրներ, մի՛. դարու երկրորդ կիսուն: Եւ հաշուելով թէ անոնց հազիւ 5-6 առ հարիւրը կրնան երկիր վերադառնալ, կ'եզրակացնէ թէ պառակտուն տարբեր պիտի չըլլայ «հազարաւոր եւ հազարաւոր Հայերու համար: Ազգային տեսակէտով, այս հեռանկարը կրնայ մեծ դժբախտութիւն մը համարուիլ, բայց դրեթէ անկարելի է դարման գտնել ատոր »:

Եւ ապա կ'անցնի իր սիրական բանաձեւին,— անջատել Կովկասը, հիմնուելով Թուրքիոյ բարեկամութեան վրայ, հրաժարելով հողային բոլոր պահանջներէն եւ համակերպելով հաստատուած սահմաններուն :

Ինչպէս բացատրեցինք երէկ, Հայտար Պամաթ այս անգամ իր խմբագրականը հիմնած է «Ճուսաբեր»ի քննադատութեանց վրայ, միեւնոյն ատեն պարզելով ռամկավարներու տեսակէտները:

Թիւրիմացութիւն մը եւս, այս առթիւ :

Հայտար Պամաթ «Ճուսաբեր»ը կը նկատէ «կեդրոնական օրկան Դաշնակցութեան», ինչ որ չի համապատասխաներ իրականութեան: (Դաշնակցութեան կեդրոնական օրկանն է «Դրօշակ»ը, որ չի հրատարակուիր 1933էն ի վեր):

Ի՞նչ նոր բան կ'ըսէ «Կավկազ», պատասխանելով «Ճուսաբեր»ի քննադատութեանց եւ մանաւանդ հարցումներուն: (Կարսի դաշնագիրը, կնքուած՝ Մոսկուայի եւ Ենկիւրիւի մէջեւ, 1921 Հոկտ. 13ին. ուրիշ խօսքով՝ Սահմանային խնդիրը):

Պարզապէս փաստարանութիւն կը փորձէ, խուսափելու համար բուն պատասխանէն .

— « Ոչինչ յաւիտենական է այս աշխարհին մէջ, եւ չկայ դաշնագիր մը որ չկարենայ բարեփոխուիլ: Մենք լիովին կ'ըդունինք կարսի դաշնագրին բարեփոխութեան կարելիութիւնը, բայց կը խորհինք թէ վերաբննութիւն մը այդ դաշնագրին որ համապատասխանէ Կովկասի շահերուն եւ ամէն բանէ առաջ Հայերու շահերուն, կրնայ տեղի ունենալ միայն այն ատեն երբ Թուրքիա ըմբռնէ թէ կովկասեան սահմանագլուխին սրբագրութիւնը անհրաժեշտ է իր իսկ շահերուն համար: Իսկ այս, մեր խորին համոզումով, կրնայ ըլլալ միայն այն ատեն, երբ Թուրքիոյ եւ Ռուսաստանի միջեւ կը հաստատուի ամուր պատուար մը, Թուրքիոյ բարեկամ Կովկասի պատուարը »:

Ուրեմն, ամէն ինչ կախում ունի Թուրքիոյ բարեհաճութենէն: Այսօրուան համար, «հատատուած դոյլիճակին բացարձակ եւ անդարձ ճանաչումը չահակիցներուն կողմէ՝ պարտաւորիչ է ամէն կովկասցի հայրենասէրի որ իրապէս ծարաւի է իր երկրին ազատութեան եւ անկախութեան, առանց յետին մտքի եւ առանց դաղտնի յոյսեր սնուցանելու Ռուսաստանի հանդէպ»:

Ո՛չ մէկ պահանջ՝ Թուրքիայէն: Գոհանանք եղածով եւ փառք տանք: Ապահովենք եւ ամրապնդենք անոր բարեկամութիւնը : Կովկասեան համադաշնակցութիւնը դարձնենք «ամէնէն կարեւոր ազդակը Թուրքիոյ պաշտպանութեան համար»: Եւ այն ատեն , «այն ատեն միայն մեր առջեւ պիտի բացուին հեռանկարներ որ անդոյ են այսօր եւ չեն կրնար գոյութիւն ունենալ »:

Ահա թէ ո՛րքան իրատես են «Կավկազ»ները, երբ երազներ կը վերագրեն ուրիշներու: Մինչդեռ, բուն իսկ այս բանաձեւն է որ քուն կը բերէ ոտքի վրայ: Եւ երբ «Ճուսաբեր» կը հարցնէ թէ ո՞րո՞նք են «Կավկազ»ի վարիչները, «ո՞վ է բուն հեղինակը իր առաջարկին», Հայտար Պամաթ իր արժանապատուութիւնը վիրաւորուած զգալով, քանի մը քարեր կը սահեցնէ եւ կ'եզրակացնէ.

— « Ճուսաբեր » շատ բարձրէն կը նայի մեր վրայ: Մեր սեփական գաղափարները եւ կովկասեան խնդիրները լուծելու մեր եղանակը չեն շահագրգռեր զինքը: Ան մեզի հետ խօսելու որոշում պիտի տայ միայն այն ատեն երբ մենք ուշադրութեան արժանի պաշտպաններ ունենանք: Այն ատեն միայն կը հաւանի ճշդել իր դիրքը: «Աշխարհի ամենագեղեցիկ աղջիկն ալ միայն ունեցածը կրնայ տալ», կ'ըսէ փրանսական առած մը:

Ի՞նչ կրնանք ընել: Սպասենք այն օրուան երբ, անկախ մեզմէ, Ճուսաբեր պիտի հարկադրուի, բուն իսկ դէպքերու ընթացքով, ձգել դիմակը: Լա՛ւ, զինուինք համբերութեամբ եւ սպասենք »:

Ակզբողը կը տեսնէ, ըսել կ'ուզէ «Կավկազ» , վատահ՝ իր դիրքին ամրութեան, եւ տեսակ մը սպառնալիք սահեցնելով:

Արտայայտութեան այս ձեւն իսկ անգամ մը եւս չի՞ բանար վարագոյրը այն դաղտնիքին, որուն եւրին ապաստանած՝ կովկասցիները փրկելու ծրագիրներ կ'որոճան «Կավկազ»ները :

Կը սպասենք մենք ալ, «գինուած համբերութեամբ»:

Այս պարագան մի եւնոյն ատեն ազդարարութիւն մըն է այն միւսներուն համար որոնք Հայաստանի եւ ընդհանրապէս Կովկասի դէպքերուն կը հետեւին միայն լրագրական ճամարտակութիւններով, զոյ եղած դիտելիքներով: Մի՛շտ հետու կրակէն, եւ մի՛շտ իրենց ժանդահար սլաքներն ուղղած Դաշնակցութեան դէմ :

Շ.

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ԱՆԳԼԻԱ ՊԱՏՈՒԻՐԱԿ ՄԸ ԿԸ ՆՇԱՆԱԿԷ ԶԵԽՍԿԱՆ ՏԱՏՆԱՊՐ ԼՈՒԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Անգլիոյ վարչապետը չատ կարեւոր յայտարարութիւն մը ըրաւ երէկ , երեսփ. ժողովին մէջ, չեխական հարցին լուծման մասին: Կառավարութիւնը որոշած է Անգլիոյ իրաւաբարութիւնը առաջարկել, փրակա ղրկելով ներկայացուցիչ մը, որ պիտի օգնէ զերմանական խնդիրը խաղաղութեամբ կարգադրելու: Անգլիոյ ներկայացուցիչը պիտի ըլլայ նախկին նախարար մը, Լորտ Բընսիմէն: Այս առաջարկը ուղղակի ներկայացուած է Փրակայի անգլ. դեսպանին միջոցաւ, որ անցեալ շաբթու երեք անգամ այցելեց Զեխոսլովաքիոյ վարչապետին: Այս վերջինը հանրապետութեան նախագահին հետ խորհրդակցելէ վերջ, պատասխանեց թէ չեխական կառավարութիւնը միշտ հաճութեամբ ընդունած է անգլիական թելադրութիւնները եւ ամէն ջանք կը թափէ, խնդիրը խաղաղութեամբ լուծելու համար: Ցետոյ նախարարական խորհուրդին քննութեան յանձնեց անգլիական առաջարկը եւ որոշուեցաւ հաւանութիւն յայտնել անգլիական առաջարկին :

Անգլիական միջամտութեան կարեւորութիւնը բացատրելու համար, կը բաւէ ըսել որ անցեալ շաբթուան լաւատեսութիւնը չարդարացաւ եւ Լոնտոնի մէջ անձկութեամբ կը հետեւին տաղնապին ելեւէջներուն: Շատ յոյս չկայ որ Հէնլայնի կուսակցութիւնը չափաւորէ իր պահանջները՝ Գերմանիոյ ինքնավարութեան մասին: Զեխական կառավարութիւնը նորէն յայտնեց փոքրամասնութեանց նոր սահմանադրութեան հրատարակութիւնը, ժամանակ չտեղլու եւ ճամբան հարթելու համար: Այս ձգձգումը նպաստաւոր է անգլիական դիւանագիտութեան համար, որ միշտ բարեբար կը նկատէ ժամանակ շահելու քաղաքականութիւնը: Ամէն պարագայի մէջ, Անգլիա եւ Ֆրանսա պիտի ջանան ելք մը գտնել, պատերազմի վտանգները փարատելու համար: Այս առաջադրութեամբ, վճռական դեր պիտի կատարէ Անգլիոյ նշանակած իրաւարարը:

Անգլիոյ կառավարական շրջանակներուն մէջ կը կարծեն թէ Զեխոսլովաքիոյ զերմանական խնդիրը կարելի է կարգադրել ասոհճանաբար, երկու - երեք շրջաններով, փոխանակ մէկ անգամէն վճռելու: Այս ուղղութեամբ բանակցութիւններ կը կատարուին Փարիզի, Լոնտոնի եւ Փրակայի միջեւ, մասնակի կարգադրութիւն մը ձեռք բերելու համար: Ցետոյ, երբ չէն հինդ տարի դինադադար մը հնչեալով, կը յուսացուի վերջնապէս լուծել ամբողջ խնդիրը: Մինչ այս մինչ այն, Անգլիա եւ Ֆրանսա միշտ կը ճնշեն Փրակայի վրայ, որպէսզի կէս ճամբէն ալ անդին անցնի, զոհացնելու համար Գերմանացիներու պահանջները: Երկու կառավարութիւնները կ'ուզեն ելքի մը յանգիլ սեպտեմբերի կէսէն առաջ, երբ կը գումարուի Նացիներու տարեկան համաժողովը, Նիւրընպէրկի մէջ, լսելու համար Հիթլերի դեկուցումը :

**** Զեխական կառավարութիւնը կը հերքէ այն լուրերը թէ վարչապետը պատրաստ է ոչ-յարձակման տասնամեայ դաշնագիր մը կնքելու Գերմանիոյ հետ :*

**** Իտալիոյ քաղաքական շրջանակները ուշադրութեամբ կը հետեւին չեխական հարցին ելեւէջներուն: Իտալիոյ կարծիքով, չորս մեծ պետութեանց խորհրդաժողովը լաւագոյն եղանակն է կարգադրելու չեխական խնդիրը եւ վերատեւել Եւրոպայի վրայ ճնշող անհանդստութիւնը: Ուրիշ խօսքով, Հռոմ հաւատարիմ կը մնայ Մուսոլինիի բանաձեւին,— քառեակ համաձայնութիւն (Անգլիա, Ֆրանսա, Իտալիա, Գերմանիա) :*

**** Զեխոսլովաքիոյ խորհրդարանը նիստի հրաւիրած է օգոստոս 2ին : Փոքրամասնութեանց կանոնադիրը կը կազմէ օրակարգին ամէնէն կարեւոր խնդիրը: Վարչապետը ունկնդրութեան ընդունեց Սլովաքներու Ամերիկայի ներկայացուցիչը: Ցօսակցութիւնները կը չարունակուին միւս ազգութեանց ներկայացուցիչներուն հետ:*

ՀՐԵԱՆԵՐԸ ԵՒ ՍՐԱԲՆԵՐԸ ԻՐԱՐ ԿԸ ՁԱՐԴԵՆ ՊԱՂԵՍՏԻՆԻ ՄԷՋ

Ռումք մը ոչնչոցուց 50 Սրաթներ

Հրեաներու խաւնութիւնէ կրակի տուիցան

Երկուշաբթի օր չատ ծանր դէպք մը պատահեցաւ Հայֆայի մէջ: Արաբ դիւղացիներ իրենց ուղտերով եւ էշերով նարինջ եւ սեխ բերած, խնդուած էին շուկային մէջ, երբ անասուններու տակ պահուած ռումբ մը պայթեցաւ, ահռելի աղմուկով մը: 35 հոգի տապալած փոշեցան: Անասուններն ալ խուճապահար փախան ամէն ուղղութեամբ, կոխկրտելով բազմութիւնը եւ ջախջախելով մեռելներն ու վիրաւորները: Երբ հանդարտութիւնը քիչ մը վերահաստատուեցաւ, ստուգուեցաւ որ 47 Արաբներ եւ հինդ Հրեաներ մեռած, 41 Արաբներ եւ 9 Հրեաներ վիրաւորուած են: Անմիջապէս ուժամեայ հիւանդանոց մը հաստատուեցաւ :

Այս դէպքին վրայ, Արաբները կատղելով խումբեր կազմեցին եւ սկսան Հրեաներ փնտռել: Վրէժխնդրութեան առաջին զոհը եղաւ Մոչէ անուն Հրեայ մը, որ քարկոծուեցաւ: Ուրիշ հրեայ մը սպաննուեցաւ տարճանակով, երրորդ մը կտաքէն վար առնուելով խոշտանգուեցաւ, կառքն ալ կրակի տրուեցաւ : Բազմաթիւ անցորդներ յարձակման ենթարկուեցան քարերով եւ բիրերով : Բոլոր թաղերուն մէջ խանութները փակուեցան աճապարանքով, մինչ ոստիկաններ եւ պինուորներ, ինչպէս եւ նաւաշներ ցուցարարները զսպելով, իրենց տուները կը վերադարձնէին հրէական թաղերուն մօտ հաւաքուած Արաբները: Իրիկունը անգլիական պինուորները չղթայ կազմեցին չուկային չուրջը:

Միեւնոյն օրը ուրիշ դէպքեր ալ պատահեցան Պաղեստինի դանազան մասերուն մէջ: Անմիջապէս պաշարման վիճակ հրատարակուեցաւ Հայֆայի չրջանին մէջ: Հակառակ ձեռք առնուած միջոցներուն, արաբ ամբոխըկրակի տուաւ բազմաթիւ հրէական խանութներ: Այս առթիւ սպաննուեցան 22 հոգի: Բազմաթիւ կառքեր ալ կրակի տրուեցան: Ինը հրդեհներ ծագեցան արաբական թաղին մէջ: Հրշէջները անհրաժեշտ միջոցներէն զրկուած ըլլալով, քանի մը ժամ ձգնեցան, հրդեհները մարելու համար: Հաղորդակցութիւնները խզուած են :

(Աւարտը շարունակութեան կառղայ Դ. Էջ)

ՕՐԸ ՕՐԻՆ

« ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ»...

Շաբաթ գիշեր, Սալ Ժան կուժոնի մէջ, « Յ. Թումանեանի երեկոյ »ին ստիպուս Ս. Վրացեան, ի մէջ այլոց, յիշեց «Ամենայն Հայոց Բանաստեղծ»ին այցելութիւնը Պոլիս : Այս առթիւ կ'ուզեմ փոքրիկ լրացում մը կատարել :

Ինչպէս ծանօթ է, Թումանեան Պոլիս եկաւ խորհրդային կառավարութեան հրաւիրագով՝ Հօկ կազմակերպելու համար, եր. Թաղիաճոսեանի հետ :

Ես, իբրեւ ՀՕՄի կեդր. վարչութեան ատենադպիր, կապ կը պահէի իրենց ու Հօմի միջեւ : Թումանեան վախճեցաւ մեր վարչութեան հետ հանդիպում մը ունենալ, տեղեկանալու համար թէ... ի՞նչ կ'ընէ Հօմը: Զարմացայ, ի հարկէ, բանի որ Հօկ կազմելու համար Պոլիս ուղարկուած ամէն մը անհրաժեշտ ծանօթութիւնները տուած պիտի ըլլային երեւանի վարիչները, որոնց կանոնաւորաբար դրամ, պլիւր ու հագուստ կ'ուղարկէին Շահվէրտեանի միջոցաւ :

Ինչ որ է: Թումանեանի պատուիրակութեան ու մեր կեդր. վարչութեան հանդիպումը տեղի ունեցաւ Ագգ. Մատենադարանի սրահը: Ընդարձակ զեկուցում մը տուի Հօմի մասին,— կազմ, թիւ, առաքման բանակ ու տեսակ, ներքին համերաշխութիւն եւայլն: Կը նկատէի, որ Թումանեանի դէմքը հետզհետէ կը պայծառանար : Երբ վերջացուցի, Թումանեան, որ առակնկալի եկած մարդու մը երեւոյթն էր առած, — բա՛, ըսաւ, ուրեմն այսքան լաւ կազմակերպութի՞ւն ունէք դուք... Զասէ՞ք՝ մենք զուր ճանճրոյք ենք յանձն առել միջնեւ Պոլիս գալու... հը՞, — դարձաւ Թաղիաճոսեանին — ի՞նչ ես ասում, երուա՛զդ...

« Երուա՛զդը, որ բաւական «խելօք » մարդ էր, «ոչինչ չասաց», ի հարկէ : Չգիտեմ թէ ինչ ու Թումանեանը ի՛նչ ըսին, երբ երեւան վերադարձան: Գիտեմ, միայն , որ այդ «գեղեցիկ կազմակերպութիւնը» ջրեջեցին օր մը, անոր փոխարէն կազմելու համար Հօկը: Ո՛չ,— ... «Փրանֆօ - Արմենիէն» ընկերակցութիւնը :

Ասո՛ր ի՞նչ կ'ըսէիր, արդեօք, բոլոր մեծ ու պզտիկ «երուան··զդ»ները, եթէ ողջ ըլլային :

Տամ նաեւ ուրիշ «մանրամասնութիւն» մը :

Թումանեանի գալէն առաջ էր: Օր մը լուր առինք թէ Հօմի կողմէ Հայաստան կատարուած բոլոր առաքումներուն հօտանաստուածութիւնը առ հարիւր վրաստան վար կը դնէ իբրեւ ... մաքս :

Այդ շրջանին Հայաստան նեղ օրեր կ'ապրէր: Սեւ հացն իսկ օրհնութիւն էր: Գացեր էի Շահվերտեանին հետ, առաքման գործով մը: Առիթը օգտագործեցի՝ ստուգելու համար թէ ինչ՞ղ է «մաքս»ի պատմութիւնը :

Շահվէրտեան բանի մը րոպէ մտածեց եւ ըսաւ .

— Ճիշդ է որ մաքս նիմ վճարում Խորհրդատանին :

= Ամերիկո՞ւն ալ :

— Այո՛:

= Ինչ համեմատութեամբ :

— **100** պարկ ալիւրից **75** պարկը մըտնում է վրաստան :

= Բայց, չէ՞ որ Խ. Հայաստանը եւս Խորհրդային Միութեան կը պատկանի , եղբայր հանրապետութիւններ են : Հայաստանի կառավարութիւնը որ եւ է դիմում չը՞ն ըրած այդ մասին: Սոված երկի՛ր, որուն ալիւրն անգամ կ'իւրացնեն ... եղբայրաբար :

— Անօգուտ է ... յետոյ, գիտէք, մենք շատ ձայն չունինք :

= Նոյնիսկ մեր ալի՞ւրը պաշտպանելու...

Շահվերտեան լռեց: Իր լռութիւնը բաւական պերճախօս էր արդէն:

Ու լռեցինք նաեւ մենք, «Հայաստանի թշնամիներս», նոյն թափով շարունակելով մեր աշխատանքը՝ հարիւր պարկ ալիւրէն գոնէ **25**ը Հայաստան հասցնելու ցանկութեամբ :

Այսքանն ալ, հազիւ այսօր հրապարակուած, իբրեւ «անիշան» փաստ մը մեր «Ռեոի»ին — « մեծագո՛ր Ռուսաստանին » — հայասիրութենէն: Ռուսաստանին, որ, ցարական ըլլայ թէ սբալինեան, « սարի պէս կանգնած է մեր մէջիս», Թումանեանի իսկ բացատրութեամբ (Անոյշ):

Մէջիմ՛ն,— այո՛: Եւ մոյկը բաշած իր ոտքին...

Ու եթէ կրնաս շնչէ՛, Հայաստանդիմ, որ «Զարչարանք» մը դարձար ոչ միայն կիլիկիոյ մէջ, այլեւ Արաբսի ափերուն վրայ ...

ՍՍՍԵԱՑ ՏՂԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՐԴԻՆ, ԳՈՒՄԱՐՈՒՄԸ եւ ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

« Խ. Հայաստան»ի վերջին թիւերէն (յուլիս 16) կ'իմանանք թէ , յուլիս 12 —14 երեւանի մէջ բացուած է Հայաստանի Գերագոյն Խորհուրդի առաջին նստաշրջանը: Վերջին նիստին մէջ (յուլիս 14) Գերագոյն Խորհուրդը անհատական քուէարկութեամբ միաձայն ընտրած է նոր կառավարութիւնը հետեւեալ կազմով.— Գործավարներու խորհրդի նախագահ (վարչապետ) Արամ Սերգէյի Փիրուզեան, փոխ-վարչապետ՝ Ռիպա Խալիլօղլի Վելիբէկով, պետական ծրագրի յանձնաժողովի նախագահ՝ Արմենակ Կիւրեղի Շեկոյեան, ներքին գործերու ժողովրդական գործավար (Զեկայի նախագահ) Վիկթոր Վասիլեւիչ Միլորոսեան, հողագործական գործավար՝ Հայկազ Յովհաննէսի Մարջանեան, արուեստի գործավար՝ Նիկոլայ Խաչատրի Ղուկասեան , թեթեւ արդիւնաբերութեան գործավար՝ Գուրգէն Յակոբի Յովհաննէսեան , լուսաւորութեան գործավար՝ Բալաբեկ Գրիգորի Մարտիրոսեան, առողջապահութեան գործավար՝ Բարկէն Աչոտի Աստուածատրեան, եղմտական գործավար՝ Արտաւազդ Աւագի Բունիաթեան, առեւտրական գործավար՝ Արտաչէս Աբրահամի Աբրահամեան, տեղական արդիւնաբերութեան գործավար՝ Թուրքէն Բագրատի Ալիղրիկեան, անտառային գործավար՝ Գուրգէն Տիգրանի Գէորգեան, դատական գործավար՝ Սաֆար Հիւսէյինզատէ Ալիմամեատով, հանրային անտառութեան՝ Աւետիս Թովմասի Մուրադեան, ընկերային ապահովութեան՝ Զօրապետ Ղուկասի Գալստեան, արուեստի վարչութեան պետ՝ Գարեգին Յակոբի Ազրալեան, ՅՍՀՄ կապի ժողովրդական գործավարութեան հայկական Խ. Ս. Հ. լիազօր՝ Եղիշէ Ղահրամանի Յովսէփեան, ՅՍՀՄ մթերումներու ժողովրդական գործավարութեան հայկական լիազօր՝ Աղասի Ենովքի Զարխօղլեան :

35·000 ՄԱՐԶԻԿՆԵՐ թափօր մը կազմեցին կիրակի օր, Մոսկուայի կարմիր Հրապարակին վրայ, Սթալինի առջեւ, որ կը դիտէր Լենինի դամբարանին տանիքէն : Օրուան ճառերուն բնաբանն էր,— «Եթէ պատերազմ ծագի վաղը»: Ռոսարիեւ, Երիտասարդական Միութեանց նախագահը, իր ճառին մէջ չեչտեց թէ արտաքին գործավարը «պարզապէս ճամբեց» ճափոնական դեսպանը, երբ ան կը սպառնար զէնքով լուծել Մանչուրիոյ սահմանավէճը: Ուստի մը սահմանապահներ, որոնց առջեւէն կը տարուէր եժովի կենդանապիրը, կը ներկայացնէին լրտեսներու մուտքը խորհրդային սահմաններէն ներս: Ուրիշ խումբի մը նշանաւախտակին վրայ արձանագրուած էին սա բառերը.— «Մենք չենք ուզեր կռուիլ, բայց պատրաստ ենք կռուելու»: Յոյզին կը մասնակցէին բոլոր հանրապետութիւնները: Ամէնէն վերջը հսկայական բուրգ մը կազմուեցաւ , մասնակցութեամբ 700 մարզիկներու :

ՀԱՑԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՅԵՐԸ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՄԷՋ - *Armenians in India*

(Սկզբնական շրջանէն մինչեւ ներկայ օրերը: Հեղինակ՝ Մեսրովբ Ց. Սեթեանց)

(Գ. եւ վերջին մաս)

ԴՊՐՈՑԸ.—Կալկաթայի մէջ ամէնէն հին եկեղեցին որ չինուած է 1724ին հայկական Նազարէթ եկեղեցին է: Ներկայիս տարեկան եկամուտը 12.500 ռուփիին կ'անցնի:

Հնդկաստանի մէջ ամէն քաղաքէ աւելի Կալկաթայի մէջ է որ կեդրոնացած է հայութիւնը ներկայիս: Հազար հոգիի չափ են, ունին եկեղեցի մը, ճեմարան մը, տղոց եւ աղջիկներու ցերեկեայ դպրոց մը, աշխատանոց մը եւ ակումբ մը: Նախկին Հայերը ըլլալով աւելի պահպանողական եւ նախանձախնդիր ազգային աւանդութիւններու պահպանման համար, կրցած են դիմադրել ձուլումի վտանգին չատ մը սերունդներ: Հի - մա, սակայն նոյն իսկ հայերէնը կը խաւարի: Թէեւ հայկական գաղութը կը մնայ իբրեւ ուրոյն եւ մեկուսի գաղութ մը:

Կալկաթայի մէջ առաջին հայկական դպրոցը բացուած է 1798ին, Թոքատցի Ցարութիւն Գալուստի կողմէ, որ զայն վարած է 25 տարի:

Աստուածատուր Մուրատխանն է որ իսոյ ազգային ճեմարան մը հիմնելու գաղափարը յղացած է 8000 ռուփիի կորիզ մը կտակելով: Մնացական Վարդանի եւ «Մարդասիրական Ընկերութեան» ջանքերով կորիզը բարձրացած է եւ այսօրկալկաթայի ճեմարանը հայ իրականութեան ամէնէն չատ նպաստաւորուած դպրոցներէն մէկն է:

ՄԵՍՐՈՎԲ ԴԱՒԻԹ ԹԱՂԻԱԴԵԱՆՑ Հնդկահայ մտաւորական ամէնէն կարկառուն դէմքերէն մէկն եղած է, բանաստեղծ, խմբագիր, հեղինակ, մանկավարժ: Բացած է տղայոց եւ աղջիկներու ուսումնարան մը որ վեց տարուան կեանք ունենալէ վերջ փակուած է: Խմբագրած է «Արարատի Հայրենասէրը», հայերէն գրական թերթ մը: Ունի բազմաթիւ հրատարակութիւններ:

Կալկաթայի հարուստ բարերարներէն կը յիշուի Մառի Պապա Ճօնս, որ ժառանգ չունենալով իր հարստութիւնը կտակած է բարեգործական եւ դպրոցական հաստատութիւններու, զի - խաւորաբար Նոր Նախիջեւանի:

19րդ դարու Կալկաթայի ամէնէն հարուստ վաճառականներէն մէկն էր Ցարութիւն Աբգար, հիմնադիրը «Աղդար եւ ընկ.» հաստատութեան: Կրօնասէր եւ հայրենասէր, իր ծննդավայր Ջուղայի եկեղեցիին առատ ձեռն նուէրներով օժտած է, բացած է նաեւ 1843ին դպրոց մը Ջուղայի մէջ:

Հայերը Տաffիայի մէջ կը համարուին նախակարապետները կանեփի առեւտուրի 19րդ դարու կիսուն: Քաղաքին առեւտուրը գրեթէ անոնց ձեռքը կը գտնուէր: Ինչպէս ուրիշ առեւտրական կեդրոններու մէջ, հոս ալ հայկական կարեւոր գաղութ մը կազմուեցաւ, ներկայիս սակայն քանի մը ընտանիք միայն մնացած է:

ՀԱՑԵՐԸ ՄԱՏՐԱՍԻ ՄԷՋ.— Մատրասի մէջ հայկական գաղութ մը ծաղկեցաւ 17րդ եւ 18րդ դարերուն: Այսօրուայ հարուստ վաճառականները ծանօթ են իրենց գթասրտութեամբ, եւ նախանձախնդիր հայերէն դաստակերպական գործակալութեան զարգացման Հնդկաստանի մէջ:

Մեծ հայրենասէրներ, անոնք դի - մեցին Ռուսիոյ Կառավարիչ Բ.ի Հա - յաստանը մահմեդական (պարսկա - կան) լուծէն ազատելու եւ իր գերիչ - խանութեան տակ առնելու: Երկու մի - լիոնատէրներ ուղեցին իրենց միլիոն - ները ռուսական կառավարութեան տրամադրութեան տակ դնել ծրագր - ուած պատերազմին համար, բայց ծը - րագիրը երբեք ալ չհասունցաւ:

Մատրասի հարուստ բարերար եւ ազգասէր վաճառականներէն կը յիչ - ուին Զուղայեցի խոճա Պետրոս Ոս - կանը: Ուրիչ հարուստ վաճառական մը Մատրասի մէջ, Աղա Շամիր Սուլ - թանուեան, որ իր ղրկած արժէքա - ւոր մէկ աղամանդին փոխարէն վրաց Հերակլէս Բ.էն ստացած է իշխան տիտղոսը եւ 1775ին ոսկի քաղաքը (Թիֆլիզի մօտ) իրեն եւ իր արու զաւակներուն:

Աղա Սամուէլ Մուրատ, նմանա - պէս Մատրասի մեծահարուստ վաճա - ռականներէն մէկը, բայց որու ճշմա - րիտ ազգասէր Հայու սիրտը կը բա - բախէր իր ազգի զաւակներուն մտա - ւոր բարձրացումին համար: Երբ 1816- ին մեռաւ, հարստութենէն մեծ դու - մար մը Թողուց Եւրոպայի մէջ հայ - կական դպրոց մը բացուելու Վենե - սիկեան հայրերու մատակարարու - թեան տակ: 1827ին Հայրերը ստա - ցան 640.500 ռուփի (1.600,000 ֆր.) եւ 1834ին Փառավայի մէջ բացին դպ - րոցը զոր 1846ին փոխադրեցին Փա - րիզ: Ճեւով, 1870ին Ֆրանքֆուրթեան պատերազմին պատճառաւ փո - խադրեցին Վենետիկ ուր նման հաս - տատութիւն մը բացուած էր 1836ին, բարերար եղուարդ Ռաֆայէլի կա - կով, նմանապէս բնիկ Ջուղայեցի հնդկահայ մեծ-հայրենասէր հարուստ վաճառական մը եւ Սամուէլ Մուրա - տի անունը: Մուրատեան վարժա - րանը 1928ին վերաբացուեցաւ Փա - րիզի մէկ արուարձանին՝ Մէվրի մէջ: Այս հաստատութեան դերը կրկնակ է ներկայիս: Նախ աշակերտներուն կու - տայ բարձրագոյն ուսում, բայց մա - նաւանդ կը լեցնէ ահաւոր անդունդ մը տալով Եւրոպայի հայ նոր գաղու - թի զաւակներուն հայեցի դաստիա - րակութիւն:

Մատրասի հայրենասէր հայութիւ - նը մեծ նուաղ սպառած է մտաւոր զարգացման: Գրիգոր եւ Սէթ Սէմ եղ - բայրները 19րդ դարու սկիզբը իրենց ծննդավայր Ջուղայի մէջ բացած են հայկական դպրոց մը:

Հնդկաստանի առաջին հայերէն հր - րատարակութիւնը սպասած է Մատ - րասի մէջ, 1772ին:

Հայերէն առաջին լրագիրը «Աղդա - րար»ը լոյս տեսած է 1794ին Մատրա - սի մէջ, Տէր Ցարութիւն Շմաւոնի խմբագրութեամբ: Ամսաթերթ մը, որ տեւած է երկուքուկէս տարի: Բա - ցի դրական յօդուածներէն, թերթը կուտար օրուան դէպքերը, ունէր ծա - նուցումներու բաժին: Թերթը սկսած առնելը 28 բաժնորդ միայն ունէր: Այնուհետեւ Կալկաթայի, Մատ - րասի եւ Պոմպէյի մէջ 1794 - 1863, 11 հատ հայերէն թերթեր խմբագր - ուած եւ մէկ քանի տարուան կեանք ունենալէ վերջ փակուած են:«Հայերը Հնդկաստանի մէջ» դրքին հեղինակը, Պ. Սեթեանց, ցաւով կը յայտնէ թէ ներկայիս որ եւ է հայերէն թերթ չի խմբագրուիր Հնդկաստանի մէջ, հոն ուր փոքր համայնքներու քաղաքական դոյութիւնը նժարին մէջ է հիմա՝ «Հնդկաստանը Հնդիկներուն» նշանա - բանի պատճառով:

Մատրասի մօտ կը գտնուի Փորթուկալեան քաղաք մը որ կը կոչուի Մի - լափոր կամ Սան Թոմէ: Այս քաղաքին մէջ Հայեր կը գտնուէին 17րդ դարու սկիզբէն, 1517էն ի վեր Փորթուկալ - ցիներու կը պատկանէր քաղաքը, սա - կայն 1662ին դրաւուեցաւ Կոլկոնտայի Խաչատուր Ապտուլլահ Քաթիպ Շահի կողմէ, որ անմիջապէս Մարկոս Երի - զատ (Հուրիզատ) անունով Հայ մը քաղաքին կառավարիչ նշանակեց:

Մարկոս Երիզատ բազմաթիւ նո - կարժէք քարերով մատանիներ եւ նո - մակ մը ղրկեց Անգլիոյ Զարլզ Բ. թա - գաւորին խնդրելով որ փոխարէնն նաե մը ղրկէ: Ցայտնի չէ թէ խնդիրքը կատարուեցաւ:

Vestiges of old Madras (Vol. II. p.107) գրքին մէջ կ'ըսուի թէ 1710ին Հայերը կասկածի ենթարկուեցան թէ Սան Թո - մէ քաղաքին վրայ ծրագիրներ ունէ - ին: Բազմաթիւ տուներ գնած էին հոն եւ Ֆրէյզըը կը հաւատար թէ կ'ու - զէին առեւտրական կեդրոն մը հաս - տատել եւ Սան Թոմէն նաւահանգիստ ընել: Կասկածները կը ծանրանա - յին գլխաւորաբար խոճա Սաֆուրի վրայ:

Թոմաս Քանան եղած է առաջին Հա - յը որ զայած է հարաւային Հնդկաս - ան 780 թուականին: Վասքօ տէ Կա - մայէ ճիշդ երեք դար առաջ: Զբա - ղած է մարմարի եւ համեմի առեւ - տուրով, դիզելով մեծ հարստութիւն:

Պ. Մ. Սեթեանցի դիրքը կը վերջա - նայ «Հնդիկները Հնդկաստանի մէջ» ուսումնասիրութեամբ մը, որու գլ - խաւոր աղբիւրն է Չորրորդ դարու Ա - ւարի Զենոբի կամ Զենոբ Գլակի «Տա - րօնի պատմութիւնը», ուր պատմաբա - նը կ'ըսէ թէ հնդիկ գաղութ մը դո - յութիւն ունեցած է Հայաստանի մէջ, Քրիստոսէ առաջ երկրորդ դարուն: Երկու հնդիկ իշխաններ փախած են Հայաստան, իրենց թագաւորին դէմ ծրագրած դաւադրութիւնը մէկզեղ ե - լած ըլլալով: Հոն Վաղարշակ թագա - ւորը (149 Ք.Ա.) ընդունած եւ ա - պաստան շնորհած է Տարօնի մէջ: Շի - նած են քաղաք մը եւ կոչած Վիշապ: Ցետոյ Աշոիչատ գացած են ուր գե - տեզած են այն աստուածները որ կը պաշտէին Հնդկաստանի մէջ: Հեթա - նոս Հայաստանի մէջ հնդիկ գաղութը բազմացած է մինչեւ Հայաստանի քը - րիստոնէութիւն ընդունիլը, երբ Գրի - գոր Լուսաւորիչ քանդեց բոլոր հեթա - նոս տաճարները եւ տեղը չինեց Մշոյ ծանօթ Ս. Կարապետը: Մաս մը հն - դիկներ ընդունեցին քրիստոնէութիւ - նը եւ ըստ Զենոբ պատմաբանի 5050 հնդիկ, այրեր եւ երեխաներ մկր - տուեցան: Հնդիկները յետոյ ձուլ - ուեցան տեղացի հայ քրիստոնեանե - րուն հետ:

Ինչպէս ըսինք այս յօդուածին ըս - կիզբը, «Հայերը Հնդկաստանի մէջ» դիրքը գրուած է մեծ բարեխղճու - թեամբ: Անձի մը արժեւորումը եւ դէպքի մը ստուգութիւնը ապացուցա - նելու համար՝ հեղինակը երեւան հա - նած է հայերէն թէ օտար բազմաթիւ հին եւ թէ նոր փաստաթուղթեր: Եր - բեմն միայն անցողակի կամ առօրեայ մտահոգիչ վերաբերող մանրամասնու - թիւններ կը խճողեն էջերը, ինչպէս օ - րինակ ուսուցչի մը կամ աշակերտի մը հայերէն կամ անգլիերէն լեզուին պակաս կամ սխալ ծանօթութեան օ - րինակը:

Պ. Մ. Սեթեանց թանկագին ծառա - յութիւն մը մատուցած է, մեզի ծանօ - թացնելով հին գաղութի մը պատ - մութեան անցեալը եւ ներկան: Հին այդ գաղութը իր քահկին հետ միասին մտածեր է նաեւ իր ազգին բարելաւման մասին: Ինչքա՜ն հոգա - ծութիւն կ'արտացոլան էջերէն: Հեղի - նակը գուրգուրանքով պրպտեր է պատմութիւնը եւ հպարտութեամբ լոյս աշխարհ հաներ է հայ դէմքերը եւ անոնց գործերը: Հայ ազգային պատմութեան ամրակառոյց չէնքին մէկ սիւնը կրնայ համարուիլ հնդկա - հայ գաղութը:

ՄԱՆՈՒԿ ՄԵՍՈՒՏՈՒԵԱՆ

ՊՏՈՑՏ ՄԸ ԵԻՍ ՀԱԼԷՊԻ ՄԷՋ

Երրորդ եւ վերջին պատյտ մը՝ Հա - լէպի չուրջը:

Թիլ ԱՊԵԱԴ.—(Ճերմակ Բլուր) Այս դիւղաքաղաքը ինչպէս միւս նորակա - ռոյց հայկ. դիւղերն ու քաղաքները, յետպատերազմեան հայկական ար - տադրութիւն է: Բնակիչները կար - մունջկիներ են: Կը զբաղին առաւելա - պէս երկրագործութեամբ եւ բանջա - րամշակութեամբ, մաս մըն ալ խա - նութպանութեամբ: Գիւղին ծայրը չինուած է դպրոցը, ազիւտ: Հիմէն սկսեալ մինչեւ պատին վերջանալը պարզ հողէ աղիւսէ բարձրացած է. քար գոյութիւն չունի: Տեղացիներուն տուներն ալ այս կերպով չին - ուած են, չատերուն տուները դմբէթա - ւոր են, զարճեալ աղիւսէ. արաբա - կան ոճով:

Հոս Հայերը չէնոցային եւ ծաղկե - ցուցին պարտէզներով եւ բանջարե - ղէնի ածուներով. այս անապատին մէջ անծանօթ է եղած կանանչութիւ - նը ժամանակին, իսկ այսօր, բոլո - րովին փոխուած է պատկերը: Կը գտնուի ճիշդ Թրքական սահմանա - գլուխին վրայ: Երկու երկիրները ի - րարմէ կ'անջատուին իրրեւ սահմանա - գլուխ երկաթուղիի գիծով մը, որ կ'երկարի մինչեւ Մարաին եւ Մծբին:

Վաղող գետակ մը ունի բաւական խոշոր, սակայն դիւղացին չի խմեր, կը գործածեն հորի ջուր: 1—2 մեթր երբ փորեն ջուրը արդէն իսկ երեւան կուգայ: Հայ գիւղացին կրցած է իր տնտեսութիւնը չահել, չնորհիւ իր չարքաշութեան եւ ձեռներէցու - թեան: Ունին լծկան եզ, էշ եւ կաթնա - տու կով: 10-20 տուն եւս Մարտին - ցի Այսորիներ կան: Ունի կարաժ մը, պանդոկ մը, սափրիչ եւ մսագործի ալ երկու խանութներ:

Հոս ամէն օր ականատես կ'ըլլաք նախիրի հօտին երթուդարձին իր ա - լօսատեղին: Հօտապետը ամէն առտու կանուխէն կ'ելլէ, ճիտէն կը կախէ խոշոր հացի տոպրակ մը հաւաքելու համար տուներէն իր ամենօրեայ հա - ցը: Կովերուն բառաչը, ոչխարներ - ուն իրիկուն աշխարհ իրար կ'անցը - նէ ստեղծելով համայիլ տեսարան մը: Ամբողջ գիւղը փոշիի ամպով մը կը ծածկուի: Կաթն ու մածունը ինչպէս նաեւ կարագը առատ են: Հայ գիւ - ղացին հիւրասէր է մեծապէս հա - մար քաղցի հիւրը:

ՃԱՐԱՊԼՈՒՍ (Կարկեմիչ).— Հակա - ռակ իր նախկին ծաղկեալ եւ բարգա - ւած վիճակին, քան տարի առաջ բո - լորովին լքուած գիւղ մըն էր այս տե - ղը կայարանէն 15 վայրկեան ներս: Այսօր բոլորովին փոխուած է նկա - բագիրը այս քաղաքին: Քաղաք կ'ը - սեմ, որովհետեւ գիւղը յիշեցնող ոչ մէկ նմոյշ: չինուած է այս ալ մէկ կողմէ երկաթուղիի եւ միւս կողմէ ալ Ցրաթի վրայ (Եփրատ): Պատելով այս նորակառոյց քաղաքին չուկաներն ու փողոցները, կը զարմանաս թէ մարդիկ ինչպէս կրցեր են այս կարճ ժամանակամիջոցին մէջ չինել դոյ կամարակապ քարաչէն պէտէսթէնները, խանութներ մանիֆաթուրայի եւ այլ իրեղէններու:

Հանրային պարտէզը հիացում կը պատճառէ դիտողին: Ճիշդ մէջտեղը կանգնած է ճերմակ, ղորկ քարերէ չինուած յիշատակարան մը:

Ունի երկու եկեղեցի եւ դպրոցներ. մին՝ Ազգ. եկեղեցի, իսկ միւսը հայ կաթոլիկ:

Բնակչութիւնը Ուրֆացի եւ Պիրէ - ճիկցի են: Թէեւ ուրիշ քաղաքացի - ներ ալ կան, սակայն անոնք փոքր խիւ մը կը կազմեն:

ԱՐԱՔ - ՓՈՒՆԱՐ.— Դարձեալ եր - կաթ ուղիի գիծին վրայ, նորակառոյց գիւղաքաղաք մը, չատ սիրուն, նոր նոր խանութներ, փոքրիկ պէզէսթէնի նմանող չուկայ, բոլորն ալ քարաչէն - ատնք ալ Ուրֆացիներ են, բաւական կարեւոր կեդրոնավայր մըն է. ունին նորաչէն եկեղեցի մը եւ դպրոց, ո - րուն ուսուցիչները կեդրոնէն՝ Հալէ - պէն կը կանչուին:

Երբ կը խորհինք այս աշխատու - թեանց, թափուած քրտինքներուն, զոհողութեանց եւ ամէն տեսակ ջա - ւարութեամբ մէկտեղ եկած սա հա - կայական հարստութեանց վրայ, ո - րոնք միայն քանի տարուան կեանք ունին, անզամ մը եւս կը հիանանք այս ժողովուրդին ստեղծագործելու տաղանդին եւ համբերատար աշխա - տանքին վրայ: Այս ժողովուրդը դի - տէ գաղտնիքը անապատները բուրաս - տաններու վերածելու, դիտէ մարդ - կութեան ծառայելու եւ դայն բարձ - րացնելու խորհուրդը: Եւ տակաւին կ'ըսեն թէ «հրաչքի դարը անցած է»: Հրաչք է այս ժողովուրդը ինքնին, որ կը գործէ հրաչալիքներ:

Այս չրջանները մեր բնակութեան չրջանին մենք մօտիկէն տեսանք արդիական Թուրքն ու Թրքուհին, որոնք դարձեալ կը բնակէին խարխուլ եւ աղտոտ տուներու մէջ. իրենց առօր - եայ գնումները գարձեալ կ'ընէին հայկական չրջաններէն, նոյն աւերակ Թուրքիան, նոյն մեղկ եւ ծոյլ Թուր - քը. տնտեսական չարժումը Թուրքիոյ մէջ որուն մասին կը խօսին եւ հնդա - մեայ ծրագիրներ կը մշակեն, կար - ծես այս չրջաններու համար չէ, ո - րովհետեւ ոչ մէկ լուրջ աշխատանք տեսանք մենք այս չրջաններու մէջ, վկայ՝ այն, որ Սուրիոյ այս կողմը երբ նոր նոր դիւղեր եւ քաղաքներ կը չինուին, անդին խրճիթի մը չինու - թիւնն անգամ չտեսանք բացառու - թեան համար:

ԿԵԱՆՔԸ ՆԻՍԻ ՄԷՋ

ՆԻՍ.— Նիսի հայ գաղութը կը բաղ - կանայ մասամբ հիմնի ի վեր տեղա - ւորուած հարուստներէ, որոնք իրենց պատանին մէջ ամփոփուած են, ո - մէ մասով պատերազմէն վերջ եկած աշխատաւորներէ, որոնք ինքնաբա - ւարին:

Ներկայիս հայ եկեղեցական գործ - ունէութիւն կը «մարշէ»ի նպաստա - ւճառներ կամ արհեստաւորներ(դեր - ձակ, կօշկակար, տատձագործ եւն.). վերջին տարիներուն անգործութենէն բաւական թիւով հայրենակիցներ նե - ուեցան. մօտ մէկ տարիէն ի վեր հայ անգործներ եւս սկսած են գործազր - կութեան նպաստ ստանալ:

Հայ բնակչութեան մեծ մասը կեդ - րոնացած է Մաուրէնի թաղամասը, ուր ունին Պ. Զամքոչեանի նուիրատուու - թեամբ չինուած մատուռ մը, Ս. Աստուածածին, եւ նախակրթարան - մանկապարտէզ մը:

Այս նախակրթարան - մանկապար - տէզը իր գոյութիւնը կանոնաւորա - պէս կը չարունակէ տասնեակ մը տա - րիներէ ի վեր: Ունի դպրոցական կա - նոնաւոր պրասեզոններ, իրագիտա - կան, աչխարհագրական քարտէզներ եւ դասնակ մը: Աչէն տարի դպրոցս կան կանոնաւոր տարեչրջան բա - րլրած է: Իր հասոյթի աղբիւրներն են աչակերտներու ամսաթոշակները, Հ. Կ. Եղեցիին նուէրները, հանդէսները եւն.: Եկեղեցի - դպրոցը կը մաս - կարարուի թաղեցիներու կողմէ ընտ - րուած հոգաբարձութեան մը կող - մէ, որուն պաչտօնավարութեան չր - ջանը կը տեւէ մէկ տարի: Ի պատիւ իրենց, պէտք է ըսել որ, ամէն տա - րի ընտրուած հոգաբարձուները, ա - մէնքն ալ թաղեցի աչխատաւորներ, ազնիւ նախանձախնդրութեամբ կը ջանան իրենց եկեղեցին միշտ բարձ - րարժէք եւ դպրոցն ալ կանգուն պա - հել, առանց պիւտճէի անհատասրա - կչութեան: Հոգաբարձութեան կազ - մին կը գտնուէր Պ. Զամքոչեան, Հրաման ստացած էր ճեմարան հիմնել արեւը չծագած: Աւելորդ կը նը - չանակէր որ պանդոկէն պիտի մեկնէր ամէնէն ուչը ժամը չորսին, ուրեմն իր վերջին դիչերը Թանկային հետ ան - ցընելու ծրագիրը ջուրը պիտի իյնար:

Եթէ օդանաւին մէջ քնանալու չնա - րաւորութիւն ըլլար հիմա, անկողին մտնելու գաղափարէն պիտի հրաժա - րէր, բայց չատ աղէկ գիտէր որ կա - րելի չէր քնանալ երբ օդանաւը Ատ - լանտեան լեռները կտրէր: Ու քանի որ Պոլիս հասնելէն ի վեր կանոնաւոր քուն քաչած չէր, խորհեցաւ թէ ան - հրաժեչտ էր մէկ, երկու ժամ հան - դստանալ՝ ճամբորդութեան սկսելէ առաջ:

Ժամացոյցին նայեցաւ: Ինչին քա - ոորդ կար արդէն: Թանկան կրպակին մէկնելը էր ժամը ութին, խոստանալով որ առտն պիտի երթար, մայրիկին պի - տի նայէր ու պիտի վերադառնար ու - խուէսին: Բայց ինչո՞ւ կ'ուչանար: Իրենց վերջին դիչերն էր ու ամէն մէկ վայրկեանը թանկագին: Ժամացոյցը կը չարաչնար դանդաղ, բայց անո - ղոք կանոնաւորութեամբ:

(Շար.)

Առանց խորհրդածութեան մէջ մտ - նելու մենք միայն մեկ իրականու - թիւնը դրի առինք, խղճմտօրէն եզրա - կացութիւնը թողլով անոնց, որոնք սիրտ ունին եւ դիտեն դէտ տրամա - բանել:

Անուշտ մենք այս հակիրճ տեղե - կութիւնները տալով չկրցանք պատ - կերացնել ուրիշ վայրերը,— Րէս խ. Այն, Գամբչը, Հասիչէ եւ Այն Ցի - պար (Աղերքի մօտիկ, մօտ 9 — 10 ժամ), ուր թափուած են նոյնպէս մեծ աչխատանքներ, տեղատուրուած եւ քա - ղաքի վերածած են անչրջիկ անա - պատները, կեանք եւ եռուզեռ տեղ - ծելով երբեմնի ամայութեան մէջ:

Միայն Գամբչլիի մասին խօսելով, կրնանք ըսել, թէ այսօր ան կը նե - կայացնէ նոր քաղաքի մը տարողու - թիւնը: Իրրեւ կեդրոն չրջակայ վայրերու եւ դիւղաքաղաքներու իր կարեւորութեամբ, պետական կա - ռուցուածքով, չուկաներով, եկեղեցի - դպրոցներով եւն.:

Ա. ՄՇԱԿ

ՁԱՅՆԱՋ ՆԻ ԹԵՐԹՈՒՆԸ (116)

ՍՏԱՄՊՈՒԼԻ ՆԵՐՔԻՆԻՆ

The Eunuch of Stamboul

By DENNIS WHEATLEY — Դրաց՝ ՏԷՆՆԻՍ ՀՈՒԻԹԼԻ

Trans: J. M. — Թարգմ. Ժ. Մ.

— Օհ, էֆէնտի, դուք այդ տեսակ բան մը չէք ըներ, բաւ պառաւը դող - ղդղալով:

— Բերանդ, կնիկ, բարկացաւ Ներ - քինին, պիտի ընեմ եւ նոյնիսկ աւե - լին, դուն Ռուսիա պիտի ճամբուես մինակդ եւ աղջկանդ զգեցիկ աչքե - րը պիտի չընկերանան քեզի՝ օգնու - թիւն հայցելու համար զործավարնե - րէն... անկիա Պիթլիս պիտի դրկեմ իրրեւ հետեւանքի առարկայ Քիւրտ ցեղապետի մը որ իմ բարեկամս է ... մարդ մըն է որուն մեծագոյն երջան - կութիւնն է չարչարել կակուղ մար - մինները... վեց ամիս անոր հոմանու - հին ըլլալէ վերջ երեսուն տարի աւե - լի ծերացած պիտի ըլլայ ...

Պառաւուհի Վարոնցով սկսաւ մատ - ները կատրաել ցաւագին չարժումնե - րով, արցունքները կը կաթկթէին իր կարմրած թուչերուն ի վար:

— Օհ, Թանիա, Թանիա, աղջիկս...

— Ասիկա հարցին միայն մէկ երես - ն է, չարունակեց Ներքինին անխը - ւով արտայայտութեամբ, եթէ յաջո - ղիս, կրնամ առատաձեռն ըլլալ՝ չնոր - հիւ Ալլահին... ձեր արտօնագիրը տե - ւական պիտի ըլլայ. ուրիշ ծառայու - թիւն պիտի չպահանջեմ քեզմէ եւ նոյնիսկ կրնամ կենսաթոշակ մը յատ - կացնել քեզի փոխարինելու համար այն դումարները զորս կրնայիր հետ - զհետէ չահիլ... հիմա, դուն ընտրէ, որովհետեւ ժամանակ չկայ ...

Թանիա ճեպ - ճեպ մակ եղած էր, սարսափելի էր երկընտրանքը որ իրեն կ'առաջարկուէր :

— Բայց եթէ սխալած էք, տար - ցուց:

— Ես չեմ սխալիր, պատասխանեց Ներքինին, պահպանակը Փիթըրին քո - վրն է հիմա, այս վայրկեանիս, եւ ու - րիչին ալ չի տար, եթէ ձախողիս, գիտես հետեւանքը, անյաջողութեամբ չես կրնար զինքը պաչտպանած ըլլալ, քանի որ ես տարբեր միջոցներ ձեռք կ'առնեմ ...

— Ի՞նչ ըսել կ'ուզէք, փսփսաց Թա - նիա:

— Մտածեցնել կուտամ, եթէ պէտք ըլլայ... բայց այդ պահպանակը իմ ձեռքս պէտք է անցնի առաու չեղած..

— Օհ, Թանիա, լացաւ մայրիկը, կրնա՞ս այդքան անսիրտ ըլլալ որ վա - րանիս...

Աղջիկը պիտի խեղդուէր կարծես: Սակայն Փիթըրի սպանութեան հետա - նիքը վերջ տուաւ իր դիմադրու - թեան.

— Շատ լաւ, ձեռքէս եկածը կ'ը - նեմ...

— Աղէկ, ժամը տասնըմէկին առեն - ները պէտք է վերադառնաս ...

—Բայց առիկա կարելի չէ, մեր վեր - ջին դիչերն է... եթէ նոյնիսկ ժամը հինգին ճամբայ պիտի ելլէ, զարձ - եալ պիտի չուզէ որ կէս գիչերէն ա - ւելի ծաժնուինք...

— Պատրուակ մը գտիր մեկնելու համար, պնդեց Ներքինին ոռքի ելլե - լով, Թոյլ չեմ տար որ աւելի երկար մնաս, եթէ ժամը տասնըմէկին բերած չըլլաս, տարբեր կարգադրութիւններ պիտի ընեմ ...

— Ձեմ կրնար, ըսաւ Թանիա յուսա - հատօրէն, իմ վրաս չատ վատահու - թիւն ունի ու ես զինքը կը սիրեմ ... չեմ կրնար, չեմ կրնար...

— Պէտք է ընես, Թանիա, պէտք է - ննես, աղաչեց մայրիկը ձեռքերը ծունկերուն զարնելով, խորհէ անգամ մը թէ հետեւանքը ինչ կ'ըլլայ մեզի հա - մար... կը պաղատիմ, էֆէնտիին խօսքը մտիկ ըրէ ...

— Էֆէնտի, կրկնեց Ներքինին բա - րակ ձայնով մը ու խնդաց, ըսած էի որ «էֆէնտի» չկանչէք զիս... բայց գրոյց կը չրջի թէ տիտղոսները զարճ - եալ պիտի գործածուին Թուրքիոյ մէջ չուտով ...

Քանի մը օրէն Թերեւս իրաւունք ունենաք զիս «էֆէնտի» կամ նոյնիսկ «փաչա» կանչելու ...

— Կը խնդրեմ, կ'աղաչեմ ուրիշ գործ մը յանձնեցէք ինծի ...

— Ոչ, այս գործը միայն դուն կըր - նաս ընել, պատասխանեց Ներքինին գլուխը թօթուելով, ես գացի եւ յոյս ունիմ որ մայրիկդ կը համոզէ քեզ... եթէ յաջողիս, արտօնագիրը կը վե - րադարձուի, Թուրքիա կը մնաք մինչեւ, այս տեսակ պաշտօններ չենք տար քեզի եւ կը տանիս կենսաթո - չակ մը... իսկ եթէ ձախողեցար, այն ատեն մայրիկդ Ռուսիա կը ճամբուի մեղ առաու իսկ՝ անասնաբարձ չո - պենաւով մը... դուն կ'երթաս Պիթ - լիս քիւրտ բարեկամիս եւ սիրահարդ ալ կը սպանուի ...

Ներքինին գլանիկը մարեց մոխրա - մանին մէջ եւ դուրս ելաւ :

ԳԼՈՒԽ 24

ԵՐԲ ՍԻՐՏԸ ԵՐԻՏԱՍԱՐԴ Է

Փիթըր Քարու անհամբեր Թանիա - յին կը սպասէր Բերա Փալասի նախա - դաւիթին մէջ: Զափազանց տխուր էր որ յաջորդ օրը Պոլսէն մեկնելով Անգ - լիա պիտի վերադառնար: Կատղած էր նաեւ որ դեսպանատունը իր գլուխը չաթթեր էր նոր գործ մը— օդանաւով էնկիւրի պիտի երթար գար, այս ինքն հինգ հարիւր մղոններ ճամբորդու - թիւն մը պիտի կատարէր այդ օրը՝ արեւելեան ճեպընթացը նստելէ ա - ռաջ:

Սան Սթէֆանոյի օդակայանը քա - ղաքէն տասներկու մղոն հեռու տեղ մըն է որ մայրիկը կը համոզէ քե... եթէ յաջողիս, արտօնագիրը կը վե - րադարձուի, Թուրքիա կը մնաք մինչ, այս տեսակ պաշտօններ չենք տար քեզի եւ կը տանիս կենսաթո - չակ մը... իսկ եթէ ձախողեցար, այն ատեն մայրիկդ Ռուսիա կը ճամբուի մեզ առաու իսկ՝ անասնաբարձ չո - պենաւով մը... դուն կ'երթաս Պիթ - լիս քիւրտ բարեկամիս եւ սիրահարդ ալ կը սպանուի ...

Ներքինին գլանիկը մարեց մոխրա - մանին մէջ եւ դուրս ելաւ :

ՉԱՐԱՍՈՒՆ ԱՐՎԱՍՏԱՆ

ԵՐԿԱՐ ՊԱՏՄՎԱԾՔ

Ա. ՍԱՐԳՍՅԱՆԻ

Ա. Սարգսյանի «Չարասուն արվաստան» երկարավեպը ընդգրկում է ժամանակագրական մեծ մի հատված՝ 1915 թվականից մինչև 1921 թվականը։ Հեղինակը ներկայացնում է հայ ժողովրդի կյանքի ամենադժվար ու ամենահերոսական շրջանը։ Ցեղասպանության ահավոր տարիներին հայ ժողովրդի ազատագրական պայքարի ալիքները, Սարդարապատի, Ղարաքիլիսայի, Ալեքսանդրապոլի հերոսամարտերը, Հայաստանի Հանրապետության հռչակումը, Սևրի դաշնագրի ստորագրումը, Կարսի պայմանագրի կնքումը, Խորհրդային Հայաստանի ստեղծումը, Ալեքսանդրապոլի ապստամբությունը, Ղարաբաղի ազատագրական պատերազմը, Զանգեզուրի հերոսական կռիվները, Ռուսաստանի քաղաքացիական պատերազմը, Հայաստանի խորհրդայնացումը, Ռուսաստանի և Հայաստանի միջև կնքված պայմանագրերը, Ղ

Կառավարութիւնը անմիջապէս գործի ձեռնարկեց, ահաբեկիչները երեւան հանելու համար: Արդիւնքը գաղտնի կը պահուի: Իրագէկներ կը հաւաստեն թէ դժոխային մեքենան օժտուած էր վերջին կատարելագործութեամբ :

Դէպքէն անմիջապէս վերջը, ընդհանուր գործադուլ հռչակուեցաւ Հայֆայի մէջ: Բարեկարգութեան կը հսկեն ոչ միայն զօրքը եւ ոստիկանութիւնը, այլեւ բրիտանական օդանաւերը: Զանգուածային ձերբակալութիւններ կատարուեցան: Վերջին երեք օրերու մէջոցին ձերբակալուած գիւղացիներու թիւը 1500ը կ'անցնի: Նազարէթի ճամբուն վրայ ոստիկանները գտան երկու Արաբներու գլուխները, որոնք հրացանի բռնուած էին ահաբեկիչներու կողմէ: Դիակներուն վրայ գտնուեցաւ հետեւեալ արձանագրութիւնը.— «Ահա այս է դաւաճաններուն եւ լրտեսներուն վախճանը »:

Ահաբեկչական գործունէութիւնը կը ծաւալի ծովեզերեայ եւ գիւղական շրջաններու մէջ: Կազմակերպիչները կը յանձնարարեն գիւղացիներուն չվճարել իրենց պարտքերը: Պարապատհանջներուն ալ մահուան սպառնալիք ուղղուած է, որպէսզի դադրեցնեն դանձումները :

Անգլիական «Բրիթըլ» յածանաւը իր լուսարձակները ուղղած է Հայֆայի վրայ, գիւրացնելու համար հետազօտութիւնները: Զիներ եւ թնդանօթներ յամառ հանուեցան յածանաւէն, իսկ նաւաղները դիրք բռնեցին ռազմագիտական կէտերուն վրայ :

Երուսադէմի մէջ ալ խիստ միջոցներ ձեռք առնուած են: Վաչտ մը զօրք եւս տեղաւորուեցաւ քաղաքին մէջ: Շատ մը թաղեր մանրակրկիտ խուզարկութեան ենթարկուեցան :

**** Հայֆայի պայթիւնը ամենածանր դէպքն է՝ Պաղեստինի խռովութեանց վերսկսումէն ի վեր (յուլիս 6, երբ ռումբ մը պայթեցաւ միեւնոյն վայրին մէջ, սպաննելով քսանի չափ Արաբներ): Վերջին տեղեկութեանց համաձայն, մեռելներու թիւն է 52, վիրաւորներուն թիւը՝ 50էն աւելի :*

ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆՑ ՎԵՐՍԿՍՈՒՄԸ ԱԼԵՔՍԱՆՏՐԷԹԻ ՇՐՋԱՆԻՆ ՄԷՋ

Ինչպէս հաղորդած էինք, յուլիս 22ին վերսկսան ընտրական արձանագրութեանց գործողութիւնները՝ Ալեքսանտրէթի շրջանին մէջ (Սանճաք): Գործողութեանց վերսկսումէն առաջ, ֆրանսական եւ թրքական կառավարութեանց ներկայացուցիչները հետեւեալ որոշումները տուին.—

Ֆրանսական եւ Թուրք կառավարութեանց ներկայացուցիչները 1938 յուլիսի իրենց յայտարարութեամբ որոշած ըլլալով չարունակել ընտրական գործողութիւնները, իրարու մէջ համաձայնած են, եւ Սանճաքի հիմնական օրէնքին 15րդ յօդուածին յենլով — որ Սանճաքի գանգան համայնքներուն հաւասար չափով ներկայացուցիչ ունենալուն կը վերաբերի — որոշած են կազմել վեր - ատուղիչ յանձնաժողով մը Սանճաքի առաջին ընտրութիւններուն համար :

Այս յանձնաժողովը կազմուած պիտի ըլլայ.— Ֆրանսական եւ Թուրք կառավարութեանց ներկայացուցիչներէն, Սանճաքի միւթասարըֆէն , Թուրք համայնքին մէկ ներկայացուցիչէն: Ընտրութեան համար արձանագրութիւն կատարուելիք դիւաններուն մէջ ներկայացուած համայնքներուն իւրաքանչիւրէն ներկայացուցիչ մը եւս յանձնաժողովին պիտի միանայ :Նախագահութիւնը յաջորդաբար երկու կառավարութեանց ներկայացուցիչներուն կողմէ պիտի կատարուի :

Հաւասարապէս նախանձախնդիր՝ չչեզելու Ազգաժողովի Մորհուրդի յանձնախումբին կողմէ ճշդուած ընտրական կարգադրութենէն, երկու բարեկամ երկիրներուն ներկայացուցիչները որոշեցին ընտրական գործողութեանց ընթացքին Սանճաքի մէջ առաջին ընտրութեանց կանոնադիրը գործադրել, գայն պատշաճեցնելով ներկայ կացութեան :

Այս առթիւ հետեւեալ յայտարարութիւնը հրատարակուեցաւ.—

Ազգաժողովի Յանձնաժողովին կողմէ 1938 յունիս 26ին Սանճաքի առաջին ընտրութեանց մասին արուած որոշումները եւ արձանագրութիւնները ընդհանելով Յանձնաժողովին մեկնումէն վերջ, Ֆրանսական եւ Թուրք կառավարութիւնները, որոնք երաշխաւորներն են Սանճաքի միջազգային վարչաձեւին, իրենց յանձնառութիւններէն բխող գործակցութեան ոգիով ներշնչուած, որոշեցին հիմնական օրէնքին գործադրութիւնը ապահովելու համար առաջին ընտրութեանց հակակշիռը ստանձնել :

Այս նպատակով, Ֆրանսական կառավարութիւնը անհրաժեշտ իրաւասութիւնը տուաւ գնդապետ Քոլէի: Թուրք հանրապետական կառավարութիւնն ալ նոյն իրաւասութիւնը տուաւ Ձէվտա Աչըքալընի, որ իրրեւ արտակարգ պատուիրակ Անթաքիա եկած է :

Երկու կառավարութեանց ներկայացուցիչները որոշեցին արձանագրութեանց գործողութիւններուն վերսկսիլ Յուլիս 22էն սկսեալ: Անոնք համոզուած են թէ կրնան վստահիլ Սանճաքի քաղաքացիները իրարու կապող եղբայրական կապերուն, եւ չեն կասկածիր թէ ընտրական խորհրդակցութեան այս շրջանը պիտի կրնայ առանձ հանդամանք մը, որ պատշաճ է իր քաղաքական անկեան դոյութեան :

Երկու կառավարութիւնները պիտի չվարանին ամենախիստ միջոցներու դիմել, ընտրական գործողութիւնները խանգարել փորձողներուն դէմ: Պիտի պատժուին ամէն անոնք որ կը ջանան կացութենէն օգտուիլ իրենց անձնական եւ կամ գաղափարային շահերուն համար, որոնք հակառակ են Սանճաքի քաղաքական շահերուն :

"Մեր հեռաւորութիւնը ի՞նչ կ'ըլլայ,,

Պալաոյ Ձիմհուրիյէթ թերթը կը գրէ այս խորագրին տակ· —

Բաղաքիս Հրեաներուն մօտ տարօրինակ պատքոթի մը չարժումը տեսնուած է: Ինդիրը սա է.—

Ինչպէս եւ Թարապիոյ Թոդաթլեանի պանդոկներուն տէր Պ. Մեռովիչ նախապէս աւտոբիհսպառակ էր եւ գաղարի եւ ոտի օրերուն աւտոբիական եւ թրքական դրօշ կը պարզէր իր հաստատութեանց վրայ: Աւտոբիոյ կցումէն վերջ, բնականօրէն դերման հպատակ դարձած Պ. Մեռովիչ, հիմա ալ սկսած է դերմանական դրօշ պարզել :

Հրեաները որոնք այս հաստատութեանց յաճախորդներուն մեծ մասը կը կազմեն, ինչպէս կ'ըլլայ, կը ջղայնանան այս երեւոյթէն եւ «պոյքոթ» կը հրաւիրեն ի՛չեալ հաստատութեանց դէմ: Հիմա, այլեւս Թոդաթլեանի սրահները այս անուանի յաճախորդները չեն երեւար: Բաղաքին չատ մը շրջանակներուն մէջ տարօրինակ կը նկատուի այս դիւրազգածութիւնը, որ ցոյց կը տրուի մեր երկրին մէջ գործող օտարահպատակի մը դէմ, անոր երկրին մէջ տեղի ունեցած փոփոխութեանց հետեւանքով :

ՑԱՆԿՑԻՆ, ԼՈՒՐԻՔՔԻՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՍՊԱՆԻՈՑ ազգայնականները չարունակելով իրենց յաւաչխազացութիւնը, 20.000 դերի բռնեցին: Կռիւները կը տասնականան Վալենսիայի նահանգին մէջ : — Փարիզի սպանիական դեսպանատունը կը հերքէ այն լուրերը թէ հանրապետական կառավարութիւնը պատրաստ է բանակցելու Զօր· Ֆրանքոյի հետ: «Իւմանիթէ» կը գրէ թէ միայն մէկ ճակատի վրայ, որ ունի 32 քիլոմէթր երկայնութիւն, ապստամբները կը գործածեն 600 իտալական թնդանօթ, 400 իտալական եւ 100 ալ գերմանական օդանաւ:

ՏԱՐԱԳԻՐ ՀՐԵԱՆԵՐԸ (գերմանական հպատակ) հրաման ստացան մինչեւ տարուան վերջը արձանագրել իրենց ստացուածքները, գրամատուններու հետ եղած հաշիւները եւն.: Տարագիրները կը վախնան որ եթէ չհամակերպին, ոչ միայն իրենց ապրանքները պիտի ներմուին, այլեւ կառավարութիւնը պիտի գրաւէ իրենց անշարժ կալուածները :

Հ. Յ. Դ.

Փարիզ

ՓԱՐԻԶԻ «ԵԳԻՊՏԱՑԻ» դամբէնէն ընդհ. դասախօսական ժողովի կը հրաւիրէ իր շրջանի ընկերները այս Ուրբաթ երեկոյ ժամը 8.30ին 6, Ավընիւ տ'Իթալիի սրճարանի վերնայարկը:

Օրակարգ՝ կարեւոր զեկոյց ընկեր Ի.ի կողմէ:

Դաշտանաւեդէս Շավիլի ասետռիլ մէկ

ԽԱՆԱՍՈՐԻ ԱՐՇԱԻԱՆՔԻ 41ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻՒ

կազմակերպուած Հ. Յ. Դ. «ԱՐՂԱԻԹԵԱՆ» խումբի կողմէ

Յուլիս 31ի Կիրակի օր:

ժամը 3ին այցելութիւն Իշխան Արղութեաններու շիրմին:

Բանախօսութիւն, երգ., արտասանութիւն, նաւագ եւ պար:

Գիւղէ մասչելի գիներով:

Անձրեւի պարագային դադաւոխանդէսը չի յետաձգուիր:

կառ Մոնփարնասէն եւ կամ Սէն Լազարէն գնացք: փոն տը Սէվրէն 1 Թ եւ օթօպիւս եւ իջնել Petits Sans Vin: Շարցնել Շավիլի Գերեզմանատան յաթակից անտառը:

Ընտանեկան մեծ դաշտանաւեդէս

ԿՈՒՍԷՆՎԻԼԻ «ՍՈՒՐՄ»ԻՆ ՄՕՏ

Այս Կիրակի 31 Յուլիս, կէս օրէ վերջ ժամը 3ին կազմակերպուած Հ. Յ. Դ. «ՏԱՒՐՈՍ» խումբին կողմէ Հովանաւորութեամբ՝ «ՎԱՐԴԱՆ» ենթակոմիտէի

ԽԱՆԱՍՈՐԻ ԱՐՇԱԻԱՆՔԻՆ ԱՌԹԻՒ

կը նախագահէ ընկեր ՀԱԶԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆ

երգ., պար, արտասանութիւն եւ զանազան անակնկալներ, նոյն օրը եւ վիճակահանութիւն:

Ծանօթ.— Շոգեկառք կան տիւ Նօրէն ժամը 1.17, 1.37, եւ 3.17:

ՌԱԶՄԻԿԻ ՕՐ

ԱՆՆԱԽԸՆԹԱՑ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

կազմակերպուած ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐՆԵՐՈՒ եւ ՄԱՐՏԻԿՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ՄԱՐՍԷյԼԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ

Նուիրուած՝ *ԱՅՆԹԱՊԻ ՀԵՐՈՅԱՄԱՐՏԻՆ*

կիրակի, 31 Յուլիս Սէն-Անդրէի Պաւ Պել Վէյերի օդապուն պարտէզին մէջ

կը նախագահէ՝ Գ. Տ. ԹՈՓՔԷՆԵԱՆ

կը քանախօսեն՝ Գնդապետ Տ. ԲԱՂՏԱՍԱՐԵԱՆ

Գ. Գ. ԴՐ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ, ՅՈՎՀ. ՀԱՅԱԿՈՐԾԵԱՆ եւ ԱԶԳԻՆ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

Գիզարուեստական ճոխ բաժին: կարելի է ճաշը դեռ բերել:

Առնել 25 թիւ հանրակառքը եւ իջնել վերջաւորութեան:

Ծախսերու մասնակցութիւնը՝ 2 ֆրանք:

Վաղդավառ եւ Տաւօսի դիշատակը

կը տօնուի Տաւօն-Տուրուբերանի Հ. Միութեան կողմէ, փարիզի մէջ Յուլիս 31ին, կիրակի, կէս օրէ վերջ ժամը 3ին, Պ. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆի սրահը, 13, Rue Pierre Curie, Kremlin-Bicetre. Métro: Porte d'Italie.

կը նախագահէ հայրենակից Պ. Ա. ՉԱՔԻՐԵԱՆ

երգ., արտասանութիւն կը հրաւիրուին Տաւօնն ու իրեն յիշատակը յարգողները:

ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Տ. Տ. Հայր. Միութեան ՏԷսլիի մասնաճիւղին վարչութիւնը կուգայ իր եւ քոլոր անդամներու կողմէն խորին ցաւակցութիւն յայտնելու Այրի Տիկ. ԱԼԻՍԱՒ Վազարեանի, ՏԸր եւ Տիկին ցաւոք Վազարեանի եւ քոլոր պարագաներուն, իրենց պսակատոնի եւ Պ. ԴԱՒԹԱՒ Վազարեանի դառնագին կորուստին առթիւ:

ԺՈՒՐՆԱՏԵՍՏ

Ֆր. կ. ԽԱՉԻ ԼԻՈՆի մասնաճիւղին ժողովը այս Ուրբաթ երեկոյ ժամը 8.30ին, 181, Գուա Լաֆայէթ. Գրադարանին մէջ: Օրակարգ.— Շաբաթական ընթերցում, նոր վարչութեան ընտրութիւն, օգտափոխուեան կայանի կարգադրութիւն, ընթացիկ խնդիրներ, պատասխանատուութիւն, ներկայութիւն, ներկայասալանդամատեսլով:

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ

ԱՐՇԱԿ ՕՐԻԿԱՆ

Ամսագլխին Յունիս-Յուլիսի միացեալ թիւը, յատկուածական եջերով եւ հետաքրքիր բովանդակութեամբ.—

Մկրտիչ Պարսամեան՝ Արփիար Արփիարեան, Ա. Չոպանեան՝ Բաշին-Չաղանի աշխատանոցին խմբագրակարը, Գ. Եպսկ. Տրապիզոնի՝ Մշոյ Մշակը, Ն. Սարաֆեան՝ Հերքուած մը, Վ. Թոռոսկնց՝ Տրգատաց Թախտը, Կ. Նալպնց՝ Հեղինակութիւն (քերթուած), Հրաչ Սարգիսեան՝ «Շահնամէ», Փ. Սահասար՝ Վերադարձ դէպի Հետքերն, Հ. Ա. Քիպարեան՝ «Կիլիկեան Զարհարանքը» գրքին մասին եւ ամօրեակ:

Խմբագրութիւնը կը խնդրէ իր բաժանորդներէն եւ գործակալներէն փակել 1938ի հաշիւները:

Բաժանորդագրութիւն Ֆրանսա 40, եւ արտասահման՝ 50 ֆրանք:

Դիմել՝ Մ. ՊԱՐՍԱՄեԱՆ, 30, Rue Drouot, Paris (9):

ԵՓՐԱՏ ՆՈՒԱԳԱԽՍԻՄԲ

Վարկավար Տ. ՕՆՈՍԵԱՆ

15, Rue du Pourtour, Clamart, Seine Tél. Observatoire 13 - 45

Հեռաձայնել երեկոները 8էն վերջ :

Հայկական, եւրոպական եւ կովկասեան եղանակներ: Մխակ նուագախումբը հաճելի դարձնելու համար ձեր հանդէսները, հարսնիքները եւ հաւաքոյթները :

Le Gérant : H. STEPHAN

17. Rue Damesme. PARIS (13) A. DER (AGOPIAN)

Մ. ՆԱՀԱՆԴՆԵՐՈՒ գանձային նախարարը նոր տեսակցութիւն մը ունեցաւ Ֆրանսայի էմմատական նախարարին հետ, անդամ մը եւս հաստատեց թէ դրամական երրեակ համաձայնութիւնը պիտի պահպանուի: (Ֆրանք, տոլար, սթերլին):

ԻՐԱՆԵԱՆ կառավարութիւնը որոշեց ուր մեռաղադրծական հնոցներ հաստատել գերմանական ընկերութեանց միջոցաւ: Արժէքը՝ 85 միլիոն մարք: Այս հաստատութիւնները պիտի հիմնուին Թէհրանի մօտ: Ուրիշ գերմանական ընկերութեան մը յանձնուած են էլեկտրական շինութիւնները :

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ

ՄԱԳԱՂԱԹՆԵՐ

(Ջերքուածներ)

ԱՀԱՐՈՆ ՏԱՏՈՒՐԵԱՆ



Զուտ խաղողէ քաշուած եւ անիսոնով պատրաստուած ճայկական օղին է *ՐԱՔԸ ՏԻՒԶ*ը: Զգուշութեան ապուեստական օդիներէ ազատ ձեր ստամոքսը կ'այլէ գիշերները չուր կը խմէք եւ կը վնասէ ձեր առողջութեան: Խմեցէք միայն *ՐԱՔԸ ՏԻՒԶ*ը որուն անունը ճշդուած է: Ձեր ախորժակը ըլլայ ճաշատուած է:

Dalakupeian 8 Rue Suffren
Dépôt: 7 Rue de la Paix, Marseille. Tél. Dragon 70—89.

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ

ՆՇԱՆ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆԻ

«ԾԱՂՐԱՆԿԱՐՆԵՐ»

երգիծական նոր հատորը (208 էջ)

Մանօթ դէմքեր եւ ժողովրդական տիպեր: Վարդաստան մը ժպլիտի, խինդի ծիծաղի եւ հեղնութեան լաւագոյն նուէրը ինքզինքին ու բարեկամին.

«Ինդալ գիտցիր որ առողջութիւնն ու բախտն ալ քեզի խնդան» Մէնանդրոս
«Իւրաքանչիւր ժպիտ հոգիին մէջ լոյս մը կը վառէ» Անդրէասեան
«Ծիծաղը սրտին արեւն է» Հանու - Հիւգօ

Հատորին գինն է Ֆրանսա եւ գաղութներ 20 ֆր., արտասահման 25 ֆր.

Դիմել հեղինակին.— 21, Rue Ampère, Cachan, Seine, France:

Le Gérant : H. STEPHAN
17, Rue Damesme, PARIS (13)
A. DER (AGOPIAN)

ՅԱՌԱՋ

ԾՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՑԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HAÏRATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
17, Rue Damesme, PARIS (13e)

Téléphone : Glacière 15 - 70
Chèque Postal Paris 1678 - 63
(ԵՐԹԵՒԵԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ՝—

	ՏԱՐԵԿԱՆ	ՎԵՑԱՄՍԵԱՅ	ԵՒԱՄՍԵԱՅ
Ֆրանսա եւ Գաղութներ	150 ֆրանք	75 ֆրանք	40 ֆր.
Անգլիա եւ Իտալիա	265 ֆրանք	140 ֆրանք	
Ուրիշ երկիրներ	215 ֆրանք	110 ֆրանք	

ՈՒՐԲԱԹ
29
ՅՈՒԼԻՍ
VENDREDI
29 JUILLET
1938

ԺԹ ՏԱՐԻ — 14e Année No. 3794

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿԱՒ ԽՕՍՔ

ՁԱԿԱՏԱԳԻՐ ԿԸ ՎԱՐԵՆ ՇՈՂԻՔՆԵՐՈՎ

Իսկապէս յեղափոխակա՞ն պատկեր մը կը ներկայացնէ Հայաստանի Գերագոյն Սովհուրդին առաջին նստաշրջանը, իր բայման խօսքով, զեկուցումներով եւ ճառերով :

Հարեւանցի ակնարկ մը բաւական է, համոզուելու համար թէ ամէն ինչ նախապէս ծրագրուած եւ սարքուած է իբրեւ թատերական ներկայացում : Թերեւս «փորձեր» ալ կատարուած են, ինչպէս որ եւ է ներկայացման առեն : Ինչպէս ուրիշ հանրապետութեան մէջ :

Արդարեւ, նոյն հանդիսաւոր խեղկատակութիւնն է որ կը կատարուի աշխարհի մէկ վեցերորդ մասին մէջ, հանրապետութեան հանրապետութիւն եւ չրջանէ չրջան :

Առաջին տղտանչանը տրուեցաւ Մոսկուայէն, եւ ներկայացումները իրարու կը յաջորդեն կարգով, իրարու նմանելով յետին մանրամասնութեամբ :

Երեւանի մէջ, բացման խօսքն արտասանած է Գերագոյն Սովհուրդին երիցագոյն անդամը, դրագէտ Արագին (Մովսէս Մելիքի Յարութիւնեան) :

Ի՞նչ կ'ուզէիք որ ըսէր այս ծերունի վաստակաւորը, ծայրագաւառ Երեւանի մէջ, երբ անդին, Մոսկուայի մէջ, աւելի հեղինակաւոր դէմքեր իրար զերազանցեցին չոլիք վազցնելով :

Արագի նախ ծափերու փոթորիկ մը կը յարուցանէ, յայտարարելով թէ «Հայաստանի աշխատաւորութիւնն իր Գերագոյն Սովհրդում առաջին դեպուտատ (երեսփոխան, պատգամաւոր) ընտրեց համաժողովրդական թեկնածու, հայ ժողովուրդի ամենամտերիմ բարեկամ, մեր սիրելի հայր, հարազատ ՍՏԱԼԻՆԻՆ» :

«Օվացիա»ները կը կրկնուին, երբ կը յիշէ, նաեւ, «խորհրդային հզօր կառավարութեան տաղանդաւոր ղեկավար, ռուս մեծ ժողովրդի արժանաւոր զաւակ» Մոլոտովը, ինչպէս եւ «խորհրդային կառավարութեան ականաւոր գործիչ, հայ ժողովրդի սիրելի զաւակ» Անաստաս Իվանովիչ Միկոյեանը (միշտ գլխագիր) :

Կ'արժէ՞ յիշել մնացեալը,— այն թխածոյ եւ ձուլածոյ սաղմոսերգութիւնները որ կը կրկնուին տարիներէ ի վեր, Ս. Միութեան բոլոր լեզուներով, համոզելու համար թէ երկիւղ գժոխք էր, այսօր դրախտ, երկիւղ խաւար էր, այսօր լուսացնցուղ արեւ, երկիւղ չքաւորութիւնը կը տիրապետէր, այսօր՝ երջանկութիւնը եւն. :

— «Ընկեր դեպուտատներ, Հայաստանի այսօրը ոչ մի բանով նման չի մեր մռայլ անցեալին, հայ աշխատաւորն իր անցեալը յիշում է որպէս մի ծանր մղձաւանջ : Տխուր խոհերով է անդրադառնում դէպի այդ անցեալը մեր մեծ բանաստեղծ Յովհ. Թումանեանը, այնտեղ տեսնելով «սեւ սուգի մի հովիտ», «զարկուած ու գրկուած » մի վայր, դատարկ գիւղեր ու գաղթականների շարան...» :

Իսկ այսօր,— ազատութի՛ւն եւ բարօրութիւն : «Միայն խորհրդային իշխանութեան գաղափարը Հայաստանի համար բերեց խաղաղութեան եւ ազգային վերածննդի հնարաւորութիւն» :

Անշուշտ աւելին կարելի էր ձեռք բերել .

— « Մեր նուաճումներն աւելի մեծ կը լինէին, եթէ մեզ չխանգարէին ժողովրդի թշնամիները՝ փաշիստական - տրոցկիստական– բուխարինեան-բուրժուական-նացիոնալիստական, դաշնակցական հակայեղափոխական բանդաները, որոնք փորձում էին մեր ծաղկող երկիրը դարձնել իմպերիալիստների գաղութ, վերականգնել կապիտալիստական կարգերը մեր երկրում » :

Մի հարցնէք թէ ժողովուրդի նոյն «թշնամիները» չէ՞ն որ հաստատեցին խորհրդային իշխանութիւնը, կազմակերպեցին ու վարեցին Հայաստանը 1921էն մինչեւ 1936, երբ հովերը յանկարծ փոխուեցան, եւ մանդատը անխնայ հնձեց բոլոր ղեկավարները, ամէն ճակատի վրայ : Երբ,

— « Մեծ առաջնորդ *Ստալինի* անմիջական ցուցումներով եւ նրա մարտական զինակիցներ ընկերներ *Ժդանովի* եւ *Միկոյեանի* օժանդակութեամբ Հայաստանի բոլշեւիկները ջախջախիչ հարուած հասցրին հակայեղափոխական այդ բանդաներին» :

Արագի իր ճառը կը վերջացնէ նորէն եւ նորէն ազատակելով.

— « Կեցցէ՛ համաժողովրդական դեպուտատ մեծ Ստալինը» : Եւ, ինչպէս կը պատմէ «Մ. Հայաստան», սրահը կը թնդայ խանդավառ ծափերով, — «Նորից ու նորից հայերէն, ռուսերէն, ադրբէջաներէն եւայլ լեզուներով լսւում են ողջոյնի ցնծալից բացագանչութիւնները ընկերը ՍՏԱԼԻՆԻ պատուին : Երկար ժամանակ չի լռում որոտընդոստ օվացիան» : (13 յուլիս) :

Պատկեր մը եւս, զազափար կազմելու համար «դեպուտատ »-ներու՝ քաղաքացիական դիտակցութեան մասին :

Գերագոյն Սովհուրդի յուլիս 13ի նիստին մէջ, կոյանտեսական Մաչատրեան ողջոյնի խօսք առնելով, կը փառաբանէ իրենց վայելած «ուրախ եւ երջանիկ» կեանքը, եւ կ'աղաղակէ ցնծագին .

— « Ընկեր դեպուտատներ, սրբազան մի իղձ ունիմ ես, որը գիշեր ու ցերեկ ուղեկցում է ինձ : Այդ իղձն է՝ տեսնել մեծ ՍՏԱԼԻՆԻՆ : Եւ ամէն անգամ երբ ես ելնում եմ աշխատանքի, իմ գիտակցութեան ձայնն ասում է,— «Աշխատիր այնպէս, որ արժանանաս այդ վեհ պատուին» : Ես անսահման կը ցանկանայի, եւ դա իմ կեանքի ամենաերջանիկ մոմէնտը կը լինէր, այստեղ տեսնել մեր ամենասիրելի մարդուն, մեր առաջին դեպուտատին, մեր հարազատ հայր Ստալինին» (միշտ գլխագիր) :

... Ահա այսպէ՞ս կը ծաղկի մեր հայրենիքը, գլուխները կախ — չսուերն արդէն փոչիացած — չորիքը բերնին, խարտեաշը մէջքին : Եւ նորէն վա՛ռ եղած ին :

Շ.

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ԱԶԳԱՅԻՆՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԿԱՆՈՆԱԳԻՐԸ ՉԵԽՈՍԼՈՎԱՔԻԱՅԻ ՄԷՋ

ԳԵՐՄԱՆԱՑԻՆԵՐԸ ՈՒԺԳՆՕՐԷՆ ԿՐ ԲՂՈՔԵՆ

Չեխական կառավարութիւնը յուլիս 27ին հրատարակեց ազգութեանց նոր սահմանադրութիւնը, որուն կը սպասուէր ամիսներէ ի վեր : Սահմանադրութիւնը մշակուած է աչակցութեամբ ամէն տեսակ մասնագէտներու, փորքրամասնութեանց ներկայացուցիչներուն կարծիքներն ալ նկատի առնելով : Նոր խորհրդակցութիւններ պիտի կատարուին այդ ներկայացուցիչներուն հետ, ծրագիրը վերջնապէս խորհրդարանին վաւերացման յանձնելէ առաջ :

Սրագիրը կը բաղկանայ յառաջաբանէ մը եւ 14 գլուխներէ : Ահաւասիկ հիմնական տրամադրութիւնները.—

Բոլոր քաղաքացիները հաւասար են, առանց լեզուի, ցեղի կամ կրօնի տարբերութեան : Ազգութեան հանգամանքը պիտի ճշդուի ենթակային մայրենի լեզուով : Տասնըւթ տարեկան եղած առեն, ո եւ է քաղաքացի կրնայ ընդունիլ իր նախընտրած ազգութիւնը, պայմանաւ որ լիովին տեղեակ ըլլայ նոր ազգութեան լեզուին եւ սովորաբար չգործածէ լեզուն այն ազգութեան որմէ բաժնուիլ կ'ուզէ : Բանի ապազդայնացման համար պատիժ սահմանուած է վեց ամիսէն մէկ տարի, ծանրագոյն պարագաներու մէջ՝ հինգ տարի բանտարկութիւն : Պիտի բանտարկուին նաեւ անոնք որ ազգութիւն կը փոխեն կաշառքով : Պատիժներ սահմանուած են նաեւ անոնց որ ոեւէ մէկուն վրայ կը յարձակին իր ազգութեան, լեզուին կամ ցեղին համար : Ազգութեան սկզբունքը պիտի յարգուի դպրոցական կրթութեան մէջ : Դպրոցականները չեն կրնար դաստիարակուիլ ծնողքէն տարբեր ազգութեան պատկանող անձերու կողմէ :

Իւրաքանչիւր ազգութիւն հանրային կեանքին պիտի մասնակցի համաձայն իր թիւին : Խորհրդարանի ընտրութիւններն ալ պիտի կատարուին համեմատական սկզբունքով : Նոյն սկզբունքը պիտի կիրարկուի նաեւ պետական պաշտօնեաներու ընտրութեան առեն : Պետական ելմտացոյցէն համապատասխան բաժին մը պիտի յատկանուի բոլոր կրօնական, լեզուական եւ ցեղային փոքրամասնութեանց : Այս վերջիններուն մշակութային եւ բարեգործական հաստատութիւնները բացարձակապէս հաւասարութիւն պիտի վայելեն չեխական հաստատութեանց հետ, պետական վարկէ սատարուելու համար : Պետական պաշմանագրութեանց մէջ կարելի եղածին չափ նկատի պիտի առնուին իւրաքանչիւր ազգութեան իրաւունքները :

Համաձայն համեմատական սկզբունքին, իւրաքանչիւր փոքրամասնութիւն կրնայ պահանջել այնքան դպրոց որքան թոյլ կուտայ իր թիւը : Իւրաքանչիւր ցեղ կատարելապէս ինքնաւար է կրթական-դպրոցական եւ մշակութային գործերու մէջ :

Կանոնագիրը 20 առ հարիւրէն 15 առ հարիւրի կը զեղչէ այն համեմատութիւնը որ անհրաժեշտ էր, որպէսզի չրջանի մէջ փոքրամասնութեան մը լեզուն պաշտօնական լեզու հռչակելու համար : Այդպիսի չրջաններու մէջ պաշտօնական դրասենեակներու անունները պիտի նշանակուին երկու լեզուներով : Այս կարգէն ամէն չրջանի մէջ կառավարական պաշտօնատուններու հետ եղած թղթակցութեանց մէջ, իրրեւ կանոն պիտի գործածուի փոքրամասնութեան լեզուն : Բացառութիւն կրնայ ըլլալ միայն այն առեն երբ նպատակայարմար համարուի երկու լեզուներն ալ գործածել : Կրթական հնդիրներու մէջ թղթակցութիւնները պիտի կատարուին այն լեզուով որով կը տրուի կրթութիւնը : Պաշտօնեաներ անուանած առեն, նկատի պիտի առնուի ոչ միայն չեխերէնը, այլեւ հանրապետութեան միւս լեզուներուն ծանօթութիւնը : Փոքրամասնութիւնները կրնան կառավարական իշխանութեանց հնդրագիրներ գրել իրենց մայրենի լեզուով : Դպրոցներու ներքին վարչութեան մէջ, կրթութեան լեզուն պիտի գործածուի (մինչեւ հիմա միայն չեխերէնը կը գործածուէր) :

Այսուհետեւ Սահմանադրական Առեանը, որ կը վճռէ օրէնքներու սահմանադրական հանդամանքը, պարտաւոր է նկատի առնել 50 երեսփոխաններու եւ 25 ծերակուտականներու կողմէ ներկայացուած պահանջ մը : (Մինչեւ հիմա անհրաժեշտ էր երեսփ. ժողովին եւ ծերակոյտին բացարձակ մեծամասնութիւնը) :

"ԲՈՑԱՐՁԱԿԱՊԵՍ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ .,

Մասնագէտներ կ'ըսեն թէ ոչ մէկ երկրի մէջ այսքան լայն իրաւունքներ սահմանուած են փոքրամասնութեանց : Եւ սակայն, կանոնագրին հրատարակութիւնը դժգոհութեան փոթորիկ մը պայթեցուց՝ Գերմանիոյ մէջ, ուր բոլորովին անբաւական կը նկատեն զայն : Մամուլը արդէն իսկ արձակած է ազդանշաններ,— «բացարձակապէս անընդունելի» : Այս առթիւ դիտել կուտան թէ չեխական կառավարութիւնը արդէն սկսեր է խափանել Աչղլիոյ ձեռնարկը (միջնորդութիւն) : Եւ ծանր բառեր կը գործածեն,— «նենգ խաղեր», «պլերֆ» եւայլն : Ընդհանուր յոռետեսութիւն կը տիրէ կացութեան մասին : Թերթերը մանաւորապէս կը չեշտեն սա պարագան թէ բոլորովին անտեսուած է Չեխոսլովաքիոյ Գերմաններուն ինքնօրինութեան պահանջը :

Քաղաքական չրջանակներու մէջ լաւ ընդունելութիւն ընելով անգլիացի միջնորդին առաքելութեան, կը ջանան ապացուցանել թէ Գերմանիա կարելին փորձեց կացութիւնը մեղմացնելու համար, բայց այսուհետեւ ամէն պատասխանատուութիւն կ'իյնայ չեխական կառավարութեան վրայ : Թերթ մը կը գրէ այս առթիւ.— «Չեխական կառավարութեան ծրագիրը ներչնչուած է առելութեամբ մը որ կը փակէ խաղաղութեան ճամբան » :

**** Լորտ Րընսիմէն, անգլիացի միջնորդը, Փրակա պիտի երթայ օգոստոս 6ին : Ֆրանսական կառավարութիւնն ալ ուժ կուտայ այս ձեռնարկին :*

**** Փլզէնի գինուորական առեանը անպարտ արձակեց չեխ ոստիկան մը, որ երկու Գերմանացիներ սպաննած էր մայիս 21ին, գերմանական սահմանադլուխին վրայ : Ամբաստանեալը բացատրեց թէ իրեն յանձնարարուած էր կեցնել եւ ի հարկին զարնել որեւէ անցորդ այդ ճամբուն վրայ երկու ուղեւորներէն անասատած էին իր ազդարարութեան, եւ ինք ատրճանակը ուղղեց հեծանիւին, բայց դիպուածով սպաննուեցան երկու անցորդները : Այս վճռին ալ բուռն զայրոյթ պատճառեց Գերմանիոյ մէջ :*

**** Զրոյցի մը համաձայն, Հիթլէր այսօր տեսակցութիւն մը պիտի ունենայ Չեխոսլովաքիոյ Գերմաններու առաջնորդին՝ Հէնլայնի հետ, Պրէսլաւի մէջ : Կը կարծուի թէ քաղաքական ճառ մըն ալ պիտի խօսի, այս առթիւ :*

ՕՐԸ ՕՐԻՆ

«ՈՍԿԻ ԿԱՄՈՒՐՋ»ԻՆ ԱՍՊԵՏՆԵՐԸ

Միւնչեւ չփլաւ, չխոստովանեցաւ :

Եւ հիմա իրար կը մատնեն հրապարակաւ : Կամաց - կամաց կը բակուին կծիկները, ներսէն բանալով **15** տարուան վարագոյրը :

Խօսքը հռչակաւոր Հօկի մասին է :

« Լուծարէ »էն շատ առաջ, երեւան եկաւ դարձուցած էր : Նոյնիսկ պատասխան չէր տար ստիպողական նամակներու եւ հեռագիրներու :

Բայց «սեւը ներս, ճերմակը դուրս», Հօկի ղեկավարները կը շարունակէին պարտկել բուն իրականութիւնը : Կը շարունակէին շոյել ու շոյքել :

Երբ լուծումը յայտարարուեցաւ ,— **1937** դեկտ. **8** — անոնք ճոխ ընդունելութիւններ փորձեցին, այ - ձախ ծանուցանելով թէ այսօր - վաղը լուրի կը սպասեն : Մինչեւ անգամ համոզելով թէ լուծումը կը վերաբերի միայն Երեւանի Հօկին եւ կապ չունի իրենց հետ :

Օրերը շարաթ, շարաթները ամիս եղան,— ոչ մէկ լուր երեւանէն : Ոչ իսկ թերթի կտոր մը :

Եւ ցարահատ, եւ գլխիկոր, դիմակատրները այս անգամ իրենց շապիկն ալ փոխեցին :

Ամերիկայի Հօկը դարձաւ «Ամերիկահայ Ցառաջդիմական Միութիւն » , իր մէջ լուծելով նաեւ «պետական» կոչուած Կ. Խաչը :

Այստեղ, Ֆրանսայի մէջ, «ոսկի կամուրջը» դարձաւ «Ֆրանֆօ - Հայկական Բարեկամութեան Կոմիտէ»:

Հետզհետէ կ'իմանանք միւս դիմակախոսութիւնները ալ :

Արդ, այս անպարարութիւնը արդէն իսկ լեզու հանած է նախկին գործակիցներ, Ամերիկայի մէջ :

Վաղեմի գործիչ մը, Սահակ Զաքէեան, որ վերջերս դուրս ձգուած էր շարքերէն, որովհետեւ կը մերժէր բութակարար «դաւանանք» կոչել Հայաստանի մէջ գիդակահարուած վարիչներն ու գրագէտները, հրապարակաւ «գէնգստերը» (աւազակ) կը կոչէ Հօկի վարիչները :

(Զաքէեան այն գործիչն է որ երկու անգամ երեւան դրկուեցաւ, իբրեւ պատգամաւոր Հօկի):

Ահա բնագիրը, կարդացէք եւ դատեցէք .

— « ԲԱՑԻ ԱՅՍՕՐ, ԵՐԲ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԻՆՔՆ Է ԼՈՒԾԵԼ ԱՅԴ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ, ՈՐՈՆՔ ՏԱՐԵԿԱՆ 10.000 ՏՈԼԱՐԻ ԲԻՒԴՃԷ ԷԻՆ ՄՍԽՈՒՄ Ա-ՌԱՆՑ ԽՈՐՀՐԴ· ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՄԻ ՕԳՈՒՏ ՏԱԼՈՒ, պէտք չէ թոյլ տալ , որ այդ մարդիկ ուրիշ դիմակի տակ ծածկուած նորից չարունակեն չահագործել մեր ընկերներին եւ հասարակութեան :

«Ամերիկահայ Ցառաջդիմական Միութիւնը » ղեկավարւում է նախկին Փէօսայեան քլիկի քաղաքական գէն - գատրներով, նրանք կազմակերպում - Բիւնը առել են իրենց ձեռքը եւ վարում են մի քանի իրենց ձրիօրէն կո - մունիստ հռչակող պարոնների միջոցով :

Պատգ· ժողովները փարա են, եւ այն էլ ինչ վճռւում է մի փոքրիկ չրջանակում, «Բանուոր»ի եւ վաղն էլ «Լրաբեր»ի խմբագրատան :

Վարկաբեկուած եւ չարքեր նօսրացած՝ նրանք թերթը, կազմակերպութեան անունը, ամէն, ամէն ինչը փոխում են ապրելու համար :

Այդ քաղաքական գէնդասրները յառաջդիմական չեն կարող լինել, ո - րովհետեւ նրանք 18 տարի է, ինչ չառլատանութիւն են անում : Կազմակերպութեան հաւը ղրել են կուսակցական կազմակերպութիւնը եւ մասամբ չահագործում են» : (Մշակ, 12 յուլիս) :

Ինչ որ «Նիւ Եորքի Բլիկ» կը կոչուի, Հօկի կեդր· վարչութիւնն է, իսկ Ս· Քէսէեանը՝ հանգուցեալ «Բանուոր»ի խմբագիրը, որ երկու տարի առաջ, երեւանէն վերադարձին, ճառ մը խօսելով փարիզի մէջ, կը պատմէր թէ Ադասի խանջեան հիւծախտ էր եւ շարունակ ջուր կը խմէր, իր աչքին առջեւ ...

Անշուշտ Ֆրանսայի Զբչեանները աւելի պատկերազարդ պատմութիւններ գիտեն, բոցավա՛ռ մանրամասնութիւններով :

Վ.Ա.Հէ

ԱՆԴՐԱՆԻԿԻ ՑՈՒՇԱՐՁԱՆԻՆ ՀԱՄԱՐ

Շէյխ Հաճիի Երիտ· Միութեան վարչութենէն (Մարսէյլ)	90
Ս՛արտ 20ի դումարը (փակուած)	6636
Ընդհ· դումար	6726

ՍԱՆՃԱՔԻ ԽՆԴԻՐԸ ԵՒ ԱՆԳԼԻԱ

« Նիւ Եորք Թայմզ »ի Լոնտոնի թղթակիցը, որ առաջին անգամ հաղորդեց ֆրանճիեւրտւրի զինուորական գաղտնի համաձայնութեան լուրը, հետեւեալ խորհրդածութիւնները կ'ընէ իր վերջին նամակով .—

Աթաթիւրք, տարիներու ջանքերով յաջողեցաւ տեսնել Ֆրանսան որ ճանչնայ Հաթայի մասնաւոր իրաւական վիճակը, բայց վերջնական որոշումը ցեղերու համեմատական ներկայացուցչութեան մասին, ձգուեցաւ միջազգային յանձնախումբի մը :

Ատիկա հարուած մըն էր թրքական քաղաքականութեան, որովհետեւ Յուլիս 15ին կատարուելիք պարկեչտ ընտրութիւն մը ցոյց պիտի տար թէ բնակչութիւնը իրապէս արաբական է եւ հետեւաբարպիտի պարտուէր Հաթայը Սուրիայէն անջատելու թրքական պահանջը : Ուստի Աթաթիւրք զինուոր համախմբեց սահմանագլուխին վրայ եւ իր զորձակալները Ալեքսանդրէթի մէջ սարսափի մատնեցին Ազգերու Դաշնակցութեան յանձնախումբը : Այս վերջինը ծրնեա տեղեկացուց թէ անկարելի է իրեն համար չարունակել իր զործը եւ թէ վերջնականապէս պիտի մեկնի :

Իրերու այս կացութիւնը մտահոգութեամբ կը դիտուի Լոնտոնի մէջ, ո - րովհետեւ, նախ, այդ կերպով Թուրքիոյ իշխանութիւնը կը հաստատուի Սուրիոյ մուտքի դրան վրայ : Արաբ պետութիւնները միութիւն չունին, ին չոր Թուրքիան կը դարձնէ ահարկու դրացի մը եւ Ալեքսանդրէթի մէջ թրքական զօրագունդին ներկայութիւնը դժալի պիտի ըլլայ Դամասկոսի, Պաղտատի եւ նոյնիսկ Երուսաղէմի եւ Մէքքէի մէջ :

Երկրորդ, ամբողջ արաբ աշխարհին աչքին ազեուալի հարուած մը պիտի կրէ Ֆրանսայի եւ նոյնիսկ Բրիտանիոյ ազդեցութիւնը : Նոյնիսկ Եգիպտոսի կացութիւնը կրնայ ազդուիլ այս նոր փոփոխութենէն :

Երրորդ, Թուրքիան մեծ չահ մը ձեռք բերաւ, առանց համապատասխան հատուցում ընելու Ֆրանսայի : Նոյնիսկ Աթաթիւրքէն չկորզուեցաւ որեւ յանձնառութիւն մը, եթէ եւրոպական բարդութիւններ երեւան գան : Հոս այնպէս կը զգան թէ Թուրքերը հսկայ չանթաժ մը գլուխ հանելէ ետք, հանդարտ պիտի չկենան եւ չսպասեն աւելին պիտի պահանջեն :

Զորրորդ Ֆրանսա ուղղակի մեղսակից եղաւ կացութեան մը առեղծումին մէջ, ուր Ազգերու Դաշնակցութեան յանձնախումբը կը հեռանայ անփառունակ կերպով, առանց իր պարտականութիւնը կատարած ըլլալու : Մամուլի քարո -

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Դ· էջ)

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԿԱՐԳԱԽԱՂԸ

The Hunch of Stamboul

By DENNIS WHEATLEY

ԹԱՐԳ. ՅԱՐՈՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Բաժին I. M.

Թարգմ. ծ. Ս.

Մահճակալի մեջ իր բոլոր հագուստները հագած պառկած էր Ռոնալդ Սաութեյը, որ հոգնած ու ծարավ էր, բայց չէր համարձակվում ոտքերը դուրս հանել, որպեսզի չարթնացնի կնոջը, որ նրա կողքին էր։ Ժամը հինգն էր անց։ Ռոնալդը ոչ միայն հոգնած ու ծարավ էր, այլև ամբողջ մարմնով ցավում էր։ Նա ամբողջ գիշերը ոտքի էր եղել, և ամբողջ ժամանակ ստիպված էր եղել ինքն իրեն զսպել, որ չհայհոյի։ Ամբողջ գիշեր նա ստիպված էր եղել ինքն իրեն ասել, որ ինքը ոչ թե հարբած է, այլ հիվանդ։

Ռոնալդը ոչ միայն հարբած չէր, այլև ամենևին էլ չէր խմել։ Նա ընդամենը երեք բաժակ գինի էր խմել ընթրիքի ժամանակ, և դրանից հետո ոչ մի կաթիլ ալկոհոլ չէր ընդունել։ Նա ուղղակի հիվանդացել էր։ Ինչ-որ բան էր կերել, որ իրեն վատ էր զգում։ Ինչ-որ բան, որ նրան ստիպում էր ամբողջ գիշեր ոտքի կանգնել, ամբողջ գիշեր ցավերից տանջվել, ամբողջ գիշեր ինքն իրեն զսպել, որ չհայհոյի

ՊԱՐՈՒՅԱԿ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՐՎԵՍՏԻ ՀԱՄԱՄԱՍՆ ՈՒ ՆՐԱ ՊԱՏՄԱԿԱՆԸ

(Թերմանական պատմություն)

«Ի՞նչ ասել մեր ուրախ ժամանակների մասին, երբ ամեն մի ոտքի վրա ինչ-որ բան էր ստեղծվում, ամեն մի քայլափոխի մի նոր բան էր հայտնվում, երբ ամեն ինչ նոր էր, անսովոր, ինքնատիպ, ինչ-որ ուրիշ տեղ չտեսնված, ինչ-որ ինքնուրույն, ինքնագոյ, ինքնաստեղծ, ինքնաբուխ, ինքնաբերական, ինքնաբերաբար ինքնաբերական, ինքնաբերաբար ինքնաբերական, ինքնաբերաբար

գումթիւնը ինչ դիմակ ալ հագցնել փորձէ, ժողովուրդը չի խաբուիր եւ կը տեսնէ թէ Ֆրանսա, որ ամէնէն Թունդ պաշտպանն էր Ժընեւի պարտութեան մատնեց զայն :

Հաթայլի խնդրով ոչ թէ նոր գամ մը, այլ գամերու ամբողջ մարտկոց մը խրուեցաւ Ազգերու Դաշնակցութեան դագաղին : Աւելի քան երբեք մահամերձ է Ազգերու Դաշնակցութեան ուխտը : Լոնտոնի մէջ կը հարցնեն.— Ֆրանսա ինչպէս պիտի գայ ժընեւ եւ արդարացնէ իր վերաբերումը՝ Ալեքսանդրէթի բնակչութեան իրաւունքներուն հանդէպ :

Թուրքերը այսօր Ֆրանսացիներուն հետ գրաւած են Հաթայը : Վաղը Ֆրանսացիները կրնան երթալ, բայց Թուրքերը պիտի մնան : Օր մ՝ անոնք Մուսուլի քարիւղի դաշտերուն հարցը պիտի վերաբանան : Այն ատե՞ն ինչ պիտի ըսէ եւրոպական դիւանագիտութիւնը :

*** Գահիրէի թերթերը կը գրեն.—

Կացութիւնը յարաբերաբար հանդարտ է : Այս վերջին օրերու ընթացքին ոչ մէկ լուրջ միջադէպ տեղի ունեցաւ : Սակայն եւ այնպէս էնկլիւբէյն սառցուած լուրերը որոշ զգուշութիւն յառաջ բերին արաբական հանրային կարծիքին մէջ : Այդ լուրերը կը հաւաստեն արդարեւ, թէ Թուրք կառավարութիւնը որոշած է 12 միլիոն Թրքական ոսկի յատկացնել՝ Սանճաքին մէջ կարգ մը կարեւոր ծրագիրներու իրագործման : Այդ ծրագիրները դեռ անյայտ են, բայց կ'ըսուի թէ յիշեալ գումարին մէկ մասը պիտի յատկացուի զօրանոցներու շինութեան՝ Թրքական զինուորներու տեղաւորման համար : Այս նպատակին համար ձեռնհաս իշխանութեանց պիտի յանձնուի հինգ միլիոն Թրքական ոսկի :

Խամ մը եւս սպանիւոեցաւ Գադհսթիի մէջ

»»» • «««

Ակրայի մեծ մզկիթին իմամը, չէյխ Հիւսնի Ապտիլ Բահիմ սպաննուեցաւ յուլիս 27ին, տարճանակի հարուածով մը : Երկրորդ սպաննութիւնն է այս որ կը կատարուի Գադհսթիի իսլամ կղերականներուն դէմ : Առաջին անգամ սպաննուեցաւ Խոմէրի մեծ մզկիթին իմամը, Երուսաղէմի մէջ :

Նոյն օրը ուրիշ դէպքեր ալ պատահեցան Գադհսթիի մէջ : Ռամլէի մօտ արաբ ըմբոստները կրակ բացին հանրակառքի մը դէմ որ հրեայ հողագործներ կը փոխադրէր : Երեք հոգի վիրաւորուեցան : Նաբլուսի մօտ, երկու արաբ ոստիկաններ դաշնահարուեցան Հրեաներու կողմէ : Վիրաւորներէն մէկուն վիճակը յուսահատական է : Երկու սպառազէն աւազակներ կրակի տուին կայարան մը : Ռամլ մը պայթեցաւ Երուսաղէմի մէկ արուարձանին մէջ եւ երեք հոգի վիրաւորուեցան :

"Կարելի չէ ուծյատել Հոսմր Պետրոսը, Քարհգր Լոնտոնն„

Լորտ Հըլիֆէքս, Անգլիոյ արտաքին նախարարը, ճառ մը խօսելով Լորտներու ժողովին մէջ, բացատրեց թէ կառավարութիւնը կը յուսայ դիւրացնել Հնդկական հարցին լուծումը, Փրակա զրկելով լորտ Բընհամը : Այս առթիւ խօսեցաւ նաեւ Հիթլէրի Թիւնապահին այցելութեան վրայ եւ յայտարարեց.

— « Ես չեմ կարծեր թէ ներկայիս Եւրոպայի որ եւ է երկրի մէջ վարիչները պատերազմ կ'ուզեն : Եթէ ծրագրուած միջնորդութիւնը պիտի յաջողի, լաւ է զգուշանալ մեղադրանքներէ եւ սպառնալիքներէ : Ես կը յուսամ թէ զինամանական կառավարութիւնն ալ նոյն խորհուրդը պիտի տայ, խուսափելու համար անելիք մը որուն հետեւանքները անհաշուելի կրնան ըլլալ » :

Անցնելով անգլեւիտալական յարաբերութեանց, նախարարը յայտարարեց.

— « Զանազան շրջանակներու մէջ կ'ըսուի թէ անգլեւիտալական համաձայնութեան բուն նպատակն է միս մը փորել Ֆրանսայի եւ Անգլիոյ միջեւ : Վրճռապէս կը յայտարարեմ.— Որեւէ քաղաքականութիւն որ կը հիմնուի Հռոմը եւ Պերլինը իրարմէ բաժնելու յոյսին վրայ, դատապարտուած է ձախողման, ինչպէս որ եւ է փորձ որ կը ձգտի անջատել Փարիզն ու Լոնտոնը : Կը ցաւինք որ համաձայնութեան առորդութիւնը չօգնեց անմիջապէս բարւոքելու Ֆրանսայի եւ Իտալիոյ յարաբերութիւնները : Արդարեւ, համաձայնութեան դիտաւոր նպատակներէն մէկն էր վստահութեան մթնոլորտ մը ստեղծել Միջերկրականի մէջ : Ցորչափ Ֆրանքօ-իտալական յարաբերութիւնները չեն սերտացած, անգլեւիտալական համաձայնութեան նպատակները չեն կրնար իրականացած համարուիլ » :

Նախարարը յիշատ փառաբանեց անգլեւֆրանսական բարեկամութիւնը, «որ կախում չունի Թուղթի կտորէ մը» :

Խնդդ մը 17րդ յարկէն գտնկից 100,000 ժողովուրդի առջեւ

Անձնասպանութեամբ դէպք մը պատահեցաւ Նիւ Եորքի մէջ, ամէնէն բանուկ պողոտային վրայ : 28 տարեկան խնդ մը հակայական, երկնասլաց շէնքի մը 17րդ յարկին քովէն վրայ կեցած, անդադար կը ծխէր եւ կ'ողբարբէր թէ ինքզինքը վար պիտի նետէ : Ամէն մէկուն փորձեցաւ, մարդը համոզելու համար : Մայրը հեռաձայնով կը պատուէր, քոյրը վարէն կ'աղաչէր, ոստիկաններ եւ բարեկամներ յորդոր կը կարդային : Անօգուտ : Խնդը կը սպառնար ինքզինքը վար նետել անմիջապէս, եթէ ուեւէ մէկը համարձակէր մօտենալ : Ոստիկանները փորձեցին վեր ելլել սանդուղներով, մարդը միշտ կը սպառնար : Ի վերջոյ ցանց մը չինեցին, 16րդ յարկին ծայրը կապելով 18րդ յարկին, որպէսզի խնդը ցատկած առնէն մէկին իյնայ :

Այսպէս տեւեց տասնմէկ ժամ. վարը, աւելի քան 100.000 հոգինոց բազմութիւն մը անձկութեամբ կը սպասէր ելքին : Մինչեւ անդամ գրասենեակ,— պիտի ցատկէ՞, պիտի չցատկէ՞ :

Գիշերուան ժամը 9ին, մինչ ոստիկանները կը փորձէին դէպի ցանցը մղել խնդը, ան գլանիկ մը եւս վառելով ինքզինքը վար նետեց, քսուեցաւ ցանցին, եւ սալայատակին վրայ փռուեցաւ չարդուփշուր :

Հարուստի մը զաւակն էր, եւ անձնասպանութեան պատճառները անյայտ կը մնան :

ՋԱՆԱՊՁԱՆ, ԼՈՒՐԵՐՔԱՆԻ ՍԸ ՏՐՈՂՈՎ

Սթաւլինի դէմ սարքուած մահափորձի մը լուրը կը հրապարակեն խառնական թերթերը : Կ'ըսուի թէ անձնապահ վաչխին հրամանատարը ձերբակալուած է, իսկ վաչխը լուծուած :

Սպանիոյ հանրապետական կառավարութիւնը կը ծանուցանէ թէ զօրքը փայլուն յաջողութիւն մը տարաւ, չախչախելով ապստամբներուն յառաջխաղացութիւնը : Կոխիները սաստկացած են եւ Ֆրանքոյի բանակը անընդհատ կը ամբակոծէ հանրապետական դիրքերը : Կառավարութիւնը ամենամեծ յարձակողականն է որ կը կատարէ, Թէրուէլի ճակատամարտէն ի վեր :

Ծովային նախարարը, Պ. Քանփինքի, Պրէսթ երթալով, ընդունեցաւ «Փրովանս» զրահաւորեալ մէջ : Ցետոյ սուզանաւ մը նստաւ եւ իջաւ ծովուն խորերը : Օդանաւային նախարարն ալ Մէօլթ (Սոմ) գնաց, ուր հակայական չէնութիւններ կը կատարուին, օդանաւային սպառազինութեան համար :

Ա. Միութենական նախորդ ընդհ. գրասենեակը, Քրիլէնկօ, որ «անհետացած է» ամիսներէ ի վեր, ժողովուրդի թշնամի հռչակուեցաւ իր յաջորդին՝ հռչակաւոր Վիշինսկիի կողմէ : Այս վերջինը կ'ամբաստանէ ոչ միայն Քրիլէնկօն, այլեւ անոր օգնականը, փրօֆ. Պաւուկանիս եւ ուրիշ բազմաթիւ պաշտօնատարներ :

Հ. Յ. Դ.

Փարիզ

ՓԱՐԻԶԻ ՓՐՕՓԱԿԱՆԴԻ ՅԱՆՁՆԱԺՈՒՄԲԻ նիստը այս երկուշաբթի (1 Օգոստոս) երեկոյ ժամը 8.30ին սովորական հաւաքատեղին:

ՓԱՐԻԶԻ «ՅԳԻՊՏՍԻՏ» կոմիտէն ընդհ. գաստախօսական ժողովի կը հրաւիրէ իր շրջանի ընկերները այս Ուրբաթ երեկոյ ժամը 8.30ին Ե, Ավընիւ ա'Իթալիի սրճարանի վերնայարկը:

Օրակարգ՝ կարեւոր զեկոյց ընկեր Խ.ի կողմէ:

ԻՍԻ ԼԷ-ՄՈՒԼԻՆՈՅԻ «Զաւարեան» կոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները Յ0 յուլիս շաբաթ երեկոյ ժամը 9ին Ակումբին վէջ, կարեւոր, օրակարգ:

ՍԷՆ-ԺԷՐՄԱՆի (Մարսէյլ) «Հայաստան» ենթակոմիտէի ընդհ. ժողովը 30 յուլիս շաբաթ իրիկուն ժամը ճիշտ 9ին, սովորական հաւաքատեղին, բոլոր ընկերներու ներկայութիւնը անհրաժեշտ է:

ՍԷՆԹ-ԱՆԹՈՒԱՆի (Մարսէյլ) «ընկեր Կարօ» ենթակոմիտէի ընդհ. ժողովը 31 յուլիս կիրակի իրիկուան ժամը 6ին սովորական հաւաքատեղին: կարեւոր օրակարգ:

ՊՈՒԼՎԱՐ ՕՏՏՕԻ Հ. Յ. Դ. «Վռամեան» ենթակոմիտէի ընդհ. անդամական ժողովը Յ0 յուլիս շաբաթ երեկոյ ժամը 8ին, սովորական հաւաքատեղին: կարեւոր օրակարգ:

Դաշնահաւեդէս

կազմակերպուած՝ Հ. Յ. Դ. ՄԱՐՍԷՅԼԻ «ՔՐԻՍՏԱՓՈՐ» ենթակոմիտէի կողմէ, 21 Օգոստոս կիրակի ամբողջ օրը:

կը խնդրուի չի խաչածեւել:

Դաշնահաւեդէս Շավրլի անցատեղի մէջ

ԽԱՆԱՍՈՐԻ ԱՐՇԱԿԱՆՔԻ 41ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻԻ

կազմակերպուած Հ. Յ. Դ. «ԱՐՂՈՒԹԵԱՆ» խումբի կողմէ

Յուլիս 31ի կիրակի օրը:

ժամը 3ին այցելութիւն Իշխան Արղութեաններու շիրմին:

Բանախօսութիւն, երգ, արտասանութիւն, նուագ եւ պար:

Գիւղիզ մատչելի գիներով:

Ներկայութիւնը պարտաւորիչ է:

Ա՛ն ոք որ ի տարօն-Տրապիզոնի Հ. Միութեան կողմէ. փարիզի մէջ յուլիս 31ին, կիրակի. Էս օրէ վերջ ժամը 3ին, Պ. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆի սրահը, 13, Rue Pierre Curie, Kremlin-Bicetre. Métro: Porte d'Italie.

կը հաճի գալ հայրենակից Պ. Ա. ՉԱՔՐԵԱՆ

կը խօսի՝ Պ. ԱՇՈՏ ԻՍԱՀԱԿԵԱՆ

Բանախօսութիւն, երգ, նուագ, իրատասանութիւն եւլն.:

Գեղարուեստական բաժինը կը ժամադակցի՝ Տաւիթ ԳԱՐԼԻՆի, կ'երգեն ընկերներ ԿՆԻԱԶԵԱՆ, Ա. ԳԱՎԻԶԵԱՆ եւ ՍՏԵՓԱՆ ՊՕՂՈՍԵԱՆ, կ'արտասանէ՝ ՏԱՐՕՆ ՏՕՆԻԿԵԱՆ,

Հպկական պար՝ փոքրիկ աղջիկներու կողմէ

Ծախքերու համար մուտք՝ 5 ֆրանք:

Ռուզմիկի օր

ԱՆՆԱԽԸՆԹԱՑ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

կազմակերպուած՝ ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐՆԵՐՈՒ եւ ՄՍՏՐԻՒՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԵԱՆ ՄԱՐՍԷՅԼԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ

Նուիրուած՝ ԱԶՆԱԹԱՒԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻՒ

կիրակի, 31 յուլիս սկսեալ ու դրէթէ պահ պէտ վէյէրի օդանաւակայանի մէջ

կը նախագահէ՝ Գ. Տ. ԽԷՐՔԷԵԱՆ

կը բանախօսեն՝ Գնդապետ Տ. ԲԱՂՏԱՍԱՐԵԱՆ

Գ. Գ. Դր. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ, ՅՈՎՀ. ՀԱՅՏՈՒՐՅԵԱՆ եւ ՍԶԴԻՆ ՄՍՐՏՐՈՍԵԱՆ

Գեղարուեստական ճոխ բաժին: կարելի է ճաշը հետ բերել:

Առնել 25 թիւ հանրակառքը եւ իջնել վերջաւորութեան, Ծախսերու մասնակցութիւնք՝ 2 ֆրանք:

Վարդանանց եւ Տաւթի յիշատակը

կը տօնուի Տարօնի Երկրամասի Հ. Միութեան կողմէ. փարիզի մէջ յուլիս 31ին, կիրակի. Էս օրէ վերջ ժամը 3ին, Պ. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆի սրահը, 13, Rue Pierre Curie, Kremlin-Bicetre. Métro: Porte d'Italie.

կը նախագահէ հայրենակից Պ. Ա. ՉԱՔՐԵԱՆ

կը խօսի՝ Պ. ԱՇՈՏ ԻՍԱՀԱԿԵԱՆ

Բանախօսութիւն, երգ, նուագ, իրատասանութիւն եւլն.:

Գեղարուեստական բաժինը կը ժամադակցի՝ Տաւիթ ԳԱՐԼԻՆի, կ'երգեն ընկերներ ԿՆԻԱԶԵԱՆ, Ա. ԳԱՎԻԶԵԱՆ եւ ՍՏԵՓԱՆ ՊՕՂՈՍԵԱՆ, կ'արտասանէ՝ ՏԱՐՕՆ ՏՕՆԻԿԵԱՆ,

Հպկական պար՝ փոքրիկ աղջիկներու կողմէ

Ծախքերու համար մուտք՝ 5 ֆրանք:

ԱՄԱՎԵՐՋԻ ԴՊՐՈՑԱՍԱՆ ՀԱՆԴԷՍ ՊԱՒՈՆԻ ՄԷՋ

կազմակերպուած՝ ՄԱՆԿԱԳԱՐԶԱՆՑԻ ԸՆԿԵՐՈՒՏՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ

Նախանձախնամութեամբ՝ ՔԱՂԱՔԱՒԱՆ ԹՈՐՇՈՒՐԴԻՆ

եւ հովանաւորութեամբ՝ ԱԶԳ. ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

31 Յուլիս կիրակի կէս օրէ ետք ժամը 3ին, Պոմպոնի վարանդեան սրահը

10bis, Bld. Marguerite. Baumont.

կը նախագահէ՝ Տ. ՉԳՈՆ Վ. ՏԷՐ - ՅԱԿԱԲԵԱՆ

երգ. Նուագ, արտասանութիւն. գեղարուեստական պարեր եւ մարգահանդէս: կը խորհուրդ ծծկեր մանուկներ չբերել:

ՄՈՒՏՔԸ՝ ԱԶԱՏ Է:

ՀՈՒՇԱՏԻՏՐ

ՑԲ Կ. Թաղի Լիոնի մասնաճիւղին ժողովը այս Ուրբաթ երեկոյ ժամը 8.30ին, 181, Գուր Լաֆայէթ. գրադարանիսրաքր: Օրակարգ.— Երջանքերական ընտրութիւն, Օգափոխութեան կայանի կարգադրութիւն, Ընդ. խնդիրներ, պարտաւորիչ ներկայութիւն, ներկայանալ անդամատետրով:

Ժամացոյցի եւ գոհարեղինաց վաճառատուն

ՀՐԱԶ ՍԱՐԳԻՍԵԱՆ

261, Rue du Fbg. St. Martin

Métro: Louis Blanc et Jaurès

Le Gérant : H. STEPHAN

17, Rue Damesme, PARIS (13)

A. DER (AGOPIAN)

ՆԱԽԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

Կազմակերպուած՝ **ՄԱՐՍԷՅԼԻ ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ**

14 ՕԳՈՍՏՈՍ ԿԻՐԱԿԻ ԱՌԱՒՕՏԷՆ ՍԿՍԵԱԼ

Մեկնումը՝ Vieux Portէն — վիէյ Քօռ — դէպի Cassis՝ ծովեզերեայ օգաստուն վայր մը:

Ամբողջ օրը հաճելի պատյտ եւ ուրախութիւն ժառանգիկ շրջանակով մը նաւագ եւ գեղեցիկ անակնկալներ, շարժանկարի պիտի առնուին բոլոր նաւագնացները:

Ազնանագրութիւնները կը փակուին Օգոստոս 12ին:

Առնանագրուելու, ինչպէս նաեւ պայմանագիրը եւ մանրամասնութիւնները համար դիմել՝ **Ս. Տիրատուրեանի** 2, Rue Philippe de Girard եւ **Ա. Քէօսէեանի** 11 Place Jules Guesde — Փլաս ս'Էֆս:

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ

Լեռնէք-Արտեան

Ամսագրին Յունիս-Յուլիսի միացեալ թիւը, յատկացուած էջերով եւ հետեւեալ բովանդակութեամբ.—

Մ. Թրատիչ Գարսամեան՝ *Սրփիար Սրփիարեան*, Ա. Ջոպանեան՝ *Բոլ Լադեանի աշխատանոցին խմբանկարը*, Գ. Եպսկ. Տրապիզոնի՝ *Մշակը*, Ն. Սարաֆեան՝ *Քերթուած մը*, Վ. Թոթովինց՝ *Տրդատայ Թագը*, Ֆ. Նարենց՝ *Բեղմնաւորում (քերթուած)*, Հրաչ Սարգիսեան՝ «Շանսոնէ» Փ. Սահասար՝ *Վերադարձ դէպի Բեռլին*, Հ. Ա. Քիպարեան՝ «Կիլիկիոյ Զարչարանքը» գրքին մասին եւ ամսօրեակ:

Խմբագրութիւնը կը խնդրէ իր բաժանորդներէն եւ գործակալներէն փակել *1938ի* հաշիւները:

Բաժանորդագրութիւն Ֆրանսա 40, եւ արտասահման՝ 50 ֆրանք:

Դիմել՝ Մ. ՊԱՐՍԱՄԵԱՆ, 30, Rue Drouot, Paris (9):

Հ. ՋԱՐԴԱՐԵԱՆ

ՎԻՐԱԲՈՑԾ - ԱՏԱՄՆԱԲՈՑԾ

44 Rue Dunkerque (ՄԷՏՐՕ ԿԱՐ ՏԻՒ ՆՈՒ)

Tél. Trudaine 42-69

Կ'ընդունի ամէն օր ժամը 14 - 20:

Առաւօտները ժամագրութեամբ:

ԿԱՐԱՊԵՏ Ց. ԷՄԷՐԵԱՆ

Maison E. CHARLES *հիմնուած 1869*

29 rue Mathis, Métro Crimée

Autobus: AJ, AV, CP, 52, 50/71 Tel. Botzaris 12-60

Կը ծախենք գահաւեղէններ, ամէն տեսակ ժամացոյցներ, մատանիներ եւլն.: Նորոգութիւն ժամացոյցներու եւ գոհարեղէններու: Կը գնենք թալէին, ոսկի, արծաթ եւ գոհարեղէններ նպաստաւոր գիներով:

Մի մոռնաք որ վստահելի ձեռքէ գնուած ոսկեղէն ու գոհարեղէնները անփոփոխ կը պահեն իրենց արժէքը:

Գուառանտիէն հոսած ապագային երբ կը կարգադրուին արագ եւ խղճմտօրէն:

ԿՕՊՈՑԻՒՐ ՌՈՒՍԱՍՏԱՆ ՂՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ունինք մեծ մարք անգլիական, իր անսակաս եւ չեխոսլովաք կերպասներով՝ այր մարդոց վերարկուի, հագուստի, կանանց ոսպերու եւ հագուստներու համար: Ձրաշնակարգ կօշիկներ, ճերմակեղէններ եւ նպաթեղէններ: Ունէրվուատ գրի մեքենայ: Ձափաւոր գիներ:

Դիմել՝ **American Lloyd, Paris (9). 7 rue Auber**

Tél. Opéra 67-77

ՈՒՆ DUZE.

MARQUE DÉPOSÉE



ՐԱՔԸ ՏԻՒԶ

Ջուտ խաղողէ քաշուած անխառնուած պատրաստուած հայկական օղին **ՐԱՔԸ ՏԻՒԶ**ն է: Զգուշացէք արուեստական օղիներէ ձեր ստամոքսը կ'այրէ: Գիշերները ջուր կը խմէք եւ կը վնասէ ձեզ: Ուստի ուշադրութեան: **Խմեցէք միայն ՐԱՔԸ ՏԻՒԶը** որուն անունը կրած, կազդուրիչ եւ ախորժաբեր ըլլալը ճաստատուած է:

Dalakupeian 8 Rue Sufflot

Dépôt: 7 Rue de la Paix, Marseille. Tél. Dragon 70-89

ՑՈՒՈՒԶ կը ծախուի

24, Rue des Petits Carreaux, փարիզ Mr. Pierre Marchal՝ խանութը

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ

ՆՇԱՆ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆԻ

«ԾԱՂՐԱՆԿԱՐԴԵՐ»

երգիծական նոր հատորը (208 էջ)

Մանօթ դէմքեր եւ ժողովրդական տիպեր: Վարդաստան մը ժպիտ, խինդ, ծիծաղի եւ հեգնութեան լաւագոյն նուէրը ինքզինքին ու բարեկամին.

«Խնդալ գիտցիր որ առողջութիւնն ու բախտն ալ քեզի խնդան» Մէտիցի

«Իւրաքանչիւր ժպիտ հոգիին մէջ լոյս մը կը վառէ» Ասկիէպիոս

«Ծիծաղը սրտին արեւն է» Հանու - Հիւր

Հատորին գինն է Ֆրանսա եւ գաղութներ 20 ֆր., արտասահման 25 ֆր.

Դիմել հեղինակին.— 21, Rue Ampère, Cachan, Seine, France:

ՅԱՌԱՋԸ

ՕՐԱԹԵՐԹ, ԱԶԳԱՑԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՏՐԱՄԱՆ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE

HAYRATCH

(Fondé en 1925) :-: R. C. Seine 276.286

Directeur et Propriétaire : SCH. MISSAKIAN
Rédaction et Administration
ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
17, Rue Damesme, PARIS (13e)

Téléphone : Glacière 15 - 76
Chèque Postal Paris 1678 - 63
(ԵՐԹԵՒԵԿԻ ՀԱՄԱՐ՝ Métro : TOLBIAC)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ —

	ՏԱՐԵԿԱՆ ՎԵՑԱՄՍԵԱՅ	ԵՒԱՄՍԵԱՅ	
Ֆրանսա եւ Գաղութներ	150 ֆրանք	75 ֆրանք	40 ֆր.
Անգլիա եւ Իտալիա	265 ֆրանք	140 ֆրանք	
Ուրիշ երկիրներ	215 ֆրանք	110 ֆրանք	

ՇԱԲԱԹ
30
ՅՈՒԼԻՍ
SAMEDI
30 JUILLET
1938

14e Année No. 3795

Խմբագիր՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱԿԵԱՆ

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ԵՐԲ ՕՏԱՐԸ ՄԵՋՄՈՎ ԿԸ ՁԲԱՂԻ...

Երկու միջանկեալ յիշատակութիւններ — մեր գոյութիւնն իսկ «միջանկեալ» է՞ ան միջազգային ժխորին մէջ— կը ստիպեն մեզ դրի առնել այս խորհրդածութիւնները :

Առաջին յիշատակութեան կը հանդիպինք Փարիզի արմատական պաշտօնաթերթին, «լ'Իօվռ»ի մէջ :

Թերթին քաղաքական աշխատակիցը, Անտրէ Փիէռ, չահեկան դրութիւն մը առորագրած էր հինգշաբթի օր, 28 յուլիս, հետեւեալ խորագիրներուն տակ.— «Շատ մը ռուս տարագիրներու համար Հիթլէր Ռուսաստանի ապագայ փրկիչն է.— եւ մետրոպոլիտ մը իր փառէր կ'երգէ ...»:

Յօդուածագիրը կը պատմէ թէ Գերմանիա ապաստանած Ռուսերը հիթլէրական դարձած են հարիւրին հարիւր :

— « Ռօզենպէրկի եւ Կէսթափոյի (գաղտնի ոստիկանութիւն) գրասենեակները լրջօրէն «քանւած», խմորած են չափազանց երկար ատոսրէ մը վիատած այս շրջանակները եւ գինուորագրած (շատ ադժան գնով) գործակալներ որոնք պատրաստ են ամէն տեսակ աշխատանքի: Ցետոյ, հրաման տրուած է ռուս տարագիրներուն որ համախմբուին ըստ ազգութեան: Բուն Ռուսերը «Ֆիւրէր» (Առաջնորդ) մը կը փնտռեն: Զանոնք կեռ խաչին տակ միացնելու համար, վերջերս կազմուած է կեդրոն մը, դեկավարութեամբ չորս նախկիններու, որոնց մէջ զարմանալի չէ տեսնել հոչակաւոր զօրավար Տուրգուլը, որ Փարիզէն արտաքսուեցաւ Զօր. Միլլէրի առեւանգութեան հետեւանքով: Ուկրայնացիները, որոնք կը յուսան օր մը տեսնել Հիթլէրի յաղթական մուտքը Քիէվի մէջ, կը գտնուին նախկին խազախապետ Սկորոպատսկիի կամ Պրոկոպովիչի (Փէթլուրայի նախկին վարչապետը), եւ կամ Սեվտիուկի հրամանին տակ (այս այն գերմանասէրն է որ Ուկրայնայի եւ Գերմանիոյ անջատ հաշտութեան բանագնացներէն մէկը եղաւ 1918 փետրուարին, որ յանդգնութիւնն ունեցաւ ֆրանսական հրապատակ դառնալու 1928ին եւ բանի մը ամիս վերջը զրկուեցաւ այդ իրաւունքէն...): Վրացիները, Հայերը եւ ուրիշներ ալ նոյն ձեւով կը համախմբուին գերմանական ոստիկանութեան հսկողութեան տակ: Այսպէս կազմակերպուելէ վերջ, կայսերական Ռուսաստանի տարագիրները պիտի կրնան աւելի դիւրաւ կազմել հարուածային լեգէոններ եւ վաշտեր, ի հարկին իրականացնելու համար « Իմ Պայքար»ին մէջ պարզուած հիթլէրական երազները »:

Այս երկար հատուածը արդէն կը բացատրէ թէ «բանը չո՛ւմն է»: Մնացեալը կը վերաբերի մետրոպոլիտ Անաստասի, որ իրրեւ «հովուապետ արտասահմանի օրթոտոքս եկեղեցւոյ», վարաբանական նամակ մը ուղղած է Հիթլէրի, նոր տաճարի մը շինութեան առթիւ, (գերմանական նպաստով) :

Ուրեմն, Գերմանիոյ ափ մը Հայերն ալ — 4-500 հոգի — «դրօշի տակ» առնուած են, ի հարկին ճակատելու համար Մ. Միութեան դէմ, իրրեւ հիթլէրական վաշտեր ...

Ահա թէ լուրջ համարուած մամուլը ի՛նչպէս կը կերակրէ իր ընթերցողները, օրը ցերեկով, Լոյս Բաղաքին մէջ: Աւելի երկար խօսիլ այս մասին՝ պիտի նշանակէր եղծել խաղին գաւեշտական հանգամանքը :

Երկրորդ յիշատակութեան կը հանդիպինք անգլիերէն Թերթի մը մէջ. — Լոնտոնի դեղին մամուլի չարքէն :

« Իվնինկ Սթէնտարտ»ի մէջ (27 յուլիս), աշխատակից մը, Ճօրճ Մ. Թոմսըն, անձկութեամբ կը հարցնէ թէ «Ո՞ւր պիտի երթան Հրեաները »:

Յօդուածագիրը ինքզինքը համակիր կը հռչակէ Հրեաներուն: Բայց եւ այնպէս, համաձայն չէ որ Գերմանկայէն եւ Աւստրիայէն փախած Հրեաները Անգլիա ընդունուին: Եւ կուգայ կ'երթայ... հայկական հարց մըն ալ կը յարուցանէ.

— « Եթէ ես առաջարկէի որ հալածական Հայերուն թոյլ չտրուի տեղաւորուիլ այս երկրին մէջ, պիտի ենթադատուէի՞ ատոր համար: Պիտի պախարակուէի՞ իրրեւ տմարդի: Անշուշտ ոչ: Պ. Մայբըլ Արլէն, ինկն ալ ականաւոր Հայ մը անգլիահպատակ, համակրանք պիտի չվայելէր, եթէ գիս ենթադատէր այս պատճառով: Ոչ ալ ես որ եւ է կարեւորութիւն պիտի տայի իր տրտունջներուն, եթէ յայտնէր»:

Այս ճախաւեր անկարկին վրայ, Լոնտոնի մեր աշխատակիցը նամակ մը ուղղելով Թերթին խմբագրութեան, կը բացատրէ թէ երբեք խնդիրը չէ եղած հալածական Հայերը տեղաւորել Անգլիոյ մէջ, «հետեւաբար, անհերթէք է, եթէ ոչ չարամիտ, աննպատակ մթնոլորտ մը ստեղծել անոնց համար»: Եւ յօդուածագրին ուշադրութեան կը յանձնէ, արդար դառնութեամբ.—

1· *Հայերը Թուրքիոյ մէջ հալածուեցան իրենց անգլիասէր զգայումներուն համար:*

2· *Անոնք հարիւր հազարներով չարդուեցան Մեծ պատերազմին առեն, որովհետեւ իրենց ճակատագիրը կապեցին Համաձայնութեան հետ :*

3· *Անոնք պարտուեցան «Մեծն Բրիտանիոյ ազնիւ բարեկամներուն» դէմ իրենց մղած պայքարին մէջ, որովհետեւ չափէն աւելի վստահեցան չռայլուած խոստումներուն :*

4· *Այն հազարեակ մը Հայերը որ արտօնուած են բնակելու այս մեծ երկրին մէջ, Անգլիոյ ամէնէն օրինապահ, յարգելի եւ էապէս բրիտանասէր հասարակութիւններէն մէկն են :*

Հրէական խնդիրը որ եւ է նմանութիւն չունի հայ ժողովուրդի հարցին հետ, հետեւաբար մոլորեցուցիչ է եւ անտրամաբանական՝ անոնց մասին խօսիլ գրչի նոյն հարուածով :

Ի՞նչ կը թելադրեն այս երկու պատկերները.— Աբթնութիւն, ուշադրութիւն եւ աշխատանք, բոլոր ճակատներուն վրայ — ամէն ուր որ կը հանդի մեր ձեռքը—եթէ ոչ մեզ լրջօրէն ծանօթացնելու, գոնէ անճոռնի սոփեստութեանց հակազդելու համար:

Կոչը ձեզի է, տարագի՛ր երիտասարդութիւն: Շ.

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ՀԻԹԼԵՐ ՕԴԱՆԱՒԱՑԻՆ ԴԱՅԹՆԱԳԻՐ Կ'ԱՌԱՋԱՐԿԷ ԱՆԳԼԻՈՅ

ԻՐ ՄԱՆԱՒՈՐ ԹԻԿՆԱՊԱՀԸ ԼՈՆՏՈՆԻ ՄԷՋ

Լոնտոնի եւ Փարիզի թերթերը երկու օրէ ի վեր մանրամասնութիւններ կը հրատարակեն Հիթլէրի նոր ծրագրի մասին, որուն նպատակն է օդանաւային դաշինք մը կնքել, ի հարկին կրճատելու համար օդային ուժերը: Այս առաջադրութեամբ, նորէն Լոնտոն կը սպասուի Հիթլէրի մանաւանդ թիկնապահը, Հարիւրապետ Վիսման, որ արքայական այցելութեան առեն դացած տեսակցած էր Անգլիոյ արտաքին նախարարին հետ :

*Վարչապետը արդէն լուր առած է Հիթլէրի առաջադրութեան մասին: Քաղաքական շրջանակներու մէջ կը կարծեն թէ Պ. Չեմպըրլէն կը նախընտրէ այս կարգի բանակցութիւնները կատարել ընդհանուր ճակատի մը վրայ եւ ոչ թէ մէկ մը Գերմանիոյ հետ: Ամէն պարագայի մէջ, օրակարգի վրայ է օդանաւային դաշինքի մը խնդիրը: Գերմանիա երկու տարի առաջ կրցաւ նաւային դաշինք մը կնքել Անգլիոյ հետ, եւ այս անգամ ալ կը յուսայ յաջողիլ, մասնաւոր բանակցութիւններով: Իրազեկներ կը կարծեն թէ Հիթլէր կ'ուզէ խոյծ մը ներկայացնել, Անգլիոյ համակրանքը չահելու համար չեխական հարցին մէջ, քանի որ Անգլիացի մը նշանակուած է իբրեւ խորհրդական կամ միջնորդ: Անոնց կարծիքով, մինչեւ որ Գերմանիա զոհացում չստանայ չեխական հարցին մէջ, օդանաւային դաշինքը պարզապէս «պարապ վախտի խազալիկ» պիտի ըլլայ: Առաջին անգամ չէ որ Հիթլէր մէջտեղ կը դնէ այս ծրագիրը: Պ. Չեմպըրլէն համակիր ըլլալով հանդերձ գերմանական ծրագրին, կը կարծէ թէ օդանաւային դաշինք մը աւելի դժուար է քան ծովայինը: Բաղդատաբար դիւրին է հակչիռ հաստատել նաւային չինութեանց վրայ — զրահաւոր, յածանաւ, սուզանաւ կամ թորպիլանաւ—քանի որ անոնք ծածուկ չեն չինուիր եւ իրենց չափը թոյլ չի տար պարակել: Մինչդեռ ռազմական օդանաւերը գաղտնի կը չինուին եւ դժուար է տուգել ամէն բան: Կը մնայ տեմմանոփակել անոնց տեսակը, փոխանակ զրաղելու քանակով, ինչպէս նաւային չինութեանց մէջ: Պետութիւնները կրնան համաձայնիլ ռազմական օդանաւերու ոչ թէ ընդհանուր թիւին, այլ առաւելագոյն տարողութեան եւ մեքենական ուժին վրայ: Այսպիսի համաձայնութեան մը չնորհիւ կարելի պիտի ըլլայ միլիոններ խնայել, սանձելով մեծ պետութեանց սրբագրութիւնը,— մէկը միւսէն աւելի մեծ, աւելի սրընթաց եւ աւելի մահացու օդանաւեր չինելու մարմաջը:

Շատ յոյս կայ որ անմիջապէս իրականանայ օդանաւային համաձայնութիւն մը: Անգլիացին եւ Գերմանիացին գոհ, անհրաժեշտ է ապահովել Ֆրանսայի, Իտալիոյ եւ Մ. Միութեան տարբերութիւնը: Եթէ յաջողի համաձայնութիւն մը կնքել օդանաւային դաշինքի մասնագիտական հարցերու մասին, բայց անոր քաղաքական մասին համար անհրաժեշտ է Ֆրանսայի մասնակցութիւնը: Անհատնական չէ որ Հիթլէրի թիկնապահը Փարիզ գայ, Լոնտոնի այցելութենէն վերջը :

ԳԵՐՄԱՆԵԻԶԵԽ ԹՆԱՋՈՒԿԸ

Ինչպէս հաղորդած էինք, Պերլինի մէջ բուռն դժգոհութիւն պատճառեց չեխական կառավարութեան ազգութեանց նոր տեմմանագրութիւնը, որուն ամփոփումը հրատարակեր էինք երէկ :

Չեխական գործակալութիւնը դեկոյցով մը կը յայտնէ թէ հրատարակուած մանրամասնութիւնները վերջնական չեն: Գերմանական մամուլը կը շարունակէ քննադատել չեխական կառավարութեան ընթացքը, պնդելով թէ ան «ձախ ձեռքով եւ կ'առնէ ինչ որ տուած է աջ ձեռքով»: Բոլորն ալ դիտել կուտան թէ չեխական կառավարութիւնը տրամադիր չէ նկատի առնելու Գերմանացիներու եւ ուրիշ ազգութեանց հիմնական պահանջները: «Այս պայմաններուն մէջ, Չեխոսլովաքիոյ վարչապետը ի՞նչ նպատակով կ'ուզէ նորէն բանակցիլ կուսակցութեանց ներկայացուցիչներուն հետ: Այս հրատապ հարցը աւելի բազմօրէն լուծելու համար, անհրաժեշտ է խնդիրը հնուաքարար քննել օպտակար եւ բացարձակապէս նոր հիման մը վրայ »:

Գերմանական տեսակէտը կարելի է ամփոփել այսպէս.— Չեխոսլովաքիոյ ազգութիւնները ընդունիլ իրրեւ անջատ խումբեր, տալով ինքնավարութիւն՝ այն հոգին վրայ ուր պատմականօրէն անվիճելի է իրենց մեծամասնութիւնը: Մինչդեռ չեխական ծրագիրը չի տրամադրեր հողային ինքնավարութիւն :

**** Անգլիացի միջնորդը, լորտ Բրնսմէն, Փրակա պիտի երթայ օգոստոս 3ին (Կրեքշաբթի): Կը կարծուի թէ իր պաշտօնը պիտի տեւէ առնուազն երկու ամիս: Փրակայի անգլիական դեսպանը նոր տեսակցութիւն մը ունենալով Չեխոսլովաքիոյ վարչապետին հետ, Լոնտոն դնաց, դեկուցում տալու համար :*

**** Լեհական կառավարութիւնը երկրորդ բողոքագիրը մը ուղղեց Չեխոսլովաքիոյ, բոլշեւիկներու հակալեհ գործունէութեան դէմ: Վանուցպիրը ղրկուած է յուլիս 23ին, բայց նոր երեւան կը հանուի: Առաջին վանուցպիրը ղրկուած էր մարտ 22ին եւ այն առեն չեխական կառավարութիւնը պատասխանեց թէ անհրաժեշտ միջոցները ձեռք առնուած են, զոհացում տալու համար : Լեհական կառավարութիւնը անբաւարար կը նկատէ այդ միջոցները, միեւնոյն առեն բողոքելով չեխական մամուլին հրատարակութեանց դէմ: Վարչապետի պաշտօնական օրկանը կը գրէ.— «18 տարիէ ի վեր Չեխոսլովաքիա անդադար կը խորացնէ անդունդը երկու երկիրներուն միջեւ»:*

— —

ՄՈՒՍՈԼԻՆիի ծննդեան 55ամեակին առթիւ, Հիթլէր հեռագիր մը ուղղեց Դուալիոյ Առաջնորդին, ջերմագին շնորհաւորելով: Հեռագիրը կը վերջանայ «Հայլ Դուչէ»ով (կեցցէ՛ Առաջնորդը):

ՋԻՆՈՒՈՐԱԿԱՆ օդանաւ մը բլուրի մը գարնուեցաւ Սէն-Ռամպէօ տ'Ափոնի մէջ (Տրոմ) եւ ջարդուփշրուր եղաւ: Հինգ օդաչուները ածխացան: Տիժոնի մօտ ալ օդանաւ մը յախճապոտեցաւ եւ վարիչը մեռաւ :

ՕՐԸ ՕՐԻՆ

«ԴԵՂԻՆ ԹԵՐԹ»

Անցեալ առաւօտ թղթաբերով ստացայ երկու թերթ : Մէկը Միջերկրականի եզերքէն՝ բարեկամ մըն էր, որ ուշադրութեանս կը յանձնէր գրութիւն մը ժիժիներու մասին, (կ'անդրադառնաք ուրիշ առթիւ) : Երկրորդը Փարիզէն՝ անծանօթ մը, որ «Դեղին Թերթ»ի օրինակ մը կը ղրկէր ինձ, չեմ գիտեր ինչո՞ւ: Իմ կողմէս՝ անծանօթին կը նուիրեմ այս ծանօթութիւնները :—

Այս երկրին մէջ ամէն ասպարէզ իր մասնագիտական թերթն ունի,— բժիշկները, կօշկակարները, մսագործները, նոյնիսկ ... կոտոշաւորները , որոնց Ֆրանսացիները կոտաւ cocu անունը (բռնագօսիկ ստուգաբանութեամբ մը իբր թէ կկու թռչունին անունէն առնուած, որովհետեւ կկուն բոյն չի շիներ, կ'երթայ ածել ուրիշին բոյնին մէջ) : Ահա այս անունը կրող ներուն թերթն է, որ կը կոչուի **Դեղին Թերթ** կամ **Gazette des Cornards** (կոտոշաւոր):

Ինչո՞ւ կոտոշաւոր կ'անուանեն դժբաղդ ամուսինները : Չեմ գիտեր : Ինչ որ գիտեմ այն է թէ, կոտոշը պանծալի խորհրդանշան մըն էր հին ատեն :

Հին աստուածները կոտոշ ունէին իրրեւ զօրութեան նշան: Նոյնիսկ, ինչպէս Ս. Գիրքն ալ կը վկայէ, իրենց Աստուածը եւս կը խոստանէին Աստուածդ ... կոտոշաւորել իր սիրելի ժողովուրդը· «կանգնեա՛ց եւ կաս գնասա, դաստր Սիոնի, զի զեղջեւրս ես արաբից երկաթիս» (Միք· Գլ· Դ· **13**): Մինչեւ Քրիստոնէութիւն, կոտոշը թանկագին զարդ մըն էր կամ օգտակար առարկայ, — ըմպանակ, շեփոր, գաւազանագլուխ : Հռովմայեցիները , իրրեւ շքանշան, կոտոշ մը կուտային ֆայ զինուորին, որ զայն իր սաղաւարտին կ'անցընէր եւ պարծանքով կը կրէր··· կոտոշաւոր **(cornicularius)** տիտղոսը, ինչպէս կը վկայէ Սուէտոնիոս *Տանեկրու կեսարներու* վերջին ընծն կենսագրութեան մէջ : Եւ վերջապէս, Լիբանանի լեռնական ժողովուրդները սովորութիւն ունին կոտոշ մը տնկել Շրագսպակ հարսին գլխուն վրայ իրրեւ զարդարանք : Հապէշներու մօտ եւս՝ իշխանական աւագութեան նշան է կոտոշ մը ունենալ իրենց գլխին : Քրիստոնէութեան յաղթանակով, կոտոշը դարձաւ յատկանշան սատանայի,— կարելի չէ սատանայ մը պատկերացնել առանց կոտոշի : Միւս կողմէ կոտոշաւոր կը կոչեն սուիսեստներն ալ, ծաղրելու համար անոնց տրամաբանելու ձեւերը, որոնք ծայրայեղութեան կը հասնին· (Օրինակ· — Ունիք ինչ որ չէք կորսնցուցած : Արդ, կոտոշ չէք կորսնցուցած: Ուրեմն՝ կոտոշ ունիք) : Բայց ահա, չեմ գիտեր ինչպէս, կոտոշաւոր կոչած են նաեւ այն դժբախտ ամուսինները, աւմէն ազգի մէջ, որոնց կինը անհաւատարիմ է :

Հետաքրքրական է որ Աստուած կը հրամայէ Ովսէէ մարգարէին (Գլ· Գ· 1).— «Գարձեալ երթ դու եւ սիրեա՛ կին մի որ սիրիցի չրնկերէն եւ իցէ շուն»: Եւ խեղճ մարգարէն կը հպատակի ամուսնանալով այդպիսի չնչոտխարիկ կնոջ մը հետ: Ուրեմն Աստուծոյ օրհնութիւնը կայ, ապահովաբար, կոտոշաւորներուն վրայ· ուստի այստեղեկութիւններով կամ գէթ վերջին ապացոյցով կը փափաքիմ խրատել անծանօթը որ ինծի ղրկեր է իր *Դեղին Թերթը*՝ անշուշտ դարման մը խնդրելով իր դժբախտութեան :

Ա.ՐԱԶ

ԴԱՇՆԱԿԻՆ ՀՈՏԸ ՊԻՏԻ ՁԹՈՂՈՒՆՔ

«Ազդակ» հետեւեալ տեղեկութիւնները կը հրատարակէ Սաւճաքի կացութեան մասին (24 յուլիս).—

Հայ պաշտօնեաներու վերջնական մաքրագործումը դեռ չէ սկսած : Բայց բոլոր նշանները կը ցուցնեն թէ չատ պիտի չուշանայ, քանի որ հետապնդուած նպատակն է վարչութեան կատարեալ թրքացումը: Եւ եթէ դեռ կը պահեն կարգ մը հայ պաշտօնեաներ, պատճառը այն է որ անոնք մասնագէտներ են եւ չեն կրնար փոխարինուիլ մէկ օրէն միւսը :

Այս առթիւ ըսեմ թէ փոխուած է նաեւ Ռէժիի տնօրէնն Պ. Քիւրտեան եւ տեղը դրուած Նուրի անուն մէկը, որ պէնզին կը ծախէր վերջերս, իսկ ժամանակին հետեւորդը եղած է հոչակաւոր ձէմալ փաշային, որ այնքան Արաբ կախեց Սուրիոյ մէջ, մեծ պատերազմի ընթացքին :

Աղճակուած 7 հայ ոստիկաններուն տեղ պաշտօնի առնուածներուն մէջ կը գտնուի ուրիշ Նուրի մը, որ ասկէ առաջ քանի մը անգամ վտարուած էր ոստիկանութենէն ... :

Ինչպէս ամէն տեղ եւ ամէն առեն, Թուրքերը հիմա ալ Սաւճաքին մէջ կը փորձեն պատակել Հայերը, չահագործելով անոնց կուսակցական կիրքերը: Այսպէս, Հալէպի վարիչ մը հրապարակաւ յայտարարած է.— «Դաշնակցականներուն հետ անդամ պիտի չխոզունք Սաւճաքի մէջ »:

Եւ մեր կարգ մը ազգայիններ կը հաւատան: Ոմանք նոյնիսկ կը չփեն իրենց ձեռքերը, այն հրճուանքով որ հրապարակը բաց կը մնայ իրենց առջեւ: Իսկ ինչ որ ամէնէն ցաւալին է, ոմանք ալ ընդառաջ կ'երթան խաղին, ուղղակի գործակալի դեր կատարելով: Կացութեան փոփոխութիւնը նկատի առնելով, չեմ ուզեր անուն տալ. միայն ըսեմ թէ մարդիկ կասկածով կը նային իրարու եւ 4 — 5 հոգի քով քովի չեն գար: Նշանով կը հասկցնեն թէ «ճանչ Հայ պատին վրայ» եւ կը հեռանան··· :

Թուրքիոյ միջադէպ մը Սաւճաքի մէջ

Նոյն աղբիւրէն կը հաղորդեն հետեւեալ դէպքը, որ տեղի ունեցած է յուլիս 20ին, Պէյլանի մէջ·—

Գիտէք թէ Թուրք զօրամասերը Պէյլանը կեդրոն ըրած են, իրրեւ ռազմագիտական կարեւոր դիրք մը: Տեղացի Թուրք մը հրամանատարին տրամադրած է իր տունը, որ նախապէս պանդոկ էր, բայց գիւղաքաղաքին մէջ չկան բաւականաչափ չէնքեր՝ տեղաւորելու համար հազարէն աւելի Թուրք զինուորները:

Իտալացիները Պէյլանի մէջ վանք մը ունին, ուր հինէն ի վեր կը մնայ կրօնական մը: Վանքը կը բաղկանայ ընդարձակ պարտէզ մը, մէջտեղը եկեղեցիով եւ ուրիշ չէնքերով :

Զորեքշաբթի օր, Պէյլանցի Թուրքեր կը մտնեն պարտէզը եւ կը յայտնեն թէ պիտի կոպեն ծառերը՝ տեղ բանալու եւ Թուրք զինուորներու բնակութեան յատուկ տաղաւարներ չէնելու համար: Եւ մէկ երկու ծառ ալ գետին կը տապալեն տապարի հարուածներով :

Կրօնաւորը անմիջապէս կը փութայ Ալեքսանդրէթ եւ դէպքը կը պատմէ իտալական հիւպատոսին, որ իր կարգին հեռաձայնով կը դիմէ Հալէպ՝ իտալական հիւպատոսին: Այս վերջինը անմիջապէս Պէյլան կուգայ ինքնաշարժով : Շուտով կը հասնի նաեւ Անթիոքի Թուրք ընդհ. հիւպատոսը :

Իտալական ընդհանուր հիւպատոսը բուռն կերպով կը բողոքէ իր Թուրք պաշտօնակիցին մօտ, դիտել տալով որ եղածը ոչ միայն իրաւունքի բռնաբա-

(Լուրերու շարունակութիւնը կարդալ Դ· էջ)

ՍՏԱՄԲՈՒԼԻ ԿԱՐՄԻՐ ՀՈՎԻՒՆԸ

The Bunch of Stamboul

By DENNIS WHEATLEY

Թրգմ. ՅԱԿՈԲ ՀԱԿՀՈՓԵԱՆԻ

Բարգմ. Ա. Մ.

— Ես, տիկին իմ, ասաց Ռոզան, ես ալ ձեզ պես կը սիրեմ զայն, ու ես ալ կը ցանկանայի որ ան ինծի ալ նամակներ գրէ։ Բայց ես ալ ձեզ պէս գիտեմ, որ ան ոչ մէկուն նամակ կը գրէ։ Ինչո՞ւ համար կը խաբէք ինքզինքնիդ։

Ծիծաղեցան։

— Ձեր ըսածը ճիշտ է, ըսաւ Մարի։ Ես ալ գիտեմ, որ ան ոչ մէկուն նամակ կը գրէ, բայց ինչո՞ւ չենք կրնար ունենալ մեր սիրելի ընկերոջմէն նամակ մը։ Ես ալ ձեզ պէս կը սիրեմ զայն, ու ես ալ կը ցանկանայի որ ան ինծի ալ նամակներ գրէ։ Ես ալ ձեզ պէս գիտեմ, որ ան ոչ մէկուն նամակ կը գրէ, բայց ինչո՞ւ չենք կրնար ունենալ մեր սիրելի ընկերոջմէն նամակ մը։

Ռոզան ուզեց պատասխանել, բայց յանկարծ ոտնաձայներ լսուեցան սանդուխներէն։ Ան ձեռքը դրաւ բերանին եւ ականջ դրաւ։ Ոտնաձայները կը մօտենային։ Ան ոտքի ելաւ եւ ըսաւ.

— Ես կ՚երթամ։ Ես չեմ ուզեր որ ինծի տեսնեն այստեղ։ Ես կ՚երթամ։ Ես չեմ ուզեր որ ինծի տեսնեն այստեղ։

Ան դուրս ելաւ սենեակէն։ Ոտնաձայները կը մօտենային։ Ան ոտքի ելաւ եւ ըսաւ.

—

ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ

(Գերմարդային ջանքերի պատմություն)

«Ղարաբաղի» առաջին Համագումարի ընտրյալներից մեկը՝ Մովսես Տեր-Հակոբյանը, ինքնակոչ ղեկավարի դերում հանդես գալով, ամենայն լրջությամբ ձեռնամուխ եղավ Ղարաբաղի հայկական վարդապետարանի հիմնադրման գործին։ Ինչպես ինքն է պատմում, նա ամեն ինչ արել է, որ հիմնադրումը տեղի ունենա Գանձասարի վանքում, որովհետև «Գանձասարը Ղարաբաղի ամենահին վանքն է, ամենահարուստը, ամենամեծը, ամենակենտրոնականը, ամենահայտնին, ամենասիրելին ժողովրդի սրտին»։ Սակայն Գանձասարի վանքը, որ ժամանակին եղել է Ղարաբաղի հոգևոր կենտրոնը, ավերակների է վերածվել։ Ուստի Տեր-Հակոբյանը ստիպված է եղել հիմնադրումը կատարել Գանձասարի ստորոտում գտնվող Վանք գյուղում։

